

910.4

U - 50







## ԵԶԿԵՑԻՆ ՄԱՍԿԵՐԴՈՒԹԵ

ԺՈՂՈՎ.

ՕԿՈՏԵՈՆ ԴՊՐԻ ԼԵՀԱՑԻՈՑ

ԱԻՂԵԳՐՈՒԹԻՒՆ

ՅԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ ԵԽ ՑԻՇԱՏԱԿԱԾՐԱՆՔ

ՈՒՍՈՒՄՆԱԾԻՐԵՑ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

Հ. ՆԵՐՍԵՍ Գ. ԱԿԻՆԵԱՆ

Մահմանական ՈՒԽՑԵ



ՎԻԵՆԱ

Մահմանական ՏՊԱՐԱՆ

1936



910-4

U - 60

92

10 NOV 2011

ՍԻՄԵՈՆ ԴՊՐԻ ԼԵՀԱՑԻՈՅ

## ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆ

ՏԵՐԵԳԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՑԻՇԵԸԿԱՐԱՆՔ

ՈՒՍՈՒՄՆԱԾՈՐՆԵՍ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԵՑ

Հ. ՆԵՐՍԵՍ Վ. ԱԿԻՆԵԱՆ

ՄԻԵՒԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԵ



ՎԻԵՆԱ

Մ Խ Ի Բ Ա Բ Ե Ա Ն Տ Պ Ա Բ Ա Ն

1936



31609-15

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՐԱՆ

ՀԱՅՈՒ ՀԵՂԻ.

---

NATIONALBIBLIOTHEK

BAND CXLI

DES ARMENIERS SIMEON  
AUS POLEN  
REISEBESCHREIBUNG  
ANNALEN UND KOLOPHONE  
ANHANG: ZUSAMMENFASSUNG IN DEUTSCHER  
SPRACHE

UNTERSUCHT UND HERAUSGEgeben VON  
**P. NERSES AKINIAN**  
MECHITHARIST



W I E N  
MECHITHARISTEN-BUCHDRUCKEREI  
1936

~~9104~~  
~~J-50~~

ՆՈՐԻԿ ԱՐՁԱՎԱՑՈՒՈՒԹՅԱՆ

ՏԵԱԼՆ ՅՈՒՆԵՖԱՅ ԹԵՌԴՈՐՈՎՀՅՉ

ԱՐՁԵԳԻՍԿՈՊՈՒԻ ՀԱՅՈՑ

ի

Լոլով



## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Լեհաստանի հայերէն ձեռագիրներն ու սումբանական նպատակով 1932 Յունիսին կը գտնուէի Լվով : Եթի աչքէ կ'անցնէի Հին Համալսարանի Մատենադարանի ձեռագիրները, ուշադրութիւնս զրաւեց Թ . 58 հայերէն ձեռագիրը : Frédéric Macler<sup>1</sup>, որ 1925ին համառօտին ցուցակագրած էր Համալսարանին հայերէն ձեռագիրները, Թ . 58ի բովանդակութիւնը նշանակած էր պարզապես «texte qui semble être un récit de voyage (?)», այսպէս հարցականով :

Հարեւանցի տէնորկ մը ձեռագրիս բովանդակութեան վրայ երեւան թերաւ, որ Ռուդենութեան մը նկարագրութիւնն է այն, զրի առնուած նոյն խոկ ուղեւորին, Սիմեոն Պայիր Զամուսցաւոյ զրշով, Թէ . դարու առաջին հառորդին : Հետաքրքրեց զիս Ռուդենութիւնս :

Որովհենու կարէ էր ժամանակս արտազելու համար ամրող ձեռագիրը, խնդրեցի Համալսարանի Վարչութենէն, որ հանի եր-

<sup>1</sup> Rapport sur une mission scientifique en Galicie et en Bucovine (juillet-aout 1925). Revue des Études arméniennes, t. VII (1927), p. 126—127.

կարագոյն ժամանակով դնել զայն իմ տրամադրութեանս տակ ի Վիեննա : Կը յայտնեմ պատեղ հրապարակաւ իմ շնորհակալութիւնս նոյն Մատենադարանի Վարչութեամբ , որ յանձն տուաւ միջնորդութեամբ Վիեննայի Ազգային Մատենադարանին ուղարկել ինձ պատուական Ձեռագիրս :

Օրինակութիւնը կատարեցի խնամով : Մեծ . Հ . Գէորգ Վ . Փանչիկեան քարի զբունքաւ համեմատել օրինակութիւնս սկզբանցրին հետ . որուն կը յայտնեմ շնորհակալիքս :

Հրատարակութիւնը կատարուեցաւ առաջին անգամ Հանդես Ամսութեայի մէջ<sup>2</sup> , ուսկից կ'արտատպուի այժմ առանձին հասորով : Ներածութիւնը կրած է սրբագրութիւն : Յաւելուածի մէջ ամփոփած եմ Սիմեոնի Յիշտուակարանները , որքան անոնք մասունքի եղած են ինձ :

Հրատարակութեանս կցած եմ նաև օտար եւ ուսմիօրէն բաներու ցանկ մը՝ տարբեր նշանակելով նաև իշտուերը , որչափ կարելի էր : Բառացանիկս կազմելու ժամանակ ինձի օգնական եղաւ Մեծ . Հ . Պօղոս կապալեան , որուն կը պարտիմ շնորհակալութիւն :

---

<sup>2</sup> Հանդ . Ամս . , 1932 , էջ 447—483 , 677—690—1933 , էջ 115—128 , 334—342 , 479—495 , 595—608 , 701—713 . 1934 , էջ 59—69 , 149—168 , 283—306 , 465—474 , 547—570 . 1935 , էջ 79—96 , 163—175 :

---

ԲՈՒՎԱՆԴԱԿԱՌԻԹԻՒՆ

Ե՞ւ

|   |       |
|---|-------|
| ՑԱՌԱՋԱԲԱՆ   | Ե—Բ   |
| ՆԵՐԱԾՈՒՅԹԻՒՆ  | ԺԳ—ԽԲ |
| ՈՒՂՂԵԼԵՔ  | ԽԳ—ԽԵ |
| ՈՒՂՂԵԳՐՈՒԹԻՒՆ   | 1—335 |
| 1. Մուսբ  | 1—3   |
| 2. Ռուգեւորթիւն՝ կ. վոլ—Անիարքին—Սէ-<br>շով—եաշ—Վառով—Պոլատ—Կարս—<br>Միջին—Պազարնուխ—Բրայտոփի—Այ-<br>տուղ—կ. Պոլիս  | 3—7   |
| 3. կ. Պոլիս   | 7—33  |
| 4. Շրջագայուրիւն՝ կ. Պոլիս—Մուստա-<br>նիս—Պուռոս—Քէշիշտաղի—Մուխա-<br>լին—Պանորմա—Լանճուկի—Թալքֆէ-<br>սոր—Մանիսա—Խզմիր—Թիրս—Կո-<br>զակիսար—Միտիլի—Պօզագիխար—<br>Կէլիպուի—Թէլքիրսող—Ղարս—Մուսալ<br>—Նիկիս—Զագարիս—Խզմիր—կ. Պո-<br>լիս | 33—43 |
| 5. Ռողեզնացուրիւն՝ կ. Պոլիս—Հտիքնէ—<br>Հոլուպա (Ֆիլիպէ) — Ենիքրազմար—<br>Պունտ-Սարայ (Սարահւոյ) — Քիլիս—<br>Մրիլիր (Մրալուսոյ) — Զաւրդ—Վենի-<br>տիկ   | 43—54 |
| 6. Վենետիկ  | 54—77 |
| 7. Ի տէրուրեան Փափին: Աւխտազնացու-<br>րիւն՝ Վենետիկ—Աթենսիս (Անկոնա)<br>—Մատուծան տէ Լորէր—Հռոմ   | 77—91 |

|   |         |
|---|---------|
| 8. Հոռմ . . . . .   | 91—177  |
| 9. Աւագագնացութիւն՝ Հոռմ—Ավելիսիկ<br>Կրետէ—Վռափու—Զանքա—Զանքա—<br>Ասեղ—Խզմիր—Բիրա—Կօզալ—Հյուս<br>—Գուռաս—Ազանցինիզ—Պօլու—Եկ-<br>րաստ—Թօսիս—Օմանչուխ—Մար-<br>զումի—Կումիշ—Ամասիս—Թօխոր—<br>Մերաստիս—Մալարիս—Խարբերդ—<br>Խասրիկ—Պզմչեն—Բալու—Ճապազչուր<br>—Մանուշիուտ—Շաբարլու—Կուտաս—<br>Մուշ—Ո. Կարապիս . . . . . | 177—201 |
| 10. Վերադարձ՝ Մուշ—Խարբերդ—Մովի<br>Արզիի—Ամիր—Մերաստիս—Թօխոր—<br>Կ. Պոլիս . . . . .   | 202—209 |
| 11. Աւագագնացութիւն՝ Կ. Պոլիս—Ալիի-<br>պօլի—Ռուպու—Ազեքամեղրիս—Ռէշիր<br>—Պուլաբ—Գուհիրէ (216—240)—<br>Մալաստախին—Հիլաս—Ղարիս—Ղազա<br>—Ռամիս—Երաւաղէմ . . . . .  | 209—248 |
| 12. Երաւաղէմ . . . . .  | 248—306 |
| 13. Աղեգնացութիւն՝ Երաւաղէմ—Թու-<br>րապէկ—Լուպէն—Լազիստ—Թափօր—<br>Ճինդի—Այինքանառ—Լուսիս—Յա-<br>կորայ Կամուրջ—Դամասիս—Խարուտ<br>—Մայուն—Խարալար—Համուս—Հա-<br>մա—Սըֆար—Թումու—Հալէպ (317—<br>324) . . . . .   | 306—324 |
| 14. Վերադարձ՝ Հալէպ—Մարաշ—Ֆանուզ<br>Քէյրուն—Կիսարիս (326—331)—Ետ-<br>ինքիզ—Անկուրիս—Կօնիս—Ենիկչար<br>—Միմրիսիսար—Խարախիսար—Պէկո-<br>զար—Մարուլար—Խզմիս . . . Կ. Պոլիս—<br>Լուլու . . . . .  | 324—335 |
| 15. Լուլու . . . . .  | 335—348 |

## Ե՞՛

|   |                |
|---|----------------|
| ՏԱՐԵՎԻՐՈՒԹԻՒՆ   | 348—384        |
| 16. Խնդականագրութիւն Սիմեոնի . . . . .                        | 348—356        |
| 17. Արշաւանի սուլուան Օսմանի ի վերց<br>Լեհաց (1622) . . . . . | 356—368        |
| 18. Տարեգրութիւն 1623—1635 տիտղ . . . . .                     | 368—384        |
| ա. Ազգագի փաշոց կոստրուծ Ենիշտ-                               |                |
| րաց (1623) . . . . .  | 368—370        |
| բ. Մաս Զիկրութիւն զահակալութիւն<br>Վատիկանի (1632) . . . . .  | 370            |
| գ. Պատերազմ Մոսկովյ ընդ Լեհու<br>(1632) . . . . .             | 371—373        |
| դ. Ազգագի փաշոց արշանէ ի Հայու . . . . .                      | 373—375        |
| ե. Արշաւանի սուլուան Մուրատի ի<br>վերց Լեհաց . . . . .        | 375—376        |
| զ. Արշաւանի Վատիկանի ի վերց<br>Եպիսկոպու (1635) . . . . .     | 377            |
| Է. Մասոնիկ անձրեւ (1635) . . . . .                            | 377            |
| ը. Արշաւանի սուլուան Մուրատի ի<br>վերց Պարսից . . . . .       | 378 —          |
| ը. Մուրիկու (1635) . . . . .                                  | 378—379 —      |
| ժ. Կախարդ կանոնք . . . . .                                    | 379—380 —      |
| ժա. Հրդեհ Եսրուլովի (1627) . . . . .                          | 380—382        |
| ժ.բ. Մաս տարածամ 1627 տիմ . . . . .                           | 382            |
| ժ.գ. Ասպատակութիւնն Բարքարաց (1628) .                         | 382—383        |
| ժ.դ. Մելթիսուդեկ կարողիկոս ի Լեհու<br>(1626) . . . . .        | 384            |
| <b>ՅԱԼԵԱՆԱԾ. ՅԱԾԱՏԱԿԱՆԵՐ</b> . . . . .                        | <b>385—420</b> |
| 1. Յիշատակագրութիւն (1606) . . . . .                          | 387            |
| 2. Յիշատակարան Կանոնագրոց (1609) . . . . .                    | 387—391        |
| 3. Յիշատակարան Շարուկիցի (1615) . . . . .                     | 391—392        |
| 4. Յիշատակարան Ժ. Մարգ. (1618) . . . . .                      | 392—393        |
| 5. Յիշատակարան Առ որո զրաց (1618) . . . . .                   | 393—394        |

|   |         |
|---|---------|
| 6. Յիշատակարան Լուծմանց Առ որո գրաց<br>(1619) ..... | 394     |
| 7. Յիշատակարան Ազօրապրաց (1627) ..                  | 395—397 |
| 8. Յիշատակարան Ռոկեֆորիկի (1629) ..                 | 397—399 |
| 9. Վիպասանուրիւն Նիկոլական .....                    | 399—405 |
| 10. Յիշատակարան Հնգամատենի Մելքոն-<br>թանաւան ..... | 405—420 |
| Բառարան .....                                       | 421—457 |
| Ցանկ անուանց .....                                  | 458—484 |
| Ամփոփումն գերմաներէն լեզուով .....                  | 485—493 |

---

## ՆԵՐԱԾՈՒԹՅԻՒՆ

Սիմեոն դպիր Զամոսցացի, որ և Լեզացի, առաջին անգամ հոս հրատպարակ կուղայ իրբեւ մատենագիր և ուղեգիր: Իւր կընսագրութեան համար բարեբախտաբար նախքը նախահանգ եղած է աւանդել մեզ աեզեկութիւններ, մասսմբ իւր Ռւղեգրութեան եւ մասսմբ զանազան Յիշատակարաններու մէջ, զորոնք կցած է իւր օրինակութիւններուն (տե՛ս Յաւելուած թ. 1—10):

### ՀԵՂԱԿԱՆԱԿԱՐ

Սիմեոնի ծնողքը՝ մահաւեսի Մարտիրոս և Դոլվաթի խաթուն հայրեննոք Կաֆացի Են<sup>1</sup>: ԺԶ. զարու երկրորդ կէսին հանդերձ ազգականոք կը զաղթին Կաֆայէն և կու զան կը հաստատուին Լեհաստանի Զամոսցա նորացէն զիւղաքազաքը: Տեղափոխութեան ճիշդ թուականը յայտնի չէ: աեղի ունեցած ըլլալու է այն իրը 1580ին:

<sup>1</sup> «Ծինողքն իմ բնական յաշխարհէն Հոնաց ի տիրախեամ և աստուածազահ ծովահայեաց քաղաքէն Քաֆայու: Ապանդուխտ զոլով եկեալ բնակեցան քրիստոնէից երկիրն ի զաւան Բոզաց, որ այժմ տիրեն էլէ չէ, ի նորաչէն զիւղաքազաքն Զամոսցա» (Ռւղ. էջ 1):

Մարտիրոս կ'ունենայ չորս զաւակ, երկու մանէ՝ Յովհաննէս և Սիմէոն, և երկու աղջիկ՝ ձուհար և Հոփիսիմէ<sup>2</sup>: Տիկին Դուլվաթ († իրք 1586) և անոր զաւակը՝ Յովհաննէս († 1608էն յառաջ) վաղամեռիկ կ'ըլլան: Մահանոսի Մարտիրոս կ'երեւայ թէ մեռած է 1605ի մօտերը: Իսկ զուստը՝ ձուհար կը վախճանի 1612ին:

Սիմէոնի ծնունդը կ'իյնայ 1584ին. նա ինք զինքը 1608ին 24 տարեկան հասակի մէջ զիստէ: Երբ վախճանեցաւ մայրը՝ տակաւին տիսեղծ տարիքի մէջ էր Սիմէոն. իւր մեծ քոյրը՝ ձուհար մօրը փոխանակ կ'ըլլայ իրեն և կը հասցնէ զինքը ողջանդամ հասուն հասակին: 1612ին, երբ Վենետիկ կը գտնուէր Սիմէոն, կ'ընդունի Վանեցի վաճառականէ մը բօթարեր լուրը, թէ վախճանած է մեծ քոյրը. այս առթիւ կ'արձանագրէ Սիմէոն իւր Ռւզեղը լուրը մէջ ողբախառն տողերս. «ով բարերար իմ, ով երախտաւոր իմ, ով սիրեցեարդ իմ, ով աշխատաւոր իմ, ով բոյր իմ եւ մայր, բանզի զմայր սակաւ գիտացի» (Ուղ. 179):

**Թէպէտ սողքաստ էին Սիմէոնի ծնողք**

<sup>2</sup> Իւր մէջ յիշատակարանին մէջ 1609ին ոգորմիս կը խնդրէ Սիմէոն իւրայիններուն համար՝ «Ճնողաց իժոց ննջեցելոց մահղեսի Մարտիրոսին եւ մօրս Դուլվաթ խաթռենին եւ եղրօրս Յովհաննիսի, եւ Շներցու որ են ի մարմնի՝ ձուհարին և Հոփիսիմէի եւ ամենայն ազգատառմից» (էջ 390): Իսկ 1619ին կը յացանէ թէ «ունէի երկու քոյր եւ քրորդիք եւ այլ յուղով աղղականք» (Ուղ. էջ 349. ՀԺՄ. համեւ էջ 96):

(Էջ 251), բայց և այնպէս կը հոգած անոնքի իրենց զաւակի կրթութեան մասին։ Սիմէռն կը զրէ։ «Բայց զիս տվեալ յուսումն զրոց, որում հասու Եղեալ ի մանկութենէ մինչ ի չափ հասակի հասեալ՝ զեզերեալ և մարդկար ի վարժարանու ֆահասամանի սու ոսու վարդապետաց և բահասափրաց» (Ուզ. Էջ 1—2)։

Սիմէռն հաւասարէն նախ աշակերտած էր առ ոսու Յակոբ Թուխաթեցւոյ, ծանօթք քաջազգիր զրչի և բահասատեղծի, որ 1602էն սկսեալ հաւասաւածած էր ի Զամուցա<sup>\*</sup>, և ապա զեզերած առ ոսու օվարդապետաց։ Դրիդոր կեսարացւոյ, և արաւասափրաց», Ազարիա Մասնեցւոյ, ի Կ. Պոլիս : Նա ընտրած էր եկեղեցական կոչումը։ Կը ներկայանայ մեզի իրեւ դպիր։

Իր քայրերը ամուսնացած էին արդէն երբ կը վախճանէր Հայրը (1605<sup>o</sup>)։ Սիմէռն Հայրենի սաւցուածքներու ժառանգը կ'ըլլոյ։ 1619ին կը զրէր թէ ռունէի (ի Զամուցա) . . . զՀայրենի տունու և զբեկալութիւնս, զուսացուածու և զայլած (Էջ 349)։ Բայց Հայրենի ժառանգութեան ահաւեսութիւնը չի հետաքրքրեր զինքը։ Եւ ոչ ոչ Հայրենի օվախոը, որ իրմով վառ պիտի մնար։ Անիկա կը սիրէր ընթերցանութիւնը և Հոգարտ էր որ զիտէր կարգալ և զրել։ Ուսած էր վայելու շնորհագիր։ Իր սիրած ընթերցանութեան

\* Յակոբ Թուխաթեցւոյ մասին անո իւ չինչ պանդուխա Տագառացեր, Էջ 141—202 և Մատենաց պահան Հետազոտութիւններ, Դ. էջ 1—6։

զրքերն էին Վարք Հարանց, Յայտմաւուք եւ պատմագիրներ՝ յանուանի Միքայէլ Ասորի, Թովմաս ՄԷՆՆովեցի եւն: Աւնէր գեղեցիկ մուլութիւնը հաւաքելու զրքեր. Կոյն խոկ երկար ճանապարհի վրայ ունէր իւր հետք «Ճամատանով գրեանք», որոնք, երբ 1612ին ի Զմիւռնիա վատանդի մատնուեցան, «յոյժ տրտում եւ տիսուր» կը թողուն զինքը, «զի զոյլ ինչ այնոգէս չհօգոյի, կ'ըսէ, որոգէս զղրեանքս» (Աւղ. 184):

Տեսայ ի Լիվով Համալսարանի Մատենադարանին մէջ Գանձարան-Տաղարան մը, որ ունէր Սիմէռնի զրչէն հետեւեալ յիշտուակազրութիւնը. Ալրդ ի թվ. ԹՄԵ (1606) սպրիլ է... ևս անօգիտան եւ յանարժան Սիմէռն զպիրս... զնեցի զսա ի հալալ ընչից եւ յարդար վատատակոցս, յիշտակ ինձ եւ իմ ծնողացաց. ահա վարը, էջ 387:

Հաւանօրէն 1607ին կը թողու Սիմէռնի իւր հայրենի տունն ի Զամուցա եւ կը հասնի Լիվով: Ի վաղուց հետէ կը տանջէր զինքը սուրբ փափազ մը՝ երթալ ուխտագնացութեամբ հեռաւոր սրբալայրեր, որոնց մասին լսած կամ կարգացած էր: Այս մասին թող խօսի ինքը. «Երբեմն ընթերցեալ իմ զՎարս Հարանց եւ զՊատմութիւնս վիպատանց, անկատ ի սիրու իմ փափազ եւ ջերմ սէր... ի բագում ամաց եւ ի վաղուց հետէ... չըջադայիլ եւ տարաշխարհիկ լինել յօսուր եւ յանձանօթ զաւատան եւ ի սիրիոս հեթանոսաց.

այլ եւ ուխտիւ զնալ նախ յաստուածակոխ  
քաղաքն սուրբ Երուսաղէմ . . . եւ անտի զնալ  
ի Մուշ . . . եւ ազա ի մեծն Հռոմ» (Բւդ. 2) :

Ի վազուց իւր մէջ սնուցած այս փա-  
փազը կը ձեռնարկէ իրականացնել երբ կը  
հասնի իւր քանուչորրորդ հասակին : Առոյգ  
երիտասարդական հասակս կը սիրէ բախ-  
տախնդիր ձեռնարկութիւններ : Տակաւին չէր  
ամուսնացած Միմէռն, չունէր ընտանեկան  
որ եւ իցէ կապ, որ կաչկանդէր դինքը  
տան : Հայրենի ստացուածները կու տայ  
վարձու . . . և վասահ իւր զրադիտութեան վրայ  
կ'առնէ պանդիտութեան ցուողը թափառելու  
իրեւ ուխտաւոր աշխարհէ աշխարհ :

«Արդ ի թօֆին Հայոց Անծի (1608) փես-  
րուարի ժեւ . աղուհացից յերկրորդում շա-  
րաթի՝ օրն Երկուշարթի<sup>3</sup>, կամօք եւ զօրու-  
թեամբ ամենակարօղին Աստուծոյ, ազաւի-  
նեալ ի Հոգին սուրբ Աստուած ճշմարիտ ելի  
ի Լովայ մայրաքաղաքէն՝ լեալ ամաց իշխոց .  
եւ մտայ ես ի ճանապարհ» (Բւդ. 3—4) :

Ճանապարհը կը հանէ զինքը Մուշաւա,  
ուր կը յուսար խառնուիլ դէպի կ . Պոլիս գա-  
ցող կարաւանի մը . մտադիր էր կ . Պոլսէն  
նաւով մեկնիլ Երուսաղէմ : Երկու ամիս եւ  
երկու շարաթ կը ստիպուի սպասել ի Սու-  
չաւա : Դէպի կ . Պոլիս ուղեւորող արքունի  
դանձառար կարաւանի մը կցուելով Եաշ-

<sup>3</sup> 1608ին Փետր. 15 ճշգիւ կ'իշնար Երկուշարթի  
որ : Այսպէս իմացիր Հանդ. Ամս., 1932, ծան. 4 :

Կալաց գծով կը հասնի նոյն տարւոյն Սեպտեմբեր 10ին կ. Պոլիս :

Հոն կ'իմանայ թէ զէպի Աղեքանդրիան Երուսաղէմ նաւող ուխտաւորներու խումբը մեկնած է արդէն . իսկ ցամաքի ճանապարհը շատ վտանգաւոր է : Ճարահատած կը հարկադրուի Սիմէռն մնալ կ. Պոլիս : Գրիգոր պատրիարք Կեսարացի կը պատսպարէ զինքը վեց ամիս (Աւզ. 8) :

Գրիգոր Կեսարացւոյ քով կը ծանօթանայ Սիմէռն Մովսէս Տաթևացւոյ , որ յիսոյ կոթողիկոս ընտրուեցաւ , և Ազարիա Սասնեցւոյ հետ : Վերջնոյս խնդրանքով կօրինակէ 1609 Օգոստոս 28ին Միսիթար Գոչի Դատառանադիրքն եւ Կանոնադիրքը . կը դրէ յիշատակարանին մէջ<sup>4</sup> :

«Եւ արդ ես յետինս եւ անարժանս ի մանկունս Եկեղեցոյ թափառնիկս եւ յունայնս ի գործոց բարեաց , մեղապատ Սիմէռն գպիրս . . . չնորհիւ Տեառն սկսոյ եւ ոգործութեամբ նորին կատարեցի զուրբ գիրքս որ կոչի Կանոնք . . . Բայց կատարեցաւ ոսի մեծ թվիս Հայոց ԲնԾըերբորդի եւ ի յամսեանն Օգոստոսի Ի՞լ . , ի հայրապետութեան Տէր Մէլքիսէթի եւ ի բոնակալութեան սուլթան Ահմատին , ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս , ընդ հովանեաւ որբոյն Սարգսի զօրավարին եւ որդոյն նորս Մարտիրոսի , ի

<sup>4</sup> Համաձեռն՝ Ցուցակ հայերէն ձեռագրաց Գալատիոյ , թ. 11 (անտիպ) : Տես վարք , էջ 387—391 :

զառն եւ անբարի ժամանակու . . . : Յիշեցէք  
ի բարի աղօթս ձեր զվերոյասացեալ տէր  
Ազարիոյ աշակերտն եւ քաջ եւ արի, հմուտ  
եւ ճարտար իմաստակն . . . : Տէր ողորմի . . .  
ստացողի դրոյս տէր Ազարիայի . . . եւ իմ  
մեղապարտ գրչիս եւ ծնողաց իմոց ննջեցե-  
լոց մահանեսի Մարտիրոսին եւ մօրս Դորվաթ  
խաթունին եւ Եղրօրս Յովհաննիսի, եւ քւերցո  
որ Են ի մարմնի՝ Ճուհարին եւ Հոփիսիմէի  
եւ ամենայն ազգատոհմի: Եւ գրիս անյար-  
մարութեան եւ սիսալանացն հայցեմներել եւ  
անմեղազիր լինել, զի էի պանդուխտ եւ  
զարիոյ օտար Երկիրս եւ միտք իմ ցնոր եւ  
սիմիւռ եւ միայն զկատարումն փութայի . . . »:

Կը գրէ նաև Ազարիա թէ «կատարեցաւ  
զիրքս այս ձեռամբ ումենին լեզցի Սիմէռնի  
հօտարի» :

Նոյն 1609 տարւոյն վերջերը կ. Պոլիս  
կու գայ Մէրտիչ վ. Խարբերդցի, որ վա-  
ֆաղելով Մարմարայի եւ Եզէականի ծովա-  
փերը հաստատուած դաղթականներուն այցե-  
լութիւն տալ, կ'առաջարկէ Սիմէռնին ընկե-  
րակցիլ իրեն, խոստանալով վերադարձին  
հետը առնել զինքը մինչեւ Խարբերդ, ուս-  
կից 5 օրով միայն հեռու է Մուշի Ա. Կարա-  
պետը: Յանձն կ'առնէ Սիմէռն իրեն եղած  
առաջարկը (Ուղ. 33): Մովային շրջապայռու-  
թիւնս կ'ընթանար Եփեսոս-Մանիսա-իզմիր-  
կէլիպոլի-թէքիրտաղ-Նիկիա-իզմիտ զծով.  
եւ կը տեւէ իրը մէկուկէս տարի: 1611 դար-

համն կը զերադառնուն կ. Պոլիս<sup>5</sup> : Արովհեաեւ  
նոյն տարւոյն Խարբերդ-Եղուշ հանագարհը  
անառաջահով կը ներկայացուի Սիմէռնին, կը  
Հրաժարի անիկա ընկերանաւ Մկրտիչ վար-  
դապեաին դէպի Խարբերդ (Աւղ. 43) :

1611 Յունիսին կը հասնի կ. Պոլիս Զաքա-  
րիա վարդապետ, որ Մելքիսէդեկ կաթողի-  
կոսէն կ'ուղարկուէր Հոռոմ : Սիմէռն օգտուե-  
լով առթէն կը միանայ Զաքարիայի խմբին .  
Յունիս 11ին կը մեկնին կ. Պոլսէն և Էտիրնէ—  
Իւսքիւր—Ենկիրագար—Պօմնիա—Քիլիս—  
Սրիլիթ—Զատրա գծով կը հասնին Վենետիկ  
(Հորս ամսէն . Յունիս—Սեպտ., էջ 54) : Եր-  
կու ամիս Վենետիկ դադար տոնելէ հաքք  
կ'անցնի Սիմէռն Անքոնայի վրայէն Հոռոմ (նոյն  
տարւոյն Նոյեմբերի վերջերը), առանձին,  
որովհեաեւ ի Վենետիկ դժուուելով Զաքա-  
րիա վարդապետ հետ (91), զատուած էր  
անկէ : Հոռոմ կը հաշտուի վարդապետին հետ :  
Անոր ընկերակցութեամբ կը ներկայանայ  
Պաւլոս Ե. Քահանայապետին :

Մօտ 9 ամիս կը մնայ Սիմէռն քահա-  
նայապետներու քաղաքը :

1612, Մայիս 31ին կը զերադառնայ Վե-

<sup>5</sup> Եղմիսածնի թր. 186 (= Կար. 158) Աստուածա-  
շունչը կ'օրինակուի 1611ին ի կ. Պոլիս Հձեսամբ Թո-  
խառացի Միքաէլիս . . . ի վացելումն Խարբերդցի Մկրտիչ  
վարդապետին : Քինքը կը յիշէ Գրիգոր Դարանազեցի-  
և Արբերդացի Մկրտիչ . . . որ մականուն Խղճուկ  
ասի, վասն առաւել հլու և Հնազանդ լինելոյն եւն  
(էջ 320, Հմամ. էւ 410) :

նետիկ, ուր վեհետացիք Համբարձումը կը տօնէին: Առանց ժամանակ անցնելու կը մտնէ Հոս նաև և կը թիարկէ Կրետէ—Զատրա զծով Խզմիր: Ի Կողալհիսար ստացած ջերմ մը կը ստիոլէ զինքը առելի քան հինգ տամբու մնալ Խզմիր (Ուղ. 182—183):

1613ին, գարնան վերջերը, կը մեկնի Պրուսա—Ադամդէնկիդ—Պոլու—Թօսիս—Օսմանչուխ—Մարզուան (ոյզեկութքին) —Ամասիա—Թոխաթ—Սերաստիա—Մալաթիա—Խարբերդ—Բալու—Ճապաղջուր—Մանուշկուտ կուտ ճանապարհով կը հասնի Մուչ—Ա. Կարապետ (Ուղ. 197):

Երեք օր միայն կը մնայ Սիմէռն Ա. Կարապետ. Եւ Խարբերդ—Ամիթ-Թոքատ—Մերաստիա զծով կը վերադառնայ կ. Պոլիս (1614 ամառ):

«Կացի անդ (ի կ. Պոլիս) ամ մի, կը դրէ, աշխատելով եւ վաստակելով դրագրութեամբ, զի ժողովեցից ոլոշար սուրբ յերուսաղէմ զնալ. զի եւ անդ էի ուխտ արել: Եւ Ստամուլ զբաղիրն խիստ խիյմաթ ունէր. եւ թէպէտ կարգաւորք շատ են, զրօդ չկայ. զի կարգալն ա՛յլ արվեստ է եւ զրելն ա՛յլ: Եւ տվին ինձ յոլով զիրք զրել աշխարհականք եւ կարգաւորք եւ քահանայք: Իսկ ես ջանայի եւ խայրաթ առնէի, եւ տղնէի ցայդ եւ ցերեկ. վութայի ճեղքէի հանապազ, զի վաստակիցեմ ճանապարհի խարճ. զի ճեռս զատ չէր մնացել. եւ օրն օ՛—կ. զրամ

վաստակէի : Աստուած չէն պահէ Ստամպոյ  
ժողովուրդն և զբահանացս զի այն ամեն ժող-  
ջեցի ութուն զուրուշ» (Էջ 210) :

1615, Յունիսին կ'աւարտէ Հայ Շաբանկ-  
նոցի մ'օքինակութիւնը<sup>6</sup> : Յիշատակարանն է :

«Շեորհիւ Տեսն ակսոյ և ողորմու-  
թեամբ նորին յանդ ելեալ կատարեցի զԵրդս  
չարականց . . . որում ցանկացեալ եղեւ բա-  
րեմիս և ուսումնառէր . . . աէր Յովհաննէս ա  
քահանացին կամախուցի . . . այլ և ընդ նմին  
յիշեաջիք զհամեսու և զաստուածամէր կրաւ-  
նաւորս պարկեւոս որ օգիեցին տրօք այս  
սուրբ ճայնաքաղիս . . . : Բայց զրեցաւ առ ի  
թուին Հայոց Ամեր և ի ամսկանն Յու-  
նիսի , ի կոյսերանիստ մեծահամբու քա-  
զաքն կ . Պոլիս , որ այժմ կոչի Ստամպոյ ,  
ի զուսի Սրբոյն Եփկողայոսի սքանչելազործ  
Հայրապետին , ի թաղին Վլանիու . ձեռամբ  
ազգիկար և անարուեստ զրչիս Սիմեոնի ,  
զոր տկար և վահանքի մտօք . . . մոլոր և  
ցրիւ և անարժան մասամբ նօսրեցի : Մոխ-  
րամած զիմօք Երես անկեալ ազաշևմ զհան-  
զիսոզագ այսմ առաւիս , սպալահանցն ներել  
և զպական ընուշ , զման պանդիստութեան  
և զպրիպութեան զմիսս ցնորեալ էր և  
զիսլու մերժեալ :

1615 Օգոստոս 15ին ոխտաւորներու Հետ

<sup>6</sup> Թորգոռ Էսք . Գուշակեան՝ Յուցակ Հայերէն  
ձեռագրաց Ա . Եշանի Վահուց ի Սերբանք , թ . 123 :  
Տես վարք , Էջ 391—392 :

կը նաւէ դէպի եզրապառու : Առողոսի առջև  
կը պատահի Խալիլ Փաշայի նաւատորմիդին  
(210—211) : Ճանապարհին յարձակում կը  
կրեն նաւորդները ծովահեններէ . բայց Սի-  
մէռն իւր խումբին հետ կը հասնի բարեսու-  
Աղեքսանդրիա , ուսկից կը շարունակէ ճա-  
նապարհը մինչեւ Մոքք (Գահիրէ) : Հոս կը  
պատահի Թոխաթեցի Մաղաքիա արեղային .  
Երկու ամիս կը մնայ անոր քոյլ հիւր (217) :  
Մաղաքիայի միջնորդութեամբ կը ծանօթա-  
նայ նաև Հայապղի խոճայ Իրրահիմշահի ՝  
հետ , որ զինքը ստէոլ ստէոլ կը հիւրամե-  
ծարէ (221) :

Գահիրէն կ'անցնի Գաղայի ճանապար-  
հով Երուսաղէմ : Գրիգոր Պարոնտէր կը  
հիւրասիրէ զինքը Ս . Յակոբեանց վանքը , և  
կը յանձնաբարէ գրել այլ և այլ չքարերա-  
կան թղթեր (Էջ 252) : «Կացի անդ , կը գրէ  
Սիմէռն , ի Վարագայ Խաչէն մինչեւ ի Զա-

7 Բնըլինի թ. 57 ձեռազիր Մաշտոցի ճէջ կը  
կարգամ յիշատակազրութիւնս . զես սարկաւագ Լե-  
հացիս թվին թէկ . երկուսիս հանդիպեցա Մսիր քա-  
ղաքիս : Ող ընթերցողէ պամ տառիս ... շնորհակալ  
և ամէր Դաւիթ բնկերիս . ևս Մկրտիչ Տիւրիկեցի  
միացն անուամբ Երէց կոչէն , զայս Մարգարիս բանեցի ,  
զմեռեալ զրեանքա ի հետ նորոգեցի . . . : Ի ժամանակս  
եռաց իսպահիժային և . Ֆարմանին . նոցա ձեռն-  
արութեամբն և . կամակցութեամբն կազմեցաք զայս  
Մաշտոցո . . . : Հ . Յ . Յաշեան՝ Յուցակ Հայերէն Զե-  
ռազրաց Բերլինի արքայական Մատենագարանին ,  
թ. 57 (անսիզ) : Հմմտ . և . Ղ . Ալիշան՝ կամե-  
նից , էջ 171 : Մարգիս սարկաւագ Լեհացին նոյն է Հա-  
ւանորէն Մարգիս զպրին հետ , որ 1616ին ի Լզով օրի-  
նակել կու առյ Վարդանայ Արարածոց Մեկնութիւնը  
(Կամենից , 171) :

տիկն Հայոց գրէի , այլ և յեկեղեցւոչն սպասաւորէի ընդ այլ սարկաւագան» (էջ 252) , այն է 1615 Սեպտ . 25էն մինչեւ 1616 Ապրիլ 9 : Հոս առիթ կ'ունենայ տեսնուելու Սոյ Յովհաննէս Կաթողիկոսի հետ , որ նոյն (1616) տարւոյն ուխտաւորներու վերջին խուժքին հետ կը ժամանէ Երուսաղէմ (էջ 262) :

1616 Զատկն վերջը Յովհաննէս Կաթողիկոսի եւ Պուկաս եպիսկոպոսի խուժքին հետ կը մեկնի Հալէոլ (317)<sup>8</sup> և անկէ Մարաշ մունուզ — Զէյթուն — Կեսարիա — Էնկիւրի Գոնիա — Սիլբիհսատր — Խարահիսատր — Իզմիտ ճանապարհով կը հասնի Կ. Պոլիս (1618 Մայիս-Յունիսին) :

Ի Կ. Պոլիս «կացաք , կ'ըսէ , երկու ամիս մինչ Լէհու քարվան եկաւ , ընդ նոսա խառնեալ մեծ արապս մի նստաք երեք ձիով . չուեցաք ի Լէհ» (էջ 335) :

Սիմէոն Կ. Պոլիս կը դանուէր 1618 Յունիս 19ին . այս տարի կ'օրինակէ հոս Միքայէլ Քոխաթեցւոյ հետ Սոլոմոնի դրքերն եւ ԺԲ . Ժարդարէները . այսպէս կը դրէ Յիշտատակարանին մէջ . «Արդ ես տկարս արհեստ դրչութեան եւ յետնեալս յամենացնի հիւանդ դուրով . . . սկսայ . . . եւ յանդ ելեալ կառարեցի ի վայելումն . . . կուսակրօն տէր Յակոբ արի եւ քաջ կրօնաւորին . . . Բայց դրե-

<sup>8</sup> Սիմէոն ի Հալէոլ էր 1616ին . ա՛յսպէս իմացիր էջ 318 ծան. :

ցաւ գիրս թվ. թիկ, յունիս ժթ., առուր ա-  
մառնամտի, ի դուռն սուրբ Նիկողայոս  
Սքանչելազործի, որ կայ յԱստրանու դուռն,  
ի քաղաքն Կոստանդինուպօլիս ձեռամբ թե-  
րավարժ զրչի Լէհցի Սիմէոն դպրի: Արդ  
աղաչեմ գհանդիպողսդ անմեղաղիր լինել  
զրիս անյարմարութեան եւ սղալանաց, զի  
յօրինակին տէրն զնալու էր, վասն այն ի  
տվէ Եւ ի գիշերի անձանձիր նստելով նօտրե-  
ցի զսա բազում փութով Եւ շատապով, այս է  
զայս ժԴ. տեսրս ի ժ. օրն»<sup>9</sup>:

Ճանապարհին իրեն հետ էր Ղուկաս  
Խոյիսկոպոս, որ նուիրակութեամբ կ'ուղեւո-  
րէր Լէհաստան: Սա ի վաղուց հետէ ծանօթ  
էր Սիմէոնի. կը զրէ իւր յաշերուն մէջ Սի-  
մէոն. «Ինձ կայր (յԵրուսաղէմ) սիրելի եւ  
ծանօթ մի Խոյիսկոպոս Ղուկաս անուն. սա եւ  
ի Լէհ երեկ հետ ինձ նուիրակ. Ես նորա բա-  
զում գործս եւ բան կատարեցի ի Ստամբուլ  
(1608—1615 չրջանին անշուշտ). այլ եւ զիրս  
յոլով զրեցի նմա. Եւ զայլ սպասաւրութիւնս  
նորա առնէի» (էջ 251): Այլուր (էջ 298) կը  
զրէ Սիմէոն. «զնեցի լաւ էշ մի Եւ ցամաքով  
զնացի ընդ ուխտաւորս հետ տէր Ղուկաս  
պարոնտէրին, որ երթայր նուիրակ ի Լէհ. եւ  
ինձ հրամացեաց մի մեկնել ի նմանէ. որ եւ  
ես յանձն առի երթալ ընդ նմա մինչ ի Լով՝

<sup>9</sup> Տէր-Լէհատիստան, Յուցակ Հայերէն ձեռագրաց  
Նոր-Քուղացի, թ. 256, Ամենափրկիչ Վանաց (ան-  
տիպ): Տես վարը, էջ 392—393:

ապահովութելով նման յամենայն գործու և ի բանակա :

ՄԵՐ հանապարհորդը Երուսաղէմի մեծարքական նուիրակին հաս բարեաւ կը ժամանէ Հայրենիք . չեւ եկեալ ի տիրախնամ և առաւտածապահ մայրաքաղաքն Աէլ կոչեցեալ . . . Եկին ընդ առաջ մեր քահանայք և ժողովուրդք եւ մեծարքանօք առարան իջուցին ի վահքն առարք Համակատար և մեծ Հարկիս արարին Դուկաս պարունակրին , որովէս Երուսաղէմայ նուիրակին» (էջ 336) :

Միմէսն ուշագիր չէ Եզաւ հշանակել մեզի Լվով Հասնելու ժամանեակը . որ պէտք է եզաւ րիցայ 1618ի աշնան : Զատիկ զրիչ 1619 յունուար 4ին «ի վայելունն անք Դուկաս եղիսկոսպասին կ'օրինակէր , Հաւանօրէնի ի լով , Դասիթ Անյաղթի գրութիւնները<sup>10</sup> : Կամենիցի առքեզիքիրը<sup>11</sup> կ'արձանադրէ . «Թով . Ռիմ . Փետրվար 11-ի . Ասյնդուն (Դէ.) . Տէր Դուկաս պարունակը նուիրակը Երուսաղէմանինկա օտքարագեռեր ազուրու Իրավանան առ քէլոր Քամէմէնէցըք ժողովք էղման : Ուրիշ յիշաւակաղըի մը Համաձայն , որ նուիրակին համար Ներսէս Շնորհալույ Ընդհանրականն կ'օրինակէ , նոյն առքունըն Մայիս 25ին , Դուկաս Լվով կը զանուէր . կ'ըսուի . «Պրեցաւ . . . ի խնդրոյ Հեղահազի զրատէր անք Դուկաս եղիսկոսպասին առարք Երուսաղէմայ . . .

<sup>10</sup> Համաձայն , Յուզ . Գաղափարայ , Բ . 83 :

<sup>11</sup> Կամէնիցի , էջ 84 :

ի թվ. Հայոց մելք. մայիս ամսոյ իւն. Երեք-  
շաբթի, ձեռամբ... անարհեստ զրչի Յոհա-  
նիսի որդոյ պարոն Անտրէյի, ի... մայրա-  
քաղաքն Լէվ կոչեցեալ, ընդ հովանեաւ  
Ննջման սուրբ Աստուածածնին<sup>12</sup>: Ուրիշ  
զրիչ մը՝ Յովհ. Կամենցի օրինակելով Գր.  
Տաթևացւոյ Լուծմունքը կը յայտնէ<sup>13</sup> թէ  
ստացողն է «Տէր հոգեւոր Ղուկաս եղիսկո-  
պոսն Ս. Երուսաղէմայ», «զի այս տարին էր  
իջեալ ի նուիրակութեան սուրբ Երուսաղէ-  
մայ համար եւ ետ գրել... թվ. Ռկ. եւ լ.  
աւելի, յունիս ամսոյն ժե»: Եւ գարձեալ  
«զի ցանկացող եղեւ սմի նուիրակն Երու-  
սաղէմի... որ յայսմ ամի Եկն ի Լէհի, տե-  
սող եղեւ այս սուրբ տառի... ի թուականիս  
... Ռկ. եւ լ. աւելի, Սեպտեմբերի քսան եւ  
ութի, որ է աւրն Երեքշարաթի ի Կամենցից  
ամսուր քաղաքի»: Սեպտեմբերի 28էն քիչ յե-  
տոյ մէկնած ըլլալու է Ղուկաս Լէհաստանէն:

Սիմէռն իւր ետեւ ունէր պանդիտու-  
թեան տասներկու տարիներ, ինչպէս ինքը  
կը զրէ: «Եւ կատարեցաւ ժԲ: ամ պանդի-  
տութեան իմոյ» (Էջ 335): Ազրած էր բազ-  
մազիշտ տարիներ, բայց տուանց ընկճելու՝  
յարատեւութեամբ նկրտելով հասնիլ իւր ծրա-  
դրած նպատակներուն. որոնց եւ հասաւ:

<sup>12</sup> Զեռ. էջմիածնի, թ. 502, 298<sub>բ</sub>:

<sup>13</sup> Հրա. Արեւելեան Մամուռուլ, 1897, էջ  
746—747: Լոյս, 1905, էջ 776—778. Կամենցից,  
էջ 174: Ազատունի՝ Միաբանք եւ այցելուք հայ Երու-  
սաղէմի, էջ 236—237:

«Իսկ ես եկեալ Լով և նստեալ Երկու  
ամբու: Տեսեալ զիս բարեկամք իմ եւ սիրե-  
միք յոյժ ուրախացան: Եւ ոկտան յորդորել  
զիս մնալ յաշխարհս իմ աստ եւ ամուսնա-  
նալ. բայց ես ոչ յօժարէի: ... Եւ իրրեւ  
բազում ոզոքանօք սախոլէին, այլ եւ կշտամ-  
րէին զիս լսել նոցա. Բաւական է, առնեն,  
պահպատութիւնդ սցոչափ եւ օտարութիւնքը  
զոր կրեցեր. Հաւանեաց մեզ եւ մի ի սպառ  
ձգեր զմեզ ի սուդ եւ ի տրամութիւն: Քանոյի  
ունէի երկու քոյր եւ քրորդիք եւ այլ յոլով  
ազգականք. այլ եւ տեսեալ զհայրենի տունն  
եւ զրնակութիւնս, զստացուածս եւ զայլս,  
խանթաղատեցայ եւ ի զութ անկեալ կա-  
մաւորեցայ մնալ առ նոսա: Եւ մինչդեռ Դու-  
կաս պարսնտէրն անդ էր, իսկոյն նշանեցին  
զիս ընդ աղջկան միոյ. որ եւ յետ սակաւ ա-  
ւուց<sup>14</sup> գնաց Դուկաս եղիսկոպոսն յԵրու-  
սաղէմ» (Էջ 348—349):

Սիմէոն կը նշանուի 1619 Մայու. 12ին  
պարսն Յովհաննէսի որդույ Քէվորովից  
Եացքոյի զստեր Նասղուխնոյի Հետ: Նշա-  
նաղրութեան երկակողմանի կնքուած պայ-  
մանները — «զրօրէնքը» — ունինք վիճն-  
նայի Մխիթ. Մատենաղարանի թ. 441,  
թղ. 151 ա—բ, Լվովի Հայոց Գրօրէնքի մէջ,  
զժրախտաբար թաթարերէն լեզուով. յա-  
ռաջ կը բերեմ սկզբնաւորութիւնը միայն.

<sup>14</sup> Այսինքն նշանաղը բռնէն քիչ հոքը:

«Քրաւրէնք բահնաւ Նստագուխնանըն Պարսն Ալվանէս Օղլու Քեէվօրովից Եացքո Խզդնընկ, տա բան Սիմոն սարկավարքնընկ, Զամոսցա շահարինընկ. die 12 Septem-  
A. 1619. Բառչահյարնաւ ուչունչի Զիկ-  
մունդնունկ տա Կաթողիկոսլուխունաւ տէր  
Մէլքիսեդէկնընկ. տա Աւաքէրէցյլիարնաւ տէր  
Քասրարնընկ տա Երեսփոխանլիսնաւ Պարոն  
Քարբուսնունկ» :

Ամուսնութիւնը տեղի կ'ունենայ 1620  
Օգոստոս 15ին ի Լվով : Կ'երեւայ թէ ամրող  
տարին՝ 1619 Սեպտ.—1620 Օգոստ. Լվով  
անցուց Սիմէոն : 1619ին կ'օրինակէ Հոս Տէր  
Յովհ. Քարմատանենցի Համար Առ որս դրոց  
Լուծմունքը. Յիշատակարանին<sup>15</sup> մէջ կ'ըսուի .  
«Արդ զրեցաւ զիրս . . . ի վայելումն բանա-  
սիրի տէր ՅովհՀաննէս ասացեալ քահանայի  
որ մականուամբ կոչի Քարմատանենց . . .  
Թվ. Ռիմի. յիշեսֆիք զՄիմէոն դպիր Զամոս-  
ցցի» :

Նոյն տէր ՅովհՀաննէսի Համար կ'օրի-  
նակէ Սիմէոն նաեւ Առ որս կոչուած ճա-  
ռերը : Զեռագիրը կը պահուի Վիեննայի  
Միսիթարեան Մատենագարանին մէջ (թ.  
96) . և ունի Հետեւեալ յիշատակարանը ա-  
ռեղծուածաւոր թուականով<sup>16</sup> .

«Արդ զրեցաւ զիրքս որ կոչի Առ որս

<sup>15</sup> Զեռ. էջմ., թ. 100: Տե՛ս էջ 393—394:

<sup>16</sup> Համար. Հ. Յ. Տաշեան՝ Յովհանի, էջ 365—366:  
Տե՛ս վարը, էջ 394:

ասացեալ սրբոյն Գրիգորի Աստուածարանի ,  
 ...ի վայելումն էւ յիշատակ . . . առև Յովա-  
 նէս Հեղահոգի ընտրեալ քահանայի , որ ճա-  
 կանուամբ կոչի Քարմատանենց . . . : Բայց  
 զրեցաւ ուս ի թվին Հայոց (Զպ) | ին տոպին  
 վրայ զրուած եւ զնօրուած) քառիցս (ի լուս-  
 չորիցս) յիսնակի և. Գյորելինի , այլ ևւ կրդի  
 աւելորդի , Օգոստոսի ԺԷի , ի տիրախնամ ևւ  
 աստուածապահ մայրաքազաքս Լէվ կուհ-  
 ցեալ , ի գուռն Նեֆման սուրբ Աստուածածնի ,  
 ձեռամբ մեղամամած ևւ զիժուն զրչի , Սիմեոն  
 դուրի Զամացացու :

Գրչութեան տարին , զոր բառախաղոց  
 ուզած է տար Սիմեոն , կ'երեւայ թէ խանդա-  
 րում մը կրած է : Չեռազրին մէջ Հայոց բարին  
 վրայ մանրազիր զրուածք մը կայ , որ՝ ճա-  
 տավ Շնջելու փորձ մ'եղած ըլլալով , այժմ  
 զժուարաւ կը կարգացուի . կը նշմարուին տա-  
 կաւին չ զ ||| ին զրերը , զոր կ'ուզեմ կարգալ  
 եօրնիարիւր վեշտասանին , ասով կը ստա-  
 նանք  $716 + 4 \times 50 + 3 \times 50 + 7 = 8129 =$   
 1624 : Այս թուականին Սիմեոն Լզով կը  
 զանուէր , ինչպէս պիտի տեսնենք : Հ . Տա-  
 շեան կը զրէ պարզապէս թէ գրչութիւնը  
 «1700էն յառաջ ըլլալու է» (անդ . էջ 366) :  
 Հ . Ալիշան անդամ մը փորձած է կարգալ  
 «1618?» (էջ 174) , այսպէս Հարցուկանուի ,  
 ուրիշ անդամ «1659» (էջ 193) : Աւելի զիւ-  
 րին պիտի ըլլալը՝ 357 ստանալէ ետքը են-  
 թագրել 700 և ամբողջին մէջ տեսնել

ԱՌԵԼ = 1608 Օգոստոս 18: Բայց ասոր դէմ  
զժուարութիւն կը յարուցանէ Սիմէռնի  
կեանքի ժամանակազրութիւնը. նա 1608  
Փետր. 15ին մեկնած էր Լվովին: Նոյնպէս  
անընդունելի է Ալիշանի 1618 տարին, որով-  
հետեւ Սիմէռն այս տարւոյն դեռ չէր վերա-  
դարձած: Իսկ թէ ի՞նչ հիմամբ 1659 տարին  
կը ստանայ Ալիշան, ինձ անձանօթ է<sup>17</sup>: Զե-  
ռազրին գրչութիւնը՝ չնղազրին միտոզ  
նոտրոզրիր՝ ըստ ամենայնի նման է Ռողե-  
զրութեան դրին: Յովհ. Քարմատանենց  
(† 1678), որ պահանջած էր Սիմէռնէն Առ  
որսի Լուծմանց օրինակութիւնը, քանի մը  
տարի յետոյ սուածարկած կ'ըլլայ այսու նաեւ  
Առ որս ճառից օրինակութիւնը, թէեւ վեր-  
ջինս սուածնէն յառաջ ոգէտք է օրինակուած  
ըլլամբ:

Հարսանեաց ուրախութիւնը կը կատա-  
րուի Լվով: Այնուհետեւ սուած ընտանիքը  
կը մեկնի իւր հայրենի տունն ի Զամոսցա: Կը  
թողում Սիմէռնի, անձամբ պատմել ծննդա-  
վայրին մէջ իրեն ցոյց տրուած ընդունելու-  
թիւնը. «Եւ ի թվ. Ռութ. Օգոստ. ԺԵ, յետ  
Նեղման ամէնօրհնեալ Աստուածածնին պսա-  
կեցայ եւ հարսանիք արի: Եւ սուեալ զիե-  
նակիցս ի Լովայ տարսայ զնա ի տուն հօրս  
իմոյ եւ ի սննեակ մօրս ի Զամոսցա սիլաս  
իմ: Եւ կացի անդ հինդ ամ: Եւ յետ ամաց

<sup>17</sup> Հաւանօրէն «Գ» յորելինի կարդացուած է «Գ»:

ինչ բազում անցք անցին ի դլուխս. այլ եւ յոլով չարի եւ փորձանաց դիպայ ··· ի յոլովից, մահաւանդ ի կարգաւորաց. զի ոչ ոք մնաց, որ զիս ոչ եխած ··· եւ միշտ զոյն առէին. Է՞ր չնստար, այլ թողեր տեղա ու զնացիր. այժմ դարձեալ Էկիր. զի՞նչ կամիս. եւ թէ զի՞նչ շահ եղեւ քեզ այդ չափ շրջիլդ, յԵրաւաղէմ զնալդ. թէ աստ էիր, վաղ քահանայ էիր. զի՞նչ օգտեցար ··· Դու չի ողիտիս մեղ ··· զի մեք ունիմք քահանայ ···» (էջ 349—352) : Զամոսցայի փոքր հայ զազութին քահանայութեան իրաւունքը Սիմէռնին էր. իր բացակայութեան ժամանակ «այլք էին տիրապետել եւ ժառանգ եղեալ». այս մասին կը մտահոգուէր ինքը արդէն պանդիսութեան օրերուն :

1623ին ի Լվով սաստիկ ժանտամահ կը ճարակի : Շատերը կը փախչին քազաքէն եւ կը ցրուին մերձաւոր եւ հեռաւոր դիւզաքաղաքներ. ոմանք կը հասնին մինչեւ Զամոսցա : Փախստականներէն զոմանս չեւ ևս ընկալայ ի տունս իմ» կը գրէ Սիմէռն : Անոնք ունանելով Սիմէռն զպրի աշխարհածանօթութիւնն եւ զրագիտութիւնը, մի եւ նոյն ժամանակ քաղաքացիներէն կըած հալածանքը, կը խոստանան իրեն միջնորդել Լվովցիներու քով, որ պաշտօնով հրաւիրեն զինքը Լվով . ամեք երթամք խօսիմք հետ աղայից . եւ զքեզ առ մեղ բերցուք . դու մե՛ղ լայեիս

և եւ ոչ զոցա - որպէս և արարին խոկ  
(էջ 353) :

Արգեածքը այ վասխառականները կը զերազանան լվով և ազաներու առջեւ կը բարեխօսեն Սիմէռնի մասին . «Եւ նոքա ժողովնալ զծերակայուն և զամենայն ժողովուրդն ի խորհուրդ՝ զրեցին ինձ , զի երթոց ի Լով առ նոսա : Իսկ ևս վութով Համեալ՝ առնեն ցիս . Կամիմք զի զաս առանցոյս մէր ուսուցանել . . . . : Եւ ևս կամառուրեցայ . . . Եւ ևս քանզի զահրով էի՝ ծախեցի զատինս ու տեղու և զամենայն ինչ . և առեալ զիինս եկի լէվ , թզ . Ռէշ. Ռէշ. (1624) , օգոստոս մէն : Եւ Վարազայ Խաչին թէսլիմ արին զիոպաստունն և զազացա : Եւ առեին ինձ քարէ առնեն ի չըրիթալի՝ կենալ առանց վարձուշ (էջ 355) :

1624ին սկսեալ կը պաշտօնավարէ Սիմէռն լվովի Դոդրատան մէջ իրրեւ ուսուցիչ<sup>18</sup> : 1627ին , երբ ի լվով երկրորդ անգամ ժանառամահ կը ծառի , ինքն ալ կը Հարկադրուի մասնչիլ ընտանեաք և կ'երթոյ «ի Ռահամիթին զեզաքազաք մի թէ մզոն Հեռի ի լուգայ . և կացաք անդ անով երեք ամիս և

<sup>18</sup> 1628 յունիս 16ին «ի մայրաքազաք լէվ կ'որինակութիւն Պր . Նիւսացւայ (Նեմեսիոսի) ընտիրեան . և կազմութեան զիրքը Հոգեութեամբ երից աշակերտացամանկազունից և ահասից , որ ի արհեստա բազում աշխատեալ և այս զիրք նոր և առաջին Հանեալ , Պատանի Խաչքը , Եռագոյի Միարու և Մէրիկի Հանգոյշ (իջմ . 403. թզ . 181ա—բ) : Առենք առանց ասրակուսի Աիմէռն զորի աշակերտանիքն են :

շարաթ մի , այս է վերացման կաչէն մինչև  
ցուուրը Յակոբ» (էջ 382) :

Հոս ի Բոհաթին 1627ին օրինակած է  
Աղօթից զիբք մը . առև էջ 395—396 :

1629ին ի Լվով Զուղայեցի Յովհաննէս  
բժիշկի յանձնաբարութեամբ կ'օրինակէ «Յա-  
զագս կազմութեան եւ գոյացութեան մարդոյ  
եւ այլ բժշկական խրաներ» . Յիշատակա-  
րանին<sup>19</sup> մէջ կը զրէ . «Գրեցաւ զիբու ի  
թուականիս Հայոց Ռէմ. սեպտ. մէջ . . . ի քա-  
զաքս Աէվ կոչեցեալ , ընդ հովանեսու Ննջման  
ուուրը Ասուուածածնին» . կը խնդրէ յիշէլ «Եւ  
զիս սնարժան զրիչս զլիմէոն զպիրս» : Խօ-  
սելով հոս Շվետներու եւ թաթարներու կա-  
տարած ասպատակութեանց վրայ ի Լեհս , կը  
զրէ . «զոր ես ցաւազին զիմօք , աղիոզորմ  
կոծմամբ ականատես եւ ականջալուր եղեալ  
իրացս՝ վշտանայի , հոգոց հանէի եւ հուա-  
չէի» :

Իրը 1634ին զրած է Սիմէոն ստանաւոր  
Յիշատակարան մը Լեհահայոց ևկեղեցական  
զժուութեանց մասին , զոր Հ. Դ. Ալիշան ա-  
նուանած է Վիզասանութիւն Նիկոլական :

Տե՛ս այս մասին էջ 399—405 :

Իսկ Աւղեղրութեան կից պատմած է  
1620—1625 տարիներու քաղաքական անց-  
քերը :

1636 թուին կը զրէ Սիմէոն իջմ . 1004

<sup>19</sup> Ա. Տէր-Աւետիսեան՝ Յուց . Հայերէն մեռա-  
շբաց Նոր-Զուղայի , թ . 235 Ամենափրկիչ Վահաց :  
Տե՛ս զարը , էջ 397—399 :

(Վարդանոյ Մեկնութիւնն Հնդամատենին), բնկերակցութեամբ ուրիշ երկու գրիչներու: Օրինակութեանս կցած է Սիմէռն ընդարձակ պատմական Յիշատակարան մը<sup>20</sup>, ուր խօսելով ցաւած սրոտվ Լեհահայոց եկեղեցական անցուղարձերու մասին, կը պատմէ թէ օքր մի գտեալ էրէց մի ի քաղաքն (Լվով), որ եկեալ էր առ հիւանդան, կոխեցին զտունն (հրամանաւ Նիկողայոս արքեպիսկոպոսին), կայան զէրէցն եւ տանէին ընդ մէջ քաղաքին... եւ իրքեւ տարան, ածին զնա առաջի նորա (արքեպիսկոպոսին), ընդ որս էի եւ ես եղկելիս, զոր յետ բազում զանից եւ զզվանաց ետ ի շղթայս»: Դարձեալ պատմելով սուլտան Մուրատի Երեւանի վրայ կատարած արշաւանքին եւ պարտութեան մասին՝ կ'աւելցնէ. «Եւ ասին թէ սուլթան Մուրատի փախստական զարձաւ ի տուն. եւ այլք տսին թէ մնաց ի ձմեռանոցն Համիթ. եւ զայլի յայլում վայրի գրեսով: Զայս սակաւս վորք ի շատէ ծանուցաք ըստ կարի մերում, որպէս յուաք ի հաւատարիմ արանց»: Յիշատակարան աւարտած է Սիմէռն 1636, զեկումը թէ 15ին: Թէ ունեցու անիկա տոիթ սուլտան Մուրատի արշաւանքի վրայ միւսանզամ խօսելու «յայլում վայրի», ծանօթ չէ ինձի:

Այս տեղ կը կորսնցնենք Սիմէռն զորքի կենդանութեան հետքերը:

<sup>20</sup> Յիշատակարան կը զետեղէմ ամբողջութեամբ զորքոյս Յաւելուածին մէջ, էջ 405—420:

ԱՆԴԵԳՐԱԿՐՈՒԹԻՒՆ:

Աւղեղբութեանս ձեռագիրը կը պահանջ  
այժմ էլքովի Համալսարանի Մատենագարա-  
նին մէջ, ի շարս հայերէն ձեռագիրներու եւ  
կը կրէ 58 համարը: Նկարագրութիւնն է.

Թուղթը՝ 198 (= 396 էջ): Մեծութիւն՝  
15,3 × 10 սմ.: Գրչութիւն՝ 12 × 7,2 սմ.:  
Տողը՝ 24: Նիւթ՝ թուղթ: Կազմ՝ կաշի բաց  
կարմիր գունով: Գիր՝ նուար մէտ շղագրի:  
Հանդամանք՝ լաւ: Դասարկ թուղթեր՝ էջ  
206, 289 (կէս էջէն) մինչեւ 396: Երկու դա-  
սարկ թուղթ նաև սկիզբն եւ վերջը իրեւն  
պահպանակ զրուած: Խորան, գարգագիր եւն  
չունի: Գրուած է միահետ զրչութեամբ. Հա-  
տուածներու սկզբնատառերը, կ'երեւայ կար-  
մրագիր զրելու համար, թողուած են ան-  
դիր: Գրիչ և Տէր՝ Հեղինակը Սիմէռն դպիր.  
Լեհացի (Զամոսցացի): Տեղի՝ հաւանօրէն  
Լիով: Ժամանակ՝ 1619—1635:

Սիմէռն Լեհացւոյ այս Աւղեղբութիւնը  
համասնո զրականութեան մէջ մէկ հասիկն  
է թէ՛ իւր բնդարձակութեամբը, թէ՛ լայն  
աշխարհածանօթութեամբն եւ թէ՛ հայ կեանքի  
զրայ ճոխ հաղորդագրութեամբը:

Աւնինք նախանցեալ շրջանէն Հեթում  
կոսիկոսցի մը, որ գէովի Թաթարաց աշխարհ  
դիպուածալից ճանապարհորդութիւնը նկա-  
րագրած է. ունինք դարձեալ Խաչատուր Եւ-  
դոկիացի (այսովէս, և ո՛չ Երովակացի) մը

Եւ Մարտիրոս Երզնկացի մը , որոնք վենելա-  
տիկ-Հռոմէ ճանապարհը կ'ընթանան առելի  
կամ նուազ Երկար դժով , Եւ կը յայտնեն  
իրենց սքանչանքը Աղբիական դշխոյի փառ-  
քին վրայ : Կը թողում յիշել Աւգոստինոս  
Բաղենցը , Յովհաննէս Թութանաբին , Յակոբ  
Կարենցին Եւ ուրիշներ : Անոնք ոչ իրենց աշ-  
խարհահայեացքով եւ ոչ ալ բազմաշրջու-  
թեամբ կրնան հեռուէն անդամ մրցակից ներ-  
կայանալ Սիմէռնի :

Արդէն Երկար ուղեղիծը՝ Լվով—Ե . Պո-  
լիս—Զմիւռնիս—Ե . Պոլիս—Վենետիկ—Հռոմ  
—Մուշ—Ե . Պոլիս—Գանիբէ—Երաւանդէմ—  
Հալէպ—Ե . Պոլիս—Լվով , ինչպէս Եւ ժամա-  
նակը՝ 1608—1619 , բաւական Են համոզելու  
զմեղ , թէ Սիմէռն ունի շատ բան պատմելու  
իւր շատաշրջիկ կեանքէն Եւ ապրումներէն :

Սիմէռն բարի Եւ «պարզամիտ մարդ» (214—215) է . անիկա կը հաւատայ անոնիք-  
ներու Եւ հրաշքներու . կը զարմանայ ամէն՝  
անսածի Եւ յսածի վրայ միամտօրէն : Բա-  
րեմտութիւնն Եւ ճշմարիտ հաւատքը իր ըն-  
կերներն եղած Են իր Երկար ճանապարհին  
վրայ : Իր այս նկարագրով սիրուած է անիկա  
ամէն տեղ : Իր բարեմտութիւնը կը թելաղը  
մեղի հաւատք ընծայելու իրեն , ընդունելու  
իր պատմածները այնպէս , ինչպէս անսած Եւ  
յսած է :

Ոչ միայն աշխարհներն Եւ ժողովուրդ-  
ները հետաքրքրած են զինքը , այլ Եւ զննա-

զայրերն և մարդկան կենցաղը : Եւ որովհետեւ հայ մարդ է արեամբ և զգածումով, ամէնէն առաջ հայ ժողովուրդը վճառած է իւր հանագարհին զբայ : Ժամանակը, երբ իւր ուզեւութիւնը կը կասարէր Ախմէնի, հայ զայթական կեանքի պատմական մէկ բազէն էր . մայր Երկիրը լքան՝ օտար Երկնքի տակ իւր հանգիստը կը վիճակ է հայ ժողովուրդը . նոր զայթազայրեր կը հաստատին ամենուքը : Յատկապէս այս ահաւակէտով կը սատնան ուզեւորին հայուրդագրութիւնները կարեւորութիւն :

Անիկան հետաքրքրուած է բայն չափով իւր հանագարհին զբայ պատմահած քաղաքներով և զննացայրերով : Առանց յոզհութենի խոյս տուրու՝ կը չը՞ի քաղաքներ, կը հարցաքնի մարդիկ և կը քազէ տեղեկութիւններ . «որ չափ կացի անոց (ի Կ. Պոլիս), կը զրէ, օր մի չկացի ի տան . այլ ամէն օր Երթոյի յեկեղեցի մի կոտ ի չէնք» (24) : Դժբախտաբար անզ անզ, Երկիւզով թէ ձանձրանալի կարող է բլլու, զիմած է համառոտախոսութեան : Զարգարն հետաքրքրական էն իր նկարագրութիւնները կ. Պոլսոյ, Վենետիկի, Հռոմի, Մուշի, Գահիրէի, Երաւանչէմի, Հայէսպի և Լիոնի մասին :

Անեցած է Ախմէնի բարի սովորութիւնը, նշանակել յուշատեսրին մէջ օրօրին հանգարհուրդական տպաւորութիւնները : Իր աշխատաւթեան ձեւի մասին հետաքրքրական էն

առղերս, զորտնք կը գրէր երբ տակուին չէր  
բաժնուած Հոռմէն.

«Եւ այլ բազում իրս, բանս եւ գործս,  
չէնք եւ կարգ ու սահմանք տեսաք եւ լուաք  
աշխարհն այն. զոր սակաւս ի բազմաց զրե-  
ցաք բազում աշխատութեամբ, սիրով ընթեր-  
ցողացդ եւ յուսով ունկնդրողաց: Բայց ա-  
ղաչեմ մի հեղղալ եւ մի ձանձրանալ ձեզ՝  
սովախս առնելով զերկո վաստակոց իմաց.  
զոր երբեմն ի կեմին, երբեմն ի վերայ զրա-  
տի, երբեմն յիշեւանս եւ խաներն նատեալ  
զրէի. այլք ուտէին, ըմպէին եւ այլ յիրս  
զուարնանային. եւ ես հոգ տարեալ այս  
իրի՝ ջանայի ի լրումն հանել զառաջարկեալ  
զիրս. զի յօգուտ եւ շահաւետ լիցի ուխտա-  
ւրաց եւ շրջող անձանց» (175):

Այս յուշագրութիւնները սովա վերագար-  
ձին հայրենիք ենթարկած է նոր խմբագրու-  
թեան, յետսահոյեաց ակնարկով մը: Աւգե-  
դրական մասը խմբագրուած է 1619—1625  
տարիներու մէջ, երբ Լեհահայոց կեանքը չէր  
յուղուած զեռ ներքին դժուութիւններով: Հե-  
տաքրքրական է հետեւեալ դէպքը, զոր մու-  
ծած է ուղեղքրական ծահօթութիւններու շար-  
քին մէջ օրուան տպաւրութեան տակ: Աբ-  
մէոն նկարագրելով Հոռմ տեսածները (1611—  
1612 տարւոյն) կը գրէ յանկարծ: «Յայսմ ամի  
վոխեցաւ առ Քրիստոս կայսորն քրիստոնէից՝  
ալուման, բարի մահուամբ, Մաթէոս անուն»  
(138): Խոռքը Մաթիաս կայսեր մասին է, որ

վախճանած է 1619ին. ուստի հարկ է հետևեցնել թէ Սիմեոն 1619ին պարագած էր իւր Ռողեղբառթեան խմբագրութեամբ և զրած էր արգէն 1—138 էջերը:

Սիմեոն իրբեւ ուղեւոր նկատող միայն եզած է. չէ եզած միջամուխ ազգային-եկեղեցական-քաղաքական խնդիրներու մէջ. նու նկատուծ է ազգերն ընդ հանրապէս և անոնց ազգերակերպոր, քրիստոնէոթիւնն առհասուրուկ եւ անոր մշակոյթը: Կը հետաքրքրուի անզագրութեամբ եւ կենցազագիտութեամբ, բայց նաև իւրաքանչիւր երկրի եւ քաղաքի արդիւնաբերութեամբ եւ քաղաքակրթութեամբ:

Ժամանակակից քաղաքական անցուկարձերու եւ եկեղեցական-ազգային կեանքի նկարագրութեան մէջ ճոխազոյն է Գրիգոր Դուռանազեցի, որուն նպատակն է ժամանակազրութիւն զրել. Սիմեոն ուղեղիր է, կ'արձանազրէ անսածները միայն, առարկայօրէն: Ինչ որ միրիպած է Դարանազցւոյ ուշագրութենէն, Հազարդած է Լեհացին: Բմբոներու համար ժամանակին Հանդամանքները, անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ երկու հերթնակներս այ:

Սիմեոն ուղած է իւր ուղեղբառթեամբ ուղեցոյց մը տալ այն ուխտաւորներու, որոնք կը մասմազին ընթանալ նոյն ճանապարհով: Ուղած է բաժին Հանել անոնց իւր մասմառութենէն: Այս նպատակով այ ժամանական կը

նշանակէ մանապարհներու հեռաւորութիւնը ,  
քաղաքներու երեւելի սրբավայրերը , նշանա-  
ւոր շինուածքները , նաև ժողովուրդներու  
վարք ու բարքն եւ նիստ ու կացէն ուշա-  
գրաւ եւ զգուշալի գիծեր :

Երկար յամած է կարեւոր կենդրոններու  
մէջ , այսպէս կ . Պոլսոյ , Վենետիկի , Հռոմի ,  
Գահիրէի , Երուսաղէմի եւ Լիովի նկարա-  
զրութիւնները տուած է շատ մանրամասն ,  
որոնք հետաքրքրական են նաև այսօրուան  
ընթերցողին համար :

Նկատի առնելով Ուղեգրութեանս այս  
ամէն առաւելութիւնները , անհրաժեշտ հա-  
մարեցայ ամբողջութեամբ հրատարակել  
պայն :

Հեղինակը թէպէտ կը պարծի թէ առած  
է իւր կրթութիւնը «ի վարժարանս ջահաս-  
տանի առ սոս վարդապետաց եւ բանախ-  
րաց» , բայց շատ թերավարժ է ուղղախօսու-  
թեան մէջ : Կը գրէ գրարարախառն ռամ-  
կօրէն : Ականչը լաւ չէ ընդունած հայերէնի  
նուրբ ձայնները : Այս պատճառաւ ալ գործած  
է անթիւ ուղղագրական , նաև քերականս-  
կան սխալներ : Առ հասարակ շատ զգալի է  
իր գրչին տակ գրաբարի եւ աշխարհաբարի  
կոփեր : Որպէս զի միօրինակ ըլլայ ուղղա-  
զրութիւնը , եւ ընթերցանութիւնը չխան-  
դարի քերականսկան ծանր սայթաբումներէ ,  
կարեւոր զատեցի ուղղել տեղ տեղ անձշղու-

թիւնները : Չեսագրին ընթերցուածները ներկայացուած են ստորին լուսանցքի պատյ:

Հեղինակը միահետ զբան էր իւր ուղեղքութիւնը . առանց որ եւ է զլուխներու բաժանման : Որպէս զի զիւրին բյոյ աշխատաթեանս զործածութիւնը , Հարկ ահսոյ մուծել բաժանումներ ուրոյն խոստաբանութիւններով :

Ուղեղքութեանս կցան և Շիմէռնի Տարեգրական տեղեկութիւնները : Այս պատմական տեղեկութիւններէս ինչ ինչ կրկնուած է Յիշտակարաններու մէջ : Ամրազդութեամբ ներկայացնելու Համար Շիմէռն Դպրի զբական վաստակները՝ Յաւելուածի մէջ ամփոփեցի ինձ մատչելի ռուր Յիշտակարանները , ի բաց առեալ մէկէն (թ. 9) , որ լոյտ առած էր արգէն ոյլուր :

Չուղեցի ծանրաբեռնել է ջերը երկար ծանրթագրութիւններով :

ԱԽՎԱԵԼԻՔ

|           | Վարիանի            | Ուղիղի             |
|-----------|--------------------|--------------------|
| 3 53      | իմ, ի հօրէ         | իմ ի հօրէ,         |
| 20 336    | խուսիշիք           | խուսիշիք           |
| 20 338    | կոմ չլու           | կոմ (ութունն) չլու |
| 20 339    | եիւզլոյ, մ.        | եիւզլոյ մ.         |
| 27 519    | յիշեալ կարդան      | յիշեալն            |
| 28 536    | հորին (այլին ի զ.) | հորիք              |
| — 537     | ամբոցիք            | ամբոցիք            |
| 57 78     | առազաւ, հորիք      | առազաւ հորիք       |
| 83 176    | եւ այն             | Եւսոյն             |
| 84 191    | զոքոնենան          | զոքոնենան          |
| 122 105   | զաշտորիկ կարդան    | զաշտորիկ           |
| 132 180   | հուռուզով          | հուռուզով          |
| 135 56    | յուն յունացն       | յուննլուսացն       |
| 160 15    | ոչ ձաւանալիք       | ոչ ձաւան խալիք     |
| 175 69/70 | ոյսամ իրի ջանացին  | ոյսամ իրի ջանացին  |
| 180 76    | ոզով,              | ոզով               |
| 195 19    | եւ,                | Եւ,                |
| 196 49    | կուսուս            | կուսուս            |
| 205 90    | զիրանէ             | զիրանէ և :         |
| 209 12    | 1612               | 1613               |
| 210 36    | 1614               | 1615               |
| 211 53    | առարկաց, եազմիք    | առարկաց եազմիք     |
| 223 171   | խոզոչ չի բանած     | կարդան             |
|           | կարդան             | խոզոչնի բանած .    |
| 224 210   | իշգորկիտիք         | իշգոր կիտիք        |
| 225 236   | խազակէ             | խացակէ             |
| 226 264   | զէմիշնին           | զէմիշնին           |
| 233 180   | ճինզիք             | ճէնզիք             |

ԱԴՐ ԱՅՍԻ ԱՅՍԻ ԱՅՍԻ ԱՅՍԻ

|     |     | ՎԱՐԱՐԱՆ       | ԱԿԱՆ                |
|-----|-----|---------------|---------------------|
| 310 | 116 | ի զանկին      | իզէնկին             |
| 319 | 35  | ոց տեղ» :     | ոց տեղ :            |
| 349 | 33  | ոէլուսիմ      | ոէլուս իմ :         |
| 349 | 44  | Յառաջորան     | Ներածութիւն         |
| 349 | 11  | զքազաքս և.    | զքազաքս . և.        |
| 377 | 23  | Յառելուած Բ.  | Յառելուած , էլ 407: |
| 380 | 27  | Յառելուած Ա., | Յառելուած ,         |
|     |     | էլ 385—386,   | էլ 395—396:         |
| 381 | 45  | Բարյալոթ      | Բարյ ալոթ           |
| 384 | 55  | Ա. և. Բ.      | 9 և. 10:            |

---



ամենուրեա անոց առ թիւրտան  
ապրոյս արտափառ է ծայ անընդադրան  
ի հրանիստան ու ինչ: Ա վայս պատկան  
յանի և արուս ան անունի անունը, ին-  
չ անուն ու այս անունը, բայց  
գործակ հանի անունը: Եթե ունի անուն  
ու անունը: Խորոշ անուն անունը  
ծովագուց աղքատ անքոյու: ու ու-  
ստի ազգի Անուն բանի անունը աղքա-  
տ անուն են պատկան անունը: ու  
անուն է անուն պատկան անունը:  
պատկան: Անուն պատկան պատկան  
պատկան պատկան պատկան պատկան  
պատկան պատկան պատկան պատկան  
պատկան պատկան պատկան պատկան

# Ա Խ Ա Ե Գ Ր Ա Ի Ռ Ո Ւ Յ

## Ա Խ Մ Է Ա Ն Վ Պ Ի Վ Բ Լ Ե Հ Ը Ց Ի Ա Յ

### 1. Մ Ո Ւ Տ Ք

Ես մեզաւոր եւ անորդան, քիւր քան-  
քարոյ պարագանեան, ծառայ չար եւ ապիրատ  
ի հրամանա Տեսուն Աստուծոյ իւմոյ, այլ եւ  
հուսկ եւ յետին եւ արուպո յամենայն սաստի-  
ճանաւորաց, կոչեցեալ ոպիր՝ որ է չորս 5  
սաստիճան, բայց զործովս հեռի եւ մեկուսի,  
Ախմէոն անուն որդի Մարտիքոսի: Մնօղքն  
իւր ընտկան յաշխարհէն Հոնաց, ի տիրա-  
յանամ եւ տառաւոծապահ ծովահայեաց քա-  
զարէն Քոփայու, պանդուխու զոյով եկեալ 10  
ընտկեցան ի քրիստոնէից Երկիրն՝ ի զաւան  
Բոզաց, որ այժմ տիրեն Լէհք, ի նորաշէն  
զիւզաքաթի Զամոսց: Թողեալ զմեզ  
նշղէն եւ ինքեանք օխիսեցան յանանց կեանան,  
ուր յոյժն ամենեցուն Քրիստոս:

Բայց զիս ավեալ յուսումն զբոց, որում  
հասու Եղեալ ի մանկութենէ մինչ ի չափ հո-  
սակի հասեալ՝ զեղերեալ եւ մարզեալ ի վար-

2 յազիքուս: — 10 պահառախու: — 14 յինքամեք:

ժարանս ջահաստանի առ ուս վարդապետաց  
 20 եւ բանասիրաց : Եւ երբեմն ընթերցեալ իմ  
 զՎարս հարանց եւ զՊատմութիւնս վիպասա-  
 նաց , անկաւ ի սիրտ իմ վասիտգ եւ ջերմ սէր ,  
 բայ այնմ թէ «Ձեռաւ սիրտ իմ ի փորի իմում ,  
 եւ ի խորհուրդս իմ վառեցաւ հուր» , ի բա-  
 25 զում սմաց եւ ի վաղուց հետէ . վասն որոյ  
 եւ տոչորէր սիրտ իմ , դաշտարէին աղիք իմ  
 միշտ եւ հանապագ , շրջադայիլ եւ տարաշ-  
 խարհիկ լինել յօտար եւ յանձանօթ զաւառան  
 եւ ի սփիւռս հեթանոսաց : Այլ եւ ուխտիւ  
 30 գնալ նախ յաստուածակոխ քաղաքն սուրբ  
 Երուսաղէմ՝ յերկրագաղութիւն լուսարուխ  
 սուրբ դերեզմանին Քրիստոսի եւ այլոց սուրբ  
 տնօրինականացն որ անդ : Եւ անտի զնալ ի  
 Մուշ , ուր նշխարքն է սրբոյն Յովհաննու  
 35 Մկրտչի . եւ ապա ի մԷծն Հոռմ , ի սուրբ  
 գերեզմանն Պետրոսի եւ Պօղոսի եւ այլ յոք-  
 նախումբն եւ բազմահաւաք արեամբ ներկեալ  
 սուրբ վկայիցն : Եւ վասն այսմ բարի մտա-  
 ծութեանս յոգոց հանեալ միշտ հառաջմամբ  
 40 աղաչէի զինդրակատարն Աստուած՝ զուտիչն  
 ամենայն բարեաց եւ կատարիչն ամենայն  
 խնդրուածոց , զլոտղն աղօթից , զի տացէ ինձ  
 բայ սրտի իմում . եւ ցուցցէ ինձ զնանա-  
 պարհ յոր եւ զնացից , հասուցանել զիս այս  
 45 հոգեւոր եւ աստուածային բաղձանաց :

19 ջահասպանի յոռաւ : — 20 ընթերձեալ : —  
 31 յարեամբ : — 39 հառաջմամբ : — 44 յայս : —  
 45 յաստուածային :

Զոր եւ բազմագութ, ողորմած եւ մարդասէքն Աստուած, որ տայ ամենայնի առատապէս եւ ոչ նախատէ, ըստ Յակոբու առաքելոյ, այլ եւ լնու ամենեցուն զփափազն առաւել քան զոր խնդրեմք եւ իմանամք. որ 50 եւ ինքն իւր ամենասուրբ բերանովն հրամայեաց, թէ Զամենայն զոր ինչ խնդրէք ի անուն իմ, ի հօրէ տաց ձեզ: Եւ զարձեալ թէ Ամենայն որ խնդրէ առնու եւ որ հայցէ զտանէ, Եւ ոյլն: Նոյն անարգամեծար Տէքն, 55 որ ոչ զարշի ի մեղաւորաց, ոչ հայեցաւ յանօրէնութիւն իմ, այլ եւ ի անթիւ զաղիք սղալանս իմ: Արդ լուսւ ազօթից իմոց եւ զիսնդրուածս իմ ընկալու. Եւ առաջնորդեաց ինձ ի շախիզս ուղիզս. Եւ ի ճանապարհս արդ զարութեան վասն անուան իւրոյ, ըստ անսուս խոստման իւրոյ. որում փառք, պատիւ եւ երկրոգագութիւն, անգողար գոհացողական փառատրութեամբ յամենայն արարածոց նաեւ յիմ մեղագարտ յանձնէս, քանի եմ եւ 60 եղէց եւ մինչեւ ցելս չնչոյ իմոց. ամէն:

## 2. ՈՒՂԵԽՐՈՒԹԻՒՆ Ի ԼՈՎԱՅ ՄԻՆՉԵԽ ՑԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Արդ ի թվին Հայոց ԲՈՅէ, Փետրուարի ժեւ, աղուհացից յերկրորդում շաբաթի՝ օրն երկուշաբթի, կամօք եւ զօրութեամբ ամե-

51 յինքն յիւր: — 52 յանարգամեծար: —  
62 յորում: — 63 Եղեց:

նակարոցին Աստուծոյ, ապահնեալ ի Հոգին  
 5 սուրբ Աստուծած ճշմարիս, ելի ի ԼՌՎԱՅ  
 մայրաբազարէն, լևալ ամաց քասին եւ չորից :  
 Եւ մասյ ևս ի հանապարհ ՀՀԱ Պուղանեաց  
 Հոյոց վաճառականաց : Եւ զի ձմեռն էր՝  
 տառն օրն հաղիւ հասաք ի ՍԻՆԱՅԻՆ քա-  
 10 զոր, որ է սինու եւ վերջ ԼԵՀաց երկրին  
 և մուտ Օլախաց երկրին : Կացաք անդ օր  
 մի : Եւ անոտի ինն օրն եկաք ի աստուծաշէն  
 քաղաքն ԱԷԶՈՎ, որ էր թախա Պուղանեաց  
 պարոնաց եւ աթոռ հայրապետի Հոյոց և  
 15 Օլախաց : Եւ այս Սէ չոփս էր յոյժ բարձրա-  
 ւանդակ անդո՞յ, քայցրահայեաց և վայե-  
 լուչ, բարեխառն եւ առողջարար օդով : Եւ  
 ջուր մեծ երթայր շուրջ զքաղաքաւն : Եւ  
 կայր յայս քաղաքս երեք չորս հարիւր տուն  
 20 հայի . երեք քաղաքէն եկեղեցի եւ երկու վանք  
 վիմաշէն քաղաքէն ի դուրս, յոյժ զեղեցիկ  
 և պատվական . մինն մերձ եւ հուզ քաղա-  
 քին, միւսն երկու մզոն հետի : Եւ էր անդ  
 Լոյիսկապոս մի երկրցի՝ Յավհաննէս անուն,  
 25 եւ վարդապետ մի Հիգանցի՝ Մկրտիչ անուն,  
 եւ վարդապետ մի այլ Մեսրոպ անուն : Եւ  
 ժողովուրդ քաղաքին էր խիստ հիւրասէր,  
 երկիւղածք Աստուծոյ և մարդասէրք : Կացի  
 առ նոստ երեք ամիս եւ երկու շաբաթ յա-  
 30 զոր ընկերաց :

— 16 բարձրաւահանիկ : — 17 յոզով : — 19 երեք կա :  
 — 21 ոյժ :

Ապա լուսոց զի խաղնայ տանէին Օլախաց  
Երկրէն թուրքին խօնթքարին ի Սարմազօլ : Եւ  
խնդութեամբ շուեալ Երեք օրն հասայ ԵԱԾ  
ՊԱԶՈՒՄՆ . եւ կացի անդ ամիս մի , մինչեւ  
Ելնէ խաղնան : Եւ կայցր Եաշն Երկու Հարիւր 35  
տուն Հայի՝ եկաց եւ բնակաց . եւ վառաւոր  
եկեղեցի մի քարէ . եւ իմաստուն քահանայք  
եւ պերճ տօրիթթաւորք :

Եւ Աստուածածնայ պահոցն Երկուշաբ-  
թին ելի հետ խաղնալին : Եւ խաղնաստարքն 40  
էին Հայք Եաշցիք՝ խոնայ Սայհաննէս Կե-  
րոնեց Եւ Ավրամի որդին խոնայ Խաչիկն :  
Բայց Աստուած այլազ առնէ Խաչիկն եւ  
վարձահասուց լինի միոյն հաղարապատիկ  
առա եւ ի հանդերձեայն , զի նու էաւ պիս իւր 45  
արտագան , եւ բազում երախտիս եցոյց ինձ  
մինչեւ ի Սամազօլ անարժանիս :

Եւ անտի հասաք Երկու օրն խասապայ  
մի ՎԱԼԱՌՎ անուն . եւ կար անդ եկեղեցի  
մի վայտէ , քահանայ մի եւ քան տուն Հայի : 50  
Եւ օրուկէան կացեալ անդ՝ հասաք ի ՊԻԼԱՏ .  
եւ սուրբ Աստուածածնի Փոխման օրն անդ  
արտաք , շորժ օր յամեցեալ անդ : Քանիզ  
սովորութիւն այսպէս էք , որ խաղնան ամէն  
քաղաք Երեւու Երեք օր պիտէր կենաք . բայց 55  
կերտկուր եւ ըմպելին իւրեանց եւ գրա-  
մացն ամէն անդ պիտոր տային :

Եւ անտի Երեք օրն հասաք ի ԿԱԼԱՎ . որ

էր վերջն Պողոսանաց երկրին և մուտ ի թուր-  
60 քաց առշխարհն : Եւ այս կալտառուս տոջեւովից  
երթայր սրբնթաց առաջնառուեսիլ, մեծ եւ  
ծովանման զետն թունաց, սոսկալի և բազ-  
մաց զարհուրելի, լայնատարած և ան-  
դրեզային, մարդուկուլ և արենարրու :

65 Եւ Օգոստոսի ԻԲ ., օրն կիրակի, անցաք  
զայն անհուն գիտն . և երկուշարթին յայն  
կոյս անցեալ մտաք ի գեղջուկ մի Միջին.  
անուն : Եւ անոր կացաք երեք օր . և անոր առ-  
նուին զթուրքին կօժրուկն : Եւ չուեալ անտի  
70 երկու օր ու կէսն եկաք ի ԽԱՐԱՊՈՒԿՆ խա-  
ռազայ : Եւ Օգոստոս ԻԶ . մտաք ի ՊԱԶԱՐ-  
ՃՈՒ : Եւ անոր երկու օրն հասաք ի ՔԸԱ-  
ՎԱՏԻ : Եւ այս քաղաքու էր ի մէջ երկուց  
բարձր լերանց, զոր ոմանք ի քաղաքացոցն  
75 ասին մեզ, թէ յառաջն ծով էր այս վայրքու .  
և հաւանելի էր բանք նոցա լսողաց, զի եւ  
տեղիքի զայն յայտ առնէին : Եւ կային անոր  
յոյով Հայք անով . ունէին և ժամանել մի  
անտի . երկու էրէց, մին հարեզայ կայր :

80 Անտի Եկաք ԵՆԻԻ ՔՕՑԸՆ . և օթեցաք  
ի Զանկին : Եւ ընդ առաւօտն սկսաք անցանել  
զՊԱԼԱՆՆԵՆ : Եւ այս Պայխանս յոյժ նեղ և  
զժուարին էր և քարուտ ճանապարհ երկու  
լերանց միջով . ասքա սինովէս ճանփան սորբ  
85 էր, որ հազիւ արազան անցանէր : Եւ այս

լերանց միջովն երթայր դեռ մի ուղար եւ  
ծուռ. Եւ մին օրն զայս ջուրս անցաք քսան  
եւ վեց անգամ: Եւ երեք օրն հասաք ԱՅ-  
ՏՕՍԴԻ. ո՞չ վասն հեռաւորութեան, այլ վասն  
զժուարութեան ճանապարհին: Եւ անցեալ 90  
զՏԵԼԻՈՐՄԱՆՆ՝ հասաք ԽՐԱԳԻԼԻՍԱՆ, որ  
էր զարժանալի շէնք. Եւ էին բուսածու վէճք  
մեծամեծք, որ եւ տներն ամէն ի վիճէ կո-  
փած էր. Եւ բուն սարուձորն որպէս ծառս և  
եւ անտառ բուսել էին ահազին վէճք: 95

Եւ ահարի երեք օրն՝ Անպահեմքեր Ժ. Հա-  
սաք ի մեծահամբաւ հոչակաւոր, ծովա-  
հայեաց եւ կայսերանիստ մայրաքաղաքն Բու-  
զանախա, որ է կոստանդնուպոլիս Եւ այժմ  
կոչի ԱՏԱՄՊՈԼ, առ ցանկալին ամենեցուն: 100  
Ազա հազար աւաղ զբարախտ եւ անաջող  
տալէ հիս իմոյ, որ չժամանեցի Մորայ կէ-  
մոցն, որ զնային յերուսաղէմ. վասն որոյ  
զբուն ձմեռն անդ մնացի. զի ցամաքով ճան-  
փան կապ էր, եւ ահ կայր ի Պարսից: 105

### Յ. ՆԱԾՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԱՑ

Եւ կայր Սուամովով հինգ եկեղեցի Հայոց.  
ի Վլանկայ Երեք, աւագն Սուրբ Նիկողայոս,  
Սուրբ Առառածածին եւ Սուրբ Սարգիս. ի  
Պալատն մէկ. Եւ ի Սուլումանաստրն մէկ,  
Սուրբ Գևորգ անուն: Եւ կայր չորս հինգ 5

վարդապետ Ստամպօլ. երեք եպիսկոպոս .  
 հարիւր քահանայ կամ այլ աւելի . թող զհա-  
 րեղայսն : Եւ ութուն տուն՝ տուն տեղացի  
 հաղիւ գտանէր . բայց եկն եւ զարիսն աւելի  
 10 քան զքառասուն հաղար տուն ի Ստամպօլ,  
 Ղալաթա եւ Սկուտարն : Քանզի յօթուեախան  
 ձէլալիքն աւերել էին . եւ ամենեքան հալա-  
 ծեալք եւ վախուցեալք անդ էին հանգու-  
 ցեալք : Եւ թէ հաշուես ի Պուղանայ մինչեւ  
 15 Ստամպօլ , պութուն Ռուռումէլին մինչեւ մեծն  
 Վանատիկ , նա չկայ քաղաք , զեղ կամ  
 չփոլիկ , որ հայ չկենայ . որ վասն ծովացեալ  
 մեղաց մերոց ցիրուցան եղեալ եմք ի վերայ  
 երկրի որպէս զփոշի . վատք Աստուծոյ :

20 Եր պատրիարքն Հայոց վարդապետ  
 մի կեսարացի Գրիգոր անուն , խրթնազդի եւ  
 խստակրօն , առաքինի եւ սրբանեալ , յոյժ  
 իմաստուն եւ հմուտ Հին եւ Նոր կտակարա-  
 նաց , ճգնող եւ սկահեցող . որ ընաւ ամե-  
 25 նեւիմք չուտէր միս եւ զինի ոչ ըմպէր , այլ  
 չորսապաք զամենայն աւուրսն իւր անցուցա-  
 նէր , բայց միայն ի շարաթ եւ ի կիրակէն  
 լուծունէր ի եիւղ եւ ի սկանիր , ի ձուկն , ի ձէթ  
 եւ ի ձու . եւ յաղուհացան երկու օրն անդամ  
 30 մի հաշակէր : Առ որ կացի ես կէս տարի մի :  
 Եւ ունէր սա Զուղեցի աշակերտ մի բանա-  
 սէր՝ անունն Մովսէս , յոյժ խոնարհ եւ հեղ ,

14 հաշւեն : — 19 յերկրի : — 20 պատրիարքն :

— 21 կեսարեցի : — 31 սայ :

տուաքինի եւ սուրբ, կոյս եւ ընստիլ, որ օր  
մի առանց ուժի կանոն Սաղմոսի ոչ անցու-  
ցանէր. եւ ժամ մի զատարկ ոչ լինէր. այլ 35  
զցայդ եւ զցերեկ հակէր եւ տքնէր յաղօթս  
անձանձիւ ոտնակացութեամբ. եւ պարագէր  
միշտ ընթերցմամբ սուրբ Գրոց: Առ այս-  
պիսի աստուածահամոյ արս կացեալ:

## ՍՈՒՐԲ ՍՈՓԻԱԼ

Օր մի խնդրեցի զոմն քաղաքացի եւ 40  
զնացաք ի միասին ի աննչալին ամենեցուն  
Սուրբն Սոփիա. Եւ տվեալ կաշառ շեխե-  
րուն՝ մուծին զմեկ ի ներս: Եւ տեսեալ զմե-  
ծութիւն եւ զվայելչութիւն տաճարին, զլայ-  
նութիւն եւ զբարձրութիւն, եւ հիացեալ 45  
ժառոս տվաք Աստուծոյ. զոր ոչ երբեք տե-  
սաք ուրեք այնպիսի շինուածք: Այլ եւ տե-  
սաք ի նմա բազում զարմանալի սիւնս մե-  
ծամեծս, զանազան մարմարիոնեայ երկայնս  
եւ միջակս, ողզի աղզի ստուար եւ նուրբ, 50  
զեղեցիկ ի տեսութիւն աչաց. ոնն կարմիր,  
ոնն սպիտակ իբրև զմիւն, ոնն լուրջ եւ ոնն  
կանաչ, ոնն սեւ եւ ոնն ծիրանի. եւ այլքն  
խէտումէտ. իսկ կէսքն խէտումէտ կոփած  
եւ քանդակած դժուար իմն կապուածովք. 55  
եւ զփորիածքն լցեալ սակով եւ լփհվարդակ:  
Զի աչք հազար պիտի որ հայի եւ վայելէ դե-  
ղեցկութիւն արվեստին: Եւ կայր սիւն մի

39 այրո: — 42 սոփիայ: — 46 երբէք: —  
47 ուրէք: — 54 կորած:

մեծ ի մէջ տաճարին եւ մարդաշափ մի պա-  
 տած էր զինքն յերկրէ , զբոլորն սպետրով ,  
 զոր հանապաղ քրտունք հոսէին ի նմանէ  
 ակներեւ ամենայնի : Եւ զտաք ի գրոց , որ-  
 պէս պատմի , թէ անդ են նշխարք ուռըր լու-  
 սաւորչին եւ Դրիգորի Աստուածաբանի : Եւ  
 65 հարցի ես թէ վասն է՞ր է պատեալ սպետրով .  
 ասեն սպասաւորքն , թէ վասն բազմամբոխ  
 ժողովրդոց , որք զան առա , տաճիկը եւ  
 ըրիստոնեայք , արք եւ կանայք . Եւ ձգեալ  
 զձեռս առնուն զբիրան եւ զինքն յերեսս  
 70 իւրեանց . վասն այն ի բազում ձեռոց հաշեալ  
 եւ մաշեալ էր սիւն երկու երեք մատ . Եւ  
 զայն սպետրն արարեալ էին պահապան  
 սեանն , զի մի ի սպառ մաշեացի :

Եւ խնդրեցաք որ հանին զմեկ ի վերնա-  
 տունն . քանզի Երեք տապազայ էր մինչեւ  
 ի զմուկէթն : Եւ բացեալ զզունն ելաք ի վեր  
 հարիւր ստոինան մինչ ի միջին տապազան .  
 Եւ անտի եւս հարիւր ստոինան մինչ ի վե-  
 րինն : Եւ ամէն տապազայ այնպէս մեծ էր ,  
 80 | որ թէ երեսունհազար հոգի մանէր յինքն՝  
 ոչ լցովէր : Այլ եւ սեսաք զարմանայի իրս  
 արվեստից . կոյր յարեւմտից կողմանէ եր-  
 կու տատիւակ քար մարմարիսնեալ , որ լոյս  
 տային , զոր տանկի լիզուաւ եանար տաշ կա-  
 85 չէին : Տեսաք անդ զտիօրինականքն Ֆրիս-  
 տոսի եկարեալ . այլ եւ զպանկերո ամեն-

որհնեալ կուսին Մարիամու, նաև առաք  
Առաքելոց, Մարգարէից, Հայրապետոց եւ  
այլ սրբոց, զոր անօրէնքն եղծեալ եւ աւի-  
րեալ էին, որ միայն նշամարանքն երեւէին:

Եւ այլ յառաջ պհացեալ՝ տեսաք պա-  
տվար, եւ ի միջին՝ դուռն մի սպիտակ մար-  
մարէ, որ ի վերայ նորա կոփած էր զմբիս-  
տոս եւ զերկոտասան առաքեալու. զոր եւ  
զեսա քերած էր եւ եղծած: Եւ մտեալ յայն 95  
դուռն ի ներս տեսաք զերեզման մի. զիր  
չունէր, բայց միայն երկու խաչ: Եւ Հարցի  
թէ ո՞ւժ է. ասին թէ Կոստանդիանոսի թա-  
գաւորի. այլք թէ շինօղին է ուրաս: Եւ անտի  
երաք յիսուն աստիճան մինչ զերին սուսա- 100  
տարդն: Եւ կայր չորս կողմանէ պատուհանն,  
յորոց բազաքն որպէս ձու երեւէր: Այլ իւ  
տեսաք բազում շէնու եւ բան, զորս ոչ կարեմ  
զրել մի բառ միոջէ, վասն չձանձրանալոց  
ընթերցողաց եւ լսողաց: Եւ իմ զայս ամեւ- 105  
նայն տեսեալ՝ զոհութեամբ մասոս ետու Աս-  
տուծոյ, որ զիս զանարժան բազմամեղս ար-  
ժանի արար տեսոյն Արքոյն Առփիսոյ, զոր  
տամ Հազար երանի շինօղաց եւ շինել տվո-  
ղաց. զի ո՞ր բերան կարէ զովել կամ պատ- 110  
մել զեռքա շէնքն, կամ զծախսն ընկ զրով  
արկանել, կամ զզեզեցկութիւնն պատճել:

Արդ ո՞րպէս զովեցից, զիս՞րդ մհծարե-

89 ամբել: — 98 կոսկանզին: — 105 ընդեր-  
ձողաց:

ցից եւ ո՞րպէս կամ ո՞ւմ նմանեցուցից զԱյիս  
 115 Սօֆիան, ևս որ յիմար եւ ակարս եմ ի մէջ  
 ամենայն կարգաւորաց. զի շինեալ է ի սուրբ  
 թագաւորաց եւ օքհեալ ի սուրբ Հայրապե-  
 տաց, մասաւորեալ ի Հրեշտակաց: Որ եւ  
 ընկարաւ յինքն զՅժմ Հայրապետ Նիկիոյ եւ  
 120 զՃՄան. որ պատվեցաւ ի նոցաւ սրբութենէն:  
 Արդ որպէս պարծի մեծն Հռոմ Պետրոսիւ եւ  
 Պողոսիւ, նոյնպէս մեծ Կոստանդնուպոլիս  
 տիեզերակալոյն եւ աստուածաբան վարդապե-  
 տօքս՝ Գրիգոր Աստուածաբանով եւ Յան-  
 125 նու Առկերերանիւ: Նաև այլ բազմահաւաք  
 եւ յոգնախումբ նշխարս ունի յինքն ամփո-  
 փեալ, իրրեւ զգանձս պատվականս եւ զան-  
 ցին մարդարբուս:

Որ եւ մեծամեծ սքանչելիս առնէ սուրբն  
 130 Սովիս մինչեւ ցոյսօր. զորս ի բազմաց զմինն  
 ասացից որ ի ժամանակս իմ եղեւ: Որ ի  
 թշին ՌՄԸին Հրամանաւ կայսեր ելին ճար-  
 տարքն ի Սուրբն Սովիս մէրէմէթ եւ նորո-  
 պուն առնել: Եւ մի ոճն ի նոցանէ ունելով  
 135 կարիս, յուրացեալ ոչ էջ ի վայր, այլ ի ա-  
 ման կրին միզեաց. Եւ զայն խռովնեալ ի կիր  
 կառեց ի զործ ածել: Զոր Սուրբն Սովիս  
 ոչ Հանգուրծեալ անօրէն զործոյն, այլ իսկոյն  
 վերացուցեալ բնկէց զես անօթովն յերկիր,  
 140 ակներեւ ամենեցուն. եւ մարմինն բազմա-

114 նմանեցուցիչ: — 118 զոր եւ: — 120 զոր: —

125 առկերերանիւ: — 129 զոր եւ: — 130 սովիս: —  
 133 սովիս: — 139 ընկեց:

մասն եղեալ անկառ յերկիր, իրրեւ զգէչն  
Ախմոնի կախարդի : Եւ որք անսինն՝ երկեան  
երկեղ մեծ : Մինչ զի համբաւն ել առ թա-  
գաւորն, որ Հայոցնալ փառս տար Աստուծոյ .  
Եւ Հրաման եհան, զի մի ոք այլ այնողիսի 145  
յանդուդն եւ լիրր զացի, այլ եթէ ոք ունիցի  
կուրիք, իջցէ վահկակառ ի զայր . այլ եւ  
որրութեամբ եւ Երկիւդիւ ծառայել նմա : Եւ  
այս Հրաչս զրազումն զարմացոյց, զոր մեք  
աչօք ոչ անառք, այլ լուսք ի պատվաւոր 150  
արանց Հայոց, Հոռոմոց եւ Տաճկաց որ անդ  
դործէին . նաև ի քահանայից : Եւ այս գոր-  
ծեցւ ի փառս եւ ի պատիւ ամենասուրբ  
Երրորդութեանն Հօր եւ Որդւոյ եւ Հոդոյն  
որրոյ, ի պարծանա քրիստոնէից եւ ի պատիւ 155  
ուրացողացն եւ ոչ պատվողաց զառբրան Աս-  
տուծոյ : Բայց վա՛յ եւ եղուկ մեզամակարդ  
թշուառ անձին իմոյ . զի վառն անարժանու-  
թեան քրիստոնէից եւ մեկաց մատնեաց Աս-  
տուծ զարրութիւնո իւր ի ձեռս այլազգեաց : 160

## Ա.Ա.Ա.Ն.Ա.Ա.Ա.

Եւ անոնի ելեալ քայլ մի քանի տռաջ,  
անսաք Եկեղեցի մի մեծ, փառաւոր եւ զմբէ-  
թաշէն . եւ մակալ ի ներս՝ անսաք զի դեռ  
եւս Երեւէին նկարք սրբոց պատկերաց եւ  
աւագ խորանն մեծ եւ լայնանիստ . եւ ունիք 165  
մատուք բազում մեծ եւ բարձրաբերձ, զոր  
այժմ զազանաց տուն են արարեալ եւ տաճ-

կերէն Ասլանխանաց կոչեն, զոր արկեալ են  
ի ներս բազում եւ աղղի աղղի գաղանս, և  
170 կայր ամէն մատուռումն աղղ մի գաղան. այլ  
եւ առիւծ, ինձ, ծովային կատու, վաշախ  
եւ այլն: Զայն իրրեւ տեսի ևս՝ յարտասուս  
հարեալ յոզոց հանի եւ առեմ. Տէր իմ ըն-  
դէ՛ր մտին հեթանոսք ի ժառանկութիւն քո,  
175 եւ պղծեցին զառանար սուրբ քո: Ընդէ՛ր քա-  
կեցեր զցանկ սորա եւ հայհոյեն զսա անցա-  
ւորք: Աղականեցին զուա խոզք եւ երէք վայ-  
րիք. և պատառող զաղանք արածին եւ կե-  
րակրին ի սմա: Եւ զսեղանս քո կործանեցին  
180 եւ մեք եղաք ծաղք եւ այսին կատականաց,  
այլ եւ նախստինք դրացեաց մերոց. եւ ոչ ոք  
է որ պատվէ կամ նորոգէ զսա: Եւ զարձեալ  
յարեւելս կոյս առեմ. Տէր Աստուած զօրու-  
թեանց, զարձ հայեաց եւ տես. այց արա՛  
185 սցզոյս այսմիկ եւ զարման. զի սա է հարսն  
քո եւ մայր մեր, զոր պատկեցեր պատվական  
արեամբ քով սրբով. եւ մասոք զարդարեալ  
սլանեցեր եւ տուն ազօթից կոչեցեր: Եւ  
ընդէ՛ր ես ոչ կորայ կամ մեռայ, քան թէ  
190 տեսի այսպիսի աղէտ զառն կոկծանաց աչօք  
իմովք: Վա՛յ ինձ, վա՛յ ինձ. զիա՞րդ այժմ  
անարդեալ եւ դորովեալ յանօրինաց է. եւ  
զու զիա՞րդ լուս եւ համբերես: Եւ ի միտս  
իմ երկրպագութիւն մատուցեալ Աստուծոյ՝

171 այլ եւ այլ: — 177 յէրէք: — 185 սցզոյս  
յայսմիկ: — 194 յերկրպագութիւն:

տրտմութեամբ Ելի ի նմանէ : Եւ ասին թէ 195  
այս եկեղեցիս կուսանաց վահք էր :

## ԱԹ ՄՕՑՑԱՆ

Եւ կայր այս եկեղեցոյս առջեւն մեծ մօյ-  
տան մի , զոր Աթ մօյտան կոչին . Եւ էր անդ  
սիւն մի մեծ եւ բարձր՝ կանգնեցուցած միա-  
վիերթ մարմարիոնէ ի վերայ ուրիշ սեան , 200  
հաստատեալ ի վերայ չորս պղնձէ առիւծու .  
Հնարիւք եւ բազմիմաստ հանճարիւք զահա-  
զին սիւնն հանած էր . որ տեսողացն էր հրա-  
շալի : Եւ բնաւ չաւտայ մարդ , թէ զայն հո-  
դածին մարդու է շինած , այլ թէ դիւաց կամ 205  
քաջից սահմանած . բայց զբած էր հոռմի եւ  
փռանկի զբով , թէ մէկ վարդապետ մի ֆէն-  
տով է հանել զդա : Փառք Աստուծոյ . ամէն :

Եւ քայլ մի քանի այլ առաջ զնացեալ  
տեսի օձ մի պղնձէ երեքգլխեան , բարձրու 210  
թիւն երեք մարդապօյ , իսկ հաստութիւն՝  
զիրկ մի , որ պատեալ էին զմիմիամբք : Եւ  
հարցի թէ զի՞նչ է պատճառն . Եւ ասեն թէ  
այս տիիսմ է՝ իմաստնոցն հնարեալ . քանիկ  
քաղաքս այս յոյժ օձուտ էր , որ բնաւ ամեւ 215  
նեւին մարդ չկարէր աչք բանալ . վասն այն  
զայս օձս բարձրացուցին եւ խոկոյն կորեան  
Եւ ջնջեալ սատակեցան օձքն Եւ այլ ոչ եւս  
երեւեցան : Բատ օրինակի Մովսէսի ի հին  
օրէնքն որ օձիւ սատակեաց զամենայն օձսն , 220

որպէս ասէ Քրիստոս, թէ Արքէս բարձրացոյց Մովոէս զօձն յանազատի:

## ԽՕՆԹՎԱԾՈՒՆ ԱԱՐԱՅ

Եւ նետածիդ մի այլ առաջ տեսաք սիւն  
մի բարձր եօթն մարդասոյ՝ մեծամեծ զի-  
մօք ողառած, առանց կրի. եւ է անշարժ ի  
հիացումն եւ ի սքանչելիս ամենայն մարդոյ:  
Եւ մերձ սոցա թօնթքարին սարոյ, որ էր մեծ  
քան զքաղաք. եւ երկու երեք տակ պարու-  
ունէր, եւ յերրորդումն ապա էր բնաւկու-  
թիւնն:

## ՄՕՑՑԱՆԵՒ

Եւ ով կարէ մի ըստ միոջէ գրել զամե-  
նայն զմօյտաննուն ընդարձակութիւնն, չէ շ-  
մանին, մուտպախնին, փայտից տեղն, պալ-  
թաճոց. եւ միւսն պարտէզնի, պօստանի եւ  
ազօստանմիք, աճամ օղլանի, ճէ պաճիք:

## ՃԵՄՉԱՆԱԿԱՅ (ՀԵՆ ՊԱՏՐԻԱԼՐԳԱԼՐԱՆ)

Եւ կայր սարայըն մեծ եկեղեցի մի զմրէ-  
թայրակ, որ էր պատրիարքարան Յոհանու-  
Ռոկերերանի, որը ասին թէ անդ է սուրբ մար-  
տին նորա: Զոր այժմ ճէմզախանայ են արել.  
240 Եւ միայն մատուռ եւ զմոլէթն է միացել. եւ  
զայն եւս կամէին քանդել եւ աւիրել, զի մի  
երեւեցի թէ եկեղեցի է. եւ ոչ կարացին,

221 որպէս Մովոէս: — 232 ջէշանին: —  
238 սոկէրերանի:

զի ամենեցուն ձեռքն զատցան ի հրաշխ վա-  
սաց սրբոյն և երեսքն յետո զարձան։ վասն  
սրբ զզլացան և երկիրդի սահմանեցին, զի 245  
անդ զցայդ և զցերեկ վառման մնացեն ի  
պատիւ սրբոյն։

### ՏԻՒԱՆ ԽԱՆՈՑ

Եւ անտի առաջ Տիւան խանաց է, ուր  
նաստին վազիրքն եւ վառանեմին։ անդ ժողովին  
հարգարք հարգարաց պարտնուաք, շավուշնի, 250  
զայիննի եւ այլ խառնինազանն, այլ եւ ոչը  
ազգ եւ ազինք։ Եւ ափառնին վերեւն կոյ  
զարգաց մի ազնիւ ևւ յոյժ զեզեցիկ, որ մու-  
շապատին ի վար հայի նոռ ի ափառն անդր եւ  
անտի առանձինք զամենացն։ բայց զնաւ ոչ ոք 255  
առաստել։ Եւ ունի զարգասն այն երկու բարձր  
խուզաց, վրան սակէ ջրու օծած։ Եւ բոլորն՝  
սէլիքիք զայելու չը եւ ծառք անհման եւ ջրա-  
զարձք, զոր այլ անդ մարդք չէ անսի ամե-  
նեւին։ Եւ քաշքն մեծ հուզ ծովուն, զարձու 260  
հայի։ Անտի զնացաք ի առան։

### ՆՈՐ ՊԵՏԱՍԱՆ

Եւ այլ օր երթեալ մտաք ի ողէզէստան,  
քանզի երկու էր. մինն՝ Հին, միւսն՝ նոր։  
Նախ ի նորն մտաք. բայց աչք հարգար աբ-  
տէք, որ առանձիւ եւ զայելէք զզեզեցկու։ 265  
Մինն կումաչից եւ զանձուց սակոյն եւ արձը-  
թին եւ մհծազին դիսակնուն։ ազգ եւ ազգ

244 յերեսքն. — 252 վերեւն. — 253 ոյժ։



սուլահնուն, անդին վահանից եւ պողովառ  
թրից, ակամք ընդելուզած խանչարնին, ազ-  
270 նիւ աղեղանց, զուտր ոսկով կամ ճօհար կո-  
թով դանկնուն, թող զսէրասէրքն՝ աթլաղն,  
մախմուրն, քեամխան, խութնիքն, ազդի  
ազդի ալաճա դաֆդանի, սօֆեր, ևազմուր-  
լուխնին, խըյմաթի քարեր, մեծամեծ մար-  
275 դարիսք, ակունք պատվականք եւ այլ բա-  
զում անուես եւ անդիւտ դօհվանի, որ յաշ-  
խարհս ոչ դատանի, անդ լի եւ առատ դատանի  
եւ ծախսի. եւ զինչ մաթահ կամի ոք անդ  
գտնու: Եւ ունէր սա չորս դուռն. մէկն ոս-  
280 կերիչք, եւ զարնիշաննիք եւ այլ արվեստա-  
ւորք հմուտ եւ ձարտարք, որ այլ երկիր բնաւ  
չդատանի: Զի զամենայն ինչ զոր մարդ զմտաւ  
ածէ, կամ սրտէն անցնէ, անդ առ նոսա  
դատանէ: Այլ եւ զմբուխտք, լալ հաւելթաչափ  
285 եւ ալմասէ դէքիրնի, զաւաթնի, եւ չի զիտէ  
մարդ զո'րն զնէ կամ յո'րն հայի:

## ԵԱՍԾՐ ՊԱՇԱՐ

Երկրորդ դուռն Եասրը պազարն է, ուր  
բազում քրիստոնեայք գերիք ազդ եւ ազդ:  
Որք ծերքն են եւ պառաւք՝ նստել են: Իսկ  
290 զաղջկունու եւ զմտնկունո, զողայն եւ զաղ-  
վորերես կանայս տէլլարնին առեալ ի ձեռու  
զնոսա՝ չուր ածէին եւ ծախէին որպէս զձի  
եւ զջորի. եւ զայլս ժողովեալ ի տեղի ինչ

268 պօղովառ: — 270 ազէղանց: — 276 զոր:  
— 292 շառաւ:

կամ ի մօյտանի՝ իրրեւ զոշխարս ի գիա-  
րախի՛: Իսկ պհօղքն եկեալ բանային զերեսս 295  
և զծոցս կոյս աղջկանց և զամենայն մար-  
մինս նոցա շօշափէին յոտաց մինչ ի դլուխ,  
ոի մի քոս, խոց կամ այլ ինչ սպի կամ վէր-  
ունիցին: Եւ նոքա լուռ եւ անմռունչ կային.  
Եւ զորս հաճէին՝ զնէին. եւ որոշեալ ի հօրէ, 300  
ի մօրէ կամ ի քւերց եւ յեղբարց բաժանեալ  
առեալ տանէին ի տուն: Եւ ես տեսեալ զայս  
ամենայն աղէտս ցաւսպինս, զոր բնաւ չէի  
տեսեալ, ցաւաց դլուխ իմ, զողաց սիրտ իմ,  
խոռվեցաւ անձն իմ եւ ամենայն ոսկերք իմ 305  
սասանեցան. եւ ոչ իշխէի հարցանել կամ  
մերձենալ առ զերեալսն, թէպէտ զլեզուս  
նոցա գիտէի՝ վասն ահի Տաճկաց: Վասն որոյ  
արտասուաթօռ աչօք եւ տխուր դիմօք հայե-  
ցեալ յերկինս յոգոց հանեալ տսէմ. ո՞հ ո՞հ 310  
եւ եղուկ տառապելոյս. լաւ էր թէ չէի ծնեալ  
կամ թէ չէի եկեալ աստ, քանի թէ տեսի ես  
զայսպիսի աղիողորմ խեղճս աչօք իմովք:  
Եւ ասեմ. Ո՞վ տէր իմ եւ ստեղծէիչ, մինչեւ  
յե՞րբ մոռանաս զմեզ ի սպառ եւ մինչեւ յե՞րբ 315  
դարձուցանես զերեսս քո ի մէնջ. ընդէ՞ր.  
մատնեցեր զմեզ ի ձեռս թշնամեաց հեթա-  
նոսաց, անօրինաց, խստաց եւ սպառամբո-  
զաց: Թէպէտ մեղաք, անօրինեցաք եւ յան-  
ցեաք, եւ զպատվիրանս քո ոչ պահեցաք, 320  
այլ զին եմք անապական արեան քո. զքեզ

կարդամք օղնութիւն, զքո նշանդ պատվեմք, և զանուն քո անուանեմք. զու զմեզ փրկեամ վասն մեծի փառաց քոց: Եւ այլ բազում և 225 ազգի ազգի խեղճ և ողորմելի բանքեր տեսաք, զի անօրէն Տաճիկքն՝ ազգն Հաղարու զրգովին և նեղեն զազգս քրիստոնէից: Եւ իրեւ ընդ լծով ծառայութեան տառապեցուցանեն և չարչարեն, որպէս Եղիպտացիք 330 զիսրայելացին. որոց Քրիստոս լիցի վրէժահերք: առջն:

Իսկ երրորդ զուոն Կօրդանձիք, քիթարէիք, սիրմանձիք և այլ խանութենի ազգ և ազգ:

335 Չորրորդ զուոն Ֆիննան արախմինչիք և խաւախչիք: Եւ այլ սակաւ մի յառաջ՝ քարէ մաղաղիք, ուր զնո՞ւ ազնիւ ջուխանի ծախսն, ֆունկի սկէռլէթ, եթմիշլա կամ չլու, եխոցչայ, մախմուրնի, և զանազան 340 լուխանի և այլին:

### ՀԵԿ ՊԵՐԵՍԱՆ

Իսկ այլ օրն զնացաք ի հին պէղէստանն. և անող ևս ազգի ազգի կերպասք, զումաշք, և անօթք և ձիոյ թամք, զանդանաւանդք, լկամք, տիկուիկք՝ արծթէ ոսկէ ջրամ, զալամ քաշամ և սիրմայ, այլ և քարամք, ակամք և մարդարտով ընդելուզամ, զնո՞ւ և անդիւտք, որ այլ տեղ ոչ զտանի: Եւ այլ անոց

326 տաճիզն: — 329 յեղիպտացիք: — 330 յորոց: — 347 զոր:

չատրճիք եւ չատրնի յոլով եւ մեծապին . եւ  
ոէլիքի աղամէ սնտուկը :

### ՍՈՒԼՈՒ ՄԱՆԱՍՏՐ

Եւ այլ օրն զնացաք ի Սուլումանաստր<sup>350</sup>  
որ մերձ է Եօթին Ղուլան, ուր կայ Հայոց մեծ  
Եկեղեցի մի վիճաչէն եւ դմբէթաձեւ, թա-  
ղաւորաչէն, որ կոչի Սուրբ Գևորք, ի փա-  
ռաւոր Եւ բարձրաւանդակ տեղոջ եւ ծո-  
վահայեաց . եւ ասին թէ Կոստաս թագաւորն<sup>355</sup>  
որդին Կոողանտիսոսի շինել է տվել . քանդի  
զարմանալի շինուածք էին չուրջանակի՝  
զբախաք, պազչայք, բուրաստանք, այսպ-  
ժաք, ոլարտէզք, մրգաստանք, եւ ջուրք բա-  
րէհամ, այլ եւ բազում բնակութիւնք կար-<sup>360</sup>  
զաւորաց եւ աշխարհականաց, Եկաց եւ բնա-  
կաց : Եւ կայր ի բարձր տեղ դարպաս մի  
փոքրիկ, որ հայէք ի վերայ ծովու, յայտ գե-  
ղեցիկ եւ վայելուչ, ոսկէզօծ եւ զանազան  
դեղօք նկարեալ եւ յօրինեալ պայծառ . եւ<sup>365</sup>  
առջեւ սրբայ մի մեծ թափանլու, սեղանա-  
տեղ որ ի շող ժամու եւ տօթ անդ նստեալ  
ոք՝ այլ ոչ կամէք անտի զնալ : Այլ եւ եկե-  
ղեցնայ թիկունքն կայր քարուկիր կամար,  
նեղ եւ երկայն, նման իտրնու Ալի փաշի,<sup>370</sup>  
կամ Պուրառ Կէնճիկին . եւ շուրջ ու բոլորն  
նկարք պատկերաց ՅԺ. Հայրապետաց եւ ի  
զլուխն Քրիստոս եւ աֆմէ Կոստանդիանոս

348 յոլով: — 364 ոսկէզօծ: — 367 շող: —  
368 եկեղեցնա:

թագաւորն եւ ձախմէ զշխոյն Հեղինէ որ  
375 զովքն : Եւ ասին թէ աստ եղեւ ժողովն . եւ  
այս էր սեղանատեղն Յոհանաւ Ռոկիրերա-  
նին . իսկ այժմ աթոռ է եւ պատրիարքարան  
Հայոց :

ԱՎ.ԲԱ.Թ. ՊԱ.ԶԱ.Բ.

Եւ ի զնալն հանդիպեցաք յԱվրաթ պա-  
380 զարն : Տեսաք անդ տիքմատաշ մի յոյժ  
բարձր . զի զլուխն Հաղիւ Երեւէր , զոր զա-  
նազան պատկերք եւ ձիք եւ բանք կոփած  
էին ի նմա , հիսնալի տեսողաց : Կոյին եւ  
այլ տիքմատաշք , բայց սորա նման բարձր  
385 չէին :

ԹԱՎՈՒԽԵ ԽԱՆ

Եւ անտի յոլով զնացեալ եկաք ի թա-  
գուխ խանն . եւ անդ եւս կայր սիւն մի այլ  
մէրմէրէ , բայց չէր նման Ավրաթ պազարին .  
Եւ էր պատեալ շուրջանակի յոլով տեղիս  
390 ողողովատով՝ վասն ամբութեան : Եւ ասին թէ  
ի ներքոյ այսմ սեանս է եօթն զամպեղն որ  
Քրիստոսի օրհնութենէն յաւելաւ Հացիւ եւ  
ձկամբ : Կային աստ եւ անդ բազում եւ ան-  
թիւ եկեղեցրք մեծամեծք , վիմաշէն եւ մար-  
395 մարիսնեալ , եւ մատուռք . յորս կային  
նշխարք եւ ոսկերք սրբոց . եւ որք զեղեց-  
կագոյնք եւ ի բարձր տեղով էին , զայն ա-  
նօրէնք խեւալ եւ յափշտակեալ էին . եւ զիւ-

քեանց ոչ հաւանեալս թողեալ էին Հոռմոց .  
զի քաղաքն Հոռմոց էր նախ :

Եւ կայր հարիւր կամ աւելի Հոռմոց  
և կեղեցի . իսկ Տաճկաց մզկիթ , մէջիթ քանի  
հաղար . նոյնպէս բաղնիք , խաներ զարմա-  
նաշէն մեծ եւ լայնանիստք , կամ արական ,  
մեծամեծ սայլիւք , եւ մարմարէ խարսխօք 405  
հաստատեալ . դույին մեծ երկաթի որովէս  
քաղաքին : Կայ խան , որ հարիւր օտառ ունի .  
կայ երկու հարիւր , կայ որ երեքհարիւր , եւ  
մէջն շատրվանի եւ ջրեր քաղցրահամ : Նոյն-  
պէս եւ բաղանիքն մեծամեծք , դմովէթոյարէ 410  
խուզայիւք իրեւ զեկեղեցիս . ոմն մարմարէ  
սպիտակ , ոմն խէտումէտ քարանց , այլքն  
շինի սաֆի պատերն , եւ այլքն այլ իմն :  
Շատրվանք ջրոց եւ գոներ ի նմա յոլով :  
Սպիտառուրք քանի հարիւր ի նմա . նոյնպէս 415  
գրէտամայնի , մախրամանի , սրբիչք եւ  
խզմէթնի որովէս մարդ կամի կամ հաճի : Եւ  
ամէն Աստուծոյ օր կու վառի . եւ թէ մարդ  
ամէն օր զնայ ի նա՝ այլ կուզէ :

## ԵՏԻ ԴԱՒԼԱ

Եւ այլ բազում չէնք եւ եարուք տեսաք 420  
զարմանալիք՝ հին եւ նոր : Եաեւ սաքայնի  
վէզիրնուն , փաշանուն , եւ այլ մեծամեծ ա-  
զայից , զայբիթնուն եւ իշխանաց , որ թազա-  
ւորաց լայեն էր :

Եւ ունէք քաղաքոս ոյս ի՞Դ. զուռն-  
ժի. ի վերայ ծովուն եւ Զ. ի ցամաքի. զի  
սպիտակ ծով ովկիանոս բալորեալ է զքա-  
զաքն եւ միշտ հարկանէ զպարփապս նորս :  
Եւ ի մէկ զուռն Ետի դուրսն է. յոյժ ամ-  
բոց եւ անառիկ. զոր անդ արկանեն զմե-  
ծամէծ իշխանոս, զպարոնայք Եւ զիւռներն ,  
զորս ձեռքակալ տոնեն կամ զերեն զթշնու-  
միս : Եւ անգ զուսն վրայ հանած էր սպիտակ  
մարմարէ սոզդ եւ ազդ մեծամէծ մարդիք :

435 Գնացաք ի Ղամրզալիմանն , Զաթլազա-  
րին , Սամաթեան եւ ոյլ տեղիս : Տեսաք զար-  
մանալի շինուածք . եւ զետնափորս սովարու-  
կապս — Եւ ասին մեզ թէ բոլոր քաղաքիս  
ներքեն այսպէս է եւ ջուր պատճեալ — եւ կո-  
440 մուրջք եւ չէնք . զորս ոչ կարեմ մի ըստ  
միոջէ պատմել կամ զրել , զի մի ձանձրու-  
ցեալ նիրհիցէք , զի բազմութիւն խօսից  
տաղակութիւն տայլ լսելեաց : Զի որչափ  
կացի անդ , օր մի չկացի ի տան . ոյլ ամէն  
445 օր երրայի յեկեղեցի մի կամ ի չէնք :

## ՊԱԼԱՏ

Գնացի Պալատ , որ էր պաղատն Կոս-  
տանդիանոսի թագաւորին . որ անդ նստէք  
յամառն , զի ի բարձրաւանդակ տեղով էր ,  
բարէշունչ օզն : Եւ մերձ նմին կայր եկեղեցի  
450 մի փոքրիկ , յոյժ ազնիւ եւ զեղեցիկ , սափի

427 յովկիանոս : — 429 է. էտի : — 429 ոյժ  
յամբոց : — 433 կոստանդիանոսի : — 449 յոզի :

օսկով օծած եւ զարդարած . աչք հաղար ոյխտի որ Հայի : Թաղաւորն եւ թաղուհին անդ ազօթէին : Ցամաքի կօժբուկն եւ ԼէՀցոց անգր կ'առնուն եւ Ռւրումելու . իսկ Անատոլուէն ծովու եղբն , Եմիշ սքալու մերձ : 455  
Եւ կայ ի Պալատ Եկեղեցի մի . կէան Փռանկի ,  
կէան Հայի . նոքա ժամ ու պատարագ կ'առնեն . Եւ Հայք կ'առնեն ի միասին սիրով եւ խաղաղութեամբ :

## ԱԱԱԱԹԻԱԱ

Եւ յայն կոյս ծովուն Ղալաթիա կղզին 460  
է , մեծ եւ ընդարձակ . ունի ԻԱ. Եկեղեցի .  
Ժոռմի եւ Ժ Ֆռանկի . եւ մին Հայի՝ ապա  
յոյժ զեղեցիկ զիմաշէն եւ կամարական  
Սուրբ Լուսաւորիչ անուն : Եւ աւագ Եկեղեցին Ֆռանկի Ման Տօմէնիկ կոչի՝ է մեծ եւ 465  
լայնանիստ , որ ի տարին անդամ մի մեծ  
ուխտ ունին անդ , յաւուր հինգշարաթոջ ,  
Զատկէն յետոյ յիններորդում շարթուն . եւ  
օրն այն մեծ ամբոխ լինի . այլ եւ բազում  
Տաճիկք եւ քրիստոնեայք , արք եւ կանայք , 470  
մինչեւ տնարդել աղջկունք գան , ոմանք ուխտ  
եւ այլք ի տեսութիւն եւ ի սէյիր , իրք ի  
տօնանմայ : Իսկ պալիօղք եւ էլչիք , որք են  
թաղաւորաց վէքիլք , Ֆռանցու , Խնկլիզու ,  
Վէնէտիկու եւ այլոց , Ղալաթայ են : Վասն 475  
որոյ եւ ազնիւ պատվական զինիք , մուշէթ  
եւ մալմազի՝ անդ գտանի : Եւ ունին մէՀա-

նայք մեծամեծք և յոյժ բարձր՝ երեք չորս  
տասկազայ, որ Ստամպօլ և ծովին կէմէսանով  
480 առջեւն կ'երեւի իրրեւ դինծոր։ Անդ են  
վայելք և հեշտութիւնք և ուրախութիւնք  
մարմնաւոր կենաց բերկրանաց։ Այլ և ծո-  
վային ձկունք զանազանք և անուշահամք,  
խայվարք ազգ և ազգ, և չոր թուխու ձուկ,  
485 հարինճ, լիմօն, ձէթ և ձիթապտող լաւ եւ  
ազնիւն անդ գտանի։ Այլ և յոյժ բարելիք է  
Դալաթան. ասեն թէ ի սմանէ և ի Մըսրաց  
լիանայ քաղաքն Ստամպօլ. խաչափառք, կա-  
րէվիտ, միտիսց և այլ համեղ կերակուրք  
490 անտի ելանեն։ Զի թէ այս երկու քաղաքն  
չէր, սովալլուկ լինէր Ստամպօլ ի բազմու-  
թենէ մարդկան։ Զի քամն մղոն է պարսպին  
բոլորն լայնանիստ և ընդարձակ և մեծ  
յոյժ. Կօթն մեծ լեռն կայ ի նո, որպէս  
495 Կօթն մեծ քաղաք, հինդ տիքմատաշ, և  
Կօթն դուլայ։

ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆ. ՔԱՂԱՔԻՆ ԵԽ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ. Բ

և ասին թէ կայ ի Ստամպօլ ԽՌ Հրէի  
տուն և ԽՌ տուն Հոռմի. Ժմի տուն Հոյի,  
բայց Տաճկաց հաշիւ և համար չկայ. Զի  
500 խանութ կայ. ԼՌ մէ հանայ։ Թող զմէջիթ-  
նին, հիւրանոցնին, վարիժնին, մէտրասա-  
նին, ճումայանին, թէմպէլիսանանին, հիւսն-  
դանոցնին, աշխանանին, մուտքախնին, պէ-

486 բարելիք։ — 490 անդի։ — 502 հիւսնա-  
նցնին։

դէզտաննին , սարաճխանն , ախոռնին , մօյ-  
տանին , բաղնիքնին , խաներն , չարշունին — 505  
որ ամէն օր ի չարշու մի պաղար կու լինի —  
քահվէխանանին , դաֆափնոցնին , զատ սա-  
րայնուն , պաղչանին , պօսդանին — ի Վլան-  
կա պօսդան մի կայ , մեծ քան զքաղաք մի  
— , չուկանին , չարշունին , եւ փողոցնին 510  
մարդաշատ եւ ապրանօք լի :

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԱԼԻՒԹԻՒՆՔ:

Եւ այնպէս ողորմած եւ բարերար է աղջն  
Տաճկաց , որ ամէն փողոցի գլուխ աղրիւր է  
շնած . եւ շատ ջրի աման դրած , անուշ եւ  
բարեհամ . զեռ մէջ պաղպաղ ձգած որ եկող 515  
զնացօղն կու խմէ եւ դիւրի , այլ եւ բաղում  
տեղիս սառն ջուր եղեալ անջրդի եւ անմարդ  
տեղիս վառն ճանապարհորդաց : Իսկ այլք  
ուսովն կամ յիշեալ (յէշն) բարձեալ ածեն ի  
շուր եւ աղաղակեն թէ վասն սիրոյն Աս- 520  
տուծոյ սէսլիլ ջուր ցուրտ ըմպեցէք . եւ ոչ  
զոք խորեն , կավուր կամ հրեայ : Ունին եւ  
դպրանցոս : Եւ օրն երկու անկամ կերակուր  
կ'ելնէ հիւանդաց եւ հիւրոց : Եւ ոչ միայն ի  
քաղաքան , այլ եւ ի գիւղս եւ յանբնակ տե- 525  
զիս , ի լերինս , ի այրս , ի անտառս եւ ի ա-  
նապատս շինեալ են խաներ , մեծամեծ մէ-  
ջիթնի , բաղանիք եւ շատրվանք . զան քար-  
վանք , իջնուն , երկու հեղ կերակուրն ու-

530 անն , պաղ ջուրն խմեն , ի բարանիս լվացվին  
եւ գնան զմանապարհն իւրեանց . մէկ վող  
մի չտան :

## ԿՈՄՌԻՒՑԶՔ

Դարձեալ ի վերայ դետոց եւ մեծամեծ  
աղբերաց եւ ջրոց , նաև ի տղմուտ տեղիս  
535 կամուրջս վիմաշէն կամարակաս սայլիւք  
յիսուն , հարիւն , կամ այլ աւելի ուկնուլ քա-  
րուկիր ամբոցիւք լայն եւ ընդարձակ ի վե-  
րայ անհուն ջրոց զուղեալ են : Բնդ որ ան-  
ցանեն մարդիք , գրաստք եւ անսառունք եւ  
540 վող մի չտան , ի յամօթ եւ ի նախատինս  
սուտ քրիստոնէից , որ քանի մն փայտ զնեն  
ի տղմային տեղիս կամ փայտեալ կամուրջ  
շինեն եւ յանցանելն բռնութեամբ առնուն ի  
545 ճանապարհորդաց երկու դրամ՝ վասն արա-

պէնն կամ ձիուն . ո՞հ , ո՞հ :

## ԱՂՈԲՔ ԵԽ ՆՌՄԱԿԱՆՔ ՏԱՃԱԱՑ

Դարձեալ զի են յոյժ աղօթառէրք , որ  
գհինդ նամազն ոչ թէ ի տան , այլ եւ ի ճա-  
նապարհս անդամ ոչ թողուն ի բաց , այլ ան-  
խափան կատարեն զցայդ եւ զցերեկ , նա եւ  
550 ի սաստիկ ձմեռն ի վերայ ջրոյն եւ ձեռն  
պաղ ջրովն ողողին եւ աղօթեն , թէ յըն-  
կերաց յետ մնան : Ապա վա՞յ ինձ եղկելոյս ,  
քրիստոնեայ դոլով՝ աւուրն անդամ մի գնալ

534 աղմուկէ : — 538 յանհուն : — 544 ճանա-  
պարհաց թ դրամ՝ արապէն :

Եկեղեցին յուշանամք եւ իրրեւ ի տուղանս  
զնամք . նաև ի խաղաղ ժամու յեկեղեցով 555  
ոչ ազօթեմք , ոչ թէ ի տան կամ ի ճանա-  
պարհի , որպէս նոքա ուղիղ եւ յօժար սըր-  
տիւ :

Պահեն եւ պահս երեսուն օր , զոր ռամա-  
զան կոչեն , ըստ Հրէից եւ Ասորոց ծոմ կե- 560  
նան զօրն եւ իրիկունն լուծանեն ի միս եւ  
այլն՝ ի պարարտ կերակուր . եւ այնպէս  
մինչ ի լոյս ադահ ուտեն երեք չորս անդամ ,  
զի քնանան , զարթնուն եւ դարձեալ ուտեն :  
Զգինին հարամ առեն եւ ոչ բժակեն . եւ ար- 565  
րեցութիւն քնաւ չկայ առ նոսաւ : Ունին եւ  
այլ բարէզործութիւնս , զատաստան եւ իրա-  
ւունք , զաքաթ եւ ոզորմութիւն . թէպէտ  
այժմ բարձեալ է այս ի նոցանէ , որպէս եւ  
ի քրիստոնէից : 570

## Խ'ԵԼԱՄԲ ԱՆԱՍՆՈՅ

Այլ եւ հոգ տանին անսանոց , զաղանաց  
եւ թոշնոցն : Կայ մեծ մէջիթ մի Դարամանն ,  
այն որ յԱլլուն , քանի տեղ քապապնի խո-  
րովեալ՝ արկանն չանց եւ կատվից որ տէր  
չունին . այլ եւ ազուսուց եւ այլ թոշնոց , որ 575  
սովորեալ ի ժաման այն՝ զան ժողովեալ երա-  
մով առ ի ուտել :

563 յազահ : — 564 զնանոն : — 567 զաղասզան |  
յիրաւունք : — 569 յայժմ : — 573 աւշուն | խօրովեալ :  
— 574 զոր :

## ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱԼԱԿԱԲՈՒՆ

Եւ այնպէս մեծ է Ստամոզով, որ թէ կրակ  
ընկինք տառն հազար, քառան հազար տառն  
580 այրի՞ չի գիտեն, այլ հարցանեն թէ ո՞ւր  
անկառ կրակն: Եւ ամէն պաղչա սարպի է:  
Եւ որչափ ճանիփա կայ Ստամոզուայ, ամէն  
ճանիփայ վեց աւուր ճանապարհ է, դետին  
սալարակապ, որպէս մինչեւ խորեան էւ այն:  
585 Այլ եւ ամէն անդ աղբիւր, չէշմայ. եւ ես-  
սախչիք, զափաչիք, զի մի վնաս լիցի կամ  
կորւ:

## ԿՐՈՆ ՏԱՇԱԽԱՅ

Աստուած առնե. Եւ զերեքանձեայ առ-  
տուածութիւնն ուրանան՝ զշոյր, զՈրդի եւ  
590 զՍուրբ Հոգին. թէ եւ ի զերս իւրեանց ու-  
նին եւ յարսով լեզու դաւանեն զԵրբորդու-  
թիւնն ասելով. այլահ, զալահ, թալահ, եւ  
աօհ, զոր զրած է ի զերքն Հարցմանց. այլ  
եւ զացես ի պատասխանեան Մատթեոսի  
595 զարդարեանի ընդդէմ Տաճկաց: Այլ եւ  
զՔրիստոս ոչ զաւանեն, այլ մարզարէ. եւ  
չորս զերս ընդունին՝ զԱրտրածքն, զՄազ-  
մոս, զԱւելայայան. բայց չորրորդ որ իւրեանց  
թէ հմէտին է՝ Ղուրան կոչեն, եւ զայն առա-  
600 ւել պատվեն քան զայրան:

## ՀԱՆԴԻՍԱԿԱՆ ԶՈՒ ՍՈՒԼԹՈՒՆԻՆ

Պատմեցից ձեզ սակաւ մի վասն խօնթ-  
քէրին սայթանաթով զնալի ի ճումայաթն:  
Բանզի ամէն աւրբաթ, զոր նորան ճումայաթ

կոչեն, պիտ' որ գնայ նախնի թագաւորաց  
շնուծ ճռմայանին. ապա այլ ստէպ եւ ի 605  
ժիր Այս Սօֆին երթայ, մեծ սալթանաթով  
եւ ամբոխիւ, զօրօք եւ հեծելօք, իշխանոք  
եւ մեծամեծօք, զարդարեալ եւ պաճուճեալ,  
զբեհաւորեալ եւ սուր ընդ մէջ ածեալ պատ-  
րաստութեամբ իրեւ ի պատերազմ, մինչ 610  
զի ամենայն քաղաքն շարժի եւ դղրդի դնալ  
ի տեսութիւն նորա. եւ հաղարք հազարաց  
լցովին ի փողոցնին, ուստի գնալոց է: Եւ  
նախ ենկիշարիքն դան եւ շարին երկու կողմ  
դռան արքային երեք, չորս հարիւր՝ մուճա- 615  
վազանին ի զլուխս, եւ դայլն այլ եւ այլ. զի  
ոմանց քչչան սպիտակ է, առանց արծաթի.  
ոմանց դեղին. ոմանց մուծավազան ոսկէ-  
ջրած, ոմանց եւ ակամրք ընդելուզած: Եւ  
յորժամ թագաւորն շարժի, սոքա ընդառաջ 620  
զնան թէ ի պատերազմ եւ թէ յայլ տեղ.  
բայց միշտ հետեւակ: Եւ զկնի սոցա սօլախ-  
նին, զօրվանիք. ապա ևայտաշիքն, ձիա-  
ւոր՝ ի զլուխսն ունելով թուլուխ արծաթի,  
աղեղք ի ձեռս եւ ի զլուխն ազնիւ ոսկէթէլ 625  
սօրդում: Եւ յետ նոցա ջավուշք եւ ջավուշ-  
պաշիք՝ մեծամեծ տօլպանտով, ոսկիակազմ  
ձիօք եւ սէրասէր զիսպակօք, զուտր արծաթի  
թամպովք: Եւ զկնի նոցա սուրհանդակք այս  
է փայտիկ՝ հոլանի եւ հետեւակ, ունելով ի 630  
զլուխս իւրեանց սաղաւարտ բոլոր իրեւ

զիստուխ արծաթէ ոսկէ ջրած : Ապա աղա-  
նին, զայբիմնին . ապա վատշայնին . երկու դաղի  
է սքէրն . զկնի մուֆտին, ապա վէզիբնին,  
625 ովէտամիք եւ արտագ ձիօք : Եւ թափաքն ամէն  
մարդարտով և ակամբք յօրինեալ . զոր ոյլ  
երկիր կարծեմ թէ եւ թագաւորք ոչ ունին  
այնպիսի կազմուածք : Եւ զկնի այսր ամե-  
նայնի զայ մեծ վազիր ազէնն . եւ զկնի թա-  
640 զաւորն հեծեալ ի ձի հրաշալի եւ զարմա-  
նալի, զուտք ոսկիակազմ . իսկ թամքն,  
տիկտիկն և ամենոյն ըստառքն ստմի մեծա-  
մեծ մարդարիտ և ակամբք զարդարեալ, որ  
մայլը մայլի տան եւ զայս մարդկան պշտ-  
645 ցանեն . զոր ոչ կարէ մարդ դին դնել կամ  
զիյմաթն զիտեալ կամ լեզուաւ պատմել  
զմեծոթինն անդին խազնային կամ զձիուն,  
որ ոչ զտանին առ այլ թագաւորս : Այլ եւ  
ունէր ի զլուին մեծազին աօրդանատ . եւ եր-  
. 650 կու սօրզուն ի վերայ անդին ճուհարով կազ-  
մած, որ մինն ճ՛մ զուռուշ կ'արժէր : Եւ  
հուզ թագաւորին յետուստ երկու զիլիֆ-  
դաք ազնաւուրք, ահազնատեսիլ եւ քայլք,  
մազերն երեսն ի վայր կախ, ունելով ի ճռու  
655 պալթայք : Ապա զկնի խազնատարն եւ խրզ-  
ւարազան : Եւ որք զկնի եւ զհետ երթան, եւ  
որք սէյիր կ'անեն՝ ազազակեն՝ զհու, եա-  
Հու : իբր թէ երկրի առառուած է : Այսպիսի  
փառօք, պերճ եւ ճոխ փառթամութեամբ

Երթայ նաև ի նամազն իւր և և կոչեն զիս Եէր օտա  
խայլիքայ :

Եւ ևս առանուլ զայս առենայն՝ Հիանայի  
ներողութեանն Աստուծոյ, թէ որպէս վառք  
և մհծութիւն է ամբել ուրացովացն զնոս։ Եւ  
միշտ վարանէի ի միտու իւր, թէ որպէս Հու-օտ  
ասնեամ վասիստանացա։ և զնոս յուխա  
եղեալ տեղիս։ բայց զի ձմեռն էր և ճանա-  
պարհնին մհծ առաջալուն :

#### 4. ԵՐԱԾՈՎԱՅՐԻԹԻՒՆ ԱՅ ԱՓԱՄԲՐ ԵԳԵԱ- ԿԱՆ ԵՒ ՄԱՐՄԱՐԱԿԱՆ ՇՈՎՈՒՑ

Եւ եկն ի Ստամոգ վարդապետ մի  
Մկրտիչ անուամբ Խարբերթցի, աշակերտ  
Ազարիայ կաթողիկոսին։ Նա իմացեալ վատն  
իւր եթէ պիր զիստեմ, էստ զիս առ ինքն չըջել  
ընդ նուռ յաշխարհն Բիւթունացոց։ Եւ ասաց 5  
ինձ թէ Մուշ յինէն Հինգ աւուր ճանապարհ  
է, ևս զքեզ տանիիմ։ Վասն այն կամաւորեցաց  
ևս ևւ մտի առ նաև ապաստորել ևւ չըջիլ ընդ  
նմառ ուր ևւ Երթիցէ։

Եւ եկեալ ի Ստամոգոյ՝ մտաք ի նաւ։ 10  
Եւ երկրորդ օրն եկաք ի ՄՈՒՏՈՒԹՅՈՒՆ, որ է  
սկելէ։ Եւ կայր քանի մն տուն Հոյի։ Եւ էրէց  
մի ։ բայց եկեղեցի չկայր ։ ի տան միում ժամ  
առէին։ Եւ կացաք անդ Հինգ օր։ Եւ զնացեալ  
տեսուր զրադանին, ուր Յոհանէս աւետարա- 15

5 աշխարհն վութանացոց։ — 7 կամաւորեցա-  
— 8 հոյ։

նիշն բազնէպահ էր, և Պրոխորոն Հրաման, որ այժմ մէջիթ է: Եւ Հոռոմ շատ կոյր անդ:

Անահի օր ու կէսն ցամքով հասաք ի հին քաղաքն յԵփելԱՌՈՒ որ այժմ կոչի ՊՈՒՌԱՎԱ.

- 20 որ էր մեծ եւ լայնանիստ: Կոյր անդ երեք հարիւր տուն Հայի. և Փայտէ Ժամատնակ մի եւ Հինգ էրէց: Խացաք անդ ամիս մի, զի էր յոյժ ախորժ եւ մրգաշատ եւ բարելի. այզիք եւ բուրաստանք բազում չուրջ դրա-  
գաքաւ. եւ Երթայր նուազ զետ մի մէջ քա-  
զաքաւ. բայց հաւան զատնաշունչ էր եւ Քուրքն  
չար եւ Հիւանդացուցիչք: Կոյրին ի նմա շի-  
նուածք հին եւ Լորուք մեծամեծք եւ եկեղե-  
ցիք զմոլէթայարկ, զոր այլազդիք խլեալ են  
30 եւ մէջիթ արարեալ: Եւ կոյր մեծ ։ ահազին  
ազօթանց մի հին, մեծ վիճօք. զոր ասին  
թէ զեռ Ներսի շինքն է:

- Եւ քաղքէն ի զուրս կոյրին զեղեցիկ թա-  
գաւորաշէն զարմանալի մեծամեծ թէշկարար  
35 ջերմուկք եւ խարլունայք մեծ ծախիւք. եւ ի  
միջի հաւուղնի, շատրվանք, որ ի բազում  
անզաց բիւնն ջերմ ջուր եւ առողջարարք: Զի  
երբ մտնէ առ նա, ոյլ ոչ կամի Ելանել ի Հեշ-  
տութենէն եւ յառաստեթենէ ջրոց: Պատերն  
40 ամէն շինի է. եւ զետինն ապիտակ մարմար.  
Եւ վերեն զուազնի մեծամեծ, որոք եկե-  
ղեցեաց. եւ այնովէս բաք եւ ստակ կու պա-

17 յայժմ: — 19 յայժմ: — 24 բուրաստանք: —  
25 բայց: — 26 Հիւանդացուցիչք: — 35 խարլունայք:

հեն, որ ասող մի չերեւնոյ: Եւ այլ յառաջ առանձ կամ այլ առելիք խարդումայք վոճը, զոր մտեալ ի նոսա Հեշտացեալ վայելէի մինչ զի 45 մոռանայի զպանող խոռութիւն եւ զնեղութիւն իմ:

Եւ յայնկայս քաղքին էր ԱՊՀՈՍՏՈՆ ԼԵԱՆԻՆ, զոր ՔԷՇԽՇԱՂԱՂԻ կոչեն: ուր Եօթն մանկունքն անգ նելից ցին եւ զարձեալ յարիան, զոր գեռ 50 եւս կան զերեզմանք նոցա: եւ ի զլուխն կայ մեծ եկեղեցի մի: այժմ հանգուցեալ է: Բայց յետոն մեծ եւ բարձր է քան զԱրձիաւու, զոր յետու յաման եւ ձմեռն ոչ վերանայ ձիւնն ի նմանէ: այլ եւ ասին թէ յորդն հոսած նեխած է եւ յորդնած: Եւ մեք ելաք մինչ ուր եկեղեցին էր: եւ այլ ոչ կարացաք զնալ ի վեր, զի ասատիկ քամի էր եւ Հոգ ասող եւ ձիւնամեծ, թէ պէտ ամսոն էր: եւ ահատի տեսք որ քաղքին կէոն աւեր եւ այրած էր եւ արմայի ի ռէլյալցն:

Եւ ահատի ծովեղերը եկաք ի ԱՊԻԿԱԼԻՃ խոռատպան: կացաք անդ ամիս մի եւ Հինգ օր: զի էր Հարբեր տուն հայի եւ երկու էրէց: Ահատի մին օրն հասաք ի ՊԱՆՏՈՒՄԱՅ խառապան, որ էր ծովու եալուն: Եւ անգ կայր տեսակ մի, ժամ կ'առէէին, եւ քանի մն տուն հայի, մէկ Հարեւոյ մի եւ էրէց մի: բայց Հոռոմ յոլով: Եւ կացաք անդ տան օր: Եւ օրու կէոն զեղօրօք եւ ջիֆթլիկովք՝ ուր Հայք 70

43 յերեւնա: — 46 զպանութառթիւն: — 69 յօլով:

կային մէկէ երկուսէ՝ հասաք ի յիշնձնիկ  
քաղաքն. և այն հալու էր՝ ի բարձր լեռան  
վրայ. և չուրջ ու բոլորն ստիր ձիթենիք,  
այզիք և նոնենիք անթիւք: Եւ կայր անդ  
75 երեք էրէց, հարիւր յիսուն առուն հայի. և  
առուն մի ժամ առէին: Եւ այս քաղքին չէ շ-  
մաքն և գոներն ուստի ջուրք բխէին, ամէն  
խոչ կար հանած. ուստի յայտ է որ քրիստո-  
նէից չէնք էին:

80 Եւ անսոր յառաջ կէս միլ մի կայր առա-  
մի ի մէջ ծովու, մեծ քան Ստամոգ, որ  
այժմ առայի էր. միայն նշարանքն երեւէին,  
և ոքաներն և զուլանին: Եւ զնացեալ ի նա  
անսաք զարմանայի շինուածք և մեծամեծ  
85 հարուք հին ժամանակաց, և զետնափոր  
ժազարայք, ներքեւն տաշած և կոմած, մեծ  
զէմք և սոյլք ոզաներն վերեւն ու ներքեւն:  
Եւ մուեալ ի նոսու անսաք յոյժ լոյնանիսու  
և ընդարձակ, որ թէ երեք օրն ըրջէաք շնա-  
90 ստիւտք ի վերջըն. և ասին թէ այս էր յա-  
ռանի քաղաքն որ կոչի ԲՈՒԶԱՆԴԻԱ, զոր  
բուզանդ թազաւորն է շինել իւր անուսն  
վրայ. զոր թոզեալ զայն յայլ անզոջ շինեցին  
և անուսնեցին կոստանդնուպոլիս. և այժմ  
95 ամայի մնացեալ. անսոր կրեն զատրզայիւք  
վայզանք զանթիւ մէրմէրոն և սալո մեծա-

մեծս հաղար ամաց ի վեր ամէն եարուից կու կրեն եւ չի հատնիլ, ոչ կու պակսի:

Եւ սակաւ մի յառաջ էր կզզի մի փոքր, ուր կայր հինգ տուն հայի: Կացաք երկու ա-<sup>100</sup>միս յիստնուկն, զոր բազում մարդասիրութիւն ցուցին մեղ անդր Հայքն:

Եկաք անտի ՊԱԼՔԻՍԱՐ. որ եւ սա յոյժ բարձր լերանց վրայ շինած էր եւ յոյժ քարուտ, որ դաշտը չէրեւէր: Եւ կացաք անդ <sup>105</sup>երկու շարաթ, զի կայր քառասուն տուն հայի եւ էրէց մի:

Եւ անտի եկաք ի մեծահոչակ քաղաքն ՄԱՆԻՍԱՅ, որ էր թախտ շահպատալից, այս է որդոց թագաւորաց, զոր անդ յդեն մինչեւ <sup>110</sup>սնցի եւ զարգացի: Եւ կայր այս քաղաքա երկու եկեղեցի Հայոց, վայտէ տան ոլէս. մինն ի վերն լերան վրայ, եւ մինն ի դաշտն. կայր Եպիսկոպոս մի անունն Յակոբ Ֆրնօզի, եւ երկու էրէց եւ քանի հարիւր տուն հայի. <sup>115</sup>զոր սիրով ընկալան զմեղ եւ յոյժ մեծարեցին: Կացաք անդ երկու ամիս եւ տասն օր, զի էր յոյժ մրդաւէտ եւ բարելի, լի եւ տաստ ամենայն պաղովք:

Եւ անտի կէս օրն հասաք ԻԶՄԻՐ քա-<sup>120</sup>զաքն Նիկողայոսի: Եւ սա էր ծովու ևալու մեծ սկալայ, որ Ստամպոլայ, Մորայ, Վանատիկու, Սաքրու եւ այլոց կէմիք կու խաղային եւ բազում Ֆուանկք եւ Հոռոմք կային անդ: Եւ սա եւս յոյժ պաղատու եւ մրդա-<sup>125</sup>շատ. իսկ սարուճորն ամէն ձիթենիք եւ

նոհենիք։ Եւ կայր Հայոց եղիսկոպոս մի,  
Հարեղայ մի և էրէց մի, Հարիւր տուն Հայր  
և երկու եկեղեցի մինն ի բերին և մինն ի  
130 գուրու։ Եւ ունիք սա որպէս Մանիսան՝ բերի  
անառիկ ի վերայ բարձր լերին. բայց Հաւան  
զէշ էր և ջուրն՝ չար։ Եւ կացաք անդ Երէք  
ամիս։

Եւ անսի երկու օրն Հասաք ի ԹիրԱՅ :  
135 Եւ ուս մեծ քաղաք էր, ովհնատէր և չէն. զի  
ամէն օր բեռն կու կապվէր և քարվան կ'ել-  
նէր. բայց հայ տասն տուն կար. և էրէց  
չկար։ Կացաք անդ ուժ օր. քաղաքացիքն  
յոյժ քաղցր էին և Հիւրատէր, Հայք և Տա-  
140 ճիկքն։

Ահա ելեալ օրուկէան Հասաք ի ԿՕԶՈԼ.  
ՀԻՎԱՐԻն։ Եւ ի հանապարհին կէսն դիպաք  
մեծ և բարձր լերան մի. Եւ ի զլուխ լե-  
րինն կայր ազրիւր մի քաղցրահամ, ցուրտ  
145 և սառն, որ յամառն մարդ չի կարել երկու  
կում ըմողել ի պաղութենէն։ Եւ իշեալ ի լեռ-  
նէն ի զաշտն, ուստի սկսու նեղել զմեզ Հա-  
ւան, մինչ զի Հիւրանզացաք ամէնքս. զի սէ-  
շիլ էր երկիրն այն և մերձ Հարաւակողմ  
150 լուրքն վնասարարք և պառզքն սափի նա-  
րինն, թուրինն և լիմօն անթիւ և աժան,  
ձմեռ չի լինէր, այլ Հանապազ ամառ, մինչ  
զի անառունք և չորքոտանիք ի տարին եր-  
կու անդամ ծնանէին. նոյնպէս ամենայն բոյսք

և դալար և բանջարք երկու հեղ սերմանէին 155  
և երկու հեղ հնձէին . և այնպէս մեծ շող  
լինէր որ ասին թէ տարի մի մէջիթի վրայի  
արձին հալել էր ի սաստիկ ջերմութենէն :  
Եւ ոչ երեւի ի դաւառն այն այլ թոշուն,  
բայց միայն արագիլք անթիւք սփռեալք յա— 160  
մենայն երկիր , ի դիւզո , ի քաղաքո և ի տա-  
նիս : Կայր անդ էրէց մի , երեսուն տուն հայ  
և փայտեալ ժամատեղ մի :

Զոր անտի կամեցաք զնալ ծովեղերօք ի  
Պատմոս կղղին , ուր տեսիլ հանս և զաւե— 165  
տարանն զրեաց Յոհանէս . և անդ կոյ մար-  
մին Պրոխորոնի զըմոսեալ զըմոով ի արծաթի  
տապանի , որպէս կենդանի : Բայց ասին թէ  
շատ Լէվէնդք շրջին խայիխնովք , վասն որոյ  
մեք Երկեաք զնալ , թէպէտ մերձ էր մեզ երեք 170  
աւուր ճանապարհ . այլ զարձաք կրկին յիդ-  
միր և անտի ի Ստմպօլ :

Եւ նստեալ ի նաւ՝ հինգ աւուր ճանա-  
պարհն քսան և երեք օրն չի կարցաք հաս-  
նիլ , այլ ի մէջ ծովու տատանէաք և երե— 175  
րեալ կայաք . ուր Եւ տեսաք զանազան կղղիս  
և աւերտկ չէնս : Եւ եկեալ ի մէկ մեծ կղղի մի  
հոռմի որ Միջելի կոչի . և ասին թէ Յկ գեղ  
կայ ի նմա և հինգ քաղաք : Եւ ի սկէլէն  
երեք տուն հայի գտաք՝ համալինի . առ նոստ 180  
հանգեաք երկու օր և միսիթարեցաք :

Ապա անտի եկաք ՊՕՂՈՍ ՀԻՍԱՄՆ , ուր  
երկու կողմանց շինած էր բերթ ամուր Անտ-  
տօլու և Ռւոռոմէլու . և էին մեծամեծ թօ-

185 բեր ի նմաս , որ եւ ի Ստամոգլ չկայ այնպիսի  
թօր . եւ տեսաք թօր մի Պալեէմազ անուն ,  
որ բերնին շատին խռովան մի էր : Եւ կայր անդ  
երկու երեք տուն հայ . զոր տեսեալ զմեզ  
ջերմնատ եւ ակար , ընկալան սիրով եւ տա-  
190 բան ի տուն հազ տանելով մեզ եւ դարման՝  
շարաթ մի ծառացելով եւ կերակրելով զմեզ :  
Եւ առաջնորդեալ հասուցին զմեզ մինչեւ  
ի ԿիլիՊՈՂԻ , որ եւ նա էր մեծ քաղաք և  
մեծ սկելլէ . զատրուզայք եւ կէմիքն ամէն անդ  
195 ժողովին եւ սպառեն քարիտանին , եւ անտի  
երթան ի վերայ թշնամեաց : Այլ եւ կալիսնքն  
Մարայ անդր հոււահանգիստ առնուն : Այլ եւ  
զանցն , զջուրն եւ զոյլ կերակուրն անդր  
սպառքառանին : Կացաք անդ ամիս մի . զի շատ  
200 հայ կայր . հարեզայ մի եւ էրէց . Եւ ի տաշ-  
խանն սույց մի ժամ կ'ասէին : Եւ մարդիքն  
շարարարոցք էին :

Իրեք օրն անտի Եկատք ի Թէ՛Քի՛ՌՏԱՂՆ : Եւ  
այս եւս վոքք սկելլէ էր ի վերայ դարի քարզա-  
րին : Եւ կայր հաստատ Եկեղեցի մի ի վերաց  
ծովու , զոր Յակոբ անուն վարդուուն մի  
Զէյթունցի , զոր մեծ ջանիւ եւ տրօք բազմօք  
չինել էր եւ վախճանեալ թաղեալ կայր ի  
նմաս <sup>1</sup> : Եւ էր անդ երկու հարիւր կամ աւելի

190 առարձուն :

<sup>1</sup> Յակոբ վ. - Զէյթունցի վախճանան է 1608ին .  
Դր. Դարանազգի , Ժամանակազրութիւն , էջ 320 :

Հայ. Հինգ էրէց եւ երկու հարեզայ : Կացաք 210  
անդ երկու ամիս :

Եւ անտի մտեալ ի նոր՝ մտաք ի ԱԱՐԱ-  
ՄՈՒՄԱԼ. սքէլէն : Եւ կայր անդ էրէց մի ծե-  
րունի եւ սակառ Հայ : Եւ ուր եւ ինչ անդ  
զհայաք, նաև Հայ զտանէաք, զի տարածեալ 215  
եւ ամուսնալ էին ընդ երես երկրի որպէս  
պիտի : Կացաք անդ չորս օր :

Եւ անտի եկաք ի ՆԻԿԻԱՅ որ այժմ կոչի  
ԶԻՆԻԿ ԻԶՆԻԿ, զի անտի ելաննեն շինիք, Փին-  
անք եւ սուլյանիք : Եւ էր մեծ քաղաք. ապա 220  
այժմ մեծ կէսն աներակ եւ ամսցի է . եւ Հա-  
ւան զէշ : Եւ ի քաղքէն զուրս կային շինուածք  
տարմանալիք . հարուք եւ Հիմունք եւ զիքմո-  
դու մի որպէս ի այս քաղաք էր, եւ թէ այս 225  
սեանն ներքեն սաստակեցաւ պեղծն Արիսու :  
Եւ կայր ի քաղաքն երկու էրէց եւ Ժէ տուն  
Հայ . կացաք առ նստա մի: օր : Եւ կայր Հուոց  
քաղքին մեծ լիճ մի, ուր վլրթանէս Հայրա-  
ութեան Լուսաւորչի որդին ակօսս վարեաց 230  
եղանքք, որ մինչեւ ցայսօր երեւին ի վերաց  
ջրին տեղիք ակօսացն, որպէս յերկինս պատ-  
ռուածք սահանաց ուստի տեղեաց անձրեւ :  
Եւ մերձ յնին Հուոց քաղքին տեղին ուր ՅԺԲ  
սուրբ Հարքն ժողովեցան : Եւ անտի յառաջ 235  
մեծ եկեղեցի մի զմագիթայարկ, զոր Արիս-  
ութեան յափշտակեալ էին Երբեմն ի ուղղափա-

ուց, որ ազօթիւք սրբոյն Բասիլիոսի բացաւ  
եւ նոքա ամօթալից եղեն. այժմ ի ձեռս Յու-  
240 նաց է, բայց յոյժ հին: Խակ պարփակն մեծ եւ  
պրճերն սրբն. եւ ամէն պուրջ իբրև մատուռ  
էր նկարած պատկերօք սրբոց. եւ ամէն խու-  
լոյ մտեալ տեսաք զի այնպէս նախշած էր.  
տակս այժմ ամայի էր եղել: Եւ ի զուռն քաղ-  
245 քին կոփած էր ի վերայ մեծամեծ պիմաց եր-  
կու բարաւորս զուան, մի կողմն զպիզծն  
Նեստոր, յոյժ զազիր եւ զարչելի, եւ միւսն  
զիրիոս՝ որովայնն հերձեալ եւ ազիքն ի  
զուրս վազեալ, եւ Նեստորի ըերանի բաց եւ  
250 լեզուն ի կլամբ տրորեալ, որ եւ տեսովացն  
էր ահարկու: Եւ զի օգն դատնաշչունչ էր եւ  
զժնիկ, վասն այն ոչ միայն եկաց, այլ եւ  
բնակաց զոյն երեսաց զեղին եւ նուազեալ որ-  
պէս մեռելոցն:

255 Եւ անտի եկաք ի զիւզ մի ԶԱՔԱՄԱՅ ա-  
նուն, ուր կոյր էրէց մի եւ երեսուն տան  
հայ: Եւ անտի եկաք ի տափարակ տեղ մի,  
որ մին կողմն անտառ էր եւ միւսն լեռ քա-  
րէայր: Եւ այս լերինս վրայ քարակով փոքրիկ  
260 վանք մի էր չինած ի վիճէն. եւ կոյր անդ  
ևպիսկոսոս մի Եղեկու Կապոսու վանից, եւ  
Երկու մարգար<sup>2</sup>: Եւ հուզ վանաց իրեք նոր

238 զոր: — 239 յոյժմ: — 244 յոյժմ: —  
248 յարսվայնն: — 251 յոզի: — 258 լէու:

<sup>2</sup> Առաջը տանից տարակուսի Արմաշի վանքի մասին  
է. ակնարկուած եղիսկոպոսն ըլլալու է Թագէս, զոր  
կը յիւէ Դր. Դարանազցի, Ժամանակագրութիւն, 478:

գեղ էր շինած, հայ սավիր: Կացաք անդ իրեք  
օր:

Եւ անտի եկաք իջլիմ: Եւ ոս մեծ<sup>265</sup>  
սկելէ էր. եւ պէնտէր քաղաք Եւ-շէն: Կայր  
ի նմա երկու էրէց Եւ հարիւր ութառուն տուն  
հայր: Կացաք անդ ամիս մի. Եւ եկաք կըկին  
զարձեալ ի Ստամպօլ: Եւ հանդիպեցաք ի  
վերայ ծովու ատա մի, որ պիղծն վաղէս ար—<sup>270</sup>  
կեալ զուրբն ներսէս ի ծովն. բայց ի նա ոչ  
ելաք: Եւ կային Հայք ի այլ կղզիս:

Եւ կեցաք ի Ստամպօլ իրեք ամիս: Վար—  
դապեան զնաց յայլ տեղ, զի իւր երկիրն եւ  
Մշու օվան Արզւաշն աւիրել էր, Եւ զմար—<sup>275</sup>  
դիկս զերի տարել: Վասն որոյ երկեայ զնալ  
յայն կողմն: Եւ մնացեալ ժամանակս ինչ ի  
Ստամպօլ տրտում եւ լի սղով՝ սպասէի Աս—  
տուծոյ իմոյ՝ ակն ունելով միսիթարութեան,  
մինչեւ ոյց արացէ ինձ Տէր Եւ հասուցէ<sup>280</sup>  
զիս փափազանաց:

### 5. ԱԽՎԵԳՆԱՑՈՒԹԻՒՆ Ի Կ. ՊՈՂԱՌ Ի ՎԵՆԵՏԻԿ

Ապա զմտաւ ածի եւ առեմ. մինչ խաղա—  
զանայ երկիրն Մշու, ես երթայց սուրբ դե—  
րեզմանն առաքելոց Պետրոսի եւ Պողոսի: Եւ  
մինչ այն խորհրդեան էի, առէնիազն Աս—  
տուծած, որ տայ ամենայնի առատապէս ըստ<sup>5</sup>

270 յատկեալ: — 274 էրկիրք: — 275 օվան | էր|  
էլ: — 276 կըկայ:

որտի, զամենացն խնդիրս կատարէ, Ելից և  
զիմ անտրժանիս վատիսպն եւ զիղձս իմ կա-  
տարեաց :

Զի եկն քարվան մի մեծ ինկուբիու զօ-  
10 փոզ . կային ընդ նմա եւ վաճառականք հայ-  
այլ եւ վարդապետ մի վանական Զաքարիայ  
տնուն : Եւ յետ սակաւ առուրց ծանօթ եղեալ  
ընդ միմեանս՝ յորդորէր զիս ընդ իւր եր-  
թալ : Եւ ի թօյին թել . յունիս ամսոյ ԺԱ. կո-  
15 չելով զանուն Աստուծոյ յօգնականութիւն,  
բազում պատրաստութեամբ ելաք ի հանո-  
պարէ :

Եւ վեց օրն հասաք ԵՏՄՆԱՅ : Եւ Ստամ-  
պոլայ մինչեւ կարնայ ամէնն Փարշ էր սալու-  
20 բականոյ, որ սաք մարդկան կամ զրաստից ոչ  
բանար . Եւ յամէն իջեւանի բազմածախոյ,  
մեծամեծ զիմօք մէջիդինի, խաներ, օտանի,  
բազանիք, հիւրանոցք, հիւանդանոցք : Եւ  
երկու անգամ կերտակուր կ'երիէ՝ փիլաք,  
25 զարտաս հայոնի . Եւ երկու Փօտոլոյ հաց : Թող  
զարտասանին Եւ զեղեցիկ ուրիշի ազաշնին,  
չէշմանին Եւ աննման յըերն : Եւ թէ Հազար  
հոգի յինի, զան իշնուն, ուտեն, խմեն, Հանգ-  
շին ինքնանք Եւ զրաստիք . Եւ երբ կամին  
30 բազանիք մանեն Եւ ապա զնան : Այլ Եւ ու-  
սոք ի հանուպարէին կամ արական վիմաշին  
կամուրջնի, քան, քառասուն, եօթանասուն  
ակինէն ի վերայ լայն Եւ մեծ զետոց : Եւ էր  
կարնայ թախտ Եւ մեծահամբաւ բազաք, յոյժ

բարելիք եւ մրգաւայր, լիութիւն եւ առաւատու- 35  
թիւն ամենայն իրաց. եւ երեք մէծ զետ եր-  
թագր շուրջ զբաղաքաւ՝ ուրախացուցանելով  
զմարդիկ բատ Դաւթաց, թէ Գևացք զետաց  
ուրախ առնեն զբաղաքն Աստուծոյ: Եւ կայր  
քաղքին մէջն քարեւ եկեղեցի մի Հայոց, վեց 40  
էրէց, երկու հարեզայ, մին եպիսկոպոս եւ  
երկու, երեք հարիւր տուն հայի. բայց անեղա-  
ցիք յոյժ սակաւք: Կացաք անդ հինդ շարաթ:  
Եւ քաղքին բոլորն սափի պատ ու պախչա,  
կէս առուր ճանապարհ. այլ եւ պէնտէր, չէն: 45  
Պէղիրիսնի շահրիստան է, ամենեցուն զո-  
վելիք:

Եւ երեսի անուի վեց օրն Աւումմէլուվ Հա-  
ստք ի ՀԱԽԱԾԻՊԱՅ մէծ քաղաքն<sup>1</sup>. Եւ այս  
քաղքին մէջով երթայր մէծ զետ. Եւ պատք 50  
ի զիրո թէ այն քաղաքն Ազէքասնորու հօրեն  
Փիլիպոսի Մակեդոնացոյ չինած է. Եւ այլք  
ասին թէ ո՛չ, այլ թէ միւս Թիլիփիայ կայ ծո-  
վու եղբն: Եւ կայր անդ էրէց մի եւ հարիւր  
տուն հայի: Եկեսալ զմեղ մէծարեցին եւ առ- 55  
սեալ տարանի ի տունս իւրեանց. իսկ մեք ոչ  
կարացաք զնալ, զի քարքանն կ'երթայր: Եւ  
այս Հուլյանու բրինձ կ'ելնէ, այլ կարմիր է.  
չէ նման Մոբաց բրինձին:

Եւ կէս խօնախ խոսանաւ մի եկաք, 60

35 բարելիք: — 52 Փիլիփոսի մակեդոնացոյ:

<sup>1</sup> Մահոթ Փիլիփոսոսի մակեդոնացին, Ձիթիփէ, այժմ համար  
Պլովզի քաղաքն է:

ԹԱՅԹՈՐ ՊԱԶԱՐԻ կ'առան։ Եւ անտի եօթն  
օրն եկաք բազում յերամբք եւ անտառախիս  
ժայրիւք եւ աղքեցօք ի ՄԿՈՒՅ։ Եւ կացաք  
անդ ԺԲ օր, զի ճանիփան առ կայր ԼԵՎԵան-  
նուն եւ Հարամոց։ Եւ կային անդ իրեք տուն  
հայի, պախչանիք, խիստ Հիւրատէրք եւ Եր-  
կեղանք Աստուծոյ. որ ընկալան զմեզ առ  
ինքեանս ի պաղչան Եւ մխիթարեցին զմեզ  
կերակրովք եւ անուշ խօսիւք, մինչեւ այլ  
բարգանն եկաւ եւ ապաս ի միասին եկաք։ Իսկ  
կապուտ քարին՝ որ է կօգուսչի՝ մէտանն անդ  
է. Եւ կին մի պառաւ ամալով կու բռնէ զայն  
ժամաէնն։

Եւ անտի հինդ օրն Հազիւ Հատաք ԱՆԻԻ-  
75 ՊԱՅԱՐԻՆ՝ անցանելով զմեծամեծ եւ բարձր  
լերինս եւ զիսորամորս։ Եւ ընդ ծործոր մի  
երթայր մեծ զետ մի շտաշմամք՝ ծուռ ու  
ժոռ, որ մէկ օրն իմթառն անզամ անցաք  
զնաւ միովք եւ ջորով։ Եւ այնովէս նեղ եւ ան-  
80 ծուկ էր ճանապարհի շատիզն, որ Հազիւ ան-  
ցանէին զրաստք. վերեն բարձր անտառա-  
խիս քարամէմ յետն է, եւ ներքեւն Հազիւ  
երեւէր ջուրն. մեք միջովն անցաք։

Եւ այնոյիսի բարձր յետն մի անցանէաք,  
որ եւ զարեզակն չաւսանէաք. այլ մշուշ եւ  
պաղ քամի. Եւ այնովէս մըսեցաք, մինչ զի  
ամէնքն յերիվարաց իջաք. եւ բազումք Հի-  
ւանդացան ի սասարիկ ցրացյն, թէպէտ օգոս-

առայի ամիսն էաք : Եւ այս ճանապարհու խիստ  
աշ ու դող քաշեցաք, զի պօլուք պօլուք 90  
չըթէին հարածիք եւ զայն կողմանքն աւիրէին,  
եւ զբազաքս եւ զիիւզն այրէին, եւ այլոց  
առզուն ձղէին, որովհ յԱնապօլուն սօխ-  
թայք :

Եւ այս Ենկիպազարս կ'երեւ ազգ եւ ազգ 95  
ցեզք ու ցեզ թուրքի կուղղայք, մեծ եւ  
փոքք : Եւ երբ պազարի օր լինի, ամէն զեղէ,  
բազքէ բերին, զիզէն . զի ամէն ատրափն քի-  
լիթչիք են . եւ եկեալ պէզիրկանք զնեն եւ  
տարեալ սփռեն ընդ աշխարհու ամենայն վա- 100  
ճառելով : Եւ ընդ մէջ քաղքին մեծ զետ մի  
երթայր նման Խորժերմախին, կարմբազոյն  
եւ պղանոր :

Եւ անտի հինգ օրն հառաք ՊՕՄՆԱ ՍԱ-  
ՐԱՅՔՆ, որ էր մեծ քազաք եւ բարձր լերան 105  
վրայ չինեալ : Եւ սորա միջովին երթայր լայ-  
նածաւար զետ մի, առանելազոյն քան զայլ  
զետան : Եւ էր չէն եւ պէնտէր, եւ վաճառա-  
կանաց աեզ . եւ Ռւսումէլու պէկլէր պէկին  
անդ նսուիր : Զոր զատք անդ չորս հայ պէ- 110  
զիրկան; որ զմեղ սիրով ընկալան եւ մեծու-  
րեցին ի խանն միջթարելով զմեզ . որոց Տէրին  
վարձահատոցց լիցի : Եզաք անդ երկու օր :  
Եւ էին մարզիք երկրին մեծ եւ երկայն աղ-  
նաւուրք, ուժեղ եւ զօրեղք, երկայն եւ յաղ- 115  
թանգամք . բնաւ չի զիտեն Տաճկի լեզու,  
բայց միայն Պուլզարի : Եւ ասին թէ Ռւսու-  
մէլին ութառուն հազար զեզ կայ Պուլզարի՝

զատ ի քաղաքաց . Եւ Հն հոռմի գաւանու-  
 թեամբ . Եւ նոցա ևպիսկուգոսն արհի նստի  
 Ասրանոյ : Եւ թէ վասն է՞ր տաճկացել Հն  
 դաւառոք . ասին թէ ևկեալ էր առ նոսար խա-  
 րաճչի մի ժամանակ մի Եւ վասն չքաւորու-  
 թեան ուրացան դհաւատն , թէ չի տան խա-  
 բաճ : Իսկ խարաճչիքն ժողովեալ զնացին ի  
 Պարին եւ Հասկացուցին խօնթքարին , թէ  
 Պօնհացիք ոչ վասն Աստուծոյ , այլ վասն խար-  
 ճին տաճկացան : Վասն որոյ թաղաւորն Հրա-  
 մեց թէ Թող տան , թէպէտ տաճիկ եղան ,  
 բայց ի Հաճիցն որ Մեքան են զնացել : Նոքա  
 տեսին որ համ ի Հաւատոց զրկեցան , Համ  
 խարաճ կու տան . սկսան Մէզան զնուլ վասն  
 խարճին : Ամէնքն Հաճի են . սակաւ կայ ի մէջ  
 նոցա խարաճ տվող . զսոսա կոչեն Ռուու-  
 մելու քաղի : Այլ Եւ կայ Պօնհայու բոլորն  
 շատ վանքեր Պօլղարի : Եւ Հինգ միլ վանք  
 մի կայր մեծ Եւ անվանի Եւ մառաւոր . Եւ  
 ասին թէ Երեքհարիւր դեղ թէմ ունի , ի վե-  
 րաց բարձր լերին . Եւ մահալ ի ներս չըջեցաք  
 Եւ զԱստուած օրհնեցաք : Եւ Հուով վանաց  
 շերմուկն մեծ կայր , որ ԺԴ ջաղացք կու բա-  
 նեցնէր , զատ Եւ որիշ միմիանց . Եւ այլում  
 տեղոջ ալ՝ մերձ Հուլուպոյ՝ տեսաք թաղա-  
 ւորաց շինած մեծամեծ Հաւուզնի Եւ Հուճու-  
 բայից : Եւ Պօնհու մարդն ամէն պուլղարնակ

կու պրոցեն . և թէ երդպին այլ ինչ չի գիտեն տաճկերէն բոյց միայն զանունն Մահմատի . զի ասեն «Թաքօմի պօկոյ , ի վիրա Մէհմէտօքայ» , այս է «Ան աստուածն եւ Հաւ<sup>150</sup> աստն Մահմատի» . և այլն :

Անտի եկաք Երկու օր ու կէսն ի Քիլիլ քաղաք , ի սինօրն Ֆուանկաց , որ այս կողմն Տաճկաց է և միւսն Ֆուանկաց . և միջովն անցանէր զետ մի : Բայց ի ձանապարհին շատ<sup>155</sup> զիշտ եւ նեղութիւն կրեցաք և ազգի ազգի տառապանք . այլ եւ ահ եւ դոզում ի հարամկաց եւ յաւագակաց . և այնպէս դժուար էր , որ հինգ հարիւր , վեցհարիւր հոգի չիշխէր Երթալ :<sup>160</sup>

Եւ ելաք ի բարձր լեռու մի , որ խիստ բարձր եւ սիրսի էր . որ ոչ ձի եւ ոչ այլ պարստ կարէր Ելանել , այլ միայն ջորի դուռը քար ու ապառաժ է եւ ստնատեղ չկայ , այլ փայտէ աստիճանք է շինած եւ սանդուխք ;<sup>165</sup> ուստի ջորավ հաղիւ եւ մուտարով Ելանեն : Եւ այս Քիլիսու ասրավն հող բնաւ չտեսաք , այլ սաֆի քար , արտերն եւ էղինին պիլտ զուտը քարեր են մանար : Ազա սքանչելադործին Աստուծոյ հազար բերան փառք , որ այնպիսի քարսն առանց հողոյ բոյսք լւտունկք եւ այզիք լինին , որովէս եւ յԵրուսաղէմին . զի եւ յԵրուսաղէմ այսպէս անջրդի է եւ քարուտ :

Եւ իրրեւ անցաք յայնկոյս գետոյն եւ  
եկաք ի ԱԲԻԼԻԹ բերթն<sup>3</sup>, ընդ առաջ եկին մեզ  
զինվորք. Եւ մեք խնդացաք թէ զմեղ պատիւ  
տանին: Իսկ նոքտ զմեղ տարան ի խան մի,  
որ կոչեն «Նազարեթ»: Եւ փակեալ զդրունս  
175 ի զերայ մեր՝ զնացին: Իսկ մեք զի զլեզուս  
նոցա ոչ զիտէաք եւ ոչ զելս իրացն, մնացաք  
անդ անմխիթար ի սուզ. Եւ լայաք զօրն ի  
բուն: Եւ երիկունն հայեցեալ ընդ պատու-  
հանն՝ տեսաք զրապում վաճառականս այլ եւ  
185 այլ քաղաքաց՝ Ատամպօլու, Անկուրու,  
Էտրիու, Զուզու, եւ այլ զաւառաց, քրիստո-  
նեայք եւ անհաւատք. Եւ խօսեցեալ ընդ  
միմեանս՝ հարցաք թէ վասն է<sup>5</sup> ը սցսպէս ար-  
գելին: Եւ ասին թէ այսովիսի սահմանք է  
190 նոցա, որ թէ թագաւորն ալ զայ թուրքաց՝  
պիտոր նազարէթ քաշէ: Զոր մեք լուեալ  
տրամութիւն մեծ Եւ հոգք անհնարինք կալան  
զմեղ. մինչ զի խռովեցան սուկերք եւ ցամա-  
քեցան լեզուք մեր, եւ տառապէաք որսէս ի  
195 բանափի եւ ի կառանս. զի ոչ ոք երեւէր մեզ  
եւ ոչ մեք ումեք. զի ի միմեանց խորչէաք:  
Եւ երկրորդ օրն բերին մեզ կվարտիանափ,  
որ է նազր, եւ ասին թէ սա զամենայն ինչ  
զոր կամիք՝ կատարէ եւ դնէ: Բայց մեք զլե-  
200 զուս նոցա ոչ զիտէաք եւ ոչ նա զմերն, այլ

188 միմիանս: — 196 ումէք զի միմիանց:

<sup>3</sup> Spalato:

ձեռօք եւ իշմարով հասկցեաք, որպէս և համբ։  
Եւ թէ կերակուր կամ եմիշ ուղեաք, ընդ ովա-  
տու համեն տային մեզ։ Եւ մեք զբրամի՛ ընկե-  
նուաք։ Եւ ես տեսեալ զայս ամենայն աղեաս  
տարակուանաց Եւ անցից զոր եկին ի գլուխու 205  
մէր Եւ հառաջմամբ սախ զոզրս զայս։

Տէրն ազատէ բզմեց աստի  
Այս նազարէթ զարիս Երկրի։  
Ղափիլ անկառք մեք այս տեղի,  
Փորձանեք Եկաւ խիստ մեր զիխի։ 210  
Այս նազարէթո որ է զրնատն,  
Անմեղ մարդկանց արդելարան,  
Զէ ի զրոց, ոչ Տեսոն հրաման,  
Այժ յախճարաց Եղեալ ուսհման։  
Այս նազարէթո իժ ու զազան,  
ոչ հաց ունի ոչ ջուր յինքեան։ 215  
Ունի անյեղու կվարտիսն,  
Մէծ մէծ մըմէհն Եւ շատ բլոն։  
Այս նազարէթո դժոխոց նման,  
Հայէ մաչէ զոսկերս մարդկան, 220  
Ասուսած տոնէ մեզի տարման,  
Մէկ մի Ելնեմք սորս զրան։  
Կարօնեցաք տեսոյ մարդկան,  
Եւ կերակրոցըն զանազան։  
Եւ թէ կոչես զոք քեզ ի բան,  
Խորչին ի քէն Եւ հեռանան։ 225  
Մէծ սուզի կամք Եւ արտութեան,  
Տէրն փրկէ ի փորձութեան։

Այս անողորժ ժարդիք որ կան ,  
 230 թուռուն օր մեզ պահել տրվան :  
 Աւազ թէ ոք ի աստ զայցէ ,  
 Եւ շատ զրամ հետ խը չըերէ ,  
 Յայնժամ նա Հայրն անսցէ ,  
 Որ ոչ մահու , ոչ կենաց է :  
 235 Աստուած տանէ մեզի տէ բժան ,  
 Հանէ զմեզ սորա զրամն ,  
 Երթանք անսունք բզմուանկիսան ,  
 Պոզս Պետրոսի զերեզման :

Եւ ամէն չարաթ զայցին եւ զմեր հա-  
 240 զուստն եւ փարթալին եւ զումաշն քրքրէին ,  
 Բափէին եւ սփուէին ի պարան . եւ այնպէս  
 կախ մեայցին մինչ իրիկուն , եւ սակաւ մի  
 ձիփթարէաք հետ Հայոց զրուցով հետեւանց :  
 Եւ առէին մեզ թէ ազգ եւ ազգ է նազարէթն .  
 245 այ մոմ ունի , ոչ կ , սախզիսն եւ այլ այսպիսի  
 որ թուրէ չունենայ , քամն եւ Հինդ օր կու-  
 պահէ . եւ թէ քէպայ կամ կաշի , սօֆ , թուր  
 արաթ լինի , քառուն օր պիտի պահէ , եւ թէ  
 զում չունենայ , քամն օր : Եւ մեք զի զա-  
 250 տարկ էաք . բայց վարդապետն ունիք քանի  
 մն թօր սօֆ արմագանցու , վասն այն արգե-  
 լիցին զմեզ քառուն օր : Ո՞ւ , ո՞ւ , ո՞ւ , վա՞յ  
 զիս : Բայց վարդապետն արանջէր եւ յոյժ  
 նեղէր , ճճկուհէր եւ անդռանէր զնոսա . բար-  
 255 կանար , սրամանէր եւ յոզոց հանէր , առելով  
 թէ ազատ զոլով եւ անձնիշխան՝ եկաք մտաք  
 իւրօնի կամս . ի ներ զրեան :

Եւ իրքեւ կտուրեցան աւուրքն սրդոց  
քառառուն օր, հանին զմեղ ի դուրս: Մտեալ  
ի քաղաքն տեսաք փառաւոր Եկեղեցիս և 260  
բարձր զանկակատունս վիմաշէն, այլ եւ մե-  
ծամենծ զանկակս, որ ի հնչելն զուարձանային  
հողիք ի քաղցր եւ համեղ ձայնէն. և խաչեր  
մեծամեծ ի վերայ Եկեղեցեաց եւ զանկակա-  
տնից՝ ոսկեջրած: Եւ անդ այլ ոչ երեւէր տաւ- 265  
ճիկ կամ հրաման թուրքաց, այլ բովանդակ  
քրիստոնէութիւն էր: Զայս ամենայն տեսեալ  
ուրախացաք եւ բերկրեալ ցնծացաք հողով  
եւ մարմնով, մինչ զի մոռացաք զամենայն  
նեղութիւն եւ զանջանս, եւ զգժուարու- 270  
թիւն ձանապարհին, այլ եւ նազարէթին. զոր  
ոցուհետեւ բարձաւ իշխանութիւն եւ զօրու-  
թիւն Տաճկաց եւ թագաւորեաց Քրիստոս  
քրիստոնէիւք: Եւ քաղաքս էր սքէլէ և ծո-  
վահայեաց. եւ շուրջ զնովաւ էին այդիք եւ 275  
թզենիք:

Եւ կացաք անդ մինչեւ եկին զատրզայք  
վէնէտիկու զի եւ ի վերայ ծովուն այն կային  
հարամիք. եւ իրեք օրն հասաք յատա մի  
ԶԱՏՐԱՅ անուն. եւ մտեալ յինքն տեսաք 280  
սպայծառ Եկեղեցիս, վահորայս եւ ևոլիոկոպո-  
սարանս՝ զեղեցիկ վիմօք եւ աշտարակօք չի-  
նեալ. այլ եւ զանառիկ բերթն եւ զպարիսալ  
քաղաքին, որ էր թիկնապահ:

285 Եւ անտի ելեալ բազում քազաքաւ և  
գղեկօք, բերթունօք և վահորայիւք ի վայե-  
լուշ անդիս. զորս ոչ զրեցի մի բառ միովէ :

### 6. ՎԵՆԵՏԻԿ

Ապա հասաք ի զեղեցիկ նաւահանգիստն  
ի մեծահամրաւ և ի հոյակաւոր, զարժա-  
նալի բաղաքն և աստուածաշէն կզզին մէջն  
վէնէտիկի : Եւ երկու առուր հանապարհէ ծո-  
ս վոյ կ'երեւէք Սա Մարքոսին զանկակառուն  
և եկեղեցիքն, որպէս զՊզնձէ քազաքն :

Եւ կացաք անդ երկու ամիս ու կէս. զի  
կոյր Հայոց քարէ հաստատ եկեղեցի մի՝ Հո-  
գէաներազ, խցերազ, այլ և դարպանի, ան-  
10 զանատեզը և օթեւանք Հիւրոց<sup>1</sup> : Եւ կոյր անդ  
էրէց մի և երկու Հարեւոյ : Այլ և անսաք  
չորս եղիսկոսոս աղթարմաց . մին Եսյանի Յո-  
վանէս. մին Մարտիրոս, մին Դավար Արձի-  
շեցի . մին Պետրոս Իսուկոցի . քանի այ Մայո-  
15 նիոյ ասին կայ . ամէնքն զարձուած : Եւ կոյր  
առան առան Հայ . այլքն սողթարմաց : Բայց  
ալզոյիրկան շատ կայր :

### 13 յարհիւցի:

<sup>1</sup> Խօսքը Հայոց Տան Ժամինէ է, ուր 1689 շինու-  
աւու Ս. Խաչ Եկեղեցին (Հայ-Վէճելու, 143 յյ. 494) :  
Երշեալ եպիսկոպոսներն այլուստ անտախօթ են, եթէ  
չէն պնդանէն եպիսկոպոս Զեթունցի, Մարտիրոս  
եպիսկոպոս Աշոտու, Դավար եղիսկոսոս Հալուսյան,  
որոնց սուրբազրան էն 1684ին Ազարիս կաթողիկոսի տա-  
գիրիոր ժդ. Քահանացապես զբաժ թզթին առկ-  
Ա. Պ. Պարձեան Պատմութիւն կաթողիկէ զարդարե-  
առաթեան ի Հայու. Վէճելու 1878, էջ 313:

Եւ էր այս քաղաքու յայտ զարմանալի եւ  
ամենային մարդկան սքանչելիք. զի ոչ կզգի է  
եւ ոչ ծով կամ ցածաք, այլ ի մէջ ծովու որ-  
պէս արձանն Հերակլես, շինեալ բազմածախ  
եւ մեծամեծ ամուր Հիմամբ. զոր այնպիսի  
շինուածք եւ ևարտաք չէ առանալ մարդ. եւ  
զատ ի Աստվածոյ ոչ ոք կարէ չինել: Եւ ջրին  
մէջն մարդապօյ անուաշ քարտի եւ պիմունք  
հիմնարկած. եւ փողոցքնին ամէն ջուր է:

## ՍԱՆ ՄԱՐԳՈ

Եւ նախ զնացաք ի Սա Մարքոն, որ է  
Մարկոս առեւտրանիչն. Եւ է առագ եւ մեծ  
եկեղեցի: Եւ կայր վերեւն զմուկթին առջևն  
իրեք պղնձէ սիւն, որ ի հանգիսի առուրս 30  
անգը խաչարամ կանգնեցնեն. Եւ ի վերին  
ոպետրէ չորս ձի ամենի: Եւ Սա Մարքոյին  
զուան բարաւորքն եւ վերեւն եւ զուսն ամէն  
պղինձ է. Եւ այնպէս արվեստ, փորուածք եւ  
քանդակք է սահմանած, որ զարամով չեն 35  
կարել այլ պրել կամ նկարել. Եւ քանի  
մարդ որ հայեր՝ չէր յագիլ ի զեղեցկու-  
թենէն: Եւ այն ձիանքն թափած զինչ ուկի  
կու փայլքին, զոր հային ի վերայ միմիանց  
որոգէս կենդանիք: Եւ այլ ի վեր շուրջ զու-  
պայիցն կոփած էր եւ քանդակած ի սպիտակ  
մէրմէրէ զերկուտառան ստորեալսն եւ չորս  
առեւտրանիչն եւ այլ սքանչելի իրս:

Եւ ի ներս մատեայ տեսաք զարժանալի շի-  
 45 հուածս եւ կամարս : Եւ բռն չորս կողմ եկե-  
 զեցուն զուտր ոսկով եւ լանվարթով գու-  
 ռուսի զամենացն տեօրինականքն Թրիստոսի  
 եւ սրբոց՝ զանազան զեզօք : Եւ յաւազ իս-  
 րանին առջեւն Երթեալ երկրպագեցաք Աս-  
 50 տուծոյ եւ սուրբ Աւետարանէի . մեզաց թո-  
 զութիւն խնդրեցաք մեզ եւ մեր ննջեցելոց :  
 Եւ մատեաք յառաջ, ուր էր մարմինն Մար-  
 կոսի ի մատուռ մի, որ էր ի սպիտակ եւ ազ-  
 նիւ մէրժէրէ եւ անզիւա . խուզաց էր շինած  
 55 ի վերաց իրեք սեան, զի տանն թէ ոսկոյ սպ-  
 րազար է ւ եւ ի զիշերի լոյս տան սուսւել քան  
 վեանարասաշն : Եւ զուպոյին վերեւն Հանած  
 էր սամֆի ոսկով զուտրին Մարկոս, որ տե-  
 սոզքն պշտոցեալ Հայէին եւ բերանարաց լի-  
 60 նէին : Նաև զետինն ամէն փուլուուքէրի էր :  
 Եւ զինչ աշխարհու եզել զեսցել, անդր տեսա-  
 նես . այլ Եւ որչոմի կենզանի կոյ աշխարհու,  
 թէ զարգան, անսուռն, թուշուն, անդ զտա-  
 նես : Իսկ իւէ տումէտ մէրժէ ունուն աշքն մար-  
 65 զուն խոմաշմիւ կու լինէր եւ չի խմիշէր  
 մարդ կոսինէ զայնայիսի բազզահնար արթեսան  
 իմաստնոց, զոր այժմ ոչ ոք կարէ տանել  
 զայն :

Եւ ասին թէ Աս Մարքոյին խազնին Հէ-  
 70 նէր եւ Համար չկաց . զի անթիւ է զանձն եւ

իսպղինան նորա . Եւ ամէն քաղաքն նորա դրա-  
մովն կու շրջին : Եւ կայր աւագ խորանին  
առջեւ իրեք լալ մեծ հաւկթաչափ . Եւ մէկն  
ասին թէ հարիւր հազար կոօչ կ'ամէք : Եւ  
կայր շամ շրախ մի , որ է լուսատու ակն . 75  
ասին թէ Կոստանդիանոս թաղաւորին խաղ-  
նէն ելել է , զին չունի , ոչ խըյմէթ . իրեք  
տարպա , հարիւր հազար ոսկի կարմիր կ'ամէք  
եւ այլ աւելի , զի ճրադի պէս լոյս կու տայ :  
Եւ այլ տեսաք տասն մարզարիտ կախ՝ ա- 80  
զաւոյ հաւկթի չափ . թող ևաղութիքն ,  
զունզուն արմասնին , զմբուխտնին եւ այլ  
ճուհարնին , անզին 'ւ աննման : Այլ եւ տե-  
սաք քէրկէրտանի կօտօչ ճշմարիտ եւ սոսոց ,  
որ խաղինայ մի կ'ամէք : Զայսպիսի անդիւտ 85  
եւ անզին ճօհարնին հանդիսի օրեր զուրս կու  
հանեն . այլ օրն կու պահեն : Իսկ զոսկեղէն  
եւ զարծաթեղէն անօթան ո՞վ կարէ թուել :  
Եւ կայր Ստամոլցի ճօհարտար մի ի հօն .  
նա զարմացեալ ասաց , թէ Ամէն ճուհար մէ- 90  
լիաթ մի կ'ամէք : Եւ մեք զայս ամենայն տե-  
սեալ զոհացողական փառս մատուցաք Աս-  
տուծոյ , որ այսպէս փառք եւ մեծութիւն եւ  
պերճ ճոխութիւն է տվել քրիստոնէից եւ իշ-  
խանութիւն : Իսկ մեք վշտալի կենօք յայսմ 95  
ամենայնէ զրկեալ եւ զերի եղեալ այլազգաց  
եւ Տաճկաց վասն մեղաց մերոց :

## ԶԱՆԴԱԿԱՏՈՒՆՆ

Եւ այլ օր ելաք ի Զանկակատունն , որ  
էր երեքնարիւր աստիճան բարձր մինչ ի զան-  
100 կակն . Եւ անտի մինչ ի վերին զուսպան ուր  
խաչն է՝ հարիւր աստիճան : Եւ ի դլուխն զա-  
դաթան շինած է թէսնիֆով թափած սպէտրէ  
հրեշտակ մի մեծ մարդարոյ մի , որ ներ-  
բռւստ վարէն իրրեւ զթոչուն կ'էրեւէր . ու-  
105 նէր մին ձեռն սուր եւ միւսովն մատամբը ցու-  
ցանէր , զի այս հրեշտակս խուլավուզ էր նա-  
ւորդաց եւ ամենայնի . զի այնպէս խմասու-  
թեամբ տլիսմ էր զուգած , որ քամին ուստի  
կ'ելնէ՝ այն կողմն մատամբը ցուցանէ :

## ԹԱԳԱԽՈՒԹԻՒՆ ՍԱՐԱՅՆ

110 Այլ եւ կայր Սա Մարքոյին առջեւն մեծ  
մօյտան . եւ ներքեւն ծով . Եւ ձախ զիշն թա-  
գաւորին սարայըն է՝ յոյժ զարմանաշէն , յոք-  
նարեղուն եւ բազմայարկ . Եւ իւր նստած  
սունն զուտր ոսկով ծեփած է , վարախով եւ  
115 լաճվարթով . ազնիւ արվեստ եւ բան անցու-  
ցած , եւ նախաշ . այլ եւ մէրմէռէ շինած  
ազգի ազգի կենդանիք , զազանք եւ անս-  
ունք : Եւ սարային զուռն շէմն վերն եւ բա-  
րաւորքն խիստ աննման եւ զարմանալի . ոչ  
120 բառի , ոչ լեզուաւ մարդ չի կարէ պատմել :  
Եւ ի վերայ զուան սպիտակ մէրմէռէ իրրեւ  
զկենդանի զուգած էր կոյս մի զեղեցիկ , որ  
անէր թաղ ի դլուխն ընդելուղեալ մարդար-

\* 112 յոքնափեղուն : — 118 սարախն :

տով և ակամբք մեծագնով . Եւ ունէր յաջ  
ձեռն սուր երկասոյրի մերկ . Եւ ի ձախն կշիռք . 125  
Եւ էր դրեալ թէ թաղն թագաւորութիւնս  
նշանակէ Եւ կոյսն՝ զկուսութիւն քաղաքիս  
նշանակէ , որ ի սկզբանէ մինչեւ ցայսօր ոչ  
անկատ ընդ ձեռամբք ուժնք Եւ ոչ տիրեաց ոք  
սմա Եւ ոչ ծառայեաց այլում Եւ ոչ ոք ի 130  
թշնամեաց տիրեաց կամ զերեաց . այլ մնաց  
անյաղի Եւ անխախտ որպէս զկոյս աղջիկ :  
Իսկ կշիռն զարդարութիւն նշանակէ , որպէս  
Եւ ի զիրս ամենասյն ուրեք զարդար զատառ-  
ամնն ցուցանէ : Իսկ սուրն մերկ զրարկու- 135  
թիւնն Աստուծոյ ըստ Պօղոսի . Զի թէ զրկէք  
զմիմիանս Եւ անիրաւիք Եւ չլինիք որպէս  
զմէտս կշուց , նա սուրս այս մաշեսցէ զմեզ :  
Վասն որոյ տեսեալ զահազին սուրս պատ-  
րաստ կացիք : 140

Եւ կայր հանդէալ սարային տառապիսանս  
մի ամուր որպէս բերք , զարմանաշէն , որ չկայ  
յարարածս նման նմա : Եւ զոան երկու կողմն  
զրոէ շինած էր երկու մեծ Եւ անձոռնի ծո-  
վային մարդիք ի մարմարէ , մերկ Եւ խայտա- 145  
ուտկ . Եւ ունէր մինն ի ձևն հաստ րիբ մի Եւ  
միւսն մեծ քար . Եւ թէ ոք կամէք ի ներսն  
մտանել՝ կարծէք թէ կամին հարկանել : Եւ  
տառապիսանին վերեւն զուզած էր մարմարէ  
զշինող վարդապետն ու զիւր բանվորնին . Եւ 150  
ամէնին ձեռն հանդահակ բան մի , զոր ոչ կա-  
րեմ զրկէ մի ըստ միոջէ :

Եւ մերք ծովառն ի մօյտանն կայր երկու  
մեծ սիւն մերմէրէ . մէկին վրայ սուրբն  
155 Գեւորգ ձիով եւ զեզարդով . եւ վիշտովն թա-  
փած ու սղղնձէ . եւ միւս սեսնն վրայ տհագ-  
նառեսիլ վիշտով մի : Եւ Սա Մարքոսին յան-  
կիւն մի , ուր մարտիք միզեն , կազմած էր  
կուտն , եւ Փռանկ մի խոզ զնէր ի շալակն .  
160 խոկ վասիչեցն սարրղն ծուել էր եւ քէլ զլուխն  
բացվել , բորբոսն կ'երեւէր . Եկել խոզն քիթն ,  
զականջն կրծել էր . եւ ամէնք զայբն ի վերայ  
պիտուն միզէին :

## ԱԱՀԱԹՈՑՈՒՆ

Եւ յաջակողին կայր Մահաթատուն մի ,  
բարձր քան զաշտարակ : Եւ աղաչեցաք որ  
հանին զմեզ ի զեր . եւ ելեալ ներքի խուսա-  
ռան՝ տեսաք յոլով տօլապին , եւ անիւք եր-  
կաթի , որ չուրջ ածէին սահատթն . եւ զըր-  
սեւանց շինած էր որովէս բոլորակ մի , որովէս  
եւ այլ տեղաց սահաթթն . եւ կայր երկաթի  
ձեռք մի ի հոթն , որ այն ծրին զրերն կու ցու-  
ցանէր մատամք , թէ քանի սահաթ է . եւ  
10 միւս ծոյրն լուսին : Եւ միջին առազարդան այլ  
հնարք արդիւստից զէ անիփ ածէր . նմանն լուսնի  
սամփի կապուտ լանվարդով , եւ թէ երկինքն  
լուսինն հնահարք , այն կապուտ բոլորակին  
միջի թոփն որ կէ ան կապուտ կէ ան զեզին այն-  
15 այէս երեւէր թէ նոր եւ նու նոր . եւ այնու հա-  
նանչէին ամէնեղեցան հինն եւ զեզրն : Եւ այլ  
վերն սովործ մի տհագին եւ զարհուրելին , որ

159 կ . որ է Մահաթատն , եւ . . . :

է սուրբն Մարկոս բատ աւելիան Եղեկիէլի  
մարգարէի և այլացն, որ առէ թէ Տեսի և  
ահա չոքք կենդանիք. զէմք միոյն արծւոց, 20  
որ է Յոհանէս աւելապանիշ. զէմք երկրոր-  
դին Եղի որ է Առեկաս, զէմք երրորդին  
մարգ, որ է Մատթէոս և զէմք չորրորդին  
տոփւծն՝ որ է Մարկոս, վասն այն յամենացն  
տեղիս և ի գրունո քաղաքին, նաև նուուց 25  
կլրանին զնա նկարեալ էր. զի այս զաւառ  
ամէն Մարկոս աւելապանիշ զիանին է : Եւ  
ունէր տոփւծն այս ի գիրկոս աւելապան և  
այնպէս խոժունալ Հայէր ի մարգիկ որպէս  
կենդանի. և աէր քաղաքին՝ տուքա՞ չոզած 30  
տոփւծն խոնարհ իրը թէ Համար և Հայի  
կու տար զանձուց եկեղեցուն, թէ չեմ վաս-  
նիր, չեմ կորուսեր կամ ի մարմնաւոր պէտա-  
փի չեմ ծախուի, և զրամի մի չեմ սպահել.  
և աւելազն այնպէս թուէր, թէ կամի պա- 35  
տառել զիս :

Եւ այլ ի զեր երեսի աւելաք վասյաէ չի-  
նեալ զիրնք թագաւորան. և ուկի վարախոսի  
ծեփած. և այնպէս թէսնիֆ էր արած որ երր  
զմարդ աւելութին՝ զգաւական ի վար կ'առ- 40  
նուին. և մէք զայն աւելութի՝ ներքուստ վա-  
սուորեցաք զիւսուուծ, զովիշն իմաստու-  
թեան մարդկան :

Չոր ի հանգիսի աւուրս ի զուրս երանեն.  
զի կայր երկու կողմանց երկու զուսն. և 45  
զուսնց մէջն մէծ մօյտան, լանցարուով յօրի-  
նած և առունեցօք զարդարած՝ նման երկնացին  
կապուտակին. և այն կապուտի մէջն սպի-  
տուկ մարմէրէ քանդակած յոյժ զեղեցիկ՝

ով պատռած ածինն , ունելով զմբածին իւր ի  
շիրկն . և կայր գլխուն վերեւն որիշ և զատ  
մէծ աստղ մի պայծառ քան զայլ : Եւ յոր-  
մամ զատիկ լինի կամ ձեռւնոր , այլ հանդիսի  
օր , ոյն աստղն թռչի ի գուրս և փոքր զան-  
55 կակ մի հարկանի և յինքեանց բացին  
գրունքն և ժողովի բազում անբախ ի տեսն :  
Եւ ելանէ յաջ գրանէն նախ Գարրիկ հրեշ-  
տակապեան ունելով մող ի ձեռն . և զկնի  
Արքան թագաւորն և ապա այլքն մի զհետ  
60 միոյ պար տանոլ . և անցանեն սուաջի Տի-  
րամօրն՝ խոնարհն և զթագս ի վար տոնուն  
և ընծայս ի ձեռս ունելով , իրր թէ մատու-  
ցանեն նորածին մանկան որպէս կենդանիք .  
և ապա մատանեն ընդ միւս զուռն ի ներս . և  
65 զուռնքն մուլիքն :

Եւ անտի ելաք ի զլուխն ուր առհաթին  
էր . տեսաք զանկանկ մի մեծ և երկու կող-  
մանց Երկու սեւ եթովպացի արագ , մեծ և  
զօրաւորք , մերկ և ամօթոյքն երեւեին ակ-  
70 հերեւ ամենայնի , ունելով երկու ձեռս մեծա-  
մեծ կոսին . և յորժամ սահաթի ժամին լի-  
նէր՝ հարկանէին կոսինով զզանկանկն , որպէս  
կենդանիք . մին՝ մին զիշաց և միւս՝ միւս :  
Զոր և զայս ամենայն անսեալ օրհնեցաք  
75 զհրաշաղործն Աստուած , որ այսպիսի է ամել  
որդոց մարդկան . որպէս և ինքն իսկ վկայէ  
իւր ամենասուրբ բերանով , թէ իմաստնո-  
ոյն են որդիք աշխարհիւս այսորիկ քան զոր-

դիս լուսոյ յաղգո իւրեանց . վասոք Առտու-  
ծոյ . ամէն :

80

Անտի դարձաք իւ տուն :

ՎԱՆՈՐԱՅԻ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՓ

Եւ այլ առուք ելեալ չըջեցաք ի մէջ քա-  
զաքին եւ տեսաք դարմանաշէն աներ ի մէջ  
խորս ծովու՝ յոյժ բարձր , չորս , հինգ , վեց  
տարվադայ եւ կամարակապ բարձրաբերձ . 85  
նոյնպէս կամուրջո անտես եւ անհնարին դործ  
տեսողացն :

Այլ եւ տեսաք վանքմի գեղեցիկ եւ խիստ  
վայելուչ դմոլէթաշէն կամարակապ . այլ եւ  
բազում վանորայք հարեղայից եւ կուսանաց 90  
եւ մեծամեծ եկեղեցիք զուտր մարմարիո-  
նեայ , ամէնն փառաւոր մի քան դմի վայե-  
լուչ . զի աչք հազար ոլիտի տմառղացն :

Եւ ասին թէ վանք մի կայ մեծ , որ հինգ  
հարիւր կոյս աղջիկ կայ ի նմա . եւ այն վանքին 95  
ընկենուն տղաք պոռնիկ կանայքն : Զի այս-  
ովիսի սահման կայ յաշխարհն Թուանկաց .  
ամէն քաղաք կայ եկեղեցի մի աղաստանից ,  
որպէս ի հինն ութ . զի թէ ոք մարդ սպա-  
նանէ կամ այլ ինչ եօթն մահացու մեղք : 100  
զործէ եւ փախչի յեկեղեցինն այն ազատի  
եւ այլ ոչ ոք իշխէ զնա հանել անտի , եւ եթէ  
եւ թաղաւորն զայցէ :

Եւ վանք մի այլ կոյ կուսից . որ ինչ բող  
կամ այրի կամ կոյս յղասցի , նա դիշերով 105  
բերեն եւ այն վանքն ձղեն . զի կայ պատու-

հան մի եւ վերեւն զանկակ մի . անդ զնեն  
զտղայն եւ զարեւն զանկակն . իսկոյն իմանան  
եւ զան առեւուն առանին զրիձն փութով եւ  
110 սեւցանեն կաթոմքը այծից եւ ոչխարացն ,  
մինչեւ զարգացի եւ ի չափ Հառակի հասցէ :  
Ապա մայրապետն կոչէ զամենայն կուսանս .  
կոչէ եւ զտղայն ի պոռնկութենէ ծնեալ ա-  
ռաջի իւր , թէ արու լինի եւ թէ էկ . եւ առէ  
115 ցնուս . Որդեակը իմ եւ զամերք , զիտէք զի  
մեք շեմք ձեր մայրք , այլ դուք այսպիսի  
ծնունդքէք : Եւ զամենայն մի բառ միոջէ ծա-  
նուցանէ նոցա . ապա քարոզէ նոցա զօրինո  
եւ զպատճերան Ասուուծոյ . այլ եւ ցուցանէ  
120 նոցա զճանապարհն Ասուուծոյ եւ զաշխար-  
հիս՝ զհողեւորն եւ զմարմաւոր : — Զի աշ-  
խարհն ֆունկի կոյս աղջկունք եւ կանոյք  
բուն վարդապետք են . Եւ չկայ մարդ մի որ  
կարգալ չզիտնոյ . նաեւ համալինին , կէմի-  
125 ձիքն , խաթըրձիք եւ հոգիւքն եւս : — Դաս-  
նայ եւ առէ զարձեալ .

Ով որդեակը , մինչեւ ցոյս ախմար եւ  
ազէս էիք . եւ արդ իմաստուն եւ կատարեալ  
էք . որ զիտէք զչարն եւ զբարին . զի մեք  
130 զասն Ասուուծոյ սիրուն պահեցաք զձեզ եւ  
սեւցար եւ որպէս մայր զամենայն չարշա-  
րանս ձեր յանձն առաք . այլ եւ զսուրք զիրո  
ուսուցաք ձեզ : Արդ այժմիկ առացէք մեզ  
զի՞նչէ կառմք ձեր . կամի՞ք ասու մնալ եւ ծա-

ուսյել Աստուծոյ մինչեւ ի մահ, թէ աշխարհս 125  
մտանէք եւ ամուսնանայք: Իսկ որք լցեալ են  
սուրբ հոգով՝ ասեն. Սուրբ մայր եւ հոգեւոր  
ծնօգ մեր, ոչ կամիմք ելանել աստի ի սուս  
եւ յանցաւոր յախտալի աշխարհս: Առէ մայր.  
Տեսէք եւ զգոյշ լերուք, զի Աստուծոյ ծառ- 140  
ույշելի դժուարին է որովէս եւ տեսանէքդ:  
Եւ նոքա տսեն. Մէք կամաւ եւ յօժարու-  
թեամբ յահձն առնումք զամենայն նեղու-  
թիւնս եւ զչարչարանս յուսալով յոզորմու-  
թիւնն Աստուծոյ եւ ի ձեր սուրբ ազօթքն թէ 145  
զմեղ անարժանս ընդունիցիք ի սուրբ վանս  
ձեր: Եւ մայրն տեսեալ զջերմեռանդ սէրն եւ  
զյօժարութիւնն կամաց եւ զիմափագ սրտից  
նոցա, յնտ բազում խրատից եւ վարդապե-  
տութեան կորէ զմազն եւ զզեցուցանէ սքեմ: 150  
Թէ էպ է, մնայ առ նոսս մինչեւ ի մահ ծա-  
ռոյելով Աստուծոյ. իսկ զարուսն առաքեն  
հարեղայից վանս. երթեալ անդ եւ անչափ  
ձգնին եւ կրթին ի վարս եւ ի կրօնս մինչեւ  
լինին հարեղայ առաքինի: Եւ որք ոչ կամին 155  
մնալ ի վանսն՝ ասեն թէ Սուրբ մայր, մեք  
ոչ կարեմք ժուժել վանացս. առոք մեղ հրա-  
ման ելանել աստի: Իսկ նոքա տրօք եւ պար-  
զեւօք հանեն ի դուրս եւ ամուսնացուցանեն  
կամ յայլ արվեստս տան: Եւ այսպիսի բարի 160  
եւ շահաւէտ խրատովն ապրեցուցանեն զբա-  
զում հոգիս անմեղ տղայոցն. եւ լինին պատ-

139 յաղթալի: — 141 դժւարին:

առու բազում բարեցց, զոր յայլ աշխարհ  
վասն առի և ամօթոյ ոչ թողուն ծնօղք յա-  
165 ռով զայ անմեղ տղայցց, այլ գեղօք և պէս-  
ոպէս չարիւք սպանանեն զծնեալո կամ չամ  
ծնանիի :

## ՄԱՍՆԱԿԱՐ ԽԵԶ ՊԱՏՄԱՆՔ ՔԱՂԱՔԻՆ

Պատմեմ ձեզ եւ այլ սքանչելիս վասն  
բազարին վեհեարիկու, որ յոյժ հիացումն  
170 առյ բազաց. բայց աղաչեմ զընթերցողոց՝  
չճանձրանալ : Եւ թէ որպէս հրաշիւք հիմնա-  
ցեալ եւ կառուցեալ է մեծամեծ զիմօք և  
յեռնանման քարօք ի վերայ ծովու. որպէս  
կամուրջ ի վերայ զետոց, եկեղեցիք, աներն  
175 եւ ամէն եւրուքն ծովու մէջ է . եւ բոլորն  
ջուր, նու եւ մուգոցնին ջուր է . եւ թէ կա-  
միս ուրեք կամ առ զբացիս զնալ, փէրէմով  
սպիտիս երթալ : Այլ եւ այս սքանչացնէ զահ-  
ողո, զի ծովու այս երկու անդամ երթոյ եւ  
180 դայ, յառելու եւ նուազի նման ԱԷՂովում  
զետոյն, որ ի ժամանակո Եսայիս մարդարէի .  
ուսպէս եւ սա յետնուց մինչեւ յառուռուն  
ականու աւելուց մարդարօյ մի եւ յառուռուն  
մինչ ի յերիկուն նուազի եւ թերանայ . եւ  
185 այնպէս սրբեթոց երթայ եւ զայ արագ որ-  
պէս զես ակներեւ ամենեցուն : Եւ այսու  
ովառնառուն ոչ ոք ի թողառուրաց կարաց տո-  
նուլ զբազարու եւ ոչ կարէ, զի միտպէս չէ .  
երբեմն ծով է եւ երբեմն աղսաղուուկ . զի

170 զընթերժողոց — 177 ուրէք: — 181 յեսայիս:

— 189 աւազաւազուիկ:

թէ նստով զան՝ մը խին եւ թէ ձիով՝ խեղիթին 190  
եւ ցամաքով անհնար է :

## ԶԻՆԱՐԱՆ

Այլ եւ ցուցին մեզ զթէ բախտանան, լայնա-  
նիստ եւ անառիկ պարսպով, որպէս դղեակ  
մի մեծ եւ շուրջանակի ջուր. եւ ասին թէ  
կայ ի ներս հինգհարիւր զատրղայ, որ ամէն 195  
զատրղայ կ'աժէ հինգհաղար, ութհազար զու-  
ռուչ կամ այլ աւելի. վասն զի չեն նման  
Սամզօլայ, ոչ մավանանուն : Եւ այնչափ մալ  
եւ խաղինա ունի, եարադ եւ զէն, պարութ  
եւ Փնտուխ, թօրեր եւ թֆաքնի, հարպաք եւ 200  
զրեհք եւ այլ զանաղան զէնք պատերազմի :  
Եւ հիացաք թէ ուստի՞ է այսչափ պատրաս-  
տութիւն. եւ ասին թէ այս ամէնքս Սա Մար-  
քոյին է. Եւ թէ այսօր պիտի զնան, հազր են :  
Եւ որչափ ամալ, ինդիզար, կէմիք եւ այլն 205  
ամէն Սա Մարքոյին է. եւ ասին թէ հէսար-  
սիդ մալ ունին, զի այլ այսովէս մարթամ եկե-  
զեցի չկայ արարածս : Թէպէտ Սան Պետրոս  
ունի մալ եւ խաղինա, աղա ի խարճն չառ  
կ'երթայ, եւ նա վէքիլնի չունի, որպէս սա : 210  
Ամէն աշխարհ, նաև քաղաքացիքն յոյժ  
սկերճ եւ հարուստ են. որ այն քաղաքն թէ ոք  
հինգհաղար, տասնհաղար զուռուչ ունենաց,  
կու արմենան թէ այն ոչ վիլ մարդն որպէս  
կ'ապրի : Եւ է հիանալի, զի վանատիկ խիստ 215  
սղութիւն է, մարդաշատ եւ սըխ չէնիք. եւ  
ծովին առել է զրոլորն, ցամաք չկայ. հացն

ուսկաւ եւ ջուրն ահճրեւի, ահերն ամէն վիրաց, եւ գնով. միսն եփելու քասն զրտմ, 220 նոյնողէս հաւն: Եւ բնաւ ջուր չեն ըմպել, այլ զինի. Եւ քաղցր ջուրն այլ տեղաց կէմովք բերեն:

## ՎԵՇԱԿԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Եւ ասին թէ Ի՞ն համալ կայ, ի՞ն վէրէմա, ի՞ն քօրուու, ի՞ն բոզ, ԺԴԻՆ կարզաւոր, 225 Յեկ մեծ Եկեղեցիք մարմարէ՝ արանց եւ կանանց, սրբուալովք: Պաղչանի եւ դարպաննի, այլ եւ բարում օթեւանք հիւրոց, հիւանդաց, հաղմանոց, որ վասն սիրոյն Քրիստոսի դեղ տան տկարացն: Եւ զայս ոչ 230 Եթէ ի ոստիկ մարզկաց լուսք կամ ոչինչ, այլ ի անուանի եւ տօլվաթաւոր տեղացոցն: Եւ չէ զարմանք, զի սահմանք է Ֆռանկաց ամենայն ինչ ի տէֆդարն անցնել. Եւ ոչ թէ միայն զմեծ բան, այլ եւ զոշինչն: Այլ Եւ ասին թէ օրն ԲՌ զուռուշի սավրդ կու ծախզի 235 Եւ ԲՌի ձուկն, նոյնողէս եւ զայլոն իմացցին:

## ԿՈՒՍԱՍՏԱՆ

Եւ այնողէս հարուստ բոզեր կան, որ մէկ րող մի շինել է վանք մի Երկու միլ հեռի ի քաղաքէն, զուոր մերմէրէ ի մէջ ծովուն, այս 240 պիսի կերպիւ. զի զզջացեալ նա ի մեղաց եւ ի չար զործոց, շինեաց զվանս եւ ժողովեաց զկոյս աղջկունս եւ նոքօք մտաւ յինքն՝ ծա-

ուսցել Առառուծոյ: Եւ է վանքն մինչեւ ցոյս  
օր, զոր մեք աշօք տեսաք: Եւ ասին թէ ԾՌ  
Փլորի է զնացել ի շինուածն եւ ԾՌ ալ թողել<sup>245</sup>  
է վանիցն վախրֆ: զի որչափ կոյսք լինին,  
ահտից ուտեն եւ բժպեն:

Եւ ոյլ բազում բանս եւ հրաշալի իրս  
տեսաք եւ շինուածս զարմանալիս եւ ահտեսս  
տեսաք, զորս ոչ կարեմ զրել զամենայն մի<sup>250</sup>  
ըստ միոջէ եւ ծանուցանել ձեզ, սիրելի եղ-  
բարք իմ, զի բազմութիւն խօսից տաղակու-  
թիւն տայ լսելեաց եւ յաճախումն խօսիցն  
ձանձրացուցանեն զընթերցողս եւ քուն ածեն  
ունկնդրողացն:<sup>255</sup>

Բայց միլ մի հեռի ի քաղաքէն կոյք վանք  
մը ՍՈՒՐԲ ԳԵՂԻՐԴ անուն, զոր ՀԱՅՈՑ ՎԱՆԵՔ  
կոչեն<sup>1</sup>, խիստ զարմանալի եւ պատվական.  
անդք թաղեն զշայք:

ԳՈՐԾԱՐԱՆ ԱԳԱԿԵՊԵՆԱՅ և ՄՈՒԱՆ

Կայր քաղաք մի երկու միլ հեռու՝ ՄՕ-<sup>260</sup>  
ՄԱՆ անուն, ուստի ելանեն ազգի ազգի աղ-  
նիւ ապակէ անօթք, Փինձանք, սուլահիք,  
զանազան դաւաթք եւ ոյլ յոլով բանեք, որ-  
պէս ի Ղալաթիայ կու ծախմիւ. այն ամէնն

247 ըմոլէն: — 254 զընթերցողս: — 255 յունկն-  
դրողացն:

<sup>1</sup> Վանքը Բենեղիկանց կը վերաբերէր. ԺԴ-  
գարէն սկսեալ Հան կը թաղէին Հայերը իրենց ժե-  
ռակալները. Հմատ. Զ. Ղ. Ալիշան՝ Հայ-Ղենեամ, էջ  
152—153, 162—163:

265 անոր բանեն է, զոր եւ ամէն երկիր կու առա-  
նին, նուե ի Էէհ, սամփի պիլօր։ Եւ ասին թէ  
ի՛մ այր եւ կին եւ կոյս աղջկունք են, որ  
զոյս բանին։ այլ եւ զհիլուն պօնչուխնին,  
առա մէրջան, առա մարդարիտ։ զոր վա-  
270 ճառաւկանքն անզեալ են եւ պնազը գործոց  
նոցա։

## ԽԱՆՈՒԹԻՒՆ

Եւ այնպէս մարթամ խանութնիք կան  
մէնէտիք, որ թէ եմ, ժիշտ զուռուչի էսպասպ  
գնես, անզի չերեւնալ։ Եւ այնպէս հարուստ  
275 վաճառականք կան, որ մէկ մարդն մէկ կէ-  
մուն պութուն բոզակն կարէ զնել։ որովէս եւ  
մէր հետ սօփ եկել էր Գճ քեռ, իրեք օրն  
ծախսեց, հախլաշմիշ եղաւ, կէսն գրամ, կէսն  
բակեռլիթ առաւ։ զոր յայլ աշխարհ մին առ-  
280 բին չկարեր ծախել, անդ իրեք օրն ծախսեց։  
Այլ եւ բոլոր քաղաքն ամէն որպիշտուսորք  
են, որ ամէն աշխարհ ինչ բան դժար կամ  
թուզայ ուզենան, անդ գտանեն կամ չինել  
տան։ Եւ են մարդիք աշխարհին այն յոյժ-  
285 չնորհալիք, որ այլ աշխարհ չզատենին։ միայն  
հազի չկարեն տալ։ բայց այլ ամէն հունար  
կ'ելնէ ի ձեռաց նոցա։ Կ՛մ խանութ կայ։ Եւ  
ամէնն (ունին) Աստուածամօր պատկեր եւ  
կանթեղ։ զի ազգին այն յոյժ պատվին զլա-  
290 տուածածինն։

## ՊԱՏԿԵՐ Ա. ԱՍՏՈՒԱՆԱՆՑՆԵՐԻ

Եւ կայր Սա Մարքոսին ձախ դիհն պատկեր մի սքանչելագործ որ հանապազ երթ եւ եկք որ անցանէին՝ խոնարհեալ երկիր ծունը կրկնէին եւ զգտակնին ի վեր առնուին։ Եւ ասին մեզ, թէ սքանչելագործ 295 է, զի թէ ոք զնայ ծովով կամ ցամաքով, եւ յամէ, եւ ընտանիքն չի դիտենան՝ մեռած է թէ կենդանի, այն պատկերին առջեւն մոմ վառեն Սրբուհոյն. եթէ անցնի եւ չի ջանի, դիտացիր որ մեռած է, եւ թէ չի չի ջանի, թէ-<sup>300</sup> պէտ սաստիկ հողմ լինի, կենդանի է. վա՛ռք Աստուծոյ։

## ԲԱՅԹԱԼ

Եւ կայ մօյտան մի մեծ՝ Բայթալ կոչի, է ի մէջ քաղքին, ուր ազնիւ եւ մեծազին չունանին ծախովի, սկառլաթ, Կ. չլայ, Հ. չլա, <sup>305</sup> Ճ. չլա, քարզիայ, Փալանտուչ, եւ այլն. եւ ասին թէ օրն հազար րեռ չուխի կու կապվի։

Եւ կայր այս Բայթալն զարմանալի կամուրջ յոյժ բարձր, իրեւ զաշտարակ, իր Եալբնկղկօղն Խոյսարու, այնպէս որ մեծ կէ-<sup>310</sup> մով ելքէնիքովն կ'անցնին. բայց վերեւն փայտէ քօրրու կայ, զայն վերցնեն, որ տիրաքին ծայրն չի դիպի։

Եւ կայր տասներկու համալ, որ տարին տասներկու ամիս ամէն ի ժիր միշտ քեսայիւք <sup>315</sup> կարմիր ոսկի սաֆի կու կրեն տառապիսանէն։ Եւ տեսաք խանութ մի ձկան ակռայ, երկու մարզապօյ երկայն եւ հաստ։

## ՎԱՐԱՄԱՍՆԵՐ

Այլ եւ կոյր զնամն մի մեծ, ուր զվա-  
310 սակարսն արքելութին եւ զմահապարտն ի  
զատրզան ձգէին, որովէս եւ ի Ստամագոլ։ Այլ  
եւ կոյր փոքր զատրզոյ մի, որ եւ անդր ա-  
մէն օր քուրակ քաշել ուսուցանէին, մերկ եւ  
չողախ. եւ ի չուսանեին այնովէս հարկանէին  
315 ի վերաց մերկ մարքնացն, որ արբենն հռովր-  
եւ այնովէս ուսեալ տային ի զատրզան պա-  
սերազմոզաց, զի զագէտան ոչ սունութին։ Եւ  
կոյր ի զատրզանին նոցա բազում Տաճիկը,  
ենկիշմարիք, սրահիք, զայիմիք եւ այլք, որ  
320 զմուրոքին կեսած եւ այլոցն ածիլած, վայ-  
զան զագած էր։ Եւ նոցա վէրկմայքն ուրիշ  
ցեղ էր. զի օճու նման կու սոզոյր եւ թոշէր  
տրագ, զի տակն եւ յառաջքն յետքն ոսքի շա-  
լիկ էր երկայն. եւ այլ տեղ որ չորս կամ վեց  
325 քուրաքչիք կու քաշեն, նոցա երկու միայն եւ  
այլոցն մի մի. եւ զայն կանոնուն քարչեն եւ ոչ  
հստած։ Ստամագոլոյ ովէս։ Եւ այն վէրկման որ  
երկու մարդ է, մեծ է. եւ ի միջին սեզանա-  
տեղ երկու հոգոյ կամ իրեք. եւ վերեւն ծած-  
330 կոյթ աղեիք չուխով կամ աթլազով, ունելով  
չորս փոքր վէհանկայք չորս կոզմանց, նման  
լէ հու քարքթայից։ Եւ անդ նստեալ հետ եւ-  
րանեռուն եւ սիրելեացն կամ հետ նիկարնուն  
եւ զեղեցիկ կանանց եւ խորօսիկ կոյս աղջ-  
335 կանց՝ ուսեն, բժագեն զանուշ զինեին եւ

325 յարիւն։ — 331 զուզէծ։ — 338 ուզայնառեց։

գուարձանան . Եւ որչափ կամիս շուր ածեն ,  
մին յառաջ եւ մին յետուստ կանգուն , այն-  
ովէս վարեն , որ ելքենով կէմիք այնպէս չկա-  
րեն վազել . Եւ ներսն նստեալ դու զամէնն  
տեսանես եւ զքեզ ոչ ոք . Հետ ում որ կամիս 350  
սափայ արա :

## ՔԱՂԱՔԱԿԱՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԻ Բ

Եւ ասին մեղ , թէ տարի մի յառաջ քան  
զգալուսն մեր Վէնէտիքնին զԵզուիդնին ար-  
տաքսեալ վարեցին ի քաղաքէն վասն բազում  
պատճառաց . զի են կարգաւորքն այն խոռովհ-  
ցուցիչք եւ չփոթողք : Զոր նոքա բարկու- 5  
թեամբ դնացին առ Փափին դանդատ . Եւ նա  
զրեց Վէնէտիկցոցն որ ընդունին զնոսա եւ  
զեկեղեցիսն տան ի ձեռս նոցա : Իսկ նոքա  
չար եւ լիբրք , ովրոի եւ ովիզմ մարդիկ են . զի  
ծովեղերացիք եւ եալուի մարդիքն ընական 10  
սոսպր եւ անհնազանգ են . ընդդէմ դարձան  
Փափին : Յետ բազում զրուցաց եւ թոթոց՝  
զրկեց իրիցնուն ամէնին , որ քահանայագոր-  
ծութիւն չառնեն , ոչ կարդ , ոչ եօթն խոր-  
հուրդ եկեղեցոյ կատարեն : Եւ նոքա Երկեան 15  
ի բահազրահացն եւ գտախեան . Եւ այլ ովէ-  
զիրկան կամ մարդ չիշխէր մանել Վէնէտիք .  
ոչ կէմի գոյր :

Յայնժամ իշխանն քաղաքին յոյժ բարկա-  
ցեալ սրամտութեամբ հբամայեաց հեծել ժու- 20  
զովել եւ Աս Մարքոյին մօյտանն արծթէ խա-

զուխոնի զարկին եւ սոսկի պընծըլով հիւսեցին  
իբր զչաթանն եւ մէջն սոսկի արծաթ լցին եւ  
փողոցնին փող հնչեցուցեալ եւ տալալնին  
25 կանչէին թէ ով գայ՝ լու հախ, այլ եւ պար-  
պեւս տամ։ Եւ ոյսպէս ժողովեցան ազգ եւ  
ազինք բազում յոյժ։

Զայն լուեալ Փափին, եւ նա եւս հրա-  
մայեաց զօրաժողով լինել. եւ իբրեւ ետև  
30 թէ վէնէտիկուն բազում է եւ առաւել,  
զրեաց զիր առ թագաւորսն քրիստոնէից եւ  
առ իշխանս եւ մեծամեծս, այլ եւս Ալամանաց  
կայորն, զալ հասանել յօդնութիւն (ընդդէմ)  
հապարտացեալ զոտողին, եւ առ հասարակ ա-  
35 մենեքնան առաքէին Փափին օգնութիւն, հո-  
գարք հազարաց եւ բիւրք բիւրուց։ Զոր իմա-  
ցեալ իշխանն տուքս՝ երկեաւ, զի գիտէր որ  
չկարէր դէմ կալ հզօր թագաւորաց։ ասկա  
շարն վաս խորհուրդ արարեալ անաստուածա-  
40 բար ընդդէմ օրինաց առաքեաց առ խոնթքարն  
Տաճկաց եւ ասէ թէ Յարեան ի վերայ իմ  
ամմենոյն թագաւորք եւ իշխանք եւ չիք ինձ  
այլ հնար, բայց թէ քակեմ ես զուխոնն եւ  
զդաշինս իմ որ ընդ նոսա, եւ ընդ ձեզ արա-  
45 բից ուխտ եւ սէր։ արդ աղաչեմ զքեղ առա-  
քեա ինձ այժմ փութով Ճ՛ի հոգի։ Եւ ես մա-  
շեցից զնոսա ի սուր, եւ զերկիր նոցա ի  
ձեռս ձեր մատնելով մատնեցից։ Իբրեւ զես-

22 հիւսեցին։ — 36 փիւրք փիւրուց։ — 39 ահ-  
յաստուածաբար ընդդէմ։ — 48 դէսոդանքն։

սպանքն հասին ի Ստամբոլ եւ զգիրս տվին ,  
խօնթքէրն , վէզիրնին եւ ամենայն իշխանքն 50  
մեծամեծօք հանդերձ ցնծացեալ բերկրեցան  
եւ ձայն խնդութեան եւ ուրախութան տային .  
եւ աւետիս տային ասելով , թէ Օրս այս մեծ  
է եւ երեւելի , զի ահա մատնեաց Աստուած  
զքրիստոնեայս ի ձեռս մեր . կատարեցաւ 55  
բանն Մէհմէտի , զի ահա առնումք զխզրւ ալ-  
ման . եւ խոյս տվեալ միմիանց խրախոյս  
բարձին եւ զրեցին հրովարտակ ի Պօնայու  
ովէկլէրպէկին եւ ի Պէլլըզատ , ի Սիլիսղըց  
եւ ամենայն Ռւուումէլի , Պուլլարք եւ ծովե- 60  
զերայքն , Մէլէնիկ եւ այլ տեղիս , այլ եւ  
յայնկոյս ի Մաղրաոլ , ի Մորը , Խատօսն մեծ  
եւ ի Կիպրոս եւ որ չուրջ եւ հուալ մերձա-  
կայք եւ սահմանակիցք էին Ֆուանկացն , զի  
փոյթ ընդ փոյթըն ժամանեալ հացեն ի Վէ- 65  
նէտիկ , աւելի քան զերկոտասան բիւր . այլ եւ  
սուաքեաց նամակ տուքին , թէ Ահա սուաքեցի  
քեզ օգնական երկոտասան բիւր՝ քո զրա-  
մով այժմ վաղվաղակի . եւ ևս զկնի զամ  
ձն զօրօք իմով , արքունի զանձովս իմով . 70  
քանդի կամէին տիրել Փուանկաց աշխարհին :  
Բայց Աստուած ոչ յաջողեաց , այլ Աստուած  
ցրուեաց զխորհուրդս ամբարտաւանից եւ  
հեթանոսաց : Քանդի լուաւ թագաւորն Ապա-  
նիու եւ թագաւորն Ֆրանցիու եւ այլ մեծա- 75  
մեծ իշխանք , թէ յարեաւ ի վրայ քրիստո-

նէից եօթնազլիսեան վիշտավն եւ վէնէտիք որ  
է բանալի եւ մուտ ֆուանկաց երկրին . եւ թէ  
սպատամբեցաւ եւ տուքն . ի խոր խոցեցան .  
80 եւ փումբով հրեշտակ առաքեցին առ Փափին ,  
մեղադրելով նմա թէ այս ինչ բան եղիւ , որ  
մեծ աղմուկ եւ խոռվութիւն եկն աշխարհո  
մեր . կամմիք զմեղ մասնել ի ձեռս թշնա-  
մեաց . եւ թէ ոչ հաշտիս ընդ վէնէտիք , կո-  
85 բեաւ թաղաւորութիւնն մեր եւ եղեւ բաժին  
անօրինաց :

Իսկ Փափին լուեալ զայս լուրս րօթալի ,  
անկաւ ի մեծ սուզ , որպէս հովիւ հոգեւոր .  
զզացաւ իրրեւ փոշէման եղեալ արածին եւ  
90 պատերազմին . եւ զրեաց առ նոստ թէ Որ-  
պէս կամմիք այնպէս արարէք , միայն թափե-  
ցէք զերկիրս ի ձեռաց այլազգեաց : Ապա  
Ալամանաց մեծ իշխանն որ սահմանակից էր  
եւ սիրելի վէնէտիքու տուքին , այլ իշխանոք ,  
95 որ բազում աղերսանոք եւ ազաշանոք հազիւ  
կարացին համոզել եւ զարձուցանել ի հաշ-  
տութիւն . եւ առեալ տարսն առ Փափին որ  
խռնարհեալ եղագ զաջն . եւ նա օրհնեաց  
զնա եւ զքաղաքն . եւ քահանացից հրաման  
100 ետ զնալ : Եւ եղեւ ուրախութիւն մեծ եւ խո-  
զաղութիւն աշխարհն ֆուանկաց : Իսկ զօրքն  
Տաճկաց որ արագընթաց վաղէին իրը ի հար-  
սանիս , իրրեւ լուան զհաշտութիւն՝ ամօթա-  
լից յետո դարձան : Փառք Աստուծոյ :

Զի վանատիք այնպէս պերճ եւ մալով 105  
է, որ մէկ օրն մալի ուժով կարող է Շի-  
հոգի զնել և Շ խառրզայ ծովն հանել. ամէն  
զատրզա ԲՇ ճանկչի զնել արազեասա-  
խովն. և ինքն յումեքէ ոչ երկնչի, զի չուրջ  
զբաղաքաւ ծով է. միայն Ալամանու աշխար- 110  
հէն սակաւ մի ահ ունի, զի մօտ է, լեռներն  
կ'երեւնայ: Եւ ասին թէ Սա Մարքոյին ժա-  
մուն խազնին եւ ձէնովու քաղքցոց նման  
փարթամ եւ հարուստ չկայ այլ տեղ: Քանզի  
հզօր թաղաւորն Սպանիու բազում անգամ 115  
փոխ առնու ձէնովուն դանձ:

## 7. Ի ՏԵՐՈՒԹՅԱՆ ՓԱՓԻՆ

Եւ իրբեւ մերձեցան աւուրք զնալոյ ի  
շոռմ, ո՞հ եւ վայ ինձ, զի ազգմամբ չարին  
եւ նախանձու նենկաժոտ սուտ եղրարց կամ  
թէ բանարկու վատ մարդկանց՝ խոռովու-  
թիւն եւ շփոթ անկաւ մէջ մեր. եւ կովեալ 5  
Հետ Զաքարիայ վարդապետի՝ որոշեցաք ի  
միմիանց: Նա զնաց ի շոռմ եւ ևս մնացի Վէ-  
նէտիկ այլ եւս տասն օր: Եւ գտեալ նաւակ  
մի պատրաստական՝ մտի ի նա եւ վեց օրն  
հասայ ի յԱՆՔՈՒԽԵԱՑ զեղեցիկ քազաք. որ 10  
եւ սա սկէլէ եւ նաւահանգիստ էր: Եւ այս  
քազաքո շէն մեծ եւ բարելի էր եւ մրգաշատ,  
ի վերոյ բարձրաւանդակ անդոջ: Մինչեւ

105 վանատիք:

2 առաջամբ:

աստ էր տուքային վէլիաթն, եւ աստի սկսան  
 15 Փափիին քաղաքն. եւ այլ ոչ երեւէր Մար-  
 կոսի նշան, այլ Պետրոսի բանալիքն եւ Փա-  
 փին թաղն կոփած ի վերայ մէրմէրի, ամէն  
 տեղ եւ քաղաքին դրունսն եւ սարայնին։ Եւ  
 ասին թէ Անքունիա թաղաւորն է շինել զքա-  
 20 դաքս յիւր անունն։ Եւ ի մէջ ծովուն էր  
 բարձր լեառն մի եւ մեծ եկեղեցի մի էր ի  
 զլուխն զմոլէթայարկ. անդ է, ասին, զերեզ-  
 ման շինօղին. բայց մեք չելաք ի վերն։ Եւ  
 կայր մեղ անդ եկեղեցի մի քարէ եւ ըրիթալ,  
 25 աօշակ եւ անկողին։ Կացի անդ երեք օր վասն  
 բարեշունչ օգոյն եւ քաղցր հաւային։

Եւ անտի ելեալ՝ կէս օրն հասաք ի ՄԱ-  
 ՏՈՆԱՅՑ Տէ ԼՕՐԻԹ, որ է ոպատկեր Աստուա-  
 ծամօրն, որ ի ժամ փոխման խնդրեաց Յո-  
 30 հանէս աւետարանիչն՝ տվեալ տախտակ. զոր  
 սուրբ կոյսն առեալ եղ ի վերայ երեսացն. եւ  
 օրհնութեամբ շնորհացն տպաւորեցաւ ի նա  
 սուրբ դէմքն, զոր յետ փոխմանն բազում  
 սքանչելիս առնէր յԵրուսաղէմ եւ ի նազա-  
 35 բեթ. զոր յետ բազում ամաց կամօք եւ հրա-  
 մանաւն Աստուծոյ բարձեալ եղեւ ի հրեշտա-  
 կաց տաճարն եւ պատկերն եւ բերեալ աստ ի  
 ոյս խասապայս, որ եւ աստ բազում եւ մեծ  
 սքանչելիս առնէ։ Եւ զի յայտնի եւ ճշմարիտ  
 40 է բանն. զի պատկերն եւ տունն խիստ հին  
 եւ սեւացել են. եւ թագաւորք բազում ան-

գամ՝ դողացեալ տարել են յաշխարհն իւրեանց, բայց նա ինքն ելեալ դայր ի տեղս այս. զի աստ հաճեցաւ բնակիլ. եւ ոչ հպած եւ ոչ աւքրած էր զնա բնաւ՝ զհին եարուն, այլ առեալ ի մէջ զայն՝ շուրջանակի մեծ եկեղեցի են շինել մեծածախ, մեծահոչակ եւ փառաւոր, նման Այասօֆին: Եւ կայր ինքն ձ՛Յ քահանայ, թող զայլ սպասաւորս: Եւ այնովէս մեծ ուխտատեղ է, որ ամէն օր հինգ, վեց-<sup>50</sup> հազար հոգի կու զան ուխտ. Եւ ցերեկի չկարես մտանել ի նա վասն բազմութեան անրոխին: Եւ կայր զոնապան մի, որ գիտէր տաճկի լեզու. զոր տեսեալ զմեղ՝ երեկ առ մեղ եւ առէ. Ով հէմշէրտիք, ևս զմեղ զիշե-<sup>55</sup> րով մուծանեմ, մի հոգայք, զի այժմ խալապայ է եւ չէ հնար մտանել: Եւ մեք խնդացեալ՝ հարցաք թէ զու ո՞վ ես կամ ուստի. եւ նա առէ. Ես Ղայսարու եմ, սուննի տաճիկ եւ շավուշ էի. Եւ անկեալ զերի՝ ծանեայ <sup>60</sup> զճշմարիսն Աստուած եւ մկրտեալ եղէ քրիստոնեայ. Եւ այս քառասուն ամ է, որ սուրբ տաճարիս խզմէթ կ'անեմ եւ առել կ'ածեմ. ունիմ երեք որդի քահանայ: Եւ իրրեւ երեկոյ եղեւ՝ առեալ զմեղ մեծաւ երկիւզիւ եմոյն <sup>65</sup> ի մատուռն. Եւ բացեալ զվարագոյրն տեսի զամէնօրհնեալ վայտն՝ սեւ եւ հին, ի մէջ արծթի զրած. Եւ ունէր աննման թագ մի ի զլուխն՝ անզին ակամը բնողելուզած եւ մար-

70 պըրառի շարեալ . և կայր առջեւն տասն կան-  
թեղ կախեալ մեծամեծք և մարդաշատիք՝  
Սպանիու , Ֆունցու և այլ թագաւորաց  
զրկած . զի տարեն մի ճանապարհէ զան տո-  
հաւ յութաւ վասն բազում սքանչելեացն : Զի  
75 մոռանկաց աշխարհն և լեւ , ամէն Եկեղեցի  
սահմանը է , զինչ սրբոց անուն որ լինի և  
զինչ սքանչելիք որ արարեալ է , զամէնն կու-  
նախչեն տախտակաց զրայ . բայց սորու հա-  
զար , երկուհազար տախտակ կայր զրան :

80 զորս ի բազմաց մինն ասացից : Զոր մի ունի  
Հեռաստանէ ախտաժէտ գոլով՝ լուսւ զմեծ  
սքանչելիք սուրբ պատկերիս . զայր ուն նա-  
մեծաւ յութավ . և հասեալ ի զաւսու մի տի-  
85 հաստ հերետիկուաց՝ կալան զնու և տու-  
րան ի մեծն : Եւ նա եհարց թէ Ո՞ւր երթառ-  
ուսէ ցհաւ . ի Մատոնա (աէ) լ(օրէթ) : Նոքան  
տանն այսպահելով . Եւ զի՞նչ ընծայ տանիս  
նամա , որպէս օրէն է : Եւ նա ասէ . Զիս Էւ  
զիմ սիրու : Նոքան տանն . Ամենացն ոք որ բե-  
90 ծայ տանի , ի ձեռս ունի Էւ զու ոչ . վասն այն  
պարս է զի և զու ի ձեռս ունիցիս զպար-  
զեւս : Եւ պեղծքն մեղքեալ զորովայնն հանին  
զսիրուն և հոտուն ի ձեռքն և տանն . Տար  
այսպէս : Բայ նա զօրութեամբն Աստուծոյ Էւ  
95 շնորհօք պատկերին զնոյր վազէր արտզրի-  
թաց իննդութեամբ մինչեւ ի սուրբն Լօրէթ .  
և անկեալ սուսպի սուրբ պատկերին ասէր

լոլով . Առ յինէն զրիծայս իմ զսիրտս , զի այլ  
ոչինչ ունիմ . Եւ թժկեա զիս , ով սուրբ  
պատկեր սքանչելագործ : Եւ խակոյն հաստա- 100  
տեցու սիրտն ի տեղի իւր ողջացեալ : Փառք  
Աստուծոյ :

Զոր Եւ մեք զետհամած խոհարհեալ  
Երկրագագութիւն մատուցաք Եւ մեզաց թո-  
ղութիւն խնդրեցաք մեզ Եւ մեր ննջեցելոց : 105

Եւ կացաք անդ Երեք օր . զի Երեք օր  
հաց Եւ ջուր տային Հայոց ուխտաւորացն Եւ  
իւրեանց ազգին մէկ օր . Եւ Հայոց հու ու  
սագ կու տային . Եւ Ֆուանկաց միս լոկ  
միայն :

Եւ վէճնէտիկու մինչ ի մեծն Հռոմ ԺԵ .  
իթեանք է . ամէնն չէն Եւ պարսպաւոր ի զե-  
րայ բարձր լերանց , ծովու եզերօքն . Եւ ա-  
մէն քազաք վասն սիրոյն Քրիստոսի Եւ Հայոց  
եկեղեցի , հոգէտուն քարէ շինած էր Եւ Երեք 115  
օր կերակուր կ'ելնէր : Ապա զի Հայք այժմ  
ստեաւ գնան , տարին մի , Երկու կամ Երեք ,  
չորս , վասն որոց զաֆթ արին Ֆուանկին զա-  
մենն Եւ տիրապետեցին . Եւ ինքեանք կենան  
այն աներն :

Բայց Փափին Երկրին Ֆուանկին յայժ աս-  
տուածավախ Եւ Երկիւզածք Են , Հիւրառէր ,  
ոզորմած , Հեզ Եւ խոհարհ . Եւս առաւել յոր-  
ժամ զհոյ տեսանեն՝ ցնծան Եւ ինըան , վա-  
րին Եւ վաղաքչին Եւ մեծ սէր Եւ զութ ցու- 125  
ցանեն : Ապա մեր ազգն յայժ վաս Եւ ան-  
միաբան է , սէր չունի Եւ շատացրթիկ , Եւ

ուր որ երթայ պիտի մէկ վաստ անուն մի  
հանէ . և այնպէս չար են , որ երկու հոգի  
130 մէկ օր չկերեն կենալ հիտրաց բնաւ , ոչ  
միայն աշխարհականք , այլ եւ կարգաւորք . եւ  
յորժամ կռվին՝ ոչ միայն մի բան կամ երկու  
ասեն եւ լուն , այլ զօրն ի բուն . այլ եւ  
տղայութեան գործն երեսն տան . և այնողէս  
135 նախատինք եւ զաղիր խօսք եւ զրուցք եւ յի-  
շոնց տան , որ լսողքն դարշին . եւ զայն ոչ  
թէ հայի լեզուաւ , որ այլազդ չիմանայ կամ  
չհասկանայ , այլ այնպէս լեզուաւ հայհոյեն ,  
որ ամէն ազդ հասկանայ : Եւ այտ կռվովն եւ  
140 ատելութեամբն ցիր ու ցան են եղել . եւ ա-  
մէն ազդի աչաց ելել են <sup>1</sup> :

Նմանապէս եւ այս աշխարհս ամէն քա-  
ռաք կերակուր , ըմպելին , տօշակ , կօղան եւ  
այլն վեր են կալել , բայց միայն տներն եւ  
145 ժամին կայ գեռ եւս <sup>2</sup> : Եւ ասին մեղ թէ վահա-  
տիկու շրիթարն տարին երկու երեք ֆուցի  
զինի կռւ դար . եւ ամէն շարաթ դային էր  
եղել հայն , միան մինչեւ աղն եւ քացախն ,  
հաեւ դրամ դային արած . իսկ Հայքն ուտէին  
150 եւ յոլով զինի ըմպէին , արբենային , զի ու-  
ժով զինի է այն երկրին՝ եօթն տարին , ինն ,

## 150 յորբենային :

<sup>1</sup> Դժբախտարար այտօքուան համար ալ կ'արժէ  
հայ ուղեղը արդար դանզաւը :

<sup>2</sup> Խօսքը Հայոց եկեղեցիներու եւ Հոգետուներու  
ժամին է :

առան եւ աւելիք . կովելին , ծէծվէլին եւ մէկ-  
դմէկէ սպանանէին . այլ եւ այլ չարիս դոր-  
ծէին . եւ մտեալ ի ներս այլ չկոմէին անտի  
գնալ . մինչեւ ևասախչիքն ի դուրս ձգէին 155  
զարպով . եւ այսպէս որպայ եւ մէլէմէթ  
ևղեալ օտար ազգաց մէջն , մէկզմէկէ ատէին  
եւ չուզէին : Զոմանս հետ բողու , հետ մահ-  
չու բոնէին . զոմանս հետ այլ չարութեան .  
այլքն կամաւ . աղթարմա եղան , ոմանք հա- 160  
բամի , այլքն այլք իմն :

Որպէս ի մեր ժամանակս չորս հայ եւ  
կին մի Եղարէլ եւ Հերովդիաղայ՝ Ֆէր-  
հատօլտուրան Ռւոֆայեցի միաբանեալ ուխտ  
զնային սուրբ Յակոբ . եւ ամէն մէկէ սուրբ 165  
Աստուածածնի պատկերն կախեցին վիզն ի  
վայր , զի ազգն այն յոյժ սիրեն եւ պատվին  
զպատկերն Աստուածամօրն , վասն որոյ այնով  
շրջին եւ մուրան ; զի աւելի առնուցուն : Եւ  
յերթալն հանդիպեցան ձիւաւրի մի . եւ ավին 170  
զպատկերն համբուրել . իսկ նա եղեալ սրտին  
համբուրէր . եւ տեսեալ զի Հայք են , և հան  
զմեծ քէսան , ետ նոցա զուռուշ մի . եւ էր  
քէսան լի : Զայն տեսին Հայքն եւ մտաւ ի  
նոսա սատանան , իսկ չար կինն առաւել եղեւ 175  
պատճառ չարի նոցա , որպէս եւ ա'յն Ալա-  
մայ . եւ հասեալ յետեւանց առին զնա ի ձիւն  
վար . եւ սակաւ մի մեկուսացեալ ի ճանա-  
պարհէն՝ չախուով մորթեցին զանմեղ բարե-

160 յաղթարմա : — 163 յԵղարէլ : — 169 յաւելի :

180 բարն իւրեանց . որոքէս կային զԱրէլ . եւ թու-  
ղեալ զնա կիսամահ՝ զձին ի բաց թողին ար-  
տօրնօք եւ ինքեանք փախան : Իսկ նա դառն  
խոկայր . եւ անցաւորքն ճանապարհին լուսն  
զձայնն . եւ որոնեալ զտին զնա մինչդեռ  
185 շունչն ի բերանն էր . եւ հարցին թէ ո՞վ ա-  
րար զայն . եւ նա յիշարաթով հասկացնէր եւ  
տօլպանոտ ցուցաննէր . զոր իմացեալ եւ ի խրն-  
դիր ելեալ զտին զնոսաւ եւ բերին առ զա-  
տաւորն քաղաքին . զի այն աշխարհն այլ  
190 մարդ տօլպանոտ չի փաթթեր , միայն Հայք :  
Եւ իրեւ զոքանճան տվին , խրէր էկան . զոր  
չորսն ալ չանկալն զարկին . իսկ զոլեզծ կինն  
երեք անդամ անիւն բոլորեցին եւ զձեռս յետո  
կապեալ պարանօք ի վեր քարչեցին , որ ար-  
195 մուկնին շիտկաւ . ամենեւին խրար չերեկ  
եւ ոչ ի խոսաւ . ապա թողին զնա ի բաց : Եւ  
մեք տեսեալ զնա ի Վանատիկ եւ հարցաք .  
հա ասաց զինքն անզարտ զոլ : Եւ այսպիսի  
վատթար զործովք մերժեցան եւ անկան երե-  
200 սաց Հայք :

Այլ եւ ասին մեղ թէ յառաջն խիստ  
պատվէին զագգո Հայոց իրրեւ զոտորս Աս-  
տուծոյ . այլ եւ զ(ու)խտաւորաց զհին չու-  
խան պատառէին եւ միմիանց պարզեւը  
205 տային եւ արմաղան : Իսկ այժմ ոչ այնպէս :

Եւ Փափի աշխարհն յոյժ բարի եւ ան-  
խոռվ , անկոփւ են . ոուր ամենեւին չունին .

այլ եւ զանկաց ճոխն կոտրած է ամենին .  
շունին ստութիւն . կաշառ չառնուն ի վերայ  
իրաւանց , այլ արդար զատաստան առնեն , 210  
առանց նենկութեան : Որպէս տեսաք յաւուրս  
մեր եղեալ գործ . զի իշխանի որդի մի ա-  
թոռակից դուռի այլ իշխանաց , որդի նորա  
անկաւ յարւագիտութիւն . զոր ըմբռնեալ  
եղին ի բանտ : Եւ զայս չարս ուսուցին Մահ - 215  
մէտականք , զի բաղում մահմէտական վա-  
ճառականք կան ի Վանատիկ . ի նոցանէ մնաց  
աղանտս առ նոսա մինչեւ ցայժմ : Զոր յետ  
աւուրց վճիռ հատեալ տանէին զնա այրել .  
իսկ եղկելի հայր նորա լայր եւ ճոխէր զմօ - 220  
բուքն , քանզի միածին էր նմա . անկանէր  
յոտս իշխանաց , աղաչէր մի կորուսանել  
զորդի նորա . Խնայեցէք , ասէր , յալիս իմ եւ  
ողորմեցարուք ծերութեան իմոյ . զի եւ ևս  
իշխան ևմ իրրեւ զձեզ եւ աթոռակից . ևս 225  
ձեզ տամ որդոյս կշողին ոսկի՝ որչափ հակէ :  
Եւ նոքա ասեն . Մեք յԱստուծոյ երկնչիմք եւ  
Գրոց բանից ի դուրս ոչ ելնեմք . զինչ Գիրն  
ասէ զայն առնեմք : Ոչ ի դրամն աղահեցան  
եւ ոչ իշխանէն երկեան , այլ այրեցին զնա ի 230  
մէջ քաղաքին : Եւ այսովէս ամենեւին հիլայ  
կամ խալալ բան չերեւիլ :

Պատմեմ ձեզ բան մի այլ , զի եկաւ Ան-  
կուրու եւ Սօֆիու եւ Թօսու եւ այլ տեղաց  
բատ սովորութեան բաղում սօֆեր . զոր սա - 235

բամփքն իմացան որ զալող էր . զի կէ ան կառ  
աւելին օչխրի բուրդ էր խառնած : Կալան  
զվաճառողքն եւ չարչարեցին , թէ դուք  
գրուրդն փոխանակ տիֆտիկի ծախէք . նորա  
240 խոստովանեցան եւ առն . Զի ոչ զտանի տիֆ-  
տիք յաշխարհա մեր . զի ճէլալիքն աւիրեցին ,  
քանզեցին զայն երկիրն , զայնքն զորս սպա-  
նին , զորս տարան ընդ իւրեանս , վասն այն  
այսպէս զազալ զտաք ի բոզակն մեր : Եւ  
245 նորա բերեալ զամենայն ի մօյանն եւ զիզե-  
ցին եւ կուտեալ փոյտ ի վերայ անխնայ  
ոյրեցին : Բայց զտէրսն անմիտս թողին :

Եւ այլ վաճառականք Ռուռոմէլու մամ  
բերին . մեծ կէ ան ձրագու էր . զայն իմացեալ  
250 բժբոնեցին զտէրս նոցա . եւ նորա հոռոն  
ժիլ . զրամ , զի մի զտանցին . Եւ նորա չա-  
ռին , այլ զմոնին կուտեալ առջեւ Սա Մար-  
քոյին ոյրեցին . որ Հալեցաւ եւ անյայտ եղիւ :  
Եւ առին թէ լիլ . զուռուցի էր մոնիւ . եւ  
255 զատն այսողիոնի արդարութեան եւ իրաւանց  
ուզգեալ է աթոռն թագաւորութեան իւրեանց ,  
ըստ այնմ թէ Արդարութեամբ եւ իրաւար  
ուզգեալ է աթոռ նորա :

Թէսկու զինին շատ եւ առաստ է , այլ ար-  
260 բեցութիւն ընաւ ամենեւին չկայ ի մէջ նոցա .  
եւ թէ բժոգեն՝ ջուր խառնեն եւ ջրով բժոգեն .  
այլ եւ չկայ ի մէջ նոցա շլմախ եւ իփողիրայ

և զուր. չունեն զուլում և անիբառութիւն. չկայ և որձապղծութիւն, և թէ ուրեք զացի, իսկայն այրեն անխտիր: Զկայ դոզութիւն, 235 սովանութիւն, հարամութիւն. ոչ թէ միայն ի քաղաքոն, այլ և ի ճանապարհու և ան- մար վայր տեղու և յանուառու մացառուու. և ոչ զիտեն անող թէ քարիշմանն ինչ է, այլ որ տեղ կամի ոք զհար, միաւոր երթոյ ա- նահ. և թէ ոսկի թագ զենս ի զլուխու՝ ոչ մեասիս. զի և մեք, որ անլեզու և անծանօթ զարիս էաք, յերկար ճանապարհին զնոյսոք խաղաղ և անողորր. որովհս ի ժամանակա Մօրկայ կայսերին<sup>3</sup>: Եւ ամէն նետաձիզ՝ պան- տոկ և չենիք կայ: Այլ և ազօթից և ժո- ժու ժիր և հաստատ են, աւելի քան զՄահ- մէտականս. ոչ թէ միայն ծերք, այլ և տղայք, կանայք և նոր հարսներ և կոյս ազթկունք, ունելով զիրք ի ձեռս իւրեանց 290 երթան յեկեղեցիս. զի սոքա խրառեն զզու- տական ըստ կանոնաց: Ոնց լեզուն բացօթի՝ Հայր մեր, Հաւատամք, Ողջոյն և Փառք ի բարձունու ուսցնեն. ձեռս խաչ հանել, առ Աստուած յազօթս տարածել. և մինչ ի ճաշ 295 կամ պատարագէն չելնեն, հաց չեն ի տալ.

264 ուրէք:

<sup>3</sup> Հմամ. Պատմութիւն Հայունեաց խայրին, 24ու- մինեացի թ. 791, թզ. 132 առ. «ոժանք յառակս ար- կեալ առէին թէ չիրքի յաւորս Մօրկայ նառեալ էք անհոգու»:

Եւ ամէն օր մինչեւ աղօթք չանեն՝ չեն ու-  
տել: Այլ եւ զփոքք աղայս առեալ ի ձեռաց  
տանին յեկեղեցին: Եւ թէ ոք այր կամ կին,  
200 որ թէ օր մի ժամ չերթայ կամ պատարագ  
չի տեսնու, կ'ամաչեն ի դուրս ելնել. կար-  
ծեն թէ իրր մեծ վնաս են զործել: Եւ ողոր-  
մութիւն բազում կայ առ նոսա, ծածուկ եւ  
յայտնի: Եւ են յոյժ խոհարհ եւ հեզ, ան-  
250 բամպաս եւ անիշտչաբ:

Ապա վա՞յ եւ եղուկ յոյլ եւ ծոյլ անձին  
իմայ. զի կայ ազգս մեր, որ երկու, երեք  
տարով եկեղեցոյ զուռն չեն կոխել. եւ ոմանք  
սպիտակ ալեօք զշայր մերն ոչ զիտեն, թող  
300 թէ զշաւատամքն կամ զայլ ինչ. այլ եւ ոչ  
յերեսն խաչ հանեն, զոր Պօղոս զոչէ թէ Յու-  
լից եւ ծուլից փակեալ է արքայութեան  
զուռն:

Վասն աւրինաց ոպահութեան եւ  
305 ստէպ աղօթից բազում բարեաց արժանի ա-  
րար զնոսա Աստուած. Եւ ապրեցոյց ի բար-  
մաղիմի հարուածոց եւ ցաման որ վան ի  
վերայ աշխարհիս վասն ծովացեալ մեղաց,  
որպէս լինի այլ երկիրն՝ ջորեակ, թրթուր,  
310 ջալուկն, մարախն, մահտարաժամն, սովք,  
սրածութիւնք եւ այլն: Նա եւ ոչ թշնամիք  
զան ի վերայ նոցա. այլ են խաղաղ եւ ան-  
խոռով. ունին զանձս բազումս եւ խաղինայս,  
զարպասս եւ վիճաշէն բնակութիւնս բազ-

Ճայարկու. այլ եւ են Երկարակեացք եւ առ 315  
ոռղջք, վասփուկք մարմինք եւ սրբազնահք.  
եւ առաւել մեղօք եւ բանջարօք շատանան  
քան թէ մասվ եւ այլ անհալ կերակրովք։ Եւ  
ովատմեաց մեղ այր մի ծեր Փուանկ, թէ ձի.  
տարու եմ, եւ նոր առամունք բուսել էին 320  
նմա. եւ ասէք թէ ես իմ ժամանակու ոչ մահ  
եմ տեսել, ոչ սով, ոչ սուր. եւ այս ի՞ւ է,  
թէ ոչ արդարութեան եւ յիրաւանց, որովէս  
ասէ մարդարէն, թէ Արդք նուազեցուցանեն  
զազգու եւ արդարութիւնն բազմացուցանէ 325  
որդոց որդիս. եւ թէ Աէրն ծածկէ զրազմու-  
թիւն մեղաց։ Եւ այնպէս սէր եւ միարան են,  
որ երբ տեսնան զմիմիան՝ խոնարհութեամբ  
զրկախառն համբուրիւ ողջունեն սիրով զմի-  
միանս, որովէս թէ հեռու տեղաց են եկել. 330  
կամ թէ վաղուց չեն տեսել զիրար. Եւ զայն  
առանց Երկրայութեան եւ կեղծաւորութեան,  
զի սէրն է գլուխ օրինաց եւ ովատվիրանաց.  
Եւ հազար Երանի ազգին որ սէր ունի։

Արդ ո՛րովէս զովիցից զազգն սուրբ եւ 335  
ընտիր, որ ի սկզբանէ մինչեւ ցայժմ կայ  
հաստատ թագաւորութիւն նոցա եւ հայրա-  
պետութիւն. զի զուտ եւ մաքուր են. եւ ոչ  
թէ առանց մեղաց են, քա՞ւ լիցի, զի Աս-  
տուած է միայն առանց մեղաց. իսկ մարդիկ 340  
մեղօք զառածեալ բատ մարդարէին. Ով է  
մարդ որ կեցցէ եւ ոչ մեղիցէ. Եւ Յոր ասէ,

թէ միօրեայ իցէ ծնեալին, և այն ոչ է առանց  
մեղաց : Աւելին և սոքա յոլով վասթարու-  
345 թիւն . վասահ պառնկին : Այլ և զամենայն  
ժիժմունս ուտեն . կրեայ, նասպասուակ, դորս,  
օձ և այլն, որպէս Եղիսպացիք . և զայն  
ոչ վասն ազահութեան, այլ վասն հազար-  
թեան, որպէս կատուն վասն գօթութեան .  
350 Եւ այլն վասն այլ իրաց : Եւ անդանոյն երա-  
նեն կիսակուշտ և ոչ ազահին ի կերակուրն  
կամ ի զինին բնաւ . այլ և չունին սովորու-  
թիւն շատ նասիլ ի սեղանն և սոզպաթնի-  
անել . այլ ուտեն և շուտ վեր կենան . և եր-  
355 թան վօլզայ զարնել և զրոյց տալ : Ի պա-  
հոց ուտեն ձուկն, ձէթ և այլ : Բայց Եօթն  
մահուշափ մեղաց ի բաց են . զի որպէս տաէ  
Յակոբոս ստարեալին : Են մեղք որ ներելիք  
են են որ մահուշափ . թէ ողէտ տո նոստ  
360 երեւի ներելին, այլ տո այլու մահու շափտ . եւ  
են ազգ որ ձուկ չուտեն, ոչ ձէթ, ոչ զինի,  
այլ բամպաստնօք զմարդոց միան ուտեն,  
հարրենան, ազահին որպէս զահասուն ի պա-  
հոց եւ ոչ զուրանան մինչեւ զզոտիս չթու-  
365 բացնեն . և Պօղոս տաէ . Ոչ շունք, ոչ ազահք,  
ոչ արբեցողք կարեն Ժառանգել զարքայու-  
թիւն : Տեսէք թէ որպէս Փարփս ունի մեղք  
մեղաց : Սոքա բնաւ չարրենան, չբանկաստեն .  
և թէ օտար ոք տեսնեն հարրած՝ հիանան

և պախչին ի նմանէ որպէս զիւահարէ . և 370  
մեծ ամօթ է առ նոսաւ հարրին : Եւ կացաք  
առ նոսաւ ինն ամիս . օր մի չտեսաք արբած  
Փռանկ . զի զարրեցողն ընդ շնացովս համա-  
րին որպէս Պօղոս : Վասն այս սպասառացս  
լցել է Աստուած զնոսաւ հոգեւոր և մարմնաւ 375  
ուր բարութեամբ , լիութեամբ , ոսկով և  
արձաթով , տամբք և անզօք , ընչիւք և  
ապրանեօք , որդովք և զատերօք , բայ այնմ  
թէ Տեսցւս զորդիս որդոց քաց . և թէ Կին  
քո որպէս այդի վայելուչ . և թէ Շահնաւ 380  
բանք նոցաւ լի Են , խաչինք նոցաւ բազմածինք  
և և անզեայք նոցաւ պարարտք :

Եւ զային թողլով ի բաց , եկեսցուք ա-  
ռաջարկեալ բանն մեր , զոր բազում քազա-  
քօք , զղեկօք և զեղեցկաչն ամբոցօք ահ- 385  
ցանելով :

## Տ. ՀՈՌՈՒ

Իբրև մերձեցաք ի մեծն Հռոմ . և աւուր  
մի հանապարհէ երեւէր սուրբ Պետրոսի  
զմովիթն : Եւ իբրև մտաք ի դուռն քազա-  
քին , տեսաք զեղեցիկ մարմարէ արձան և  
մերեւն սոկի խաչ . և երեք տակ ուստիսոյ 5  
ունէր նա : Եւ էր մեծ քան զրլլուտամսով . բայց  
կէսն աւեր : Եւ այնչափ զեացաք որ ձանձրաւ-

380 յազգի : — 382 յանզեայք :

յաք. եւ յետինքն հաղիւ հասաք ի Հայոց եկեղեցին եւ շրիթալի:

10 Եւ տեսեալ զցանկալին ամենեցուն զմեծահամբաւ եւ հռչակաւոր կայսերանիստ եւ հայրապետական մայրաքաղաքն զմեծն Հռոմ: Եւ մէջ քաղքին երթոյր մեծ գետ մի եւ սրբնաց՝ պղտոր նման Արքոյ Երմախին, ուրանացուցանելով զքաղաքն, ըստ այնմ թէ Քնացք գետոց ուրախ առնեն զքաղաք:

Եւ եկեղեցին Հայոց քարէ մեծ եւ տասն օտա քարէ ունէր վասն ըխտաւորաց. այլ եւ դարպասնի եպիսկոպոսաց, քահանայից եւ 20 այլ կրօնաւորաց, տօշակ, անկողին: Իսկ վարպապետն Զաքարիայ տեսեալ զիս ուրախացաւ. եւ էտո առ ինքն եւ համբուրեալ զմիւմիանս հաշտեցաք: Եւ յետ աւուրց ինչ կոչեցաք զՀայոց թարճիմանն Յակոբ անուն Ամթեցին<sup>1</sup>, որ քառասուն ամ կամ աւելի էր անդ. եւ Փատին հինգ հարիւր զուռուշ թային էր արել նմա վասն թարպմանելոյն: Զիտ յդարկեց Փատին: Եւ արարեալ էին վարպապետին թային նախաղայ օրն ԺԲ Հաց, հինգ 30 օխու միս, երկու հաւ, երկու օխոյ գինի, աղն, քացախն եւ այլն. այլ շարաթն հինգ զուռուշ ճէալ խարճի: Եւ էր անդ էրէց մի

12 ի մեծն հրոմ: — 20 յանկողին: — 21 լուրանացաւ: — 25 յամթեցի... յաւելի:

<sup>1</sup> Յակոբ թարպման կը յիշուի ի Հռոմ արդէն 1597ին. Հմատ. Ալիշան, Հայութենեա, էջ 354:

Հայի Թօխաթցի, Բարբթուղիմէռս անուն<sup>2</sup>, որ  
պըզտկուց անդ էր սնել եւ ի չափ հասել.  
զմէր գիրն եւ զլեզուն գիտէր, բայց նոցան 25  
այլ աւելի. զի նոցա օրէնքն կու բռնէր. նոքա  
օրհնել էին զնա էրէց. եւ տարին հարիւր  
կարմիր սոկի թային օլօֆայ ունէր. եւ եկե-  
ղեցին եւ շրիթալն եւ խցերն ամէն իր ձեռքն  
էր: Եւ ունէր ժամն էզիք, վախրվ տներ: 40  
Ապա հիւրոց աղառոտնին պիտոր լուանար եւ  
զամենայն պէտա նոցա հոգայր: Եւ կայր ի  
նմա ԺԲ: Հոգի: Կացաք անդը Եօթն ամիս,  
ի թվին Հայոց Ծի (1611) ի փափութեանն  
Պօղոսի Երորդի:

Եւ մէր քարտինալն էր Պուռկէդ, քւերոր-  
դին Փափին. զի ՀԲ: Քարտինալ ունէր Փափին.  
Եւ ամէն քարտինալն ազգի մի նազը էր. իսկ  
զլուխն եւ մէծն Հայոց լինի. զի ՀԲ: ազգ որ  
ասի, Հոռմ դասնի:

Օր մի Եկին եղիսկոպոսք տանել զՎար-  
դապետն ի Փափին: Եւ զնացեալ տեսաք զա-  
րայըն մէծ եւ լայնանիստ, զեղեցիկ ոլիմօք

## 48 Քարտինալն:

<sup>2</sup> Առ ինք զինքը կը կոչէ «տէր Բարբթուղիմէռս  
Արգարցի», նաև «Արգարի ազգէն» եւ լատիներէն  
զրութեամբ D. Bartholomeus Abagarus. Տաճօթ են  
իր զբէն տողերս. «Ես աէր Բարբթուղիմէռս Արգարի  
ազգէն» եւ ասառուածութան քահանաց, մասյ այս մէր  
ազգին տան հոգուածութեամ եւ խոստովանահայր. եւ էր  
թուին Ծի (1600), Հրամանաւ Կղեմենթոս թ. սուրբ  
Փափին. բաւ է. Հ. Գ. Զարբանալէտն, Պատմութիւն  
Հայկ. առաջբութեան, էջ 42:

Եւ աշտարակօք շինեալ : Եւ ի դուռն սարային  
 բազում սուսերամերկ զինաւորք . եւ ի ձեռին  
 ամենեցուն լայնաւլաք զեղարդք , որ փայլ-  
 դիայլի տային . եւ զգեստ էր նոցա այլաձեւ  
 եւ ուրիշ ազգ . այլ եւ ունէին երկայն մօրուս .  
 զի ֆրանկն չունի մօրուս , բայց միայն սոքա :  
 Եւ ասին մեղ թէ չունի Փափին քան զգոստ  
 հաւասարիմ եւ սիրական ծառայ . եւ են երեք-  
 հարիւր : Եւ յորժամ Փափին անդ Երթայ կամ  
 ժամ , սոքա ի մէջ պիտի առնուն եւ ինքեանք  
 Երկու կողմանց զնան : Եւ ասին թէ սոքա են ,  
 որ Լուսաւորիչն Եթող սնդ՝ յորժամ էրն ի  
 Հոռմ , եւ ա՛ռ ի նոցանէ երեքհարիւր այր .  
 նոքա իւրեանց հաւաստն կու պահեն , իսկ մերն  
 պարձան 3 :

Եւ իրրեւ մտաք ի սարայըն , ասին թէ  
 Լոին դուռն պիտի անցնիք : Ի ամէն դուանն  
 զարպանին զարդարած էր ազգի սոզի լի-  
 պատով . եւ առաստաղն ոսկով նկարած :

Եւ առաջինն սկէոլէթ էր չորս պատն .  
 զի աշխարհն քրիստոնէից չի նստին ի վերայ  
 զետինի եւ ոչ զարդարեն զգեստինն որպէս  
 Թուրքի աշխարհն . եւ նստին ի վերայ աթոռոց  
 եւ սկէմլոց . այլ եւ ունին սեղան մեծ եւ

54 յաշտարակօք : — 55 փայլափայլն . . . այլ եւ  
 ձեւ : — 56 զարպանին :

<sup>3</sup> Այսպէս հաւասարացուցած . են մեր ուղեղըքին :  
 Քահանացարեալին պահակը սկսեալ 1505էն մինչեւ մեր  
 օրերը կազմուած է բնիկ զուիցերիացիներէ :

բարձր ուր հաշակեն։ Երկրորդն էր մօռ և  
ծիրանի սօֆ։ Երրորդն՝ թափայ։ չորրորդն  
քամիսայ։ Հինգերորդն՝ աթլազ։ Վեցերորդն՝ 80  
զէրպասպ։ Եւթներորդն՝ ուր Փափն նստէր՝  
սէրասէր։ Եւ ինքն նստեալ էր յոսկիակաղմ  
աթոռ։ Եւ ունէր ալմաս ակնով մատանի մի  
ի մատն, որ քան զջահ վառէր։ Եւ առաստաղն  
սաֆի լաճվարտ եւ զուտր սակի էր եւ աղջի 85  
աղջի գեղրանք խաղցուցած։ աչք հազար  
պիտէր որ հայէր եւ վայելէր զգեղեցկու-  
թիւնն։ Եւ վարդապետն զնաց եղագ զոտն,  
զի հրաման չկար ձեռաց, միոյն թագաւորաց։  
Եւ ի վառաց անտի եւ յահեղ մեծութենէն եւ 90  
վասն ամօթոյն ահ եւ զողումն կալաւ, մինչ  
զի քրտունք հոսէին յերեսաց մերոց։ Փափն  
եհարց թէ ուստի՞ զան։ Եւ թէ որպէս են  
Հայք ի անօրինաց ձեռու։ Եւ նա ասէ թէ ի  
Սուրբ էջմիածնայ զամ, յԱրարատ լեռնէ։ եւ 95  
թէ բարիոք են Հայք ազօթիւք ձեր, ոուրբ  
Հայր։ Եհարց թէ ո՞զ է Մելքիսեդէ կաթողի-  
կոսն, եւ նա ասէ։ Այս, ոզ է ի սէր քո բաղ-  
ձալիք։ Եւ ետուր նմա նամակ եւ երկու սօֆ եւ  
խալի մի եւ փիլոնի կոճակ խաչաձեւ յիսուն 100  
ալմասով եւ բանդահը հինգ դրամ։ Առեալ  
զնամակն՝ զընծայս ո՞չ կամեցաւ առնուլ, ա-  
սելով թէ Մեղ չէ պարտ այդպիսի տրոք սի-  
րել զմիմիանս։ Եւ վարդապետն չնորհակալե-  
ցաւ զնաց եւ չկառ։ Եւ նա զկնի առաքեաց։ 105

և պատվիրեաց լաւ հարկիք առնել Վարդա-  
սկետին : Իսկ Վարդապետն դարձեալ ուղար-  
կեց և ասէ . Ընդէ՛ր ոչ առնու . միթէ ո՞չ հա-  
ճեցաւ կամ թէ իւր լայեխ չէ՞ զի չնչին եւ  
110 ոչինչ է մեր տուրքն սակաւ : Ապա հաղիւ  
էառ դիսաչն . զբանզահըն եւ զայլն յետ զրկեց :  
Եւ անցեալ շաբաթ մի՞ յոյժ նեղանայաք  
եւ տառապէաք . տռաւել որ զլեզու նոցա չի  
զիտէաք : Այլ ես յոյժ տագնապէի՞ յորժամ  
115 անկանէր ի միաս իմ զաւառս իմ եւ սիլաս ,  
քորք եւ մինայքս իմ , եւ ամենայն աղղա-  
կանք եւ սիրելիքս . լայի եւ հառաչէի , ակն  
ունելով թէ ոք տրամեսցի . եւ ոչ ոք էր . այլ  
եւ միսիթարիչ ինձ ոչ ոք դտաւ . վասն որոյ  
120 խորովէր սիրտս իմ , զալարէին աղիքս , ցնո-  
րէր միտքս Եւ նուազէր յիս հոգի իմ եւ յի-  
շէի զրան Սաղմոսին , թէ Տա՞յր ինձ ոք թեւս  
աղաւնոյ , զի թոչէի վերանայի 'ւ առ իմ երամս  
հասանէի . եւ ասի զողքս ի վերայ տալէհիս  
125 անաջող .

Եմ Տէր եւ ստեղծող Աստուած

ամենից ես զու ողորմած .

Իսկ ես վասն է՞ր Եմ անկած ,

'ւ ի օտար աշխարհ վրտարած :

130 Ամէնքն են իւր տեղ նստած ,

մեծամեծ փառաց են հստած .

Իսկ ես ամէնէն զրկած ,

իսիստ ողորմ սիրելեաց զատած :

Աւազ թէ դտեղս ալ առին

' և իմ՝ վորխան զայլ ոք կացուցին . 135

Զիմ անունս մեռած հանին

' և ի ժառանկ զրէն չնջեցին :

Տէրն օդնէ ամէն դարիոլին ,

Հասցնէ զիւրենք մուրասին .

Հասցուր եւ զիս իմ ուխտին ,

ողջ պահէ հոգի ' և ի մարմին :

Եւ էր ազգն յոյժ բարի եւ մարդասէր ,

զի որպէս զեզրայր եւ զընկեր այնպէս զմեղ

ընդունէին եւ իշարաթով զամէն բան հասկա-

ցուցանէին : 145

### ԱՌԵՐԱՆ ՊԵՏՐՈՍ

Եւ օր մի ելեալ զնացաք ի մեծ եւ ի վա-

ռաւոր եկեղեցին Սան Փեթրու , որ է Սուրբ

Պետրոս : Եւ ի ճանապարհին տեսաք մեծա-

մեծ տաշած ու վիմած կամուրջ մի ի վերաց

պետին , եւ մին կողմն Պետրոս , միւսն Պօղոս :

Եւ այն կոյս կամրջին անառիկ բերթ մի , որ

էր Թօրխանայ եւ Ճէպախանայ , որ կոյին ի

նմայն մեծամեծ թօրեր . Եւ բազում աղդ եւ

աղդ զէնք երկայն եւ հասու . զընձիլ մի եր-

կաթէ զուղած էր կամուրջով . Եւ երբ քար-

շեալ ձգէին , նու չկարէր ոք անցանել կամ

վախչել :

Եւ կոյր Սան Փետրու առջեւն արձան մի

142 ոյժ :

4 վիմաց : — 6 յանառիկ : — 11 ծիզէին :

մէծ մարմարէ նման Ստամպօլայ մօյտանին ,  
 15 կանգնեցուցած ի վերայ չորս պղնձէ առիւծու  
 զայն ահաղին սիւնն եւ ի դլուխն ոսկի խաչ :  
 Եւ այլ յառաջ մերձ ի դուռն տաճարին կո-  
 ված էր սպիտակ մարմարէ զարմանալի  
 զՊետրոս եւ զՊօղոս , միոյն ձեռն բանալի ,  
 20 միւսոյն սուր : Եւ մտեալ եկեղեցի՝ տեսաք ի  
 դուռն ներս զսուրբն Պետրոս սպետրէ թա-  
 փած եւ ներքեւն սնտուկ մի . եւ սահմանք էր  
 որ մտնողքն նախ զոտն համբուրէին , ար-  
 կանէին ի սնտուկն ողորմութիւն . եւ ապա  
 25 մտեալ ի մատուն : Ուր կայր պատվական  
 սուրբ մարմինն Պետրոսի , զոր անկեալ ի վե-  
 րայ երեսաց երկրպագեցաք սուրբ զերեզմա-  
 նին եւ մեղաց թողութիւն խնդրեցաք եւ մեր  
 ննջեցելոց , այլ եւ բարերարաց եւ երախտաւո-  
 30 բաց : Զուխտն կատարեցաք , մեր մուրատին  
 հասաք . դուք այլ հասնիք ձեր մուրատին :  
 Եւ շրջեալ տեսաք զմեծութիւն եւ զլայ-  
 նութիւն եւ զերկայնութիւն . զի էր երկայնու-  
 թիւնն երեք հարիւր քայլափոխ եւ լայնութիւն  
 35 երկու հարիւր յիսուն . իսկ զմպէթին բար-  
 ձրութիւնն վեցհարիւր աստիճան . զի զեռ  
 եւս զործէին արվեստառքն . եւ վարէն  
 իրեւ զմնձզուկ երեւէին : Եւ ի ճառադայթից  
 ոսկոյն եւ երանդոցն պայծառութենէն պշնուին  
 40 աչք մարդկան : Եւ կային բազում մարմարէ  
 սիւնք . ոմն սեւ , ոմն սպիտակ իրեւ զծիւն ,

ոմն կարմիր, ոմն կանաչ եւ սյլն խէտումէտ : Այլ եւ չորս պատն ամէն տախտակք էին անցուցած մէրմէրէ, որ իրրեւ զհայելի փայլէին եւ զմարդոյ կերպն ցուցանէին : Եւ բռն տաւ 45 ճարն ոօմախի մէրմէռ էր : Եւ ի մէջ տաճարին ի վերայ չորս մէծամեծ հրեշտակաց զմոլէթայարկ կամար եւ մէջն խորան . եւ սյն էր աւագ խորանն : Եւ կախեալ կային բազում 50 կանթեղք մէծամեծք յոռկոյ եւ արծաթի ի վերայ սուրբ Գերեզմանին, որ ափւ եւ դիշեր ի վառ կային : Այլ եւ եկեղեցոյ ներքեւն մազարայ էր, ուր բազում նշխարք եւ խորանք սրբոց կային . Եւ պատերն ամէն ոօմախի գեցիկ մէրմէրէ պատած էր :

Եւ եկեալ անտի զնացաք զնողորմութեան զուռն համբուրեցաք : Եւ ասին թէ Ռզորմութեան զուռն յիսուն տարին ազա բացվէր ըստ յորելինի ազատութեան . եւ տեսան որ 60 հազարէն մէկն չի հասնիլ սյն օրն . ինդքեցին կարճել . իսկ Փափին քսանուհինդ ամ արար : Եւ յայնմ ամի, յորում բացվի, յոքնախումբ աշխարհաժողով լինի . զի ամէն երկրէ դան : Եւ տարի մի կամեցու Փափին իմանալ զթիւ ուխտաւորացն . եւ եղ մարդիկ ի դրունո քաղաքին եւ զտաւ ձմի բխտաւոր : Փա՛ռք Աստուծոյ :

Եւ յառաջ զնացեալ շուրջ զեկեղեցեաւ

70 անսաք բազում արվեստաւորս . ոմանք կո-  
փէին , այլք տաշէին , և կէսքն քանդակէին  
զքարինս . և այլք լեռնանման մեծամեծ վէմս  
սղոցով կտրէին որպէս զփայտ տւազով . և  
այլք այլ ինչ դորձէին : Եւ հարցաք թէ քանի՞  
75 մարդ կու դորձէ սորա բալորն . և ասին թէ  
երեքհազար , թող զայն որ այլ տեղիս : Հար-  
ցաք թէ վազո՞ւց սկսաք շինել . ասին թէ հա-  
զար ոմէ է և դեռ երկուհարիւր ոմն չի կա-  
տարիլ<sup>4</sup> . և դեռ զանկանկառուն չունէր : Եւ ո՞վ  
80 կարէ լեզուով պատւել զմեծութիւն եարուին  
և զծախսն : Եւ հարցաք թէ ի՞նչ կէլիր  
ունի Սուրբ Պետրոս . և ասին թէ տարին մէկ  
միլիոն . որ է չորս տարագա հարիւր հազար  
ֆլորինի , զատ եւ որիշ այնմանէ որ թազա-  
85 ւորք կ'ուզարկեն օգնութիւն . քովէն ալ շատ  
կու խարճէ Փափն , դեռ չի օգնել : Այլ և ւ  
տեսաք լեռնանման սայլս , որ արվեստիւ և ւ  
իմաստութեամբ հինգ , վեց ձիովք ի քազաքն  
ածեն ահօթիւք , պախարակօք . և ազդի ազդի  
90 հնարիւք երկու , երեք ձին տասն խուլաձ ի  
վեր հանէ բարձր և ի դլուխ եարուին , որ  
տեսողացն է սքանչելի , ոչ թէ լսողացն :

## ՀԻՒԱՆԴԱՆՈՒՅՔ

Եւ անտից տարան զմեզ ի Սան Փէրթրու  
եկեղեցին , որ է Սուրբ Հոգի : Այլ և մտաք

<sup>4</sup> Ա. Պետրոսի հիմք ձգուած է 1506, Ազրիլ 18ին,  
Յուլիսս թ. Քահանայապետի օրով . օծումը կատա-  
րուած է Բւրբանոս թ.ի ձեռքով 1626, Նոյեմբեր 18ին,  
Նոբիկին՝ Կոստանդիանոս մեծի հիմնարկած Ա. Պետրոս  
եկեղեցւոյ 1300ամեաց տարեդարձին :

ի շրիմալ նորս, որ յոյժ մեծ էր. և էր որ— 95  
ովէս առազատաց թագաւորի զարդարած. և  
զառասատաղն և զպառերն ուկով և արձա-  
թով յած, ոյլ և աղնիւ լանվարդով և  
զունզուն զեզերօք յօրինած. և զային խու-  
մաշով բանած: Զի յոյժ պատմեն նորս զար— 100  
քառոս և զանանելս, զորքս և զայրիս և  
զհիւանդս: Եւ ամէն եկեղեցիքն ունին շրի-  
պալ ըստ կարօղութեան, ոյլ ուս Փատիին էր.  
և շկար նման ամա: Եւ էր երկայնաձիգ մա-  
զոցի նման: և չորս չորս առկ անկողնի տեղ 105  
յայնութիւնն: Եւ հարցաք թէ քանի՞ հիւանդ  
կայ աստ. ասին մեղ թէ այժմ երկու երեք  
հազար կայ. ապա յամանն հինգ վեց հազար  
կու լինի. զէքս Հոռմայ հաւան գէշ է: Եւ  
թէ խարճն հարցնէք, նա չարաթն տասն հա— 110  
զար զուռուշ կ'երթա), զի երեք հարիւր կոմ  
տեղի սպառաւորք ունի. սոմէնն կոսրմիր  
պպեստով ևն. զատ վէքիյնուն, հազիմնուն,  
թէ հետեւուն և քահանայիցն. քանզի քաղքի  
նման է. ունի զառաւոր, եազրձիք, ձա— 115  
սահինի, մաճունճիք, տէլլաքնի, աշչիք, սօ-  
մունճիք, թող զփայտն և զոյլ հիւանդի կե-  
րակուրս, զտօշկնին, չորչափնին և ոյլ ամե-  
նայն պէտքն: Եւ զի աշխարհն այն սղութիւն  
է, օխու մի միս ժեզ զրամ, և զրամ հացն 120  
մէկ ստակ: Զի աշխարհն այն մարդաշտու է.

99 յօրինաց: — 102 հիւանդ հոս և վարք միշտ  
զրուած հիւանդ: — 105 յանկողնի: — 116 սօմունճիք:

եւ ամէն սար ու ձոր շէնլիք է . եւ Աստուծոյ  
պարզեւքն այն աշխարհն է , զի ամէն բանն  
առատ է . որ թէ ձմի Փլորիու հաց ուզես  
կու գտիք : Եւ մեք մինչ ի Հոռմ էաք՝ ժողո-  
վեցան հացծախքն , դնացին առ Փափն եւ  
ասեն . Հայր սուրբ , այս տարի բոյսն լու չէ  
եւ ցորենն սակաւ . կու տամք Սուրբ Պետրոսի  
քառասուն հազար զուտուշ . տուր մեզ հրաման  
130 դհացն վոքրացնել : Խոկ Փափն խայիլ չեղաւ ,  
այլ ասաց . Քանի կայ , եփեցէք . Երբ հատնի  
ես ձեզ կու գտնում : Եւ նորա ամօթով դար-  
ձան ի տունս իւրեանց : Եւ օր մի հաց չեփե-  
ցին . եւ հաց չի գտաւ ի քաղաքն . իմացու-  
135 ցին Փափին . եւ նա հրամայեաց դատաւորին .  
շուրջ դալ . եւ նա գնացեալ ուր հաց չի գտաւ՝  
դհացծախն կախեց դուռն ի վայր , որ եւ այլք  
խրատեսցին : Եւ առ այն է բանն մեր , որ  
ոչվաթ չեն ուտել բհաւ Փուտնկ աղզն . Եւ  
140 Փլորին այն տեղն դրամի տեղ է :

Թողլով զայլս ի բաց , եկեսցուք ի պատ-  
մութիւնս առաջարկեալ բանիս : Որպէս բա-  
ղում անդամ ասացաք , թէ սրիթալն հիւան-  
դանոց կամ հիւրանոց լսի : Արդ տեսցուք թէ  
145 ո՞րպէս կարգ եւ սահմանք է նոցա : Հիւանդ  
ոք այր կամ կին առնուն շրիթալն , զի ամե-  
նայն եկեղեցի ունի երկու սրիթալ . մինն առ  
բանց եւ մինն կանանց . բայց նախ երթան առ  
մեծ քէհեան , որ է պօն սինօր , որ է քորե-

ովիսկոպոս — զի Փափին աշխարհն ամենայն 150  
իշխանութիւն, մեծութիւն եւ վատք կար-  
դառորաց ձեռքն է . իսկ աշխարհականքն որ-  
պէս ստրուկ մի են . եւ զի բազում են քան  
աշխարհականս քահանայք, վասն այն տիրել  
են ի վերայ նոցա — եկեալ ասեն . Աղաչեմք 155  
դքեղ, տուր հրաման բերել ի սրբթալն  
զֆլանն : Եւ նա տաէ տանել առ հազիմն, զի  
տեսանիցէ զերական : Եւ այս վասն այն, զի են  
բազում խարերայք, որ դատարկ չուր գալն  
տանել են, բանի գլուխ չունին, սուս հիւանդ 160  
կու լինենան, որ առնուն ի սրբթալն, մուֆտ  
հաց ուտեն, կակուղ տօշակ պառկին : Վասն  
որոյ պիտոր հաղիմն հայի զերական եւ իմա-  
նայ . եւ թէ ճշմարիտ հիւանդ է՝ տայ նմա  
թղթիկ մի առ վորք քէհեան . եւ նա տայ 165  
մեծ քէհին, եւ հրամայէ մուծանել զնա ի  
սրբթալն, եւ զիմար առնել : Եւ իրբեւ մտնէ,  
հանեն ի նմանէ զիւր օչլուտ եւ սղտուտ զգեստն  
դարշելի, մինչեւ ի շաղիկն . եւ տան սպի-  
տակ շաղիկ եւ վարտիք, տօշամայ . եւ շինեն 170  
տօշակ եւ անկողին ի վերայ բարձր մահճի :  
Զի անգր ոչ նստին եւ ոչ ննջեն ի վերայ  
դեանի, այլ ի վերայ աթոռոց . զոր եւ զմեղ  
ծաղր առնէին, թէ զուք անասնոց նման ո՞ր-  
պէս նստիք կամ ննջէք ի վերայ դետնի, կամ 175  
ո՞րպէս հանդչիք . զի ի խոնաւութեանց եր-  
կրի եւ ի հիւթոյ բազում ցաւ եւ վեառք զոր-

ծին մարդոյ . եւ մեք առէաք , եթէ մեք այս-  
պէս ուսեալ եմք : Արդ եկեսցուք ի սկսեալ  
180 զրուցն մեր վասն հիւանդաց . սպառկեցնեն  
զնա . գայ հագիմն եւ իմանայ զցաւն եւ ըստ  
այնմ հրամայէ տալ կերակուր . եւ երբ ժամ  
լինի կերակրոյ , դայ սպասաւոր մի եւ բերէ  
ողօլ , որ է սեղան . նոյնպէս եւ յամենայնի .  
185 ապա գայ միւսն եւ բերէ վիշխուն սպիտակ  
եւ սփոէ ի վերայ սեղանին . եւ այլն գայ բերէ  
դրդալ եւ սուր գանակ , այլն՝ աղ եւ հաց , եւ  
մինն դինի ջրախառն եւ ապա կերակուր : Եւ  
այսպէս ամէն մէկ մէկ խզմէթ մի ունին . եւ  
190 զկնի հացին գարձեալ ժողովն : Եւ իրիկունն  
գայ մինն վերցնէ զհիւանդն եւ միւսն զտօ-  
շակն զուգէ . ապա պառկեցնեն զնա եւ դնեն  
մերձ աման մի վասն կարեաց . դոր յառաւո-  
տուն եկեալ առնու տանի եւ վօթէ եւ լուս-  
195 նայ : Եւ ամէն շարաթ զառշկին երեսն եւ  
զչարչափն փոխեն : Եւ ամէն կիրակի քահա-  
նայն գայ խոռովանցնէ եւ հաղորդէ . եւ սուրբ  
սպասարագն տեսնու . զի սրիթայն մատուռ  
կայ , խորան , սեղան եւ այլն :

200 Արդ տեսէք թէ ո՞րպէս սէր , հարկիք եւ  
սպատիւ կ'առնեն աղքատ հիւանդաց , որ եղ-  
բայր եղբօր չ'առներ . եւ ոչ կին՝ առն այս-  
պէս սրտանց ծառայութիւն : Դարձեալ կայ  
ի նմա ամէն ցաւոց դեղ . ով երթոյ ուզէ՝  
205 մուֆտ կու տան . եւ հաղիմք շուրջ կու զան  
եւ տան հիւանդացն՝ ոմանց հապ , ոմանց՝  
շարպաթ , ոմանց մլհամ , այլոց եախու եւ

ամէն ցաւի կորայ կու գրէ ի վերայ մահճին,  
թէ զի՞նչ կերակուր տացեն : Եւ ամէն շաբաթ  
տալաքն կու լվանայ , կ'ածիլէ եւ պէտ կ'առնէ : 210  
Եւ յորժամ ողջանայ՝ հանեն ի նմանէ զայն  
զգեստն , տան նմա դի՛րն եւ առեն . Անմեղա-  
զիր լեր , եղբայր , քեզ աւելի հարկիք պիտէր ,  
երթ խաղաղութեամբ եւ յիշեա զմեղ յաղօթո  
քո : Այսչափ ոէր , գութ եւ բարերարութիւն 215  
կ'առնեն , զեռ կ'առեն . մի՛ մեղագրեր :

## ԱԱՆԹԱ. ԹՐԻՆԻԳԱԼ.

Եւ կայր եկեղեցի մի այլ ուխտաւորաց՝  
Սանթայ Թրինիղայ , մեծ եւ փառաւոր , զի  
որչափ հիւր եւ ուխտաւորք զան , անդ երեք  
օր պիտի հաց ուսեն : Եւ ունի երկայն սե- 220  
զանատեղ մի , Աւզուն չարշուի նման , ուր  
հազար , երկու հազար մարդ կու նստի . ազա  
ամէն զատկի հինգ , վեց հազար հոգի անդ  
կերակրի . եւ չկայ եկեղեցի կամ վանք , որ  
ամէն օր հաց չի ելանէ : 225

## ՔԱՅԱԿԱՑԻՆԵՐ

Ամէն վանք երեքհարիւր , հինգհարիւր ,  
ութհարիւր հարեղայ կայ : Ազա ազգ մի հա-  
րեղայք կան ի մէջ նոցա՝ քան զամենայնն  
առաւել խստակրօն , աստուածահանոյ , սուրբ  
եւ առաքինի . նոքա բնաւ չունին վանս ի քա- 5  
ղաքի , այլ ի զուրս , բոկոտն եւ հոլանի ա-  
ռանց շապկի , շալ միայն ունելով , չուան

զօտով՝ և մուրալով սպարին. դրամ չեն առանուլ ամենեւին ի յափ. դինի և միս չի ճա-  
10 շակեն բնաւ, բայց միայն բանջար: Եւ զայն մուրացած կերակուրն նախ աղքատաց տան էւ սպա ինքնանք ուտեն. եւ զայն՝ օրն անդամ մի: Ունին ի վանքն իւրեանց բազում աղքատ հիւանդ էւ հիւր, զոր նոցա ծառայեն,  
15 զոր նոցա լեզուաւ Քարուցին կոչին:

## ԹԻԼՓԻՍՏՔ

Եւ է վանք մի այլ մէծ էւ փառաւոր. Եւ նոցա հարեղայքն այնպէս սահմանք ունին, որ միայն առանձին ճգնին, եւ ոչ որպէս այլք կրկին կրկին, սոքա մի մի. Եւ հինգչարթի աւուր մտեալ ի խուցն մինչ ի միւս հինգ-  
շարթի ոչ ելնեն ի դուրս. Եւ ոչ խօսին, այլ յառուկ առանձին աղօթեն եւ խոստովանին, հաղորդին, սակաւ մի միսիթարին եւ դարձեալ փակին ի սենեակսն ի զատ՝ որպէս ՀՅ:  
25 թարգմանիչքն:

## ԶԱՆԱԶԱՆ ԿԱՐԳՔ ԿՐՕՆԱԿՐԱՑ

Եւ վանից մի այլ հարեղայք, որ Փափին հրամանաւ երթան ընդ ոլորտս տիեզերաց ի բարբարոսս եւ ի սփիւռս հեթանոսաց. ոնն ի Հնդիկս, ոնն յԱրարիա, այլք ի Պարս եւ  
30 այլք ի մէջ այլ եւ այլ հերետիկոսաց եւ հերձուածողաց. եւ առաքելաբար քարոզեն զԲրիստոս Աստուած. զոմանս դարձուցանե-

լովի ի հաւատս աստուածպաշտութեան եւ յումանց մեռանին . զի դորս դլխատեն , դորս այրեն , եւ զայլս այլ իմն չարչարանօք հալու- 35 ծեն կամ սոլանանեն . զոր նոքա ուրախութեամբ յանձն առնուն :

Եւ ազգ մի այլ հարեղայք կան , որ Յորդորիչք անուանին . նոքա շրջին ի գեղս , յագարակս եւ ի փողոցս . եւ դտեալ զհիւանու 40 կամ տկարս , պէտ առնեն եւ դարման տան եւ յորդորեն չըռւսահատիլ , այլ զոհանալ վասն ամենայնի , խոստովանիլ եւ հաղորդիլ եւ այնպէս յուսով , սիրով եւ հաւատով դնալ առ Աստուած :

Եւ ասին մեղ , թէ յիսուն ազգ կարդաւոր կայ . եւ ամէն ազգ ցեղ մի զգեստով են եւ ցեղ մի գունով . ոմանք չուխայ ագանին սեւ , այլք սպիտակ . ոմանք շալ սեւ ներքեւն եւ վերեւն սպիտակ . ոմանց վերեւն սեւ , ներքեւն 50 սպիտակ . եւ այլք այլ իմն , բազմադիմի եւ զանազան : Եւ այլքն ի յուսս չուխիչ խաչս ունին՝ այլ եւ այլ գունով , ոմն կարմիր , ոմն սպիտակ . եւ այլքն խաչ ի ձեռս ունին եւ շրջին . եւ այլքն այլ եւ այլ դտակ . ոմանք ազգ 55 եւ ազգ վիլոն եւ ևախայս ունին : Եւ ամէն ազգ կրօնաւորի եւ կարդաւորի զլուխ եւ մեծն ի Հռոմէ է : Եւ Փափն առաքէ զորս կամի այլ եւ այլ դտառոս եւ երեք տարին վոխիչ : Որպէս եւ Տաճիկքն ունին սակաւ սոցաւ նման 60

առհմանք. Մէջլոյիքն ի Ղօնեայ՝ զՄօլոյ  
խօնդքարն, և Շէխերն յԵրուսաղէմ՝ զՄողո-  
մանի տաճարն, և Ենկիշարիքն՝ զՀաճի-  
պէքտաշն. իսկ Էմիրնին ի Կեսարիա՝ զԷմիր  
առլիթան. իսկ քրիստոնեայքն առաւել եւս  
ունին :

## ԽՐԱԿԱԿԱՆ ԿՈՐԴԱ

Այլ և ունի Փափն ամէն երկիր Լէկաթ,  
որ է նուիրակ : Եւ ամէն տարի Ենէրացինի ա-  
ռաքէ առ ի զատել եւ քննել զանուզզայ կար-  
70 գաւորու եւ գնել Հարացեա, առաջնորդ, զա-  
նաց Հայր : Եւ այսպէս ամէն երեք տարի մո-  
խնն եւ այլ դնեն. այսպիսի կարգաւ վարին :  
Եւ սահման կայ ի մէջ նոցա, զի ոչ ոք չկարէ  
զատել զկարգաւորն, բայց միայն եպիսկո-  
պոսն . եւ զեպիսկոպոսն Փափն կամ լէ կաթին :  
Իսկ զՀարեղոյս վանորէիցն՝ Հայրապետն  
միայն եւ ոչ այլ ոք . եւ ոչ թագաւորն, ոչ իշ-  
խանք, ոչ տուքու, ոչ այլ մհծամհծքն կարող  
չեն զատել զեկեղեցականն եւ ոչ կղերիկոս  
80 մին : Ապա վա՞յ աղդիս իմայ կարգաւորացն :  
Զի կայ այս բարի սահմանն եւ ի մէջ Տաճ-  
կաց, թէպէտ անօրէնք են . զի Ենկիշարին այլ  
ոք զատի, սպահին՝ այլ, զաօխթանին եւ  
զշեխերն՝ այլք . իսկ նոցա կարգացողան ոչ  
85 ոք իշխու զատել, իս և ոչ խօնդքարն, որպէս  
զէմիրսն, էհիք էլիմսն եւ այլսն : Ո՞ւ մեծի

աղետիս եւ աւարդ թշուառութեանս, զի այս  
բարի սահմանս ամենեւին բարձեալ եւ Հե-  
ռացեալ եղեն աղգաց մերոց . այլ եւ խառն ի  
խուռն եւ խառնափնտորեալ . ոչ մեծ երեւի 90  
եւ ոչ վորք, ոչ աշխարհական, ոչ կարգա-  
ւոր : Զի ոչ թէ դկղերիկոս, զմոնոզոնս դա-  
տեն աշխարհականք, այլ եւ զքահանայս եւ  
զվարդապետս եւ զեպիսկոպոս . եւ ոչ միայն  
դատին, այլ եւ բրածեծ առնեն, տուզանեն, 95  
աքսորեն, թշնամանեն, նախատեն, եւ զոչ  
տվեալ իշխանութիւնս առնուն ի նոցանէ եւ  
կարգէն ձգեն եւ այլ բաղում դսրովանք տան  
եւ արհամարհանք, զոր անօպատչաճ համարիմ  
եւ գրել աստ : Զի ոչ յԱստուծոյ երկնչին եւ 100  
ոչ ի մարդկանէ ամաչեն, այլ լրբին եւ  
յանդղնին . եւ այս ոչ թէ միայն այժմ, այլ եւ  
ի ոկղրանէ եւ ի ժամանակս թաղաւորաց, թէ  
որպիսի<sup>○</sup> չարիք անցուցին ի զլուխս սուրբ եւ  
աստուածահանոյ հայրապետացն մերոց Ներ- 105  
սէսի, Մեսրոբայ, Սահակայ եւ այլ սրբոցն,  
քրիստոնեայք զոլով . այլ եւ թոռանցն սուրբ  
Լուսաւորչին մերոյ : Զոր եւ զարժանահաս  
պատուհան ընկալան յարդարապատ Տեսո-  
նէն . որովք բարձան թաղաւորութիւնք եւ 110  
իշխանութիւնք մեծահռչակ ցեղէն Արշակուն-  
եաց եւ Բագրատունեաց, նաև Պալհաւու-  
նեաց . եւ եղաք ծաղք եւ այսն կատականաց  
դրացեաց մերոց . եւ մատնեցաք ի ձեռո

115 թշնամինց ահօրինաց, խստաց և ապառաժ-  
բողաց. եւ ոչ զոյ մեզ բանալ զբերան մեր,  
զի ամօթ եւ նախառինք եղաւք ամենայն աղ-  
գաց: Քանզի առէ աստուածային մարդարէն  
թէ Մի մերձնայք յօծեալս իմ եւ ի մարդա-  
120 րէս իմ մի մեզանէք. օծեալ զքահանաց  
կոչէ, եւ մարդարէ՝ սպասաւուս եկեղեցոյ:  
Ազատ կրկին եւ երեքկին վարչ մեզ, զի եւ ոչ  
անօրինաց նմանեցաք. զի նորս ո՞րպէս ըն-  
դունին, մեծարեն և պատվին զէմիրան, զի-  
125 ժամանէ, զչեխերն եւ զէհիլ էլիման, թէպէտ  
օծեալք յեն եւ ոչ ձեռնադրեալք: Իսկ մեր  
աշխարհականքն ոչ միայն կարգաւորաց վե-  
րայ տիրեն, այլ և եկեղեցեացն եւ վահո-  
րէից. եւ ամենայն եկամտից եւ ուխտից մահ-  
130 կանց պազարերից եկեղեցոյն. զրկելով զեկե-  
զեցականս՝ ինքեանք սոնուն, նոեւ զմոմս,  
զմէթու եւ զմառազս եւ զխուրապանս եւ զկա-  
շիս նոցա. ոմանք էրէցփոխան, այլքն եկե-  
զեցան կոչելով Հոգարտանան Հակառակելով  
135 կանոնաց, օրինաց և զառառառանաց. որոց  
Աստուած լիցի զրէժինդիք:

## ԳՈՎՅ ՖՈՌԱԿՈՅ

Եւ արդ, ո՞րպէս զովեցից կամ ո՞րպէս  
բարի ասացից վասն ազգին Յուանկաց որ են  
յոյժ բարի, երկիւզածք յԱստուծոյ, Հեղ եւ  
140 իսկարհ, զորովազութ եւ զթած. որոց ձեռք  
ձիշտ յոզորմոթիւնս է, եւ բազուկքն յա-  
զօթս տարածման. բերանք նոցա ի օրհնու-

թիւնո և լեզուքն ի վառարանութիւն։  
սիրոքն ի խոկոմին, ի հառաջան և ի բե-  
կումն, միտքն երկնաշոյեաց, ոոք նոցա յըն—  
թացա եկեղեցային եւ յուսումն։ Եւ վասն բա-  
զում իսոնարհութեանց եւ նոցա Աստուած բա-  
զում մեծութիւն եւ վառք, մոլ եւ խոպինայ,  
քարակուի եւ պիմաշէն տունու։ Զի ազանին  
ազառոշէ եւ ի մեասքսից, այս ինքն քամ—  
խայ, աթքաս- այլք չուխայ մեծ ազին։ Եւ զայն  
ոչ թէ ո՛յլ ներկ՝ կարմիր կամ կոսիաչ, այլ  
ուեւ. եւ խորագնազգեատ իրը ապաշխարուց.  
Եւ ոչ թէ միայն ուամիկքն եւ շինարկանք կամ  
քաղաքացիք, այլ եւ մեծամեծ իշխանքն Եւ 155  
մեծ եւ հօրն թազաւորն Ազանիու ուեւ ա-  
զանի եւ հետիւսոս երթայ եկեղեցին ամէն օր։  
Զի ամենեքան իմաստունք են, կարուաւորք  
եւ աշխարհականք, նաև շինարկանքն եւ ու-  
սումնառերք։ զի ասաւուածարանք, իմաստնա—  
ռերք, երաժիշտք, երկրաչափ եւ աստեղա-  
զէտք առ նոստ գտանին։ Եւ տաճն տարեն  
ազան ասան բիւր գրամի հաշիւն եւ համարն  
ի մի ժամին կարէ տալ բախամով։ Իսկ ազդն  
մեր յոյժ հովցել եւ զպատիքան Աստուածոյ 65  
մոռացել. զի եւ զանունն Աստուածոյ երրեք ոչ  
յիշեմք. վասն զի բնաւ չունին սէր ուսման.  
վասն որոյ եւ զպատիկան թողուն անձնա-  
պաստան եւ անփոյթ. իսկ նորս մեծացեալ

144 հառաջանու։ — 145 յերկնաշոյեաց... ընթացու։

— 149 քարակուր... յազանին։ — 150 մէտաքսից։ —

157 եկեղեցին։ — 168 յանձնապատճեն։

170 որպէս պախուէք տղէտ եւ յիժարք գործվ՝ ի  
մեզս ծնօղաց եւ ի նախառափնս անձանց :  
Վասն որոյ նուսողեալ պակասեցաւ եւ ֆիջեցան  
կարգաւորք եւ իմաստունք յազգս մեր . եւ  
որք կահն այժմս ամաչեմ կարգաւոր կոչել

175 զեռուա :

Եւ առ այն են բանք իմ , զի նոցա վորքը  
աղայքն բուն վարդապետք են եւ զիտեն զզ ա-  
ւանանքն հաւասարոյ եւ զխոսսովանութիւն ա-  
մենասուրբ Երրորդութեան Հօր եւ Որդոյ եւ  
180 Հոգոյն սրբոյ . այլ եւ զայլ ուսմունս արտա-  
քին զրոց հնոց եւ նորոց , զի ԺԵ տարի ,  
Ի , ԻՒ ուսանին . եւ ոչ թէ մերձ ծնօղաց ,  
այլ հեռաթենակ եւ օտար երկիրս :

### ԵԶՈՒՄԻԴՐ:

Եւ կոյ վանք մի մեծ որ ունի հինգ ,  
185 վեցամբիւր հարեղայք , զոր Եղուիոյ կոչին ,  
այս է Եղբայր Յիսուսի , Յոյժ նախանձա-  
խնդիրք հաւասարոց եւ օրինաց , որպէս Եղիայ :  
Նոքա բուն միիլիսովոսք են եւ առուունձա-  
րանք . օրն երեք անկամ ժամին քարոզ կու  
190 առև . եւ զպրատունն զաս . միշտ զերկնայինն  
խոկան բառ Պօղոսի եւ ոչ ցանկան աշխարհի  
փառաց եւ ողերճանաց եւ ոչ մեծութեան , որ  
ունայն է , այլ զերին արքայութեան . չունին  
եւ ոչ կամին սալթանաթ , որպէս այլազդիքն՝  
195 որ ամենեւին մարմին դարձեալ եւ երկրային :

173 յիժարաւունք վազգու : — 193 յունացի :

Քանդի ոչ է պարտ քրիստոնէից եւ չվայելէ  
ամբարհաւաճել կամ հպարտանալ, ըստ հե-  
թանոսաց, որպէս առէ Առաքեալն թէ Ամե-  
նեքան, որք կամիցին աստուածալաշտու-  
թեամբ կեալ ի Քրիստոս Յիսուս, ի հալու 200  
ծանս կայցեն. Եւ թէ Հայեցարուք ի զօրս-  
գլուխն հուստոց եւ ի կատարումն Յիսուս,  
որ փոխանակ ոք նմա առաջի կայր՝ յանձն  
կառ զիսաչ եւ այլն. զի Տէրն մեր խոնար-  
հութեամբ եւ առքաստութեամբ եկն յաչ-205  
խարհս, եւ թէպէտ թագաւոր թագաւորաց  
եւ Աստուած աստուծոց էր, ի յայրին ծնաւ  
եւ ի մսուր անբանից եղաւ։ Վա՛յ զիս. ապա  
մեք ո՞րչափ հեզ եւ հանդարտ լինելոց եմք,  
որպէս ինքն առէ. Յինէն ուսարուք զի ես հեզ 210  
եմ եւ խոնարհ. զայս խոնարհութիւնս ի  
Ֆուանկսն տեսաք. Եւ զոհացեալ փառս տվաք  
Աստուծոյ, որ այսպիսի փառք եւ մեծութիւն  
ետ նոցա Աստուած։

## ԱՆՆ ՃԱԽԱՆ

Եւ յետ աւուրց ինչ զնացաք ի Սան  
ձուան, որ է Առւրբ Յոհան առեսարանիչն։  
Եւ այն յոյժ մեծ եւ փառաւոր էր, ունէր եր-  
կու սրիգալ. Եւ հազար հիւանդ կայր ի նմա.  
Եւ կայր առջևն բարձր, զեղին մէրմէռէ ար-  
ձան, եւ ի գլուխն ոսկի խաչ։ Եւ այնպէս  
սահմանք է այն երկիրն, զի ամէն եկեղեցոյ

առջեւ սիւն կայ, ըստ սրբոյն Եփրեմին առև-  
լիսն, որ զազօթս սրբոյն Բարսղի իրրեւ  
10 զսիւն լուսոյ հոկո, և լուսու թէ սիւնս ա-  
զօթքն է սուրբ Բարսղի. զի յամենացն եկե-  
ղեցիս ազօթք արդարոց սիւնք էն: Եւ կայր  
այն սեանն ներքեւն ազրիւր մի քաղցրահամ  
եւ արծիւ մի ի վերայ. որ էր սուրբն Յոհանն.  
15 Եւ բխէր կառացէն ջուր յորդ եւ առատ. եւ  
էին երկու զիշտագք յաջմէ եւ ահեկէ, որ եւ  
նոցա բերանայն ջուր ելանէր, նաև ի պոր-  
տոց: Եւ մտեալ ի ներս ահառք զեղեցիկ չէնս  
եւ նկարս զուտր ոսկով եւ արծաթով. եւ կայր  
20 զարմանալի մեծ երգէնն մի, որ ասին թէ  
երեսունն հազար զուռուշ կու նայի. եւ այնպէս  
պայծառ եւ վայելուչ էր, որ աշք հազար  
սիսէր որ վայելէր զշէնքն:

Եւ յարեւելից կողմն կայր եկեղեցի մի  
25 այլ մեծ եւ հին, ի Կոստանդիանոսէ չինեալ.  
եւ ասին թէ անգ է սուրբ Կարսապետին  
պլուսն. զոր այլքն ի Մալթայ առն. եւ Հայքն  
առն թէ ի Գանձառար. եւ մարմին Զաքա-  
րիոյ մարդարէին, հօրն Յովանու. եւ այլ  
30 բազում մասն եւ ոսկերք սրբոց. զոր երկրպա-  
ղեցաք: Եւ այլ յառաջ զնացաք ուր խորանն  
էր առաջ, որ էր նոր զուրգած Հրաշալի. եւ  
կայր ի վերայ սեղանին խորհրդանոց մի զար-  
նիշտեալ փորած եւ ոսկով յցած եւ զանազան  
35 արկամք եւ մարդուրտով ընդելուզած: Հազար

երանի յիշատակ դնողաց տվաք. եւ ասին թէ  
կի՞ Փլորի կու հայի: Այլ կայր առջեւ խո-  
րանին չորս սիւն ազնիւ սփետրէ, զոր ոմանք  
ասին ոսկէջրած է: Եւ կայր խորանին վրայ  
զոււր արծթէ թափած երկոտասան տուր- 40  
քեալս մեծամեծ եւ այլ սուրբք: Եւ ո՞ր բե-  
րան կարէ սպատմել կոմ դին դնել:

Եւ ի մէջ մտառուի մի տեսաք ձիաւոր  
մի, որ ասին թէ Կոստանդիանոսն է, թագ ի  
զլուխն եւ ի ձեռն զօղտօղան: Եւ էին ժամն 45  
այն վաթուուն մեծամեծ սիւնք մարմարիոնէ.  
թող զիոքրկունս, եւ զայլ չինուածս հիանա-  
լիս. զի կարծես թէ մտամբն Աստուծոյ է  
չինած: Եւ ի մէջ տաճարին յաջ կողմն տեսաք  
եօթն ոսկի խնծոր յառաստաղն ծիրանէգոյն. 50  
եւ ասին թէ զատ կոչէ տաճիկն՝ խղբալմայ:

### ՍԱՆԹԱ ՄԱՃՈՐԻ

Եւ մերճ նմին կայր մեծ եւ վառաւոր  
եկեղեցի մի Սանթա Մաճօր, որ է Զոջ Աս-  
տուածածին. ունէր իրեք զմոլէթ եւ կայր  
անդ յայն սնէն, ուր զՔրիստոս կապեցին՝ 55  
երկաթով կապած եւ ծակ թողած. ուր զնար-  
ցեալ զաջլիս եւ զերեսլիս շփեցաք, այլ եւ  
զդէսպէհնիս: Եւ աւագ խորնին երկու կողմն  
մտառուք կայրին, որ ասին թէ անդ բազում  
որբոց նշխարք կան. այլ եւ մասն Մաքլոս 60  
աւետարանչին. որոց լիցի իմ երեսս մո-

61 յոբոց... յերեսս:

իսիք : Եւ յաջ կողմն եկեղեցոյս այժմուս Փատին  
Բազիլուս Հինել կու տար մատուռ մի , ուր  
ինքն պիստոր պառկէր . յոյժ մեծածախ , զի  
65 յորս պատն ոսկով էր ծեփած , նույւ առաս-  
տաղն , եւ ի միջի լաճաբարդ խաղցուցած . Եւ  
գետինն ամէն վուսուսի մէսմէր : Աչք հա-  
զար պիստոր որ վայելէր զգեղեցիկ արվեստն :  
Եւ կայր մեծամեծ որներ ոսմախիք , որ ասին  
70 թէ ոսկոյ պարսովար է :

Եւ այլ յառաջ զնացեալ տեսաք վոռքը  
եկեղեցնակ մի քարէ եւ շուրջ եկեալ տեսաք  
բազում խորանն . Եւ առաջ խորանն բոլոր  
մէրմէռէ կոփած էր՝ սպիտակ որոշէս կաթն ,  
75 զծնունդն Քրիստոսի Եւ զերիս թաղաւորս ,  
զհայրն Յովաէլի եւ զայլ տնօրինսկանսն  
Քրիստոսի հանած էր որոշէս կենդանիս . որ  
զտեսողն հացուցանէր եւ չհառատային թէ  
ձեռագործ է , այլ թէ խուարաթ է կամ փա-  
80 ռացն Աստուծոյ :

Եւ տեսաք եկեղեցի մի այլ բոլորամեւ  
որոշէս Թուրքաց բազանիս . Եւ կայր ի մէջն  
հաւողի այն ուր թաղաւորն Կոստանդիանոս  
մաեալ լվացվելոց էր խրատով գիւթոցն . Եւ  
ունէր վերեւն զմօղէթ ի վերայ մէրմէռէ  
սեանց , նմանն զուռի . զոր այժմ աւազան են  
արարեալ . Եւ որչափ Տաճիկք կամ Հրեայք  
զառնան , անդք մէկրտեն : Եւ կային այլ մա-

85 ծէփաց . . . յառատաղն : — 73 յաւազ : —  
86 զէրեւն : — 86 յայժմ :

առուրք եւ զարժմանաշէն խորանք, որոց երկր-  
պաղեալ երկրամած՝ դարձաք ի տուն։ 90

## Ա. ՄՆՆԴԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Եւ այլ օր գնացաք ի վանք մի բարձր լե-  
ռան վրայ, որ ելք աստիճանաց երկու հարիւր  
էր. եւ ի զլուխքն կային երկու մատակք ա-  
ռիւծք ի վիմէ, որոց բերանոց ջուր բխէր.  
Եւ մտեալ ի ներս յոլով շրջեցաք։ Որ եւ սա 95  
զարժմանալի չէնք էր. ունէր քառսուն սիւն։  
Եւ կայր զմպէթ մի փոքր չորս սեան վրայ.  
Եւ ներսն սաֆի վարախ ոսկի եւ լազվարդ  
աննման յօրինած. եւ գերեզման մի բարձր  
սօմախի. եւ հարցաք թէ ո՞ւմ է. ասին թէ 100  
Հեղինէի մօրն կոստանդիանոսի, որ զխաչա-  
փայտն եղիտ. եւ երկրպագեալ ողջունեցաք  
եւ զարձաք ի տուն։ Եւ ասին թէ այս եկեղե-  
ցիս առաջ է եւ հին քան զամենայն. եւ կոչէր  
Մնունդ եկեղեցին այն. եւ աստի են հարե- 105  
զայք ի Մնունդն Քրիստոսի յԵրուսաղէմ եւ  
ի Բէթղէհէմ։

Եւ աջ կողմն եկեղեցուն էր սարայ մի. Եւ  
ասին թէ աստ նստի պարոնն որ էր տէր քաղ-  
քին եւ Փափին վարքիլ, որ զամենայն մարմնաւ 110  
ւոր զատն նա դատէ, զշնացողս, զգողս եւ  
զայլն. զի Փափին արիւն հեղուլ չի տար։ Եւ  
այլ առաջ տեսաք երկու վիշտապանման հսկացս  
ի մեծ վիմէ. որ ունէին մի մի ամեհի ձիս.

115 Եւ առաջի դարպասին կայր ձիաւոր ավելարէ  
թափած . կօշիկն ի յոտան եւ պողովաս ի ձե-  
ռին . եւ ասին մեզ թէ քաղքին չինողքն են .  
Եւ այլք թէ Կոստանդիանոս թագաւորն է :  
Եւ կից սարային կայր շատրիվան մի , որ ջուրն  
120 ի բազում եւ ի զանազան տեղաց բխէր . Եւ  
վերեւն կայր կոյս զեղեցիկ աղջիկ մի , ունե-  
լով ծաղիկ ի ձեռին . եւ ասին թէ Հռոմացե-  
ցիքն նախ զայս կինս պաշտէին : Եւ աղքերն  
երկու կողմին կային պառկած մեծամեծ  
125 Հռկայք իբրև զվիշառ մէրմէրէ , որ ունէին  
եւ նորա ծաղիկս ի ձեռու եւ սոսս արժանե-  
նեաց , զոր չափեցի միոյն սոսաց բութն թիզ  
մի լայնքն էր եւ երկու թիզ երկայնքն . զի եւ  
զնոսս պաշտել են : Եւ այլ բազում ձիք եւ  
130 կերպարանք մարդոց եւ անասնոց կայր : Կին  
մի էր կոփած մէրմէռէ , որ զլուխն քան զկա-  
րտս մի էր մեծ : Եւ այս ամէնքս կոստանից  
մնացել է . Եւ զրած էր թէ աստ էր թախտ .  
Եւ աստ նոտքին սոսաջին թագաւորքն եւ կայ-  
135 սէրքն . զայս առենոյն տեսանը հիացաք եւ  
փառու ավաք Աստուծոյ . Եւ զարձաք ի տուն :

## Ա. ՊՈՂՈՍ

Եւ այլ օրե զեացաք ուխտ ի սուրբ Պո-  
ղոս , զի էր ի քաղաքէն զուրս միլ մի հեռու :  
Եւ իբրև ելաք պարապէն ի զուրս , բազում  
վանորայս տեսաք յաջմէն եւ ահելիք զհանա-  
5 պարհայն : Եւ հասեալ կէս ճանապարհն տե-

առք մատուռ մի սքանչելի . եւ զուան վերեւն  
զՊետրոս եւ զՊօղոս կոփած , զի զմիմիանս  
համբուրէին : Եւ ասին թէ այս այն է զի յոր-  
ժամ տանէին զՊօղոս զլխատել , հանդիպեցաւ  
Պետրոսի . եւ տեսեալ զմիմիանս՝ լացին բա-  
զում ժամս եւ գրկախառն ողջունիւ համ-  
բուրեալ զմիմիանս՝ հրաժարեցան . զոր այժմ  
այն տեղն եկեղեցի է : Եւ ինչ սրբոյ անուն  
եկեղեցի լինի , զայնոր ամէն տնօրինականքն  
կու հանեն , զի ախմարքն իմանան զէութիւն  
բանին . զի որչափ որ սճամի մարդ լինի եւ  
զիր չի զիտնայ , կու զիտենայ : Եւ մտեալ ի  
սուրբն Պօղոս . եւ էր հին՝ զեռ կոստանդիա-  
նոսէ մնացեալ . եւ ասին թէ երբ զուրբ Պետ-  
րոս կատարեն՝ զայն պիտի սկսնուն նորոգել : 20  
Եւ մերծ զրսի զուանն էր խորան սրբոյն Դիո-  
նէսիոսի . անդ երկրպագեցաք . եւ միւս դիւն  
էր խորան . եւ զրած էր թէ ասու է մարմին  
Աստիանէ կուսի : Եւ մեծ հրաշք եղեւ ի զլխա-  
տումն Դիոնէսիոսի . զի յորժամ հատին 25  
զզլուխն՝ նա էսու ի ձեռս ժամ մի չըջէր  
շուրջանակի եւ ապա եդ զզլուխն եւ հան-  
գեաւ : Եւ կայր մէջ եկեղեցոյն զմպէթ մի դե-  
ղեցկաշէն ի վերայ ազնիւ մէրմէռէ սեանց .  
Եւ մէջն մարմին սուրբ առաքելոյն Պօղոսի , 30  
ազգի ազգի մեծարանօք եւ արծաթի կանթե-  
զօք , որ տեսողքն ոլչուցեալ հային . եւ ի շա-  
ֆափէն աշոյին խամաշմիշ կու լինի : Անդ ան-  
կեալ ի վերայ երեսաց երկրպագեցաք , մեղաց

35 թողութիւն խնդրեցաք, մեղ եւ մէ՛ր ննջեցելոցն: Եւ ապա զնացաք յաւագ խորանն. եւ յոյժ զարմանալի շէնքեր տեսաք. զի խորնին առջեւն ամէն վիտառուսի էր զետինն. եւ ազդի ազգ էր նաշխած ճանաւարք. այլ եւ զՓափին  
 40 մօհըն հանած էր որպէս ի վերայ քարտիզի. քանզի Փափին էր զայն շինել ավել: Եւ թէ հայէր ոք՝ շառաւիզն վայլուն մէրմէրնուն յերեսս զարնէր, որպէս Վանատիկի Սա Մարգոյին. ապա բոլորած էր սպէտրով բոլորն,  
 45 ուր մարդ չի մտէր եւ կոխէր ոտամբք, բայց ի քահանայից պատարագէն: Եւ հուզ նմին կայր սուրբ Խաչ խորան մի յոյժ զօրաւոր եւ հրաշալի. ծածկեալ վարագուրով. բայց ամէն ուրբաթ բանան եւ երբ ուխտաւորք դան, զի  
 50 յոյժ սքանչելագործ է: Եւ գրած էր թէ կին մի մեծատուն եւ երկիւղած յԱստուծոյ միշտ եւ յարաժամ զայր եւ անկանէր առաջի սուրբ Նշանին, եւ ի խորոց սրտէ աղօթէր լալով եւ բախէր զկուրծմն, որպէս մաքսաւորն: Օր մի  
 55 ձայն եղեւ խաչեալ Միածնէն. եւ ասէ. Ով կին բարեհաւատ, թողցի մեղքն քո: Եւ շինած էր զկինն ծնկսած առ սուրբ Խաչն. որ բազում նշանս առնէ եւ կատարէ մինչեւ ցայսօր. վասն որոյ յոյժ պատւի, զի աւուրն ուր-  
 60 բաթի անթիւ բաղմամբոխ ժողով լինի. եւ հարկանեն վոքր զանկակ, բանան զվարացոյրն եւ ժողովն անկանին ի վերայ երեսաց

իւրեանց, որպէս ի ժամ վերացման մարմարոց  
և արեանն Քրիստոսի: Եւ կայր ի նմառ ութ-  
սուն սիւն մէրմէրէ. զի երկայնաձեւ էր նման 65  
Բեթղէմի Մննդեանն, բայց սեւացել էին վասն  
հիութեանն. Եւ մէջ երկոցուն մէծ հոր մի  
կայր :

## SAN PAOLO ALLE TRE FONTANE

Եւ անտի գնացաք Երկու միլ, ուր գլխա-  
տեցին զՊօղոս. եւ քաղքէն չորս միլ. բայց 70  
փոքր են նորա միլքն, որպէս մզոնք կամ ծո-  
վու միլ. եւ նա էր մէծ եւ հին ժամանակաց.  
զոր եւ անդ երկրագեցաք: Եւ կայր մերձ  
Եկեղեցի մի փոքր, ուր պատարագի ժամուց  
անյին եւ ողորմութիւն. եւ մտեալ աղօթե-  
ցաք: Անտի Ելեալ գնացաք Երեք աղբիւրն. եւ  
նոքա փառաւորք էին եւ գեղեցիկ. զոր մտեալ  
ի ներս աղօթեցաք. եւ էին աղբիւրքն հուզ  
միմիանց. այլ եւ արբաք. եւ զանազան էր  
համ նոցա, մինն ջուր, միւսն՝ արիւնահամ, 80  
եւ երրորդն՝ կաթնահամ, զոր հիացեալ փառս  
տվաք Աստուծոյ, որ սքանչելի է վերայ որբոց  
իւրոց: Եւ բերած էր սիւն մի անդ ի Յարու-  
թենէն Քրիստոսի. զոր եւ անդ զթէսրէհնիս  
շիեցաք: Եւ քանդակեալ էր ի վերայ մար-  
մարի գլխատումն Պօղոսի, եւ ահեղակերպ  
զահին մի, ունելով մէծ սուր երկսայրի ի  
ձեռն. եւ ի հատանելին՝ դլուխն ոստեաւ երեք  
տեղ. եւ Երեք տեղով ջուր բխեաց. զոր տե-

90 անալ ճեղատն զարհութեցաւ, անկառ սուրի ի ձեռաց, սակա սկսաւ ճողել զմօրուքն : Եւ միւս զիհն զՊետրոս պլխիվայր խաչեալ . այն ինձայ հանած էր ողորմելի . զոր տեսողացն էր ող-  
բալի :

## BASILICA SAN LORENZO FUORI MURA

95 Եւ անտի զնացաք Մատ Պատարիան եկե-  
ղեցի մի, որ էր անտի նետածիդ . եւ ի ճանա-  
պարհին հանդիպեցաք վանաց մի Աւետուժ  
անուն . եւ երկրապագեալ չուեցաք անտի բա-  
զում և հասաք ի սուրբն Լուրէնմ, զոր Պուր-  
100 իէղ քարտինայն քրոջ որդին Փափին նոր նո-  
րոգել տայր մեծածախ ընշիւք : Եւ շինած էր  
աւագ խորանին բոլորն զետնէն ի վեր յոյժ  
ազնիւ մէոմեռնի, որպէս հայելիք փայլուն,  
որ եկեղեցին կ'երեւէր ի նմա . որ մեք ունէաք  
105 փոքր զաշարիկ մի, որ ամէն հեղ հետ մեզ  
չբջէր . եւ մերձեցեալ ի մէրմէրսն եռես ի նոսա  
զգէմս իւր . կարծէր թէ այլ չուն, հաջէր ի վե-  
րայ . զոր հազիւ լոեցուցաք : Եւ ներքեն կայր  
մազարոյ մի մեծ իրբեւ զբազաք . եւ վասեայ  
110 Քահան իջաք ի ներս . զի սովին թէ ի ժամանակո  
կոապաշտութեան աստ էր թազուցեալ սուրբն  
Սիղրեսորոս, եւ բազում սուրբք ընդ նմա .  
Եւ էր յոյժ խոր եւ խառարշաբն . իրբեւ իջաք  
իլ սռաբինան, անձուկ եւ նեղ ճանապարհ  
115 տեղւոջ մտաք . որ Եւ կանոնին զնալ չկարտ-  
ցաք, այլ կկզելով զլխիվայր : Եւ տեսաք մտ-

դարս մի քան զտուն . եւ չորս կողմին փորած  
էր իրրեւ զգերեզման նեղ , որ եւ գիր կայր  
հոռմի , զոր մեք ոչ կարացաք կարդալ : Եւ  
այլ առաջ գնացեալ երկու երեք մաղարայ ալ 120  
տեսաք . եւ փորած էր մէջն պատերուն , որք  
էին ազօթատեղիք սուրբ ճպնաւորաց . եւ էր  
բազում խորաձոր զետեսիոր ծերազ եւ այր .  
ամէն տեղիս ազօթեալ եւ երկրպազեալ՝ դար-  
ձաք ի տուն : Կային եւ այլ բազում վանորայք , 125  
բայց ոչ կարացաք ժամանել , զի օրն տարա-  
ժամեալ էր :

### SANTA CROCE IN GERUSALEMME

Եւ Երկրորդ օրն գնացաք ի Սանթա Գրոշ ,  
որ է Սուրբ Խաչ . եւ անդ է սուրբ Խաչա-  
փայտն . եւ է քաղքէն ի դուրս . զոր մտեալ ի 130  
ներս , տեսաք զարմանալի շինուածս . եւ էր  
յոյժ փառաւոր եւ մեծ . եւ յաւազ խորանն էր  
պահած Խաչափայտն , ի բարձր տեղոջ . եւ  
բոլորն նկարած էր զամենայն պատմութիւնս ,  
թէ ո՞րպէս գնաց Հեղինէ յերտսաղէմ . եւ 135  
յորժամ մերձեցաւ ի մեծն Հոռմ , նա որդին  
կոստանդիանոս ել ընդ առաջ նորա բազում  
քահանայիւք եւ յոքնախումբ ժողովրդովք ,  
ոյլ եւ շատ հեծելազօրօք . եւ ինքն զգեցեալ  
ծիրանիս ականակուռ անդին պմնեալ թագ ի 140  
դլուխ , հեծեալ ի սպիտակ ձին ոսկիակազմ  
ուսնձիւք եւ ակամբ մարզարտովք շարեալ  
դանդանաւանդօք , ինկօք եւ մոմեղինօք եւ

123 յայր : — 143 դանդանաւանդօք :

ամենայն զարդիւք, երկրպաղեալ սուրբ Խո-  
145 չին եւ էստ յաջ ձեռն ի վերայ ձիուն զպար-  
ծանքն Պօղոսի՝ գայր հախ ինքն եւ առաջ մայրն  
զկնի. եւ այսպէս մեծաշուք փառօք մտին ի  
քաղաքն եւ անդ Հանգուցին զուրբ Նշանն եւ  
շինեցին ի վերայ զեկեղեցիս, ի փառս սուրբ  
150 Խաչին. եւ կոչեցին Սուրբ Խաչ. եւ է անդ  
մինչեւ ցայսօք. զոր եւ մեք արժանի եղեալ  
բաց աչօք տեսոյ նորաց՝ ազօթեալ մեզաց թո-  
ղութիւն խնդրեցաք մեզ եւ մեր ծնօղաց եւ  
ամենայն արեան մերձաւորաց եւ երախտաւո-  
155 րաց :

Եւ այսպէս սահմանք է որ ամէն ուխտա-  
ւոր զայս եօթն եկեղեցիքս պիտոր քայլեն, զի  
սոքս են մեծ եւ աւագ. իրեքն ի քաղաքն եւ  
յորս ի զուրս. բայց րոկ ուստիմք եւ հետիոտս,  
160 մեծուր զզֆմամբ եւ Հառաշանօք: Բայց իշ-  
խանք եւ մեծամեծք ձիօք, զորօք եւ կառօք  
չրջին եւ սոցս հանապարհն միւ մզնն է:

### DOMINE QUO VADIS

Եւ տեսաք եկեղեցի մի ալ զիմաշէն հին,  
նման Երուսաղէմայ սուրբ Յարութեանն, Հե-  
165 զինէ շինած. եւ մերձ ի զուռն քաղքին մա-  
տուռ. մի տեսաք վոքրիկ, որ զՔրիստոս ընդ  
Պետրոսի քանդակած էր, իրը թէ զրոյց տային  
միմիանց. եւ ասին թէ այս այն տեղն է, որ  
Քրիստոս Պետրոսի Հանգիպեցաւ յորժ ամ  
170 փախչէր Երկուցեալ ի Խաչէն. Եւ տեսալ

154 յարեան: — 158 յուազ: — 160 Հառաշանօք:  
— 164 յԵրուսաղէմա: — 167 պիտոր քանդած:

զՔրիստոս ասէ . Ո՞ւր երթաս Տէր իմ . եւ նա  
ասէ . ի Հռոմ խաչիլ : Ասէ Պետրոս . Տէր  
միանգամ խաչեցար եւ դարձեա՞լ կամիս : Եւ  
ասէ Յիսուս . Դու ոչ կամիս խաչիլ . ես վասն  
քո խաչիմ : Եւ իմացեալ Պետրոս զրանն ան-<sup>175</sup>  
կաւ յոտս Յիսուսի եւ ասէ . Տէր իմ եւ Աս-  
տուած , ոչ միայն նման քեզ խաչեցաց , այլ  
գլխիվայր նման Աղամայ : Եւ Յիսուս յայնժամ  
անյայտ եղեւ : Եւ Պետրոս զօրացեալ դարձաւ  
ի քաղաքն ուրախութեամբ , զոր կալեալ զնա <sup>180</sup>  
դահիճքն տարան առ պեղծն Ներոն . եւ նա  
հրամայեաց խաչել . եւ տարեալ ի տեղին մա-  
հապարտաց կամէին խաչել զնա . եւ նա աղա-  
չէր զդահիճան , թէ Մի զիս ըստ Տեսոն իմոյ  
խաչէք գլխիվեր , զի չեմ արժանի , այլ գլխի-<sup>185</sup>  
վայր . եւ անօրէնքն այնպէս արարին : Եւ ինչ  
բան եւ զործ որ տեղ որ եղել է , նա զամէնն  
դրած եւ նաշխած եւ քանդակած է եւ եկեղե-  
ցիք շինած : Փառք Աստուծոյ անզրաւ : Եւ  
եկեալ ի տուն հանկաք աւուրս ինչ : <sup>190</sup>

SAN GIUSEPPE DEI FALEGNAMI,  
CARCER MAMERTINUS

Եւ զնացաք օր մի ի բանան Պետրոսի . որ  
էր վառաւոր եկեղեցի . եւ մտեալ ի ներս՝  
տեսաք զրնակութիւնս հարեղացից , վայելուչ  
եւ ծաղկաւէտ իրրեւ զդրախտն Աղամայ : Եւ  
ցուցին մեզ մատուռ մի գեղեցիկ բոլորածեւ . <sup>5</sup>  
եւ զգուռն բոլոր երկաթապատ . եւ ասին աստ

կան չղթայքն Պետրոսի . և խնդրեցաք վա-  
նաց Հօրէն , որ երաց մեզ և եցոյց մեզ  
զշպթայս և զիննիլին խնկարկութեամբ և բո-  
10 զում ջահիւք և մամովք , զոր ահիւ և գողու-  
թեամբ և աղօթիւք անցուցին ի զիզս մեր  
ամենիս : Եւ զայն պահեալ՝ բերին մեզ Ան-  
գրէի առաքելոցն իսաչափայան , որ պատաժ էր  
խառիֆուզ . զոր խնդրութեամբ Համբուրեցաք  
15 և երեսիս շվիեցաք . և զի հին էր և մաշած ,  
արծաթին անցուցել էին :

Եւ անտի Եկաք ի Սան Տօմէնիք . որ և  
առ մեծ և վաստառը Եկեղեցի է . և յայնա-  
նիստ , ի բարձր լեռան վրայ , սալարականց  
20 զիմօք : Եւ մերձ այս վանիցա էր վանքն  
Ալէքսիանոսի ճգնաւորի . և մասեալ ի ներս  
տեսաք զզեղեցկաշէն տաճարն . և տարան  
զմեզ ի խուզն , ուր ԺԲ ամ ճգնեցաւ . յարում  
զրած էր ամէն տնօրինականքն . և էին տախ-  
25 տակքն և սիւնքն Հեացեալ : Եւ անտի տա-  
րան զմեզ ի զօրաւոր պատկերն Աստուածած-  
նին , ուստի ձայն և թէ Մուծէք այսր զմարզն  
Աստուծոյ . և գրած էր զհայր և զմայրն . և տա-  
30 տառաւոն ուր ծնօղացն զերեզմանքն էին . զոր  
երկրպագեալ մեզաց թողութիւն խնդրեցաք :  
Եւ այս վանքեր ամէն ի զերայ լերին էին . և  
զետն առջեւովն կ'երթայր :

Եւ անտի Եկաք Թրիգոր Ակոսիօնացոյն  
վանքն . և տեսաք բանոն և աղօթատեզն .

7 Հիսթայք : — 9 զէիսթայս : — 12 Անորէի : —  
19 զրու : — 32 կերպայր :

Եւ ուր պատուհասեցաւ Սարինոս քահանայն 35  
 Եւ Կրիսկինդոս սարկաւագն եւ ամենայն  
 զրովարտողացն երեսնին սեւ Եւ կլափինին բաց  
 Եւ մարմինքն ի մէջ հրոյն այրեցեալ . զոր  
 սուրբ գերեզման նորա աղօթեցաք : Բայց  
 սմանք ասեն թէ Ակուակօն կզզի է մերձ Մալ- 40  
 թայու . անդ է գերեզման սրբոյն :

## SANT' URBANO

Եւ այլ առաջ զնացեալ տեսաք բոլորաձեւ  
 զմոլէթաշէն Ակեղեցի մի նման թուրքի բա-  
 ղանեաց , ներսն որպէս հաւուզ եւ շուրջ զնո-  
 վաւ մէրմէռէ սըներ . Եւ Աղամայ մինչեւ ցայ- 45  
 սօր ինչ սուրբ որ եղել է եւ ինչ չարչարանք  
 որ կըել է , զամէնն նկարած էր դեղովք ի  
 չորս յորմն , զոր տեսեալ մարդիք զայնպիսի  
 աղիողորմ կսկծալի զառն տանջանս , զղջայր  
 սիրտն եւ աշացն արտասուս հանէր . զորս ի 50  
 զիւոյն ի վայր սղոցեալ , զայլս ի մէջ վիճաց  
 եղեալ որպէս ի մամուլս , որ աչփին , ուզեղն  
 եւ աղիքն ի դուրս վաղել էր , ոմանց ձեռս եւ  
 ուսս հատեալ , այլոց զիեղուն , կիսոց զստինոն  
 քալիատնով ցետեալ , այլոց զոլոքսն ճժիկալ , 55  
 զայլս քերանօք քերեալ . եւ զայլս երկաթի  
 ճանկօք պատառեալ . եւ զայլսն այլ իմն մա-  
 հուամբ ի կենաց հանեալ , որպէս զրեալ է ի  
 պատմութիւնս նոցա : Եւ այնպէս հոգեսէր եւ  
 ասուածասէրք են , որ զատ մեծ եկեղեցեաց 60  
 եւ վահօրէից՝ ամէն փողոցս մատունի էր

շինած, երեք, չորս եւ հինգ եւ մին քան զմին  
դեղեցիկ եւ պատվական :

## ՊԼԱԹՈՆԻ

Եւ անտի մասք յեկեղեցի մի զմոլիթա-  
ցէն կամարակապ, յոյժ լայն եւ մեծ. Եւ  
զմոլիթին խուզան տափարակ որովէ ո մէջիթ-  
նուն. Եւ ասին թէ կռապաշտից շէնք են, զոր  
ի տօնի կռոցն անդր ժողովէր բազմութիւն  
արանց եւ կանանց զոհել դիւաց. Եւ այնպէս  
մեծ հարու է Եւ վերին կամարն ի բոլորն հու-  
ճուրայք բազում. զոր մարդն մտեալ ի ներսն՝  
սասանի. Եւ այն առանց սեան, թէպէտ յոլով  
սեսաք յայլ տեղ՝ Պուրատ եւ Կեսարիայ, առա-  
սորս պէս ահարկու եւ զարմանալի չկայ. որ  
այժմ եկեղեցի է Եւ անուն Ամենայն սրբոց  
տօն զրած, զոր առաջն ամենայն դիւաց տօ-  
նէին: Եւ ի զրաց դիհն ի ժամատունն Ը սիւն  
կայր հասու եւ երկայն, զոր շատիւալ երեք  
խուլան ելաւ հաստութիւնն, եւ եօթն երկայ-  
նութիւնն: Եւ ունէր մեծ զուռ մի երկու  
փեղկէ մեծ քան զեյյա Աօֆու լայնքն, երեք  
խուլան եւ երկայնքն հինգ. Եւ ազնիւ սփետ-  
րով պատած զգուռն, զոր ոմանք ասին թէ  
ոսկով խառն է. Եւ զայս զուռս պիտի զնեն  
Յարութեան ի ժամանակս քրիստոնէութեան:

Եւ հուազ ամին կային եկեղեցիք եօթն  
միտուեղ :

Ապա զնացեալ սեսաք զարայրն Աւլիս-

նոսի, Դիոկղիտիանոսի, Մաքսիմիանոսի,  
Ներսնի և այլ կայսերացն կռապաշտ. բայց 10  
աւեր և ամայիք էին, միայն հիմունք և  
համարանք կ'երեւէր. և զայն թողած էր ի  
նշան և ի հիացումն տեսողացն մեծամեծ եւ<sup>100</sup>  
լայնանիստ, մարմար սներով, վէմս և սայլու  
և քարինս քանդակեալ ի կերպս ազգի ազգի  
զազանաց և վիշտապաց և հոկայից, զոր  
խափսեալք և ցրվեալք էին ի այլ և այլ ս-  
նարգ և անսպիտան տեղիս:

ԿՈՂԱՍԵՐՆ ԿԱՄ ՓՈԱԽԵԱԿՆ ԱՐԳԻԹԵԱՏՐՈՒ

Եւ կայր սարայ մի այլ, մեծ և լայնա-  
նիստ, բոլորակ որպէս խութի, բարձրու- 100  
թիւնն տասն մարդարոյ. և մէջն ամէն տներ  
կայր. և օտանի բոլորն երկու, երեք տակ  
մինչեւ ի վերն. և ամէն սպիտակ մէրմէր էր.  
և ասին թէ աստ զրօնութին ամենայն թաղա-  
ւորքն առաջին. զի մէջն այժմ զազանք պա- 105  
տառողք էին. զոր և տաս տաեն զազանաց  
արկեալ զիգնատիսու: Այլ և տեսաք զսարան  
կոստանդիանոսի սուրբ թաղաւորի. յոյժ ու-  
ղեցիկ և վայելուչ բարձր տեղով, բայց կէսն  
փլել էր: Եւ մերձ եկեղեցուն էր տունն Պի- 110  
դատոսի որպէս զարպաս, մեծ և բազմայար-  
կեան, զոր փլած էր և խոտնոց արած ձիոց  
և երիվարաց: Եւ կայր խաչածեւ ճահապարհ.  
ի վերայ չորս կողմն չորս հոկայք մեծամեծք.  
և առաջի նոցա ազրիւրք, որ ի ձեռս իւրեանց 115

91 յամայիք: — 93 մեծամէծ: — 104 սրօնութին:  
— 107 զինքնատիսու: — 115 զոր:

ունիքին արժաւենիս , այլքն ձիթենիս և զայլ  
ծաղիկն և ժժմունս , զոր յառաջն պաշտէին  
զեռ ևս կուսակաշիցն մետքեալք : Եւ կայր  
երկու սիւն մեծ մարմարէ , որպէս Ստամագո-  
120 լայ Արքաս պազարին . միոյն վրայ սուրբն  
Պետրոս բանալին ի ձեռն , և միւսն սուրբն  
Պողոս ազնիւ սփետրէ ոսկէջրած , հեռու ի  
միմիանց . մինն ի մէկ զուսն պարապին , և  
միւսն ի միւսն , որ հեռաստանէ փայլ զփայլի  
125 ուսոյթն :

Եւ Հայոց Եկեղեցոյ անունն Սանթա Մա-  
րիայ Էիրէիցքա , որ է Մարիամ Եպիպտացի :

Եւ օր մի անցաք ի այն կոյս զետոյն միւս  
կողմն , զի այս ամենայն զոր զրեցաք՝ կէս  
130 քաղաքն էր : Եւ տեսաք Եկեղեցի մի զարմա-  
նաչն ճիցիլոյ անուն , որ է Եթէկիլիսայ կոյսն ,  
յոյժ փարթամ և հարուստ ժամ . քառուն  
մեծ կանթեզ համրեցաք արծաթիս . և երե-  
սուն շամտան և ամէն շամտանի ներքեւ մին  
135 մին արծաթի սկուտեղ . և ի զետնափոր յայրն  
մարմին էր որբունյ կուսին , ներքեւ սեղա-  
նին , սաֆի սօմախի մարմարով զուկած որ  
կարծէր մարդ թէ վայըլուն Հայելի էր : Եւ այլ  
քաղաք չէնս և նկարս տեսաք , զոր ոչ արկաք  
140 ընդ զրով վասն չձանձրանայոյ կարգացողաց  
և լուղաց : Եւ անտի զնացաք ի վանքն ուր  
զՊետրոս խաչեցին , որ էր մեծ և փառաւոր  
Եկեղեցի ի բարձրաւանդակ տեղով . և անտի  
ամենայն քաղաքն որպէս ինձոր կ'երեւէր : Եւ

123 ի միանց : — 124 փայլափայլն : — 131 կէկիլիս :

մտեալ ի ներս տեսաք բազում շինուածու . եւ՝ 145  
մտեալ ի խաչելութեան տեղն ԺԲ: աստիճան  
ի խոնարհ . եւ էր որպէս թուրապայ կամարով .  
եւ դրսէն սներովք զարդարեալ . եւ դեռ այն  
երկու սիւնն կայր, որոյ վրայ խաչեցին զնաւ .  
զոր անկեալ ի վերայ երեսաց ազօթեցաք 150  
երկրագաղութեամբ . եւ մեղաց թողութիւն  
խնդրեալ մեզ եւ մեր ծնողաց՝ դարձաք ի  
տուն :

Եւ այլ օրն եկաք ի վանքն Բարթողի-  
մէոսի առաքելոյ, եւ անդ ազօթեցաք եւ մե- 155  
զաց թողութիւն խնդրեցաք մեզ եւ մերոցն .  
եւ ելաք ի սեղանն ուր կայր մասն սուրբ մար-  
տինյն ի մէջ մէրմէրի սրնարկին, երկաթով  
պարապնուած . եւ զիշեր ու ցորեկ արծթէ  
կանթեղ կու վառէր ի վրայ : Եւ մերձ այս վա- 160  
նիցս՝ հուսպ միմիանց չորս վանք կայր, մի  
քան զմի գեղեցիկ : Եւ այլ բազում վանորայք  
եւ Եկեղեցիք կային, զորս ոչ կարացաք զրել  
եւ ոչ զնալ :

Եւ այլ յառաջ կայր Եկեղեցի մի մեծ՝ Այս 165  
Սոֆու նման, ի մեծ մօյտանն, զոր ունէր  
հաստ սըներ եւ երկայն : Եւ նետածիդ մի այլ  
առաջ գնացեալ ամսաք աղբեր մի շատրվան,  
որ իրբեւ զգետ շըշնչայր . եւ կային մերձ աղ-  
րիւրն երկու մտամակ առիւծք, որ ի բերանոյ 170  
նոցա բխէր յորդ ջուր . եւ կոփած էր մին  
կողմն քարէն մեծ եւ մօրվաւոր զՄովսէս  
մարդարէն, եւ միւսէ՝ զԱհարոն : Եւ հանդէս  
նմին Եկեղեցի մի աղնիւ՝ Երուսաղէմայ սուրբ  
Յարութեանն նման, չէնքն, ձեւն եւ օրինակն . 175

Եւ ի միջի նոցաւ տեղիք ուրբը զերեզմանին եւ  
նկարքն ուղևոյիր :

## ԱՎԲԵՐՔ ԵՒ ԱԽԱՉԱՆՔ

Եւ կոյր ի Հռոմ աւելիք քան տասն հազար  
չէ այս , ամէնեւ զեղեցիկ եւ պատուական ,  
180 հաւուզով եւ շատրվանով . որ եւ նոքա յոյժ  
ողորմածք եւ զիմած : Եւ ամէն աղբիւր ազգ  
մի թամաշաւ ունէր . եւ ջուրն երկու , իրեք  
մզրախ թուչէր : Այլ եւ տեսաք խէտուածէաւ ա-  
րանց մէրմէրէ մեծ հաւուզ մի որպէս սէնի ,  
185 եւ չափեցաք՝ տասն խուլան երաւ : Եւ այլ  
զարմանաշէն աղքերք կային . ոմանց շատր-  
վանն մերկ վուքը աղայք ունէին ի վերայ  
դիմոց եւ խազային ծիծաղելով բնդ միմիսնու ,  
որպէս կենուանիք . այլ անզ եղջերք ի վերայ  
190 երկու ոտաց վերացուցել են . եւ այլ հաւու-  
զից բոլորն շարել են բազեր , սազեր , որոց  
բերանոց ֆուր բխէր . եւ այլոց օձիցն պորտոց  
ֆուր ելնէ . եւ ոմանց աղջկանց պորտոց . եւ  
ամօթ անզաց երեէ ջուր եւ ի ոտանց . եւ  
195 աղայոցն ծածուկ անդամոց :

Եւ շարշու մի կար մեծ հաւուզ . եւ բո-  
լորն ազգ եւ ազգ ահապնատեսիլ մարդիք եւ  
զարշատեն պատուք . ոմանք վուզ հարկանեն ,  
մինչ զի թուշքն ուսուցեալք կարծես եթէ  
200 ճշմարիստ վուզահար է . բայց աւազ որ ջուրն  
առ նոսաւ խրցմաթ չունի , միայն զրտստից  
տան եւ եփելու համար : Եւ երբեմն յամա-

ուսյնի ի ժամ տօքից տեսեալ զսառն եւ զցուրտ  
ջուրն կամէաք ըմպել . թոյլ չետուն մեղ , թէ  
չինի ըմպէք , զի մեռանիք . եւ բերեալ դինի 205  
տային մեղ : Հազար ափսոս զայն հաւուզնին  
եւ զքաղցրահամ աղբերս եւ ջուրս բարեհամս ,  
որ անդ անարդ է , զի բնաւ չըմպեն ջուր ,  
բայց դինի . եւ ով ըմպէ՝ կարծեն թէ մեռանի  
ջրէն . բայց մեղ կենդանութիւն է ջուրն : 210

ԶՈՒ ՓԱԼՓԻՆ Խ Ա. ԳԵՏՐՈՍ ՅԱԽՈՒԹ Ա. ՄՆԿԴՆԱՆ

Եւ գեկումբերի ին , որ նոցա Յայտնու-  
թիւն է , բերին վարդապետին<sup>1</sup> երկու ձիով ա-  
րասույ . եւ մեծարեցին ժամին սուրբ Պետրոսի .  
ուր Փափին պատարագ պիտի առնէր . եւ տե-  
սաք զի այն օրն զրուն եկեղեցին զարդարած 5  
էր զուն զգուն լիպասոք եւ զանազան ծաղկօք  
եւ կանաչ տերեւովք եւ ոստովք ձիթենօք եւ  
արժաւենօք : Եւ այնուէս բազում եւ անթիւ  
էր ամբոխն , զի ոչ կարացաք մտանել ի եկե-  
ղեցին , մինչեւ սպասաւորք Փափին մերժե- 10  
լով զժողովուրդն հազիւ կարացին մուծանել  
զմեղ մերժ առ Փափին . եւ տեղին ուր Փափին եւ  
զարտնալքն էին , մեծ եւ լայնանիստ ի յաւագ  
խորանն , որպէս եկեղեցի մի , եւ բոլորն ուստ  
էր քաշած մուշապախ ժողովուրդին դիհաց , 15  
զի ամբոխն շի նեղէ զՓափին : Բացին զդուռն  
եւ մեք մտաք ի ներս . եւ զուգած էր Փափին

207 բարէ համ : — 208 չմակեն :

6 քուն : — 7 տէրեւովք : — 8 յարժաւենօք : —  
12 չի՛ առ : — 16 յամբոխն :

<sup>1</sup> Այս ինքն՝ Զաքարիա վարդապետի վանեցւոյ :

տեղն ինն աստիճան բարձր քան զայլոց . Եւ  
ի վերայ գլխուն զմոլէթ սպնիւ Եւ զարմանա-  
20 չն : Եւ էր նստեալ մեծադին ոսկիակազմ ա-  
թոռ : Եւ կայր մատուռն այն վեց սիւն , սուրբ  
յերուսաղէմայ բերած . որն սուրբ Յակոբայ ,  
զորն Սոդոմոնի տաճարէն : Եւ այն սներուն  
վերայ զմոլէթ էր Եւ մէջն սեղան . Եւ սեղնին  
25 առջեւն ապրըշէմէ մեծ տիվան խալի մի  
սփուած էր մեծադին : Եւ այն տեղն չինած  
էր երեքտակ , բոլորն ամէն նստատեղ . ներ-  
քին քորեպիսկոպոսաց , որ կոչին պօնսինօք .  
Ժիջինն վասն արքեպիսկոպոսաց Եւ վերինն  
30 վասն գարտինալաց : Եւ իրրեւ անցաւ ժամ մի՝  
րերին Փափին չորս թագ զարմանալի . Երկուսն  
մափուկ որպէս մերս . Եւ Երկուսն՝ բոլորս-  
ձեւ , երեքյարկեան որպէս սաղաւարտ , Եւ  
այնպէս խոշոր Եւ մեծ ակունք կային շարած  
35 ի նմա , լալ , ալմաս , զըմբութ , հաղութ : Եւ  
ասին թէ մէկ թաղն հարիւր հաղար Փլորի  
կ'ամէ : Եւ կոյր ի վերայ սեղանին Երկուսա-  
սան առաքեալք . արծաթէ թափած մարդա-  
չափ . Եւ բազում շամատանք արծթէ մեծա-  
40 մեծք , ոսկի որկիք ակամբք Եւ մարդքառզք  
ընդելուզեալ . Եւ այլ անթիւ սպասք Եւ ս-  
նօթք . մինչ զի կայծառք , լականք , ջրամանք ,  
կրակամանքն արծաթի էին , յորոց վրայ մինչ-  
45 զեռ պշաւցեալ հայէաք , երեր Եպիսկոպոսն  
խաչ մի մեծ ի վերայ Երկայն ձողոյ , բուն  
պատւանդանն Եւ ոստն արծթէ . Եւ կանգնե-

24 վերա : — 33 յերքյարկեան : — 46 պատւան-  
դանն :

ցուցին առաջի սեղանին . Եւ ասին թէ ահա  
Փափին կու զայ . զի ամէն տեղ Խաչն է Փա-  
փին կարապետ : Եւ զինուորքն զամբոխն  
ցրվէին շատիզ առնելով : Ապա սկսան նախ իշ-  
խանքն զալ եւ զկնի քահանայք Եւ կարգա-  
ռորք . առաջ եպիսկոպոսք , զկնի պօնսինօրք .  
Եւ առաջ զարտինալք . Եւ յետ ամենայնի  
Փափին : Եւ էր նստեալ ի մաֆան վեց եպիսկո-  
պոսաց բարձեալ . որպէս Հայք ի մեծի աւագ 15  
Հինգչարաթին յոտն լուսցին բառնան զեպիս-  
կոպոսն կամ զքահանայապետն . զի այսովէս է  
սովորութիւն , յորժամ յեկեղեցիս Երթայ ,  
մարգիք բառնան . իսկ ոյլ տեղ ջորովք : Եւ  
ուր մերձէր՝ անկանէին ի ծունկս եւ զգլուխան 60  
խոնարհեցուցեալ աղաղակէին առելով . Օր-  
հնեա՛ սուրբ Հայր : Եւ նա ի վերուստ խա-  
չակնքէր եւ օրհնէր : Եւ եկեալ առաջի սեղա-  
նոյն էջ յաթոռոյն եւ ծունր եղեալ աղօթեաց  
Եւ Երկրագեալ դարձաւ ի ժողովուրդն , խաչ 65  
հհան . Եւ ողջոյն ետ զարտինալաց : Եւ ամե-  
նեքին երկիր պազին նմա . Եւ տարեալ հան-  
գուցին զնա ի սահմանեալ տեղին : Եւ իբրև  
բազմեցաւ՝ նախ ներքին եպիսկոպոսքն ելեալ  
զնացին եւ համբուրեցին զոտն Փափին . Եւ 70  
ընդ կրունկս յետս եկեալ նստան . առա ելին  
պօնսինօրք եւ զծունկն համբուրեցին . ապա  
զարտնարքն զաջն համբուրեցին : Եւ իբրև  
կատարեցաւ ողջոյն , աղուցին Փափին շուր-

75 ֆառ մի որովէս վիթոն, յոյժ մեծազին զիստ -  
զոր իւրեանց լիզուաւ «ալթէմպաս» կոչեն -  
կանգունն երեքհարիւր դուռուշ. սպիտակ  
իրրեւ դմբին, որը փայլիք որովէս հայելի. և  
ունէր խաչաձեւ կոճակ մի եւ մէջն ակն մի  
80 զմբուխտ անզին. եւ զլուխն եղին թագ մի  
կամարաձեւ երեքյարկեան, աղնիւ եւ ան-  
զիւտք. եւ ունէր մասն սոկի մատանի ալմաս  
ակնով, որ վառէր իրրեւ դմբագ: Ապա սկսան  
զարտնալք, զինի եղիսկողովոսք, ապա սզն-  
ամինօրք շուրջառովորիւ. եւ կանզնեալ յոտին  
եղին զթագս ի զլուխս Փատիին բոլորով: Եւ  
մերձ Փատիին յաջ դիհն Սպանիու թագաւորին  
էլջին էր եւ ձախն Կայսեր. ապա զինի ոյլքն.  
զի ամենայն թագաւորք վէքիլ ունին մօտ Փա-  
90 տին, սիրոյ եւ հնազանդութեան ստկի. եւ  
ամէն իրեք տարի փախին, որովէս Ստամազ  
եւ ի Հայրաց. եւ լուցեալ յահս եւ լազուրո  
եւ սպիտակ մռմ եւ կիրոն:

Եւ յորժամ ազօթէր Փատիին կամ աւետա-  
95 րան կարգայր, ամենեքին երկիր որսպանէին:  
Եւ էր սօնսինօրաց թագն թաճն միամիերթ եւ  
տափակ մին խաչիւ. եւ արքապիտիուպոսացն  
րաց եւ տափակ երկու խաչիւ. խակ գարո-  
նալաց երկնոյի, եւ ոյլ պատվական: Եւ յոր-  
100 ժամ կացին ազօթս ընդ Փատիին եւ բոլորեալ  
պար առնէին՝ բազմութիւն թազից պազպա-  
ջուն ահացուցանէր զանուզ, զի նման էր ա-

Հաղին առենին : Եւ յորժամ սկսաւ Փափին  
պատարագել, եւ դպիրքն եղանակէին : Այլ եւ  
ունէր Փափին վարպետ մի եւ ժամասաց, դա— 105  
թըմ մի որ խիստ անուշ ձայն ունէր, նման  
հրեշտակաց կամ թէ Մամասայ . եւ յորժամ  
նա երդէր՝ այլքն լոէին . եւ ասին թէ սա յի-  
սուն գեկան ոսկի ունի օլօֆայ ի Փափին ա-  
մէն շարաթ : Եւ այսպէս ամէն եկեղեցի կայ 110  
վարպետ մի քաղցրանուագ, բայց սորու նման  
չտեսաք . ով ոք լոէ՝ զմայլի եւ թըմրի : Իսկ  
հնչմունք զանկակաց եւ ձայն երդէհոնաց,  
փողոց, թմպկաց եւ այլ նուազարանաց լոելի  
լինէր ի քաղցրն ամենայն . եւ խլացուցանէր 115  
զունկն լոռջաց եւ զուարձացեալ խոյտային  
հոգով եւ մարմնով մարդիք :

Եւ իրեւ կատարեաց զսուրբ պատա-  
րագն՝ Հաղորդեցոյց զիշխանս եւ զորս ինքն  
կամեցաւ ի ձեռաց իւրոց : Զոր աղաչեմ 120  
Տեսոն Աստուծոյ օգնական լինել ամենայն  
հաւատացելոց, մանսւանով մեզ Հայոց : Եւ  
զկնի պատարագին բերին մաֆան եւ նստաւ ի  
վրայ . եւ իրեւ մասս ի սարան, սկսան թօ-  
փեր նետել, թուֆաքնի եւ փողու հարկանել, 125  
շատլիս եւ ուրախութիւն առնելով . եւ զին-  
վորքն եւ աղատքն զդէցեալ էին զրեհ եւ սա-  
զաւարսս ի զլուխս, ոմանք մերկ սուր երկ-  
սայրի ի ձեռս ունելով, այլք գեղարդք, վա-  
խանք եւ նիզակք, որ փայլզիսյլի տային եւ ի 130  
ձառագայթից արեգական պշնուին աչք Հայո-

զաց : Այսպիսի էր պատիւ և վառք Փափին .  
որպէս ի հինն Խորայէլ զտապանակ ուխտին :  
Եւ եղեւ մեծ ուրախութիւն ի քաղքին օքն  
135 այն . Եւ մեք գնացաք ի տուն :

Եւ կայր ի Հոռմ եօթն խուլոյ նման  
Ստամպուայ . բայց սոքա զատ և հեռու մի-  
միանց եւ այլ բարձր . Եւ այնպէս թէսնիֆած  
էր , որ ջուր ելանէր մինչեւ ի զաղաթին ար-  
140 ճընով առաջին ժամանակն . բայց այժմ աւե-  
րած է . ապա խողավակքն դեռ եւս կ'երեւին .  
վառք Աստուծոյ ամէն :

Յայսմ ամի վոխեցաւ առ Քրիստոս  
145 Խայսրն քրիստոնէից՝ ալաման , բարի մահ-  
վամբ , Մաթէսո անունն <sup>2</sup> :

Եւ կայր մերձ Ման Փէտրու վոռքր եկե-  
ղեցի մի , որ լի էր ոսկերօք մեռելօք . Եւ  
մտեալ ի ներս տեսաք զի մի ի դրան վերեւն ,  
պատն ի վեր կանգնեցուցած , մազն եւ մո-  
150 րուքն ի վրայ : Եւ տեսեալ զայն Հարցաք . Եւ  
ասին մեզ թէ եկեղեցիս այս զերեղմանատուն  
է Հիւրոց եւ օտարաց , այլ եւ պահտիտոց . զի  
զնոսա աստ թաղեմք . Եւ մինչ ի՞ն ժամն Հալի  
եւ Հաշի միսն եւ մորթն , միայն ոսկըն մնայ .  
155 իսկ սա տեղացի գոլով՝ խարեց թէ յետոյ և՛  
եւ օտար . Եւ ընկալան զնա . Եւ յորժամ մե-  
ռուտ՝ թաղեցին անդր . իսկ նա չի վրտաւ ,  
այլ այնպէս մնաց որպէս տեսանէքդ ի Հրաշ

150 վրա :

<sup>2</sup> Կօսքը Գերմանիոյ Կայսեր Մաթէիտոի (1612—  
1619) մասին է . Միժէսն Շյայսմ ամիշ ըսկով կ'իմա-  
նաց 1619, երբ կը խօժագրէր ի Լեհս ուղեգրութիւն :

տեսողաց եւ ի հիացում : Եւ հարցաք թէ վասն  
է՞ր է հրաշտ այս . եւ ասին թէ ջառներուն հող<sup>160</sup>  
է բերած աստ որ Քրիստոսի զնոջ արծաթով  
գնեցաւ . եւ այլք ասին թէ այն հողուն է բե-  
րած , որ հեղաւ պատվական արիւնն Քրիս-  
տոսի ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ , վասն  
որոյ սքանչելիք եղեն :<sup>165</sup>

Այլ եւ ցուցին մեզ զՔրիստոսի դաստա-  
ռակն , զոր ազօթեցաք եւ մեզաց թողութիւն  
խնդրեցաք : Եւ ինչ տնօրինականք կան եւ  
չարչարանաց տեղիք , թէ անօթք եթէ բեւեռք ,  
թէ զեզարդ , սուրբ խաչափոյտ եւ այլն , այլ<sup>170</sup>  
Եւ սրբոց ոսկերք , նշխարք եւ մասունք բարդ-  
մահայլք աստ է հաւաքած , զորս զնելով , զորս  
գողանալով . զի ամենայն եկեղեցիք լի են ոս-  
կերօք Եւ նշխարօք սուրբ վելայիցն :

## ԳՈՐԾՅԱՅԻ

Եւ ունէր Փափն ՀԲ դարտնալք ըստ ՀԲ  
աշակերտաց եւ ՀԲ թարգմանչաց եւ ՀԲ աղ-  
դաց . զի ամենայն կարտնալք ազգի մի գլուխ  
է , որպէս ասացաք . զի ի մեծն Հռոմ ՀԲ ազգ  
է հեթանոսաց եւ քրիստոնէից . եւ ՀԲ ազգի  
եկեղեցի , դպրատուն , սրբալ առանձին :<sup>5</sup>

Եւ կայր մէջ քաղաքին մեծ դպրատուն  
մի հասարակաց , որ ի հօն ամէն օր դաս կ'ա-  
սեն աստուածաբանութիւն եւ զայլ մանր ուս-  
մունո՛ զիիլիսովայական , զերկրաչափական ,<sup>10</sup>  
զաստղաբաշխական , համարողական , դժ .  
Ասորոգութիւնս Արիստոտելի եւ զպրակո

Պորփիւրի ներածութիւնս, զերաժ շտական :  
 Եւ կան ի նմա հինգ, վեց հազար հոգի, ի հե-  
 15 ուաւոր քաղաքաց եւ ի զաւառաց . եւ ամենայն  
 սահմանաց առ նա երթային՝ Ալամանու,  
 Ապանիու, Լէհու և այլոցն . եւ ոչ միայն աղ-  
 քատք, այլ եւ մեծասանց եւ իշխանաց որ-  
 դիք, երիտասարդք եւ կարդաւորք . եւ բազում  
 20 աստուածաբանք, փիլիսոփայք եւ իմաստա-  
 սէրք զոն ի Հոռմ . ամենեքին անզը ժողովին .  
 Եւ անոի տուաքին յայլ զաւառս, զի Աթէնք  
 այժմ Հոռմ է կամ առաւել : Եւ այս ամէնս  
 Փափին տրօք է : Եւ այնպէս փափադ ունին  
 25 ուսման, Ժ, ԺԵ, Ի տարի ուսանին : Իսկ ազգու  
 մեր քնաւ չունի փոյթ և սէր ուսման եւ ոչ  
 որդիքն . թէպէտ եւ տան զորդիս՝ ի փոքրկու-  
 թեան տան՝ մինչ բանի գործի չէ . եւ երբ ի  
 շափ հասակի լինի . առնուն զնու տսելով, թէ  
 30 Այս բաւական է, թող զայ տուն . եւ տուեալ  
 սնկաստար զազան, մնայ այնպէս ախմար :

Հարցաք զմի ուն անուանի, թէ Փափին  
 ի՞նչ կէլիր ունի կամ խարճ . Եւ ասին թէ ամէն  
 օր Ի՞ զուսուչ կէլիր ունի . Եւ զայն իրեք բա-  
 35 ժին կ'անէ . մինն հեծելին եւ զինւորաց . քան-  
 զի եւ նա զատրկայք ունի . Եւ բերդունաք  
 քաղքի եւ զեղօրայք եւ աւանք եւ նաւք ի վե-  
 րայ ծովու . պարտի զօր պահել, զի մի թշնա-  
 միքն վնաս զործեցեն : Իսկ մէկ բաժինն վասն  
 40 իւր մարմնաւոր պիտոյից . Եւ մին մասն ողոր-  
 մութիւն եւ իւէր ազքասաց եւ կարօւելոց .

զի բազում վարձք ունի Փափն եւ ողորմութիւն մին տարին։ Ունի վէքիլ մի, որ տարին ենթ գուռուշ կու բաշխէ։ Եւ վէքիլ մի այլ ունի, որ որբ աղջիկ կու կարգէ։ որբ աղաք 45 զանահաթ կու տայ եւ սէրմիայ։ Եւ մէկ վէքիլ մի այլ ունի, որ մեծ սրիթալին վրայ է։ վէքիլ մի ալ ունի, որ ուխտաւորաց եւ անկարաց ողորմութիւն բաշխէ քանի հազար հոգոյ որ կու զան։ վէքիլ մ'ալ ունին որ աշխարհաւ կան ժողովարարաց ողորմութիւն կու տայ։ վէքիլ մ'ալ ունի, որ կարգաւորաց ժողովք կու տայ, եպիսկոպոսաց, քահանայից, սարկաւագաց։ Եւ տես թէ տարին քանի հազար եպիսկոպոս միայն կու զայ։ թող զայլ չթ աղպացն։ Որպէս տարի մի եկել էր Ասորու պատրիարքի Համթայ, ի Տաճկացն փախուցեալ վասն ուղղափառ հաւատոյն։ Եւ ետ նման հազար զուռուշ եւ զային առաւ շարաթն եզ մի, իրեք ոչխար, յիսուն հաւ, հինգ մէտրաց 60 զինի, օրն տասն հաց, քացախն, աղն, սավզն եւ այլն։ Նոյնպէս հոմմի այլ բազումք կու զան։ Իսկ Հայոց ամէն տարի հինգ, վեց եպիսկոպոս, վարդապետք։ թող զշատաշրջիկ հարեղայքն եւ զիրիցնին։ Զատ զայն երեմն երեմն եւ թագաւորացն օգնութիւն կ'ուղարկէ։ Զորս կամմիմ սակաւ ինչ ծանուցանել լուղացգ։ բայց աղաչեմ սիրով ունին դնել բանիցս եւ մի ձանձրանալ։

46 առ։ — 48 յանկարաց։ — 51, 53 առ նմեւ վարդ յանախ։ — 57 պատրիարք։ — 58 ուղափառ... նմայ։ — 65—66 երբ եւ։ — 67 ինձ։

70 Նախ եւ առաջին վարձքն Փափին . զի  
ամէն օր իւր ամէնալի սեղանն ժի՛ հոգի պիտի  
հաց նստի . եւ ինքն պիտի սպասաւորէ նոցա .  
բայց այժմ ինքն չի դալ . եւ ասին զպատճառն ,  
թէ օր մի ֆռանցէզ մի արքեալ եւ չհանդուր-  
ժեալ ստամբախն՝ ժայթեաց ի սեղանն . եւ  
այնու զարշեցաւ Փափին . իսկ յայլում աւուր  
հաց մի յոյժ զեխեալ կամէք զձեռն համբուրել  
Փափին . եւ չարժեալ զսեղանն՝ կործանեաց  
զկթիսաց , զայլսն խորտակեաց եւ զգինին  
80 Եհեղ ի վերայ նորա . եւ յայնմ օրէ ոչ երթայր  
ի սեղանն նոցա . այլ հրամեց յայլում սեղանի  
կերակրել զնոսա . եւ փոխանակ իւր մեծ քե-  
հեային ասաց սպասաւորել , որ էր ևոխսկո-  
պոս : Զոր եւ զիս տարան օր մի հաց ի սե-  
ղանն Փափին . եւ յորժամ ժողովեցաք՝ բերին  
ջուր արծթէ լէկանով եւ խորիխով . եւ լուս-  
ցեալ տվին սրբիչ եւ նստուցին կարգաւ . երեկ  
զանազան կերակուր եւ անսապակ զինի , մար-  
դագլուխ օխայ մի ամէն մէկի առջեւ եւ ջուր  
90 ըստ սահմանաց իւրեանց . բայց զու որպէս  
կամիս այնպէս ըմպէ . զի թէ զայն ըմպէս ա՛յ  
տան . բայց Հայք ստանց ջրոց ըմպէն . եւ զի-  
նին եօթն տարէ կան՝ անգիւտ այլ տեղիս :  
Եւ այլ կարգաւորքն սպասաւորէին մեզ . մեք  
95 ժի՛ հոգի նստաք ըստ երկուսասան առաքե-  
լոց . եւ այլում անզո՞ ՀԲ նստան ըստ ՀԲ ա-  
շակերտացն որիչ . եւ ամէն մարդու եօթն ,  
ութէ սկուտեղ ձաշ բերին մեծազին . զորն ու-

տել կարես՝ կե՛ր, եւ զորն չուտես դնեն մախ-  
րամատ, հետ տար. ամէն լօխման ուռուով մի 100  
կ'աժէ. եւ յետ կերակրոյն շէքէրլէմէնի եւ  
դնոց հարվանի տան, քաղցը եւ անուշ. զգալն,  
դանակն, դարսիքն եւ այլն ամէն արծաթեղէն  
է: Բայց հայուն առաւել պատիւ կ'առնեն եւ  
ի գլուխ տեղ նստեցուցանեն:

105

Երկրորդ ողորմութիւնն. զի ամէն դուրս  
ենելու առաջէ է որ ի՛ն զուռուշ բաշխեն աղ-  
քատաց. զի թէ հեռու երթայ՝ ի մաֆայ նստի,  
երկու ջորի լծած, մինն առաջ եւ միւսն յե-  
տին. եւ վեց ջորի սպիտակ. վեց ետքնետակ. 110  
վրանին կարմիր մախմուր ձգած մինչեւ ի գե-  
տին. եւ ինքն ալ կարմիր կու հազնի. եւ իւր  
բոլորն չուրջանակի այլ զինուրք չի մօտե-  
նան. միայն ալամանքն մօրզօք որ են տու-  
ակչք<sup>1</sup>, զոր ասեն թէ Լուսաւորիչն եթող:

115

Երրորդ ողորմութիւնն Փափին, որ ամէն  
տարի Շ հոգի պիտոր կարդէ յարանց եւ կա-  
նանց, իզին ճիչդ եւ մայեա. արուին՝ սէր-  
միայ, մարդուն կօրա. ոմանց Ճ զուռուշ,  
ոմանց Մ կամ աւելի եւ պակաս: Եւ ամէն 120  
վահից ալ սահմանք է, որ կարողութեան  
կօրա պիտոր կարգեն Մ կամ Կ կամ այլ աւելի  
որը աղջիկ եւ վախիր կարիճնի. զի յաշխարհն  
այն աղջիկն շատ է եւ մարդն սակաւ. վասն  
որոյ պիտոր շատ ճիհէդ տան, թէ չէ մարդ 125

102 գքալն: — 121 կարօղութեան:

<sup>1</sup> Ալյոփնքն tedeschi:

Հի առնուր զկինն առանց դբամի . որպէս եւ  
ի Լէհաց յերկիրն :

Չորրորդ ողորմութիւն Փատիին . որ դային  
որել է քանի Հարիւր աղքատ կարգաւորաց  
180 եւ քահանայից , նաև աշխարհականց , որ  
ամէն օր այսչափ հաց , զինի , միս եւ այն  
կու տան . որք ծերք են , անկածք , անկարք ,  
Հիւտնդք , չքաւորք , որբք , այրիք եւ տեսանկք ,  
աղքատք եւ այնի :

185 Հինգերորդ ողորմութիւն , որ ինչիսատար  
աւխտաւոր կու զայ ամէն աշխարհէ՝ իրեք օր  
պիտոր ուտեցնէ , խցցնէ :

Վեցերորդ ողորմութիւն . ինչ մարդ որ  
զայ ուժան , թէ աշխարհական , թէ կարգա-  
140 ուր , և . զուռուչ , ժ . ի . լ . կու տայ իսրայիլ .  
առայ կարգաւորաց ժ . ժէ . ի զուռուչ , թէ  
եղիսկուզո ձ , թէ վարդապետ Բձ . Գձ  
զուռուչ . ան՛ս թէ տարին քանի Հազար կու  
տայ :

190 Ետիներորդ , զի որչափ Հրեայ կամ տա-  
ճիկ քառնաց եւ քրիստոնեաց լինի , Փատին  
պիտոր Հազցնէ սպիտակ յուսոց մինչ ի  
զուռի . այլ եւ տայ իւրեանց սէրմիոյ կամ նա-  
Փազայ , մարդուն կօրոյ՝ ժ զուռուչ , ի կամ լ :

195 Ութերորդ ուռհմն Փատիին , զի որչափ որը  
աղայք կան , անձարանկ աղթկունք , պիտի ժո-  
ղովէ զիսսա , զահանաթ տայ . անս թէ որչափ  
աղայք իւրեանց եւ յօսարացն կու զովի անդ :  
Իններորդ զաքաթին . որ ամէն տարի սրաց

Հինգշարթի ԺԲ Հոգոյ զոտս ոլիտի լուսահայ 155  
Եւ օր մի յառաջ բազնիք զրկէ եւ տայ նոցա  
շաղիկ, վարտիք, չուխայ սոլիտակ, բարուչ,  
զոտակ, եւ լուսցեալ զոտսն նսուցանէ ի սե-  
զանն. Եւ Հայն ի վեր նստի. Եւ ամէնին ա-  
նուն տայ զառաքելոց. բայց Հային Պետրոս. 160  
Եւ յետ կերակրոյն տայ ամէն մէկի երկու  
զէսպէհ եւ երկու խաչ պատկերք, մին սոկի,  
մինն արծաթի :

Տաններորդ ռահմն. Սան Սփիրիդու սրի-  
դալն, որ քան զքաղաք մի է, որպէս յառաջաւ 165  
զոյն տասցաք, թէ որչափ մարդ կայ, եւ որ-  
շափ խարճ կ'երթոյ կերակրոյ, անկողնոյ,  
վայցափ եւ այլոցն :

ԺԲ. զի ժողովել է իւր քաղաքն ի Հառու  
ՀԲ աղդ եւ ունին ամենայն աղդն Եկեղեցի, 170  
որիդալ, զպրատուն, կերակուր, անկողին,  
տօշակ : Նոյնպէս Հայք եւս ունին ժամ, սրի-  
դալ, զպրատուն, բայց տղաք չկան . միայն  
երկու տղայ կայր . զի Հայք սակաւ են : Այլ եւ  
պատմագիր է հանած . զոր մեք աչօք մերովք 175  
տեսաք . Աստուած զիւրեանց Հոգին լուսա-  
ւորէ, որ զմեղ աւելի կու Հոգան քան թէ մեք .  
Եւ ասին թէ ԺԲ զուռուչ կու Հայի պատման .  
ասկա այժմ պաթալ է, ոչ բանեցնօղ կայ, ոչ  
բանօղ՝ մեր ազգիս էՀմալութենէն եւ չս- 180  
րեացն, որպէս եւ ի Վանատիկն :

ԺԲ. վարձքն, զի այնպէս շաղաւաթ կայ  
աշխարհն Փափին, զի որչափ դերի վախչի եւ

157 շաղիք : — 159 Հայըն : — 160 կու նաեւ վարը :  
— 167 կ'երդոյ : — 179 յայժմ : բանէցնող :

անկանի երկիր նորս, ազատի : Սպանիու թա-  
185 գաւորն պիլա խառիր չէ հանել, թէ մկրտի .  
ոյլ ուրիշ տեղ թէպէտ մկրտի ալ չի ազատն .  
քանզի կ'առնեն թէ նաչարէ և յակամոյ լինիս  
քրիստոնեայ , եւ չէ Աստուծոյ ընդունելի . թող  
ոյն առենն լինիր երբ տունդ էիր և անձն-  
190 իշխան : Իսկ Փափն ոնց մկրտի՝ կ'ազատէ :

ԺԴ. ոսհմին , զի որչափ լինասակարք  
բնիւնին՝ աւազակք , զողք կամ այլք , որ  
պիստի չանկալն զարնեն կամ չորս չարնկեն ,  
նու յառաջ վիզն կու զարնեն կամ ինեղեն ,  
195 առօտ զայլ զսկնաճէն կ'առնեն որ զայն մեծ  
կոկիծն չիմանան : Եւ կայ եկեղեցի մի նոցա  
սուրբ Յովանու Պիտիասումին , անդ թաղեն  
զամենայն մահապարտս . եւ զան այն եկեղե-  
ցոյ քահանայք խնկօք և մոմեղինօք , բուժա-  
200 թով , սեւազգեստք եւ Քրիստոսի խաչալա-  
մանն առնին յառաջ . եւ անդ մնան մինչեւ  
զահիճքն կատարեն զհրամայեալս . առօտ առ-  
նուն մեծաւ պատուի զդին , դնեն ի զակաղն  
ծածկելով սեւ չուխայով , եւ առնին թաղեն  
205 սազմասիւք եւ աւրհնութեամբ , թէպէտ եւ  
մեղանչել է . առօտ վասն քրիստոնէութեան եւ  
զի խոսառվանեցաւ , հաղորդեցաւ , պատվիլ  
արժան է : Եւ ի ժամ կախելոյն չեն թողուլ  
կախ կամ ի չանկալն կամ խազուխն , ոյլ առ-  
210 նուն ի վար եւ տարեալ թաղեն :

ԺԴ. զի ունի Փափն վէքիլ մի ճարտա-  
սան , որ հինդհարիւր զուռուշ կէլիր ունի .

վասն այն որ ամէն օր երթայ ի բանան եօլու-  
լամիչ եւ թէ շլիչ կ'անէ . ու կու քննէ հարցնէ ,  
թէ վասն է՞ ը զբնանած են . կոմ թէ քանի՞ 215  
տարի է որ կայ , եւ թէ ոու չուղեց եւ անվատ՝  
է : Քանզի շատ կու լինի որ անմեղ , անձա-  
րակ , անլեզու զարիոլ մարդիք կամ ազքատ  
ւ անաէր ճար չունին , ոչ ծանօթ , ոչ մարդ ,  
այնպէս մնան ի բանան քանի տարի , զի մեծ 220  
զնան է , որպէս Պատրաճաֆարն . նա երթայ  
ոռ զատաւորն եւ հանէ :

ԺԵ . զի երբեմն եւ թագաւորաց խաղինաց  
առաքէ , երբ մեծ սէֆէր ունին Հետ թուրքի  
կամ անհաւատից , օլովիայ լէ շքէրին . այլ եւ թէ 225  
հարկ լինի եւ ուակասի դրամ սուրբ Պետրոսի ,  
զիբա մեծ խարճ ունի շինումն , նա կու տայ .  
Թող զայլ ծածուկ ողորմութիւնքն որ մարդ  
չի զիտէ , բայց միայն Աստուած :

Նաև եկեղեցիս շինէ ի բազում տեղին 230  
և այլ բարէդործութիւնս առնէ . զորս ի բազ-  
մաց սակաւն զրեցի տատ : Եւ զծերն ընտրեն  
եւ տարեցքն , որ հաղիւ չորս , հինգ տարի  
ապրի : Սակայն ազնն չար եւ զառնացողք  
Հերձուածողաց բազում բանս եւ բանուասանս 235  
բարբանջն զնմանէ . բայց նա անպարս է  
յայնմ յամենայնէ . եւ զրադարսողքն զատա-  
պարտելոց են ի Քրիստոսէ յաւուրն ահեղին :

#### ՔԱՐՏՎԵԼԱՅԻ

Նմանապէս եւ բարտինալքն յոյժ վար-  
թամք են եւ հարուստ . ունին քազաքս , զիւղս 240

237 այնժ : — 238 առարքն :

եւ աղարակա եւ ոյլ եկամուռ . եւ են պերճ  
եւ վաստառը , անձնիշխանն եւ բնքնակալ : Եւ  
ամէն հինգչարթի տիւռն կ'երթան մօտ  
Փատին . անու է անսանել զրազմութիւն կառաց  
245 եւ ձիոց . կառքն ոսկիած եւ մեծածախ , զից  
զից ձիօք Ման Փեթրօյին մօյտանն կուտեալ :  
Մին կառքն հազար զուռու . զրայի ծած-  
կոյթն ոքուլէթ չուխոյ : Երնեն եկեղեցին եւ  
վանորոյս , որիզալ եւ զոպրատունս . եւ ի  
250 աղմուկ տեղին կամարականց բազմածախ զի-  
մաշէն յոյտակենեան կամուրջս . եւ յերկիւ-  
զալի առեղիս՝ իջեւանն եւ պահառակն : Շնին եւ  
ոյլ ծածուկ վարձք . են որ ամէն շաբաթ օր  
կերակուր կ'ուղարկեն ի բանոն , հաց եւ  
255 դինի . ամանք յեւագ հինգչարթին կ'երթան ի-  
մեծ զրնատան . Երկու , իրեք պարտաւոր ա-  
զառան վհարելով զարարան նոցա : Եւ են որ  
թային արել են քանի հազար կերակուր : Եւ  
առցա եւս ամէն տարի բառ կարսզութեան ա-  
260 մէն մէկ հինգ , զից որբ կու կարդէ եւ սէր-  
ժիյա , ձինէդ կու տայ : Եւ յորժամ Փարփն մեծ  
մարդու ողորմութիւն տայ , նոքա ոյլ պիտոր  
տան : Եւ ոյլ բազում ծածուկ վարձք ունին ,  
որ միայն ծածկազէան զիսէ . զի սպզն ոյն  
265 յոյժ ծածուկ սիրէ ողորմութիւն առել եւ  
առարինութիւն :

Քարաբինայքն եւս ունին իւրեանց ներքեւ  
Երկու , իրեք պանսինոր , որք են քորեպիսու-  
պոոք , որ առցա հրամանաւ չըլին եւ ձեւնա-

դրեն։ Եւ այնողքս մեծամեծ սարայնիք ունին 270  
եւ ծանրադին պարտէզք, դրախտք, որ Լի՛,  
ԿՌ զուռուչ կ'աժէ եւ ոյլ աւելի։

Հարցաք թէ ո՞րչափի կարգաւոր կայ քա-  
զաքս։ Եւ ասին թէ ժամանակ մի Փափն ի գիր  
և հան եւ աէ ֆլար անցուց։ Նա ՃՌ կարգա- 275  
ւոր Էլաւ, զատ սքեմաւորաց եւ ապաշխարո-  
ղոց + փառք Աստուծոյ։

### ԱՐԱՐԱԿԻՑ ՓԱՓԻՆ — MONTE CAVALO

Այլ եւ ունէր Փափն երկու մեծ սարայ։  
մէկն հուզ Սան Փէթրու եւ մէկն եայլայ ամ-  
ուան, ի բարձր լեռան վրայ եւ վայելուչ տե-  
ղոջ, որ կոչէր Մօնթա Գաւալ։ Եւ անդ վասն  
բարեխառնութեան օղոյն կենայ, զի յոյժ չար 5  
եւ վատ հաւայ է ի Հոռոմ։ Եւ զնացեալ անդ  
մտաք ի ներս։ իմացեալ պարտիզանքն ընդ-  
առաջ եկին մեզ եւ սիրով ընկալան։ Եւ ազդ  
արարեալ պօստանձի սրաշուն, որ երեկ բա-  
զում բանալեօք։ Եւ յանձին կալաւ զամենայն 10  
ինչ ցուցանել մէզ մի ըստ միոջէ։ Եւ նախ զի  
առջեւ սարային կային երկու ձիք անձոռոնիք  
ամեհի։ Եւ Երկու մեծամեծ հսկայք ունէին  
զայն ձիս իրը թէ յետակ։ ի սպիտակ մէո-  
մէռէ որպէս կենդանի կոփած։ Եւ մտեալ ի 15  
ներս շրջեցաք զամենայն որ էր նման միւսոյն,  
ազգի ազգի զարդարած եւ յօրինած զօդէ-  
վանքն, որն լիովանով, որն խառիֆով, որու  
չուխտով, զորս ազնիւ վայլուն մէռմէռով, եւ

271 պարտէոք։ — 272 յաւելի։

5 յօդոյն։ — 8 տառ։ — 17 որինած։

20 զորս սովի դեղովք, որ մի քանի զմին գեղեցիկը էին. և ամէն օտայ ազդ մի գօյֆա կոյր : Եւ մին օտան կայր սեւ մէռմէրէ սեղան մի, զարնիշանի քաշած . և մէջն սովի և արծաթ լցուծ և պատվական ակամբրք բնդելուղած՝ նման սեղանոյն Պատոմէոս թողարքին, զոր առաքեաց յԵրուսաղէմ Հրէիցն . և յայլս տեսաք լաճվարդի քար և ի վերաց սուրախնի : Խոկ այլ տեղ պատկեր մի զարմանալի տեսաք . զի Երբ գէմն կանգնիս՝ Քրիստոս կ'երեւի . և Երբ յաջ կողմն՝ Աստուածածինն Միածնովն . և ձախմէ՝ Քրիստոսի սիւնն կատած : Եւ աւելի քանի զԴ՛ օտա կայր, ամէնն զարդարած և միջին գօհանի . և քաղաքն սովուն որպէս խնծոր կ'երեւէր : Եւ ի զրախտ տին մտեալ տեսաք բազմազիմի կերպս և պատկերս և շինուածս քարէ, որ ամէնէն չուր րիսէր : Այլ և կային աղքիւրք բարէհամք և շատրվանք զարմանաշէնք, որ վաղէին չուրքն երկու, Երեք մարդարօյ բարձր : Եւ  
 40 կայր ազդ մի մորենի անթառամ, զոր յամառն և ձմեռն կանաչ և գեղեցիկ, որ իրեւ զիսմէլ կամ սառնամածութ ուստաստին սաղարթքն և ծածկեն գոլատերն, որպէս կանանչ աթլասով : Եւ  
 45 մէծ և զմուկթաշէն, որ նստեալ էին ի մէջն բոլոր զարդարի և զարանակերպ զարչ մարդիք, որ փող հնչէին . և փոխանակ ձայնից չուր ելանէր . և շինած էր ի վերաց մոյ-

ժողովաք , որ ի վերաց երդողացն ջրվաթէր : Եւ  
կային շատրվանքն ձկունք : Եւ այլ շատրվան 50  
մի կայր , որ վերեւն շինած էր իսպիսակ  
մէռմէրէ կոյս աղջիկ մի գեղեցիկ , որ ունէր  
ի ձեռին հայելի մի մեծ , և հայէր ի նա իրբեւ  
զկենդանի . և մեք մերձ եղեալ պշուցեալ  
հայէաք . յանկարծակի ի բաց տարեալ գհայե— 55  
լին եւ բերանայն ջուր թափեաց ի վերաց մեր ,  
որ փախաք : Եւ տեսաք այլ աղբիւր մի . և  
մէջ եւ բոլորն բազում հանգանակք եւ մաս-  
խարա . բաներ , որ տեսողքն բերանարաց  
մնային . և ջուր սրբակեալ թանային զմար— 60  
զիք : Եւ շինած էր վիշապք , օձք , զաղանք  
և անասունք յայն մորենայն իրբեւ զկեն-  
դանի :

Եւ յառաջ գնացեալ տեսաք ծառ մի աղդ  
և աղդ պտղովք : Եւ մինչ կայաք ներքեւն եւ 65  
պշուցեալ հայէաք , եղեւ սաստիկ հեղեղ յոս-  
տոց եւ ճղերուն . և մեք թոջեցաք յետս փախ-  
չելով : Եւ ընդողէմ նմին կայր հաւուղ մի եւ  
ի նմա ձկունք աղդ . և մինչ մեք հիա-  
ցեալ դարմանայաք , ե՞լ յոտաց մերոց ջուր 70  
յորդ . և մեք քանի փախչեաք , ջուրն զհետ  
պոյր : Եւ շատ աղաչեցաք զղլիսաւորն եւ եցոյց  
մեզ օլուխնի եւ լուլանի իրը զկողովակա  
արճաէ զուգած , բեւեռած ի դետնի . և ջուր  
թողուին ի նոսա և զէսնիֆած էր այնոէս , 75  
որ երբ բանային զրերանս ջրոց , ջուրն ի վեր  
վազէր և թանայր զմարպիկ . և երբ կամէին՝

աբգելուին : Եւ զայս ամէջնն շինուծ էր վասն  
ծիծաղելոյ և մասխարացի . զի և տեսողքն  
80 ուրախութեամբ զուարձասցին . զի սոքօք  
իմաստունք միտիթարին և ախմարքն խարին :

Եւ այլ ներս զնացեալ՝ տեսաք մարդա-  
կերայ գաղանս և ծովային կանայս և վիշտապս  
ահարկուս . և մեծ հաւուղ մի՝ բոլորն պատ  
85 քաշած . և երբ երթառ և յերենաս ի քա-  
րինան , քարինքն զատին և դու ի ջուրն ան-  
կանիս և լաւ թոջիս : Ապա տարան զմեղ ի  
Փափին սեղանատեղն . և էր որպէս կամար  
կամ խորան բոլորակ , ունէր պատ և դուռն ,  
90 և ի վերայ շինած էր ազգի ազգի շինուածու  
և զարմանալի բանս . և էր երկու փեղկէ .  
մին փեղկն սուրբ Պետրոս և զարմանալի  
զէսնիֆ արած էր . և զակունս ջրոց պուռ-  
մայով կալած . և երբ թողուին զջուրն շար-  
95 ժէր սուրբն Պետրոս և հարկանէր բանալիքն  
ի փեղկն . և սուրբն Պօղոս բանայր և ջուրն  
վաղէր ի վերայ մարդաչափ մի և սրակէր  
զմարդիկ . և տեղն որ Փափին բազմէր՝ էր բո-  
լորակ խորանացարկ և նկարած զեղեցիկ և  
100 զանազան զեղովք , ոսկով և աղնիւ լազվար-  
դով . կային աթոռք , սքէմլիք և սեղանք տրա-  
սիզաց բատ իւրեանց սահմանաց : Եւ ասին  
մեզ թէ յորժամ Փափին կերակուր ուտէ , եր-  
պէհոնք առանց մարդոյ հնչեն . և ազգի ազգի  
105 երդոյ յօրինեն և նուռոգս . և մեք աղաչեցաք

80 սոքօք : — 95 վեղքն : — 98 զմարդիք : —  
105 յօրինէն :

զի սակաւ մի երգեցցեն . եւ իրրեւ բացին սե-  
նեակն եւ թողին զջուրն որ տօլապնին լցվան ,  
առա սկսան երգել օրէն երաժշտի առանց մա-  
տից . ուստի ձայն քաղցր եւ համեղ ելանէր  
առանց աշխատանաց մարդոյ . եւ զինչ էզկին 110  
եւ յեղանակ ուղէր մարդն , նա զայն երգէին :  
Եւ մեք զայն ամենայն տեսեալ փառս տվաք  
իմաստութիւն տուղին Աստուծոյ , զի այս-  
պիսի միտք եւ խելք տվել է որդոց մարդկան .  
եւ աստ էառ լրումն տէրունական բանն թէ 115  
իմաստնադոյնք են որդիք աշխարհիս քան  
դորդիս լուսոյ յազգո իւրեանց :

Եւ մեք մինչ ի հիացման էաք եւ պշուցեալ  
հայէաք , ել ջուր ի կանոնած տեղաց մերոց .  
եւ որպէս անձրեւ հոսէր ի վերայ մեր , որ հաւ 120  
զիւ փախաք ի ջրոյն : Եւ առաջ զնացեալ տե-  
սաք ծառ մի որ զինչ թուչուն ուղես կայր ի  
նմաւ եւ ինչ գաղանք եւ անասունք ի վերայ  
երկրի են՝ կազմած են ի ճուղսն , շունք , ա-  
ռիւծք , ձիք , ուղտք , սիրամարդք , աղջուք , 125  
աղաւնիք , սազք , բաթեր , կառք լծեալ ձիովք  
եւ ոյլ բարձագիմի կերպարանք . Եւ ամէնից  
ըերանոյ ջուր ըխէր ի սքանչումն տեսողաց :  
Եւ այնպէս սահմանած էր , որ ծառն ի վեր  
ջուր ելանէր . Եւ մարդոյն վրայ թափէր : Եւ 130  
ոյլ բաղում բանու եւ զանազան իրս տեսաք ,  
զոր ոչ կարեմ մի ըստ միոնէ զրել կամ ծա-  
նուցանել ձեզ . քանզի տեսաք ծառս անլուր  
եւ անտես պտուղս . իսկ թուրինմ եւ նարինմն

135 յոյժ յոյժ - սյլ եւ մեծամեծ դեղին ազամա խաւ-  
ստիք պատերն ի վայր կախ . եւ պատվարաց  
վերեւն ամէն վարդենիք էին , որ անցաւորքն  
ահուշ հասոյն զմայլէին : Իսկ ծաղիկք եւ չի-  
շաքն ազգի ազգի եւ գունդպան , անուշահոս  
140 ի քիմս եւ վայելուչ ի տևս աչաց , զոր սյլ աշ-  
խարհ ոչ զտանի :

Եւ դետինն զարձանալի արթեստի յօրի-  
նած էր Հիւսք եւ կալք եւ թուրայք իրը զա-  
լամով կանաչից . նաև զնանապարհն ծուռ ու  
145 մուր , որ երբ մարդ մտէր՝ մոլորէր եւ սյլ  
շեմրէր այլ ի դուրս ելնէր որովէս ի քաղաքն  
Երիքոսի : Զայս ամենայն եւ որ սացին նման  
տեսեալ զարձաք ի տուն :

## ԳՐԱԿԱՆ ՓԱՓԱԿ:

Եւ սյլ որ զնացաք ի միւս զրախուն . եւ  
150 անզ զարձանաշէն իրս տեսաք . եւ ազգ մի  
կակուզ քարէ քարձք լինենք շինած է , ընդ որ  
ջուր զայր ի վար , եւ ոչխարք եւ անսունեք  
արածէին ի հոփիսան . եւ կայր առջեւն մեծ  
հաւուզ մի չորս կողմին չորս ազրիւր խաչա-  
155 նման , բոլորն քարէ աթոռք կազմեալ . եւ երբ  
կամէր մարդ նոսիլ ի վրաց նորս , ընկոմէր  
աթոռն ի ջուրն , նատառեղն թոջէր . եւ սյլ  
շատ թամաշանի տեսաք . զի եւ հոգն ամէն  
նախըշ էր եւ ջուրքն ի ջաշմանուն Երկու ,  
160 Երեք մզրախ թոջէր . կոյին եւ անզ ծառք եւ

ծաղիկք զունզպուն, որ երթևելելքն ի զեղեցկութենէն զմայլէին:

ԿՐԱՍՆԱ ՄԵԽԻՆ ՔԱՐՏՎԵԼԼԻ

Եւ զբախտ մի այլ տարան զմեզ մեծ  
դարանալին. Եւ նախ տեսաք երկու մեծ սամ-  
սն՝ քարե շինած իրը զկենդանիս եւ զբնձլով 165  
կապած. մեք զահի հարաք կարծելով թէ  
կենդանիք իցեն, ստոյգ Եւ ճշմարիտք. իսկ  
մեր փոքր չնակն որ ընդ մեզ շրջէր, մնաց եւ  
ոչ երեկ յառաջ, երկեաւ. այլ ի հեռաստանէ  
Հաջէր զէմ նորա. Եւ այնովէս նման էր կեն-  
դանի շան, որ մազ մի զարստ չկար. Եւ հա-  
զիւ այլ շարզօք բերաք տո մեզ զոգօճիկն: Եւ  
այլ յառաջ տեսաք քարե ոչխարս, խողս, զի  
արածէին որոքէս ճշմարիտք, բայց նոքա վէմք  
էին: Եւ էր հաւուզ մի մեծ չորս սեւ արար ի 175  
վերայ զուզած, ի վերայ բարձք արձանի. Եւ  
ի զլուխն արծիւ մի տարածեալ թեւօք, զոր  
կոցովն մդէր մանր ջուր որպէս անձրեւ. Եւ  
շինած էին մարդիք թունէն, որ մարտնչէին  
ընդ միմիանս, մինն ծնկանալ առեղն քարշէր, 180  
Եւ միւսն քար վերացուցեալ կոմէր հարկա-  
նել զնա. իսկ այլքն ծառաստինին դֆաքով  
նշան չափէին. Եւ սիրամարդնի զուզած էր  
յայտնի ողջ, միայն զի չէին թռչել:

Այլ եւ կայր մօյտան մի մեծ եւ սեղան ի 185  
մէջն եւ բոլորն աստիճանք վասն հանդչելոյ.  
Եւ թէ ոք կամէր կոխել՝ ջուրն ի վրան թոշէր.  
Եւ կոյին զուռնափայք, Փիլք, տոխէք, զա-

մէնն հանած էր քարեն, որ միտք մարդոյ չի  
190 բռնել կամ զրել մի բառ միոջէ զամենայն։  
Կային եւ այլ գրախաք մեծածախը. եւ ի միջի  
աղդ եւ աղդ թօհքանի, մի քան զմի աղնիւ.  
Հնորհաց ավողին Աստուծոյ փառք հազար բե-  
րան։

195 Եւ կոյր մէջ քաղաքին շատրվան մի մեծ,  
ի վերայ չորս վիշտապաց. եւ չորս աղայք մէջ  
հաւուղին կանգնած եւ զանացի անդամնեն  
բռնած, ուստի ջուրքն վաղէին։ Եւ անդ մի  
այլ կարին մի կանգնեալ եւ արծիւն կացովին  
200 զպորան ծակել է, յորմէ բիսէր ջուր։ Եւ այն-  
պէս առ նոսա ուղի եւ արծաթին, ակն եւ մար-  
դարիսն յեկեղեցին եւ ի տունս՝ որովէս առ  
մեզ վայց եւ երկաթ։ Եւ զրախաքն կամ մի-  
մաշէն աներին, զոր միտք մարդոյ չի բռնէ զրել  
205 կամ ի մարի պահել։

### ԵՐԻ ՇԱՄԱԾԱՎԱԼԻՒԹ

Կամին պատմել ձեզ, ով եղբարք իմ, իրա  
զարմանաւիս. զի սոցա իմաստութեամբ եւ  
հանձարով զանեանս եւ զանառունս ի դործ  
ածել են, եւ զանխօսս ի խօս։ Եւ նախ ակասց  
210 ի շանց. զի զիսորախիկս խորավնեն եւ պրարտեն  
որովէս մարդ, կանգուն կայով ի վերայ ուսաց։  
Այլ եւ առառք բրոյուս մեծ շներս, զի սէրէթինի  
վիզն անցուցած կամ զկազաթին, եւ զրամն  
թղթով վաթտած ի մէջն զրած կ'երթան ի  
215 սպանանոցն եւ զնեն միս եւ առնեն ի տուն։  
Եւ թէ ի հանապարհի զառար մեծ շունս տե-

սահնէ՝ դառնայ յետո և զնէ զսապաթն այնմ  
անզոջ ուր զնեց . Եւ կենայ սակաւ մի , մինչեւ  
ցրվին շունք . ապա դայ տոնու և տանի տո  
տէրն : Եւ թէ թուչունք սպանանեն ի վերայ 220  
ջրոց , զբկեն զնոսա . նոքա երթեայ շրջին  
որոնեն և գտեալ բերեն տան ի տէրսն : Այլ  
և կաքաւու և զայլ որսո նոքա դտանեն և  
ցուցանեն տիրոջս իւրեանց : Իսկ կոյրքն և  
լուսաւորքն փոխանակ մարդոյ փոքրիկ շնակ 225  
ունէին . զոր ի վիզն պարան անցուցեալ , միւս  
ճոթն պարանին ի պօտին կաղեալ կամ ի ձե-  
ռին ունէր . և շունեն զամէն փողոցնին շուռ  
ածէր կարգաւ . Եւ խանութնին ու տներն ըս-  
լոր շրջէր և այնչափ աղիողորմ ձայն ածէր 230  
Եւ փաղաքշէր փարելով , մինչեւ տային ողոր-  
մութիւն . Եւ երբ տեսանէր տալն , ապա այլ  
տեղ տանէր զկոյրն , որպէս կենդանի մարդն .  
Եւ թէ կարիս ուղէր , զիտէր զտեղին շնակն և  
տանէր արտաքնոցն . և զամենայն կամս նորա 235  
կատարէր զինչ և ասէր : Եւ վաճառականքն  
ածէին ընդ ինքեանս լակոտս փոխանակ նո-  
քարի և ծառայի . Եւ թէ տեղ երթային կամ  
շուկան , նոցա պատիրէին թէ լաւ ուահէ զո-  
տան , զիսանութն կամ զկումաշն . և նա 240  
նստեալ որպէս բանաւոր պահէր խիստ և ոչ  
շարժէր բնաւ ի տեղովէն , մինչեւ ատէրն իւր  
դայր . Եւ թէ ոք մերձենայր կամ զողանալ  
կամէր , հաջէր և վաղէր ի վերայ նորա :

Այլ և տեսաք անդ ջորիս մեծամեծո , որ 245

թուրքաց աշխարհն Շ, Ա զուսուչ կ'աժէք, և էջք որպէս ջորիս որ Հ, Զ զուսուչ կ'աժէքն, զոր և Հայլապ տեսաց այնպիսի ջորի մի, որ Հ զուսուչ դնեցին. և անրան անտառնքն այնպէս հլու և լսողք են, որ զինչ առեն՝ զայն առնեն. ևրեմի խաղային և երկու ոստաց վրայ կանգնէին, և զամենայն խօսս աէքանց հարկանային թէ՛ բերել տանել, թէ՛ զալ թէ՛ զնալ: Այլ և հարկացայքն ի սովորական տեղին ուղարկեն զէշն, թէ այն տնէն զնայ վացա թեր, ջաւը կամ հաց. և նա զնացեալ ի զուռն զրային և ձայն ածէին և ստամբը հարկանէին, մինչեւ ելեալ ի զուռն տեսանէին զէշն և իմանային վասն է՛ր եկեալ է. բառնային և ուղարկեին ի վանոն:

Անէին և իշխանքն մեծամեծ շունս որպէս դոչիարս և սամսոնս. որ միշտ շրջէին ընդ տեսոս իւրեանց. և թէ ոք կովէք կամ հարկանել կամէք զակըն՝ վաղէին ի վերաց թշնամոյն և խածառէին: Յոսկի պատուհանս նոցա ունէին տուտիք, զումբիք և պլապուլք սովորեցուցած. այնպէս քաղցր եղանակեն և զբոցս տան, որ անցաւորքն ի սիրոյն թմբին. և զիտես թէ մարդիք են. և հայեցեալ իմանալ նաև թէ տուտիք են հայրան եղեալ մնաս և յամես ի զնալին. և թէ ոք առջեւ զուսն կանգնի, ի վերուստ ձայնէ աղախնացն, թէ ելէք ի զուսս զող է եկեալ. և թէ բախես՝

կանչէ . շուտ բացէք զդուռն . եւ ինչ բան եւ  
զործ որ տեսնու՝ պատմէ ազային զամենայն : 275

Եւ ոչ թէ միայն զգաղանս եւ զանասունս  
եւ զժոչունս , այլ եւ զերկաթս եւ զպղինձս ի  
զործ եւ արվեստս ածեն որպէս չնչաւորս . զի  
շինեն երկաթի տօլասնի , որ զմիսն խորս-  
վեն , եւ սահաթինի եւ երկաթի մարդիք որ 280  
զանկակ զարնեն . եւ աղդի աղդի մանրար-  
մեստ սահաթինի , որ տեսողացն է սքանչելի :  
Կան եւ արծիւք ի վերայ սահաթինուն , զի երբ  
կամիս սահաթին զարնել , արծիւն զթեւսն տա-  
րածեալ ծափս հարկանէ : Եւ կան ժամադիւ 285  
տակք շինած , որ քանի ժամաւն ուզես զար-  
թուցանէ զքեզ , թէ մէջ զիշերի , թէ հաւա-  
խոսի . եւ այնչափ զարնէ մինչեւ զարթիս եւ  
փառք տաս Աստուծոյ : Այլ եւ անզգայ տարե-  
րաց որպէս ջրոյն երգս երգել տան . եւ վողն 290  
հնչէ եւ մարդկօրէն ծտույէ . նոյնողէս եր-  
կաթն , փայտն եւ այլն : Զոր եւ այլ բազում  
բանս եւ զործս տեսեալ փառս տվաք Աստու-  
ծոյ :

### ՀԱՅԻՆԵՍԹԻ ԲԱՐԵԿԵՆԴԱԼՆԵՐ

Եւ ի Գարնավալն , որ է մեծ Բարեկեն-  
դանք . զայն երկու շաբաթն ամէն օր մէկ խաղ  
մի եւ շատլիս կ'առնեն ի խրախութիւն եւ ի  
ծիծաղ մարդկան . եւ հրաշալի թամաշանիս  
զործեն , որպէս թէատրօնս : Եւ ի սուլթան 5  
Պայազիսու ամֆլուն շինեն բերթք . մինն քրիս-  
տոնէից եւ միւսն անհաւատից . զոր կովեալ  
յաղթեն հաւատացեալք : Այլ օր կէմէսդան

կու շինեն մեծամեծ, և բարձր խռովացք. և  
 10 թէլի վրայով անտից ի վայր կ'իջեցին: Եւ  
 յաշխարհու ինչ խաղ և օյին կայ, այն Լրկու  
 շարաբին պիտոր ցուցանեն: Եւ թշբանք, պա-  
 րանցք, քազաքացիք, մեծամեծք և անանելք,  
 արք և կանոյք, նաև անարդել սղջկունք ի  
 15 որսառահանս ու հաստախառիք, այլք խառիքաց  
 ձկնեն և անտի հային, այլք յերկրէ: Եւ այն  
 օրերին մեծ ու բրնի և թամաշանի կու յինք:  
 որպէս Մըրուր ուոյ քէսիմին մուխզասիս գո-  
 խիլին, և Մէհմէտի օրդու տանիլին:

## ՀԱՅԻՇԱԲ ՄԵՌ ՊԱՀԱՑ

20 Եւ առհմանք է որ յազգաց ամէն կիրակիին  
 ժէկ ժամ մի պիտի դնաց մեծ սալթանաթով  
 փափն: Եւ յորժամ զնալոց էր, այն ժամն  
 պիտի յոյժ զարդարէին զանազան կերպառովք  
 և լիովանով. և քան զառանցու բազում կան-  
 դեղք կախեն և այլոց խաչ չինած մեծ, զորս  
 կախ և զորս կանկուն ազգ և ազգ երանուովք,  
 ոնն սպիտակ, ոնն կարմիր, ոնն կանաչ, ոնն  
 բուրջ և գեղին, որ աշք մարզոց խամաշմիչ  
 կու լինի: Եւ զայ Փատին բազմախումք ժո-  
 25 զայրուօք, քահանացիք և կղերիկոսօք, խո-  
 չալամով, ջահիւք և լուզանրօք, մամովք և  
 ինկոմովք, խաչիւք և առևտարանաւ և ամենայն  
 զարդիւք. և զինի զինվորք և թշբանք և զա-  
 րազլուխք: Եւ երբ կառարի պատարացն,

թօրեր նետեն եւ դուֆաքնի, որ քաղաքն 35  
Քնողայ եւ շարժի:

Եւ յաւագ հինգչարթին որչափի մասն կայ  
Եւ Քրիստոսի տհօրինականք Սահ Փետրու-  
ժանին՝ ի դուրս հանեն եւ ցցնեն ուխտաւո-  
րաց. նախ զիսաչափայտն, զԴաստառակին 40  
Քրիստոսի, զԲեւեռքն, զԱթոռն Պետրոսի ա-  
ռաքելոյն եւ զայլ բազում նշխարս. բայց մե-  
ծաւ ահիւ եւ զողութեամբ, ջահիւք եւ լապ-  
տերօք, բուրմամբ անուշահու խնկոց եւ  
հարմամբ զանկակաց. զի ամէնեքինքն ի 45  
ծունկս անկեալ լալով զոչին. Սուրբ, սուրբ,  
սուրբ Տէր զօրութեանց. զի լիցին եւ մեզ  
պահապահ եւ ամենայն հաւատացելոցն. ար-  
մէն: Եւ այն գիշերն աքնին եւ հոկեն ունա-  
կացութեամբ մինչ ի լոյս, ոչ թէ միայն ուս-  
միկը եւ աշխարհականք, այլ եւ իշխանք եւ 50  
զարտինալք. Եւ զայն ծածուկ, որ մարդ չի-  
մանաց կամ չի ճանաչէ զիրենք. զի զգենուն  
ուն հաստ քթանէ շատիկ՝ երկոյն զլխովին,  
միայն աչաց անզն ծակ վասն անսութեան, 55  
բոկոսն եւ զլխիրաց, չուսն զօտի ի մէջքն:  
Եւ որչափ զլխաւոր եկեղեցիք կան քաղաքն՝  
ուրուֆաթով եւ քահանայիւք զան թարօրով  
ի սուրբն Պետրոս, երկու երկու. Եւ ամէնին  
ձևոն սովիսակ մոմ: Եւ ամէն եկեղեցուն թա-  
րօրով զալն՝ ելանէ վարդապետ մի ամպիսնն  
եւ քարոզէ զչարչարանս Քրիստոսի. ազա յոր-

36 Թրնաց: — 49 ազնին: — 54 շարիք: —  
58 թարօվով:

գորէ զեռսաւ առևլով . Տեսէք , եղբարք , եւ ի  
միւս առէք . թէ Տէրն մեր այսօր վասն մեր ի  
շը Հրէից որպէս չարչարանն կրեաց , զզան ,  
զհարութեածք , զանարդանս , նաև զման , զոր  
եւ մեզ պարտ է այսօր լոլ , ոզոլ եւ չարչարիւ  
այսօր , զի կցորդ եւ մասնակից լիցուք նմա :  
Բակ նոքաւ ամենն քեան անկատին ի վերայ Երե-  
սաց եւ ազագակն , ոզբան Երեք անզամ . Տէր  
ազորմեաւ . եւ բացեալ զկորսն հարկանեն  
զմարմինս անխնաց զօտէհանկուցովք՝ այն-  
շամփ մինչեւ արբիւն րինէ . եւ այն զասն երթոյ  
եւ այլ զոյ : Եւ այնովէս էր բազմութիւն ջո-  
հից եւ զամբարաց . որ քազաքն լոյս տայր :

Կայր Եկեղեցի մի յորման շինեալ էր եր-  
կու զուսով սենեակ . եւ զուսոց որիմաց զու-  
սած էր առաստաղ կապուտակ , որպէս եր-  
կինք , մէջն հրեշտակք : Եւ երբ սկսան Այսօր  
անձառ , ի նմին դուռն երեւեցաւ թրիստոս ,  
զոր անկեալ ի վերայ ձնկաց ազօթէր առե-  
լով . Հայր սնեցու յինէն զրամակո , բառ զ բե-  
ցելումն : Եւ այնովէս թէսնիմած էր , զի երբեմն  
ծնկուէր եւ երբեմն կանգնէր . եւ այնովէս զե-  
նեցիկ զեղնամօռուք եւ չէկ մար , սպիտակ  
մարմին յօրինած էր , որ տեսողքն հայրան  
մնացին : Եւ մերձ թրիստոսի շինած էր պոյ-  
տից զՊետրոս եւ զՇակուրոս եւ զՇովհաննէս ,  
նման նոցաւ յայտնի , որ նեղին ներքեւ յան-  
կանն միոյ ի վերայ ձեռաց ամիին . եւ թրիստոս  
զայր սակայ սու նոսաւ , զարթմուցանէր զեռսաւ .

Մի ննջէք, զի մի մտանիցէք ի փորձութիւն .  
Եւ ինքն դարձեալ ազօթէր : Իսկ Պետրոս զար-  
թուցեալ ի քնոյ բառնացը զգլուխն եւ հայէր  
աստ եւ անդ, թմրեալ ի քնոյն եւ դարձեալ <sup>95</sup>  
ննջէր : Յանկարծակի բացաւ երկինքն այն եւ ել  
ի միջն հրեշտակ մի թեւաւոր, ունելով բա-  
ժակ ի ձեռին . եւ եկեալ առ Քրիստոս զօրա-  
ցուցանէր բառ այնմ թէ Ի հրեշտակաց զօրա-  
բանայիր . եւ թէ Հրեշտակը զօրացուցէն <sup>100</sup>  
զնա, առէ Դաւիթ : Եւ դարձեալ Ելանէր ի  
յերկինս ի վերայ պղնձէ թէլի բարակ, որ մար-  
դոյ չերեւի . ապա փակեցոն Երկինքն : Եւ  
մինչ կայր Քրիստոս ի զուռն, ահա ի միւս  
զունին զայր պիզդն Յուղայ, մին ձևոն քէսա <sup>105</sup>  
եւ միւս ձեռօքն ցուցանէր զՔրիստոս . եւ  
եկեալ զինվորքն սուսերօք եւ բրոք, ջահիւք  
եւ զամպարօք, զրեհօք եւ սամֆի Երկոթթիւք՝  
կամմէին զՔրիստոս լըրունիլ : Իսկ Պետրոս  
զարթեալ քնաթթաթախ հանո (զի) զՏէր նորա <sup>110</sup>  
կապեայ էին . եհան զառւրն եւ եհատ զունին  
բահանայալզծին ծառայի զաջ ձեռն եւ զա-  
կանջն . եւ ակներեւ կ'երեւէր ներկն կարմմէր՝  
արիւնի տեղ : Եւ ապա առեալ տանէին զՔրիս-  
տոս անարգանօք իրրեւ զմահապարա : Զոր <sup>115</sup>  
մեք տեսնեալ զայն յարտասուս հարաք, մինչ  
մարմինք մեր զոզային ի մհծի աղէտիցն . եւ  
զի այնողէս թուէր որպէս թէ ոք մՆը էր ի  
ժամ չարչարանացն Քրիստոսի : Եւ զինչ բան  
որ կայ ի զրի Եւ աւետարանի . սամմէին այսան <sup>120</sup>  
Եւ յայտնի արած էր եւ չինած, որ ամէն ա-  
նամմի մարդ կ'իմանայր :

Եւ յաւազ հինգչարթի յետ կէս աւուրին  
այլ դանկակ չի քաշեն մինչ դատկի ճրագալու-  
125 ցին, զի սուրդ է . եւ տէլալնին կանչեն, թէ  
աստի մինչ միւս հինգչարթին այլ դատ եւ  
իրաւունք չի լինի, այլ վակին տիւանք եւ  
իրաւունց տեղիք : Այլ եւ հրամանք է յարքու-  
նուստ, զի մի ոք յաւուրսն յայնոսիկ մարտիւս-  
130 ոռը իրս կամ դործո զբազեացի, այլ միայն  
եկեղեցիս զնալ, ազօթից եւ քարոզից ունկն  
զնել, զի այն օրերն ամէն եկեղեցիք իրեք  
չորս անդամ քարոզ կու լինի :

Իսկ այս շաբաթո (աօնից) եղելի  
135 Հրեայքն բնաւ չերեւին (ի հրապարակո). այլ եւ  
թագչին յամուրս եւ ի տունս վարկին . այլ եւ  
զինուրս զնեն պահապան դրանցն՝ վասն ահի  
եւ երկիւղի քրիստոնէից : Բայց այնու եւս ոչ  
զիրծանին, այլ մեծ զնաս կրեն ի ստուտէն-  
140 դից, որք են սօխթայք . միարանին ի միասին  
բազումք եւ երթան ի փողոցս եւ ի հրապա-  
րակս եւ ի տունս Հրէից, պատեն եւ բազում  
մնասս զործեն, զոմանց զրունս կործանելով,  
զայլոց զտունս, կիսոց զպատուհանս խոր-  
145 տակելով . եւ զորս զտանեն չարչարեն, թալ-  
նեն, եւ զայլս սպանանեն : Եւ զայս սովորու-  
թիւնս ունին Հռոմայեցիք ի նախնեաց՝ առ-  
նուրդ վրէժն Քրիստոսի, որովէս երբեմն կայսրն  
Ռուսիանսս, Տիրերիսս, Տիտոս և վեորիս-

127 յիրաւունք : — 128 յիրաւոնց : — 130 սպա-  
զեացի : — 132 զընել : — 135 Հրէայք : — 138 յերկիւզի :

նոր : Եւ նորա ոչ ումեքէ չերկնչին , եւ զի՞նչ 150  
կամին առնեն , զի բազումք են :

Եւ մեծի շարաթի իրիկունն նախ սուրբ  
Պետրոսի մեծ զանկակն հնչեն , եւ ապա  
զայլան :

### ՀԱՆԴԵՍԻ ԶԱՏԿԻ

Եւ կայ մեծ եկեղեցի մի սուրբ Յակոբ  
տուաքելոյն Զերեթեայ . եւ առջեւն մեծ մօյ-  
տան , ուր Սպանիու թագաւորին էլչին կու-  
կենայ . Եւ ամէն տարի զատկի զիշերն մինչ  
ի լոյս մեծ շէնլիք կու լինի եւ տօնանմայ եւ 5  
շօհրաթ : Զի ամիս մի յառաջ պատրաստու-  
թիւն կու տեսնուն , բերթեր զանազան եւ խու-  
լայք . խազուխնի զարկին քանի հազար եւ վրան  
ամէն ֆէնէր . եւ պատերն ամէն չուկին խու-  
մաշով եւ չուխով զարդարած . ծառեր եւ 10  
հղեր կանգնեցուցած . եւ փողոցէ փողոց բա-  
րակ թէլ պղնձէ անցուցած . նոյնպէս պա-  
տուհանից պատուհանս՝ ԺԴ , ԺԵ տեղ : Մէկ  
թէլին վրայ շինեցին մեծամեծ վիշտազք զէմ  
յանդիման վասն կուլի , եւ միւսն կաղմեցին 15  
ձիւուրք , մղբախնով եւ բըմպով , եւ այն  
ծովային կենդանիս . եւ զկնի ամենայնի ի  
վերայ բարձր ձողի պատահուց շինեցին կան-  
գուն եւ դժոխոց բանալին ի ձեռին . եւ այն-  
ոքէս զէմ նորա Պարբիէլ հրեշտակապետն գե- 20  
զարդով : Խսկ կանթեղք զանազան եւ ազգի  
ազգի զունովք՝ իրրեւ զատեղս երկնից բազ-

152 յիրիկունն :

15 միւսըն : — 18 ձողի :

մութեամբ էին պայծառացեալ, մի քանի զմի  
զեղեցիկ. նաև ի կանթեզիցն էր զուգած  
25 ազգ և ազգ շինուածք, եկեղեցիք, խաչը,  
զմալիքք, խուլայք: Եւ ժողովեալ անթիւ կար-  
գաւորք, քահանայք և կրօնաւորք և սկսեալ  
յերեկոյէն մինչև յառաւոտն մեծ հոգութե-  
արարին, թարօր շուրջ զալով երգօք հոգեւո-  
րօք, սաղմոսիք և օրհետթեամբ. ապա  
եկին յայն մօյաւոն զէմ լուսոյ բազմամբուն  
ժողովրդօք: Եւ անդ էր տեսանել բազմու-  
թիւն արանց և կահանց, Երիտասարդոց և  
կուսից, ազքասաց և մեծասանց, պարսնաց  
35 և իշխանաց: Եւ նախ յարձակեցան զիշտորքն  
ի վերայ միմիանց, յորոց թերանց Հուր Էլո-  
նէր. և զէսնինիով բոլոր անձն նացա թօրի  
զեղեր լցած ամէն անզն, որ կենդանեաց նման  
ի վերայ միմիանց ձգէին Հուր, մինչև սպա-  
45 սեցան և սյրեցեալ անկան ի օյցը: Ապա  
ական սպասազինել ձիսւոր զինվորքն. և  
բազում ժամա հորեալք՝ ապա ական թուֆա  
արձակել. և զեղարդից նաց Հուր բորբո-  
քէր և սյրէր. և սյնով ո հայթմանք, թիւ-  
55 զինք լինէին մինչեւ խորառակեալ անկեալ  
ընցկի Հուր լինէին. նոյնով և սյլքն:

Իսկ ի խուլայից և թերզից բազում  
սրանչելիք լինէին, ցոլմոնք, որումունք,  
փայլասակմունք ի Հուր բորբոքեալ անկա-  
նէին ի վերայ մարդկանց. և Հուստացելոց  
թերթէն ելեալ Հուր՝ սյրեաց ի սպաս զրեթին

33 յարանց: — 38 զեղէք: — 44 թնթիք: —  
46 լուցք: — 51 յայրեաց:

անհաւասից : Այլ եւ ի հաւայն արձակելին բառ-  
պոմ խամբէ (սրուակո) <sup>1</sup>, զոր յոյժ բարձրա-  
ցեալ՝ ազատ պայթէին . այլք բարձրացեալ ի  
վեր բազում մասուն ցրվեալ ոյլ եւ ոյլ ձայնա 55  
արձակեին . եւ ոյլք վերացեալ սրոկէս ջուր՝  
զհուրն հեղուին ի վերայ մարդկանց . եւ յոյ-  
շոց հնչմունք, բզրիմունք ելանէին : Եւ ոյլ  
բազում իրա եւ զործա անաւու եւ անհնարս  
անսաք, որ յնու չէ աք անսեալ, զոր ոչ կա- 60  
րեմ մի ըստ միովէ զրել :

Իսկ յետ այսոր ամենայնի գոռազն անբար-  
տուան հպարտութեամբ շարժեալ ու ոյր մորի-  
չելով եւ ոպարծէր ցուցանելով զբանալին թէ  
ի՞մ է զօրութիւն, ի՞մ է իշխանութիւն եւ ի՞մ 65  
է յազդութիւն . եւ ո՞վ կարէ կալ սոսաջի իմ :  
Իսկ Գարբիէլ վազեաց ի վերայ եւ յազդշամ-  
կեաց ի նմանէ զբանալին եւ եհար ոկոպար-  
դեամբ զկուշան եւ ել Հուր ի սլաքէն եւ մանեաց  
ի նու՝ սկսաւ այրել ի զյանցն մինչեւ յատան . 70  
եւ այնովէս յերկար, մինչեւ ի սպաս այրեցաւ  
եւ մնացեալն անկառ ի վայր . զօր եւ մարդիկն  
կոխան արարեալ զիտչին յօդո ցանէին . եւ  
ձայն բարձրացեալ ազագակելին առելով .  
Տրիտոս յաբեաւ ի մեռելոց . ըստ այնմ՝ Այժմ՝ 75  
իշխան աշխարհիս այսորիկ ընկենցի արտաքս :

Այսու սկսան մեծամեծ թօփեր արձակել եւ  
անհամար թրմաքնի՝ նորի ի մօյանան, ազա

57 մարդկաց եւ ոյլոց: — 63 ժանիկլով: —  
66 կեալ: — 72 մարդիքն: — 76 այսորիկ . . . յաբեաւ:

<sup>1</sup> Պատարկ :

Փափին ապրայրեն : Եւ եղեւ մեծ ուրախութիւն  
 80 և ցնծութիւն օրն այն յոյժ յոյժ : Եւ ասին  
 մեզ, թէ ամէն առարի այսովէս տօնանմա կու<sup>1</sup>  
 լինի . եւ մին տօնանման Լի զուռուշ կու<sup>2</sup>  
 նայի : Անախ գնացին ի ոռորդն Պետրոս . Փափին  
 ի պատարագ մտու . և անոց ևս յոյնից չեն-  
 85 լիքնի եղեւ : Եւ այս շաբախ բառ է յոսպացն :

Եւ երրոնցա տօն լինի , զոր Փէսի կոչեն ,  
 պահ ան մարդուն , որ բանի կամ խանութիւնների կամ զատ ծախսէ . յառէ Փափին վախեն  
 եւ պիհու պահենի զատնս աէքունի :

### ՆՈՒԷՐ ԾԱԳԱԽՈՒԹԻՒՆ ՍՊԱԼԵՈՅ

90 Այլ եւ ասին թէ Սպահեռու թագաւորէն  
 թային կոյ Փափին՝ ամէն առարի ԽԵՇԻ ոսկի  
 եւ ձի մի աղնիւ , որ բառնան ի վերայ զիսա-  
 զինան եւ բերեալ ծնկոի առաջի Փափին եւ<sup>3</sup>  
 զգլուխն խոնարհեցուցանէ . եւ Երբ Փափին  
 95 խաչակիքէ , նու կանգնի . զի ուսուցեալ են  
 զիս : Եւ բնական բարաքուն են ձիքն . որովէս  
 եւ ի Ստամոգ ունի խօնթքարն ձիսն , որ Երբ  
 նամի ի վերայ եւ զնոյ նամազ , զլխուին բա-  
 րեւ տայ երկու կազմանց մարդկաց . եւ այլքն  
 100 զուքը տային մարդկանցէս եւ խելօք կամ կար  
 զնացին :

### ՀՐԵԱՅՑ

Կայր բարի սահմանք մի այլ աշխարհնե  
 Փափին եւ սաստիկ Հրամանն ի վերայ Հրէից .  
 որ ամէն շարաթ օր պիտոր երթան եկեղեցի .

զի վասն նոցա թային արել է եկեղեցի մի  
Սուրբ Երրորդութիւն անուն, զի անդ ժողո- 5  
վեսցին արք եւ կանոցք, ծերք եւ տղոցք. եւ  
թէ ոք չի զացի, մեծ տուքանք վնասուց  
անկցի. եւ այն օրն մուխութիւնին եւ զինվորքն  
շրջին տունէ ի տուն եւ խնդրեն. եւ թէ զոք  
զացեն թագուցեալ՝ մեծի պատուհասի դի- 10  
ոյին: Եւ յորժամ զան եւ ժողովին ժաման  
թէպէտ ոչ կամաւ՝ սակայն բանանե զզլուխս,  
մտեալ ի ներս տեսանեն զանօրինականս Քրիս-  
տոսի եւ զզատկերս սրբոց, մորմոքին եւ  
խռովին եւ ոչ կամին հայել եւս ի նոսա. սպա 15  
նստին զաս զաս. եւ ամէն զասի զլուխս սօլ-  
տաս մի չուպուխով, որ են եասախչիք: Եւ  
իրեւ բազմին՝ զայ վարդապետ մի իմաստուն  
եւ հմաւտ հին եւ նոր կտակարանաց, որ դիտէ  
լաւ զԵրբայեցոց լեզուն, եւ ելեալ յամբիոնն 20  
քարոզէ դՔրիստոսի մարդեղութիւնն եւ թէ  
Քրիստոս Աստուած է եւ մեշիայ. բերէ  
վկայութիւն մարդարէից եւ նուհապետաց եւ  
իւրեանց զրով եւ լեզվով զնոսաց յանդիմանէ  
եւ աչվին հանէ: Իսկ ոտզիքն եւ խախամնին 25  
եւ օրինապահք, որ կոյր են աչօք եւ քարա-  
ցեալ սրտիւք՝ ըստ Եսաոցեայ, ոչ կամին լսել,  
այլ խնուն զականջո եւ կամ սուտ քուն լինին՝  
ըստ մարդարէին Դաւթայ, թէ Խցցեն զա- 30  
կանջո, զի մի լուիցեն զձայն թովչի. զայն տե—  
սեալ սօլտատաց — վասն որոյ եւ նստեալն են

— հարկանեն ուժգին հարազանաւ ի վերաց  
մերկ զաղաթան նոցա մինչեւ վայն ճշէ և  
բանայ զաշն : Եւ այսպէս որոց սիրտն Առ-  
35 տուած ծագէ՝ զանան յուղզափառ հաւատու .  
և չկայ օր մի , որ հրեայ կամ տաճիկն չդառ-  
նայ ի Քրիստոս : Եւ այսպիսի նեղութեան մէջ  
են Հրեայքն :

Այլ եւ հասախ է ֆուանկաց երկիրն զա-  
40 նահաթ կամ արվեստ բանել Հրէից , ո՛չ պա-  
խալ , ոչ խանութ նստիլ , և ո՛չ այլ ինչ , բայց  
միայն հին ու մին ծախել , էսքիճութիւն տո-  
նել , ո՛չ մաքս ունել , ո՛չ էմեռութիւն , ո՛չ  
կօժբուկ եւ ո՛չ այլն , որպէս ի լէ և կամ ի Տաճ-  
45 կաստան . զի<sup>1</sup> զամենայն ինչ ի ձեռս խրեանց  
ունին եւ զաֆու են որել . զի պիղծքն ինչ  
բան խառնին՝ պարաքաթ չի մնալ , զի ծուռ  
եւ զալու են . եւ վասն այն աշխարհն այն<sup>2</sup> փաք  
է եւ մաքուր : Այլ եւ թէմպէհ ունին Հրեայք  
50 որ մեծամեծ սարըղնի փաթթեն ի գլուխսն՝  
չսպաւշի նման , բայց ոչ սպիտակ , այլ գեղին .  
եւ որք փարթամք են եւ մեծատունք՝ դեղին  
զտակք հազնին կամ կառը մի կազի կամ չու-  
խայ գեղին կարեն , զի յայտնի լիցի պիղծն ի  
55 սրբյն , որպէս եւ ի Ստամպու հաւրուզ  
դտակ դնեն : Բայց ի լէհու աշխարհն հա-  
մահաւասարք են քրիստոնեայք եւ Հրեայք . զի

32 յուժգին : — 36 Հրէայ : — 38 Հրէայքն : —  
49 Հրէայք : — 51 Հրէայք :

<sup>1</sup> Այսպինքն՝ ի լէհու :

<sup>2</sup> Ֆասնկաց :

ոչ կարես զանել կամ որոշել զնոսա ի մի-  
միանց, զի ոչ աշխարհականաց, այլ քաշու-  
նայից եւ կարգաւորաց նման հաղնին եւ զու-  
մենայն իշխանութիւնս՝ զմաքա, էմիութիւնս,  
զպանտեկս, խանս ու իջաւանս, մինչ զի եւ  
զկամուրջս, զպարաբկս, զգիւզս, զպանս եւ  
զոյլ ամենայն ինչ նորա ունին. զի դքրիստո-  
նեայս մատնեալ են ի ձեռս նոցա. վասն որոյ 60  
եւ բազմաց կոչին (Լէհք) կէռակէս, որոքս  
Ձուանկն առէ Մեծաքրիստիան<sup>3</sup>: Այլեւ ոչ զոյ  
առ նոստ<sup>4</sup> զործ մի բուրի կամ կարդ եւ սահ-  
ման մի զովելիի, բոյց ոյն զի միշտ ի կեր ՚  
ի խուժ են եւ արքեցութիւն, կոփէ եւ խոռո-  
վութիւն. զինվորքն միշտ վիրաւորեն եւ  
սովանանեն զմիմիանս եւ զոյլը. իշխանքն ան-  
դօր եւ անարիք, միայն զինոյ եւ պորտոյ ծա-  
ռայք եղեալ, բազմամբոխիւք շրջեալ, զինուք  
եւ սուսերօք եւ թրֆարով մէջ քաղաքի խրոխ—  
տացեալ եւ թաթարաց կապեալ եւ զերի վա-  
րեալ զկանայս իւրեանց հետ քառիթոյիւք եւ  
վեց ձիօք շրջեցուցեալ: Եւ կանայք նոցա եւ  
զսուերք թոյլամարմինք եւ քաղաքացիքն ա-  
մէն մէջ հանաճիք, զի ոչ զոն առ նոստ վաճա—  
ռականք եւ կամ լաւ արվեստադէտք, այլ բաեն  
զիսոցս առ ի սպանումն: Եւ մին ոլէնկզէր  
մարդ հինդ վեց հոգի հետն չուր ածէ:

Եւ աշխարհն Սովանիու անհնար է Նրէից

<sup>73</sup> յահարիք: — <sup>79</sup> թուռերք: — <sup>81</sup> փառեն:

<sup>3</sup> Mezzocristiano:

<sup>4</sup> Առ Լէհք:

85 մտանել կամ հերձուածողաց . զի թէ ոք գոցի ,  
 հրով այրեսցի . որպէս յերկիրն Մադոյու եւ  
 Ամատինէ անհնար է քրիստոնէից մտանել :  
 Վասն այն նոքա միոյն քաթօլիկ կոչին , սուրբ  
 Հաւատ : Եւ թէովէտ Փամիին աշխարհն կան  
 10 Հրեայք , սակայն որպէս ծառայ եւ սարուկ  
 են . զի որչափ տօն Հանդիսի լինի կամ տօ-  
 նանմա՞ զթօրին զեղն Հրեայքն պիտոր տան .  
 Եւ երբ դատրողայք շարժին ի վերայ թշնա-  
 մեաց՝ նոքա զհացն , պաշարն եւ զամենացն  
 95 ովէտս պիտի տան : Այլ եւ Հարկո երկու իրեք  
 անդամ տան ի տարոջն : Այլ եւ մուլք բնաւ  
 չունին , այլ վարձով կենան եւ ընդ ձեռամբ  
 այլոց : Եւ ահաւաք բազում զերիս ի զատրու-  
 նին եւ շատքն մկրտածք :

100 Ազա յԱրաւոք եւ Մաղրուազքն առաւել էին  
 աշխարհն այն , զի սահմանակիցք են . եւս ս-  
 ուսւել Սպանիու . եւ չկայ տուն մի , որ երկու ,  
 իրեք սեւ յարապ քոլա չլինի . որ դարձել են  
 եւ ուղղափառ քրիստոնեայ եղել . զոր ի հա-  
 105 նապարհին բազմաց Հանդիսկեալ տեսանէաք ,  
 զի Երթային ուխտք բոկ սուսմք , ոմն սուրբ  
 Յակուր , այլք Եզր Աստուածածին , ըստ օրինի  
 ըխտաւորաց՝ ցուպ ի ձեռին եւ մաշկեակ  
 յուսս եւ ի գլուխս նշան , մեծաւ Հաւատով եւ  
 110 սիրով եւ յուսով զնային : Հաղաք վատք Աս-  
 տուծոց , զի թէովէտ քրիստոնեայք զառնան ի  
 Հաւատոց վասն իւիք փորձանաց կամ պատա-

Հարաց կամ ճօրով եւ զարսով, այլ միշտ  
սիրտն առաջին հաւատն է. իսկ արապնին  
կատարեալ քրիստոսեանք են :

115

Եւ ունի Փափին երկու մեծ կալխոն կէմի,  
որ ամէն ամի լնու մարդով եւ ուղարկէ յԵրու-  
սաղէմ. զպաշարն, զինին եւ զայլ խարճն Փա-  
փին է. ով ուղէ՝ կ'երթայ :

## FIORENZA

Կայր սահմանակից Փափին եւ մերձ կրան-  
Տուքայ Ֆլորէնս, որ է մեծ դուքս : Եւ զի սա  
յոյժ մեծարի եւ քաջ է, զօրաւոր եւ յաղթող  
եւ յաջողակ ի պատերազմի եւ ելանէ ի վե-  
րայ ծովու հօթն զատրզով միայն, բայց մե-  
ծամեծօք. եւ այնպէս հնարաւորք են, որ բա-  
զում անդամ մինչեւ ի Պողող-Հիսար եւ մերձ  
Ստամպօլայ կզզիքն մատնեն, աւար հարկա-  
նեն եւ զերեալ տանին : Այլ եւ ի վերայ ծո-  
վու զորս եւ զտանեն թուրքաց նաւս, զնաւս 10  
բնկղմէին, զինչս առնուին, զմարդիկն զերի  
զարէին, զորս ի սուր ձգէին, զորս ի սուր  
մաշէին. այլ եւ ծովեղերաց զիւղս եւ քաղաք  
քանուէին եւ վայ եւ եղուկ ածէին այլազդաց .  
բայց զքրիստոնեայս անվնաս արձակէին. զի 15  
յոյժ տեղեակը են մարտի ծովու քան ցամաքի :

Եւ ունէք սա ի քաղաքն Ֆլորէնս տէ ֆլա-  
րով լիմ հողի ևասրը թուրք, զայիմնի, չա-  
վուշնի, զատիք եւ այլ մեծ զլիներ, անթիւ  
ենկիչարիք, սբահիք, այլ եւ կանայք, չօրվա-  
ճիք, բէյիզնիք եւ վարթամ վաճառականք,

8 յուրաք : — 11 զմարդիքն : — 15 յանվնաս

որոց դին է զրել և առօտեն թէ շուտով զան  
և զնեն՝ ազատին, ապա թէ ոչ՝ ձզէ զնոսա  
ի զատրզան կամ առաջելիքին և զնոտնին—  
զնենն Երկաթի շղթայիւք տայ ի գործ և աշ-  
խատանս, քար հատանել կամ հոգ կրել, որ-  
ովէս Ստամոր ժայդպաննին : Եւ շինած էր մեծ  
գետեափորք և մազարայք լայն և արձակ-  
դիշերն անդ արդելուին և ցորեկին բանեց-  
նէին : Եւ իւր քաղաքին սարայք, եկեղեցիք  
և պարբռոպք և այլ յոլով չենք նոքոք շինին .  
և ամէն առան հոգոյ առանապետ կայ . զի  
յորժան հանեն խորափիսէն և առանին ի բան,  
երթայն մեծ ձայն, հնչումն և չնդումն լինի  
շղթայից և Երկաթից, մինչ մարդիկ զունեկն  
խնուն : Եւ այլ իշխանք, պարունայք՝ յորժան  
կամին և արու ինչ չինել կամ բերթ կամ պա-  
րիսով, ի սմանէ խոզքին որչափ կամին՝ Ռ ,  
ՇՌ կամ այլ առելի . և առ առաքէ սմանց  
դրամով, այլոց զան պարզեւաց : Են և այլ  
առաքայք, որ և նոքաւ ունին յոլով զերիք .  
ապա սորտ նմանէ շունեին . զան այն Կրան  
Տուքա կոչի, որ է մեծ զուք :

## ՎԱՐԱՐՈՒՄՆԱԿ ԴՐԱՅԻ, ՄԱԼԲԱՅԻ

Եւ Մալթայու տուքան ալ շատ կարուկ է  
և պատերազմով և հզար . Եւ նու զնոյ մերձ  
Ստամորայ կզզիքն, բազում օճիր և զնոս  
զործելով քաղաքաց, զիւղից և կէմաց : Եւ  
այն տարին որ մեք անդ (կար), Մալթայու

25 տաւ : — 29 բանեցիէ : — 35 մարզիք : —  
41 տուքաք : — 46 յոհիք :

կէմի մեծ հանին ի վերայ ծովու իրրեւ զլեռ  
մի՝ ԴՌ թօր ունէր, ԺԲ էլքան եւ Ռ ձէնքճի, տ0  
ԴՌ կէմիճի : Եւ բոլորն կէմուն խանտակ էր  
չինած եւ մէջն հոդ լցած . երկու խուլած լայն,  
որ ոչ թօր, ոչ թուֆաք կարէր անցնիլ յինքն,  
ոյլ սահէր եւ անկանէր Փնտրին ի ծով . զի  
էր իրրեւ զպարիսապ : Եւ ասին թէ երեսուն 55  
ամին հաղիւ կատարեցաւ . զոր Տէր Աստուած  
շնահաւոր առնէ եւ յաղթող ի վերայ թշնա-  
մեաց խաչին Քրիստոսի . ամէն եւ եղիցի :

Եւ ոյլ բազում իրս, բանս եւ զործս,  
չէնք եւ կարդ ու սահմանք տեսաք եւ լուաք 60  
աշխարհն այն, զոր սակաւս ի բազմաց զրե-  
ցաք բազում աշխատութեամբ, սիրով ընթեր-  
ցողացդ եւ յուսով ունկնդրողաց : Բայց ա-  
զաշեմ մի՛ հեղզալ եւ մի ձանձրանալ ձեզ՝  
ապախտ առնելով զերկու վաստակոց իմոց . 65  
զոր երրեմն ի կէմին, երրեմն ի վերայ զրաս-  
տի, երրեմն ի ջեւանս եւ խաներն նստեալ  
զրէի . ոյլք ուտէին, ըմպէին եւ ոյլ յիրս  
զւարձանացին . եւ ես հոդ տարեալ ոյսմ իրի  
ջանացի՝ ի լրումն հանել զառաջարկեալ զիրս . 70  
զի յօդուտ եւ շահաւէտ լիցի ուխտաւորաց  
եւ շրջող անձանց : Եւ ոյս բաւ է իմաստնոց .  
ողջ լերուք :

ՄԵԽՆԱԿԻՄՆ ԶԱՔԱՐԻԱԼ ԱԼՄԻԴԼՊԵՏԻՑԻ

իսկ յետ հօթն ամսոյ մեծ խռովութիւն եւ  
շփոթ անկատ Զաքարիայ վարդապետին հետ 75  
իւր հարեղից՝ վասն լիրը եւ անզզամ կնոջ մի

որ չըջէր բնոր նոսաւ, կոյս եւ հաւատավոր ա-  
նուանիլով զինքն, մինչ չար համբաւս սյո  
և հաս ականջա Փափին, զոր հրամացեաց նոյն  
աւուրին ելանել Հռոմաց. եւ էր ծաղկազար-  
դին շարաթն: Գրեցին թուղթ հոգեւոր տի-  
րո՞ն Մելքիսեդին. զի նորմէ<sup>1</sup> էր առաքեալ.  
եւ երկու զէրապազ շուռջաւ իւր սարօք եւ  
թագ մի. այլ եւ փոքր խաչ մի ուսկի եւ մէջն  
մասն ի խաչափայտից եւ ԲՇ մարչիլ երեսօք  
իւստի: Զոր (Զաքարիա) մեծ վասոք եւ պա-  
զէւք առնելոց էր Փափին և կարտեալոց, և  
զատիկն առնելոց էր. ամենայնէ զրկեցաւ եւ  
մերժեցաւ: Քանզի ամենայն ոք վասն զատ-  
կին զան ի Հռոմ. զի զատկին լինին շէնիքի  
եւ ամենայն սոկերք եւ նշխարք որբոց և  
անօրինականք Քրիստոսի ցուցանի և ան-  
սանի. նա զատկի մերձ զորով ել անտի և  
զնաց<sup>2</sup>:

## 90 զատկին:

<sup>1</sup> Այստիքն ի նմանէ:

<sup>2</sup> Զաքարիա վանեցի, որ Մելքիսեդէկ կաթողի-  
կոսէն պատուիրած զրկուած էր Պազոս և. Քահանայու-  
ականին, Հասմէն մէկնեցաւ 1612 Մարտ 27ին (Մազկո-  
զարդ): Հասմէն լով է. Պալիս ընարաւեցաւ պատրիարք,  
Հեռացնելով աթոռէն Գրիգոր Կեսարոցին: Պազոս և.  
Քահանայապես 20 Հոկտեմբեր 1613: թաւակիր համա-  
կեն մէջ կը զրէր առ Զաքարիա. Քանի թէջ որ կը զրես  
թէ նոդ տարած եւ զրկելու առ յարզելի եղբայրն մեր  
Մելքիսեդէկ՝ Մեծաց Հայոց Կարողիկոսը, մեր նամակն  
զոր մեր ծերտէն առած էիր, եւ տար համար մեր ազ-  
գէն երկու եպիսկոպոս համբայ դրած եւ մեր ընծան-  
բուլ, այս ամէնը կարի համելի եզր. մէզք. Հմաս.  
է աթ ողի է Արձագան և գ. 1913, էջ 507—508:  
Այսպէս նույն առ Դեսպանն Փազզեաց թզթին մէջ կը

իսկ և Եղիշելիս վրիութեալ եւ զատեալ ի ամսունէ՝ մնացի այլ եւս երկու ամիս անդ, առ ի չրջիւ ի վահորաց և ուխուսանգս՝ լիլով զփափառք ուրախ եւ կատարելով պիուձու հոգոյ իմայ :

### 9. ՈՒԽԱՎԱԴԱԱՑՈՒԹԻՒՆ Ի ՄԱԻԾ

ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ Ի ՎԵՆԵՏԻԿ

Եւ իրրեւ լցու թ. ամիս, զատեալ ընկերք և նուակ մի պատրաստական՝ յիշելով զա-  
նուն Աստուծոյ, կոչելով յօդնութիւն սուրբ  
զատաքաւալն Պետրոս և պՊօղոս մատեալ ի  
ներս՝ հասաք ի մէծն վահառիք, օրին Համ-  
բարձման, որ կոչեն ցէնց ա<sup>1</sup>. զի օրին այն  
մէծ է անդ և յոլով տօնանմայ եւ շատլիս  
առնեն, որպէս ի Մորբ սույլ քէսումին. զի  
Մորանիու մօյուսնի նման զարդարեն զամէն  
փողոցին. և Սա Մարքոյին առջեւի մօյուսն  
սումիք կանաչ ծառ ու ձուզ եւ տերեւոց զա-  
նազան յօրինուած եւ շէնք եւ վերեւին խու-  
մաշնի, չուխոյք եւ աթլառք :

11 առիս եւ աէրեւոց : — 12 սրինամ : զէրեւն :

զրէր նոյն Քահանացազեար նոյն թռւականով. «ԵՄԵՐ  
ՃԵՅԱՐՈՅ ԵԿՈՅՈՐ ՄԵԼՐԲԽԵԶԵԿԻՒ» Հայոց ճեծաց Պատրիար-  
քին մեզի զրկան պատուիրակը՝ սիրելի որդին մեր  
Զարդարիա զարդազեա, աեղեկացուց մեզ, որ անցեալ  
տարի (1612), երբ Հոռմէն կը վերապանար ի  
Հայաստան, եւ Պոյիս հասնելով, եպիսկոպոսներէն,  
քահանաներէն ու բոր ազգին ժաղավրդենէն եկեղեցւոյ  
տուաթեարդ կարգուած էք. անդ, էք 551: Կը տեսնուի  
տոհի, թէ Միմէն Լեհացւոց առզերը ունին հաւա-  
տաքառութիւն :

<sup>1</sup> Ascensione. 1612. Մայիս 31:

Եւ այն օր Դուքսն պիտոր վիճակը Երիէ  
 15 հովու վրաց . վասն որոց զարգարեն վաթուուն  
 զատրուց՝ մի քան զմի պատվական և դնոջ,  
 իսկ Տուքինն ազնւուագոյն քան զամէնին . որու-  
 րոր կէմին զուտր վարագոյն ծեփած ուկով, որ  
 չափափէն չէր կարել մարդ շատ հայել ի նայ :  
 20 Եւ մասեալ նախ ևս ի ներս՝ տեսաք զաթուն  
 ուր նասելոց էր ևս վերեւն խռովան ևս Փէ-  
 նէրն ևս սցին, յոյժ բազմածախ ևս անցիւու-  
 զոր ևս Ռ ա կ ի կ է մ ի կոչէին : Եւ իրքեւ ժամ  
 եղեւ՝ մասեալ ի ներս ելին ի ծովն . ևս անդ էր  
 25 ականել զձայն վազոց ևս քնարից, տառուլ  
 զուռնայից, թօփ ու թվանքից ևս սպայրախ-  
 նուն : Եւ հասեալ ի տեղին, ուր ատաթն է,  
 անդ ընկենու Դուքսն մաստանի մի ակնով, որ  
 մի՛ զուռու արժէ . ապա ուրախութեամբ ևս  
 30 մեծ չէնիքով դառնան ի քազաքն :

Հարցայ զՎարդապետն <sup>2</sup> . Եւ ասին . վայ  
 զնաց, զի տոտ օր մի եկաց :

Եւ կացի անդ երկու շարաթ, մինչեւ  
 զնան կէմիք . բայց կային լաւ մարդիկ Հայք,  
 35 որ իրաւու ավին ինձ թէ Գնէ առա իրք մի, որ  
 տեղ տանիս՝ խարձա կ'Ելնէ : Եւ ևս ունէի  
 զբան սակաւ մի, ևսու ի ձեռանցաւ . Եւ նորա  
 զնեցին ինձ խուրաս ևնումէլու խարձ : Զի  
 նորա զբանն ամենայն աշխարհի խարձն . Եւ  
 40 ունին այնովէս՝ ինչ տեղաց որ ուզեն . զի Ռւ-

### 34 մարդիք :

<sup>2</sup> Այս էնքնի՝ Հարցայի Զաքարիա վարդապետի  
 ժամանի :

ուռմէլուն ցած է, Անատօլուն այլ ցած . բայց  
Ստամպօլոյն ծանր էւ զնոջ, թէ՛ ջուխան, թէ՛  
քամիսան, թէ այլն :

Ո՞Յ Ի ՄԱՀՆ ԵԲԵՑԱԽՈՅՆ ՓՐՈՋՆ ՃՈՒՀԱՐԻ

Եւ մինչ ևս ի ճանապարհի պատրաստու-  
թեան էի, ևկն այր մի վանեցի՝ Զիրախ ա- 45  
նուն, իմ ծանօթ էւ սիրելի : Սա երեք ինձ  
զուժ էւ բօթ ի Զամոսցու քաղքէն, թէ Մէծ  
քոյրդ մնաւ . ևս թաղեալ՝ եկի ասաւ : Զայս  
իմ լուսալ՝ խոսվեցաւ հոգի իմ, դալարեցան  
աղիք իմ, շփոթեցաւ անձն իմ, թարշամեցաւ 50  
դոյն երեսաց, մթացան աչք իմ, շիւարեցաւ  
միտք, բեկաւ մէջք իմ էւ անկայ երկիր եւ  
լալով ասեմ . Վա՞յ ինձ, քաղցրիկ քոյր իմ .  
եղո՞ւկ թշուառականիս, ո՞չ մեծի աղէտիս եւ  
աւա՞զ տարակուսանացու : Ո՞վ բարերար իմ, 55  
ո՞վ երախտաւոր իմ, ո՞վ սիրելեցեալդ իմ,  
ո՞վ աշխատաւոր իմ, ո՞վ քոյր իմ և մայր .  
քանդի զմայրու սակաւ զիտացի, բայց զքնոց  
երկար ի կենցազս իմ : Դու էիր միսիթար իմ,  
զու ախոփիչ, զու ցաւոցս իմոց փարատիչ, 60  
զու էիր ուրախութիւն իմ . արդ զի՞նչ զոր-  
ծեցից կամ առ ո՞վ զիմեցից : Ավ զթած եւ  
կորովամիտ քոյր իմ, ընդէ՞ր սակաւ մի ոչ  
լոեցիր, սուզ մի ոչ յամեցեր, է՞ր չի լոեցիր  
մինչ ևս դայի . է՞ր չեղէ արժանի տեսլեան 65  
քու, քանդի զու էիր միշտ ի սենեակ սրտիս,  
զու էիր ի միտս իմ, հանապազ յիշելի զքու

զութին, սէրն, խնամք քն։ Այդ հասաւ յոյս իմ,  
յբաւ կեանք իմ, զի ևս կորուսի զտենչովի  
70 տկն իմ, զանգին մարդարիտն իմ։ վա՛յ ի  
վրայ վայի, և հազար եղուկ անձինս եղկելի,  
որ հարաժ, կարօւ և մասմազ մնացի ևս քո  
բարի և քազգը տեսի, զի շատպէի առ քեզ  
զալ, և զու յինէն փախար և առ Քրիստոս  
75 մոխեցար։

Եւ այնպիսի ոզով և արամութեամբ և է  
հասարշանօք նստեալ ի նու՝ անցաք մեծ կղզի  
մի ԿԲԻՏՏԵՍ անուն, մեծ քան զՄիաբիլի։ Եւ  
անտի բերթ մի ՔԵՇԹԱԱՍ, զարմանալի  
80 յինքնարոյս լեռնէ Աստուծոյ խռովաթին զու-  
զած, յոյժ անստիկ և ամուր որպէս կամար,  
և վերեւն եարոյք չինած։ յորմէ Հռոշք ջուր  
շառաչչամբ, որ այլ չկայ նման նմա։

Եւ անտի եկաք ի ԶԱՆԹԱՅ կղզին։ Եւ  
85 առայ ի մեծ կղզին ԶԱՆԹԱՅ, որ ասին թէ  
ԾիԱ զեղ կայ ի նմայ. Եւ վասն ընդզէմ զորոյ  
հոզմոյ՝ կացաք անդ մի օր։ Եւ կոյր մեծ  
եկեղեցի մի վիճաչէն նման Այստափու. Եւ  
ասին թէ սուրբն Հեղինէ յորմամ զարձու  
90 սուրբ Խաչախոյտիւ, վասն խռովութեան և  
ալէ կոծութեան սոսն և զօրօքն և ևս չինել  
զայս եկեղեցիս մէկ վարպետի, զոր յետոյ  
որդի նորա Կոստանդիանոս չինեց ի Ստամ-  
ուպու։ Եւ էին կղզիքս այս ամէնն վանատիկու.  
95 բայց Հռոմուք էին։ Եւ թէ հաշվիս վէնէտիկու

մինչ Ստամպօլ եւ անտի մինչ Տրավիդոն, որչափ սոսա կայ, ամէնն հոռոմ է . եւ Ճերմակ ծովու, Սեւ ծովու երկու կողմանց ևալուքն սաֆի հոռոմ են : Բայց ոյս տեղաց Հոռոմնին խիստ չար եւ զալում էին, Հայոց մեծ 100 թշնամի . երբ զմեղ տեսնէին՝ թքանէին եւ իշքիլ<sup>4</sup> կոչէին, որ է շուն եւ հերձուածող . եւ թէ ոք նոցա ամանէ հաց ուտէր կամ ըմպէր, խելոյն կոտրատէին թէեւ զնո՞լ լինէր :

## ԱԼԵՔՍԻ ՅՈՒՆԱՏ ԵՒ ՀԱՅՈՅ

Եւ չէ զարմանք, զի (Հոռոմք) նախնեաց 105 թշնամիք են Հայոց . թէ ոք կամի՝ թող կարդայ զՄիխալ զիրքն<sup>5</sup>, թօմոյ պատմաղիրն եւ այլն, թէ զինչ չարիք անցուցել են ի զլուխս նախնեաց մերոց . եւ որպէս բարձին զթաւդարութիւնն Հայոց մինչեւ Յոհան յՈձեւ- ցին, որ զնաց առ Օմար հզօր արքայն Պարսից<sup>6</sup> եւ նորին էմիրնովք եւ հրամանաւ վարեց արտաքսեց զամենայն Հոռոմս եւ սուրկուն Տարարեալ ելից ծովն Պոնտոսի եւ զամենայն ծովեղերեայս : Զոր եւ նախ սուրբն Սահակ 115 Հայրապետն մեր զնաց առ Մահմատ եւ անձնեաց զմեղ նմայ, թափերով զՀայք ժանա եւ վատ նենկածուա ազգէն Յունաց, որ են հին թշնամիք մեր : Զոր եւ զայս ընթերցայ ի պատմաղիրս, զի որչափ հոռոմ տիրէր՝ ոչ 120

97 ՃԵՐՄԱԿ : — 115 ծովեղերեայս : — 119 ընթերցայ :

<sup>4</sup> ՀԿՎԼԱՅ?

<sup>5</sup> Միքայէլ Ասորի, Ժամանակադրութիւն :

<sup>6</sup> Այսինքն՝ ամիրայն Արքարացւոց :

և ամուս Աստմագոլ Հայ, ոչ թէ բհակիլ այլ եւ  
ողջիրկան շխոզուին. Եւ յորժամ Տաճիկքն  
առին, ապա հրաւիրօք եւ ինդիրքով ի բա-  
զում գաւառաց բերին զՀայք Աստմագոլ, որ-  
125 պէս եւ ի լեհ եւ այլ ակցիս: Նաև մեծ եւ  
փառաւոր զեկեղեցիս առին Տաճիկք ի Հոռո-  
մոց եւ եսուն Հայոց. մատուք Աստմագոլ: Ոչ  
պիտեմ թէ ինչ շնորհաց է այս, զի ամենայն  
ազգ սիրեն զմեզ՝ հաւատացեալք եւ անհա-  
130 ստաք, բայց հոգմէն. Թէ ովէտ ազգս մեր ան-  
միաբան եւ սէր չունին՝ որովէս եւ անունն իսկ  
յացտնիք:

## ԿՕԶԱԼ ՀԻԱՆՐ

Եւ անտի ելեալ անցանելով բազում կղզիս  
եւ լերինք եւ մշքու աստինին — անտի մալ-  
մազիայ, մշկէթ եւ այլ ազնիւ զինիք կ'երենն  
— հասաք ի ՍՄԲՔՇ քաղաք. բայց ներս ոչ  
չ մատք, ուստի ելանէ ազնիւ աթլառ, քամիայ  
եւ թօռ խուշախոք եւ ատխողն որ է մազումքէ,  
ապիստակ եւ ազնիւն անտի ելնէ: Եւ կրկին  
ԻՉՄԻՌԻ քաղաք. անդ ծախեցի սակաւ մի  
բառը: Անտի անցայ ԹԻՄԱՅ. Եւ անու եւ ո  
10 հազարեցի զէսպասու. Եւ կամեցայ ԿՕԶԱԼ-  
ՀԻԱՆՐ զնալ. զինչ դրամ ունէի Եւ թօհզանի  
եւ թէսովէ հնի Եւ համատանով զրեանքս թողի  
մատ տօլիվաթիւոր մի ի խանն՝ Կիրակոս ա-  
նուն, որ էր ընչառէս. Եւ ևս չուեցի: Եւ  
15 Կոյալ-Հիանրու հաւան խիստ զէշ էր, առաւ

զիս. Եւ երբորդում օրն հիւանդացայ հիւանդութիւն մեծ եւ անկայ իրրեւ մեռեալ: Երկու շարաթ զիս թէուէթմէն նեղեց. ապա սակաւ մի զլուխ խելք եկաւ, տեսի օտառ թալնած էր եւ բան մի չէր թողած. բայց կայր պառաւ 20 մի երկիւղած, որ Աստուծոյ սիրուն համար ինձի ոլէտ կ'առնէր. նա տառց ինձ թէ Պէյթալմալճին էկաւ տեսաւ զքեզ խիստ զազուն էիր, առաւ տարսու զամէն քսուրդ. ապա մի հոգար, բան մի չի կորիր, զէրա թղթով զրով 25 է, երբ ողջանաս՝ դարձնէ քեզ զամէնն:

Եւ և ելեալ շրջէի եղեղնեայ դաւազանին վրայ դողդոջալով եւ առեալ դքսուրս ծախէի: Եւ մինչ ի այս տկարութեանս էի ևս, ահա սովին ինձ զիր թէ շուտ հասիր, իրիրայզի 30 խոճայ կիրաւկուն այն մեռաւ, որ զուն ամանաթ էիր քովն թողել. եւ զինչ ունէր՝ զամէնն Պէյթալմալճին առաւ. զոր ևս տկար դոլով բոնեցի ջորի եւ հասեալ անդը թէ ոլէտ սունմ ապրանացու. կալաւ զիս մալիմէյիթչին եւ 35 եղ ի բանտի, թէ զունորա օրդախն ևս. նորա շատ մալ կայ մօտ քեզ: Զոր լուեալ բարի եւ յաւ մարդկաց՝ մէջ մտան, զրամ տովին, հազիւ զերծուցին զիս ի ձեռաց բոնաւորաց: Եւ այն հոգսուս կրկնվածք եղայ եւ անկայ ի մեծ 40 հիւանդութիւն, առաւել քան զառաջինն. եւ ոչ զեզ, ոչ այլ ինչ օկտէր ինձ, զի յոյժ մեծ տեհաւ եւ տապնառ ունէի ևս մինչեւ հինդ ա-

16 հիւանդացայ: — 22 ոլէյթալմալճին: — 24 առաւ: — 27 եղեղնեաւ: — 33 արաւ: — 40 կրկնվածք եղայ:

միս : Զոր սակառ մի զօրացեալ՝ աճապարեցի  
 45 և Հասայ ի ՊՌԻՒՍՍ, յոյժ արտում և տխուր,  
 զի զայլ ինչ այնպէս չհոգացի որովէս զղբեանս :  
 Եւ ասի զողրս ի զերայ տալէ հիս .

Քըիստոս տէր իմ արքայ ,  
 դոհութիւն քեզ միշտ յարակայ .  
 50 Դու իմ տարտիս ճարակ արայ ,  
 ամէն չարէս զիս ազատեայ .  
 Ի այս առանդորիս վրայ  
 ևս միայն անյաջող զուայ .  
 Փորձանաց չարի դիալա ,  
 55 ՚ ի ամէն բարեաց զրկեցայ :  
 Աւազ թ՝ ինչ անեմ հիմայ ,  
 յայս զարիս երկիրս որ անկայ .  
 Բոտկէ ՚ ի վողէ ելայ ,  
 Եւ մարմնովս յոյժ հիւանդացայ .  
 60 Հինդ ամիս զլոււխ չի կալայ ,  
 չոր փայտի նման վրանեցայ .  
 Ստեղծօղ իմ Աստուած դիմայ ,  
 այս ցաւէս դու զիս փարատեայ :

Եւ միշտ զայն զմտաւ ածէի և խորհէի ,  
 65 զի մի ուխտապանց եղէց , այլ հասից ուխտիս  
 իմոյ : Եւ Պուրառ երեք օրն հասաք ԱՊԱԾ  
 Տէնկիջն , զոր հազիւ երկու օրն անցաք : Եւ  
 անտի բաղում լերամբ , մայրիւք , զաշտիւք Եւ  
 դժուար ճանապարհօք հասաք ի ՊՈԼԱԽ . Եւ  
 70 կայր անդ ժե տուն հայի , որն պօյամի , որն

խաֆդանձի . Եւ էր քաղաքս ի վերայ բարձրաւաւնողակ տեղով : Եւ մերձ սորա միլ մի՝ ասին թէ կայ զեղ մի Հայոց , երկու էրէց , բայց չգնացի անդ :

Եւ անտի սակաւ մի զնացեալ անսաք 75  
լեառն մի , ուստի ջուր բխէր Եւ եկեալ ի վայր  
քար դառնայր , բայց կակուղ էր . ընդ որ հիմա-  
ցեալ փառս ավաք Աստուծոյ : Եւ այն օրն հա-  
սաք ի ԿԵՐԱՏԱՅՅՈՅ . Եւ սա յոյժ մէծ լեառն էր ,  
բարձր եւ ցրտային . Եւ ասին թէ առոտ սաս- 80  
տիկ ձմեռ լինի որպէս յԱրզրումն : Եւ անտի  
հինգ օրն հասաք ի ԹՕՍԻԱՅՅ խառապան ,  
ուստի մօխայեր կ'ելնի . Եւ բոլորն ամէն մու-  
խայերձիք են . բայց չէ նման Անկուրու , այլ  
ցած . Եւ բազում գաւառաց , նաև Լէհու՝ 85  
գային վաճառականք . Եւ էր յոյժ մրգաւէտ :

Անտի երկու օրն հասաք յՕՍՄԱՆՉԱԽԻԿ .  
Եւ սա ունէր յոյժ բարձր եւ սիվրի բերթ յինք-  
նարոյս քարանց , որպէս Բարլան : Եւ անտի  
մէկ օրն հասաք ի գեղեցիկ քաղաքն Հայոց 90  
ՄԱՐԶԱԽԱՆ , մրգաշատ Եւ դրախտաւոր . Եւ  
կայր եկեղեցի մի՝ Աստուածածին անուն ,  
բերթին անուն , բերթին մէջն՝ ի վերայ բարձր  
լերան , յորմէ ամենոյն քաղաքն եւ դաշտն  
երեւէր . կային լաւ Եւ խմառառն քահանայք . 95  
Եւ աելի քան զեկերիւր տուն հայի , անզացի  
Եւ եկամուռ : Եւ սորա առջեւն մէծ զիւղ մի՝  
ԿՈՒՄԻՇ . Եւ յիրաւի Կումիշ , զիւազնիւ , բա-  
րակ եւ փայլուն չուլ անտի կ'ելնէ , որ այլ աշ-

100 խարհ չզտանի . Եւ մինչ լէ հու անոնի դան  
տանին : Եւ առոտի յառաջ ամէնն հայի զեղ ու  
քաղաք : Եւ կայր զեղ մի ԳՈՐԾ անուն , մերձ  
քաղաքին , Եւ վանք մի զեղեցիկ սուրբ Գէորգ :

## ԱՄՐԱԿՈՒԱ

Զոր անոնի մէկ օրն հասաք ի մայրաքա-  
10 դաքն ԱՄԱՍԻԱՅ , ուստի էր մէծ զինաւորին  
թէոգորոս Եւ Քաթարինէ կայսն և վասիլիս-  
կոս , ոյլ Եւ քաթամարտիկն առւրին Գէորգ :  
Եւ էր սա ի վերայ երկու լեռնեց . Եւ ի մէջ  
լեռնեցն երթայր մէծ զետ մի . Եւ կայր երեք  
15 եկեղեցի Հայոց Եւ ԲՇ տուն Հայի՝ Էկաց Եւ  
ընակաց . Եւ աւագերէց մի տէր Գրիգոր՝ յոյժ  
խրթին , ոյլ Եւ վարպետ ժամանաց . ոյլ Եւ  
ծերունի Լոգիսկուոս մի՝ քաղցրահամ Եւ ա-  
նուշ եղանակաւոր , ամէր վարպետ Աղարիս  
20 կաթողիկոսին : Կային ի նմա անուանի մար-  
դիկ՝ ուսկերիչք Եւ պօյախանանիք : Եւ էր  
յոյժ մրգաշատ Եւ բարելի , Եւ անոնի ելանէ  
ազնիւ սերկեւիլն Եւ յոյզի : Կացի անոց շա-  
րաթ մի . ուսկա տէր Գրիգորն Եւ Պարոնտէրն  
25 զիս ամէնն օր քովերուն չի թողին . մէծ հար-  
կիք ու պատիւ արարին մէկաւորիս :

## ԲՈՒԱՐ

Եւ Ելեայ անոնի երկու օրն հասաք ի ԲՈ-  
ԽԱՅ : Եւ ոյս քաղաքո էր լեռնամէջ , յոյժ  
բարելի Եւ մրգաշատ . Եւ ջուրն Եւ ամենոցն  
30 թիւ սոսատ , քանզի շահքիստին է Եւ Հոչակա-  
ւոր քաղաք . ունի սպէղս սոսան , սպիթակազար ,  
սոկէրէինաց , ամէնն քարէ . միզանն Եւ խա-

ներ։ Եւ կայր ութ եկեղեցի Հայոց եւ ուսած  
քահանայք եւ գիտուն, համեզաձայն վար-  
ովետք. Եւ վարդապետ մի Մազաքիոյ տե-  
ղացի, եւ Եջ հայի տուն. բայց ասին թէ յա-  
ռաջն հաղար խանոց էր, զոր Ճէլալիքն ցրվել  
են, զորս կորուսել։ Աւնի եւ արվեստաւոր  
ազգի ազգի. Եւ բոլոր քաղաքով երթոյր մեծ  
զետ Խազովան. Եւ այս Խազովաս խիստ բա-  
րելի եւ լաւ երկիր է, երկու կողմանց լեռն է,  
Եւ միջովն երթոյ զետն։ Եւ այս լերանց վրայ  
երկու զիհաց երեքտակ գեղօրայք են՝ Հայու,  
Հոռմի, տաճկի։ Եւ կայր վանք մի Հայոց՝  
Սուրբ Անտոն եւ առաջնորդն պարոնտէր 140  
Եղիայ. Եւ հույզ քաղաքին վանք մի այլ սուրբ  
Անարծաթ, Քէմէր կ'ասեն, Հին եւ աւեր, զոր  
այժմ նորոգել էին։ Եւ միւս կողմն քաղաքին  
Կոմանայ, ուր գերեզման է Յոհանու Ռոկերե-  
րանի, բայց չկարցաց ես անդ զնալ։ Եւ էր 145  
յայնժամ յոյժ սղութիւն, զի մէկ քիլա դարին  
Ն զրամ հաղիւ զտանէին. Եւ ի զանալո  
աժնութիւն էր խիստ, որ քիլան հինգ զրամ  
իջաւ. վառք Աստուծոյ։

## ԱԵԲԱՍՏԻԱ

Անտի օրուեկան եկաք ի թաղաւորանիստ  
փայիթախտն ԱԵԲԱՍՏԻԱ եւ ԱՐԴՈՒ օվան,  
որ է Ալիբուն օվայ։ Մեծամեծ եւ սրբն զեղեր  
ահսաք, բայց ամէնն աւեր. միայն Զիֆլիկն  
տասն տուն հայի զտաք եւ ի Պոլիս. հաղար 5

143 յայժմ։ — 144 կոմոնայ։ ռոկէբերանի։  
2 Աէրաստիոյ։

աւազ զայն բարելի մեծ գեղերն էւ Պրայի :  
Եւ Սեւաստ էր մեծ, լայն եւ ընդարձակ,  
մարդաշատ եւ բարօք լի - հացն, միան, կաթն  
ու մածուն, կարագն առատ - բայց միրգն էւ  
10 գինին նուազ, զի ցրտային եւ ձմեռնացին էր :  
Եւ կայր Երկու Եկեղեցի, մինչ Սուրբ Առ-  
առածածածին, միւսն՝ Սուրբ Սարգիս - եւ քա-  
հանայքն աւանալը, բայց հպարտք եւ զոսոզք -  
եւ ժողովուրդքն յոյժ երկիւզած եւ հեղ : Ասին  
15 թէ նի՞ խանայ էր, իսկ այժմ ԶՃ տուն . այն  
ցիր ու ցան Եղել են : Եւ քաղաքիս բոլորն  
մեծ երժափու մի երթայր, որ կոչէր Ազրի Երր-  
մայր - եւ այլ զետեր կ'երթայր քաղաքի մի-  
ջովն : Եւ ունիր Երկու Հիսուս եւ ամբոց պա-  
20 տուական . եւ քաղաքէն դուրս Քառասուն  
Մանկանց, անզն, լիճն եւ բազնիքն . ապա  
ջուրն ցամքել էր : Եւ առուրն մի հանապարհ  
ժառանար Եկեղեցի մի վանք՝ Հրեշտակապետ  
անուն, որ ունի իրեք վանք, վարդապետ մի  
25 Մելքիսէթ՝ տառնորդ<sup>1</sup> : Եւ կային շուրջ

6 աւագ: բարելի: — 9 կարագն: — 15 յայժմ:

<sup>1</sup> Աս է անշաւշտ ՇՄելքիսէթ եղ. Սերաստացիք, որ 1802ին փրկանուորան եւ նորոգան է էլմ. 1875 Նո-  
րեկը: Միշտառկազրութեան մէջ էր կարդամ առզերս (թղ. 220ր). «Զի յայս ժամանակին... ել ժանապարհ  
եւ պիւղ թիւնաւոր մի առմիկ Ղարայ Ազիսի անուն, ի Հիւսոսու (ա՛յապէս) կողմանէ եւ եկն ի վեցոց Շե-  
պատիստ քաղաքին. եւ առջն Մեփաստիստ բերթին  
Մահմատ վաշտն զեռ մանուկ զորով երկեւու ի նմանէ  
եւ զօղեցու բազում եւ անթիւ Հեծելաւք ի մէջ բեր-  
դին. եւ ամբացան թիւնաւորն եւ մասնեցաւ բազարն  
եւ երկիրն մարզով եւ անսունով, բեշուքն եւ առցա-  
նուքն ի ձեռն արեանարքու զարգանին, որ անհանայ կո-  
տորեաց բազում քրիստոնեաց . եւ զմանկուն նոցա

Աւելասում բազում անուանի գեղօրոյք, չէ՞ն  
եւ փարթամ . զեզ կայր, որ հազար տուն էր .  
Եւ Պինկոլն եւ ինկէլն իւր զաւառովն ամէնն  
ձէլալիք աւիրել էին : Մտանէաք ի ներս, մեծ  
տներ կային որպէս խաներ . եւ երկու, իրեք 30  
թօնտիր ամէն տուն, այնորպէս մեծ, որ եղ մի  
կու մտնէր մէջն . բայց անրնակ եւ անմարդ  
էր : Եւ քաղքէն դուրս Սուրբ Նշան վանքն<sup>2</sup> էր  
Աէնիքարիմայ թաղաւորին շինած . եւ կայ  
մէջն սուրբ խաչափայտից մասն :

35

## ՄԱԼԱԹԻԱՆ

Ազա անտի վեց օրն հասաք ի ՄԱԼԱ-  
ԹԻԱՆ . ազա բնաւ չէնք չտեսաք, միայն խա-  
ներ : Եւ էր խան մի գեղեցիկ կուրճի խան  
կոչեն : Եւ Մալաթիան էր ոլարսովաւոր եւ

— 28 պինկոլն : — 32 մաէր : — 36 մալաթիան :  
— 39 մալթայ :

Դերի տարեալ<sup>3</sup> հանդերձիւք զարդարէին եւ ի սուրբ  
հաւատացն մերկ տրաբին : Եւ բազում աւուրս նատեալ  
յեղը քաղաքին պրեաց եւ աւերեաց զգեղեցկաշէն ֆա-  
ղոսն եւ զաւանեն, մինչ զի ամպի մնաց Սերաստիայ  
քեմուն եւ վիճակովն բազում ժամանակս : Բայց զո-  
հանածք զլատուեց, զի յետ սակաւ ժամանակի եղէ  
կրկին խազազութիւն, որ ցրուեալ եւ հազարդեալ ժո-  
ղովուրդն Հաւաքեցաւ ի թվին Ծիծի . ազա զմէկ սո-  
մոր հացն ի հազար աւթմանի կերպաք . վաշոք Աստու-  
ծոյց :

<sup>3</sup> Այս շրջանին Ս. Նշանի առաջնորդն էր Ան-  
գրէաս արքեպիսկոպոս . Սարգիս զրիչ 1615ին կ'օրի-  
նակէ ի խնդրոյ Հարտուիք Բաղդասարին Տաթևացւոյ  
Քարոզադիրքը Շի Սէրաստիա ի զիւզն որ կոչի Դամ-  
շուայց եւ կը խնդրէ յիշել Շիւա առաւել զլնդրէաս  
արքեպիսկոպոսն, որ պահեաց զկարազնա աշակերտն  
ի բովն ի սուրբ Նշան, կերկրեց ու մինիթարէց, որ  
մինչեւ աւարտումն զբայց . Զիս. Երեւանի Պետ. Թահ-  
զարանի, թ. 973 :

40 մըզաշատ . բայց մարդ չկայցր , միայն պահա-  
պանք . եւ ասին թէ Ազգուս զեղն են , զի ա-  
մէն տարի կթոցն կ'երթան ի զեղն . եւ քա-  
զաքն մէն կու մնաց որպէս Սիս : Եւ կայր մեծ  
Եկեղեցի մի քարէ՝ Լուսաւորիչ անուն , եւ  
45 իրեք քահանայ , հարիւր տուն հայ եւ լիու-  
թիւն , աժնութիւն առատ . Այ խիարն մէկ  
զրամ . Ե , Զ ձմերուկ մէկ զրամ . Դ հաց մէկ  
զրամ , չորս զրամ օխամ մի միս : Կայր Եւ զեղն  
Եկեղեցի մի եւ Լ տուն հայ : Կացի անդ Երկու  
50 շաբաթ վասն քարվանի : Բայց Տաճիկքն նո-  
րա խիստ քաղցր եւ մարդասէք Են եւ քարի ,  
ոչ նման այլ Տաճկաց իժ եւ օձք , զի եւ կ ա-  
ւ ուր անզամ ոչ առեն մեզ , այլ է սայ ի եւ  
յիստ կ ու լի . եւ յոյժ պատէին եւ սիրէին  
55 զմեր ազգն :

## ԽԱՐԱՅՈՒԹ

Եւ անտի իրեք օրն Եկաք ի ՇիրԱք որ է  
ԿԱՐԲԵՐԹ , որ է ի վրայ բարձր լերսն : Եւ  
կայր ի նմա իրեք Եկեղեցի Հայոց եւ Հա-  
րիւր տուն հայի . Եւ Տաճիկք յոյժ չար եւ  
60 վաս եւ խստասիրտք . Եւս առաւել Ենկի-  
չարիքն՝ զի նորա տիրապետիկ Են զքաղաքն  
եւ աներն մեծամեծ չինեալ Են որոքս սա-  
րայնի . ամէն մէկ մէկ պարոն մի Են . զուլումն  
շատ . մարդ չիշխել բան մի առել . վասն որոյ  
65 Հայք սակաւ մնացեալ են : Եւ Սուրբ Յակոբոց  
Եկեղեցին խիստ զօրաւոր է , որ եւ Տաճիկք

յահէն սարսեն և Հարկիս կ'առնեն և նույնը  
տան վասն սքանչելեացն : Կային և Ասորիք  
բազումք ի քաղաքն եւ ի բոլորն դաւառօքն  
չըջակայ գեղօրէիւք : Եւ բերթին հուզ կայր 70  
մեծ եկեղեցի մի Ասորոց, Հին, որ ասին թէ  
սա յառաջ է քան դրերթն : Եւ կայր քաղաքին  
առջեւն մեծ օվայ, ապնիւ և ջրաշատ նման  
Արթօն օվու . Եւ այն օվան սաֆի հայու գեղան  
մինչ յԵփրատ գետն . էին եւ Ասորոց մեծ գե- 75  
զեր՝ Ամիսոս, Ազտուհէր եւ այլ : Եւ կայր իրեք  
անվանի մեծ վանք ի յօվան, մին Ասուրու  
սուրբ Գէորգ, մինն սուրբ Արդլմահէ եւ մինն  
Կարմիր վանք . Արդլմահէ լեռան տակ է եւ  
գեռ այն քարն կայ արևնաթաթախ, որ Հայրն 80  
զենեց ի վերայ : Եւ ի Կարմիր վանքն են  
իմաստուն վարդապետք եւ զրադիրք, որոյ  
վկայ են պատմագիրք . Եւ մինչեւ ցայսօր անտի  
պրեանք եւ լաւ վարդապետք անտի ելաննն :  
Եւ սուրբ Գէորգ՝ Մկրտիչ վարդապետ մի ա- 85  
ռաշնորդ, աշակերտ Ազարիայ կաթողիկոսի,  
ուռ որ ես կացեալ էի . սա տեսեալ զիս էառ ի  
վանքն առ իւր :

Էր զեղ մի մեծ ԿԱՅՐԻԿ, որ Հազար խա-  
նոց էր մէջն . իրեք եկեղեցի քարէ . Եւ յոլով 90  
քահանայք, բայց ժողովուրդ սակաւ, զոր Են-  
կիչէրիքն փախուցեալ էին : - Եւ զեղ մի այլ  
կայր ՊԶՄՇէն, յոյժ բարելի եւ մարդիկ փար-  
թամ . այժմ յայն տանուտրաց մին մնացեալ

67 հեէրս: — 73 Հրայշտառ: — 74 յարթօն: յօվան: — 75 եփրատ: — 93 բարէլի: մարդիք:

95 ԷՇ՝ Մուրաստ Մարզարէի որդի . ուս զվաշան  
երեր պատիւ ի տուն իւր , ամէն հեծելոք . և  
կերակրեց առանց կրակի . և երկրորդ օրն կե-  
րակրեց եվանձ ուտելով զայնչափ մարզիկ .  
այրեւածիոց գարման եւ զարի նա ինքն միայն  
100 երես :

Եւ անգ<sup>3</sup> եւս մեծամեծ տներ էին , որ-  
պէս ԱԼԵՐԱՍՈՒ : Անդ տեսաք մէկ տունն քառ-  
սուն օրոցք . և ամէնքն հօրն հնազանդ . և թէ  
Հայրն մեռանէր՝ մեծ եղբօրն հնազանդէին .  
105 և այսորէս մեծ սէր և միարանութիւն մեծ  
տեսաք երկիրն այն , զոր այլ տեղ երկու եղ-  
բարք կամ երկու քոյրք ոչ կարեն ի միասին  
ընակել ի միում տան : Եւ էին սիրով Հայք ընդ  
Ասորիս . զի ազգիկ տային եւ տանուին . և թէ  
110 ոք Հայոց մեռանէր՝ զԱսորոց երէցն կոչէին  
ի թագումն եւ Ասորոցն՝ զՀայոց քահանաց .  
և ամէնքն հայ լեզու զրուցէին : Կայր ի միջի  
նացա և Հանճի զեզօրոցայք . որ եւ նորա ազգիկ  
տային եւ տանուին . և նորա մեծ սէր ունին  
115 ընդ Հայս եւ միարանութիւն , և Հայոց լե-  
զուաւ խօսին . և չես ճանաչել , Հայ է թէ Հո-  
ռոմ եւ ո՛րն ասորի . զի չիք խոփր ուս նոսա  
եւ ոչ մի ինչ :

## ՀԱՐՍՑԱՀԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Եւ կացի ուս Վարդապետն երկու շաբաթ ,  
120 զոր շատ բարութիւն եցոյց ինձ . և խրատ ես

98 մարզիք : — 99 յինքն :

<sup>3</sup> ի հարբերդ :

ինձ, թէ «Սախըն ձիւ հետ չի տանիս, այլ  
թող աստ առ իս զժիւ եւ փոխէ զհանդերձդ  
եւ հին զժուճ ապա հաղիր. զի աստ Քրթաս-  
տան է» : Եւ ես այնպէս արարի, որպէս հրա-  
մայեաց : Եւ այնպէս չար էին Եանչարիքն, 25  
որ քրիստոնէից չի տային ձիւ հեծնալ, ոչ  
ջորի, ոչ լաւ չուխայ ապանիլ, ոչ այդի, ոչ  
տուն մեծ . այլ զամենայն յափշտակէին ի ձե-  
ռաց : Եան առաջնորդաց չտային քննել հաս-  
չաս կամ օրէնք պահել . զի թէ ոք կամէր կին 30  
առնուլ եւ չհասութք լինէր, չերթային առ  
հովիր կամ առաջնորդ, այլ (երթային առ)  
Ենչարիմի եւ տային կաշտ, եւ նա գայր իրի-  
ցուն թօփուլզով պսակ տայր առնել . եւ նա  
ակամաց պիտէր խօսիցն չելնէր . ապա թէ ոչ 35  
բազում չարիս անցուցանէր ի զլուխն եւ լիսաւ  
եւ տուզանք ձգէր զնոսաւ . այլ եւ եկեղեցեաց  
եւ վանօրէից : Եւ թուրքաց աշխարհն ամե-  
նայն այդպէս են, ապա Խարբերթ առաւել քան  
զամենայն : Ի Ստամպոլ սակաւ մի ունին միսիւն 40  
թարութիւն քրիստոնեայք եւ վայելչութիւն,  
զի ունին եկեղեցիք պայծառ, տօնախմբու-  
թիւն ձայնիւ . հեծնուն ձիւ ջորի, ապանին  
եռոգչայ, Եթմիչչայ չուխայ . ուտեն, ըմպեն,  
ուրախ լինին . ունին մեծամեծ տունս, էդիս 45  
եւ զրախտա եւ այլն . զոր յԱնատօլին բնաւ  
զայս ոչ երեւի . այլ տներն ախոռի նման, եւ  
չալուով, ցած . իսկ ի քաղաքն քարրիչով,  
զովին փոքր եւ խորափտիտ, խաւարչտին :

135 յակամաւ: — 137 առեքանք: — 144 եթմիչչա:

150 Եւ յոյնմ ամի (1613), յորում եւ էի թօխամֆ, ել հրաման չար, թէ եկեղեցիս եւ վանուրոյս մի վառեցնեն մամեզին ճրագ, այլ եղէ. եւ թէ ուրեք զտանէին՝ տուղանէին։ Եւ այսպիսի տառապանք եւ նեղութիւն էին ի ձեռս ջան-  
155 կաց, վասն որոյ յոյժ աղքատ եւ չքաւոր են, զի միշտ զրկեն, զզվեն, տուղնեն, զրադարսեն եւ առաւել հարկո պահանջնեն. եւ թէ առան որդի ունիցի ոք, ամէնէն խորած տունուն. եւ թէ հեռանց, զարձեալ տանուն։ Եւ Սասա-  
160 պօլայ զատառօք ձի, ջորի հեծնուն. Եւ անտի Սեւաստ մինչ յԱմքիթ էջ եւ ուզու. իսկ Սեւրու-  
տուքն առն էջ այ առէկմա չէրեւի, ամէնն եղ կու բանեցնեն, ազ եւ բեռն բառնան, այլ եւ հեծնան։ Վասն որոյ ես ամէն քազաք, ամէն  
165 ամէջ յոլով միւսն եւ տուղանք տայի վասն ձիւսն, այլ եւ մութ անզիս, ռասնին եւ սրա-  
շոց տուն տայի պահել, ամէնին զրած տայի, որ ուլաք չառնուքն. Եւ ի ճանապարհին եւս քանիցս անզամ առին ուշախ, զոր տրօք հա-  
170 զիւ կարացի թափել ի ձեռաց նոցա զեզկելի ձիւսկո. Եւ սցագէս ահիւ. Եւ դոզութեամք չըջէի տարակուսանօք, թէ արէտ մեծ քարիւ-  
նով չըջէի, զի ամէն ամէջ հարամիք էին, սօխ-  
թանի, ամէն ամէջ թարյան եւ եազմայ եւ զու-  
175 լում. որ ես առաւել քան զամենենեանոն տու-  
ռասպէի, վշտանայի, քանզի անզեալ չէի ես  
այս բաներուս, Հիանայի եւ նեղանայի յոյժ։

152 մամեզին ճրագ։ — 153 ուրեք։ տուքանէին։  
— 156 առաքնեն։ — 161 ուխու։ — 165 տուքանք։  
— 177 Հիանայի։

եւ հանապազ ի սուր եւ ի տրամաթիւն էի  
անժիթիթար :

## ԲԱԼՈՒ

Եւ կալայ անդ ասորի մի վարձով, որ գի-  
տէր քրդերէն եւ Հայնակ . եւ անցեալ զպատ-  
զական ԵփրԱՏ գետն իրեք անզամ . մինհ  
քրդու շալկով, միւսովն՝ կէմով . եւ էր ջուրն  
յոյժ քաղցրահամ եւ սազ, որ թէ գտու մի ու-  
տես եւ բմզես՝ մարսն : Եւ անտի օրուելէսն  
ի ԲԱԼՈՒ խասապան՝ բազում Հայոց դեղօ-  
րօք : Եւ էր Բալուն իբրեւ կզզի, զի Եփրատն  
բոլորեալ էր զնայ, սակաւ մի ցամաք մուտ  
ունի . եւ ունէր սիվրի բարձր անառիկ բերթ 10  
մի որպէս Օսմաննառւիսին . եւ կայր անդ եկե-  
ղեցի մի եւ ազօթատեղ Մեսրոր վարդապե-  
տին, զոր մահալ ի ներս՝ ազօթեցաք, մեղաց  
թողութիւն ինողրեցաք մեզ եւ մեր ննջեցե-  
լոց : Եւ Հանդէպ նմին կանդնած վէմ մի կայր, 15  
որպէս տապան Հրէից . եւ ի վերայ զիր, զոր  
ոչ կարացաք ընթեռնուլ . եւ ասին թէ այս  
նշանադիրքն են, որ յԱստուծոյ տվաւ Հայոց :  
Եւ էր Բ Եկեղեցի Հայոց վիմաշէն զեղեցիկ եւ  
նոր . եւ մին մէջիթ Քրդաց . եւ այն անարդ եւ 20  
յարդով ծածկած, որատերն ջաթին : Բայց զի-  
նին խիստ շատ, զի այդիք յուղիք են եւ կա-  
քաւք բազում եւ զէր, իրեք, չորս մէկ վա-  
րայ : Կացի անդ շարաթ մի, եւ այլ մարդ  
վարձեցի, զի նա (ասորին) դարձաւ ի տուն : 25

1 կալու: — 2 քրթէրէն: — 4 քրթու: — 5 ոյժ: — 20 քրթաց: — 21 ծածկաց: — 22 կաղաւք:

Եւ մէկ օրն հասաք ի ճԱՊԱՂՋՈՒԽՆ, լեռներով, ձորերով և անտառոք : Եւ սորոյ առջևով մէծ ջուր կ'երթայր . եւ այլ զետեր առան եւ անուշ . կայր անդ քանի մն առան հայ՝ Կամըցիք, առ որս օթեցաք գիշերն . եւ ընդլաւանալն կէս օրն հասաք ի ՄԱՆՈՒՇԿԱԽԻՑ, որ էր բերթ ի վերայ բարձր լեռն . եւ ի սոսորուն զեզանք Հայոց, զոր նորոգէին : Եւ սախն թէ Ճէլալիք աւիրել էին եւ ցրվել զՀայերն . այժմ այս քրոջու պարսն յոյժ սիրէ զՀայք, վասն որոյ սու ժողովէ . ամէն մէկ իւր տեղն զոյ եւ չինութիւն առնեն, ուժեքէ չի վախեն :

Եւ անտի սակաւ մի զնացեալ Լլառք ի բարձր լեռն մի Խաչի օրերն<sup>1</sup> . եւ կայր ի վերայ նորա ձիւն . եւ ի զլուխ լեռանն կայր ազրիւր մի ազնիւ եւ անհման, զոր ՇԱՔԱՐԼՈՒ կոչեն . եւ լիրաւի շաքար եւ պազ էր ջուրն, զոր ըմպեցաք կուշտ, քրտնած . եւ ոչ վնասաց մեզ, թէ որէս քրտնած էաք, զի հետեւակ զնացաք : Եւ անտի իջեալ մէծամեծ անտառոք եւ բաղում լեռամրք եւ զետերօք անցանիքաք . յորս աեսաք վայրի խոզեր եւ արջեր : Հասաք ի ԿՈՒԱՐԱՌՈՒ զեզն . եւ Քրդերն մեզ կերակուր բերէին, զի այսովէս սահմանք է նոցաւ, որ ինչ ազգ խոնախ զոյ նոցաւ, պիտոր ուսեցնեն . եւ Երբ աներուն Եյնես<sup>2</sup> յետեւանց հասնին եւ

25 բրթու : — 48 զորս : — 49 բրթին : — 50 բէրէին : — 52 անկրուն :

<sup>1</sup> 1612. սեպտեմբեր 23—29 ըստ Ե. Տ. :

թալինեն արպի<sup>2</sup> ողէս : Եւ է ուշխարհն այն յոյժ  
ցրտային որպէս լէհ . բնաւ եմիչ չի գտվիր ,  
ո՞չ խաղող , ո՞չ զինի , բայց միայն շողզամ , 55  
եղ , կաթ , մածուն և արագ ջրեր : Եւ Մուրք կա-  
րապետու ճանապարհն ալ երկու-իրեք տեղ  
զափար կ'առնուն : Կուտաս տեսաւ դիս սու-  
պաշին . հարցաւ թէ «Ուստի՞ է սա» . ընկերս  
ասաց , թէ «Սեւըստու» . նա ասաց . «Մուտ և . 60  
զա Ստամպօլցի է» . և ամէն կ'ասէին թէ  
«Մա այս տեղաց մարդկանց չէ . ապա թող  
ասյ առան դուռուշ» , զոր այլոց երկու ու-  
ռուպ կ'առնուր . ապա մէկ զուռուչով հաղիւ  
պրծուցին դիս Հայք : 65

Եւ անտի ելաք ԹՕԶԼՈՒ ՏԱՂՆ . և նայ  
էր յոյժ բարձր , որ միւս կողմն սուրբ կարա-  
պետն էր , կէս տուր ճանապարհ : Եւ ասին  
թէ յորժամ Տրդատ և Լուսաւորիչ անդ էին ,  
Կուտարսու մինչ ի Մուշ հեծէլ էր : 70

## ՄԾՈՒ ՍՈՒՅԹԱՆ ՍՈՒՐԲԻ ԿԱՐԱՊԵՑ

Եւ իբրեւ տեսաք զխուպայքն Մշու սուլ-  
թան սուրբ կարապետու՝ անկաք ի վերաց  
երեսաց մերոց և բաղում խնդութեամբ լցեալ  
զոհացաք զԱստուծոյ , որ արժանի արար զմեկ  
տեսոյն սուրբ կարապետին . միա՛ոք Աստուծոյ : 75  
Զոր էր մեծ Եւ փառաւոր վիճաշէն կամարա-  
կապ մեծ եկեղեցի երկու զմալէթով . և վե-  
րեւն արձին որպէս մէջիդնուն վրայ . եւ

53 ոյժ : — 55 շողզամ :

<sup>2</sup> Արար-բեղութներու նման :

ժամանակ ի ներս տեսաքը լոյնանիստ բակն պարու-  
սով, բաղում խցերով և օթեւանօք։ Կոյր  
վարդապետ մի ընտիր և աստուածահաճոյ՝  
Պօլոս անուն, չորս ևսիսկոպոս, ԺԵ հարե-  
զայ, տնտեսք, սարկաւագք։ Եւ մշտկքն ա-  
մէն քուրզ էին եւ հայերէն ջրի պէս կու խօ-  
ս սէին։ Եւ ոչ թէ վանքն միայն, այլ եւ ամե-  
նայն Մշու օվան եւ գաւառն հայնակ զրուցեն  
Շուրդերն եւ սուրբ Կարապետի անունն կ'Երդ-  
նուն։

Փոքր բան տարաք, ժամ առնելով տվաք  
90 Եւ աղաչեցաք որ մուծին զմեղ ուր տապանն է։  
Եւ եկեղեցոյ մէջն սիւնքն զեղեցիկ մարմէրէ։  
Եւ կայ աջ կողմէն մատուռ մի եւ զերեղման  
սուրբ Կարապետին։ Եւ միւսն Աթանազինէ  
ևսիսկոպոսի։ զոր Երկրպաղեալ աղօթեցաք,  
95 մեղաց թողութիւն խնդրեցաք մեղ եւ մեր  
ծնօղաց եւ մեր երախտաւորաց։ Մեք հասաք  
մեր մուրատին։ Աստուած զամէնքն հասցնէ  
իւրեանց մուրատին։ Եւ առին մեղ ճուհար  
հոգուն, որ ի սուրբ զերեղմանէն կ'ելինէ։

100 Եւ վարդապետն կոչեաց զմեղ ի ձաշ. զի  
էր Երկիւզած եւ աստուածասէր, քաղցր եւ  
համեղախոս. կերաք կերակուր վանաց եւ  
արբաք ջուր։ Սկսաւ խօսել վարդարպետն եւ  
ասել. «Խնչ առնեմ, որդեակ, նոր հմ չինել  
105 եւ նորոգել վանքս. զի յոյժ աւեր եւ ամայի  
էր. զի ամէն տարի խղըլալաշն կ'այրէ, կ'ա-

84 քուրթ։ — 87 քուրթերն։ — 89 պահապարաք։  
— 104 որդեակք։ — 105 յամայի։

ւիրէ . ահա երկու տարի է որ խաղաղ եմք» : Աւնէին Ժ դօմէշ, Ճ ոչխար, ԺԵ եզն : Անտի դհացաք մեծ տնտեսությունն , տեսաք մեծ թօնտիր մի , որ եղ մի կու մէկնէր . և ասին թէ<sup>110</sup> «որչափ ազր եւ փոշի լինի ասու եւ թօնիրո՝ մէք բնաւ չեմք աւիլել . վաղվնէ կ'ելնեմք աւելած գտանեմք» : Եւ ասին թէ կազ դեւ մի կայ , որ սուրբ Կարապետն անդ թողել է սպասաւոր վահաց :

115

Եւ ի ձախ կողմն մտառու մի այլ տեսաք . և ասին . Կին մի իշխանի շինել է դայս . կամէր մտանել ի ներս եւ չժողուին , զի կնոջ հրաման չկար . և նա բոնութեամբ եմուտ ի ներս եւ ել սուրբ դերեզմանէն զօրութիւն , զի որ<sup>120</sup> պէս այր մի զրեհաւոր եհար զեղարդեամբ եւ սպան զնա . եւ թաղեցաւ ասու : Եւ ի դուրս ելեալ յարեւելից կողմն ընդդէմ դռան էր զուպա մի փոքրիկ որպէս աշտարակ , զոր Յարութիւն կոչեն . եւ մտեալ ի ներս՝ տեսաք<sup>125</sup> սեղան . եւ երկրպագեալ ելաք անտի : Եւ ասին թէ զուպիս ներքեւն դեւք են արդիլած . և մեք եղեալ ունկն ի գետնի՝ այլ եւ այլ ձայնս լսեցաք ահարկու : Եւ հուպ նմին իննակեան աղբերն մերձ միմեանց , աղնիւ եւ զեղեցիկ<sup>130</sup> ջուրք : Եւ էր զուռ մի մեծ քան զայլսն , ուր ասին թէ Լուսաւորիչն մկրտութիւն է արել . և իրրեւ ըմպէաք՝ չկարցաք իրեք կում առնուլ ի սաստիկ սառնութենէն : Եւ այլ առաջ

112 յաւիլել: — 113 յաւիլած: — 123 ընդդէմ:

— 128 յունկն:

125 տեսաք հազար և աւելի թօնիքու և օճախ  
վասն ուխտաւորաց, որ անդ խորու և ոյի-  
րեան կ'եփեն, զի ամենայն տիեզերաց դան առ  
նա ի հեռու և օտար աշխարհաց՝ Ռւումելու-  
և Լէհաց ԲՌ—ԳՌ հոգի կու լինի. և ուխտն  
140 է Վարդավառին օրն :

Եւ եկեղեցոյ ետոյքն տեսաք մէծամեծ պի-  
մաց իսաչեր կանդնեցուցած և աղդի աղդի  
արվեստ և կապք ի վրայ հանած : Եւ սակա-  
ժի այլ վայր էր վահք մի այլ, Զորէ հանդիսա-  
145 կոչեն, բայց աւելը է . և ասին թէ ջորիքն որ  
բարձեալ էին զուրբ մարմինն՝ անդ կանկ ա-  
ռին և ոչ կարացին շարժիլ ի տեղոյն . և  
իրը և տարակուսեցան՝ եկն հրեշտակ Տեսոն  
և ասէ . Աստ հաճեցաւ Տէր բնակիլ սրբոց-  
150 դայն տեղն Եկեղեցի շինած էր :

Եւ յաջ կողմն սնցեալ եկեղեցուն՝ տեսաք  
զլուջուն գերեզմանն, բայց երկու կտոր եղած  
էր . և ասին . Ով քարիս վրայ պառկի, մէջքն  
չի ցաւի : Բայց վասն զող Քրոնց՝ բարձր  
155 պարիսպ քաշած էր :

Եւ առւրբ Կարապետն մէջ մէջի է և լեռ-  
նային և յոյժ գեղեցիկ տեղ . և ի ճանապար-  
հին սաֆի անթառամ ծաղիկ է և ևապանի  
սմոզոլ և այլ հոտով ծաղինի : Իսկ մորին ա-  
160 մէնն եէմիշ է՝ խնծոր, տանծ և սալոս, բն-  
կուզն շատ : Եւ աղդ մի պառւղ կու լինի՝  
կարմիր սպիտակ գունով, վուքր և կլոր քան  
զիերաս՝ մէջիս համ ունի, ալօն կոչեն : Եւ

զբնկպից ծառի ճղերն առջքն կոտրել էին վրայ  
ելանելով, զի բազումք կան յանտառնին և 165  
յուժ սիրեն զբնկուզն :

Եւ սուրբ Կարապետու կ'երեւէր լիոն վա-  
նաց և Բաղէջ եւ միւս կողմն Եփրատ գետ և  
Մուշ քաղաքն օվայովն . և կայ օվան իրեք  
անվանի սքանչելագործ մհծ վանքեր . և ևն 170  
Հուալ և մերձ միմիանց իրրեւ կուսկարայք .  
մինն Մատնէվանք, ուր կայ Պետրոս սուաքե-  
լոյն մատն և այլ բազում նշխարք, զոր երեր  
Սասնցի տանուտէրն ի Հռոմոյ և շինեաց ի  
վրայ և կեղեցին և կոչեաց Մատնէվանք : Եթ- 175  
կրորդն՝ Սուրբ Աղրեր, ուր կայ շիշով պատ-  
վական արիւնն Քրիստոսի, որ ի կողէն : Եւ  
սուրբ Առաքեալն ստորոտ լերինն, ուր կան  
Բեւեռքն Քրիստոսի, որ բեւեռեցաւ, այլ և  
Գեղարդն և այլ մասն : Եւ այլ ի վայր են խո- 180  
րու մօրիք և լերինք, որ են Սասունք :

Եւ իրեք օր կացի անդ, հասի ամենայն  
վասփաղանացու : Եւ էր անդ Տէր Մարտիրոս  
անուն և պիսկոպոս մի և վարպետ, յոյժ  
քաղցրեղանակ . զի յորժամ հանէր զձայնն՝ 185  
համեզ նման Մամասոյ, ոչ թէ միայն մար-  
դիկ զմայլէին, այլ և թռչունք ժողովէին  
մերձ առ նու : Զայց յոյժ աղաչէին մնալ  
յԱմիթ . և նու ոչ կամէր, զի ոչ խնդրէր  
զիմոս ի մարդկանէ, այլ առ ի Աստուծոյ : 190

164 զնկզից : — 167 լէսն : — 169 յօվայովն : — 171 կառ-  
կոյրաք : — 177 ի կողին : — 186 ժարդիք : — 188 ոյժ :

## 10. ՎԵՐԱԿԴՐՈՒԹՅԱՆ ԽԱՐԱ

ՇՈՒՎԱ-ԱՐՄԵՆԻԱ

Եւ սուրբ տեղեացն եւ բարի աստուածա-  
զգեաց կարգաւորացն բազմալի սիրով հրա-  
ժարեալ մինչ յարտառուս հարեալ, դարձաք  
կրկին ի Խարբերթ։ Լուաք անդ թէ Մուրատ  
5 մաշան անթիւ եւ անհամար հեծելազօրօք  
գնաց(ը) ի վերաց Շահին եւ հասեալ յԱմիթ՝  
մեռու։ Զոր ևս ողջունեալ զՎարդապետն  
իմ<sup>2</sup>, առի զձիս եւ զիմ զգեստս չուեցի գէալ ի  
յԱմիթ, զոր լերամբք եւ մայրիւք երկու օր ու  
10 կէսն հասաք ի ԾՈՎՔ. Եւ կայր Ծովուց մէջ  
զեղ մի Հայոց ի կղզին. Եւ քարէ եկեղեցի մի  
յորում կայր մասն խաչափայտից, որոքս կոչի  
սուրբ գրոց՝ Ծովուց սուրբ Նշան, զոր քա-  
զում նշան եւ սքանչելիս առնէ մինչեւ ցայ-  
15 սօր, զոր եւ ի գիրս ընթերցեալ եւ լուեալ ի  
բազմաց։ Եւ կայր ի ցամաքն խան զառ ի  
կողմն լերինն որ էր մայրի անդ օթեցաք։ Եւ  
թողեալ ի խանն զինչս եւ զստացուածս եւ  
զդրաստս, եւ զտեալ նաւակ մի՝ անցաք ի

8 սղեաս։ — 15 ընթերցեալ։ — 17 կողմ։

<sup>1</sup> Փաքրիկ սիրու մը կը զործէ Հռո Սիմէսն ժա-  
մանակազրութեան դէմ, երբ կը զըէ թէ Հուաք անդ  
թէ Մուրատ փաշոն անթիւ եւ անհամար հեծելա-  
զօրօք գնաց ի վերաց շահին եւ հասեալ յԱմիթ մե-  
ռու։ Մուրատ փաշու մեռած էր տարի մը առաջ,  
5 Յզուստ. 1611. Հմատ. Hammer, 2, էջ 737։ Բևանք  
ողէաք է ացնողէս իմանալ որ Սիմէսն ի Խարբերդ Մու-  
րատ փաշոցի մահուան մասին եղած խօսակցութիւն  
մը արձանագրած է իւր յուշտեարին մէջ իրրեւ նոր  
դէպք մը։

<sup>2</sup> Մկրտիչ Վ. Խարբերդցի։

դեղն եւ մասալ եկեղեցին. դեռ զերեկոյին 20  
ժամն կատարէին։ Խնդրեցաք եւ ցուցին մեզ  
զուուրբ նշանն, որում անկեալ երկրագեցաք  
եւ մեղաց թողութիւն խնդրեցաք մեզ եւ մեր  
ննջեցելոցն։

Եւ անտի մէկ օրն հասաք յԱՐԴՅՈՒՆԻ քա— 25  
դաքն, որ էր բարձր լեռն։ Եւ ի գլուխն եկե-  
ղեցի վիճաչէն մեծ զմաքթայարկ, որ կոչի  
Բարձր Աստուածածին։ Եւ եկեղեցի մի ալ ի  
լեռան տակն որովէս վարագայն։ Եւ գեղ ալ  
կայր եւ չէնլիք։ Եւ ասին թէ վերի տաճարն 30  
առաքելաշէն է եւ յոյժ սքանչելազործ, զի  
ամէն կիրակիմտուն լոյս կ'իջնու ի վրայ  
զմաքթին ակներեւ ամենեցուն։ Եւ անտի հա-  
սաք կէս օրն լեռ մի վայրի, որ կոչէր ՆԱԼ  
ԴՐԱՆ։ Եւ իրաւի, զի սաֆի քար էր, հող կամ 35  
կանաչ չերեւէր։ Հաղիւ անցաք՝ ո՛չ նոտ  
մնաց, ո՛չ փօսդալ։ Եւ իմ չըզմիս տապահն  
անկաւ։ Եւ անտի եկաք ի Տիվլիկի Զիջն։ որ  
էր խորու ջուր, զոր ուզտիւք հաղիւ անցաք։  
Եւ մերձ յԱմթայ զուտր հայու գեղեր են եւ 40  
վանքեր, որն չէն, որն յաւեր։ Եւ Ստամպօլոյ  
մինչ յԱմիթ ո՛չ հոռոմ տեսաք, ո՛չ հրեայ։  
բայց թօխաթ քանի մն տուն ջհարի, եւ նոքա  
ևս հայնակ խօսէին։ Մինչ Սեւաստ սակաւ  
էր ասորին։ Եւ անտի յառաջ սաֆի հայ ու 45  
ասորի մինչ Մուսուլ եւ Պալմատ եւ այլն, որ  
եւ Ասորեստան անուանի։

## ԱՄԻԹ-ՑԵԿՌԱՆԱԿԵՐ Տ

Եւ մերձ եղեալ յիշմթայ՝ երեւցաւ ազնիւ  
և պատվական պարխազն ախցրանաչէն, որ է  
50 աթոռ և թափս հայրապետացն Հայոց եւ<sup>1</sup>  
թագաւորաց. և այժմ եւս աթոռ հայրապե-  
տաց և զաստաց վարդապետաց. զի միշտ  
անդակաս անոնի ելանեն ուսումնատէր եւ<sup>2</sup>  
իմաստուն եպիսկոպոսք, վարդապետք, երա-  
55 ժիշտ վարդապետք, ընօտիր քահանայք, այլ եւ<sup>3</sup>  
զպիրք եւ զպրատունք: Եւ մենալ ի ներս՝  
իջայ ի Հասան վաճին խանեն, որ մեծ եւ ան-  
հանան չէնք ունէր, կոմիտածու եւ անտաշ պր-  
ճոք. ունէր զետեափոր երկու ախոռ մեծ, որ  
60 Են ձի մէկնէր ի մէջն ազնիւ Հա-  
ւազ. բոլորն Երկթէ մուշպախ, ներկած ազդ  
եւ ազդ զեղողք. ունէր իրեք տակ օսանի,  
ամէնն քարէ՝ ներքին, միջին եւ վերին. Եւ  
կից նմին ոսկերչնոց խիստ զարմանաչէն, կա-  
65 մարտկառ իրը զիշինառուկն Պուրառ եւ Ալր  
վաշտն Ատրանու: Ունի եւ լաւ արվեստա-  
ւորք, որ զատ Ատամպօրաց այլ անդ չպատճին,  
ոսկերիչք, զառնիշանձիք, պիշտիչիք, չախու-  
ճիք, բարուչցիք, չզմաճիք եւ այլք, որ խիստ  
70 ամուր եւ լաւ բանին. եւ ինչ վիէ շաքար ուզես՝  
անդ զատնես:

Կայր Հայոց Երկու եկեղեցի, մեծ եւ պր-  
մաշէն վատաւոր. մէկն Սուրբ Կիրակոս աւագ  
եկեղեցի եւ Սուրբ Ատրպիս: Ունէր զարպառ  
75 եւ եպիսկոպոսարան եւ զպրատուն եւ վար-  
դապետ մի Բարսեղ անուն, որ եւ առաջնորդ,  
աշուկերտ Արտպիսն կաթողիկոսի, այլ խրթին

եւ բազմիմաստ : Սա տեսնալ զիս՝ ճանաչեց, զի երբեմն եկեալ էր ի Լէհ նուիրակ սուրբ իշմիածնայ : Կայր Հապար տուն Հայի եւ աւ մէնքն Հարուստ եւ փարթամ, պերճ եւ փառաւոր . եւ որչափ ամալ եւ մեծութիւն կայ, ամէնն իրենք զավտ են արել, թէ զտառապիանան, թէ զկօմրուեկն, թէ զիսաներն [թէ զտառապիանան] եւ զայլն ամէննայն : Այլ եւ աշխիքն, պիրեանձիքն, քէպապձիք, Հացծախն, պախզալնին, խասառզնին ամէնքն Հայք են : Եւ երբ կիրակի լինի կամ տօն՝ Հայք խանութ չեն բանալ, չեն բանիլ . նա զիտես թէ ամայի եւ վէրանէ : Աստ եւ ի Սեւաստ տեսաց լաւ հաւառ եւ լաւ քրիստոնէութիւն . թէ՛ ժամ երթալ, թէ տօն պահել, թէ օրէնք քալցընել, թէ Հիւրընկալութիւն, թէ կարգաւորաց Հարկիք, թէ ժամակարգութիւն, թէ քարոզ, զանձ, տաղտեսոր եւ մեղեղիք, թէ դաս վարդապետաց եւ զրադիր :

Եւ օր մի զնացի Սուրբ Կիրակոս ի ժամ . Հինգ տեղ պատարագ էր, զի Հինգ խորան ունէր . եւ քսան եւ Հինգ էրէց Համրեցի զատ վարդապետաց եւ Հարեղայից եւ եղիսկոպոս սաց : Եւ բարի սահմանք մի այլ անդ տեսաց, զի ով ժամ առնել տայ, նայ Փառք ի բարձունուն յետեւ ժամին տէրն կու զայ Հետ իր քահանացին եւ ոկտանի վարդապետէն բաժնիլ ժամուց մինչեւ ի կղերիկոս . եւ ոյնպէս կարգաւ, որ զինչ քահանացին տայ, կէսն սար-

կաւագին . Եւ այնոր կէսն կղերիկոսի . հոյնպէս  
թաղման եւ այլոցն Բ . Բ . Գ . Չ . շահի կամ  
այլ աւելի փոքրաւորաց տան . Եւ յետ կատար-  
110 ման տուն տանին յընթրիս : Բայց յոյժ անու-  
շահամ եւ համեղ ազնիւ կերակուր տան , ա-  
մենալի սեղան եւ բաղմակերող եւ դնով . զոր  
ոչ Ստամպօլ , ոչ Հալասպ , ոչ այլ տեղ չեմ տե-  
սել այնպիսի լի եւ տուատ կերակուր , միայն ի  
115 Լէհ : Այլ եւ խորտիկք՝ պիրեան , պօրակնի  
եւ այլ քաղցրաճուշակ եւ բաղմածախ եւ մե-  
ծագին : Իսկ զինին Արդինու քաղցր եւ թանձր .  
բայց թէ մին Փինճան խմես , բաւ է քեղ . զի  
թուրքի աշխարհն իրեկ զինի յիշուի . մինն  
120 Պուլտուխոյու , մին՝ Անկուրու եւ մին՝ Ար-  
դինու :

Եւ տներն զրսեւանց աղոտեղի կ'երեւի .  
բայց յորժամ ներս մտանես , այլ չուզկս զնալ  
անտի . քանզի Հալոզայ տներն կու նմանին՝  
125 ազնիւ , թափանլու , նաշխուն եւ քօչքերով : Եւ  
քաղաքացիքն յոյժ բարեկեցիկք եւ պարկեշտ .  
նաև ընթրիս բաղմեալ ոչ արրենան , ոչ շատ  
խօսին , այլ հեղ եւ հանդարառութեամբ . զի ա-  
մէնքն կարդացողք , տօմարագէտք եւ հանձաւ-  
130 բեղք , զրուցարութիւն թէ առուտուր , թէ  
առուլիս՝ ամէն մարդավարութեամբ եւ ամե-  
նայն ինչ խմասութեամբ . եւ զրուցն զրարար  
եւ ոճիւ բարքն : Այլ եւ ինքնանք պարթեւք ,  
զեղեցկատիպք , ազնաւուրք եւ ուժեղք , որ-  
135 պէս ձուղեցիք եւ Լէհք , որ ցանկայ մարդ ի

տեսս նոցա։ Զի անդ է այժմ Հայոց Աթէնք։  
զի եւ վորքը տղայք զիտունք եւ հանճարեզք  
են, հանապաղ ի հարցում եւ ի քննումսն են.  
եւ տղայք քշոց եւ ծնծղայս հարկանեն քաղցր  
եւ ուշիմ, զոր այլ աշխարհ եւ քահանայք ան- 140  
դամ չգիտեն։

Եւ է քաղաքն բարելի եւ մրգաւէտ. բացց  
սեխն խիստ լաւ եւ անուշ, մեծ է, զեղին եւ  
երկայն, մինչ զի խօնթքէրին փէշքէշ կու տա-  
նին. ևինն եւ եղով չորսակ անուշ։ Այլ եւ սո- 145  
րայ քաղաքն խիստ համեղ է. թօխաթուն՝  
բաշան, Հարլապյ՝ մըրիլան, Խարքերթուն՝ չա-  
խալ հացն. փառք յօրինողին Աստուծոյ։

Նստի անդ ոլէկլէրուէկի, որուէս Մըսր.  
մեծ աթոռ է Ասորոց ուստրիարդին. եւ ու- 150  
նին մեծ աւագ Եկեղեցի, որ կոչի Մարիամ.  
այլ եւ Հայոց աթոռ է։

### ԱԲԵԿՈՒՐԻՒԹԻՒՔ

Եւ Մէրտինու դռան դուրսն տեսաք կռաւ-  
տուն մի. ասին թէ սա Արեւորդոց աղօթա-  
տեղն է, զոր յառաջն ամէն կիրակամտից անդ 155  
ժողովեալ մինչ յիրիկունի ուտէին, ըմպէին.  
եւ յորդամ մինէր՝ լոյս վատէին, սակաւ մի  
աղօթէին, ասկա զճրագն անցուցեալ անամօթ  
եւ լրբենի դիմօք իրբեւ զանասուն ընդ մի-  
միանս պղծէին, հարք ընդ դստերս, եղբարք 160  
ընդ քորս եւ մայրք ընդ որդիս խառնակէին  
որուէս ի ժամանակս կոստաշտից։ Զայս իմա-

ցեալ ովէկի քաղէկի մի , կոչեաց զնոսաւ , զի անդ  
է քանին Արեւորդաց , որովէս յԱրզում բօշայք ,  
165 և պատմիքեաց մի Երթալ անդ : Եւ ազգեցին  
թէ սոքա նամազ չունին . ոչ Հայ են , ոչ ՀՀում ,  
ոչ Հոռոմ . միայն Հայնակ կու զրուցեն : Կո-  
չեաց զնոսաւ զարձեալ եւ առէ . Զի՞նչ Հայուս  
ունիք զուք : Եւ նոքա ասին թէ Հայոց : Առէ  
170 ցեալաւ . Ազգա զնոսցէք նոցա ժամին , ազգա թէ  
ոչ Եկէք ի մեր մէկ ջիթն . կամ սրով անցանեմ  
զձեզ : Նոքա սկսան ազազաւկել եւ կաշառը  
ավեալ յանձնն առին զնոսլ Հայոց եկեղեցին .  
ազգա թոյլ եւ նոցաւ . եւ սաստիկ Հրաման  
175 եհան , թէ ոք չդնայ , մային թափաւորի ,  
զրուխն Համացի : Եւ այն մէկ ջիթն ավէթալ մնաց .  
վասն որոյ ցիր ու ցան եղան . ոճանք Պարս  
զնոսցին , այլք յԱսորիս . եւ կէսք ի Թօխաթ ,  
Մարզուանի եւ այլն : Եւ որք մնացին անդ ահէ<sup>164</sup>  
180 եւ յերկիւզէ զարձէին զուն Հայ , թէ ինձ Հա-  
մար զնամ՝ յեկեղեցի . եւ ոճանք հովաթով եւ  
կարգաւ զնային ժամ շարթէ շարաթ , եւ զայն  
ակամայ , որովէս Հրեայքն Հոռմայ եկեղեցին :

Եւ միւս զուն զերեզմանաստուն էր  
185 Հայոց , յորում կային մեծապին եւ մեծ տա-  
պանք զրովք , որովէս եւ ի Լէհ . եւ բարինքն  
ամէն սեւ էր : Խակ բերթն յոյժ ամուր եւ ա-  
նոտիկ մեծամեծ աշտարակօք եւ զիմօք շի-  
նեալ : Եւ ներքեւ պարսպին զնայ մեծ զեսն  
190 Եփրատէս եւ ընդ միմիանս խառնեալ յԱսո-

164 յարեւորդաց : — 182 զայն : — 183 Հրէայք :  
Եկեղեցինն : — 187 աճէն :

բևոտան հետ Նեղոսի<sup>1</sup> ի Նինվէ եւ ի Պալտատ գնայ:

Կացի անդ երկու շարաթ. Եկի դարձեալ հետ Մազաքիայ վարդապետին: ի Սեւաստ եւ ի Թօփաթ. եւ անոի Սուամոլ:

195

## 11. ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ՅԵՐՈՒՍԱՂԵՄ

### ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՔ

Եւ կացի անդ (ի Կ. Պոլիս) առ մի, աշխատելով եւ վաստակելով զրագրութեամբ, զի ժողովեցից պաշար սուրբ յԵրուսաղէմ գնալ, զի եւ անդ էի ուխտ արել: Եւ Սուամոլ զրագիրն խիստ խիյմաթ ունէր. Եւ թէ- 5 ովէտ կարգաւորք չառ են, գրօղ չկայ. զի կարդալն այլ արգեստ է եւ գրելն այլ: Եւ ովին ինձ յոլով զիրք զրել աշխարհականք եւ կարդաւորք եւ քահանայք: Իսկ ես ջանայի եւ խոյրաթ առնէի, եւ ազնէի ցոյդ եւ ցերեկ. 10

<sup>1</sup> Պէտք է իմանալ «Հետ Տիգրիսի»:

<sup>2</sup> Մազաքիա վարդապետ ճշզիւ 1612ին Ամիզ կը զանուէր. իր յանձնարարութեամբ կ'օրինակէ Յավհաննէս զրիչ և. Շնորհալոյ Մեկնութիւնն Մատթէի. կ'աւարտէ չյամի թիթ (1613) թուրին ի Համբիթ մայրաքաղաքի ի դուռն Ս. Մարգարի պաւագարին եւ սուրբ կիրակոսի... ի վայելս գերազանծ բարունուն... աէր Մազաքիա աստուածարան վարդապետին թօփաթցոյ, յիշատակ իւրին եւ Հօրն... Թորոսին եւ մօրն Հունարին եւ եղրարն Լուսոպարոնին եւ քիերն Զմրութիւն. Չեռ. կ'թ. 1245, թղ. 209ր. Հմմտ. եւ Հանդ. Ամս., 1932, էջ 454: Կը պատմէ Գր. Դարանազցի, թէ 1625ին այցելած է Վենետիկ եւ Հռոմ (էջ 382) և 1634ին Հձածկելով զիերին եւ մերկանալով յամենայնէ» առանձնացած է Վանայ կզզիներէն միայն վրայ եւ Հոն վախճանացած (էջ 291): Իր նկարագրի մասին առա անդ, էջ 363—364:

վութայի, ճեպէի հանապաղ, զի վաստակից  
յեմ ճանապարհի խորճ. զի ճեռս զատ չէր  
մնացել. եւ օրն Ծ. Կ. զրամ վաստակէի: Աս-  
տուած չէն պահէ Ստամբոլ ժողովուրդն եւ  
15 զքահանայս, զի այն ամին ժողվեցի ութսուն  
զուռուշ:

## ՄԵԿՆՈՒՄՆԵՐ

Եւ Փոխման Աստուածածնին<sup>1</sup> բռնէին ուխ-  
տաւորքն նաւ. եւ ևս զնացեալ վարձեցի տեղ  
մի. եւ պատրաստութիւն ճանփի եւ զախի-  
20 բայի տեսայ. զի ասին ինձ թէ ցամքով զնալն  
շատ զաֆար կ'երթայ եւ խորճ: Եւ զի ամե-  
նայն ոք սիրելի ունէր, աղզական կամ հէմ-  
չէրի, ևս զարիսալ եւ ոչ զոք բնաւ: Բայց մար-  
դիկ աշխարհին այն աստուածասէրք, երկիւ-  
25 զածք, մարդասէրք եւ օտարասէրք՝ տեսեալ  
զիս տրտում եւ տիխուր՝ մխիթարէին, սփո-  
փէին, մինչեւ ուսայ եւ ընդելացայ ընդ նոսա:

Եւ մտեալ ի նաւ, ել հողմ բարի եւ տարաւ  
զմեղ իրեք օրն ի Կիլիկիութիւն: զի անդ եօխ-  
30 լամա կ'անեն կէմիքն: Եւ կացաք անդ իրեք  
օր վասն ջրի եւ պաքսիմաթի: Եւ անտի հո-  
սաք ի մեծն ՌԱՏՈՒ, որ է մեծ սկէլէ եւ որ-  
նառիկ բերթ: Եւ զտաք անդ զկալիլ վաշան<sup>2</sup>

11 ճէպէի: — 21 կէրթա: — 23 մարդիք. յաս-  
տուածասէրք: — 27 յուսայ:

<sup>1</sup> Այն է 14 Օդսաստա 1614:

<sup>2</sup> Կալիք վաշա երկրորդ անգամ ժողվակալ անուա-  
նաւած էր 1613ին: Յաջորդ տարին 45 անհատէ բաղ-  
կացած նուաստորմիզով նաւած էր զէպի Մալթա (1614  
Յուլիս—Նոյեմբեր), նուանելու ակստամբ Դայի Սէֆէրն  
(Տրիպոլիս) եւ զսպելու ժողահէնները: Hammer, Ge-  
schichte des Osmanischen Reiches, II, 752:

կ դատրըղայով պառկած, մէջն հանքէիք: Եւ  
կացաք անդ հինգ օր. զէրայ ահ կայր Թուան-  
կին: Եւ այս քաղաքս իրեք տակ բերթ ուներ  
եւ սրիս խուլայք անառիկ եւ ամուր: Եւ կային  
այդիք, բուրաստանք եւ զրախտք, խաղող եւ  
այլ միրդ բազում: Եւ եարուքն Թուանկի չէնք:  
Եւ երես հետ մեզ խարիստնն իրեք դատրզայ: 40

Չոր տռեալ զիստուած օգնութիւն մտաք  
ի համատարած ծովն, որ է էնկէլ. եւ այլ չե-  
րեւեցաւ մեզ սար կամ ձոր, միայն ծով եւ եր-  
կինք: Եւ մեք հինգ կալիօն էաք. ամէն կա-  
լիօն քան դարպաս մի է, իրեք տակ՝ ամուր,  
մէջն եւ վերեւն. եւ այնչափ ըռդակ մտնու որ  
վեց ամիս հազիւ լնուն եւ վեց ամիսն պար-  
պեն. եւ թէ էսպաս չի դտնուն՝ այնչափ քէ-  
րէսզի լնուն եւ քար եւ խոշոր եարուի մար-  
դակ եւ զերանք, ուեւ չի լցվիր: Ինն ելքան 50  
ունի. Բ՛Ճ, Ճ՛Ծ խզմէթքար, կէմիճիք, որն աշ-  
չիք, որն տէլաք, Փուչիճիք, կալաՓաթցի,  
տուրկայ, եազմիք եւ այլն. իրեք տեղ աշխա-  
նայ ունի. երեսուն-քառասուն կամարայ, ԺԵ  
եղ, Մ ոչխար, միանք, եւ այլ դախիրայ, ջուր 55  
հազար Փուչիք, թող զզինին, քացախն. Եւ  
քանի հարիւր եօլչի: Եւ մին կէմի մի կար,  
անունն Արքիս արշին, եւ սէրէնին հաստու-  
թիւն երկու խուլան, երկայնութիւնն քսան եւ  
վեց խուլան եւ ի զլուխն որտէս թարսի է. որ 60  
հանապաղ անդ մարդ կու նստի եւ կու հայի

հասր կէմիքն եւ զզուշացնէ որ պատրաստ  
կենան :

Եւ որ մի ոլէքնին ճիչ երարձ եւ սպազա-  
կեց . Մէտէթ , կվալթ . եւ առէ . Ահա տուշ-  
ման կու զայ : Եւ եղեւ մեծ խոսքութիւն .  
թօրերն լցին , թուֆաքնին խուսմիչ արին , զի-  
նցան , Հազրբ եղան , խըյամաթ խօրդիչ եղեւ .  
բաց , զառն ու զոչում . Եւ ով կարէ պատմել  
70 կամ զրել : Զամէնքս յամպարն լցին . զզուոն  
գրանիս կզողեցին . կամէր թէ խեզզել էաք  
յամպարն . եւ բազումք թալցան : Եւ ճէնքչիքն  
ելեալ ի զրայ յամպարին եարազ եասանիով ,  
որովք եւ ուսերօք , գեզարկեամբք եւ մըզ-  
75 բախով , Հարպանով եւ նեալ ի աղեղով : Ապա  
Աստուած մեզ ոզորմած եղեւ , որ քամին մեր  
յետեւածց էր եւ նոցա զէմ . զառն որոյ չկար-  
ցան մեզ Համենիլ : Եւ մեք Հասաք ԱԴԵՔՍԱՆ-  
ԴԻԱԼ , որ է Մկէնանէր : Եւ մեր ընկեր զատր-  
80 զանուն իրեք ի Կիսպոս մարիան եւ մին յետին  
մետց , զի ծաներ էր . զիս առաւ Ֆուսնեն . Հա-  
զար ամսոս . մէջն իրեք հայ պազրկան կոյր :  
Եւ ելաք յամպարէն ի զուրս , խուրպան կտրե-  
ցաք , չէնլիք արին . թօրեր նետեցին . Աստու-  
85 ծոյ փառք տիբին :

### ԱԴԵՔՍԱՆԴԻԱԼ

Եւ զայս քազաքս Աղէքասնեգք Մակեգոնա-  
ցին շինեց եւ իւր անունն եղ ի զրայ : Եւ է մեծ  
քաղաք եւ պարապաւոր . բայց կէան ոմայիք .  
բոլորն ծով է , մի կողմին միայն յամաք ,

71 խեղթէլ : — 78 ոզէքսոնիզրիոյ : — 88 յամայիք :

ուստի Միլ սուին զնոյ : Եւ ասաւ ըմպեցաք 90  
 ջուրն երբորդ դրախտին . տեսաք եւ զտեղին  
 ՀԲ թարգմանչաց ծովեղերքն , որ զեռ նշամ-  
 րանքն երեւէին սենեկաց : Եւ ասաւ չորս պա-  
 լիօդ նստէր : Եւ կայր եկեղեցի մի հոռմի և  
 խաներ մեծամեծք : Կային Հոռոմք , Խրդիք , 95  
 Ֆուանկք . բայց Հայք ոչ : Կայր քարէ եկեղեցի  
 մի Սավա անուն , յոյժ սքանչելազործ եւ զօ-  
 րաւոր ծովու վրայ , որ զնոյ նաւավարքն յօդ-  
 նութիւն խնդրէին . զոր մտեալ ի ներքս շրջե-  
 ջաք եւ երկրպագեալ ելաք : Եւ անդ առին 100  
 մէնէ խարաճ մին մին ոսկի . նաև իրիցանց .  
 բայց հարեղայից չառնուն : Եւ կայր իրիստ  
 գէր եւ փափուկ լօրք անդ եւ բաղում յոյժ .  
 հինգ-վեց՝ մէկ փարայ . զոր ի դիրութենէն  
 չկարէաք ուստել : Բայց Փիլաֆ ևիէաք իր 105  
 մսով : Եւ աղնիւ գինի գտանէր անդ Ֆուանկի :  
 Եւ տեսաք ներքեւ գետնին գետնավորի , խո-  
 րու եարունի վիմաշէն եւ կամարակառ . եւ  
 մէջքն քաղցր ջուր . զի ոչ անձրեւի հոր եւ ոչ  
 ջուր կայ . եւ ողութուն քաղքին ներքեւն ջուր 110  
 էր : Անդ տեսաք խուրմայի ծառեր , յոյժ բարձր  
 եւ գեղեցիկ : Եւ սակաւ ջուր մի գետօրէն գայր  
 ի քաղաքն նեղոս գետէն . եւ ասին թէ Աղէ-  
 քանդր թաղաւորն երեր զայս ջուրս բաղում  
 աշխատանօք ասս : 115

ՃԱՆԱՊԱՐՀ ՅԱՂԵՔԱՐԱՆԴԻՒԹԻՒՆ Ի ԳԱՀԵՐԵ

Եւ աստի սկսաք մտանել ի Փոքր Արա-  
 րիայ . զի չեն նոքա սեւ Հնդիկք , ոյլ թխամորթ  
 եւ էսմէրք . այլ եւ կանայք նոցա մեծանձն :

Եւ մտեալ ի նուռակս, որ ըստ լեզուաց  
120 հոգա կոչեն ճէ քա, ծագեզերօք ի կէս օրին  
հասաւք ի ՌԵՇԻԹ քազաք, որ էր պէնսէր  
ոկէլի, յոյժ բարելի: Եւ առա տեսաք զցան-  
կալի զետն զրտիստին Նիլոս բովանդակ, որ  
զայր շատաշմամբ եւ մեծամեծ ալեօք եւ մտե-  
125 նէր ի ծովին, որպէս Թունայ Աւ. ծովին: Եւ  
անզ էր տեսանել զշաշիւն եւ զիւռովութիւն,  
որ բախուէր զետն ընդ ծովին ի մտանելին. զի ոչ  
թողուր ծովին մտանել ի նա զետին. Էւ առին  
թէ մեծ ֆուրթունայ լինի, յորժամ հոգմ հնչէ.

130 Էւ ոչ ոք կարէ անցանել, զի լեռնանման կո-  
չակք զան եւ բախին ընդ միմիսես եւ զերա-  
նան զիզին այիքն եւ առազն բարձրանայ որ-  
պէս լեռան եւ ձայնք ջրոց Հարկման լուլի լինի  
առուր մի հանուպարհ: Եւ մտաք ի ներս քաղցր  
135 ջրով: Եւ յառաջս զետին բերթ կոյր ամ-  
րացի, և երկուց կոզմանց զետոյն կանաչ զա-  
լար եւ խուռմացի ծառեր, զոր ի զնալին Հրբ-  
եւէաք: Եւ մտեալ ի ներս քաղաքին պարսպա-  
ռոր, տեսաք որ զիզած էր լեռնանման բակ-  
140 լար, ոսպ եւ բրինծ, Եիւզ կովուց եւ մեզր յո-  
յով: Եւ առա եւս նստէր պալիօդ Թռանցու:  
Կացաք անզ օր մի:

Եւ այլ փոքր ուրիշ աղդ կէմի վարձեցաք.  
Եւ մտեալ ի նա ահիւ եւ զողութեամբ, զի եր-  
145 կեզ կոյր վէլուհ Արագնուն. զի մտանէին ի  
կէմին եւ հանէին զմարդուկ: Բայց ինձ բարե-  
խրաստ տիփին քրիստոնէք, թէ զու պարզամիս

մարդ ես, չլինի թէ նաւի եղերն նստիս, ոյլ  
սէրէնին տակն : Զի Արապք նենկաժոտք են .  
բայց Հռոմցոց եւ դուֆաքէ յոյժ երկնչին 150  
սպահոց եւ ենկիչըցոց : Եւ զի հողմն սակաւ էր  
եւ գետն սրբնթաց, կապեցին սէրնին գլուխն  
պարան երկայն . Եւ ելեալ նառավարքն ի ցա-  
մաք քարշէին գետեզերօքն : Եւ դային մերկ  
Արապնին երկու կողմամբ՝ հաց խնդրէին . Եւ 155  
Հռոմցիք թփաք ձգէին, նոքա վախչէին : Եւ  
իրբեւ երեկոյ եղեւ թէմոլէհ արին՝ զգաստ լի-  
նել, զի հարամզատա են Արապքն եւ խորա-  
մանկ : Պատմէր մի ոմն թէ Մի ննջէք, զի ես  
երբեմն երթայի Մըսր գետովս այս եւ զիտէի 160  
սոցա խորամանկութիւնս . առի զամենայն ինչ  
զոր ունէի՝ արծթէ թուր, թամբք, եխւկան եւ  
զչանթաս . եղի զամենայն ի ներքեւս, զէյէրն  
ի գլուխս . Եւ նեղէի զիս չնիրհել . բայց քունն  
յաղթեաց զիս . Եւ Արապնին տեսեալ զարծթէ 165  
թամքն, մտեալ ի ջուրն՝ եկին կէմին եւ կա-  
մէին առնուլ եւ ոչ կարացին զի մի՛ զարթի-  
ցեմ . ապա մինն հնարս իմացաւ, եխած զոտից  
մեծ բութն . իսկ ես ցաւոյն ի վեր վազեցի . Եւ  
նոքա առին զթամքն եւ զնացին : Եւ մինչ նա 170  
զայն խօսէր՝ մի ոմն սկսաւ ճչել, վայ եւ եղուկ  
ասելով . իմացաք որ առին զնա ի ջուրն եւ  
խեղղեցին . Եւ որոնեալ զտին զքէմէրն ի  
մէջքն . զի այն աշխարհն ամէին քամար կու կա-  
պէն զրամով . հանին զղբամն Եւ զինքն թողին 175  
ի վրայ ջրին : Եւ պեղծքն այնովէս լողորդ եւ

առալզուն են, որ չկայ արարածս նման նոցա.  
Խարապաթախ կու նմանին. զոր եւ աչօք տե-  
սաք ի ցորենկի. մտանէին ի գետն պահ մի կե-  
180 հային եւ այլ տեղ կ'ելնէին. եւ թէ մի դրամ  
ձգես ի գետն՝ մտնուն, գտնան եւ հանեն. եւ  
զիշերն հետ կէմուն չըջին որպէս ձկներ, եւ  
զողանան զմարդիկ թէ ննջեն. եւ այլ չկարես  
տեսնուլ զնա:

185 Իսկ մեք եզերօք երկու օրն հասաք ի հա-  
սապա մի եւ սկէլէ՝ ՊՈՒԽԱՐՔ անուն. որ եւ սա  
զեզեցիկ Մորայ սքէլէ է. եւ գետն աստի այլ  
տեղ երթայ: Եւ մեք ելաք նաւէն. վարձեցաք  
իշլան. զի անտի մինչ Մըսիր չարեկ միլ է.  
190 եւ ջուր աստի զնայ ի Մըսր. եւ ասին կի ուզտ  
ջուր կրէ աստի:

## ՄԱՅՐ = ԳԱՀԱԿԻՑ

Եւ իբրեւ մտաք ի Մըսր՝ այնչափ սկսաք  
պնալ, որ ողէզրէցաք. երկու ժամն ասպա հա-  
սաք Հայոց թաղն. քանզի յոյժ մեծ էր քա-  
զաքն եւ մարդաշատ:

5 Կայր եկեղեցի մի Խպտու. եւ անդ տված  
էր մատուռ մի Հայոց. եւ վերեւն վերնատուն  
կանանց. եւ այլ վեր՝ կարդաւորաց տեղիք  
բնակութեան: Կայր Նիկիսարցի քահանայ մի<sup>3</sup>

## 188 ԵԼԱՎԻ

<sup>3</sup> 1613ին կը յիշուի Հռո «Մկրտիչ երէց Տիւրի-  
կեցի», որ Մարգիս զպիր Լեհացւոյ հետ կը նորոգէ  
Բերլինի թ. 57 ձևադիր Մաշտոցը չի ժամանակա խո-  
ճայ իսպահիմ չայցին եւ թարմանին, նոցա ձեռնորու-  
թեամբն եւ կամացութեամբն: Հմմտ. Հանդ Ամա.,  
1932, էջ 454, ձ. 11:

Եւ թողաթցի հարեղայ տէր Մաղաքիայ, որ  
մեծ սիրով ընկալաւ եւ ոչ եթող այլ տեղ գնալ, 10  
այլ առ նա մնալ: Երկու ամիս կացի անդ.  
չեթող ինձ փող մի հանել. այլ ինքն զանազան  
կերակրովք պատվէր զիս. միթէ Տէրն Քրիս-  
տոս վարձահատոյց լիցի իւրն միոյն հաղարա-  
պատիկ արխուուր: Բայց ելք աստիճանաց 15  
խաւարչտին տեղ էր. միշտ կանթեղ վառէր  
ցորեկն եւ զիշերն:

Եւ կայր Մըսր հայ աւելի քան զբա՞ տուն,  
ումէնն ձէլուոց փախուցեալ:

### Եպիջիբ.

Եւ էր մեծ քաղաք որպէս մեծն Հռոմ. այլ 20  
եւ բազմամբոխ. եւ ասին թէ կայ աստ տէֆ-  
դարով ԱՌ տուն խաղի. ամէնն հարուստ եւ<sup>15</sup>  
փարթամ. զի անդ էր նոցա քանն որպէս ի  
Սալանիկ Հրեայք. եւ ամէն խալում եւ տէֆ-  
դար քաղքին նոցա ձեռքն է. վիմաշէն տներ 25  
ունին, ապարօչ խումաշնի ազանին եւ ի փա-  
շային տիվանն նստին. զի նախնեաց ունին լի-  
նել տիւանալպիր եւ տէֆդար քիդապճի: Եւ  
կայ ի մէջ նոցա մարդ, որ ՃՌ դուրուշի մա-  
լիք է: Բայց Եկեղեցիք նոցա խաւարչտին տե-  
ղով են եւ մթին, հիւթալի մըսոտ, մինչ զի եր-  
կայն սարդիք կախեալ կան փոխանակ կան-  
թեղաց. եւ փոշին ծածկել է զսեղանն եւ գչուս  
պատն. կարծեմ թէ բնաւ չեն աւել ածել կամ  
սրբել: Սոցա ոլատրիարդն Սկէնտէրիա կու 35

15 յաստինանաց: — 24 Հրէայք: — 26 յաղանին:  
— 29 կո: — 35 պատրիարքն:

նստիր : Կարդ եւ սահմանք, ոչ զարգարանք  
չունին յեկեղեցիս, զինչ գրեցից . այլ Հրէից  
ազանդովքն վարին, զի թլփառեն զազայս ըստ  
Հրէից . եւ երբ լինի ժ. ժԲ. ամաց՝ մկրտեն  
 40 ըստ Արիանոսաց : Եւ յորժամ պատարագ առ-  
նեն կամ այլ կարդ, քոլ արկանեն զերեսօք եւ  
զգլխովք . եւ հոռմի խօսիւք եղանակեն «քի-  
րէլէզիոն» եւ այլն . եւ փոխանակ ծընծզայի  
չալքարայ քշտեն : Այլ եւ կանայք նոցա երդ  
 45 իմն յօրինեն՝ շրթունս մատամբ հարկանելով  
եւ ձայն հնչելով . զայս ոչ միայն յեկեղեցիս,  
այլ եւ ի հարսանիս եւ ամենայն հանդէս :  
Իրիցնին ունին կանայս . սեւ չուլ հարեզանին  
հազնին . միս բնաւ չունին . եւ ի պահոց ա-  
 50 ռուրս ձիթով չուտեն, ոչ պինի ըմպեն . աշ-  
խարհ (ակա՞ն)ք եւս որպէս Հայք : Կարդաւորքն  
պինին ի գլուխ սեւ մեծ խալուխնի կամ պոլիթ,  
բոլոր գէջա, որպէս ի լէհ՝ Հրեայք, նոյնպէս եւ  
աշխարհականք . բայց աղօթից եւ այլ առաքի-  
 55 նութեանց եւ բարի գործոցն սակաւ հոդան .  
միայն պահոց եւ անսուազութեան հետեւին :  
Իսկ իմաստութիւն եւ հանճար ոչ երթք տեսի  
առ նոսաւ : Նշխարք ըստ Հոռմոց Հաց տան<sup>4</sup> .  
եւ զայն՝ ամենայն ոք ևիէ եւ ծախէ : Եւ նոքա  
 60 թլփառեն ոչ միայն զարուս, այլ եւ զէզս . եւ  
թէ զազատմառն այսմ կամիս իմանալ, ընթեր-  
ցիր զազատմադիրս. զոր ոչէ պարտ երկրորդել:  
Իսկ աղքատք եւ չքաւորքն ի նոցանէ յոյժ

— 45 օրինեն : — 48 ազանազքն : — 53 Հրէայք :  
— 57 երբէք :

<sup>4</sup> Այս ինքն՝ տան մէջ գործածուած Հացը :

սէֆիլ կու կենան, զլիխիբաց եւ բոկ. նման  
Արագնուն. կապա չունին, բայց միայն հաստ 65  
շապիկ եւ կարճ թևզանիքն լայն. կերակուր  
նոցա թէփէ հաց կամ բակլէ. եւ զայն աղդ եւ  
աղդ մօխրովք եւ բանջարովք, որ Քրդու կլկլէ  
հացն լաւ է քան զայն: Եւ պանիրն ակի՞ որդ-  
նած եւ հոտած բորբոսած, շաքրի ոլէս ուտեն: 70

## ՅԵԼՈՆՅՔ

Իսկ ողեղծ արագ ֆէլահնին յոյժ զարչ եւ  
աղտեղի են. զի զամենայն ինչ ողեղծ ուտեն՝  
խլուրդ, մուկ, օձ, զորտ, կովուց փորէ ան-  
կած սատակեալ հորթն, կատու, աղվես,  
զայլ, խունտուզ եւ այլ մուրտար, սատակեալ 75  
եւ հոտեալս. ոչ խորեն ընաւ, այլ ուտեն որ-  
ովէս շուն. իսկ զմուկն աշխանան եփեն, զի  
այն մեծ է առ նոսա: Այլ զմիս ոչխարաց,  
եղանց լլկեն ըստ Հրէից եւ զամենայն երական  
հանեն, զոսկրն եւ ջեղսն, միայն միւայ միսն 80  
կտրատեալ որպէս քուֆտա: Այլ եւ աչչիք եւ  
ամենայն արագնին վնիթի զագիրք են, մերկ եւ  
խոյտառակ, միոյն շապկով, մարմինքն աղ-  
տուտ. երեսն եւ ձեռվին անլուսայ. ողոկտիքն  
մեծ եւ կախ, քթէն խրլինք ի վար զայ. Եւ 85  
աչիքն ճագռոտ. ականջաց դեղին թարախ  
վագէ. ոտմնուն վրայ կլայ բանջար ցանել,  
ծնկերն ըղտու. ամէն մարմինով նման դեւին  
Դերդեսացու: Երբ խմոր շաղփէ՝ ձեռքն աչքն  
ասնի, երբեմն յարանքն. յդունքն երկայն եւ 90

68 քթու: — 69 բանիքն: — 70 փորփասած: —  
87 Այսպէս յօրինակին:

ահւ . Կոյնոպէս թարսիք , թէնձէրայք եւ այլ ա-  
նօթքն շանց եւ խոզից լիզելիք : Եւ զայս ա-  
մմենային տեսեալ իմ՝ զարչեցայ յոյժ մինչեւ  
փաթէնայ . եւ ուխտեցի չուտել ինչ ի ձեռաց  
95 նոցաւ :

## ԶՈՒՐ ԳՈՂԱՔԻՆ

Եւ օր մի զայցաք ի ժողովակետզ ջուրց ,  
որ ի հորս , գոոզցոս եւ ի ձորս թողուն , յոր-  
ժամ Նեղոս գեան արձակի . եւ Հայեցեալ ի  
լիճ մի , յորմէ սախիքն ջուրս կը լին , ոմանք  
100 իշով , այլք ուսովք . եւ էր ջուրն պղտոր եւ նէ-  
փաք : Հարցի թէ վասն է՞ր . եւ տօնն .  
Վասն այն զի ամէն անէ ջրզնացքն եւ աղբքն  
առա իշունն : Եւ աղացքն անդ լոդանին . այլ  
եւ ինքանք փնտի արտղնին եւ կանայք նոցա  
105 անդ լվացզին . եւ լուացքն լուտեան : Եւ առին  
թէ Դեռ ջուրն այժմ առատ է , լաւ է . ապա  
երբ նուազի եւ ցամքի՝ այն ժամ սկսանի հո-  
տիլ . տեսցես թէ ինչե՞ր կ'ելինէ ջրոյն , սատ-  
կած չներ , ժարդիկ : Եւ ես առեմ . Ապա ուսովի  
110 ըմպեն . եւ առեն , թէ Պուլատիսէն , ուզուիք  
Պուլաքէն . եւ ես միշտ Պուլաքէն ընկըլ տայի ,  
զի մերձ էր :

Եւ հրաշ մի այլ որսումեմ ձեզ . զի այն  
պղտոր ջուրն ընկեալ ինուն ի մեծամեծ զուրս  
115 եւ ի կորասս . եւ լեզի նշով եւ խայսի կորի-  
զով չուրին եւ բոլորն <sup>5</sup> . իսկոյն յըստակի եւ

93 զարչեցայ : — 100 իշով : — 103 լուգանին :  
— 109 ժարդիք : — 114 զուփա :

<sup>5</sup> Պէտք է լրացնել ուսեսեն :

սպարգ լինի. ապա ըմբեն. ապա թէ ոչ սաՓի  
շամուռ է : Եւ զի յոյժ ջերմ է անդ և լվոտ.  
գեղեցիկ հողէ փարչեր կ'ելնէ . դնեն զիշերն  
այեաղն ջրով, և վաղմնէն խմեն պազպազ :

Եւ էր մեծ խան մի Թուրքաց, Խալիլ խան  
կոչեն. սաՓի Թուրքի մարդիկ են, հայ ու  
տաճիկ . նոքա գարշին Արալնուն . Եւ անդ իրենք  
կ'եփեն հաց. ունին պաշխա աշխիք, խառապք,  
խահվէ ճիք եւ այլք. քանզի շատ վաճառաւ—  
կանք էին . Եւ մեք անտից գնէաք զամենայն  
ինչ, սօմուն, բիթոյ եւ այլն, միս, դառն, եղ,  
և իշն :

### ԽՈՃԱՅ ԽՊՐԱՀԻՄՇԱՅ

Նստի անդ մեծ պէկլէրպէկի . կային եւ  
աղնիւ արգեստաւորք յԱմթայ, Հալպայ, 130  
Ստամպօլայ, ոսկերիչք, խլըչիք, զարնիշան-  
ճիք եւ այլ վարպետք : Եւ կայր յԱմթայ խու-  
յումճի պաշի մի խոճայ Խպրահիմշայ անուն<sup>6</sup>,  
յոյժ իմաստուն եւ ինլացի, կարդացող եւ  
հանճարեղ : Էր նա էրկցիոնխան եւ անվանի ի 135  
դուռն Փաշային եւ ամենայն քաղաքն : Տե-  
սեալ զիս անզամ ի ժամն՝ տարաւ ի առւն . ու-  
նէր վիմաշէն փառաւոր տուն : Սա զիս ամէն  
օր ի տուն կոչէր եւ միիթարէր զանազան կե-  
րակրովք եւ խորտկօք եւ անուշ ըմպելօք, զի 140  
անդ բնաւ չլինի, բայց միայն մօտ պալիօղնին .  
եւ ժամու բաժկի ալ նա կու տար . բախի ալ

122 մարդիք : — 130 Հալպայ : — 141 լինի :

<sup>6</sup> Կը յիշուէր 1613ին Բերլինի թ. 57 ձեռազրին  
ժէջ, ուստ էլ 216, ծան. 3:

չկայ. Բզեն հանեն և այն ուռղ, օխան մէկ  
զուռուշ. զինին ալ ճէքայ մի, որ է օխա, մէկ  
145 զուռուշ:

Զի ի այլ տեղ բիլին զիսպիլով կու հո-  
տար, բայց նորա տունն ոչ. եւ հարցի թէ  
վասն է՞ր. եւ նա առէր. Զի ասա հան չի հա-  
նէլ ձազ. զի յազրն թազեն զժուա հազարով  
150 եւ յետ քան աւուր հանեն և զիլայտով ծախոն։  
վասն այն հոտի զիսպիլով. բայց ևս գեեմ ու  
երկու-իրեք շարաթ պահեմ բակլով։ Եւ ևս  
առեմ. Ով խոնայ, ապա մեք այս աշխարհա  
պղծեցաք. պիտի նոր օրհնել տանք զրերնիս  
155 յերուսաղէմ։ Եւ նա ծիծաղելով առաց. Մի  
կարծեր թէ եւ ևս ուսեմ ինչ յայնց կերակրոց.  
այլ զամենայն ինչ ի տնէն։

### ԽԱՆԻ, ԽԱՆ, ԽՆԱՅԻՆԻ

Եւ օր մի տարու զիս յուկերչինոցն ի պէ-  
զէստան, յորում բարակ քթանի՝ քէնարնին  
160 առըշում, զի ուսքուլին ազիտակ է եւ ազնիւ.  
զոր ամէն աշխարհ թուրքէ Մորայ կ'երթոյ  
եւ Տրապիզոնու. բայց Մորայն այլ լաւ է։ Եւ  
տեսաք ազգ եւ ազգ ալանանի բարակ քթանի,  
զիֆտիկէ տիկտիկ եւ քիլիմի Մորայ եւ առըր-  
165 շիմէ ազգի ազգի խումաշը եւ այլ անթիւ թօհ-  
պանի։ Ապա մատաք Հայիլ խանն, ուր էին բա-

152 վաելով։ — 156 յանց։ — 158 պէղէսդան։  
— 161, 164 մարա։

<sup>7</sup> Հմման. առ այս Գեր. Մակփ. Ազանց, Աշխարհա-  
պատթին յորից մասանց աշխարհի. Մասն Բ. Ափրիկէ,  
վէնետիկ 1802, էջ 32։

զումք վաճառականք, հայ ու տաճիկը՝ Ստամ-  
պօլայ, Հալապայ, յԱմթայ եւ այլոց եւ Հնդկաց,  
Մատինու, Հապաշու. զինչ ուղէիր, անդ  
զտանէիր. Փարֆուրէ զէրսիք, Փինձանի, եւ 170  
այլ թօհզաք, խոպաչ չի բանած, հինգ-հինգ  
դրամ. Ստամպօլ տանին, ներկեն եւ զլուխն  
ոսկոր դնեն, մէկ զուռուշ ծախեն. ապանօս,  
Հնդի բարակ դափառաքնի եւ տօլպանտ. զի  
Մըսրայ տասն աւոր ճանապարհ է Հնդկաց 175  
սկէլէն, Տիմբաթէ կ'ատեն, որպէս Բօրդուկալն.  
բայց սա լաւ է. զինչ ուղես գտնաս: Եւ ամէն  
օր ան խանն մեծ պապար է եւ խալապայ, որ-  
պէս պէղէստանն Ստամպօլայ:

Եւ հուզ նմին խառն մի կայ, Խնայխանի 180  
կ'ատեն. զի մէջն սափի խնայ է չուվալնով եւ  
աժան: Եւ անտի յառաջ շուկայ մի որ սափի  
ապրշէմի խումաշ է, եւ ալաճոյք եւ Փօղայք.  
զի ապրշում կ'ելնէ ատրափն, որպէս ի Շամ:  
Եւ անտի հեռու տեղ կայր երկու խան. մինն 185  
ներմակ թուրք եասրնու եւ մին արապնուն:  
Եւ մտեալ ի ներս՝ տեսաք սեւ հոսպաչ արապք  
դառ դաս, արք եւ կանայք. որ եւ ի սեւու-  
թենէ նոցա կարծես թէ պատերն սեւ են. էին  
կոյս աղջկունք մերկք եւ խայտառակք, որ ու 190  
մօթոյքն երեւէին: Բայց սեւն անդ խըլմաթ  
չունէր. միայն ներմակն. մին ներմակ տային  
եւ իրեք սեւ առնուեին: Եւ այլ խաներն մայ-  
մունտ, ծովու կատու եւ այլ անտես ճանա-

168 Հովուու: — 170 պէղէստանն: — 182 Հուկու:  
— 186, 192 Հէրմակ:

195 զարք ծախէին : Թուրքի եասրնին հազած ,  
կապած , գօտէվորած . սեւերն մերկ . մէկ սեւ  
աղջիկ կամ կտրիճն կու տան երկու դուռուշ :  
Եւ ելեալ անտի մինչ գնայաք , տեսաք ա-  
րագ մի , որ ունէր Ռ . Կ այծ ընդ իւր . եւ կո-  
200 չէր . «Լապան , լապան» , որ է կաթն . զի ով  
կամէր՝ կթէր եւ տայր . Եւ թէ չի հաւնէին ,  
բանայր զբերանս նոցա եւ դարձեալ լնոյր  
զկաթն :

Եւ կոյր ամէն սօխախի գլուխն ձ . Բձ ,  
205 որոկս Վէնէտիք , փէրէմայք . զի թէ ոք կամի  
զնալ տեղ մի , տայ հինգ-վեց զրամ , նստի եւ  
Երթայ եւ զայ , զի քաղաքն մեծ է Եւ շու-  
կայքն հեռու , ոտիւք չի կարէ ոք զնալ : Կան  
եւ ոյլ մեծ մեծ իշվան , որ երկու-իրեք կանա-  
210 նիք նստին ի զբայ . Եւ այլ կան իշվորկիտիք ,  
որ զբոզս նստուցեալ ի էշ շուրջ ածեն փողոցէ  
փողոց . բայց քաղցիքի կանայք ծածկեն զե-  
րեսս , նաեւ խաղտիքն՝ որոկս թուրքի աշ-  
խարհն . իսկ զեղացիքն՝ բացերես :

215 Եւ կոյ ի Մորր ԶՌ ջհամի տուն . Եւ են  
վարթամ եւ հարուստք եւ լէհու ոլէս ամե-  
նայն բան ձեռաց նոցա է , խարաճն , կօմքուք ,  
էմէլն , տառապիսանան եւ այլն . Եւ մեծամեծք  
նոցա տասն-քսան եասախցով շրջին :

ԲԵՐՔ , ՀԻՒԱՆԴԱԼԻԹԻՒՆ:

220 Բայց Մըսր խիստ անմխիթար եւ անջուր ,  
անպատուդ , անդինի տեղ է . ոչ այդի , ոչ ոլար-

196 զօրէվորաց : — 201 կամէ : — 206 առա : —  
207 շուքային : — 211 բողոցէ : — 215 կա : — 219 շրջի :

աէզ, ոչ զրանու ունի. այլ դժոխոց կու  
նմանի. զի Եղիպտոս զժոխք թարգմանի, որ  
է հրահալոց. ոչ միրդ, ոչ ծառոց պառուղ ունի.  
բայց միայն ի ծառոց խօժէ ազգ մի պառուղ լինի 225  
անհամ, և մէ զ կոչեն. խիարք ունի փոքր եւ  
անհամ. եւ ձմերուկը անհամ. փոքր ունի զա-  
տարկամէջ, լի ջրով, անհամ. շաքար խառնեն  
եւ ապա ռատեն. Եւ այլ իրք չպահնի, միայն  
բակլա, ոսպ, բրինծ, խուրծա, շաքար իստ- 230  
մաշի, մուրսար մեծ մեծ պատինաճանք քան  
զմերուկ, եւ այն անհամ: Անզ միայն եր-  
թաս, երկու-իրեք օր նստիս, էսպազ զնես,  
զատնաս ի տուն, փախչիս: Զուրի եւ հաւան  
լու է: Բայց ցաւ մի կայ ախտի մի, որ առ- 235  
մէնին աչշին խացակէ կարմիր եւ փառած,  
տրանց եւ կանանց, տղոյց եւ աղջկանց: Ցաւ  
մի այլ կայ փոքր տղոյց: ոնց ծնին՝ ակնջղին  
որդ ընկնի եւ մեռնին. Եւ այնու զաւակ չի  
ապրիւ անզ, որպէս Ստամուլ խիարուկն: 240  
Երրորդ զի սրանց ձուքն ուսած է եւ այտու-  
ցեալ մեծ քան զմերուկ. Եւ ոչ միայն ոմանց,  
այլ ամենեցուն է ցաւն այն, որ կոչի աէ պէ: 245  
Եւ առին թէ քաղաքս աղ չպահնի. Եւ փայտն  
խիստ սուզ է. Եւ որ կայ՝ զրամով կու ծորիսի. վասն այն ի կերակուրն լաքար ձգեն,  
որ շուտ եւի կու հատցնէ, ապա զարար է: Բայլ  
աչշին ի թօղից եւ իշուց շոէն ցաւի. զի անզ  
անձրեւ տարէստիով չի զալ: Եւ շուկանին

238 կու: — 242 ձժեռուկ: — 245 արամով: —  
246 ծախի:

250 զայտոպայ է եւ մարդաշատ եւ սրխ , որպէս  
վահաստիկ եւ Ստամոգոլ Ռեզուն չարշուն :

ԲԱՐԴ ԵՒ ԿԵՆՅԱՆ ՅԵԼԱՀԱՅ

Եւ պիզծ Արսին սիրան բաց , պարշելի  
զէմք , պոկտիք կախ , և այնպէս լիրը եւ ու-  
նամօթ են եւ անհարկիք . բնաւ ամօթ չունին  
255 եւ ոչ խորութիւն . մինն արտաքս ելնէ ջրին  
վրայ , միւսն դայ ջուրն , յնտ տանի զաղբն եւ  
ըմպէ : Եոյնպէս եւ կանայքն լիրք եւ անա-  
մօթք . ոչ ամաչեն միմիսնց , այլ մերկ եւ խոյ-  
տառակ չբջին . նաև ի բազանիսն առանց  
260 Փօթի մտնան , այլ բաց . տէլաքնին պառկեց-  
նեն , լուսնան եւ զամօթառեղին արանց եւ  
կանանց : Եւ զի փայտ չկայ՝ զիսպալ վառեն  
զըռւլիսանափն , որ լինի ծուխ եւ չար հոտ : Եւ  
ես լիչէի զթուրքի համամենին եւ զէմիշնին եւ  
265 զամենայն հուզուրնին , այլ Եւ զէտէպն , զէր-  
քանն եւ զամենայն պարկեշտութիւնս եւ յոզոց  
հանէի . որ եւ խուզ եւ թուք սառչի մարդ-  
կան ոչ արկանեն . իսկ սոքս միզեն , ազրեն  
եւ այլ բազում պիզծ եւ զաղիք իրս զործեն ,  
270 զոր ոչ արժան համարիմ զրել եւ զունկն ձեր  
յոտակ պղծել . զի ամենեւին մուրտաք են Եւ  
անմաքուք : Եւ զեռ եւս պարծին թէ մեք եմք  
որդիք Մէհմէտի եւ սույզ Բամայելացիք ,  
իսկ տաճիկն կէս ու կէս է , խորթ եւ պոռնր-  
275 կորդիք , չեն նոքս Արսի նման . խօնթքարն  
ալ ազախնածին է , չէ սույզ մուսուլման :

276 դա: — 273 Խամուկիք :

Այլ եւ միմիանց հակառակ ևն եւ չեն հաւան .  
Պարսիկ՝ թուրքի եւ թուրքն՝ Քրդից . բայց  
Պարսիկքն լաւ համարին, թէ Արքահամու որ-  
դիք են : Թողում զառապել բարբաջմունս 280  
նոցա . զամք միայն ի տեսութիւն յառաջար-  
կեալ բանին :

## ԱՅ-ՊԱԼՈՒՐ

Օր մի զնացաք ի յԱթ պազարն, որ մեծ  
մօյտան էր . անդ անհամար ուղտք, էշք ծո-  
խէին . եւ աժան, զի լաւ ուզտն Ժ զուռուշ  
տան, որ ի Շամ կամ Հալապ և զուռուշ . այլ  
եւ ազնիւ ձիանք . բայց էշք նոցա ուսուցած է, 5  
զի արագ են եւ միոյթ քան զճի . երբ նստի ու-  
րապն ի վերսց եւ զճայնն լսէ՝ թոչի . զոր մեք  
տեսեալ հիանայաք ընդ արագութիւն նոցա .  
եւ մեր ըխտաւորքն գնեցին և, և . եւ զար-  
մանէին զնոսա լաւ : Խոկ ես ոչ սիրէի զէշն, 10  
եւ ոչ զգարշելի ձայնն լսել կամէի, եւ ոչ զսէ-  
մէրն : Եւ ասին թէ Երուսաղէմայ ճանապարհն  
խիստ աւազուտ է, տէկմէ էշ չի զիմանար .  
Եթէ զնես խորախ մի, դեռ շահիս . եւ ես  
զնեցի լաւ խորախ մի իե զուռուշ : Եւ յոր- 15  
ժամ ճանապարհ ելաք, այն արագ իշվան հա-  
զիւ շարժէին, քահալ եւ ծոյլ եղեն . եւ որչափ  
աղաղակէին, առաւել մնային . ընդ որ հիա-  
ցաք, ոչ զիտելով զպատճառն : Եւ ասին մեզ  
թէ բազում հիլա ունին . զի ծակուտեն եւ տան- 20  
շեն (արապք) զիշվանս . այլք զառւս նոցա խա-

ծառեկին . և ոմանք Հրացեալ երկաթով շահ-  
թէին . և այն կոկծուն վազէին վեր . իսկ այլոց  
ձեռք անկեալ ոչ երկնչէին (էջը) . և յուրիք  
թողին զնոսա վասն յուլութեան . և այլք կէս  
զինն տիվին . զի այս տեսլի Հրաշք էր քան Դայ-  
աբրու . և բրկած իշվանի :

Կայր ի Մարր մեծ մզկիթ մի և բարձր  
մինարայ , Եաւշիլ մէջիթ կոչէին , որ էր գե-  
20 ղեցիկ և պիմաշէն . և մերձ նմին կայր Խմա-  
րաթ , յորս Հիւանդաք և ախտաժէոք կային .  
և ի գուրս ով կամէէր՝ տային գեղրանք ազգի  
ազգի՝ աչաց , ակոփ և պիտույք և այլոցն ,  
առանց գրամի : Եւ կայր մօյասն մի այլ մեծ  
35 քաղքէն զուրս , որ եզրիք , կոլք և ոչինարք  
ծախէին . բայց Եզի մեծ էր քան զզօմէշ . և  
ոչինարքն քան զէշ : Այլ և առեալք վեց եղջերու-  
և չորս (եղջերու) ոչինարք . մասոք Աստուծոյ :

## ԵՍԱՅԻՆ ՄԱՐԴԻ

Օր մի այլ տարաւ զմեղ խոհայ Խպրաւէիմ-  
40 շան ի Էսկի Մարր . որ մեծ և լայնանիստ էր  
և հին տներ գետ ևս կային . բայց անձարդա-  
րհակ էր : Կային Եկեղեցիք մեծամեծք Հռոմի ,  
իրառու . և մատեալ յեկեղեցին շրջեցաք : Այլ  
և ցուցին մեղ բազում մարմինք ճպնաւորաց ,  
45 անապատառուրաց ի մէջ որնակաց , որ Երկր-  
ոպագեալ ազօթեցաք : Եւ էին Եկեղեցինք քարէ  
և փայտից : Եւ անտի Երեւէր Եօթի մարտնքն  
որ է Շրիիլիր Յովուէլի զեղեցկին , մեծամեծք

երկայն եւ բարձր եւ լոյն, թրծած քարբիճէ, 50  
շնչքն աւեր:

Եւ ահոտի եկեալ մտաք ի Սարայըն վաս-  
չախն, որ էր մեծ, իրեւ քաղաք էր մեծ. եւ  
շրջէին ի բակն մեծամեծ տէզէխուչիք, որ է  
ջայլամ, սղբուս<sup>8</sup> ոտպին ըդառւ, գլուխն վորքը  
իրը սագի, վիզն երկայն եւ ինքն մեծ քան 55  
զուզտ, եւ թեւն թոշնոյ. ամայ ասին՝ թոիր.  
նա յոտան ցուցանէր. բնոն կամէէին բառնալ,  
նա ասէր՝ թոչուն եմ: Այլ եւ զտանի սա յա-  
մէն մեծամեծաց զրուն. եւ հաւկիթն վեց  
զրամ եւ ութ:

Եւ զազան մի կայ անդ՝ կոկորդիլոս, լէ՛  
բազիլէս կ'ասէ, նեղոս զետեզերօքն լինի յո-  
լով. չար եւ վնասակար է. յառաջ մարդ չէր  
կարէր անցանել կամ քաղաքն բնակել.  
Աղէկասանդը Մակեդոնացին ալիսմ է արել, աւ-  
սին, որ սատեցան եւ այլ չերեւին քաղաքն,  
բայց թէ հեռու տեղիս: Եւ կաշիք նոցա այն-  
պէս ամուր եւ պինու է քան զերկաթ. ոչ սուր,  
ոչ թփաք, ոչ սլաք չի մանէ. վասն այն դրանց  
վրայ զարկած է, զոր այլ տեղ երկաթ: Այլ 70  
եւ տեսաք զանազան ձկունս, զազանս, զե-  
ռունս: Եւ օղի մի ձկան էր կախած սարային  
զուռն, զրկաչափ հաստութիւնն եւ իրեք խու-  
լաճ երկայնութիւն:

Եւ սարսյ մի այլ կայը տէֆդերտարին 75

49 քարբիճէ: — 54 ջալամ... օզուռ: — 73  
իսուլած:

<sup>8</sup> լէ՛կերէն՝ ՏԻՐԱԾ, ՀԱՅԼԱՄ:

մեծ եւ լայնանիստ . անդ եւս չըջևալ զարժանացի իրու տեսաք : Եւ Փէլահ Արագնին որպէս տարուեկ եւ զերի էին ի զաներն . եւ ամէն առայի զուսն երկու-իրեք արաս կայր : Եւ Սա-  
80 բային առջեւն սարայ մի ալ կայր եւ բազում մէրժէրէ սներ հաստ եւ ազնիւ . վերեւն փրած էր , միայն սներն էր . եւ ասին թէ Փատաւոնի սարայն էր սա : Եւ այլ յառաջ սարայ մի այլ կայր , բոլորաձեւ մեծ . այժմ մէջիթ է . զայն 85 կուրճի սօլթանէն առած է . զի Մարր Կուրճին ունէր : Եւ այլ բազում սարայք եւ չէնք եւ հա- րուք տեսաք : Եւ բլրի մի վրայ հոր մի կայր , Գէմ մատ ի վայր . ամէն չն մատին զլուխն եզանք , որ տօրապով ջուր կու հանեն ի վեր . ներքինն 90 միջնոյն , միջինն վերեւոյն . եւ այսպիսի գէսնի- փով յանզնոց ջուր հանեն տօրապով սպազ եւ անուշ . զի քաղաքն ջրէ զազուն է . եւ ասին թէ երեքհարիւր եղ կայ յայն խզմէթն :

## ՄԱՐՏԻՆԻ

Եւ տէր Մազաքիան տարաւ զիս եւ զամե-  
95 նայն ուխտաւորս օր մի ի Մաթարիայ , որ կէս միլ Հեռու էր քաղքէն . եւ կայր ի ճանապար- հին վանք մի սուրբ Սարդիս . անդ թաղէին դհայ մեռեալք : Եւ ի Մաթարիայ կայր մեծ Հաւուդ մի . եւ ջուր ի նմա , տօրապով յցած : 100 Եւ ասին թէ Քրիստոս յորժամ վախեաւ Մարայ՝ յայս զեզս իջաւ . եւ Քրիստոս ջուր ինեղբեց , մայրն զնաց խնդրել ջուր եւ ոչ

ետուն . Եւ սուրբ Աստուածածինն անիծեց , թէ  
ձեր ջուրն աղու դառնոյ . Եւ եղեւ այնպէս : Եւ  
զարձաւ տրտում առ որդին եւ ետես զի յու 105  
տացն Յիսուսի ջուր բխած էր : Փառք Աս-  
տուծոյ : Եւ է մինչեւ ցայսօր , զի ամէն տեղ  
եւ գեղն աղի է եւ անդ քաղցր ջուր : Եւ այն  
ջրէն ամէն օր Փաշային տանին , զի այլ ջուր  
չի խմել : Եւ կայր հաւուզին առջևն բոլորակ 110  
քամար՝ խորանի պէս եւ սէքուք եւ սեղանա-  
տեղք , ուր խուրպաննիս մորթեցաք , մոմ վա-  
ռեցաք :

Եւ անտի մտաք ի մեծ պաղչաւ մի . Եւ  
չըջեալ ի նմա՝ տեսաք բազում ծառս լիմոնի . 115  
զի Մորաց լիմոնն փոքր է , ընկզաչափ , խիստ  
ջրուտ եւ թրթու . Եւ գետինն ամէն անկածն  
թափել էր՝ կարկտի նման : Տեսաք եւ պալ-  
սանի ծառերն , ազա չորացել էին . Եւ ասին  
թէ չորս եասախչի պահէին առաջն : Եւ դար- 120  
ձաք ի տուն :

## ՎԱՆԱԲԱՑՔ

Եւ այլ օրն եկաք ի սուրբն Մինաս , որ տ-  
սեն Միհա : Եւ այն մեր եկեղեցի է . զի եւ  
անդ թաղեն զմեռեալու : Եւ ամէն եկեղեցիքն  
կան մատուռ կամ սեղան Հայոց . զի ասին եւ 125  
մեք դուաք ի պատմադիրս , թէ Լի հայի տուն  
կայր <sup>9</sup> . անտի է մնացել եկեղեցիքն :

104 դասեաւ : — 116 մորայ :

<sup>9</sup> Հմմատ . Յայսմաւուրք Յուլիս 30 . «Եւ էր յայն-  
ժամ (այսինքն յաւուրք Պրեգորի վկայաւիրի) յազգէս  
Հայոց յԵղիպառս Լի տունս համարով . որոց կա եղիս-  
կոպոս զքուերորդին իւր Պրիզորիս անուածք» :

Եւ Մարայ բոլորն կան հռչարկաւոր եւ մեծ  
Հկեղեցիք եւ մեծանուն վանքեր, զօրաւոր եւ  
120 սքանչելադործ։ Սուրբ Անտոնի վանքն մեծ  
եւ փառաւոր։ Եւ կայ Հուալ նմին լեռոն, ուստի  
լաքըն եւանէ, զոր խառնեն ի կերակուր։ Եւ  
միւս վանքն Մարկարայ ճպնաւորի, որ եւ սուրբ  
մարմինն կայ անդ ի մէջ որնտկի։ Եւ կան բա-  
135 զում հարեղայք ի այնմ վանքերն։ Այլ եւ կան  
որիշ վանքեր սքանչելադործ, զոր մէք ոչ  
գնացաք, այլ յոմանց հաւատարմաց լսեցաք։  
Մարայ Ժ օրն Սինէական լեռոն է, Կարմիր  
ծովով կ'երթան։ բայց յայն կէմիքն բնաւ եր-  
140 կաթի բեւեռք չկայ, այլ փայտից զի ծովին այն  
ինդմանդ քար կայ։ Այլ եւ պօղովատ երկաթն  
Մսըր առաստ է եւ աժան։ Եւ չուրջ զքաղա-  
քաւն սափի վանքեր են անսպատաւորաց,  
ճպնաւորաց, որպէս եւ ի գիրս ընթեռնումք,  
145 թէ աշխարհն Եղիոլտացոց ծաղկեալ է ճպնա-  
ւորօք եւ անսպատաւորօք։ Եւ ամէն սուրբք  
Մարայ են։ Եւ զեռ եւս գտանին։ զի Խողովք  
զձուձ եւ սեւ զզեստ ազանին, մերկ եւ չքա-  
ւորք են։ բազումք յարմաւենի տերեւէ զտակ  
150 եւ կապայ ունին։ սակաւ ուտեն եւ ըմպեն։  
անկողին չունին, այլ ի վերայ զետինի ննջեն։  
Եւ յամենայն վայելչութեանց աշխարհիս հրա-  
ժարեալ են, կան ճպնութեամբ եւ տքնու-  
թեամբ միշտ։ Եւ այս սահմանք է նոցա վասն

137 սմանց։ — 142 չուրք։ — 144 բնթիրեումք։  
— 146 յանտօպատաւորօք։ — 151 յանկողին։ —  
152 ամենայն։

որոյ եւ յառաջ ի նոցանէ բազումք լինէին 155  
ճղնաւորք :

ԱՐՄԱՆԱԿԱՆԻՐ, ՏՈՒՐՔ

Եւ որպէս առ մեղ համբաւեն թէ ֆլան  
մարդ հազար զուռուշ ունի, ֆլան երկու  
հազար . Եւ նոքա խուրմայով պարծին, թէ  
ան արագն հարիւր արմաւենի ծառ ունի Եւ 160  
միւսն երկու հարիւր եւ կամ իրեք հարիւր . զի  
բազում շահաւէտ է ծառն . Եւ ոչինչ բաց չթու-  
զուն . զպտուղն ծախեն, զկորիզն այրեն, եղն  
հանեն . հարրախէն սէրէթ հիւսեն . զկեղեւն  
ծեծեն զի մզմզուկ է, Եւ անտի պարան օլո- 165  
րեն՝ բարակ եւ հաստ . իսկ զփայտն ի շի-  
նուածու տանն, քանզի անփուտ է եւ ամուր .  
Եւ այսպէս ինչ Եւ ունի խուրմի ծառն ի պէտք  
եւ ի շահ է . Եւ ինքն է կանաչ եւ անթառամ  
եւ բարձր . զոր Եւ Դաւիթ հիանայր Եւ վա- 170  
զապմամբ զարդարսն արմաւենեաց նմանե-  
ցուցանէր՝ ասելով . Արդարքն որպէս զարմա-  
ւենիս ծաղկեսցին :

Եւ հարցաք թէ զինչ խազնայ կու տան  
թազաւորին . ասին մեղ եթէ ԺՌ աարպայ ՃՌ 175  
չէրիֆի ոսկի . Եւ զայն իրեք բաժին է արած .  
զՃՌ խօնթքէրին . զՃՌ Մարրխուլին, զՃՌ  
Մէքի օրդուին . զի Մըսրայ խուլն Եւ Շամայ  
կ'իշվին . Եւ կտրուկ է Եւ անուանի . Եւ կան  
աւելի քան զժեՌ, ամէնն ճինզիք են Եւ 180

160 յարապն : — 164 հարրախն : — 167 յանփուտա :

— 171 յարմաւենեաց : — 178 մըսրայ . շամայ :

— 180 ճինզիք :

մղբախչիք . լոյն եւ երկայն չախչիր կու Հաղ-  
նին , կարմիր սքառլաթէ :

Եւ մեք վասն այն յամեցաք ի Մորը , զէրտ  
զժար եւ ահուստ էր ճանապարհն . տէկմա  
185 քարվան շերթար յահէն Արագկաց : Եւ ասին  
մեղ թէ խաղնայ գնայ . զէրտ ծովով կու վախէ<sup>1</sup>  
Յուսնկաց , ցամքով դնայ : Եւ մեք ուրախա-  
ցաք :

ՀԱՆԴԵՍԻ ԸՆՄԱՑԱՑԱՐՈՒԹԵԱՆ Ի ՄԵԳՔՆ

Այժ եւ ասին մեզ եթէ ի Մորը իրեք  
սէյիր կոյ եւ թամաշայ մեծ . որ մեծ չէնլիք  
եւ տօնանմայք կու լինի . Ա . սույգէսէմին .  
Բ . երբ օրդուն Մէքին տանին . Եւ Գ . երբ  
5 մուխթասիացն զիոնի : Ապա ես զերկուոն միայն  
տեսի . եւ սույգէսիմին միայն շտեսայ : Եւ  
ոյնոքէս չէնլիք եւ ամբոխ կու լինի յաւուրան  
յայն , որ քաղաքն ամէն թունա կ'ելինէ . եւ կո-  
նայք երբ քէպին կտրեն , զայն իրեք օրն խա-  
10 ռուլ կ'անեն . զի այս իրեք սէյիրս երթան .  
զորս ի բարձաց սակաւ մի պատմեցից :

Ասէթ է զի ամէն տարի Մահմատին կո-  
նին վրայ սեւ խատիֆայէ օրդու կու տանին .  
եւ Հինն շէխերուն մնայ : Եւ զայն օրդուն Մորը  
15 պիտի բանի . ամէնն գործած ու սիրմայով  
նախշած : Եւ ասին , թէ ԲՇ կին կու գործէ ,  
Բ.—ԳՌ մսիար սիրմա կ'երթայ . թող զայլ  
խարճն եւ մարզրուէ շարվածքն : Կ.—ԾՌ կու  
հայի մէկ օրդուն . ԽՌ ոսկի ալ ճանփուն

2 կու : — 4 օրթուն (համ. 14, 25) : — 7 առուբան :  
— 14 չիւլյուն :

խարճին . Եւ աղքատ հաճիքն եւ շատ մարդիկ 20  
սյնով տանին : Եւ երբ կատարի՝ առօք փա-  
ռօք տանին Եշիլ մէջիթն դնեն : Եւ յետ երկու  
շաբաթու տան ազնիւ ուզու մեծ զարդարեն  
եւ վրանին խումաշ ձղեն եւ վիզերն դաֆդայ  
ձգեն . զի նոքա օրդուն վերցնեն : Եւ այլ բա-  
զում ուզուք եւ ձիք զարդարեն . Եւ աղա մի  
կամ փաշայ դային լինի որ զայն տանի . զի մեծ  
խզմէթ է այն . Եւ վասն այն խզմաթին պարո-  
նութիւն կամ փաշութիւն կու տան : Եւ աղան  
այն զարդարի հեծելազօրօք . այլ եւ քաղաքա- 30  
ցիքն . Եւ դան առօք փառօք եւ պատվով մե-  
ծաւ , առնուն եւ դնեն ի վերայ տասն ըդուռն .  
Եւ որչափ խուլ կայ եւ ծառոյ , ոլիսի ձիաւո-  
րին եւ կազմին որովէս ի պատերազմ : Իսկ  
քաղքցիքն եւ ամենայն մերձակայք եւ դեղօ- 35  
բայք ժողովին , որ մէկ խանութ կամ տուն  
պարապ չի մնար . Եւ ոյնովէս պարուք , եր-  
գով , փողով , տաւուլ զուռնայով առեալ տա-  
նին քաղքէն ի զուրս . Եւ սէյիրձիքն փողոցաց  
երկու կողմանց երեք-երեք տակ սըխլմիչ են 40  
եղել : Իսկ որք մերձ են՝ մեծաւ տենչմամբ եւ  
փափազանօք ձեռօք շօշափեն զրդուերն եւ  
երեսնին շփեն . այլ եւ զօրդուն առնուն եւ  
երեսն քսեն . Եւ որք ձեռնհաս չեն՝ տան զդաս-  
տառակս մօտակային , զի նոքա հպեն ի ուղտոն 45  
եւ օրդուն կարշելի եւ տան նոցա , զոր տանին  
յերեսս շփելով եւ հազար երանի տան ուղտուց

20 մարդիք : — 23 ուխտ : — 42 զզուերն : —  
43 զօրթուն : — 44 զտասզառակս : — 45 ուազան :

եւ օրդուին, թէ զուք հողիք Մէհմէտն եւ տես-  
նուք զի՞էքն : Եւ այնպէս ձայն եւ ազազոկ  
50 լինի արանց եւ կանանց . եւ անդ է տեսանել  
զլաց եւ զզոչումն անօրինաց : Զի թէ ի հնումն  
էր տեսանել զիտուս եւ զզատիւ տապանակին  
սրբոյ կամ յորժառ տառելք ՚ Դաւիթ ի տունն  
Արքաթարայ քահանացագետի, որ եւ առաւել  
55 ազատուց արժանի էր . բայց սացա աւելի ահ-  
սաք . եւ թէ այն սէրն, հաւատն եւ յոյսն,  
զեղջն եւ փափազն, զոր ունին, եթէ առ Քրիս-  
տոս էր, երանելի եւն էր : Զոր տեսեալ Հիա-  
յաք ընդ մեծ սէրն ջերմեռանդ, զոր քրիս-  
60 տոնեայք ընտաւ չունին զայն սէրն զէմ ճշմար-  
տին Քրիստոսի, որպէս նորա ի սուս մար-  
զարէն՝ կունան : Եւ թէ որպէս նորա Հա-  
ճիքն, որ ի Մէքին զնալն որպէս յանձն առ-  
նուն զերկար եւ դժար, անջրդի հանապարհի  
65 նեղութիւնն, որ քառսուն օր չուք չկայ,  
սիստոր բզմովք ջուր բառնան յամանս ապա-  
կեզէնս . եւ զի յոյժ չող է, բազում զերկան  
մախնն, մինչ հասանեն . յոյզով պատահարաց  
եւ նեղութեան զիսին . եւ զայն ամենայն առ  
70 ոչինչ համարին, այլ բարով, ողբով, բակ  
ուսամբք, զկուրծս բախնելով Եւ անպիտան հա-  
մարելով զանձինս տեսլեան կնոսոյն : Եւ ա-  
մէն տարի աւելի քան զի—Մի Հոգի կ'երթաց  
ի Մէքան . զի իրեք ճանփով եւ իրեք պատաթ  
75 կ'երթան . մինն ծովով, եւ երկուսն ցամա-

55 յաւելի : — 56 պան : — 59 յերմեռան : —  
64 յանդրդի : — 65 չկա : — 73 կրթա :

քով. այս է՝ մինն Հալպով, Շամով. մինն  
Մաղրապով. Եւ ամէնն պիտի յԵրուսաղէմ  
պիտի հանդիպին, թէ ոչ խութսուղ հաճի ա-  
ռնն: Տեսէք թէ որպէս փառք ու մեծութիւն  
ունի կունան եւ որքան նուէր եւ ընծայ տա- 80  
նին, որպէս ի ժամանակս կռապաշտից կռոց.  
Եւ որք անդր հասանեն թէ որպէս սէր ջերմ  
ցուցանեն. զհող լիզեն ուր շիրիմն է նորա՝ բա-  
զում երկրապագութեամք եւ երկիւղիւ. զրդ-  
տուց օլօքս համբուրեն եւ աչաց վրայ դնեն, 85  
որոյ վրայ նստեալ է Մահմատ. վասն որոյ եւ  
զամենայն ուզոս պատվեն եւ ոյլ բազում ա-  
ռասպելս առնեն, զոր աւելորդ համարիմ զրել  
աստ: Երկու շաբաթ մնայ անդ. անտի ա-  
ռեալ առնին ի Մաքան: 90

Ունին եւ փոքր օրտու մի ոյլ՝ հօրն Արրա-  
համու, զոր Խալիլ Խոլբահիմ ասեն. եւ զայն  
տանին ի զերեզման նորա, մերձ է յԵրուսա-  
ղէմ. բայց այնմ ոչ այնպէս պատիւ առնեն,  
որպէս Կընտին: 95

ՀԱՆԴԵՍ Ի ՓՈԽՄԱՆՆ ՄՈՒԵԿԱԱԱԱՅԻՆ

Երկրորդ սէյիրն է փոխիլն Մուխողասի-  
պին. զի այն զիշերն մինչ ի լոյս շէնիք է, որ-  
պէս ուամազին իրիկունն: Ամէն փողոցի մի  
զլուխ Փէնթ մի եւ թօհվայ մի կայր. եւ ամէն  
տուքանք Փէնէր մի. զահզիքիսանանին զար- 100  
զարած եւ տօնաթմիչ արած. եւ քաղաքն ա-  
մէն մինչ ի լոյս շրջին եւ թամաշան հային.

83 շիրիմն դէշն: — 88 յաւելորդ: — 91 օրիու:

զէրա աղգի աղգի օյտնի , սէզէնտէրնի , հայտ-  
զըլնի , և այլ կատակ եւ ծաղր , որպէս ի տո-  
105 նանեմայքն , եւ ուրախութիւն ոչ սակաւ : Եւ  
ասին թէ ԳՈՒ ռակի կ'ելնէ այն գիշերն մռն-  
թասիսին :

### ՀԱՆԴԵՍԻ ՅՈՒՌԿԱՆԵԼ ՆԵՐԱԾՈՒՅ

Իսկ երբորդն բարի եւ օկտոսկար , այլ եւ  
վայելուչ եւ պատշաճ , որ է սուզքէսէմին . զի  
110 ոչ թէ միայն քաղքցիքն կամ ռամիկքն , այլ  
ինքն փաշան իւր ալամաթովն եւ թշխանօքն  
եւ հեծելոքն ուսի ի տեղին , ուր զարոց է ջուրն  
զովելի , ունելով ի պատրաստի ութ զատրպայ  
զարդարած եւ առանձնիչ եղած : Իսկ կան-  
115 թեզք , ջահք եւ լազարք այնչափ բազում ,  
մինչ զի ծածկեն զերես երկնի եւ զաստեզաց :  
Եւ ջուրն սակաւ սակաւ յաւելեալ յորդէ . եւ  
որպէս յեռեալ կաթսայիցն թափէ զետն  
զջուրն ընդ ամենայն երկիրն Եղիպատացոց . եւ  
120 այսպէս յաւելեալ յիսուն զամենայն Հորս եւ  
զձորս . եւ առատացնայ մնան ընդ զաշոք  
իբրեւ զծով , մինչ զի եւ զրլուրս ծածկեն . եւ  
ապա զան ի տեղին ուր քաղաքն է . եւ բազում  
ամբոխ ժողովնեն . եւ ջուրն եկեալ վերացու-  
125 ցանէ զնուռնե . եւ յայնժամ լինի ուրախու-  
թիւն մէծ եւ ցնծութիւն մէծատանց եւ ազ-  
քատաց , քաղաքաց եւ զեղորէից եւ առ հա-  
սարակ ամենայնի : Եւ սկսանին թօփեր ,  
թիւարնի նետել , տառուցնի , զուռնանի . Եւ  
130 փողք հարկանի . եւ բոլոր քաղաքն զետովն

դառնան ի տուն : Եւ մեայ ջուրն այն երկիրն  
վեց ամիս . ապա սկսանի նուազիլ եւ ցածո-  
քիլ . մինչ զի ցածաքն երեւի : Եւ երկիր պա-  
րաբռացնալ այս զպառուզն սերժան հարիւ-  
րաւոր , վաթսնաւոր եւ երեսնաւոր ըստ ու 135  
ուսկի Տեսոն , եւ այնպէս բազում արդիւնս  
առյ . զի Եւ ինու զամենացն աշխարհս , որովէս  
ասի յառակաց . Եթէ ամենայն աշխարհս ազու-  
թիւն լինի , Մորր յազկեցուցանէ . իսկ թէ ի  
Մորր սով լինի , ամենայն աշխարհ չկարէ յա- 140  
պեցուցանէլ :

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆ ՅԵԼՈՒՅԱՅ

Այսովէս բարելի եւ լի եւ առաստ է (եր-  
կիրն) . բայց բնակիչքն սովալլուկ եւ նօթի ,  
ազգաստ , աչփիլ եւ չպրախ , կարօտ եւ հասրաթ  
կոտոր մի հացի . զի եւ օր մի յագ հաց չուտեն , 145  
եւ զայն թեփի եւ թանձր հաց . եւ թէ հահ-  
ղիպի ուրեք կծու , բորբոած եւ յորդնած պա-  
նիր կամ սաստկած կով կամ սյլ ինչ՝ (ուտեն)  
շաքրի պէս : Եւ ասին թէ սոքս Փարաւոնի  
ազգ են , որք են ճինկանայ . անէծք կայ ի զե- 150  
րաց նոցա . աշխատին եւ ոչ վայելեն , սերժա-  
նեն եւ ոչ ինքեանց հնձեն . սյլ են թեռնա-  
կիր , ծառայ եւ սարուկ ազգաց օտարաց : Եւ  
զոր ինչ արարին նորա ընդ որդիսն իսրայէլի ,  
առնեն եւ նոցա սյժմ ազգ Տաճկաց . զի զամե- 155  
նացն զոր ինչ վաստակին նորա եւ ստանահ՝  
Տաճիկը յափշտակեն եւ ստնուն ի ձեռաց

136 յարդինս : — 138 առակաց : — 142 բարելի :  
— 147 ուրէք : — 150 կու : — 157 ազգշտակեն :

նոցա, և մեան ունայն։ Եւ կայ ի զիբութէ ի  
Քամայ ցեղէն են։ վասն որոյ եւ զանէծո նորա  
160 ընկալան։ Եւ չկայ աշխարհա ազգ չոք եւ ա-  
պիրատ, այլ եւ անարդ եւ տկար. զի ոչ թէ  
կերակուր չունին, այլ եւ հանդերձ, վերար-  
կու, զտակ կամ փօսդալ, տուն կամ բնա-  
կութիւն կամ այլ ինչ փառք. այլ իրրեւ զխոզս  
165 ի զետեի նոտին եւ երնեն, ուտեն եւ ննջեն,  
դարսիք, զդալ բնաւ չունին, այլ ի ազտոտ եւ  
անլուսյ ամսանէ ինչ զաղիք ուտեն ամէն օր,  
եւ բնաւ չբուանան։ Եւ տունք նոցա բոլորեալ  
յեղեղէ եւ ցանկէ՝ որպէս փարախք ոչխու-  
170 բաց, վերեւն բաց եւ ներքեւն աւազ, եւ  
ինքնանք մերկ. այլք ի ծերպս վիմաց եւ ի  
քարաթուփս եւ յաւազս բնակեն։ բայց զողու-  
թիւն, հարամութիւն, յափշտակութիւն յա-  
մուց չթողուն. եւ զոր յայլ աշխարհա տա-  
175 սանորդս տան, նորա հինգէն մին տան. վասն  
որոյ զրկեալ են ամենայն բարեաց՝ հոգոյ եւ  
մարմնոյ եւ ի շնորհաց Որդւոյն Աստուծոյ։

## ՃԱԿԱՊՈՒՐ Ն ԳՈՅՆԻՑԵԼ ՅԵՐԱՎԱՆԱԿԱՐ

Ծես այսոր ամենայնի պատրաստեցաւ  
Մարտ խաղնան։ Եւ խօնափառքէն եկաւ զէր-  
պազ, խափդան եւ Հրաման մեծ պարոնի մի,  
որ կոչէր Սուլիքան աղայ։ Եւ էր նա սիրելի  
5 խույսումնիսաշի Խոյրահիմշային. զոր իրրեւ  
զիտաց՝ խնդութեամբ դնաց եւ շնուհաւորեց.  
Եւ նա առաց. Սիրելի իմ, ինչ մուրատ ու-

158 ունայն։ — 166 զքալէ։ — 172 քարազուրս։  
— 177 յիրդոյն։

նիս այժմ յինէն, խնդրէ՛ : Եւ նա ասաց : Ու-  
նիմ աստ եղրօրորդի մի, որ կամի Դուցու-  
շէրիֆն դնալ : Եւ նա ասէ . Ով ուսդա, չէ թէ 10  
մի, ապա տասն ալ թէ լինի՝ քո խաթերն  
համար կ'առնում, հետ տանիմ . բեր դնա առ  
իս, զի տեսեալ ճանաչիցեմ դնա : Եւ օր մի  
տարաւ զիս առ նա . Եւ անկեալ յոտսն՝ ովազի  
զծունկն : Եհարց եթէ Դա՞ է քո ասածն . եւ 15  
նա ասէ . Այս : Եւ պատվիրեց ինձ զի միշտ  
մերձ չատըրի նորաւ իջնում . այլ եւ հրամեց  
քէ հային, որ զիս լաւ հայի եւ չտայ դափար  
առնուլ յինէն :

Եւ իրեւ եզեւ օրն չուելոյ խազնին՝ վա-  
շան ինքն իւր ազամաթումն եւ հեծելովն մինչ  
ի զուրս միւլ մի զաւորեց : Եւ ԳՃ մարդ ու-  
նիքը խազնան, ամէն պահատուր եւ ազնա-  
ւուր, տօնանմիշ, խուշանմիշ եղած . Եւ ութ-  
սուն զօրեղ եւ քաջ մեծ ջորի եւ ոլէտավի, 25  
ամէնից զլուխն խումաշ ձգած, որպէս քար-  
վան պաշի խաթրնուն . Եւ ամէն մէկ ենկիչ-  
րու մի յափ տւած . նոցա վրայ բարձած էր  
խազնան . եւ զինի էշքէրն երթայր . ապա հուսկ  
յետոյ մեք ուխտաւորքս, որ կայտք հարիւր 30  
հոզի . եւ նախընթաց երթայր օթախն եւ տեղ  
պատրաստէր . եւ երբ մերձենայր խազնան  
օթսին չարեկ միւլ մի՝ զարդարէին զջորիքն  
եւ հարկանէին սուղիք եւ նազարայք, տա-  
պլայք, տաւուլ զուռնայք եւ ազդի ազդի 35  
քնարք եւ երդ . յառաջ խուռմիշ լինէր ազային

14 ոտսէ : — 15 դայ : — 18 չտա : — 21 յիւր :

մեծ եւ մասունքը շատըքն, թագաւորի լոյեխ, եւ անդ տարեալ դնէին պիսազնան. եւ Հարիւր մարդ յիրմէ չի զատէր: Եւ ուխտաւորքն հեռու իշխուին:

Եւ այն աշխարհն այնպէս սահմանք կայ, որ կօժբուկի չեն ի տալ, թէեւ ձ՛մ զուռուշի ապրանք ունենայ. զէք զլիխուն ու տավրէն կ'առնուն ամէն իրիկուն. կայ որ շահի մի, 45 կայ վարայ, կայ ռուզ, կէս զուռուշ եւ մէկ զուռուշ ալ կայ. բայց իշուն քիչ է, բզտուն, ձիուն առելի. բայց խազնին հետ զնացողաց մարդ խատիր չէ խօսիլ: Եւ երբ ևս ալ ելայ Մորայ, ասին ինձ շաքար, լիմոն, քացախ 50 առնուլ. զի ջուր չի զույիլ. Եւ այն դառն է, հոսած, բորբոսած, պիտի շաքար խառնել, լիմոն, առմոն հնդի, ապա կարես ըմպել:

Իրիւ զնացաք խօնախ մի, զեռ ջուր ունէաք. Եւ երկու օր ու կէսն Հասաք ՍԱԼՈՂԱ-  
ՏԻՆ. Եւ անդ զեռ եւս կայր ջուրն Նեղոս զե-  
տոյն՝ ի լինս եւ ի ձորս: Եւ այս զեզս անթիւ-  
ծառք խուրմայից տևասաք. այլ եւ խուրմա յո-  
ւով, աման. Եւ ասին թէ տատի զնայ խուրման  
ի Մորը, Ստամոզ եւ այլ տեղ. Եւ մեք զնե-  
առաք մինչ յԵրուսաղէմ:

Եւ անտի մէկ օրն Հասաք ի ՀԻԼԱՆ զեզն,  
ուստի Հինան կ'ելիէ, զի սար ու ձոր եւ զաշ-  
տերն ամէն Հինայ է, կանաչ եարբախ որպէս  
Հրէչքայի, Եւ ցած՝ հման բանզկի. Եւ զայն

— 45 կատ: — 46 յիշուն: — 48 ելա: — 60 յախորժ:  
— 61 Կայ զրուած զաթի, վրան Հիլաս:

չորացուցեալ աղան. լինի ալիւր. եւ անդէ ստոյգն եւ այլ տեղաց կէսվակէս աւազ է. զի կայ մերձ նմին մանր աւազ որպէս փոշի. զայն խառնեն ընդ նմա զի ծանրացի, վասն այն սակաւ գօրութիւն ունին: Սորամէկ լորամ 70 մէկ օխան կ'ամէք. զի աւուր մի ճանապարհէ հոտմ կ'առնուս: Գնեցաք օխան իրեքական զրամի. եւ այնպէս հոտով եւ ուժով էր, որ առանց թանալոյ ներկէր զձեռովին:

Եւ անտի առաջ հատաւ ջուրն գրախտին. 75  
այլ ինչ խօնախ իջնուաք, ջուր չի զտնէաք.  
եւ ուր ուրեք թէ ջուր լինէր, մզլած հոտած.  
զոր պասքած մարդիկ եւ անասունք անկանէին ի վրայ. որ եւ զտիզմն եւս ընդ ջրին  
հանէին եւ ցամաքնցնէին զհորն. իսկ այլք 80  
յափկցի փորէին զաւագն, ուստի շող եւ կանաչ ջուր ելանէր, որ մարդ հայելու չուզէր,  
թող թէ ըմպէլ: Եւ ևս զայն տեսեալ յիշէի զքաղցրահամ ջուրսն եւ ոգոց հանէի. եւ անցօժար առեսալ խառնէի շաքար եւ ըմպէի անախորժ: Իսկ յայլ իջեւանս յառաջ զնացովքն զդառն ջուրն հատցնէին. զոր եւ զրաստքն մի եւ երկու անգամ վունչային եւ ոչ ըմպէին,  
այլ ի սաստիկ շողոյն եւ ծարաւման սաստիկ ըմպէին վասն ջերմութեան արեգական: 90  
Աւազն այնպէս խզմիչ եղել էր, որ թէ ձու զնես խորովի: Եւ վասն առաւել ջերմութեանն եւ տօթոյն բնաւ չելնէ քարվանն ցորեկով,  
այլ գիշերով. ցորեկն ի բուն տապէաք եւ յէտ-

68 կա: — 71 ուրէք: — 78 պասկած մարդիք:

95 նացն քսան ժամուն ելնէաք. զի աւաղն ներ-  
քուստ այրէք զմեզ եւ արեգակն ի վերուստ.  
Եւ թէ ոք ունի քիլիմ կամ չուլ կամ այլ ինչ՝  
սիրոէ եւ հանդչի. եւ որք չունին՝ տառին:  
Այլ եւ ելանեն յաւաղէն զանազան մեծ պի-  
100 ծակք, գորեխաք արեանարրուք եւ խածառեալ  
ծակոսեն զմարմինս մինչ արիւն հոսի: Զի  
անդ ոչ կայ ծառ, ոչ ճիւղ կամ այլ ինչ որ  
հովանի լինի, այլ աւաղ է: Եւ ի տեղիս տե-  
ղիս հողմոց հնչմանէ դիզացեալ բարձրացեալ  
105 է աւաղն լեռնանման, որպէս յԱնկուրու կամ  
Պէկապարու ճանապարհն. եւ ի բազմութենէ  
տառին ոչ ստիւք, ոչ իշօք, այլ բղանվք եւ  
ջորովք զնան. թէ աղքատք բոկ Երթան՝ այրի  
ստք նոցա, թէ փոսդալով՝ Երկու օրն անկցի  
110 ստիցն:

Եւ ութ օրն հասաք ի ՂԱԹԻԱՅ խասա-  
ողան, որ է կէս ճանապարհն Երուսաղէմոց:  
Եւ անդ մեծ զաֆար կայ. իշուն՝ կէս զուռուչ,  
Ճիւն՝ մէկ, բղանուն՝ Երկու: Եւ բխաւորքն  
115 անդ արգիլեցին. որք վարթամք էին՝ փու-  
թով տիֆին. իսկ աղքատք եւ չքաւորք բազում  
զան եւ հարւածս արրին. եւ բոնութեամբ  
առնուին անօրէն Արտինին: Եւ ինձ կ'ասէին թէ  
Դու վասն է՞ր ձի զնեցիր. Ժ՞—Ժ՞ զուռուչ  
120 պիտի զաֆար տաս. բայց Աստուած ողորմի  
Բաղրահիմշաբին հողոյն եւ տէք Մարգարէի, զի  
նոքա ինձ բազում շահ եւ Երախտիք արարին

100 քնրէխաք: — 101 յարիւն: — 103 յԵրուսա-  
ղէմոց: — 107 յԴառնվք: — 121 մարգարէ:

թէ՛ ի Մոըր, թէ ի ճանապարհս որպէս Հայր  
կամ եղբայր. քանզի ոնց պարոնն իջնուր,  
սովորաւորքն գային եւ տանէին զիս մօտ չա-<sup>125</sup>  
տըրն. երբեմն եւ կերակուր տային. այլ եւ  
պարոնն հինդ-վեց օրն կոչէր զիս եւ հարցա-  
նէր թէ ո՞րպէս կեաս. եւ երբեմն ջուր առէր  
տալու. զի նա տասն ուղար ունէր ջրով՝ տկե-  
րով բարձած հինդ-վեց աւուր ճանապարհէ. <sup>130</sup>  
եւ թէ ոք դայր առնուր ձիս, զինուորքն հա-  
սեալ խլէին ի ճեռաց նոցա եւ տային ինձ :

Անտի հինդ օրն հասաք ի ԴԱԶԱՅ, որ եւ  
Պօղոս յիշէ ի թուղթն (դատարկ) <sup>10</sup> որ է գեղե-  
ցիկ խասապայ. զոր ինչ կամիս՝ զտանես անդ, <sup>135</sup>  
եմիշք եւ պտուղք, նուռ, թուղ, սէրկեւիլ,  
խաղող, զէյթուն, այլ եւ ջուր սառիճնին. զոր  
սակաւ մի մխիթարեցաք եւ խմեցաք յագ եւ  
լի ջուր : Եւ անտի օր ու կէսն եկաք ի ԾԱՐ-  
ԱՅՅ սկէլէն. ուստի երկու փոքր մէնդիլ կու <sup>140</sup>  
մնայ յԵրուսաղէմ : Եւ Ռամլայ ծովով ալ կ'ել-  
նեն ուխտաւորքն . եւ միտտեղ ժողովեալ մնան  
մինչեւ յԵրուսաղէմայ առաջնորդէն թարճի-  
մանք զան եւ տանին : Եւ կային անդ մեծա-<sup>145</sup>  
մեծ եկեղեցիք վիմաշէն, բայց ամայի. էրէց  
չկայր. սակաւ հոռոմ կայր, եւ հինդ-վեց տուն  
հայի :

134 իւէ: — 141 կելնէն:

<sup>10</sup> Ազահովապէս կ'ուղէր տկնարկել Գործոց Առա-  
քելոց, լ. 26. «Հրէշտակ Տեսուն խօսեցաւ առ Փիլիո-  
պոս եւ առէ. Արի եւ զնա զու ի կողմն Հարաւոյ ընդ  
ճանապարհ որ իջանէ յԵրուսաղէմէ ի Գազա, զի այս  
է անապատք :

Եւ անտի խոզնան բաժանեցաւ ի մէնք .  
զնայր շիտակ ի Շամ : Աստուած աղէկ տայ  
150 իւրեանց , որ մէք անահ անդռող եկաք . թող  
դայն որ ամէն զիշեր նոպաթ զարնէին . այլ  
եւ ամէն բառնայն եւ առնուլն ի վար շատրվան  
կ'առնէին : Եւ այս Ռամը առին մարդագլուխ  
երկու-երկու գուռուշ ու կէս . մեծ դափարն  
155 մին սռու է Եւ մին Ղաթիոյն . այլն քիշ քիշ :

## ԶՈՐՈՒԹՅՈՒՆԻՔ ԱՐԱՊԱԼԱ

Իսկ չար Եւ նենկաժուտ ազգն արտազ , որ-  
ովէս ի վերայ ծավու ունին որոզայթք եւ հի-  
ւա , առաւել ի վերայ ցամաքի , զոր հիացու-  
ցանէ զլառզան . զի այնպէս խորամանկ են եւ  
160 նենկաւոր , զի չկայ նման նոցա . զոր սակառ  
մի ծանուցից ձեզ :

Քարվանն իրիկնով կ'ընէ , որովէս ասա-  
ցաք , զի հովով պես . Եւ երբ իրիկնուէ եւ  
մթնի , քունն նեղէ զմարդիկն որ թմրին եւ  
165 մրաթափին . ոմանք ի վրայ զբաստուց նիրհեն  
եւ անկանին ի վայր , այլք իշխուն եւ էտէկ սո-  
նուն զտավարն : Գան պեղծ Արագնին ուշիկ  
ուշիկ , հանեն ի պլասց զուլարն տամրին , մինն  
զէշն առնու . Եւ միւնն զուլարն , քաշ տանի եւ  
170 երթայ սակաւ մի զկնի . սպաս թողու ի բաց Եւ  
զհայ : Եւ իրեւ ոտքանայ այրն , Հայի յետո ,  
էշ չկայ , միայն ուլարն յափին : Իսկ այլքն  
զան խառնին , զի քարվանն մեծ է քանի հա-  
զար հոգի կայ , ո՞վ ըզով ճանաչէ . Եւ եկեալ  
175 խօսին արակերէն՝ «էշ քալաք սէյտի» , այս է՝

Պարոն ի՞նչ հալի կաս . եւ նա քնաթաթախ ընդ քունն մըմոայ , զիտէ թէ ընդ ընկերացն է . եւ նա տեսեալ զնա թմրած՝ առնու զգօտին զլիուն եւ փախչի , կամ ձգէ զայրն ի ձիուն եւ ինքն հեծնու եւ փախչի : Իսկ այլքն 180 զինի յետ մնալով զան հետ քարվանին . եւ թէ ոք վասն կարեաց կամ այլ իրաց սակաւ մի յետ մնայ , առնուն զէշն եւ զապրանքն եւ փախչին . զի ևն որպէս մժզուկք եւ պիծակ , որ յաւազէն ի դուրս զան . ամէն փոս եւ թուփ քար 185 բայատակս բնակութիւն է նոցա . զի անձրեւ չկայ Մսրայ երկիրն . հօթն տարին անգամ մի չի զալ : Իսկ այլք երթան ուղարց բեռինս . մինն կալնու զտէնկն . միւնն կտրէ զպարանն եւ կախ մնայ . այլք առնուն զտէնկն եւ փախուն 190 չին . եւ սակաւ մի զնացեալ թոզու զտանկն եւ նա հալածի : Իսկ վերեւի մարդ եւ մին զանկն յերկիր անկանի , անդ է լսել ձայն ազազակի եւ զլաց , ճիչ եւ զրօթ . ոմն լոյ՝ հակս չկայ , ոմն թէ էշս , այլն արըզ . կոծին ողբան եւ 195 ոչինչ օկտին :

#### ԳԵՐԵԶՄԱՆ ՍԱՄՈՒԵԼ ՄԱՐԴԱՐԵՒ

Եւ չուեալ անտի մին օրն հասաք ի բարձր լեառ մի եւ քարուտ . զի Ռամլու մինչ յերուսաղէմ ամէն քար է եւ առառած : Եւ այն լերան ներքեւն գեղ մի կայր արողի . որ եւ 200 անդ ասին մին-մին ուուպ : Եւ գլուխ լերանն զերեզման է Մամուէլի մարզարէի . եւ ասին թէ անդ ժողովին Հրեայք ամենայն շաբաթի ,

գառնան ի հարաւ եւ հային եւ գոչեն տանլով .  
 205 Եկ Մեսիա թագաւոր Խորացէլի : Եւ անտի  
 զնացեալ ի բլուր մի , յորմէ Երուսաղէմ քա-  
 ղաքն երեւէր . զոր տեսեալ Առղոմոնի տա-  
 ճարն փառաւոր եւ ոուրբ զՅարութեան խու-  
 պան՝ ուրախացեալ բերկրեցաք , մինչ զի ի  
 210 խնդութենէ անտի լացի . եւ առժամայն ան-  
 կեալ ի վերայ երեսաց խմոց՝ երկրպագի սուրբ  
 տիօրինականացն եւ գոհացաց զԱստուծոյ , որ  
 արժանի արար զանարժան ծառայս տեսանել  
 զուրբ քաղաքն աստուածակոխ :

## 12. ԵՐՈՒՍԱՂԵՄ

### ԺԱՄԱՆՈՒՄՆ

Անտի ավի զձիս աղքամափ մի ծերունի .  
 եւ ես մինչ ի քաղաքն հետիւտս դնացի : Կայ  
 սահմանք զի յորժամ մերձ լինին սրբոյ Երու-  
 սաղէմոյ ուխտաւորքն՝ առաջնորդն մարդիկ  
 5 ուղէ դէմ նոցա . թէ կան եպիսկոպոսք , վար-  
 դապետք՝ եւ նա ուղէ եպիսկոպոսք եւ վար-  
 դապետք . եւ թէ միայն քահանայք եւ աշխար-  
 հականք են , առաքէ զմեծ թարճիմանն եւ քա-  
 հանայք դէմ նոցա : Իսկ ամենայն ուխտ եկե-  
 10 զեցւոյն զարդարին եւ զգեստաւորին՝ եպիս-  
 կոպոսք , վարդապետք , քահանայք . եւ առե-  
 նոյն կղերիկոսօք , ջահիւք եւ լազտերօք ,  
 բուռզարօք եւ խաչալամով , խնկօք եւ մոմե-  
 զինօք դէմ դնան : Եւ որչափ քահանայ կայ եւ

208 զարութեան :

4 մարդիք : — 8 զարճիման : — 10 եպիսկոպոս :

կարգաւոր՝ ամէնին շուրջառ տան եւ շապիկ . 15  
եւ մտանեն քաղաքն չարականաւ ցնծութեամբ  
եւ երգովք հոգեւորօք . եւ իրրեւ դան ի զուռն  
և կեղեցոյն՝ զնոյ ընդ առաջ պատրիարքն եւ<sup>20</sup>  
մուծանէ զնոսսա յեկեղեցին . եւ երկրոպագեալ  
անդ սեղանոյն՝ առա զան ողջունեն առաջ—  
նորդին : Եւ նա բաժանէ նոցա զօթեւանս ըստ  
պատշաճի , ոմանց առանձին մի օտայ տայ եւ<sup>25</sup>  
այլոցն երկու-իրեքին մի : Նոյնոքս եւ զրաս-  
տիցն :

## Ա. ՅԱԿՈԲ

Եւ կայ ի Սուրբն Յակոբ ՅԿԵ տուն 25  
վիճաչէն եւ քարուկիր : Եւ զատ աւադ Եկե-  
ղեցուն երկու փոքր և կեղեցի ալ՝ Սուրբ  
Թորոս եւ Սուրբ Առաքեալ : Ունի  
երկու մեծ ախոռ , որ հաղարական ձի կու  
մէկնի . իրեք պաղչայ՝ ջաղացքն մէջ ձիու : 30  
Եւ առաջնորդին օթեւանքն եւ նոտառեղն մեծ  
եւ բազում . մուտպախն , հացտունն , մառանն :  
Հարեղայից թաղն երկու տակէ տներն՝ ներ-  
քնատուն եւ վերնատուն : Ունի քառսուն հոր  
ջրի . եւ բոլորն շուրջանակի քարէ պարիսպք , 35  
բարձր եւ լայն . եւ մեծ զուռ երկաթի որպէս  
քաղքի . եւ զուռն վերեւն երեքյարկեան դար-  
պաս , կաթողիկոսարան : Եւ ամէն փողոց ա-  
նուն մի ունի :

Զոր մեծ կարգ եւ սահման տեսի ես յայն— 40  
ժամ անդ , ժամին եւ արտաքս : Զի ունէր ԺԵ

15 Հուռակառ . . . Հապիք : — 18 պատրիարքն : —  
22 առաջ — 30 Հաղաչքն :

հարեցայ, որ ամէն օր անխափան ամենայն  
եկեղեցիս ժամ կ'առնեն. Երկու վարդապետ,  
իրեք եպիսկոպոս, յու վարպետ մի ժամ՝  
45 սաց : Ունէք խարիճք, որ ցորելն նստէին եւ  
զիշերն փակէին, բանալին Պարտնուէրի տային.  
Էթմէքչիք, աշչիք, ջաղցականք, ևազբանք,  
ժոմճիք, Երկու քիլարչի, մասկախչի, թէր-  
զիք, ոսկէրիչ, թէսովէչիք, տեսեաք՝ մինն  
50 զինոյն վրայ եւ մին կերտերոյն : Ունէք եւ ժո-  
ղովարարք՝ կարգաւորք եւ աշխարհականք,  
զորս առաքէր առար քաղաքան Հայոց . Երկու  
լուսարար, վեց թարճիման : Զոր անխափան  
կատարէք ժամակարգոթիւն, սաղմոս եւ  
55 Երդ Եւ պատարագ . զի ամէն օր մէջ զիշերի  
յառնէին եւ այնպէս տքնութեամբ հոկէին յե-  
րեկոյէ մինչև ի լոյս . ամէն օր ութ կանոն՝  
ամենայն քահանայ . Եւ բոլոր տարին չորս-  
պաք . Երկու օրն անզամ մի հաշտկէին եւ զայն  
60 բանջար կամ յոկ թարխանայ . իսկ շարաթ եւ  
կերտկէն պահիք, մածուն, ձու, զէյթուն,  
երբեմն եւ ձուկ : Եւ զգեստ նոցա շալ :

Եւ զամէն ուխտաւորս Պարտնուէրն իրեք  
օր պիտոր կերտկէ, թէ Եւ հազար հոգի է :  
65 Եւ տան առաջի օրն Երկու-Երկու կերտն ուխ-  
տաւորաց՝ մինն սուրբ Յակոբ թողուս եւ մին  
Յարութիւնն տանիս . Եւ առաթ է որ առած  
օրն պիտի տայ : Ամէն մարդ հային կորայ մի  
զուռուշ կամ Երկու, այլք Երկու-իրեք ալ կու  
70 տան : Եւ յետ իրեք առաւր դարպահի հայ ժո-

զովեն . մարդու կորայ՝ Լովիսկոպոսաց , վար-  
դապետաց , մեծատանց շատ , աղքատն սա-  
կաւ . շատէն՝ շատ , քիչ՝ քիչ . մուրացիկքն  
պիլա պիտի տան , ոչ թէ կարգաւորքն : Ազա  
ուղեն ով ինչ խռատացել է կամ ուխտ է արել , 75  
թէ քառասնից , թէ ժամուց , եթէ հողոյ բա-  
ժին , թէ մատաղի , թէ խաչի , թէ շուրջառի ,  
եւ թէ այլ ինչ իրաց , անդ պիտի տրպի :

Իսկ ինձ կայր սիրելի եւ ծանօթ մի Լովիս-  
կոպոս՝ Ղուկաս անուն . սաւ եւ ի Լէհ երեկ 80  
հետ ինձ նուիրակ<sup>1</sup> . ես նորա բազում գործո  
եւ բան կատարեցի Ստամոլ . այլ եւ զիրո  
յոլով գրեցի նմա եւ զայլ սպասաւորութիւնս  
նորա առնէի : Նա տեսեալ զիս յոյժ ուրախ  
եղեւ եւ ծանոյց զիս առաջնորդին . քանզի սա 85  
տեսուչ եւ վերակացու էր , այլ եւ յաջորդ  
պարոնտէրին . եւ զնա առաւել սիրել քան զա-  
մենայն : Սա էած զիս օր մի առ նայ . եւ ան-  
կեալ յոտս նորա՝ ետու զհոգէրաժինս իմ . եւ  
նա տեսեալ օրհնեաց զիս եւ սաէ . «Այլ պիտոր 90  
տւելի տայիր , դու Լէհցի ես . ազա Ղուկաս  
և լիսկոպոսն զոհ է քէնէ . բազում աշխատանք  
եւ խզմէթ արել ես վասն սուրբ Երուսաղե-  
մայ» : Եւ ես ասի . «Լէհցու վաղ եմ ելել . որբ  
մի եմ եւ յաղքատ ծնողաց . այս չափս ալ իմ 95  
ձեռացս էմակն է . ընկալ զսակաւս յինէն» :  
Եւ նա հրամայեաց տալ ինձ օսամ մի առան-

<sup>73</sup> մուրացիքն : — <sup>77</sup> շուաջտորի : — 78 անտ:  
— 83 ոլով : — 89 սաս : — 95 աղքատ :

<sup>1</sup> Այսինքն 1618ին :

Ճին . Եւ առէ . «Որչափ ևս ասո՞ ի սեղանէ  
իմէ կերիցես . բայց ինձ գրեսցես , զոր ինչ  
100 պատվիրեցից» : Եւ ևս համբուրեցի զանցն եւ  
դնացի : Եւ առաքեաց ինձ թուղթ եւ թանաք .  
եւ սկսայ զրել շրջաբերականս , զոր ամէն աշ-  
խարհ կ'առաքէր նուիրատկ եւ թղթեր եկեղե-  
ցեաց եւ որիշ որիշ առաջնորդաց եւ խոճայից  
105 եւ աւագ իրիցանց : Իսկ Դուկաս ևլիսկոպոսն  
զօսաս լի առնէր ամենայն բարօք եւ փափուկ  
կերակրովք , ազգի ազգի ընծայիւք , միսիթա-  
րութեամբ եւ բազում բարերարութեամբ :  
Այլ եւ ամենայն միաբանք վանացն սիրէին  
110 զիս եւ պատվիքին առաւել քան դշափն , որում  
արժանի չէի . որոց Տէրն վարձահատոյց լիցի :  
Եւ կացի անդ Վարագայ Խաչէն մինչեւ ի  
Զատիկն Հայոց . զրէի , այլ եւ յեկեղեցովն  
սպասաւորէի ընդ այլ սարկաւագան :

## ԱՅՏԵԼՈՒԹԻՒՆ ՏՆՅՈՒՆԱԿԱՆ ՏԵՂԵԱՑ

Եւ յետ ուռուց ինչ տեղացի վարդապետն  
ժողովէ զամենայն ուխտաւորս եւ առեալ առնի  
շուր ածէ ամենայն աստուածակոփի սուրբ  
Տնօրինականս , որպէս զրած է ի ցուցակն : Եւ  
5 ամէն աեղ շարական ասի . եւ քարոզէ ասե-  
լով , պատմելով , զամենայն տեղիս նոցա  
յայտնելով , թէ այս այն տեղն է եւ այն՝ այս .  
ապա յորդորէ եւ առէ . «Հազար երանի ձեղ եւ  
ձեր աչացն , որ արժանի եղաք տեսանել զայս  
10 սուրբ տեղիքս . թէ ոլէտ երկարութիւն ճանա-  
պարհին եւ նեղութիւն , վիշտ եւ չարչարանք

կրեցիք, այլ եւ ընչից, ազրանաց եւ փողոց  
զրկեցայք վասն սիրոյ սուրբ Երուսաղեմոյ.  
Ապա բազում բարեաց եւ պարզեւաց արժա-  
նաւորեցայքք : Եւ այլ բանս յոլով խօսի ի 15  
զրոց . Եւ Երկրագագեալ աղօթիւք դառնան յայլ  
տեղ . եւ այսպէս մինչ իրիկուն շրջին ամենայն  
ուխտատեղս եւ դնան ի տուն :

Ապա միաբանեալ ազաշեն զառաֆնորդն,  
որ բանալ տայ զՅարութիւնն դուռն, զի միշտ 20  
փակման է՝ կպղած եւ մօհրած . բայց միայն  
ծակ մի կայ թողած, ուստի լուսրարնուն տան  
կերակուր : Զի ամենայն ազդաց լուսրաւ կայ  
անդ . որ ամէն աւիլեն, սրբեն, մաքրեն, կան-  
թեղս լուցանեն, խունկ ծխեն եւ պատարա-  
զեն : Եւ կայր Հայոց լուսրար մի սուրբ եւ  
սուաքինի, ճգնաւոր եւ պահեցող, որ միայն  
մորթն մնացեալ ընդ ոսկրաւ եւ ամենայն մար-  
մինն ցամաքեալ . եւ ասին ԺԲ տարի է քանի  
որ մտել է Յարութիւնն . վա՞յ ինձ մեղաւո-  
րիս : Եւ Պարոնտէրն առաքէ չեխերուն մեծն,  
զի աւելի քան հազար շէխ կայ Սողոմոնի տա-  
հարն : Եւ նա առնու զմօհրն . Եւ զատին զրա-  
նալին . եւ դան հետ սուսպաշուն եւ պարոնին  
քեհին . նստին սուրբ Յարութիւնն դուռն . դայ 35  
եւ մեր սոսաֆնորդն եւ նստի հաւասար նոցա .  
զան եւ թարձիմանք . զի ամէն ազդ թարձի-  
ման մի ունի . բայց մերն դլուխ է : Յայնժամ  
կօսավէրտին էր, մեծ եւ անվանի, հոչակեալ

20 առ : — 22 կա : — 24 անգր : — 30 արաթիւնն :  
— 33 նայ : — 35 զա : — 38 այնժամ :

40 Եւ համբաւեալ յազգոս ամենայն . Եւ ինչ ամ էր  
որ նաև էր թարձիման . ունից նա չորս չափուշ ,  
զոր տոտքէր յիմիթ , Հայուս , Մարք , Մատա-  
սոլ և յու և կամէր . Եւ ինքն չհեռանար  
յերուսաղէմայ . զի էր ճարտարախօս եւ բա-  
45 նաստեղծ : Եւ առնուին մարդագլուխ , այլ եւ  
կանանց՝ չորս երեսօք ոսկի , իրիցնուներկու .  
Հարեզայից , Խոլիսկովոսաց , վարդապետաց  
եւ կնկղզարաց եւ ոչ ժամանի . իսկ Ձուսնկէն  
ինն ոսկի կ'առնուն . նա եւ լէ Հցոց , թէ նոքա  
50 բայս չեն . Եւ այսովէս ամէնիք տան եւ առ-  
նուն թէսքէրաց՝ որպէս խարսնչացն : Ասու  
որչափ բացզի դուռն՝ համարձակ մանեն ցու-  
ցանելով զթէսքիրան . Եւ ով չունենայ՝ չեն  
թողու : Եւ զի ամէն հեղ ոչ բանան , այլ  
55 Զատկին տօնին կամ շատ ուխտաւորք զան՝  
առա բանան . Հինգ-վից Հոգոյ չի բանան : Եւ  
ամիւալ խարսնանէն մէկ մէկ բարա՝ մտաք ի  
ներս : Եւ առաջնորդն ոգեստաւորեցաւ . Եւ ընդ  
նմաս որչափ կարգաւորք կան , նա եւ մոնո-  
60 գոնք , առթեաւագք եւ կողերիկուրք . Եւ յուցեալ  
ջահա , լազարոս , խաչիւ եւ խաչալանով եւ  
բուռզարով եւ ամենայն զարգիւք , ծնծզօք եւ  
կոշնակովք շրջեցաք զառւրք Տեօրինական ,  
որ են ի մէջ Յարութեան . Եւ ամէնին զրայ  
65 մասուն մի է շինան : Եւ կոյ մի՛ մտառու  
մի՛ ազգի . եւ յորս մտանէին՝ նորի շարական  
առէին . իսկ թէ անօրինականքն ո՞րք են կամ

ի՞նչ անզ կամ որո՞ց ձեռք, զայն չէ պարտ  
երկրորդել, զի կոյ հաւաքած և զբած բաղում  
աշխատութեամբ, որ կոչի Տեօրինականք. զիս 70  
և կարգա:

## Ա. ՅԱՐՈՒԹՅՈՒՆ

Բայց ևս զայն ծանուցից ձեզ՝ զկարդաց,  
զշինութեանց ևւ զեկեղեցականց, ևւ զպայ-  
ծառութիւնն, զոր ինչ լուսյ ևւ զոր ինչ տեսի՝  
պատճեմ ձեզ:

75

Եւ ի մէջ Յարութեանն է Խուսու մի  
փոքրիկ որսզէս մասուս. զի Յարութիւնն մեծ  
է քան զիսյա Սօվիսյ. ևւ ի պլուսին արճին. ևւ  
տսին թէ յառաջն ոսկի էր, բայց անօրէնքն  
տոել են ի վրայէն. ևւ մասք ի ներս ուր սուրբ 20  
ևւ կենարուխ զերեզմանն է Յիսուսի Քրիս-  
տոսի. ևւ կային կախ մին կանթեզը մեծա-  
մեծք արծթէ. որ եւ ահ կարաւ զմեզ. ևւ ան-  
կեալ ի զերայ երեսոց մերոց լալով ևւ խնդա-  
լով. զի սոսուել խնդութեանցն հետեւի ար-  
տօսք. ևւ երկրոպազելոյ ևւ համբուրելոյ ոչ  
զագարէաք. զի քաղցրացան շրթուեք մեր  
քան դմեզր ի համեզ ևւ յախորժ յանդին հու-  
հարէն: զի որչափ համբուրէաք սոսուել յա-  
ժարէաք ևւ ըղձայաք ևւ սիրովն ոչ յագէաք. 90  
որ ցանկալի է ևւ պատվական քան զոսկի ևւ  
զականս պատվականս. ևւ շկայ աշխարհ ինչ  
որ արժէ զեա, զի կեանք է ամենեցուն սուրբ  
Գերեզման Փրկչին. մինչեւ ոճանց թմրիլ ևւ

69 կա: — 71 կարգաց: — 73 զշինութեան: —  
— 76 արութեան: — 88 զմեզի: — 90 յզմայաք:

95 զմայլիլ աղիիւ հոտոյն . որպէս երբեմն ի վեր-  
հստուն գտաք առաքելոց : Եւ այնպէս ցան-  
կալի էր եւ տեհաւալի վայրքն , զի ոչ կամէր  
հեռանալ մարդ ի տեսպաջէն , այլ միշտ եւ հա-  
նապաղ ծառացել եւ սպառաւորել , որպէս ի  
100 ըստոն թափօր այլակերպութեան օրն ոչ կա-  
մէին (առաքեալքն) մեկնիլ , այլ աղաւէին  
զջէրն առելով . Արասցուք երիս առազաւորու-  
հոյնպէս եւ աստ մահալքն այլ ոչ կամէին ի  
զուրս զնալ : Իսկ բազմամրոխ ժողովուրդն որ  
105 կոյին եւ սպասէին մեծաւ բազմամրու եւ  
բոզմիւ՝ որպէս փեռայ հարսին , եւ կամ ոք սի-  
րեցեալ հեռաւորին : Եւ անսեալ զյամելին մեր  
անոր՝ մտեալ ի ներս քարշէին ի զուրս մինչ  
զի զօձիս եւ զթեզանիս պատառէին եւ զմա-  
110 բուս ճողէին եւ զերեսս վիրաւորէին . եւ ոչ  
կարէին չարժել . զի բոլոր անձամբ անկեալ  
չերմ եւ անյառ սիրով՝ կալեալ երկոսնին ձե-  
ռօք զկենուարուխ սուրբ զերեզմանն , որպէս  
ոք ծարաւի եւ պատքեալ յաղթերս ջուրց , կամ  
115 սովայլուկ ոք հաց զտեալ : Իսկ որք մեծ սէր  
եւ փափազ ունէին՝ աղաղակէին . Աստ բնա-  
կեցայց , աստ կեցից եւ աստի ոչ մեկնեցայց  
մինչեւ ի մահ : Աստ զան հասախչիք եւ հա-  
րազարեաք հազիւ հանեն ի զուրս հարկանե-  
120 բով . առեն . Ելէք ի զուրս , զի եւ այլք մաս-  
նակից լիցին , զի վասն ամենեցուն է նաև եւ ոչ  
ձեզ միայն : Եւ աղօթեալ մեզաց թազութիւն  
խնորհցաք մեզ եւ մեր ծնողաց եւ երախտա-

սորաց և ամենայն քրիստոնէից : Եւ լալով  
զոռալով մեկնեցաք ի սուրբ զերեզմանէն՝ որ—<sup>125</sup>  
պէս դառն ի մաքեաց : Եւ զկնի մեր մտանէին  
այլք, դաս դաս : Եւ մատուռն վորքը էր, տառն  
Հոգի հազիւ մէկնէր :

ԳՈՅՆՈՒԹԱՅԻ, ԳԵՐԱԿԱՐԱԿԱՅԻ

Եւ անտի ելաք ի Գողզ ոթայ յեառն,  
որ է ժե աստիճան . Եւ Հուռ նմին վերն ար—<sup>130</sup>  
տունն մեր, ուր մեր խորան եւ սեղանն է :  
Եւ ամենայն տնօրինականացն երկրազագեալ  
գարձաք ի տուն :

Եւ այլ օր տարան զմեզ ի Գէթ ու ա-  
մանի, ուր Գերեզման է սուրբ Առ—<sup>135</sup>  
տուածածինին : Եւ է ինքն մեծ եւ փառա-  
ռոր եկեղեցի՝ քաղքէն ի զուրս, մէջ ձորու,  
զոր քառոսուն աստիճան վար իջաք՝ «Այսօր  
ժողովեալ» ասելով մտաք ի ներս . քանզի եւ  
Տիրամօրն զերեզմանին վրայ մէջ եկեղեցոյ 140  
մատուռ մ'էր շինած զմոլէթածեւ . եւ անզր  
ջերմ եւ երկար աղօթեալ՝ մեզաց թողութիւն  
խնդրեցաք մեզ եւ մեր ծնողաց եւ ամենայն  
երախտաւորաց : Եւ յետոյսն տեսաք մազարայ  
մի խաւարչտին եւ խոր . եւ ասին թէ ա՛սո է<sup>145</sup>  
Դժոխոց ըերանն : Եւ ելեալ ի գլուխ  
աստիճանաց՝ էր Գերեզման Մնողաց ամէնօր-  
հնեալ Սուրբ Աստուածածնին . եւ բազում  
ուխտաւեղեաց հանգիպեալ, զոր կայ մի ըստ  
միոջէ զբած ի Տնօրինականքն . յաջ կողմէն<sup>150</sup>  
Յովակի ի մէր եւ ի ձարին՝ Աննայ :

126 ի չի՞ : — 140 եկեղեցոյ : — 149 կու :

Եւ այլ որ եկաք չ ը ե շ տ ա կ ա ո գ ե ա  
զ ա ն ք ն , որ էր կամարակառ եւ զիմաշէն ,  
շուրջանակի պարփառ . եւ կայր ի նմա յիսուն-  
155 վաթուուն տուն քարէ . եւ անդ եւս յոլով տնօ-  
րինականը կ'անէին :

Եւ անտի ելիսոյ քաղքէն զուրս՝ մտաք  
Սուրն Փ ը կ ի չ . մեծ եւ հոյակաւոր վանք ,  
պարսպաւոր , որ վաթուուն օսա ունէր՝ նոր  
160 քարէ : Եւ կայր բակն ծառ մի թուրիննի ազ-  
նիւ , յորմէ բախեց ամենայնի (۱) : Եւ այլ աե-  
տաք Զիթենի մի վազուցու , բոլորն ցանկով  
պատաժ . եւ ասին թէ ի այս ծառս կազած  
էր Յիսուս եւ չարչարած . եւ ունէր սակաւ  
165 պառուզ , ուստի հաստաք :

Եւ այս մեծամեծ ըիստառեզիքս ամէն տեղ  
ժամուց պիտի տալ մարդու կօրա՝ ուրօն ,  
վարաւ , զուռուչ եւ ոսկի :

### ԶԻԹԵՆԱԱՅ ԼԵԱՆԻՆ

Եւ անտի Ելաք Զ ի թ ե ն ե ա յ լ ե ա ռ ն ,  
170 ուստի համբարձու Տէրն մէր . որ է մեծ եկե-  
զիցի բարձր լեռան վրայ պարսպով . եւ բոլորն  
միւ մասուու . Յարութեան նման՝ միւ ազգի .  
եւ մտեալ ի ներս տեսաք զիստառեզս Յիսուսի .  
ազօթեցաք անդ , մեզաց թողութիւն խնդրե-  
175 ցաք մեզ եւ մէր ծնողաց . բայց այժմ Տաճիկը  
տաել են :

Անտի զնացեալ կարգաւ զամենայն ուխ-  
տատեզս՝ եկաք Յարութեան բոլորն չրջեցաք :

158 Հըշտկաւոր : — 160 վահեն . . . թուրիննի : —  
166 ըզիստառեզիքս :

Ելեալ ի լեառն մի բարձք . Եւ անդ տեսաք  
ծառ մի յոյժ հին . Եւ ասին թէ սա է Մառն Սաւ 180  
բեկայ , յորում խոյ կախեցաւ վոխանակ իսաւ-  
հակայ . յորում կայր սակաւ մի պառւզ . զոր  
Եւ անտի հատաք : Եւ այլ յառաջ կայր Ս ե-  
ղ ան Ա բ բ ա հ ա մ ո ւ , զոր համբուրեալ՝ զե-  
րեսնիս շիեցաք . Եւ զքսակս անդր եղաք , որ 185  
պարագաթ դայ :

Եւ անտի զնացաք Խ ա չ ա վ ա ն ք . Եւ այն  
մեծ վանք է կամարաշէն , սալարակապ . բո-  
լորն պարիսպ Եւ մեծ օտանի . Եւ երեւի դեռ  
տեղն , ուր զթաչափայտն կանգնեցուցած էր . 190  
զոր երկրպագեալ սոզօթեցաք եւ մեզաց թո-  
զութիւն խնդրեցաք : Հարեղայքն զմեզ մե-  
ծարեցին եւ առաջի մեր կերակուր եղին . զի  
կուրճոց ձեռքն էր : Եւ անտի բազում սոս-  
տուածակոխ տեղօք զարձաք ի տուն : 195

## ԲՆԱՌԱՅԻՆԻԿԱՆ ԵՐԿՐԻՆ

Բայց շուրջ ու բոլոր սուրբ Երուսաղէմայ  
խիստ քարատակ Եւ վիճուտ էր եւ անջրդի . Եւ  
հող անդ բնաւ չերեւի . սպա յոյժ բարելի է ,  
սպազատու Եւ մրգաշատ . Եւ սար ու ձորն ա-  
մէն դէյթուն է . պտուղք քաղցր Եւ համեղ էր , 5  
որ բնաւ այլ տեղ չտեսի . ունի սեխ Եւ ձմե-  
րուկ ազնիւ Եւ մեծամեծ խարովիզակք , նուռ  
մեծամեծ , թուղ եւ սէրկեւիլ լաւ , քաղցր եւ  
ախորժ . Եւ քաղցր թէպէտ փոքր՝ զեղին . ձու-  
ռէն կլաս կտրես ուտես . զոր այլ աշխարհ ոչ 10

179 անտ : — 181 խօ : — 189 մեծն :

10 իմա՞ կարես :

տեսի. ամաներով պիտի պահեն ազա ուստեն։  
Այլ եւ խաղող ազգի ազգի եւ մեծ ողկոյզ։  
Այլ եւ ամենայն բարիքն առատ եւ լի. հացն  
սպիտակ եւ մեղրն սպիտակ, հուղն աղնիւ եւ  
15 ըստ պատմութեան լրտեսիցն։

Թէպէտ քարուտ եւ անջրդի,  
այլ ամենայն բարեօք է լի։

Եւ ի մեր ժուկն կշռեցաք մէկ ողկոյզն  
օխա ու կէս ելաւ. վա՛ռք Աստուծոյ։ Վարդն  
20 խիստ զարմանալի հոտ ունի. որ զջուքն յեր-  
կրէ յերկիր տանին արմաղան եւ ընծայ։ Այլ  
եւ գինին աժան եւ ուժով է, որ մարդ առանց  
չրի չկարէ ըմպել, սաֆի սպիտակ. կարմիր  
չկայ։ Զէթեաղին օխան հինգ ստակ. եւ շի-  
25 րիկն։ Գէրմակ հաց կ'եփեն, սօմին եւ վիթայ։  
չախալ հացն քան զամէնն անուշ։ Կաթն, մա-  
ծուն, խայմախ, կարաղ յոյժ համեղ. եւ տա-  
րին ի բուն զտանի։ Զէրա ամէնն ամառ, եւ  
ձմեռ չկայ. անասունքն երկու անդամ ծնա-  
30 նէին. երկու անդամ սերմանեն եւ երկու՝  
հնձեն։ Աւագ տօներն զառն լինի. բայց անդ  
ուլն ուելի է քան զգառն անուշ, զոր եւ մեք  
հիացեալ էաք ի ճաշակն։ Խիար, վարդ, դարի  
տօնին հասնի. այլ եւ հասրին։

ԲՆԱԱԱՉՈՒԹԻՒՆՆ

35 Կայր սուրբ Երուսաղէմ ԺԲ տուն հայի  
բնական, բայց աղքատ. ամէնն ջուլֆայ են եւ  
զօտէդործ. թէսմայ եւ զուստիկ բանին ուխ-

19 գառ։ — 21 ընծա։ — 22 յուժով։ — 27 կարաք։

տաւորացն համար, եւ կտաւ վասն պատա-  
նաց : Արդիք կան ի—լ տուն . նաև Հոռոմք,  
եւ նոքա չքաւոր : Կայ չորս զիմաւոր վանք՝ 40  
չորս աղջի . այս է . Հայու, Հոռոմի, Ֆուանկի  
եւ Սրբու . բայց սրբի, Փուանկ չկայ, միայն  
կարգաւորք : Եւ այս չորս վանացու է տուրքն  
արթի, չօղնի, պարոնի, սուալաշու, շիխե-  
րուն . եւ սաստիկ տուրք ու տալիք կու տայ 45  
չորս վանքու այս ի բոլոր տարին, որպէս ի  
նախնեաց թային է Եղել, զատ զայն որ զուր  
եւ անիրաւ անօրէնքն բուխթան եւ իֆղիրաց  
կ'առնեն, եւ ճոռումէն՝ հարիւրով, հազա-  
րով . վա՛յ ինձ . զի վասն իմ անթիւ եւ սնհա- 50  
մար մեղաց Աստուած եւ զիւր տունն եւ զքա-  
զաքն մատնեաց անօրինաց ձեռն՝ խստաց եւ  
ապստամբողաց :

Եւ որչափ ըխաւաւորք զան թէ շատ թէ  
քիչ, աղքատ թէ հարուստ՝ պարոն, չուզա- 55  
շին, չեխերն կ'ուղարկեն աչքի լոյս առաջնոր-  
դին . նա պիտի մեծ մեծ փէշքչնի զաւորէ  
նոցա : Եւ չունի ուրիշ աղդ այնպէս տեղ կամ  
վանք, ոյլ ըխաւաւորք նոցա զան եւ ի խաներն  
իջնուն . իսկ Հայոց սուրբ Յակոբն լայն եւ ար- 60  
ձակ . թէ եւ ժի հոգի զայ, կու մեկնի . զի է  
որպէս քաղաք . վա՛ռք Աստուածոյ :

Եւ յորժամ աւագ տօներն զան, սկսանին  
ամենայն կողմանց զալ ուխաւաւորք, որպէս  
նախասացաք, թէ չորս կողմանց . Եւ յետ ու 65  
առաջ ծովով եւ ցամաքով : Եւ որք մերձ են՝

վութով դան Խաչին եւ Յիսնակաց . այլք  
Աւագ տօներն . իսկ կէսք Մեծ Բարեկենդա-  
նին . եւ այլք Մեծ Պահոց սկիզբն մինչ Զար-  
70 զարգարի շաբաթն : Եւ Երուսաղէմ ամայի է  
տուանց ըխտաւորաց . եւ Զատկին լի լինի ա-  
րամքք : Եւ աղցացն ամէն կիրակի բացվի Յա-  
րութեան գուռն . եւ որչափ կամիս մուտ եւ ել :  
Եւ մեքնեղանայաք եւ տարբյմիչ լինէաք .  
75 զի է Երուսաղէմ որպէս վանք . ոչ է տեղ վա-  
ճառականաց , այլ որբութեան եւ ուխտի : Եւ  
երբ լցվէին ուխտաւորքն , մեծ ուրախութիւն  
էր . զի ամենայն աշխարհէ զային : Եւ մեր  
ամրին<sup>1</sup> կայր աւելի քան հազար մարդ : Իսկ  
80 հետ վերջի ուխտաւորացն եկն եւ Հազեւոր  
Տէրն Յովհաննէս կաթողիկոսն Սըսոյ . որում  
տեսլեան բազում ամաց հետէ ցանկայի , զոր  
յԵրուսաղէմ հասի փափաղանաց . դոհութիւն  
ու փառք Աստուծոյ : Իսկ յորժամ աղցաց լի-  
նէր , սուրբ Յակոբայ դրան առջեւի մօյտանն  
որպէս պանայիր լինէր կոտ պազար . զի զա-  
մենայն ինչ զոր եւ կամէիր , զտանէիր . թէ՝  
կիրակուր մարդկան , թէ՝ զարման անասնոց ,  
թէ՝ կտաւ , թէ՝ այլ ինչ :

## ԱՅՅ Ի ՅՈՒԴԱՆԱՆ

Եւ աւագ երկուշաբթին մարդ կու զայ  
պարոնէն , թէ վայ այն մարդուն ով չգնաց  
հետ պարոնին ի Յորդանան . զի երկու զու-

72 արութեան : — 77 լցվէր : — 81 յորժամ :

<sup>1</sup> Այս է՝ 1617:

բուշ կ'առնու մարդագլուխ։ Եւ միաբանեալ  
ամենեքին՝ արք եւ կանայք, ծերք եւ տղայք, 5  
կարգաւորք եւ աշխարհականք, ոմանք իշով,  
այլք ձիովք, այլք հետիոտս։ Եւ իրիկունն հա-  
սանեն Սէյսի Մուսան, ուր Խարշիկ Մովսէս  
ճգնէր։ Եւ անդ կայ քարէ այր մի եւ մէտրա-  
ռա մի։ Եւ Հոր մի հոտած ջրով։ անդը իջաք։ 10  
Եւ քանզի մեծ չող էր՝ տապեցաք զօրն ի բուն  
սաստիկ տապոյ արեգական։ Եւ սախիքն ջուր  
ածէին թասով երկու-երկու մանզր, զի Արա-  
պիստան ամէն մանզր կ'անցնի։ Եւ մեք ջուրն  
պնէաք, ըմպէաք եւ առաւել ծարաւէաք եւ 15  
պապակէաք, մինչեւ ցամաքեցան քիմք մեր  
եւ լեզուք չորացան, զի ջուրն դառն էր եւ  
աղի։ Անդ տեսաք Սողոմոյ երկիրն, որ քա-  
րինք իրեւ զփայտ կ'այրէին եւ կերակուր  
կ'էփէին։ Եւ էրածն սեւանայր, իրբեւ զգոր- 20  
ծելի դառնայր։ Անդ տեսաք եւ զ՛յովեն անի-  
ծած, յորմէ դեռ ծուխ ելանէր եւ դարշ հոտ։  
Այլ եւ (տեսաք) քաղաքն Երիքովի։ Եւ իջեւանք  
կալաք ի Բեթվագէ եւ ի Բեթանիայ, ուր Տէրն  
զՊապառս յարոյց։ մտեալ աղօթեցաք։ Եւ 25  
այլ յոլով ուխտատեղաց հանդիպեալ՝ երկրորդ  
օրն հասաք ի Յորդանան զետ։ Եւ մերձ զե-  
տին էր Փորձութեան լեառն եւ վանքն Յով-  
հաննու, ուր աղօթէր, եւ տեղն ուր մկրտէր  
եւ առջին վանքն եւ այլ տեղիք բազում անա- 30  
պստառորաց։ Եւ զետն էր մեծ եւ սրբնթաց,

7 այլ։ — 18 անու։ — 24 բէթվարէ։ — 26 ոլով։  
— 31 սընթաց։

- Եւ զայն որպէս Խօթինու . եւ սփոեալ ընդ գե-  
տովին մերկացաք եւ անկաք ի ջուրն , որք լող  
զիտէաք . իսկ այլք կալեալ զծայրից ծառոցն  
35 եւ յեզերս լուացեալք . եւ այլք պարսն կա-  
ռեալ միջովք . եւ ծերք թասով ջուր առեալ եւ  
զլուխս լուացեալ . բայց երկու հոգի տարա-  
գետն վասն արագութեան եւ հողոյն տղմու-  
թեան :
- 40 Եւ փութացուցանէր զմեզ պարսն վասն  
Ասի Արապնուն , զի մի ասպատակեացեն զմեզ .  
Եւ զի մի արեգակն բարձրացի Եւ ցօղն տապէ :  
Զի թէսլէտ ամենայն արագ դող է եւ աւա-  
զակ , բայց Ասին հէմ թալնէ , հէմ գերեցնէ :  
45 Զոր անտի մէկ օրն հասաք ի ձորամէջ մի ,  
որ երկու կողմանց լեառն էր . եւ միջովն նեղ  
ճանապարհ : Եւ ի զլուխ անցից եհար պարտնու  
դիսորանն , որ ունէր ԲՇ ձիաւոր , եաբահով  
եասախով . զի առանց պարոնի ո՞վ կ'իշխնէր  
50 քաղքէն դուրս դնալ : Անդ սկսան ժաղվել զա-  
ֆար՝ մարդագլուխ երկու զուռուշ ու կէս .  
ով որ ունէր՝ փութով ետուր եւ զերծաւ . եւ  
ով չունէր՝ ծեծէին , վիրաւորէին . այլ եւ վա՞ր  
առեալ՝ Ծ . Կ . չարբազ զարնէին տապանն .  
55 վա՞յ զիս : Եւ օրն սկսաւ տարաժամէլ եւ մար-  
դիկն ի շողոյն թալկացեալք լինէին . եւ փախ-  
չելոյ ճար չկայր . զի յամենայն կողմանց անցս  
ճանապարհին կալեալ էին : Առա քահանայք  
եւ տօրվաթաւորք մէջ մտան , բարեխօս եղեն  
60 պարոնին վասն աղքատաց եւ չքաւորաց , որ

կէս կէս զուռուշ տիֆին . այլոցի մէկ մէկ ու-  
ռուսի էստ . ասքա հթող զմեղ : Ասքա վեց հոգի  
մեռաւ անդ վասն զժուարութեան հանապար-  
հին եւ քարուս լինելոցն . և մի վասն սաստիկ  
չողոյն . և մի վասն պատկման եւ ծարսւման . 65  
եւ թերեալ թաղեցաք ի չառներն . և էր մինն  
քահանայ ծերունի :

## ԲԵՐԱՎԵՀԱՐ

Եւ ի Մննդեան օրն տարաւ զմեղ տոտք-  
նորդն ի ԲԵԹՈՒՀԵմ ի սուրբ Մնունդն Քրիս-  
տոսի , որ երկու մզոն Հեռի էր յԵրաւանակե- 70  
մայ . որ եւ երեւէր եկեղեցին : Եւ ի կէս ձա-  
նապարհին Հանդիպեցաք Գերեզմանին Հռա-  
քէլի , որ լայր վասն որդոցն կոտորլոյ եւ ոչ  
կամէր մխիթարել : Եւ անտի զնացեալ ի  
Մնունդն մեծ եւ զարժանացէն . վերեւն արճը- 75  
ձած , մէջն զեղեցիկ մարմարէ աներ . բայց  
այրն , յորում ծնուե Քրիստոս՝ Ֆուանկաց  
ձեռքն է . խնդրեցաք , բացին , զարդարեցին ,  
մոմ եւ կանթեզ լուցին , զմեղ հրամեցէք ա-  
րին . մտաք , աղօթեցաք , պատարագ և զաւ . 80  
մեղ եւ մեր ծնողաց մեզաց թողութիւն խրն-  
զրեցաք , ժամուց տվաք ըստ կարեաց : Եւ  
ելսք անտի , մեր վանքն զնացաք , մերձ սուրբ  
Մննդեան , որ էր մեծ եւ ընդարձակ անզի .  
տաքա ամայի էր եւ առեր յանինամ պահովաց . 85  
որ եւ կործանեալ էր . միայն քանի մն խուց  
կայր . խել եկեղեցի եւ այրն վիւած , զոր Պարտի  
տէրն հոր չինել սկսել էր . քանդի եւ անդ ժի:

աղդի մասունքի կայր, բայց մերն մեծագոյն  
90 քան զամէնն : Եւ ասին թէ Մնունդն Տրդատ է  
շինել . իսկ ոռւրբ Յարութիւն՝ Կոստանդիա-  
նոս : Եւ քաղաքացիքն ամէն հոռոմ են եւ աղ-  
քատ, վանից ծառայ զոլով, նաև ազթարմա-  
նն եղել, այս է Փափին զարի : Եւ այլ բազում  
95 ուխտառեղբ տեսաք . եւ դարձաք ի վանքի  
ոռւրբ Յակոբ :

Եւ այլ օրն զեացաք Յովհաննու յանա-  
պատն ի լեռնակազմին . եւ տեսաք զբնակու-  
թիւն իթ ամաց . եւ Տունն Զաքարիայի եւ  
100 Վէ մն որ ընկալաւ զմանուեկն . եւ ամէն եկեղե-  
ցիքն քարէ է . բայց ժամ չասի . ո՛չ քահանայ  
ունի . զի քաղքէն հեռու է եւ արագնոց : Եւ այլ  
բազում եւ զանազան յոլով իրու տեսաք . զի ի  
Ճերինականաց իմասցիս լիսկատար :

### ԱՆԵՐԱՔ ՖՈՇԱԿԱԾ ՆԻ ՀԱՅՈՑ

105 Եւ Ֆոռնեկք մեծ սէր եւ դաշն ունին ընդ  
շայս . զի տարին իրեք անգամ նորա գան Սուրբ  
Յակոբ պատարացէն . եւ առաջնորդն մեծ  
խրախութիւն եւ ընթրիս առնէ նոցա . որ ՞ ,  
եւ զուռուշ հայր պատիւն այն . եւ նորա եւս մեր  
110 առաջնորդին պատիւ առնեն եւ ընթրիս : Մե-  
րոցն մեր աշխիքն եղին եւ նոցա՝ իրեանց :  
Այլ եւ Հոռոմք, Խպոտք, Ասորիք եւ Հայք սէր  
ու միաբան են . աղջիկ տան եւ տանուն . այլ եւ  
նորք մեր պատկն, Բազումն զան եւ հազոյ  
115 հացն . եւ մերն նոցա զնան . եւ այսպէս կային  
միաբանութեամբ իսազար :

95 ուխտառեղբ : — 110 ընդրիս :

ՀԱՆԴԻՇՎ Ի ԿԱՂԱՋԱՐԻՒՄ ԱԿՈՒԹ

Եւ կայ բարի սահման մի ոյլ յԵրուսաղէմ  
Ֆուանկաց, որ ամէն տարի դՔը բխտոսի անօ-  
րինականքն գործովք կատարեն, որպէս ի  
Հռոմ: Զի Ղաղարու ուրբաթին հարպեան պա-  
րոնին տասդուրին գնայ ի բերթին, ուր Գերեզ-  
ման է Ղաղարու, եւ անդ պատարագ մատու-  
ցանէ հարեղայիւք. եւ անդ զօրն Եւ զգիշերն  
հսկմամբ անցուցանէ: Եւ ընդ առաւօտն Նար-  
զարդարի կրկին հեծնու է և հարեղայքն առ-  
ուաջի եւ զինի՝ գան իջանեն Զիթենեաց լեռնէն  
ի վայր ձիթենեօք եւ արմաւենեօք, եւ մտեալ  
ի քաղաքն անցանեն սուրբ Յակոբայ առջեւով,  
զի այն է ճանապարհ. եւ Հայք ելանեն ի զուրս  
վանացն ընդ առաջ նոցա. ոմանք զհանդերձու 130  
տարածեն ներքոյ իշոյն, եւ այլք զաօլպանաս  
զլիսոց. իսկ կէսք սստ ի ծառոց եւ տերեւո  
ձիթենոյ եւ արմաւենոյ մատուցանէին, որպէս  
Հրեսայքն Յիսուսի. եւ այսպիսի փառօք եւ  
սպասիով մեծարելով զհետ երթային. զոր եւ 135  
մեք աչօք մերովք տեսաք<sup>1</sup>:

121 յուր: — 127 ձիթենօք և յարժաւենօք: —  
132 յուսու: — 134 զը Հայք:

<sup>1</sup> Նաղկաղարդի այս հանգէսր յառաջադայն Հայերը  
կը կատարէին, բայց ապա խափանուած էր: Յեսոյ  
Փրանկիսկեանները սկսան միւսանդամ կատարել: ՏԵղի  
կ'ունենար ժողովրդեան այնպիսի խուռն մասնակցու-  
թեամբ եւ խանգամառնենամբ, որ նոյն իսկ մահմե-  
դականները կը դիմէին հանդ խառն եւ վառարանա-  
կից ըլլարու: Քրիստոնէոց յազմական մուտքն էր այն  
եւ քաղաքին համար թատերական ահարան մը: Զուն  
զեղեցիկ նկարագրած է Guglingen, Itinerarium, 138.

ՀԱՆԴԵՍԹ ԱԽԱԳ ԱԿՈՒՐՅ

Եւ Աւագ չարթուն չարշու պապար կու  
կանգնի սուրբ Յարութեան առջեւի մօյտանն .  
բայց ամէնն հոգեւոր բան ծախսի . որպէս ի  
140 Հռոմ սուրբ Պետրոսի դուռն՝ ակնուանի , թէ ս-  
ովէ հնի . եւ աստ քուստիկ , խուշախ , զօտի եւ  
այլն :

Եւ Աւագ ուրբաթն մէխքամա խուրմիչ  
կ'անեն եւ Յարութեան դուռն պատ կու բո-  
145 լորին . զայ չէխերուն մեծն եւ նստի . զատին ,  
շումպաշին , մեր Պարոնտէրն , մեծ թարճի-  
մանն եւ հաստիչիք . տպագան ամենայն ուխ-  
տաւորք ամենայն աղգաց . եւ տան չորսական  
ուկի եւ մանուն . եւ մինչ ի չարաթ իրիկուն  
150 պրիին . եւ Փախիր Փուխարան մնայ , թէ պա-  
կաս առնուն , զի ստաթ է . բայց զի՞նչ չահ  
ունի որ մահրում կու մնան այն հոգեւոր բա-  
րեաց . զի առաջ գնացողքն ժ , ժԲ անզամ  
մտանեն թէնհայ եւ կատարեն զկամս :

155 Եւ նախ եկողքն աւագ հինգչարթին  
մտնան եւ զսանլուան Յ արութիւնն առ-  
նեն . եւ անտի ելեալ երթան ի Այրին ուր  
Քրիստոս ազօթէր . այլ եւ լուսն ման  
տեղն . եւ անդ զզիշերն ի բուն հսկմամբ եւ  
160 ազօթիւք անցուցանեն . եւ յաւագ ուրբաթ դան

145 զա չէխերուն : — 150 անզը :

---

որ հանդիսադիբն իսկ եղած է . անոր հետեւելով առանձ  
է հետրագրութիւնը P. L. Lemmens, Die Franziskaner  
im Heiligen Lande (1336—1551), Münster i. W.  
1916, էջ 169, ըստ ամենայնի ձայնակից Սիմէռնի առ-  
զերուն :

ի գոզով մայ եւ այն օրն հսկեն մինչ իրի-  
կունն . եւ շաբաթ լոյս իշխուն ի վայր , ուր Պա-  
տանատ եղն է Քրիստոսի . եւ անդ թաղումն  
կատարեն . բաղում ջահո վառեն , լապտերո ,  
կանթեղո եւ անուշահոտ խունկո ծխեն մեծա- 165  
ղին , զրմուռ , կինամոն , կնոքրուկ , հալւէ . այլ  
եւ յեաոյ զրմուսեն եւ օճանեն նարզոսիւ , ովա-  
լասանիւ եւ այլ ազգի ազգի նարզեան իւզովք ,  
ըստ իւզաբեր կանանց . որ ի հոտոյ համեղ եւ  
իւզոցն բուրմանց քաղաքն ամենայն եւ վո- 170  
ղոցքն լցովի անուշահոտութեամբ . եւ Յարու-  
թեան դուրսն զմայլեալ թմրին : Իսկ Տաճիկքն  
առեալ զհոտն «ալլահ» ալլահ» ասելով վու-  
թաղէս զան ի զուռն Յարութեան . այլ եւ բա-  
զումք մտանեն ի ներս եւ Հիանան թէ ուստի՞ 175  
է սոցա այսպիսի ազնիւ եւ անդիւտ խունկքն ,  
որ եւ ի թագաւորս անզամ ոչ զտանին :

Եւ մեծ խրախութիւն լինի քրիստոնէից ,  
յարժամ միատեղ լինի զատիկն նաև Ֆոան-  
կաց : Զի ընդ մեզ թափօր չքջին եւ տօնա- 180  
խմբութիւն կատարեն եւ շատ շատլիս առնեն :  
Բայց այն ամեն որ ես յԵրուսաղէմ էի՝ հինգ  
շաբաթ առաջ եղեւ նոցա զատիկն<sup>1</sup> . զի թէ պէտ  
եւ միայն լինին , սնիստիան կատարեն եւ չթո-  
ղուն պակաս բան :

185

167 Կաթոռիւ : — 168 Կարթեան :

<sup>1</sup> Սիմէռն կ'ակնարկէ 1617 տարւոյ զատիկը , որ  
ըստ Նոր Տաճարին կ'իշխար Մարտ 26ին , իսկ ըստ Հին  
Տոմարին Ապրիլ 20ին , ուստի ձշպիտ 25 օր կանխած եւ  
ոչ «հինգ շաբաթ առաջ :

ԴԺՈՒԱՐԻՆԵ ՊԱՅՄԱՆՔ ՔՐԻՍՏՈՆԵՒԹՅ

Եւ կոյր չար աղանտ մի այլ յԱրաբացոց  
աշխարհն, որ չկայ թուրքիստան, ոչ ի Պարսս-  
պի չկայ Հրամանք քրիստոնէից ձի, ուղարկած  
ջորի հեծնուլ, այլ ի էջ զի ուղան ասն Մահ-  
5 մատն հեծաւ, վասն այն պատվեն զուղան եւ  
մեծարեն. այլ եւ յըզառու թուէն քուլահ, շալ  
կամ այլ ինչ չթողուն աղանիլ քրիստոնէից,  
այլ մէջլայիք նոցա դնեն ի գլուխս եւ արկա-  
նեն զուսովք: Այլ եւ իշով չկայ Հրաման մէիո-  
10 քէմի առջեւ կամ մզկիթի, մէջիթի, կամ ի  
քաղաքի շրջել, այլ հետիոտու. եւ ես եղկելիս  
ոչ գիտելով զանցս մեծի աղէտիս՝ հեծեալ  
իշով անցանէի մէխանաւ մի ի Մարր. իսկ եա-  
սախչիքն հասեալ ի վերայ իմ՝ բազում դան  
15 հարին ի գլուխս եւ ի թիկունս իմ ուժգին  
րրօք, մինչ զի եւ ընկեցին զիս ի վայր. եւ ոչ  
գիտէի զանկարծահաս պատուհանն որ եկն ի  
վերայ իմ. եւ ասին. Այլ չի նստիս էջ, զի չէ  
Հրաման, այլ ոտիւք շրջէ: Այլ եւ զմեռեալու  
20 չթողուն տանիլ պատվով եւ կարգալով, այլ  
իրեւ լէջ եղեալ ի տախտակն անմռունչ տա-  
նին. եւ զայն եւս անմարդ փողոցովք, որպէս  
Հրեայքն ի լէջ. զի թէ ոք հանդիպի, կորպէ  
կամ շրջէ՝ որպէս զՏիրամօրն դագաղս<sup>1</sup>, այլ  
25 եւ ՀայՀոյեն զհաւասացեալո «Նասրանի, զար-

2 ի պարս. զի չկա: — 6 յզտու: — 7 յազանիլ:  
— 9 զյուսովք... չկա: — 11 հետիյոտու: — 15 յուժ-  
զին: — 19 յոտիւք: — 23 Հբէայք: — 25 ՀոյՀոյեն:

<sup>1</sup> Բատ անվաւերական Պատմութեան Փոխան:

ոլուլ, քէլր, խինծիր» ասելով, զոր Տաճիկը  
«կտովուր» եւ «տինսիզ» միայն ասեն. այլ  
Արագը, Պարսիկը, Քուրթք չարագոյնք են,  
զի ոչ միայն հայհոյեն զմարդ, այլ զհաւաստ  
եւ զօրէնսղիրն, զիսաչ եւ զհաղորդ եւ զայլ 30  
սրբութիւնս, զորս ոչ իշխամ ասել կամ զրել  
ի թղթի աստ: Եւ այսպէս տառապանաց եւ  
նեղութիւնն մէջ են ազգն հաւատացելոց, վասն  
այն խափանեալ են ժամակարգութիւնք, եւ  
կործանեալ եկեղեցիք, քահանայք շիւարեալք 35  
եւ տարակուսեալք՝ թողեալ զուսումն եւ խա-  
փանեալ դժամ եւ զաղօթքն, ի հոգ եւ ի տա-  
ռապանս միշտ եւ հանարագ. եւ թէ երբեմն  
երթան յեկեղեցին՝ փութապէս եւ արագ կա-  
տարեն եւ փախչին, զի մի եկեալ զացեն զնո- 40  
սա յեկեղեցով: Զի այն աշխարհն քահանայք  
իրրեւ զզզիր են, զամենայն ինչ նոքա հոգան,  
թէ խարան, թէ փաթերակ եւ թէ այլ ինչ. եւ  
շուտաշուն, զատուն, չափուշի, ամենի, չօպնի  
քահանայք պիտի տեղ տան եւ կերակուր. եւ 45  
թէ զինի պիտենայ կամ կերակուր, զէրէցն  
ծեծեն, փետեն, թէ մեղ զիտ շուտ. այլ եւ տո-  
շակ, կօրդան եւ այլն: Նոյնպէս եւ ժողովուրդն  
ոչ թէ ժամ երթալ, այլ եւ զԱստուած մոռա-  
ցել են ի բազում հոգոց եւ հարկապահոնջու- 50  
թիւնց, նօմօսաց եւ այլ տրոց. զի օր մի  
հանգստութիւն չունին կամ խաղաղ ականջ:  
Թէպէտ ցած եւ փոքր զոներ ունին եւ խա-

39 յարագ: — 42 զբգիր: — 45 քահանայտ: —  
46 զիտենա:

ւարչախն տներ եւ գետնավոր, սակայն չեն  
 անդորր, այլ դան իջնուն, զրդվեն եւ տառա-  
 պեցուցանեն. թող դայն որ իփդիրայ, չլթախ,  
 զրկանք, յափշտակութիւն եւ անիրաւութիւն  
 անցին ի գլուխս նոցա: Եւ ո՞վ կարէ լաւ տուն  
 չինել, կամ ձի եւ ջորի պահել կամ լաւ զտակ  
 կամ զօտի զլուխն կապել կամ ազնիւ չուխաց  
 կամ բարուչ ունել. այլ բօսդալ, չարուխ, եւ  
 չին ու մին չուլ ազանին, սակայն ոչ ազատին  
 ի ձեռաց նոցա. միայն ի գլուխ-քաղաքան ու-  
 նին սակաւ մի անդորրութիւն եւ հանգստու-  
 թիւն, որպէս Հալտող, Ստամպօլ եւ այլ այս-  
 պիսիք:

ԳԼՈՒԽԻՔ ՊԱՏՐԻԱՐՔ. ՊԱՏՇԱԱՌՔ ՊԱՐՏՈՒՅ

Թողեալ ի բաց զնեզութիւն տառապահաց  
 քրիստոնէից, որոց տեղեակք են տեսողք,  
 և կեսցուք դարձեալ յառաջարկեալ բանն մեր,  
 թէ որպէս ելանէ լսյս օրն ճրագալուցին. եւ  
 թէ յայնմ ամենայնի որպիսի վառք եւ մեծու-  
 թիւն տեսաք մեք յազգո Հայոց ի սուրբ Երու-  
 սաղէմ:

Եւ նախ սկսայց տոաշնորդացն թէ ո՞յք  
 են եւ որպէս. եւ թէ ուստի եղեւ պերճ ազգն  
 Հայոց:

Կայր Եպիսկոպոս մի Դաւիթ անուն, տե-  
 ղացի, սպիտակալի եւ ցանկալի, զեղեցկա-  
 տես եւ հինաւուրց. տօին թէ Հարիւր ամաց  
 է, պարթեւազին, քաղցրախօս եւ հեղ եւ ցած,

71 այնմ: — 72 ազգա: — 73 ուստ:

բարեկենցագ . այլ եւ վարպետ քաղցրեղանակ ,  
համեղաձայն , որ մինչեւ ցայծմնաւոէր ժամ-  
տեսր եւ մեղեղիք , միայն ի հանդիսի աւուրս :  
Չոր նա յաջորդեաց զաթոռն Երուսաղէմոյ  
զինի տէր Անդրիասին՝ ժառանգորդ եղեալ 85  
սեփական աթոռոյն . եւ Խօթանասուն ամ  
նստեալ մեծահամբաւ վանքն սուրբ Յակոբոյ  
առաքելոյն . զոր այժմ Հրաժարեալ յամենայնէ  
կամաւ . եւ յօժարութեամբ՝ միայն ժամասաց  
զոլով . զոր ավել էր նմա Պարոնտէրն մեծ 90  
զարդաս Դ . Ե . օտացով , մուտպաթով և  
պաղչով . եւ տարին ԲՇ զուռուշ օլօֆոյ . եւ  
կերակուրն , զինին , հացն վանից տանէին :

Սորա ժամանակն ձէլալիք ելան . ճանինին  
կապեցաւ . ժողովուրդն որն աղքատացաւ , 95  
որն կորաւ . Երուսաղէմ ուխտաւոր չեկաւ .  
վասն այն պարտքն շատացաւ , զուլումն աւել-  
ցաւ . ԽՇ զուռուշ պարտք եղաւ . այլ ճար ու  
հնար չի մնաց . ինչ անօթք կայր , ոսկեղէն ,  
արծաթեղէն , թէ՛ խաչ , սկի , բուրվառ , զիրք , 100  
եւ շուրջառ եւ այլն ամենայն զբաւեցան յա-  
նօրինաց . զի մեծ չահ կ'առնուին , ամիսն Ժ ,  
ԺԴ , ԺԵ . Եւ Պարոնտէր Դաւիթն կակուղերեա  
մարդ էր եւ ամաչօզ : Եւ կայր յԵրուսաղէմ  
սուրբ Յարութիւնն կիրակոս քահանայ մի 105  
Տրապիզոնցի եւ Սարդիս եպիսկոպոս , արք  
մեծատունք եւ երեւելիք , Հրաժարեալք յաշ-  
խարհէս՝ թողին զամենայն ինչս եւ զատա-

81 բարէկենցագ : — 85 ժառանգորդ : — 89 օժա-  
րութեամբ :

ցուածս եւ ինքնանք բարձին զխաչն Քրիս-  
110 տոսի՝ յանձն առեալ զաղքատութիւն եւ զմիա-  
կեցութիւն. զցայդ եւ զցերեկ ծառայելով Աս-  
տուծոյ, նմանելով առաջին հարց եւ ճգնաւո-  
րաց. որոց համբաւ վարուցն եւ ճգնութեան  
եւ ընդ ամենայն երկիր, մանաւանդ առ ազգս  
115 Հայոց : Բնդ որս էր եւ այս Գրիգոր, զոր այժմ  
առաջնորդ է. այր մեծ, յաղթանդամ եւ  
հսկայաձեւ, որբանեալ եւ Եօթնարփի չնոր-  
հօք լցեալ՝ զարդարեալ ներքին եւ արտաքին  
ժարդով, այս է հոգեկանաւ եւ մարմնակա-  
120 նաւ, նմանեալ Գրիգորի Լուսաւորչի անուամբ  
եւ զործովք. զորս ի բազմաց սակաւն ասացից  
եւ եղից առաջի սիրով լսողացդ զառնէս զայս-  
մանէ եւ վասն նորոգման սուրբ Երուսաղէմայ :

## ՊԱՐՏԻ ՊԱՏՐԻԱՐԿԱԿԱՆ ԱՐԱՌԵՆ

Քանզի նախ քան զայս ի սուրբ յԵրուսա-  
ղէմ վիճակն Հայոց գերեալ եւ աւերեալ բա-  
զում ժամանակս. եւ ամենայն ուխտատեղք եւ  
եկեղեցիք անօրինականաց ամայի եղեալ, որ-  
5 պէս վերոյ ասացաւ՝ ի զրաւի : Այլ եւ այս  
եղեւ ի յանհոգութենէ եւ թուլութեանց ա-  
ռաջնորդաց առաջնորդաց : Եւ թէ հարկ լինէր  
պատարադ անել, ոչ դոյր սըկի, խաչ, աւե-  
տարան . Երթային, կաշառ տային, բերէին  
10 շուրջառ եւ այլ ինչ եւ մատուցանէին պատա-  
րագ, եւ դարձեալ տանէին վութով : Եւ այն-

113 յորոց: — 119 հոգէկանաւ: — 122 յայս-  
մանէ... յԵրուսաղէմայ:

չափ աւելցաւ եւ շատացաւ պարագն, մինչ զի  
սրբութեան տեղիսն եւս յափշտակեցին ի ձե-  
ռաց Հայոց, զի ոչ մնաց եւ ոչինչ։ Վա՛յ ինձ,  
վասն իմ ծովացեալ մեղացս մատնեցան սրբու-  
թիւնք եւ Քրիստոսի տնօրինականաց տեղիքն  
ի ձեռս այլազգաց, որպէս ի հնումն Տապա-  
նակն։ Այլ եւ ինքն Պարոնաէքն ասաց լալով,  
թէ Ժամանակ մի ըստ սովորութեան՝ Ծնրն-  
դեան օրն զնացաք ի Բեթղէհէմ։ Եւ չունէաք 20  
խաչ՝ ջուր օրհնել։ Հանեալ Մաշտոցէն փոքրիկ  
խաչն եւ այնով օրհնեցաք. եւ ի ժամ լուսոյ  
բխման չերեւէր Հայի սուրբ Յարութիւնն  
վասն ամօթոյ եւ նախառանաց, զի ոչ տեղիք  
ունէաք եւ ոչ անօթք եւ ոչ զգեստ։ Զայս աւ 25  
մենայն կրեալ ազգս Հայոց շուարեալ, տարո-  
կոյս եղեալ նկուն դարձաւ. եւ եղեւ ծաղր եւ  
նախատ եւ այսն ի մէջ ամենայն քրիստոնէից։  
Եւ ոչ կարաց օգնել կամ թափել զոռուրբ  
Երուսաղէմ ի պարտուց. ո՛չ կաթողիկոս, ո՛չ 30  
եղիսկոպոս, ո՛չ վարդապետ, ո՛չ խոճայ, ո՛չ  
մեծամեծք, ո՛չ փարքամք. մինչեւ ողորմածն  
Աստուած ինքն զթացեալ ողորմեցաւ եւ ոչ ի  
սպառ անտես արար եւ ոչ ցանկ բարկացաւ.  
ոյլ ետես, այց արար եւ գարման ետ, օգնա-  
կան եւ փրկիչ եղեւ յուսացելոց իւրոց, բառ-  
նալով զսուգ եւ զարամութիւն եւ զնախառինն  
մէր. եկն ի խնդիք մոլորելոց եւ կորուսե-  
լոցն։

## ՀԱՅԿԱՆԱԿԱՆԻ ԲՐԱՄ

Որ ի թվին Հայոց ՌԾՅԹ, յամսեան յու-  
լիսի ԺԲ. զարթոյց Տէր Աստուած զոմն Ենկի  
խոճայ Ամթեցի, (այս ինչ) <sup>1</sup> անուն, որպէս ի  
հինն՝ Զօրաբարել, զոր նա մեծաւ Հոգաբար-  
ձութեամբ ջանաց եւ Հոգ տարեալ զնաց ի  
45 Հալապ վասն սուրբ Երուսաղէմայ պարտուց.  
Եւ անդ դտեալ անվանի խոճայս եւ վաճառս-  
կանս. դրեց Եւ այլ մայրաքաղաքոն զալ հասա-  
նել ի Հալապ, վասն խորհրդոյ քննել, թէ որ-  
պէս կարիցեն աղասել ի պարտուց զԵրուսա-  
50 ղէմ: Արդ նորոգողն ամենայնի Տէր Յիսուս նա  
ինքն վերստին կանգնեաց եւ յորդորեաց եւ  
դութ եւ սէր արկ ի սիրոս նոցա. որ բարի  
կամօք եւ յօժար սրտիւ, բարեկաշտ եւ առ-  
տուստասէր տահուտէրքն ելեալ աշխարհաց  
55 եւ գուտառաց, վարդապետօք եւ քահանայիւք  
միաբան, միակամ, միախորհ՝ եկեալ հասին  
ի Հալապ քաղաքն եւ նստեալ անդ խորհուրդ  
արարին իրեք ամիս եւ տեղակացան խացեալ  
զամենայն իրու եւ զրանս տարակուսանաց, որ  
60 իմ զուռուչ է: Այլ ճար եւ հնար չի զտան,

<sup>1</sup> Ամթէոն Ամթեցւոյն անուանն համար զատարկ  
տեղ է ձգտ: Հանգանակութեան մասնակցած Են Հե-  
տեւեալ խոճաները. Ախիջան, Աւետ, Ղարիպջան,  
Միրզէ, Միրաք, Փիրաք եւ Փօլատ վանեցիները, Առա-  
քէլ, Աւետիք, Զաքարէ, Առկան, Սաֆար, Սուքիստ եւ  
Փանոս Չուղոցեցիները, Զէխիջան Բաղիջեցի, Թուժաջան  
Ամդեցի, Բաղդասար Առաջացեցի, Մազուստ, Պետրոս  
(Պէտիկ) եւ Վանեանի Հայէ ովզիները եւ ուրիշներ. Առ-  
ւալանեան, էջ 673. Աղանունի, Միաբանք, էջ 81:  
«Ենիկի խօճայ Ամթեցի» եղյն է հաւանորէն խօճայ թու-  
ժաջանի հետ:

միայն վճարել զպարտքն : Այլ ապա սկսան  
յորդորել զմիմիանն եւ առատաձեռնել տուրո  
յոլով եւ զուարթս, ընչաւէտ եւ փարթամս .  
եւ էր ամենայնի գլուխ եւ էրէց փոխան Ենկի-  
խոճայն : Եւ սկսան ամենեքեան տալ բստ չա-  
փու եւ կարողութեան փառաւոր եւ անվանի  
տօրիմթաւորքն, ուն Ռ, ուն ԲՌ, ուն ԵՌ եւ  
այլն զուռուշ . նաև ժի տվողք կայր . իսկ այլ  
աղքատք Ճ, Մ եւ այլն . եւ ժողովեալ բազում  
գանձս, աւելի քան զպարտան . զի եւ աղքատք 70  
Եւ մուրացիկք եւ կոյրք եւ կանայք եւս տային :

Եւ որոշեալ քան այր խոհեմ Եւ իմաս-  
տուն՝ պատրաստեցան եւ աճապարեցին եւ  
մտին ի Սուրբ յԵրուսաղէմ ընդ Ենկիխոճային :  
Եւ զնացեալ ի բերքն՝ ծանուցին պարոնին 75  
զելս իրացն, թէ Մեք կամմիմք վճարել զպարտա  
ամենայն : Եւ հրամայեաց պարոնն քարող  
կարդալ ի մէջ քաղաքին, զի ամենայն փոխա-  
տուքն գան առ պարոնն՝ բերելով զամենայն  
զրաւոն ընդ ինքեանս . Եւ վա՞յ այն մարդուն, 80  
որ մինչ իրեք օրն ձայն չածէ կամ զրաւըն չի  
բերէ, եւ չառնու զվճարքն . այնուհետեւ նորա  
փոխ տված զրաւն կորնչի : Եւ այսպէս բա-  
զումք եւ յոլովք զային, բերէին . Եւ նոքա  
վճարէին սիճիլով, հուճաթով՝ առջեւ պարո-  
նին եւ զատուն : Եւ յորժամ վճարեցին՝ դար-  
ձեալ բողոք կարդացին . թէ ոք փոխ ետուր  
կամ զրաւ ունի եւ ոչ զայ երեւի, յետոյ թէ՝

62 յառատաձեռնել : — 63 յոլով : — 66 կարօղու-  
թեան : — 71 մուրացիք :

զիր, թէ՛ գրաւ, թէ՛ այլ ինչ ցուցանէ՛, մի լիցի  
90 հմատ դատ եւ իրաւունք:

ԵԿԱՏԵՐԻՆԱՅԻՆ ԳՐԻԴՐՈՒՄ ՊԱՐՈՒՑԼԵՇԵՌ

Եւ իրբեւ Հասուցին զամենայն պարուն  
մինչեւ ցեսինն ընթան, այլ խորհուրդ նաևան  
եւ այլ թատողիր, թէ որպէս կամ զիսրդ ա-  
րացեն, կամ զո՞ զիցեն առաջնորդ եւ հովիր,  
95 այլ եւ հոգէրարձու սուրբ Երուսաղէմայ՝ որ  
յաստուածակաղմ լիցի հոգացող։ Զոր եւ ի  
կոչմանէն Աստուծոյ եւ Հաճութեամբ ամենե-  
ցոն ընարեցին զան Դրիզոր անուն մոնոզոն։  
Տաթեւու զաւառէն, այր առաքինի եւ ճզնա-  
100 զդեաց, խստակրօն ի պահու եւ ազօհն, որ ի  
մանկութենէ սուրցեալ ունէր զատաքինու-  
թիւն. Երեալ նախաջեւանայ զայ ուխտիւ յե-  
րուսաղէմ. Եւ Երկրագաղեալ Քրիստոսի անօ-  
րինականաց՝ սունեմնանայր յանազատու եւ ի  
105 ծածուկ տեղիս, Երեմին յայնկոյս Յորդանանեաւ  
եւ երբեմն յայսկոյս, ժամանակ մի Փորձու-  
թեան լեռն եւ ժամանակ մի այլ թաղստի  
առեզիս՝ Ճնշելով եւ մաշելով զմաքմինն ի քաղց  
եւ ի ծարաւ, եւ Երկու-իրեք օրն մի անզամ  
110 ճաշակելով, եւ զայն ստկաւ պաքսիմատու  
զտան հոգէ պահութեան :

Զամ Հրաւերեալ օրհնեցին մոնոզոն եւ  
լուսրար. Եւ զամենայն ինչ յանձնեցին ի ձեռն  
նորաւ։ Իսկ նու վասիչէր եւ Հրաժարէր յայն-  
115 մանէ. Եւ բազում անզամ զտեալ՝ զարձուցա-

նէին յԵրուսաղէմ եւ Հարկիւ սոխովէին կատարել դպատվէրն : Զոր յետ այսր ամենայնի յօժար կամօք եւ ուղիղ սրախւ ծառայէր եւ սպասաւորէր սուրբ տեղեացն : Եւ յետ առուրց ինչ օրհնեցին քահանայ . Եւ յետ ամաց 120 ինչ<sup>2</sup> աղերսիւ եւ Հարկիւ յանձնեցին ի նազլիճակս Հայոց եւ զամենայն հոգս եկեղեցոյն : Եւ խոճայք դարձան ի տունս իւրեանց : Իսկ նաօր ըստ օրէ յաւելոյր ի պահս եւ աղօթս եւ ի ճգնութիւնս . Եւ նոտեալ յարթուն բազում բարիս եւ երախտիս արար . զորս ի բազմաց սակաւս տասցից , զորս լուայ եւ զորս աչօք տեսայ :

## ՇԽՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆՐ ՊԱՐՈՆՏԵՐԻ

Նորի եւ առաջ զի նորոգեաց բազում եկեղեցիս ի վիճակն Հայոց , քաղաքն եւ ի զուրս<sup>3</sup> 130 թուռվ ԺԲ . եւ ի սուրբ Յակոբ , Հրեշտակապետն եւ սուրբ Փրկիչ շինեաց օթեւսնս հյարոց եւ հիւանդաց , եւ խուցս վիճաշէնս միաբանից , դարպասս դեղեցիկս եւ սեղանատեղս վայելում չու , պարտէզոս , այզիս եւ բուրաստանս . 135 եւ այլ բազում շինութիւնս եւ բարեկարգութիւնս . եւ զուրբը Յակոբայ միջի ՅկԵ խուցն , եւ զեկեղեցիս նոր նորոգեաց : Ի սորա ժամանակն ըարգաւաճեալ պերճացաւ եւ վայելչացաւ վիճակն Հայոց :

124 աւելոյր : — 134 զեղեցիկ :

<sup>2</sup> Գրիգոր Պարոնաէր հովիսէոպոս մեռնադբուեցաւ Աւետիս կաթողիկոսէն 1613, Առողիլ 5ին (Կոնդակ) :

Ապա զարդարեաց զեկեղեցիս եւ զգանո-  
րայս քահանայիւք, վարդապետիւք, վարպե-  
տիւք, կղերիկոսօք եւ ամենայն ուխտի ման-  
կառքք, նաև շուրջառօք, զգեստիւք, կանթե-  
145 զօք, ջուհիւք եւ լապտերօք. եւ այլ անօթիւք  
ուկեղին եւ արծաթեղին. այլ եւ մեծամեծ  
մարդարոյ կանթեղօք, մարդարոյ խաչիւք,  
աղիիւ գրանօք, մեծ բուզվառօք, ոսկիառաստ  
աւետարանօք, բնկատափօք եւ այլովք։ Այլ եւ  
150 տեսի անդին շուրջառնի, բազմածախ անօթք,  
որ եւ ի ԷէՀ ոչ զտանիւր։ Սա ետ զրել զիրա  
նոր, եւ զամենայն հինո կազմեաց եւ նորո-  
գեաց։ Սա առհմանեաց զկարդ եւ զկրօնս վա-  
նօրէից, զոր յառաջազդոյն խանդարեալ եւ ա-  
155 ժիրեալ էր։ Սա հաստատեաց ամենայն եկե-  
ղեցիս լուսրար, ժամբար, զի ի տվէ եւ ի զի-  
շերի անխառնան կատարեացն ազօթք եւ վա-  
ման լիցին կանթեղք եւ ջուհ։ Սա կանոնեաց  
յերեկօրէ զիշերսպաշտոն առնել եւ հսկումն  
160 տանտեղացութեամբ եւ զութ կանոն սազմոս  
ամենայն աւուր երգել։

Սա շինեաց զմոլէթայարկ վանորայս եւ  
անտորիկ ամբոցիւք պարսպեաց բազմածախ  
շքնդաշուք աշտարակօք, որ են այսք. Սուրբն  
165 Փրկիչ, սուրբ Հքեշտեկապետ, սուրբ Թորոս,  
սուրբ Առաքեալ, սուրբ Սարգիս եւ այլն։ Սա  
ուզգեաց բազում կարդ եւ զամհման քահա-  
նայից, վանօրէից, միակեցաց եւ աշխարհա-  
կանաց. զի բոլոր տարին միանաշակ լիցին. եւ

զայն պահօք, բայց ի Շարաթ եւ ի Կիրակէն եւ 170  
հինգ Նաւակատիսն միայն լուծանել ի ձուկ,  
ի ձէթ, ի կաթ եւ այլն։ Սա վասն շինութեան  
սուրբ եկեղեցեաց, վահօրէից բազում զզվանս  
եւ աղղի աղղի դժւարանս եւ նեղութիւն  
կրեաց ի շէխէրուն, պարսնէն եւ այլոցն։ բա— 175  
զում անդամ բանտ մտանելով, յոլով անդամ ի  
շղթայս եւ յերկաթս ողրկելով, ի կապանս կա—  
լով, նախատինս, ահ եւ երկիւղ կրելով։ եւ  
վճիռ մահու ի վերայ նորա հաստանելով։ Իսկ  
նա զյոյն առ Աստուած եղեալ եւ զնաւ միայն 180  
յօդնութիւն կոչեալ՝ ի չարչարանաց ոչ Երկն—  
շէր, եւ ի տանջանաց զերեսս ոչ դարձուցա—  
նէր, այլ եւ ի մահուանէ ոչ զանդիաէր, ըստ  
Պաւլոսի, թէ Ով կարէ մեկնել զմեղ ի սիրոյն  
Քրիստոսի, թէ սուր, թէ չարչարանք թէ մահ 185  
եւ թէ այլ ինչ։ եւ զարձեալ թէ Զարչարանք  
որ վասն Քրիստոսի՝ կեանք են։ եւ զարձեալ՝  
Եթէ տակաւին մարդկան հաճոյ լինէի, առա  
Քրիստոսի ծառայ ոչ էի։ եւ զարձեալ թէ  
Անձկացեալ եմ ի զանս, ի բանտս, ի տանջանս 190  
եւ այլն։ Այսպէս յոլով չարիս կրելով բազում  
բարեաց պատճառ լինէր։ եւ յառաջ տանէր  
զիւր բարի խորհուրդն եւ ի կատարում ածէր։  
եւ Աստուած օգնական էր նմա։ ճակատէր,  
զիմամարտէր ընդ մեծամեծս եւ ընդ զաղիք 195  
զրագարտող Արարացիս։ եւ ամենայնի յաղթող  
զտանէր զօրութեամբն Աստուծոյ, ըստ այնմ։

176 ոլով։ — 177 անդամ շղթայս եւ Երկաթս  
ողոկելով։ — 196 յարարացիս։

Եթէ Աստուած ի մեր կողմ իցէ , ո՞վ իցէ մեղ  
Հակառակ :

ԽԱՏՏԱՄԻՆԻՐ ՎԱՐԴ ԵՒ ՆԱԽՐԱԿԻՐ ՊԱՐՈՒՏԵՐԻ

- 200 Եւ էր անձամբն բարի , զործովք Եւ վա-  
րիւք սուրբ եւ առաքինի . լեզուն՝ ճարտար՝ ՚  
իմաստիւք լի , ամենեցուն ահարկու եւ զար-  
հուրելի . զի ոչ ոք կարէր զգէմն ունել , այլ  
ոպապանձեալ եւ ափ ի բերան Եղեալ լոէին :
- 205 Երբեմն եւ տուզոնք տայր Ճ , Մ , Յ զուռուչ  
եւ բանն յառաջ տանէր : Եւ այլ բազում շէնք ,  
կարդ եւ սահմանք եւ ուզզութիւնս արար Եւ  
տոնէ մինչեւ ցայսօր : Զոր այլ տեղ չտևաք  
այսովէս շէն վանք , որ ունի եօթանսուն
- 210 Հողի : Այլ եւ ինքն ջանայ , աշխատի ցայդ եւ  
ցերեկ . սակաւ ուտէ , սակաւ ննջէ . Եւ զզի-  
շերն արթիութեամբ Հանէ ի զլուխ յազօթան  
Աստուածոյ . եւ յորժամ նեղի ի քնոյ՝ մազեղի-  
նաւն զոր զգեցեալն է՝ Հոլոնի առանց գօտոյ
- 215 արձակման բնկողմէր ի վերայ գեանախշտի՝  
սուզ ինչ նիրհելով , եւ դարձեալ յառնէր եւ  
զայլ բազում առաքինութիւնս ծածուկ եւ  
ճպինութիւնս կատարէր . զոր եւ մեք աչօք տե-  
սաք եւ ականջօք լուսաք :
- 220 Յորժամ շինէր զՓըլիչն<sup>1</sup>՝ նախանձեալ

204 յափ : — 212 ազօթահ : — 214 ազեցեալն :

<sup>1</sup> Եկեղեցիս , ուր յետոյ (1645) Գրիգոր Պարսնակի թէ նշանաբները ամփոփուեցան , կ'երեւոյ թէ աւերակ զի-  
ճակի մէջ էր այն տուն : Երաւագէմի Հնազոյն եկեղե-  
ցիներէն էր . 1479ին Ֆելիքս Ֆարրի կը պատմէ թէ  
Հայ ուխտաւոր մը նորոգել տուած ըլլայ զայն : Անձա-  
նօթ էր այլուստ թէ վերջին նորոգութիւնը (կամ ի հի-

շիխերն մատնեցին պարոնին, թէ Գրիգոր  
մաթրանն նենկիւ և թշնամութեամբ ընդ  
ֆուանկս միաբանեալ մաթառիս շինէ և ամ-  
րոց՝ պարութ և զէնք պահելու. զի քաղքէն  
դուրս էր Սուրբ Փրկիչն. և յոյժ տաւի արին, 225  
որ պարոնն կալաւ զնա և եղ ի բերթն. և նա  
ոչ հոգայր զիւրմէ, որ վճիռ հատին մահուան.  
այլ միշտ առաքէր՝ թող բանեցնեն. զոր ետոց  
և ինքն ազատեցաւ: Դարձեալ օր մի մինչ էր  
ի վերայ արվեստաւորաց՝ շիխերն ի վերուսս 230  
ընկեցին քար մի ի վերայ զլիսոյն. զոր անկառ  
ի վերայ ձեռաց և զրութ մատն տրորեց. որ  
չունի զայն մատն մինչև ցայսօր: Եւ զի էր  
ճարտար, հանճարեղ և դրամի ուժով զամե-  
նայն ինչ զոր կամէր՝ կատարէր. մինչ զի պա- 235  
րոնն ևս ամաչէր և պատկառէր ի նմանէ:  
Որոց զյոքունս թողեալ, զի մի բազմութիւն  
խօսից անզուկութիւն առնէ լսելեաց և յա-  
ճախութիւն բանից ձանձրութիւն և քուն ածէ  
աչաց: Զոր ևս յետնեալ ապիկարս մոխրա- 240  
մած դիմօք և արտասվաթոր աչօք հոյցեմ  
ապէնիազ Տետոնէն, զի ընդ երկայն աւուրս  
ուրասցէ և պարագայծ ամօք պահեսցէ զնա  
մինչեւ ի խորին ծերութիւն, անսասան կենօք  
ի պայծառութիւն սուրբ եկեղեցեաց և ի պար— 245

225 ոյժ: — 233 որ չիայ:

մա՞նց շինութիւնը) 1613—1616 տարիներուն Գրիգորի  
ձեռօք եղած է. առ' ո Աղաւելունի, Հայկական հին  
վանքեր և եկեղեցեր Ա. Երկրին մէջ. Երուսաղէմ  
1931, էջ 82—84:

ծանս տառապեալ ազգիս Հայոց ի վասոս Աս-  
տուծոյ . ամէն :

ԳՐԱԿԱՆՈՒՄՆ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՑՆ

Բայց վայ հաղար բերան , զի յայսմ ամի ,  
որ էր թվ . մեկն . ազդմամբ չարին եկն ի սուրբ  
Երուսաղէմ մուֆտի մի , որ կոչէր Աստա-  
էֆէնտի , եւ տեսեալ զդեղեցիկ վայելչութիւն  
5 եկեղեցեաց Աստուծոյ՝ մախացաւ չար նա-  
խանձով , էառ զմեծ եկեղեցին Համբարձման  
եւ հուզ նմին մէջիթ եւ մզկիթ կանգնեաց .  
զոր վաղուց հետէ շէիներն եւ քաղքի Տաճիկքն  
նախանձէին եւ ոչ կարէին առնուլ , զի Պարոն-  
10 տէրն արզ առնէր , բողոքէր ի Ատամպօլ , այլ եւ  
երթայր Հալապ , Շամ , կաշտօք փրկէր . բայց  
մուֆտիս բռնութեամբ էառ , զի էր մեծազն ,  
այլ եւ սիրելի եւ խորհրդակից խօնթքարին :  
Եւ եղեւ մեծ սուզ ամենայն քրիստոնէից . եւ  
15 այս վասն ծովացեալ մեզաց իմոց արար , վայ յ  
ինձ որ տեսի զայն կսկիծն : Այլ եւ խիստ շատ  
տարք ու տալիք ունի Պարոնտէրն . ի տարին  
Բի զուռուշ եւ այլ աւելի . եւ չկայ իւր զրամ  
մի , ոչ հայ . զի սարֆի Արապիստան է . միայն  
20 Մաըր եւ Հալապ կան Հայք , քսան աւուրք ճա-  
նապարհ : Թէ ուխտաւորք զան , կու խարճի  
զրամ . ու թէ չի զան՝ չունի այլ տեղաց  
զրամ մի :

1 այսմ : — 2 աստմամբ : — 6, նաև 31, 64 եկե-  
ղեցինն : — 10 փողոքէր :

ՍՈՒՐԲ ԼՈՅՄՆ — ՆՈՒԵՐԻ

ՀԱՊԱՇՈՒ ԹԱԳՈՒԱԲԻՆ

Եւ ի մեծի շարաթ օրն մտնու Պարսկաէրն  
ի սուրբ Յարութիւն քահանայիւք եւ ամենայն <sup>25</sup>  
ուխտի մանկամբ : Նոյնպէս եւ ամենայն ազգ  
առաջնորդաւ իւրով . եւ լինի մէջ Յարու-  
թեանն բազում ժողովուրդ եկաց եւ բնակաց ,  
հաւատացելոց եւ անհաւատից . եւ ամէն ազգ  
մտնայ իւր մատուռն . եւ Հայք՝ Վերնատուռնն . <sup>30</sup>  
եւ որչափ մեծ է եկեղեցին՝ պատեն խուժա-  
շով , նաեւ զսուրբ Գերեզմանն զարդարեն : Եւ  
ասին թէ զայն մախսուր վարադոյրքն Հատա-  
շու թագաւորն է զրկել ի պատիւ սուրբ Յա-  
րութեան . եւ ամէն տարի կ'առաքէ . ազգ <sup>35</sup>  
վասն սաստիկ հեռաւորութեանն հազարէն  
մէկն չի հասնիր . եւ զի ճանապարհն ամսայի է  
եւ անմարդաբնակ , եւ ի տեղիս տեղիս այլ եւ  
այլ բարբարոսք բնակեալ են եւ Տաճկի սինօրն  
Ասը Արագին . սոքա չթողուն հասնել՝ թէեւ <sup>40</sup>  
հեծելօք զան . եւ տարի մի Ամերկի զրկել էր ,  
թալնած էր , զոսկին առած եւ մարդիկն սպա-  
նած . միայն երկու հարեղայք զերծեալ եկին  
եւ անդ մնացին , զոր եւ մեք տեսաք զնոսա .  
որք էին սեւ իրրեւ գործելի , միայն առա- <sup>45</sup>  
մունքն սպիտակ . նոքա ուստուէին վասն մեծու-  
թեան եւ փարթամութեան թագաւորին . այլ  
եւ վասն Միլ սուզին պատիւ ունին ի Տաճ-  
կաց , զի զետն ի նոցանէ դայ . եւ թէ կամին՝

— 27 արութեանն : — 30 մանա : — 34 արութեանն :  
— 42 մարդիք :

50 արդիլեն եւ չթողուն։ Եւ սքանչելի ջուրս այս  
որչափ քրիստոնէից աշխարհով դայ, ստակ եւ  
բագ դայ, բայց երբ մտանէ յաշխարհս անհա-  
ւասփց պղտորի, շփոթի եւ փոխէ զգոյնն.  
մա՞ռք Աստուծոյ :

55 Իսկ նոքա բնաւ չտան զաֆար, ոչ չորս  
ոսկի դուռն՝ վասն ջրին Միլ. վասն որոյ եւ  
նոքա յառաջ թափօր կ'ելնեն եւ նախ մտնուն  
եւ լոյս հանեն, առաջ այլք. եւ պար տոհայ  
շուրջ դՊերեզմանաւ Քրիստոռի, ունին որպէս  
60 վրան, զոր նովաւ շրջին. չարիար զարնեն, այլ  
եւ ծնծղոյս եւ աղաղակեն. Քիրիէ լէզիօն<sup>1</sup>.  
քաղցր եւ համեղ ևղանակաւ. նոյնոպէս եւ ա-  
մենայն խաչապաշտք զոչեն՝ ամենայն աղգ  
իւրեանց լեզուաւ, մինչեւ զուսյ ևկեղեցին։

## ԼՈՒՍԱԿՈՐՉԻ ԱԼՆԵԲԵՐՆ

65 Բայց Հոյոց՝ Պարոնակէր կամ դասասաց  
վարդապետ մի ելանէ ամողիոնն եւ սկսանի քա-  
րոզել եւ ծանուցանել վասն բխման լուսոյն,  
առայ յորդորէ զժողովուրդն երանի տալով նո-  
ցա, որ այնմ ժամու հանդիպեցան. վասն որոյ  
70 պարտ է ահիւ եւ զողութեամբ, զզջմամբ եւ  
պաղատանօք եւ խոստովանութեամբ եւ որբու-  
թեամբ արժանանալ տեսլեան լուսոյ եւ մեծաւ  
պատրաստութեամբ սպասաւորել նմա։ Իսկ  
զառն աղքատքն որ մնացին ի զուռն, լան եւ  
75 սղբան եւ խնդրեն զի մուծցեն զնա։ Իսկ նոքա

ասեն թէ Ոչ. իրեք կամ երկու ոսկի տվէք. իրեւ երդնուն թէ չունիմք եւ ոչինչ, ապա մերկացուցանեն եւ մի մի որոնեն զամենայն տեղիս. իրեւ ոչ դառնեն, ապա առաքեն եւ կոչեն զթարձիմանն եւ ասեն. Զինչ տայք<sup>80</sup> տուք, զի մի զրկեսցին ի լուսոյն: Եւ նա գնացեալ ասէ Պարոնտէրին. եւ Պարոնտէրն յորդորէ զխոճայնին, աղաչէ եւ խնդրէ վասն սիրուն Քրիստոսի, թէ Մի թողուք զնոսա ի դուրս մնալ, այլ ըստ կարողութեան ձերոյ տվէք որ նոքա այլ տեսնեն զլոյսն: Եւ որոց ծագէ սուրբ Հոգին՝ դայ եւ ասէ. Ես մինն բերեմ. միւսն ասէ. Ես երկու. եւ ունի՝ իրեք կամ չորս, չինգ. եւ այսպէս զբազում մուծանեն ի Յարութիւնն. եւ թէ մնայ Ժ, ԺԵ Հոգի, թարձի-մանն գնացեալ ասէ. Սոքա կոյրք են, այլքն կաղ, ձեռնատ, անկար, թող Աստուծոյ սիրուն համար եւ խօնթքարին զլխուն համար լինի եւ արեւուն լինի. մէկ մէկ օրդ կտրէ զնոսա: Նոքա խոյիլ կու լինին. Լու է, ասեն, որ տոնունք շատ թէ քիչ, քան թէ ոչինչ: Քանզի նալաթլամայ ալ կայ, թէ ոք լուսոյն ժամն չի թողու: Եւ ասին թէ ժամանակ մի այսպէս փախիր Փուխարայնի մնացել են ի դուրս. չէ թողած պէնկզար դրամով, թէ թամամ տվէք. 100 Եւ նոքա այնպէս մնացել են մահրում. եւ յորժամ լոյսն ելել է՝ դուրսն է վազել նախ վասն աղքատաց եւ դռան երկու կողմին մարմարէ եր-

— 76 իրեզ: — 81 ի չիք: — 85 կարողութեան:

— 87 զա: — 89 ի չիք:

կու ահան զլուխիքն այրել է - զոր տեսակալ բազ-  
105 ժաց՝ փառա ասյին Աստուծոյ. և մինչեւ  
ցայսօր երեւի անդին բռնըլքած հրազդոյն զոր  
ծահուցին խօնթքարին. և նա հիացեալ հրա-  
ժան և պարաթ զրկեց յԵրուսաղէմ նալաթ-  
լամայով, որ աղքատք թէ չունենան և երգ-  
110 վին թէ չունին՝ թողցեն զնոսու ի ներս, զի  
մի զրկեսցին ի լուսոյն. զոր և մեք տեսաք  
զայն սիւնան աչօք մերովք այրեալ և սեւա-  
ցեալ. և զայն էմրն քանդեալ ի վերոյ քա-  
րեայ տախտակի Յարութեան զուռն ի հրաշա-  
115 փառաց լուսոյն. զի զիրն տաճկերէն զրած է :  
Դարձեալ վարդասուն յորդորէ զժողովուրդին  
տակլով, թէ վասն սիրուն Աստուծոյ և սուրբ  
լուսոյն խաթերն՝ տվէք ողորմութիւն, զի  
զայն մեացած աղքատքն ալ մոցեն ի ներս. իսկ  
120 ողորմածք և զթածքն տան վազվաղակի բառ  
կարեաց և զնարեն զնոսու և մուծանեն ի  
ներս. և լինի մեծ ուրախութիւն և ցնծու-  
թիւն : և այն զատկի զիշերն Յարութեան  
զուռն բաց մեաց և ցորեկն, զի յոլով Տաճիքը  
125 զան և նոտին հայել զարարողութիւնս քրիս-  
տոնէից :

Իսկ առաջ հինգ արթի իրիկունն զայ չէին  
մի և զատին, այլ և սուպաշին, և զամէն  
կանթեզան չի ջաւցանեն. և Քրիստոսի զուռին  
130 զուռին մօհրեն զատին և սուպաշին և երկու  
չէին. և հասախչիք պահնորդ գնեն. զի մի  
նենկութիւն կամ հիլա յինիցին. և միան մինչ

շարաթի իրիկունն : Եւ առ հասարակ ամենայն  
խաչապաշտք ազապակեն եւ պար առեալ չուրջ  
զգերեզմանու Քրիստոսի Երգեն իւրեանց լեզ-<sup>135</sup>  
վաւ եւ լալով հայցեն գալ լուսոյն : Եւ կար-  
դաւորքն ամենայն ազգաց զգեստաւորին ա-  
ռաջնորդօք : Ապա եւ մեր առաջնորդն ողորմ  
ձայնիւ եւ ողբով ասէ ժողովրդեանն . Զզաստ  
կացէք եւ զզոյչ լերուք ի մեղաց , զի մերձեալ <sup>140</sup>  
է զալուստ լուսոյն . չի լինի թէ ձեր մէջն խոռով  
մարդ կայ կամ ոխապահ կամ պոռնիկ , կամ  
թերահաւատ կամ անզեղջ կամ անխոստո-  
վանք : Հանց իմանայք որ վասն մեղաց մերոց  
արդելու Քրիստոս զլոյսն . եւ այլ բազում բանս <sup>145</sup>  
խոսի եւ խրատ . ապա տայ ասել իրեք Տէր  
ոզրոբեա ոզբաձայն : Զկնի իրեք անզամ գո-  
չեն արք եւ կանայք երկիցս , ծերք եւ տղայք ,  
թէ Լուսաւորչին փառօք փառք տամք Աստու-  
ծոյ . եւ տսեն շարական . Լուսաւորեա Երուսա-<sup>150</sup>  
ղէմ , զի հասեալ է լոյս Քրիստոս . զարձեալ՝  
Ռւրախի լեր սուրբ Եկեղեցի . եւ յանկարծակի  
լինի որոտում եւ զոռացմունք , մինչեւ սառա-  
նիլ ոմանց . առասկոսանին դալ ազաւնիք , Եր-  
թեւեկ առնել ի դմտէ թին . դարձեալ կարդան եւ <sup>155</sup>  
աղաղակեն՝ Տէր ոզորմեա՝ ժողովուրդն , Եր-  
կիցս եւ Երիցս , եւ թէ Լուսաւորչին փառօքն  
փառք տամք Աստուծոյ : Դարձեալ զոռայ եւ  
թինայ սուրբ զերեզմանն Քրիստուի . եւ պատ-  
րաստքն եւ զգեստաւորեալք կարդաւորք առ-<sup>160</sup>

146 առտ : — 146, 156, 166 ոզորմեայ : — 150 յերու-  
սաղէմ : — 159 թընթայ :

նուն ի ձեռա խաչ, աւետարան, բուրվառ, խաչալամ. իսկ սարկաւագք, դպիրք եւ կղերիկոսք քշոց առնուն, ծնծղայ. եւ այլք այլ ինչ: Եւ հրամայէ Պարոնտէրն հաշտիլ եւ 165 համբուրել զմիմիանս, դի Քրիստոս ոչ դայ առ մեղաւորս եւ ոխապահս, այլ փախչի: Եւ բարձրաձայն գոչեն իրեք Տէր ողորմեա. զկնի<sup>\*</sup> Լուսաւորչին փառօք փառք տամք Աստուծոյ- եւ սաստիկ դռասայ սուրբ զերեզմանն եւ ճայթ- 170 մունք լինի մեծամեծ. ուստի ճառապայթէ լոյս եւ ելանէ պատուհան ի դուրս. ապա տե- սեալ զլոյսն, աւիրեն զմօհրն: Եւ նախ մտանէ հապաչն. զկնի հայն, ապա հոռոնն: Եւ մեր Պարոնտէրն Յովհաննէս կաթողիկոսին հրա- 175 մեցէք արար. եւ զզեցաւ շուրջառ, եմիսո- րոն, եւ զթագն եղ ի զլուխ որպէս ի ժամ սուրբ պատարագին. եւ տեսին զշայոց կան- թեղն վառած, ուստի եւ Լուսաւորչի կանթեղ կոչի, որ է խորած. անտի լուցանեն զպատ- 180 րոյզան. Եւ ելեալ ի դուրս կարգաւ ամէն ա- ռաջնորդ իւր ազգին տայ լոյս. եւ նոցա սուեալ շինն զերեսս եւ զմօրուս եւ ոչ այրէ, զի դեռ չէ հուր այլ լոյս. իրեք ձեռք անցնի, ապա այրէ. եւ ապա սկսանին մի ըստ միոջէ կար- 185 դաւ մտանէլ ի մատուռն: Եւ սուրբ Գերեզ- մանն կարմիր է եւ խզմիշ եղել, ջերմ. Եւ քրտունք հոսին ոլոռնամեւ, զոր զպատանքն սրբեն ի վերայ. եւ այն է ի վերայ պատանաց

163 ծնծղա: — 181 առ: — 182 զմօրուս: — 187 ուր- հարձեւ:

որպէս ազա քրտինքն , որ երեւին : Եւ վառեն  
ԺԲ կանթեղս . եւ կանգնին ի պատարագ որ— 190  
շափ մասուս կայ : Եւ զկնի պատարագ անդ  
մնան զզիչերն՝ ամենայն ազդ ծոմազահք . իսկ  
Հայք միայն խթին ի ձուկ , ի ձու եւ ի ոգանիր ,  
զոր այլ ազդք տեսեալ ծիծաղին եւ նախառեն  
զմեզ : Զայս ամենայն տեսեալ թուրքաց՝ զո— 195  
չեն . Ալլահ , ալլահ . եւ զնան ի տունս իւրեանց :

Բայց պատմեմ ձեզ սքանչելիս . որ յայս  
ամի եղեւ . զի լոյսն երկու ժամ յամեց եւ ոչ  
ելաւ . զոր Պարոնտէրն վարդապետօք , եղիս—  
կոպոսօք մեծի տարակուսի լեալ եւ արտա— 200  
սուսիսառն սպով . այլ հնար չիմացան քան զա—  
զաչըն զԱստուած . եւ անկեալ ի զռան ի վե—  
րայ երեսաց իւրեանց ազօթեցին յերկար . էր  
անդ եւ մեծ վարդապետն Ամթայ տէր Բար—  
սեզ . ազազակէին՝ Տէր ողորմեա մեզ , զի ի 205  
քեզ յուսացաք , եւ չիք այլ ոք բայց ի քէն .  
ծագեա զոզորմութիւնս քո , զի եղաք նախա—  
տինք դրացեաց մերոց , ծաղր եւ այսին կտառա—  
կանաց . մի երբէք ասացեն հեթանոսք թէ  
ո՞ւր է Աստուած նոցա . Օզնեա մեզ Աստուած 210  
Փրկիչ մեր , վասն մեծի փառաց անուան քո .  
Մի մեզ , Տէր , մի մեզ , այլ անուան քում  
սրբոյ : Եւ յառաջեաց Գրիգոր պարոնտէրն եւ  
ի խորոց սրբէ խոստացաւ Աստուածոյ ի ծածուկ  
ԲՌ ծունր . եւ տէր Բարսեղն մի ծունր . եւ ապա 215  
ոզորմածն Աստուած ողորմեցաւ եւ զթացաւ .

204 յամթայ : — 206 ուսացաք : — 209 երբէք :

Եւ առաքեաց զլոյսն՝ ուրախացուցանելով  
զքրիստոնեայս :

Եւ նիբհէեալ սակաւ մի մէջ զիշերի՝ նախ  
Հոռոմին եհար ժամհար . իսկ կուրճուն սպետրէ  
Էր ժամհարն եւ յոյժ համեղ եղին եւ քաղցր  
ձայն ածէր , մինչ զի թմրեալ զմայլեցաք . ապա  
եւ Հոյոց զարկին , փայտեայ , որպէս զանկակ  
հնչէր մէջ Յարութեանն , ահեղաղոյ եւ ազ-  
նիւ եղանակաւ . եւ ակսան հակումն եւ զիշե-  
րապաշտօն մինչ ի լոյսն : Եւ առաջորդն մա-  
տոյց պատարագ զատկի օրն վերաբերելով :  
Անզ էր տեսանել զրազմութիւն եպիսկոպո-  
տաց , վարդապետաց , քահանայից , կրօնաւո-  
րաց , սորկաւազաց , եւ զգեստուց եւ զար-  
գուց , ահօթից եւ սպասուց . եւ ինքն զգեցեալ  
էր շուրջառ մի սաֆի սիրմայէ , Ստամպօր  
բանած . եւ ասին թէ հազար դուռուշ կու նոյի .  
զի ասին թէ ծանր բանէ է . եւ այլ զանազան  
շուրջառնի սէրասէր եւ զէրապալէ բանի հա-  
րիւր . եւ այն զիշերն համբեցի կանթեզս եւ  
չահս միայն սուրբ Յարութեանն՝ Հինդհա-  
րիւր , զատ ի սուրբ Յակոբայ եւ այլ վահօ-  
րէից . եւ այս ամէնս Հոյոց միայն էր : Զի էր  
240 յայնժամ ազգս Հոյոց պերճ եւ մարթոնմ քան  
զամենայն ազգս . կարծեմ թէ ի թագուռորաց  
ժամանակն այսպէս եթէ եղեալ է :

Նոյնպէս ժամանկարգութիւնք եւ զրեանը ,  
զորս զրել է տվել եւ զորս նորողել՝ չկոյ այլ

223 փայտեայ : — 224, 237 աբութեանն : — 240  
այնժամ :

տեղ . զի զինչ գիրք կամիս՝ դաւանես ի սուբր 245  
Երուսաղէմ : Զայս ամենայն աչօք իմովք տեսի :

Եւ յայսմ ամի<sup>2</sup> վախաւ . հոռմի պատ-  
րիարդն վասն պարտուց . զի ասեն թէ ԽՌ զու-  
սուշ պարտք ունի : Առա զոհութիւն ու վատք  
Աստուծոյ , որ մեք այսպէս շն եւ հաստատ 250  
ահսաք զմեր եկեղեցիքն . զի ժամանակ մի եւ  
Հայք այսպէս էին , որպէս յառաջ ասացաք :

Եւ զինի Պատրիարքին երկրպագեալ ամե-  
նեքեանքն՝ դարձաք ի սուբր Յակոր : Եւ որ-  
շափ մարդ կայր՝ դամէնն նա կերակրեաց այն 255  
օրն՝ Պարնոսէրն . զի էին առելի քան դհագար  
հոգի . ի վերայ տանեաց նստան եւ սուբր Յա-  
կորայ էրդիքն . կերաք զառն , հէրիսայ եւ խո-  
րու . եւ խմեցաք զանուշ զինին :

### ԳՈՎԵՍՏ Ա. ՏԵՂԵԼՑ

Եւ երկուշարթի մեռելոցին սկսաք պատ-  
րաստութիւն ձանապարհին տեսնուլ : Եւ յոր-  
ժամ յիշէաք զերթալն՝ սիրոք մեր ձմլէին  
զմեզ , եւ արտասուք աչաց մերոց թորէր , եւ  
այնպէս թէ ի ծնողաց բաժանէաք կամ հարսն 5  
փեսէ . զի քան զամենայն քաղցր եւ ախորժ  
սուբր քաղաքն Երուսաղէմ է . զի մոռացեալ  
էաք զամենայն նեղութիւնս , զտուն եւ զտեղս  
մեր . եւ զժար թուէր բաժանիլ մեր յաստուտ-  
ծակոին տեղեացն այն : Եւ այնչափ տհօրինա- 10

247 այսմ , պատրիարքն :  
5 ի չի՞ :

կանք կան եւ ուխտատեղիք — իմ երեսս նոցա  
մոխիր — ոչ թէ ամիս, այլ եւ բոլոր տարին  
չկարէ ոք վճարել զնոսա :

Արդ զորս գովեցից կամ զորս նախ դրւա-  
15 տեցից . զԵրուսաղէմ թէ զԲեթղէհէմ . թէ  
զսուրբ Սիոն , եթէ զայլոն , ես որ տրուալ եւ  
փառաքիս եմ . քանզի նա քաղաք է մեծին Աս-  
տուծոյ . ի նմա Աստուծն երեւցաւ աշխարհի  
եւ խօսեցաւ . եւ անտի էառ զհողն եւ ի Բեթ-  
20 զէհէմ ծնաւ , մկրտեցաւ . եւ անդ կատարեաց  
զամենայն տնօրէնութիւնս եւ զմարդեզու-  
թիւնս . եւ ոչ հեռանայր ի նմանէ ամենեւին ,  
որպէս եւ ինքն իսկ ասէր , թէ Ոչ է պարտ ար-  
տաքոյ քան զԵրուսաղէմ զնալ . զոր ամենայն  
25 մարզարէք , առաքեալք եւ թագաւորք եւ նա-  
հապետքն ցանկային եւ փափազէին . որպէս  
եւ Մովսէս ազաէքը ընդ ազօտս տեսանել եւ  
ոչ կարաց . զի Երուսաղէմ Երկինք է վերին ,  
զրախոտ եւ սուրբ քաղաք Աստուծոյ , ուր  
30 սիլիզրն եղեւ փրկութեան մերոյ եւ դատաստան  
անդ լինելոց է եւ կատարում . եւ թէ ոք կա-  
րէր մի ըստ միոջէ պատմել զէութիւն կամ  
զըել զփառս մեծութեան նորա , զիարդ կա-  
րէր . զի անզատմելի է եւ անտելի . եւ եթէ  
35 լինէր ծովն մէլան եւ քարինք ամենայն քար-  
տէզ , ոչ էր բաւական տանել : Ոչ եթէ ես փա-  
նաքիս եւ մեղօք զառածեալս , ոհ ինձ , այլ  
միայն ընդ Դաւթի համարժակիմ ասել . թէ  
մոռացայց զքեզ Երուսաղէմ , մոռացէ զիս աջ

իմ . Եւ թէ կցեսցի լեզու իմ ի քիմս իմ , թէ ոչ 40  
յիշեցից զքեղ , սկիզբն ուրախութեան իմոյ :  
Ով սուրբ Երուսաղէմ , որ ամենայն ազգաց  
գովիս եւ ամենայն լեզվէ երանիս . ով սուրբ  
Երուսաղէմ , զքեղ եւ ամենայն անհաւատք զի-  
տեն եւ հեթանոսք անվանէ կոչեն . Հրեայքը ըղ- 45  
ձիւ խնդրեն զքեղ եւ Տաճիկք փափաղանօք առ  
քեղ զիմեն , թէպէտ Մեքէն զնան եւ թէ Մա-  
տինան եւ առ քեղ չմտնան , խութսուդ համի  
կոչեն : Արդ ով ոք ոչ զիտաց զքեղ կամ ոչ 50  
լուսու զքո փառաւորեալ անունդ . ուսեալ են  
Եւ մանկունք , զիտեն եւ կոյս ազջկունք . եւ  
չկայ ոք յարարածս որ ոչ զիտաց զանուն քո  
սուրբ : Զի ամենայն ոք որ կամի ծառայել Աս-  
տուծոյ , նախ առ քեղ զայ , նախ զքեղ կար-  
դայ , թէպէտ եւ անհաւատք որ զքո Տէրն ոչ 55  
ծանեան եւ զշինօղն քո ոչ իմացան , այլ զքեղ  
առ հասարակ զիտացին եւ մեծապէտ փառա-  
ւորեցին եւ պատվեցին հանդերձ Սիոնիւ : Ու-  
բախ լեր սուրբ Երուսաղէմ , քաղաք Աստուծոյ  
կենդանոյ . քանզի ի քեղ հաճեցաւ Աստուծ 60  
կատարել զամենայն տնօրինութիւնս , ի քեղ  
բնակեցաւ , ծնաւ , խաչեցաւ , յարեաւ եւ համ-  
բարձաւ , ի քեղ ընտրեաց զառաքեալս , եւ ի  
քեղ արար զամենայն սքանչելիս . առ քեղ է եւ  
ոյժմ կենսաբուխ սուրբ Գերեզման , ի քեղ է 65  
խաչն աստուծընկալ , ի քէն ոչ ասաց մեկնիլ  
առաքելոցն , առ քեղ է սուրբ վերնատունն ,  
ուր սուրբ Հոգին էջ : Եւ համառօտ ասացից ,

45 Հրեայք յզմիւ : — 48 եւ (առ քեղ) չիմ :

թէեւ ամենայն բանք մարզարէից ի քեզ կա-  
տարեցան, այլ եւ ինքեանք աստուածախօսու-  
թիւնք եւ փրկութիւն մարդկան, այլ եւ ամե-  
նայն տուրք բարիք եւ պարզեւք ի քեզ տվան.  
այլ եւ յետ մահուան ի քեզ կառարելոց է  
յարութիւն մեր եւ զատաստան եւ մեր կեանք.  
75 դու լինելոց ես դրախտ եւ արքայութիւն,  
երեսնաւոր եւ վաթսնաւոր եւ հարիւրաւոր :

Երուսաղէմ մարզարէից գովելի, եւ ա-  
ռաքելոց սիրալի, դու ես տեղի արզարոց եւ  
բնակարան որրոց եւ քաղաք կենզանեաց մեծն  
80 Սիոն : Ով սուրբ Երուսաղէմ . ի քեզ է Սիոն,  
Գողգոթայ, Գեթսամանի, Սողոմոնի տաճարն  
եւ այլն ամենայն : Ով սուրբ Երուսաղէմ, թագ  
իմ եւ պատկ, փառք իմ եւ բարձրացուցիչ  
զլխոյ իմոյ : Քեզ երկրպագանեմ, քեզ զպա-  
85 բանոցս եւ զծունկս իմ խոնարհեցուցանեմ,  
քեւ պարծիմ, քեւ ցնծամ, քեւ մխիթարիմ . եւ  
յորժամ յիշեմ զքեզ՝ զամենայն նեղութիւնս  
իմ մոռանամ : Ով սուրբ Երուսաղէմ, դերա-  
զանց եւ երանեալ քան զամենայն քաղաքան .  
90 ով սուրբ Երուսաղէմ սիրեցեալդ իմ, որ  
քաղցր թուխս ինձ եւ առաւել քան զխորիսիւ  
մեղուի, զի որք զո՞ն առ քեզ, այլ ոչ կամքին  
զնալ ի քէն, եւս առաւել ես եղկելիս : Եւ որք  
մտանեն առ քեզ, միանդամ մտանեն ի քեզ,  
95 ոչ յաղին սիրով քո, այլ երկիցս եւ երիցս  
զառնան առ քեզ . թէպէտ հեռու է ճանա-

սպարհն , թէպէտ դժուարին է , թէպէտ նեղ եւ  
անձուկ է , թէպէտ վիշտ է յանհաւատից , եր-  
կիւղ յԱրարացոց , Հալածանք ի Տաճկաց եւ  
այլն . այլ զի համեղ ես , տխորժ ես , հանոյ ես <sup>100</sup>  
եւ իի չնորհօք ես եւ Տէր ի քեզ է միշտ եւ յա-  
ւիտեան . մի , մի եւ մի սուրբ Երուսաղէմ , բն-  
տիր քաղաք եւ պատվական , սիրեցեալդ յա-  
մենեցուն եւ գովեալդ յամենայնի , համբա-  
ւեալ , հոչակեալ եւ փառաւորեալ , մեծարեալ <sup>105</sup>  
ի հայրապետաց , պատվեալ ի թագաւորաց :  
Ո՞վ է որ զքեզ ոչ զովէ , ո՞վ է որ ոչ պատվէ .  
զի դու ես փառք եւ պարծանք ամենայն աշ-  
խարհի եւ ամենայն քաղաքաց մայր . սպաւէն  
եւ յոյս ամենայն քրիստոնէից , մաքուր ա- <sup>110</sup>  
զաւնի . եւ ինձ հիքոյս յոյժ բաղձալի . որ  
բաղձամ , տենչամ և միշտ փափագիմ ի  
մարտինի միւս եւս տեսանել զքեզ . կամ թէ  
այլ ոչ հեռանալ ի քէն : Ով սրբութեանց  
սուրբ , հոգիս իմ ըղձայ եւ ցանկոյ տեսոյդ <sup>115</sup>  
քում բաղձալի : Արդ հեռանամք ի քէն սուրբ  
մայր . զնամք , զատիմք , որոշիմք , բաժանիմք .  
Եւ Երթալն մեր յոյժ սուզ եւ տրտմութիւն է  
մեղ . եւ զրկիլո մեր , քաղցրի՝ կ քաղաք , ի քէն  
է ցաւ . եւ այնովէս է , որովէս զրկիլն Աղամայ <sup>120</sup>  
ի զրախտին փափկութեան : Մի մոռանայր  
զպաշտոնեայս քո եւ որժանի արա կրկին տես-  
լեան քո :

98 յանձուկ... անհաւատից : — 99 արարացոց :

— 108 ամենեցուն : — 109 ամենայնի : — 115 ըղձա:

## ՄԵՂԱՋԻՄՆ

Եւ զատկի չորեքշարթին սկսան զնալ ուխ-  
տաւորքն . ոմանք ծովովք եւ այլք ցածաքով :  
Եւ անգ էր տեսանել զրաց եւ դհոռաչ , յորժամ  
Հրաժարէին ի սուրբ եւ աստուածակով տե-  
հացն : Նախ ի սուրբ Բեթղէհէմ զնացաք .  
առաջ ի սուրբ Փրկիչ եւ ի Զատոներն , ուր մե-  
ռնալք կային , ուստի հոտ անուշ բուրէր . և  
ասին թէ ով Զատոներն թաղվի , նորա մեղքն  
չի չէի , զի Քրիստոսի արեան զնով զնած է .  
10 առաջ Պետամանի եւ Ազրերն Սեյսմամ , եւ  
Դերեզման Աստուածամօրն , Հրեշտակապետ .  
եւ Սուրբ Յարութիւնն՝ տալով վերջին ող-  
ջունն : Վա՛յ ինձ որ զրկեցայ այնովիսի վայե-  
լուշ եւ փրկաւէտ վայրաց . զի այնովէս կակծելի  
15 թուէր մեր զնայն որոպէս ի զրկաց մարց :

Նորա մտեալ կէմին՝ Ռամլոյ Լիին : Եւ  
ես եղկելիս ծախեցի զմիս եւ զնեցի լու էշ մի  
եւ ցածքով զնացի ընդ ուխտաւորս հետ տէր  
Ղուկաս պարունակրին , որ երթայր նուիրակ ի  
20 Լէս . եւ ինձ Հրաժայեաց մի մեկնիլ ի նմանէ .  
որ եւ ես յանձն առի երթալ ընդ նմա մինչ ի  
լով՝ սպասաւորելով նմա յամենայն զործս եւ  
ի բանս :

Եր ընդ մեզ եւ Հոգեւոր տէրն Յովհաննէս  
25 կաթողիկոս : Վասն որոյ պարսնուէր Առաջ-  
նորդն ուղարկէր զմեզ մինչ ի ԶէՇՄԵԼՈՒՆ ,  
որ է կէս խօնախ : Բակ մեք երթալով Եր-  
թայրաք եւ լայտաք . եւ յետո զարձեալ Հայէաք

սուրբ յերուսաղէմ եւ հառաջէաք ի խորոց  
սրտէ : Եւ այս Զէշմէլուս երկու մեծ չաշման 30  
կայր , ուստի յորդ աղբիւր բխէր : Դարձեալ  
պարոնանէր Գրիգորն կերակուր երես եւ ա-  
նուշ զինի , այլ եւ փիլաք ևտ եփել եւ մխի-  
թարէր զմեղ սիրով . եւ զգիշերն անդ օթեցաւ  
ընդ մեզ :

Եւ ընդ առաւօտս կանխեալ օրհնէր զմեղ  
և ուղարկէր ընդ երկայնաձիզ ճանապարհն :  
Եւ մեք անկեալ յոտս նորա՝ համբուրէաք  
զգարշապարս ստից նորա լալով եւ մորմոքե-  
լով զհրաժարական վերջին ողջոյնն տալով . 40  
եւս առաւել զզրկումն մեր հոգեւոր հօրէն բաղ-  
մերախտ ափսոսէաք : Եւ ավեալ ամենայն ոք  
ըստ կարեաց՝ ժամուց , զաջն համբուրէաք . եւ  
լալով զնայաք , զի եւ ի հոգեւոր բարի հովէն  
զրկեցաք :

Զի ոչ միայն քրիստոնեայք , այլ եւ  
Հրեայք որ անդ զնան , մնան անդ եւ այլ ոչ  
դառնան . եւ ամէն տարի Լէհու զնան , զոր ևս  
տեսի զնոսա եւ խօսեցայ . զի ամէն աշխարհէ  
զնայ նոցա ողորմութիւն ի Հրէից : Եւ մեզ 50  
պարա էր անդ մնալ , քանի թէ զառնալ եւ ափ-  
սսալ :

ԱՐՔ ՃԳՆԱԶԳԵԱՅԻ Ի Ա. ՅԱԿՈԲ

Եւ կայր ի սուրբ Յակոբն Երուսաղէմայ՝  
Հայոց լաւ մարդիկ , որ անդ մնացեալ էին ,

29 հառաջէաք: — 34 յօթեցաւ: — 38 սոս: —  
47 Հրէայք: — 49 խօսեցաւ: — 54, 56 ժարդիք:

աշխարհականք եւ կարգաւորք, ընտիր եւ  
սուրբ մարդիկ :

Մերունի մի Շահրօղ անուն, որ ի Ստամ-  
պոլ թագաւորին սարայէն վախուցեալ եկն  
Երուսաղէմ եւ մնաց քառսուն ամ . դնեց պախ-  
չա մի Երեքհարիւր ոսկու, զոր Շահրօղի պաղ-  
չա կոչեն . եւ աշխատէր ի վանքն ի մանկու-  
թենէ . եւ այժմ ծերացեալ չկարէ այլ ծանր  
բան գործել . միայն զէդիս պահէր եւ զոր ինչ  
ժողովէր իրեք անդամ ի տարոջն քառանից  
ասցյր Պարոնակէրին . եւ ինքն բոկ եւ զլիսիրաց  
շրջէր եւ անսուադ չորապաք կայր . հին չուէ  
վերարկմամբ :

Տեսի եւ այլ այր մի թէսպէհ գործող, որ  
եօթն ամ էր նմա անդ . զինչ վաստակէր՝ սուրբ  
Երուսաղէմայ տայր . բոլոր ամեն չորապաք . եւ  
օրն Ճ՛Ծ ծունը դնէր :

Եր եւ այր մի ծեր թարզի, որ վանաց եւ  
Եկեղեցեաց զգեստ կարէր եւ շուրջառնի նոր .  
Եւ զհինս կարկաէր . բոլոր տարին չորապաք .  
Եւ աղուհացն շարթէ շարաթ միանաշակ լի-  
նէր . վա՛ռք Աստուծոյ :

Կայր երկու լուսրար, ընտիր ճպնաւոր . զի  
Երկու օրն անդամ մի ճաշակէին . եւ այն սա-  
կաւ բանջար խարշեալ եւ պաքսիմատ մի  
միոքք . եւ սոքա ամենեւին ոչ ննջէին ի վերաց  
մահաց կամ անկողնոյ . այլ կանդուն կամ  
նստման սուկաւ մի նիրհէին :

70 Երուսաղէմա : — 73 շուրջառնի : — 79 պաք-  
սիմաք :

Տեսի եւ այլ երկու ճգնաւորս սուրբ վա-  
նաց սպասաւոր . հերք դլխոց եւ ամենայն  
մարմնոյն թաւացեալ , ծունկք եւ մատունք ձեւ- 85  
ռացն կթուցեալ իբր զրդուց ի բազում ծնրա-  
զրութեանց . եւ աչք նոցա կարմբացեալ յորդ  
արտասառաց :

Եին եւ այլ ոմանք սպասաւորք վանաց , որ  
վասն սիրուն Քրիստոսի աղօր աղային . այլք 90  
հաց եփէին . եւ այլք այլ իմն ծանր բաներ եւ  
ծառայութիւն կատարէին եւ աղօթից անխա-  
փան կային . յամենայն ժամ եկեղեցին զտա-  
նէին . եւ ամենեքին ներքեւէ խոշոր չուլ աղա-  
նէին , ծածուկ եւ անյայտ ի մարդկանէ . զոր 95  
ևս օր մի յանկարծ անսի : Այսովէս եւ կար-  
գաւորք , հարեղոյք եւ մոնոզոնք խարազնա-  
զգեստ եւ չուանդօտի , քաղցիւ եւ ծարաւով  
զմարմինս հաշեալ . եւ մաշեալ նման առաջին  
ճգնաւորաց , զոյն երեսաց թարշամեալ եւ 100  
դեղնեալ , մարմինքն սեւացեալ , ոսկըն ընդ  
մորթին կցորդեալ ի բազում ճգնութեանց ,  
հոկմանց եւ տքնութեանց . ոչ բարձ , ոչ ան-  
կողին , ոչ վերարկու , այլ զլխիրաց եւ բո-  
կոտն , ի վերայ փայտի եւ քարի զնելով 105  
զգլուխն՝ սակաւ նիրհէին :

Կային եւ այլ ժողովարարք , որ կոչին չա-  
վուշք , որ զիշերն ոտնակացութեամբ անցու-  
ցանէին . զի անդ զիշերն որպէս ի լէ հայուն  
սահաթ է . եւ այլք թղթովք հետիւստ երեւ- 110

առւն առուր ճանապարհ զնային վասն սիրուն  
Քրիստոսի :

Եւ կայր ճղնաւոր մի Ապտալ անուն<sup>1</sup>,  
յոյժ խրթին, որ բնաւ ձի կամ էշ չէ հեծեալ,  
115 այլ ոտիւք շրջէր, վասն Երուսաղէմայ ժողովք  
առնելով այլ եւ այլ քաղաք, բայց Հալապ  
նոտէր միշտ, մուրար եւ խնդրէր ողորմու-  
թիւն սուրբ Երուսաղէմայ. եւ ամենայն ոք սի-  
րէր եւ մեծարէր զնա. զի զգեստն չուլ էր,  
120 զլիսիրաց եւ բոկոտն, ձեռաց մատունք եւ  
ծունկք իրեւ ըղտու պնտացեալս. միշտ ա-  
զօթք եւ ծունը եւ չորտագաք զամենայն ա-  
ւուրս. իրէք օրն անզամ մի ուտէր, եւ զայն  
բանջար. ոչ վերարկու, ոչ վարտիս, ոչ այլ  
125 ինչ ունէր, բայց միայն հոլանի առանց զօտոց  
լայն թեզանի ունէր որպէս Տաճկաց տէվրիշքն :  
Վասն որոյ մեծ պատիւ առնէին եւ զձեռն պազ-  
նէին, զի մեծ ջան եւ զայրաթ առնէր վասն  
սուրբ Երուսաղէմի զցայդ եւ զցերեկ, զի տա-  
130 րին իրէք հազար, չորս հազար զուռուշ կ'ա-  
ռաքէր յԵրուսաղէմ. նա էր թիկունք եւ օղ-  
նական Պարոնտէրին : Այլ եւ մարդիկ աշ-  
խարհին այն յոյժ ողորմած եւ զթածք են. զի  
ոչ միայն զգանձս եւ զինչս, այլ եւ զանձինս

115 յԵրուսաղէմայ: — 132 մարդիք:

<sup>1</sup> Զինքը կը յիշէ նաեւ. Գրիգոր Դարանազքի (536—539). «Ճեր Հայ յԱպտայն... ի Հալապ (էր), եւ  
ի հումբակութիւն էր առաքել Գրիգոր Եպիսկոպոսն ժո-  
ղովոց ազագաւ. եւ յետ երկու ամացն երեկ յԵրուսա-  
ղէմ» (1626): Այս<sup>o</sup> է Ապտալ Գրիգորն, որ 1638ին կը  
յիշուի ի թիւս սարկաւազաց Երուսաղէմի. Ազանունին,  
Միարանք, էջ 83:

ոչ խնայեն ի սէրն Երուսաղէմայ , ոչ թէ արք ,<sup>135</sup>  
այլ եւ կանայք նոցա եւ այրիքն հանէին  
զգինսս ականջաց , զազառանջանս եւ մա-  
նեակս ի պարանոցաց , զոսկի մասանիս եւ  
զարծաթէ կոճակս կտրեն եւ տան ի սէրն  
Քրիստոսի :<sup>140</sup>

Կայր եւ ջուղացի քահանայ մի Մկրտիչ  
անուն<sup>2</sup> , ի մեծ եւ ի փառաւոր ազգէ , որ դա-  
տէր եւ աշխատէր յիւր աշխարհն բոլոր տա-  
րին եւ բերէր յԵրուսաղէմ հազար զուռուշ եւ  
աւելի՝ ի Սպահանու :<sup>145</sup>

Կային եւ ի սուրբ Փրկիչ կանայք եւ այրիք :  
Եւ ի Հրեշտակապետ հաւատաւոր կանայք եւ  
պառաք , որ ցայդ եւ ցերեկ ազօթէին ի պաք  
եւ ի ճգնութիւնս . եւ չորապաք զոլով աշխա-  
տէին , դատէին . ոմանք պաշախ ժողովէին ,<sup>150</sup>  
այլք մանէին վուշ , եւ վարձն վանաց տային :  
Եւ կէսք քաղէին ձիթոյ պառուղ եւ աղէին . զի  
Երուսաղէմայ բոլորն սարուձոր զէյթուն է . եւ  
Երբ ուխտաւորք դային , ծախէին նոցա եւ  
զրամն տային վանաց : Այլք քախնէին կամ<sup>155</sup>  
զօրայս ժողովէին կամ հնձէին կամ այլ ծա-  
ռոցութիւն առնելով . ամենայնիւ զմարմինս

135 յԵրուսաղէմա այ (լ) :

<sup>2</sup> Գրիգոր Դարանազցի նոյնպէս կը վկայէ , կոչե-  
լով «Տէր Մկրտիչ Երէց ամենագովիլի , սրբառէր եւ  
բազմազութ Զուզոյեցի» (Յիշատակարան Ամստելածա-  
չունչի , էջ 602) : Կանգնած է Ա. Թորոս Եկեղեցւոյ ճէջ  
1601ին խաչքար ճր , «որ արձանագրութիւնս կը կրէ-  
ԵԽԵԱՏԱԿ է ԽԱԶԲԱՌ ԶՈՒՂԱՅԵՑԻ ՄԿՐՏԻՉ , ՕՂԱՆԷՄ ,  
ՍՈՒԼԹԱՆՎԱԾԱԿ , ՊԱՊԱԶԱՆ . ԹՎ . ԾՎ . Աղաւնունի ,  
Միաբանք , 302 :

անփոյթ արարեալ՝ միայն զհոգիս և զսուբբ  
երուսաղէմ հոգային :

160 Այլ եւ կոյր ծեր կին մի Ուզբաւաց անուն,  
որ ի ճպնութենէն եւ բազում ծնբազրութենէն  
կզացեալ էր. և ասին թէ այս քառասուն ամ է,  
որ բազում ինչս թերեալ ես ի վահու եւ ինքն  
մնացեալ հզնի առա ի մանեկութենէ, աշխատի  
165 եւ ձեռաց վաստակէն զեռ առայ պատարագի  
եւ ժամուց : Եւ ասաց Պարոնտէրն թէ Ես յոր-  
ժամ վահացս կերակուր սուազեմ ամա, ոչ  
ուտէ, առելով թէ Ես պիտի վահից առամ, թող  
թէ ուտեմ : Վասն սորոց ասին թէ կոյս է, այլ  
170 եւ խստակրօն, զի շարաթիւ մի անզամ ճա-  
շակէ, այլ եւ այն՝ շափով եւ կշռով :

Նաեւ հարեզայք ամենայն եւ կրօնաւորք  
ամէն օր մէջ զիշերի յառենն . Ը կանոն սազ-  
մու առեն . ազա կոշնակ զարնեն . Ը կանոն  
175 ոլ ժամն առեն . եւ մինչ ի վերջին ոտեսկա-  
ցութեամբ կան : Այլ եւ հլու եւ հնապանդ մե-  
ծին, սիրով եւ միաբան ընդ միմիան : Եւ  
այնպէս սահմանք ունին, որ ամէն օր ամէն  
մէկ՝ մէկ ութատանեղ մի պատարագէն ըստ  
180 սրբոյն Ներսէախ Հայրապետին խրառուն . կի-  
րակի՝ Յարութիւնն, Երկուշարթի՝ Սուրբ  
Հրեշտակապետ, Երեքշարթի՝ Սուրբ Փրկիչ,  
շորեքշարթի՝ Սուրբ Աստուածամօր զերեղ-  
ման, Հինգշարթի՝ Սուրբ Առաքեալք, ուր-  
185 բաթ՝ ի Գոզգոթայ եւ սուրբ Յովհաննէս մա-

տուռն որ է Յարութեան դուսն առջեւ . եւ է անդ Ախենն որ կազեցին զՅիսուս . չարաթ՝ ի Պատուատեղն . եւ այսովէս անխափան ամէն տեղ ամէն օր պատարագ կու լինի : Որ եղիցի պահապան ամենայն քրիստոնէից , մանաւանդ 190 աղդիս Հայոց :

Որ եւ այլ բազում բարի գործո ունէին՝ ծածուկ ի մարդկանէ եւ յայտնի Աստուծոյ , միայն խոստովանահայըրն դիտէ : Կին մի այլ կայր , որ ուխտ էր եղեալ՝ վաճացն դուրս 195 չելնել եւ բնաւ չերդնուլ : Եւ այլ ոմն , զի ընդ անհաւատսն շխօսէր եւ պառւղ բնաւ չուտէր : Եւ այլ բազում վարս տեսաք եւ լուաք մաքուր ծառայից Աստուծոյ՝ արանց եւ կանանց . որ զցայդ եւ զցորեկ ժամաց եւ աղօթից չի դա— 200 զարէին , զիստուած միշտ օրհնէին , աշխարհի խաղաղութիւն Հայցէին եւ Հայոց մեղաց թութիւն :

Եւ որպէս ծաղկեալ էր Եղիպատոս ճզնաւորօք եւ անապատառորօք , այսովէս եւ սուրբ 205 Երուսաղէմ ընտիք եւ բարեզործ սրբովք . եւ զոր ի Սկիւթ եղեալ ճզնաւորսն ընթեսնուաք , այժմ ի սուրբ Երուսաղէմ աչօք տեսաք ի այս դառն եւ վերջին ճմեռնացեալ եւ սառնացեալ ժամանակս եւ ժամս : Եւ ի՞ւ է , թէ ոչ առաջ— 210 նորդաւն . զի բարի Հովիւն բարի ոչխարս ստանայ . առաջնորդն ճզնօղ է եւ Հնագանդեալք նման նմա . բատ օրինակի պարսնաց եւ իշխանաց ճանաչին զինվորք , եթէ չար , եթէ բարի .

186 արութեան: — 187 զիսուս: — 196 չերթեուլ:

- 25 զի որսպէս բարի ծոտ պատուզ բարի, նոյնպէս  
բարի առաջնորդն բարից պատճառ լինի. եւ  
բարի վարդապետն՝ աշակերտ բարի: Երանի  
ժամանեակիս եւ Հաղար երանի չհաշխարհիկ  
տառջնորդին եւ ճգնազզեացն զոր տեսաք.  
220 որոց ազօթիւք Տէր մեզ ողործեացի. եւ օր-  
հութիւնը նոցու ի վերոյ մեր եղիցի. եւ  
փառք, զօրութիւն ամուզին Աստուծոյ. ամէն:

### 13. ՈՒՂԵԿՐՈՒԹԻՒԹԻՒՆ ՅԵՐՈՒՍԱԼԵՄԱՏ Ի ՀԱՂԵՊ

Եւ ուխտաւորաց զյուխ եւ մեծ՝ Յովհանն-  
էս կաթողիկոսն էր: Աւելի սա երկու մա-  
նուկ Հարեզայս, կոյսք եւ ամօթխածք. մինն  
վարսպիտ եւ ժամանաց, Համեզաձայն. միւսն  
շանհանէր եւ ազնիւ գրադիր. զգեցեալ էին իսա-  
բացն սեւ. Եւ վելպարն զերեան ծածկէր<sup>1</sup>: Կայաք  
Զէ՛ Հոդի ընդ ոյք եւ բնոց կին:

ԿՈՍՈՒԱՆԱԿՈՒՔ

Եին բնոց մեզ եւ Տաճիկըն, որ կէ ու ա-  
կէ ու կոչին. ոռքու եւս ուխտ եկին յԵրուսա-  
լում մեծաւ Հաւատով. Հայոց լեզու խօսին,  
թուրքնակ չի զիտեն. եւ նն երկրէն Հո-  
ռոմէլլու. զազայու նախ թլիփատել տան եւ ազա-  
մկրտեն՝ բառ Թրաոցն. Երթան յԵկեղեցիս եւ

6 զէզարն:

<sup>1</sup> Կ'ամիկարկուին անշաւաշ Ամժթեցի վարպետ Իս-  
րայէլը եւ Պազար արևզայ որ յացանի է իրրեւ զզր-  
դիրը. ակն առանց մասին Հանդէս Ամսորեաց, 1933,  
էջ 313—314 եւ 316:

ի մէջիթ . մեռելոցն՝ քահանայից տան նախ կատարել , եւ ապա դայ խմանն՝ թաղել տանի , 15  
եւ զայն սոնեն վասն երկիւղի . ապա սոսաւել  
սիրեն զհաւատն լուսաւորչի քան զլՄահմէտի :

Կայր ընդ մեղ երկու ձիւոր թարճիման  
եւ չորս չափուշ , որք են խուլավուղք . զի  
յառաջ երթան եւ յետոյ : Այլ եւ այն Ապտաղն 20  
ընդ մեղ էր . եւ երկու այլ վանաց մշակ , որ  
մինչ ի Հայագ բոկ ոտամք եւ հետիոտու  
զնային , քարուտ , միւսու եւ մացառուտ ճա-  
նապարհ :

### ՀԱՆԴԻՌՈՒԱՆՅԻ ՀԱՆԱՎԱԱՐՀԵՆԻ

Եւ հառաք ի ԹՈՒԻՐԱԳԻԿ . ապաք մէկ 25  
մէկ սոկի : Եւ անտի եկաք ի խան մի ԼՈՒ-  
ՊԻՆ . ավաք երկու երկու բարա . զոր եւ անդ  
եւս անձրեւոյ ջուր արրաք . եւ անդ առին զա-  
ֆար երկու ու կէս դուռուշ մարդագլուխ : Զի  
կէս առուր ճանապարհ է Լուպէնու ԼՈԳԻՍՏԱՅ , 30  
որ է նև ապ լուս ո քաղաք . եւ էր քաղաքս այս  
քրիստոնէից չէնք . եւ մէջն ամէն եկեղեցիք ,  
եւ թվի թէ Ֆուանկաց , դէրա քլաշթօրնի էր .  
Եւ ասին թէ աստ զլխատեցին զՅովհաննէս  
Մկրտիչն :

Եւ անտի բազում լերամք եւ մայրիւք  
եկաք ի սուրբ լեառն ԹԱՓՕՐ . եւ հանդէպ  
նմին Հերմոն , վայելուչ եւ գեղեցիկ , տափա-  
րակ եւ ծաղկագարդ . որ ի ծաղկանց Հոտոյն  
Հեշտանային մարդիկ . եւ սոսրոտ լերանն կայր 40

զեղ մի . Եւ ասին թէ ի զլուխն մի ազգի ժամկաց , պիմաշէն եւ զմուկի թաճեւ , բայց աւեր եւ ամսիքի էր . Եւ մեք չկարացաք ելանել ի վեր , զի քարզանն չուտ ելու :

- 45 Եւ եկաք ի խառապա մի ձիե՞նի , որ է զիւաց բնակութիւն . Եւ ասին թէ անդ ելին եօթն զեւքն Մարիամ Մադղաղինացուն . Եւ ընթան մի առակ քազաքն ՆԱՅԻՆ , ուր Տէքն յարոյց զորդի այրոյն : Եւ ինչ ուխտառեղ երացաք , պիզզ Արակնին զմեղ հայհայէին , թէ զուք արժանի չէք կոխել այս սուրբ տեղիքս . Եւ զաֆիք տալով փրկիմք . ապա թէ ոչ բնաջինք առնէին զմեղ : Եւ անտի եկաք ի ԱՅԻՆ-ԹՈՒՃԱՌԻ . Եւ կէս առուր ճանապարհ ճախտական էր կողմին էր քազաքն ՆԱՅԱՄԻՔԻ , որ զնացին ամսնք ի մերոց ձիւաւրաց ընկերք եւ ասին թէ Հոռմի վանքեր կան մերձակայք՝ յոյժ զօրաւոր . Եւ սրանչէ լազգործք : Եւ անդ եւս տվաք ժիւական փարու . Եւ ի Թուճառու մէկ օրի համաք ի գեղն ԼՈՒՊԻԱԱՅ . Եւ այս յօթեւանքս ամէն հոր կուր խորու . որ Եւ մերձակայ զեղօրէից Եւ ի Հեռու անզաց զային վասն ջրի՝ ակերով , Եւ բազում պախորէք Եւ ջոկէք ուղարուց բայորէին զհորն Եւ լինէր ազմուկ վասն ջրի . Եւ որ ուժով էր՝ նա քարշէր ջուր Եւ առյու անսանեց . Եւ չկարէին անդ զանուլ , վասն որոյ կովէին : Եւ կայ զեռ առհմանն այն , որպէս ի հեռանք . Եւ այն հորերն են , ուստի Յակուբ հա-

նէր ջուր, Արրահամ եւ Սահակ, եւ օղնէին  
Հոագուէլայ: Այլ եւ մերձ Նապլուսաց տե- 70  
սաք զհորն, ուստի Քրիստոս խնդրեաց ի Սա-  
մարուհոյն ջուր: Այլ եւ տեսաք ի ճանապար-  
հին ըլուր մի եւ ի վերայ չէնքեր, սարայնի,  
եւ սարային առջեւն գարպատ մի փլոծ, միայն  
մարմարիոնեաց աներն երեւէր. եւ ասին թէ 75  
այս Հերովդէսի գարպատն է: Եւ անտի առաջ  
խօնախ մի առաջ զնացեալ՝ եկաք տափարակ  
զաշտ մի գեղեցիկ. եւ ասին թէ աստ Քրիս-  
տոս կերակրեաց զԵ՛մսն հինգ հացով եւ Երկու  
ձկամբ, եւ շրջեալ ընդ վայրքն՝ անկեալ ի տե- 80  
զին երկրագեալ զքսակո եղուք եւ խնդրեցաք  
յԱստուծոյ, զի եւ մեզ լիցի պարագաթն այն: Եւ  
ի վայրս երեւէր ՏԻՐԵՐԱԿԱՆ ՄԱՎՆ. որք  
իջեալ ի լեռնէն՝ լոգցաք ի ծովն: Եւ կոյր այս  
կոյս ջրոյն աւելքակ տներ. եւ ասին թէ այն 85  
Պետրոսի էր: Եւ այլ յառաջ՝ զիւղն Յովհան-  
նու եւ Յակոբաց որդոց Զերեթայ: Եւ ի միւս  
կողմն լեռն Տիւրոսի եւ Միունի, ուստի խո-  
զարածքն փախեան եւ անկան ի ծովն. որ եւ  
ըմպեցաք զպատվական ջուրն, լուսցեալ ձեռն 90  
եւ զերեսս. եւ անդ օթեցաք: Եւ անտի հասաք  
ի ջրհորն, ուր զՅովոէփ ընկեցին հզրարքն.  
Եւ անտի հանեալ վաճառեցաւ Եղիպատացոց:  
յորում վրայ քէմէր կար չորս սեան վրայ.

70 Հոագուէլայ... նապլուսաց: — 71 ի չի: —  
73 չէնքեր: — 75 մարմարիոնեաց սրներն: — 84 լոգցաք:  
— 91, 100 յօդեցաք: — 93 յեղիպատացոց:

ա կոյցը անող մէզկիթ եւ քարէ պատ . ունէր ար-  
եիւ արօս մարդառոյ . բայց հորին ցամաք էր :  
Եւ անտի մէկ օրն հասաք ԿԱՄՄՈՒՆՇՅԵ  
ԾԱԿԱԲՈՅՈՅ . եւ տեղին ուր գոտէմարտեցաւ ընդ  
Տեսոն՝ մեծ եւ փառաւոր վանք մի էր , բայց  
100 ոչժմ աւեր : Եւ անցեալ յայնկոյս՝ օթեցաք :  
Եւ անցած զետն Յորդանան էր . որ եւ անոց  
առին իննաւկան վարսոյ : Եւ անտի չողով զնա-  
ցաք . զի չողն մեծ էր՝ զիշերն զնացաք . ոյլ  
եւ ահ ու զող կոյցը Արագնուն . թէ ոքէ մէք  
105 բազում էաք , առկայն երկնչէաք . զի նոքա-  
նենպատոր եւ բազմարիծ ազգ Են , որովէս վե-  
րոյ առացաք . որ եւ ամէն օր հանգիսկաք բա-  
նակի նոցա . զոր յարօսաշրջեալ արած էին  
զուղոս , որովէս ի Տաճկաստան՝ Թուրքանք :  
110 Եւ օր մի հանդիպեցաք անթիւ ուզուոց՝  
աւելի քան թէ հազար , ոյլ եւ յոլով Արագք .  
եւ զկնի՞ ուզու մի մեծ մաֆայով , նստեալ ի  
վերայ արասո մի , զլուխն թազանման , եւ կինն  
ընդ նմա . եւ առին թէ սա է թազուուր . եւ  
115 չուրջ չըլախ Արագնին՝ ձիաւոր , միայն շապ-  
կովք , եւ բոկ ոտն ի զանկին . բայց ձիանն  
խիստ արնիւ . եւ պէտառի , նուրբ եւ ճինս ,  
ոտպին՝ նազուք եւ երկայն , միջին՝ բարակ ,  
եւ խիստ վազան : Եւ մէկ մին հազար , երկու  
120 հազար զուռուչ ծախովի ի տեղն . զի չկայ աշ-  
խարհս մի նոցա ձիոց նման . զի որչափ սարք

116 ի զանկին պապէս յօրինակին , կարգա՛ յու-  
ղանկին (տե՛ս աւ. 128 Հուզունկունք) : — 120 չկա:

եւ սիրվի լեռ լինի՝ ելանեն. եւ թէ իրեք օր  
ջուր չի տաս անջրդի տեղիս՝ լոեն. եւ այնպէս  
արագ եւ սրբնթաց են, որ իրրեւ նետ վաղեն  
եւ որպէս թուչուն թուշին. եւ թէ իրեք օր վա—<sup>125</sup>  
զեն՝ չեն յոզնել: Եւ ամէն վնդի ոչինչ արապ,  
որ փող մի չարժէ, նստի հաղար ուկու ձի՝  
տուանց թամք եւ լիամ մէկ դրամի, ուզուն-  
կուն՝ փայտ, շապկանց. ոչ զէն ունին, ոչ այլ  
ինչ, միայն մըզբախ. ապա նետածիդ տեղաց  
նշանեն զմարդն, եւ այն եղէդ է ամուր որպէս  
հարազանի: Եւ որպէս յիշվի լէ չու թփաքն,  
թաթրի նետն, Քրիստ ճօպանն, այսովէս եւ  
Արտին ճիտան: Եւ մեք տեսեալ զթագաւորն՝  
մնացաք մինչեւ անցին. բայց մեզ վեսա չա—<sup>135</sup>  
րին. զի նոքա չեն Ասր, այլ թապի. միայն  
չըլին խորանօք որպէս Արբահամ, իսաք, Յա-  
կոր եւ այլք:

Եւ մէկ խօնախ Շամայ տեսաք րլուր մի,  
ուր զնաց Հոգեւոր Տէրն եւ ամէնքս զկնի. անդ <sup>140</sup>  
շարական երգեց, եւ ազօթեցաք. եւ ասին թէ  
անդ նահատակեցաւ Վահան Գողթնեցին: Եւ  
իրրեւ մերձեցաք ի Շամ, տեսաք զետք յոր-  
դարուխք, այզիս յոլով, մըզաստանս, բու-  
րաստանս յոյժ յոյժ: Կէս աւուր ճանապարհ <sup>145</sup>  
սաֆի այզիք էին, զեղեցիկ եւ վայելուչ:

122 լէս: — 124 յաբագ եւ սրնթաց: — 126  
ոզեել: — 127 օսկու: — 144 ուով: — 145 յոյժոյժ:  
— 146 վայել:

## ԴԱՄՄԱԿՈՒՄ

Եւ մտեալ ի Շամ որ է Դամմակոս, աւ-  
ստք չէն եւ բարելի, մրգաւէտ եւ պաղառու-  
եւ էր նա մեծ քան զրվացամպօլ. կային մէջիթք  
մեծամեծք եւ բարձր մինարայք, մեծածախ  
5 բաղանիք եւ բազմայարկ խաներ, խավհա-  
նաք սափի մարմարիսնեայ եւ սալարակոսով,  
որ այլ տեղ տէկմա չի լինի. եւ ջուրքն առատ  
ամէն փողոց որովէս ի Պաւրայ. ամնութիւն,  
լիութիւն եւ ամէն բարեաց առատութիւն: Օր  
10 մի զնացաք ի Ետշիլ մէջիթն, որ էր մեծ եւ  
լայնանիստ եւ զարմանաշէն. եւ սախն թէ սա-  
եկեղեցի էր եւ այժմ անօրէնք խլել են, մէջիթ  
չինել: Եւ կայր յաջ կողմն ազրիւր մի մեծ,  
որ սախն թէ աստ մկրտեցաւ Պաւղոս առա-  
15 քեալն Անանիայէ. եւ այն մէջիթն շինողուն  
քրիստոնեայ մատանել: Անտի զնացաք ի ոլէ-  
զէստան, որ էր նման կտրնու Այլ փաշին.  
բայց սորա շէնքն առելի էր եւ զարմանալի եւ  
աննման, զիմաշէն, կամարակոսով. եւ տեսաք  
20 զանազան խուժաչք, թափուայք, ալաճայք,  
զութնիք, աթլասք, մուխասամ դօմիք,  
շիֆորիք, վալայք եւ այլ թօհվայք, որ միայն  
զամառականք զիտեն զանունն եւ զզինն. զի  
եւ անտի ելանէ յոլով ապրչում: Այլ եւ կային  
25 ոէրդիք, խուրմայի ծառք, մեծաբնչք խա-  
նութնի եւ շատ չարշունի: Եւ սախն թէ երե-  
սուն ապրեր մտէ ի քաղաքս եւ անյայտ լինի.

1 տաճառակոս: — 2 բարէլի: — 3 մարմարիսնեա: —  
— 12 (էր) սա կրկնուած: — 16 քրիստոնեա:

զի ներքեւն ջուր է և ջաղջնիքն ջուրն չուր  
ածէ . և մարդ չի պիտէ թէ ինչ լինի ջուրն .  
որպէս գետն Տիգրիս հասեալ կարնօ այլ ոչ 30  
երեւի՝ մտեալ յաւազն , այսպէս եւ սաց : Դար-  
ձեալ մհծ (գետ) մի այլ երթայր ի մէջ քաղ-  
քին : Եւ այնպէս քաղցր է քաղաքն այն , որ  
մարդ իւրմէն բնուր չկամի հեռանալ ի վայել-  
չութենին : Անդ տեսաք սովիտակ չամփէ եւ 35  
կանաչ , մեծամհծ որպէս խուրմայ . Եւ հայ  
սովիտակ իրրեւ զձիւն . եւ սովիտա եփեն երկայն  
եւ անուշ , եւ երբ կարես՝ ձգտին որպէս ջիղք ,  
եւ Արանին յուսն դնեն եւ այնպէս տանին :  
Նոյնպէս սովիտակ պաստեղք եւ աղնիւ ոչը 40  
կեւիլ եւ այլ բազում բարի , գինի եւ այլն :  
Եւ յիրաւի ասեն Տաճիկք . «Էզէլ Շամ» , ախըր  
Շամ» : Այլ եւ Տաճիկքն քաղքին այնորիկ յոյժ  
երկեղած եւ մարզատէր են եւ աստուածավախ .  
զըրիստոնեայս սիրեն եւ բնաւ չասեն «կավուր» 45  
կամ «տինսիդ» , այլ «էսակուլի» կամ «հաճի» :  
Եւ թէ զոք աւան չոպանն նեզէ՝ ամէնքն վրան  
թափին եւ ազատեն . չթողուն սուխրաց բանիլ  
կոմ այլ ինչ անիրաւ : Այլ տեղ այսպէս մար-  
դիկ քաղցր եւ բարի չտեսի . քրիստոնէու- 50  
թեան լոյնիւ :

Խայր անդ հինդ-իհեց տուն հայի : Եւ ասին  
թէ յառաջն հինդհարիւր տուն էր . եկեղեցի  
եւ քահանայք անկան յիրար . քահանայք եւ  
երեսօնիսանք եւ ժողովուրդքն սովմուկ եւ 55

խոռվութիւն արտարին , մինչ զի եկեղեցին մատ-  
հեցին անօրինաց եւ ինքնանք եւս մատնեալ  
բոնաւորաց՝ առուքանք առուեալ , պատիժ կրեալ .  
վասն որոյ ցիր ու ցան եղեալ կորեան վասն  
60 անօրէնութեան իւրեանց եւ եղեն որպէս երադ  
ըստ Դաւթայ : Վա՛յ ինձ որ ամէն աեղ Հոյք  
ի կոիր եւ ի հակառակութիւն են . եւ յիրաւի  
կոչին Հոյք , որ են անմիաբանք :

Եւ կոյր կիմ հոռմի տուն . այլ եւ անգ  
65 նոտէր Հոռմի արքեպիսկոպոս . եւ ասին թէ  
Համայ ևոլիսկոպոսէն առնուն ձեռ-  
նադրութիւն : Եւ կացաք անդ իրեք օր : Բա-  
զում իրս եւ զործս եւ խումաշս եւ արվեստս ,  
այլ եւ չէնքեք տեսաք . զորս ոչ կարեմ մի ըստ  
70 միոջէ դրել . եւ տվաք երկու երկու դուռուշ :

Եկաք անտի ի զիւղ մի . եւ տեսաք բարձր  
լերան վրայ վանեք մի Ասորոց . եւ վանից բո-  
լոր քարէ բարձր պարփառ . մէջն կօքար մարմարէ  
սիւն կոյր , կ մայրակետ . եւ անդ տվաք իրե-  
75 քական վարա : Անտի Եկաք զեղ մի այլ , որ  
հոռմի անուամբ ԱՊՐՈՒՏ կոչէին . կոյր անդ  
երկու հրաշալի եկեղեցիք . մինն ի զիւղն եւ  
մին յառջեւ զեղին . զոր հանել էին զեղեցիկ  
աներն եւ ի խանն դրել . միայն խորան մնա-  
80 ցեալ էր եւ վերին քէմէրն :

Եկաք անտի ՄԱՅԼՈՒՆ անուն . տեսաք  
երկու բարձր լեռ քարածերազ վիճաց . եւ մերձ  
եւ հուղ միմիանց , իրը թէ միացեալ , բայց

չեն կից, այլ կայ ի մէջն նեղ եւ անձուկ ճա-  
նապարհ, որ ճորտվ ճիշտորին անցանի. եւ այն 85  
լերան քարն նման է խմորի. եւ այնպէս բարձր  
են, որ թէ ի վեր հայիս գտակդ ընկնի: Եւ  
անտի եկաք յայլ խառապայ ԽԱՐԱՐԱՐ անուն.  
Եւ աղաք անդ տասն տասն փարսոյ: Եւ անտի  
հասաք ի ՀԱՄՈՒՍ քաղաք, որ էր քրիստո- 90  
նէից չէնք. ունի անտիկ բերթ ի վրայ բարձր  
լերան, սիզրի՝ Հալովայ բերթին պէս. եւ բո-  
լորն խանտակ սարր, տաշած ու վիմօք հաս-  
տառեալ, եւ աղաքիսպն ալ տաշած քարէ:  
Անտի օր ու կէսն հասաք ՀԱՄՈՅ, որ եւ ոս 95  
նման Համուսայ է չէնք եւ ամէն ճանապարհն  
զէյթունի ծառ էր եւ թղի. եւ տեսաք Համայ  
ծառ մի մեծ խուրմայի. բարձրութիւն երե-  
սուն կանգուն Հալովի. եւ ինքն է տօլապ, որ  
զյուրն ի քաղաքն ձգէ. եւ էր բարձր լերան 100  
վրայ. կային հին եկեղեցիք վիմաշէն եւ մե-  
ծամէն մազարայք, ուներ եւ ամայի. քանդի  
քրիստոնէ չկայր անդ եւ ոչ մի: Եւ տառ եւս  
ենէր աղրչում եւ աղդի աղդի թօհվայք դոր-  
ծած. Եւ սիրմէ պուրունառուքնի, զէլլի մահրա- 105  
մանի, եազյինի եւ այլն, խուշախնի եւ ալա-  
հայք որպէս ի Շամ: Եւ ընդ արշալուսն մինչ  
գնայր առաջքն քարվանին՝ Արագնին զյետքն  
կարեցին, զոմանս վիրաւորեցին, զայլս թա-  
լանեցին, ոմանց էջն տարան, դհէկազէն եւ 110  
զայլն. ճիչ եւ աղաղակ վերցաւ. աղդ եղեւ ա-

84 կտ. . . յանձուկ: — 96 համուսա: — 101 վրա: —  
107 յարշալուսն: — 108 զարվանին: — 111 ասա:

ուաշնոցն , որ դարձան ձիտուրքն սրով , թրով .  
զի կային ևնկիչարիք եւ սրահիք հետ մեզ .  
թքանքով ի վերայ նոցա հասին . եւ նոքա վու-  
115 խան . բայց շատ լիւստ եղեւ քարիշեն :

Եւ անոփ չուեցաք ի ԿԱՓԱԾՆԱՅՈՒԽ , որ  
է ԱԲՅԱԱՔ , որ ի հեռուստ կ'երեւէր բերթն եւ  
բազարն . զի էր ի վրայ բարձր լերան որպէս  
Տէր մեր առաջ . Եւ զու Կամփառնոցում , որ  
120 բարձրացեալ ես , բայց իջցես մինչեւ ի զժուս :  
Եւ ասին թէ մէջն ասֆի ձհուստ է , եւ երկիրն  
Մահօղուն է : Այլ Մայիս որ է Բնիթայիրոց ,  
եւ Քորացին են ազգաւ Մամարացիք . Կէսւա-  
կէս զոյտի՞ սիրեն զքրիստոնեայո , խոզի մին  
125 ուսեն , բայց թրիստին . եկեղեցի կոմ մէջիթ  
շունին , ոչ քահանայ , ոչ ռասի , ոչ խման .  
Տրիստոն կու պաշտեն , ապա Աստուած չնն  
ունել . ապա մերձ են Հրէից եւ հին օրինաց :  
Երկիրն այն խիստ քարուս եւ ապառաժուս  
130 է . շատ առցրշում հասրյ կլայ :

Յայնմ ամի պատերազմէր խօնթքարն  
հետ Մահօղուն . եկեալ էին բազում զօրք .  
այլ եւ Մորայ եւ Շամայ խունն : Բակ Մանն զօ-  
րուժոյտի արարեալ զնոց ընդունում նոցա ի պա-  
135 տերազմ Եւ յազթեալ կոտորեաց զամենեանան .  
զայլու վախսատական արար : Երկրորդ անդամ  
առաքեաց զօրս . որ եւ զնուսա սրախողով ա-  
րարեալ եւ զկարսասին յաւարի էտո . եւ զօրա-  
ցեալ զնոց մինչեւ ի Շամ . բայց ի . քազարն  
140 ժկարաց մտանել . ապա շուրջ զնովու շէնլիք

շի թող, այլ ամսցին եւ խոպան դարձոյց եւ  
էոծ աւեր. եւ ասին թէ վասն այն սուզ է  
առըրշմեղէնն. զի ոչ թութի ծառ մնաց, ոչ  
պօճիկ. զամէնն քանդեց Մահօղլին։ Եւ եր-  
բորդումն ամին գնաց նա տո Փափին եւ մկըր—  
տեալ եղեւ քրիստոնեայ. եւ Փափին երես  
հինգ զատրզոյ զօրօք յօդնութիւն. եւ նա եկեալ  
բազում կղզիս եւ քաղաքս տապալէր եւ կոր-  
ծանէր. այլ եւ զԱյա Փայտս, Տրապուլուս եւ  
զայլ ծովեղերայս եւ եալուս եւ ոկէլէս տիրա—  
պետեաց. եւ դարձեալ գնաց ի Հոռոմ եւ անդր  
վախճանեցաւ։ Իսկ յատ նորա որդին ա՛յլ ա-  
րիագոյն երեւեցաւ եւ յաւ անուն ժառանկեաց։

Եկեսցուք ի բանն մեր. զի տվաք Համա  
մէկ մէկ ոռւղ : Եւ անտի եկաք խան մի, ուր 155  
հինգական փարայ առին։ Անտի հասաք ի  
խան ԹՌԻՄԱՅ. եւ անդ օթեցաք, զի մեծ խան  
էր, վիմաշէն եւ գեղեցիկ. եւ մեծ զետ մի  
առջեւովն կ'երթայր։

## ՀԱԼԵՊ

Եւ անտի անցաք մէկ օրն ի հոչակաւոր  
եւ մեծահամբաւ մայրաքաղաքն Հալուզ<sup>1</sup>. եւ  
Հովեւոր Տէրին տարաւ զմեղ ընդ իւր ի Դար-

144 քանթեց։ — 152 յարիագոյն։ — 155 Եկաք  
չի։ — 157 յօթեցաք։

1 Հրշակաւոր։

<sup>1</sup> Հալէպի նուիբաւած այս գլուխոր դրէթէ ամբող-  
ջութեամբ յառաջ բերած էինք Հանգէս Ամարեաց։  
1933, էջ 307—308 և 318—319։ Հոն խօսած ենք նաև  
Ա. Քառասնից եկեղեցւոյ նորագութեան եւ Պետիկ-  
Պետրոս և Սահոս եղբարց գործունէութեան վրաց (էջ  
309—313)։

պատն. եւ իջաք Եպիսկոպոսարանն : Եւ կոյլ  
 5 չորս և կեղեցի հուզ միմիանց մերձ Դարպա-  
 սին՝ մէկ բակ, մէկ մարտոնի, մէկ հոռմի,  
 երկու հոյի՝ Սուրբ Աստուածածին եւ Սուրբ  
 Քառունք . եւ յոյսմ ամի՞ նոր նորոգած էր եւ  
 մեծցուցած՝ լոյն եւ ընդարձակ, գմոկթա-  
 10 շին եւ սայլակապ, յոյժ զեղեցիկ եւ վայելուչ.  
 Եւ շինողն էր խոճայ Սանօս՝ Եղբայր խոճայ  
 Պէտիկին : Զի էր Պէտիկն մեծ ուն եւ երեւելի.  
 զի որպէս վաշայ մի շրջէր, երեսուն, քառա-  
 սուն հասախչով . ունէր ենկիչերիք, որոնհիք.  
 15 եւ ասին թէ քանի եւ չորս զալամ ամալ ունի.  
 կօմբուկն, մուխթասիպութիւնն, սուպաշու-  
 թիւնն, խաներն, համամենին եւ այլն ամենայն  
 նորա ձեռքն էր :

Եւ այս քաղաքս մեծ պէնտէր է եւ  
 20 շահրիստան . եւ յինքն կոյ Հնու-Հնդուստա-  
 նու մարդ, ամէն անդաց վաճառական . եւ  
 ինչ կումաշ կամիս, անդ դասանես : Նստի  
 անդ չորս պալիօս : Եւ մէր սուրբ Աստուած-

8 այսմ : — 14 հասախչով : — 22 սուսուածածնա :

<sup>2</sup> Միմէն Հալէալ հասաւ 1617 Մայիս 15ին մօսա-  
 ւորագէս : Աւստի յայտած ամի՞ ըսելով կ'իմանայ 1616  
 Մայիս—1617 Մայիս : Եկեղեցւոյ նորոգութեան մասին  
 Վարդան Ահնացի 1624ին կը զրէ Աւետարանի մը յի-  
 շատակարանին մէջ . «Հաւատարիմ» եւ երկիրզած իշ-  
 խանն պարուն ետանայ Սանօս շարապին . . . ցանկացաւ եւ  
 էտո զառ եւ ետ յիշատակ անկրելի ի սուրբ Քառա-  
 սունք յիկեղեցիս ի քաղաքս Հալապ . զի իւր ձեռն-  
 որւութեամբն եւ իւր անդքանիկ հարազատ եղբօրն  
 պարուն պանծալի Ասմա Պէտրոսին ոզնականութեամբն  
 շինեալ եւ նորոգեալ եղեւ սուրբ Քառասունքն ի թվին  
 շայոց Ակելք (1616) . ան՛ս Հանդ . Ամս . , 1933, էջ  
 321—322 :

ծածնայ ժամին երեք խորան ունին ֆուանիք,  
որ ամէն չարաթ եւ կիրակի զտն պատարագ 25  
առնեն . եւ թէ մերոնք պատարագէն , նոքս  
սուրբ Քառասունք երթան : Բայց Մարտոնիք  
մեծ ոէր եւ հնազանդութիւն կ'առնեն մեր  
առաջնորդին . երբ ժամուն կ'ելնեն , դան դաշն  
համբուրեն եւ արձակումն խնդրեն . եւ թէ 30  
ժամէն ելած չեն , անչափ պիտոր կենան , որ  
ժամին արձակի , խաչ առնուն , տաղա երթան .  
իսկ Հոռոմք դայս ոչ տոնեն : Կան եւ Ասորիք  
յոլով եւ անուանիք . ունին քարէ եկեղեցիք  
այլ տեղ» :

Եւ կայր մերձ հոլիսկոպոսարանին քարէ  
իցեր Հոյոց : Եւ կաթողիկոսարանն ունէր  
ներքնատուն , միջնատուն եւ վերնատուն վր-  
մաշէն : Եւ պատրիարքն սուրբ Երուսաղէմաց  
եւ կաթողիկոս Սըսայ էր Յովանէս կաթո- 40  
ղիկոս , որ միշտ ի Հալապ նոտէր : Կայր եւ  
վարդապետ մի Յօհանէս Ուռհայեցի եւ ար-  
քեպիսկոպոս մի տէր Խաչոտուր . լաւ տէր  
վարպետ մի . որք էին հիւրասէրք , հեղ եւ  
քաղցրարան : Կայր այլ հոլիսկոպոս երեք . 45  
Հինգ հարեղայ եւ հինգ էրէց . եւ երեքհարիւր  
տուն հայի կայր : Իմաստունք , փարթամք ,  
զեղեցկատեսիլ , նման Զուղայեցոց եւ Ամբե-  
ցոց՝ անուանիք եւ մեծ վաճառականք , որ  
մարդ ամաշէր երեսին հայիլ : Կայր խոճայ 50  
Դանտիլն եւ այլ համբայք նորա քառուն հա-

զար, յիսունհազար բեռան տէր: Այլ եւ  
տներն մեծագին, տաշած եւ կոփած, բարձր  
եւ մեծ, նման Յամթայ աներուն տասն, տաս-  
55 նուհինդ հաղար զուռուչի: Ունին եւ մարդա-  
վարութիւն. եւ են մեծ վաճառականք. գնան  
Հնդուստան, Պաղտատ եւ Ասպահան: Ունին  
եւ աղնիւ կերակուրք. եւ է ազգ մի ճաշ, զոր  
մըսլա կոչեն, նման պօրէկի, քառսուն, յի-  
60 սուն ճու ածեն եւ զանազան բանչարօք, եւ  
աւելի քարար դնեն, որ է... (դատարկ): ա-  
ռանց մըսի ի տապակի Եղեալ տան ի փուռն.  
զարմանալի համ ունի: Եւ զգեստ է նոցա  
սօֆ, խութնի, աթլաս. եւ վաթսուն, եօթա-  
65 նասուն, հարիւր չլայ չուխայ: Բայց հայնակ,  
ոչ թուրքնակ չի գիտեն, միայն արագնակ  
զրուցեն. եւ զիր ընթեռնուն արագի լաւ, ոչ  
միայն աշխարհականք, այլ եւ քահանայք: Եւ  
դամենայն գրեանս արագի լեզու թարդմա-  
70 նած, որպէս Լեհցիք եւ Ստամպոլցիք հայնակ  
չդիտեն: Եւ է քաղաքն պարսպաւոր՝ աշտա-  
րակօք եւ ամրոցիւք. ունի տասն զուռն. եւ  
ամէն պուրճ թօրեր չարած. եւ ունի զատ  
ի բերթէ հիսար մի յոյժ ամրոց, անտաշ  
75 քարէ բարձր եւ սուր, նման Համուսայ բեր-  
թին. բայց սա ա՛յլ բարձր եւ մեծ, եւ բոլորն  
խանտակ, ի վերաց բարձրաւանդակ տեղոջ.  
եւ անդր յոլով թօրեր հանած պատուհանիցն  
ի զուրս: Եւ խանդակին մէջն մեծ եւ խոր,

ու ջուր կայր . եւ ինչ ազդ ճանաւար ուղես , 80  
անդ տեսամես : Եւ յայս կողմն ջրին Նասիմին  
է պառկել . որում վրայ երկու ծառ բարակ  
եւ երկայն բռւսել է :

Եւ ունի Յեկ խան աւուր դլուխ՝ մի  
քան զմին լաւ , եւ անթիւ խանութ , կրովակք , 85  
աղջկագան եւ այլն . եւ ինչ բան ուղես՝ անդ  
գտնուս , զի մեծ շահրիստան է : Այլ եւ  
Փռանկի խաներն , ուր պայխօսք նստին , լաւ  
չուխայ , աթլաս , քէմիսայ եւ Փռանկի խումաչ  
գտանես : Նոյնպէս աղնիւ բաղանիք եւ ջուրն 90  
առողջ , լի եւ առատ : Եւ կացաք անդ ամիս  
մի , զի մեծ ոչը եցոյց մեզ Հոգեւոր Տէրն :

Իսկ յորժամ մեք ի Հայապ մտանէաք՝  
կէս աւուր ճանապարհ ոչէմ մեզ երեկ Հայոց  
ազգն , արք եւ կանայք , ծերք եւ տղայք , երի - 95  
տասարդք եւ կուսանք , այլ եւ Ասորիք ,  
Խրդիք , Մարունիք , նաև Թուրքաց . զի ա-  
տաթէ է յորժամ յԵրուսաղէմայ բխտաւորք  
զան , ոիտոր ոչէմ զնան : Ապա զի Հոգեւոր  
Տէրն ընդ մեզ էր եւ քաղաքին առաջնորդն , 100  
վասն այն առաւել պատիւ արարին . եւ քա-  
ղաքն դղրդեցաւ : Այլ եւ խոճայ Պէտիկն եկաւ  
երկու Եղբարբք հեծեալ ի սպիտակ ձի ա-  
րապի . ոսկիակազմ ականակուռ ընդելուղեալ  
ակամք եւ մեծադին մարզարտոք սանձն , 105  
թամքն եւ այեարն . որ փայլզիայլի տայր ոս-  
կին եւ ակունքն եւ չափրազն դիպակաց

102 դզբեցաւ : — 104 յականակուռ : — 105  
ակամք : — 106 փայլզիայլն :

պղպջուն եւ մեծածախ . ունէք ընդ իւր բազում ճորտ եւ ծառայ , սիրահիք եւ հնկիչա-  
 110 ըիք որպէս վաշոյ մի . եւ իրրեւ մերձեցաւ  
 նա՞ իջաւ ի ձիոյն եւ անկաւ յոտս կաթողի-  
 կոսին , ողջունեաց զնա : Եւ իրրեւ նստաւ  
 ևպիսկոպոսօք , վարդապետօք եւ քահանայիւք  
 եւ բազմամբոխ ժողովրդօք , որք եկեալ  
 115 երանի տային աչացն եւ զաջն համբուրէին .  
 եւ անտի դարձեալ առ ուխտաւորս եւ առ  
 ծանօթս , առ սիրելիս եւ բարեկամս , ունելով  
 ընդ ինքնանս բախի , զինի , կերակուր եւ  
 այլն . եւ ուրախացեալ ընդ զալուստ նոցա  
 120 զըկախատն համբուրէին զմիմիանս եւ նըս-  
 տեալ ի ճաշ զուարձանային : Եւ ոչ ոք մնաց ,  
 որ ծանօթ չունաց կամ սիրելի , բայց յի-  
 նէն : Քանզի ոչ ոք կոյցը ինձ սիրելի , ո՛չ ծա-  
 նօթ , ոչ ազգական . ո՛չ ես զոք ծանեայ , եւ ո՛չ  
 125 ոք զիս . Եւ մնացի ես միայն ի բացեայ եւ մե-  
 կուսի , թափուր եւ ունայն . արտմեցաւ անձն  
 իմ մինչեւ ի մահ , խոռովցաւ ողի իմ եւ ար-  
 տասուս հարեալ հառաչեցի եւ ասեմ զողը  
 զայս <sup>3</sup> .

124 ծանեա : — 125 ի բացեա : — 126 յունայի : —  
 127 յոզի : — 128 հառաչեցի :

<sup>3</sup> Այսէսն Հայրէններու նմանութեամբ , նաև ա-  
 նանց աղղեցութեան տակ երգած է ոզրս . համեմատէ  
 Հետեւեալ բառեակները .

Յաշխարհս ես ի ժուռ եկայ  
 չզըստաց ըզորդ բարեկամ .  
 Զիմէքս ի վրաս բերի  
 զրագուկս արի սիրելի . . . . :

Յաշխարհս ես ի չուրջ եկի

130

չի գտայ սրտով սիրելի .

Չխելքուկս ի վրայ բերի ,

իմ բազուկս էր իմ սիրելի :

Դարիոլ եմ ու խիստ լալի ,

այս օտար երկիրս որ եկի .

135

Չունիմ հայր , չունիմ եղբայր ,

չունիմ ես ոչ մէկ սիրելի :

Մէկիկ բարեկամ պիտիք ,

որ ասի առը տէրս ալանի .

Միթէ տեսնելով ըզնա

140

սաւկաւ սիրարս մըխիթարի :

Միթէ մայրս երբ որ ծնաւ զիս ,

անիծեց թէ խարիոլ լինիս .

Երթաս ի յօտար երկիր ,

հայր ու մայր ' և եղբայր չունենաս : . 145

Որ տեղ քոյր ' և եղբայր տեսնաս ,

դարձընես դերեսիկդ ու լսս .

Ի խորոց սրտէ հառչես ,

ու հաղար վա՛յ անձինտ ասես :

142 հրօր : — 148 հառջես :

Եամէ \*

Մարիկն անիծեց զորդին

իմ որդի , զաւն զարիպանաս .

Երթաս ի յօտար երկիր ,

զզարիպին զարդն զիտենաս

Զքարն անարք անես ,

ի վերայ աւագին քնանաս .

Վազդուէ քնէն ի վեր ելնես ,

քան զԱստուած այլ ճար չունենաս :

Ա. Զօպանեան , Եահառես Քուչակի Դիւանը , էջ

92 և 101 :

Եւ սայլն ալ սնարք տոնես  
ի վերայ հողուն քնանաս .  
Դլուխրտ ի վեր կալնես ,  
քան զԱռուուած այլ ճար չունենաս ;  
Միթէ իմ Տէր ինձ խղճաս ,  
155 զարիպ տնանկիս զթաս .  
Փրկիչ ւ օգնական լինաս ,  
փորձանացս որ դան ի վերաս :

Եւ յետ ճաշուն առեալ զՀոգեւոր տէրն  
եւ զԴուկաս եպիսկոպոսն եւ զայլսն՝ տանէին  
160 ի քաղաքն եւ երկու կողմանց բազմամբրոխ  
ժողովուրդն որոքէս պարիսպ էր՝ քրիստո-  
նայք եւ այլազգիք : Եւ հարկանէին կանայք  
զշրթունս եւ ձայն իմն ածէին , ըստ սովորու-  
թեան Արտապաց . նաև յեկեղեցիս հանդիսի  
165 աւուրս այսպէս տոնէին կանայք : Եւ այսպէս  
մեծաւ փառօք մուծին ի դարապասն : Եւ ևս  
ախուր զիմօք եւ լի սըդով երթայի մինակ ի  
հեռաստանէ , որբէի զաշս եւ դոհանայի զԱռ-  
տուծոյ : Եւ այնօրն խոճայ Պէտիկն մեծ ընթրիս  
170 արար եւ ուրախութիւն մինչեւ յերիկունն :

Եւ կայր Հալասպ բարձր պուրճ մի . այժմ  
մզկիթ է . եւ ասին թէ զանկակատուն է :

#### 14. ՄԱՐԱՇ—ԿԵՍԱՐԻԱ—ԱՆԿԻՒՐԻԼ— Կ. ՊՈԼԻՒՍ—ԼՎՈՎ

Ապա նախասացեալ Արտալն զհեց հինգ  
ձի եւ հարիւր զուռուշ խարճի երետ . եւ Պետ-  
րոս անուն մշակ մի եւ Ախինան մշակ մի հետ

1 աքտալն :

եղիքը . Եւ մեք ողջունեալ զամհնեսեան՝ չուեցար զձանապարհն մեք դէպ ի լէհ :

5

Եւ ինչ տեղ դիւզ կամ քաղաքս Հայոց գնայաք, դէմ մեղ գային մեծաբանօք եւ պատուով, թէ Երուսաղէմայ մահղասիք կու զան :

Եկաք անտի ի ՄԱՐԱՌ քաղաք, ուր փաշան նստի . կայր անդ քսան տուն հայի : Եւ անտի 10 Եկաք ՖԻՆՕԶ գեղն Հայոց, որ էր ի վրայ բարձր լեռան վրայ . անդ է գերեզման Ստեփանոսի Ուլինեցուն . որ եւ ազրեր քաղցրաւհամ բխէ սուրբ գերեզմանէն եւ լեռնէն վայր զայ պատ եւ ցուրտ ջուրն : Զոր անդ օթեցաք 15 զգիշերն : Ոմանք ելան ի լեռան եւ չրջեցան . իսկ ես չի կարցայ, զի յոզնած էի :

Եւ անտի ԶԵՅԹՈՒՆ գեղովն մինչ ի կէ-սօրն հաստիք ի լեռու մի յոյժ բարձր, որ կոչի ԽԱՊԱԽ ԹէԲԱՍԻԻ . Եւ հազիւ մինչ իրիկուն 20 Ելաք ի զլուխն : Եւ այս լեռան միջով երթայր ձիհան գետն : Եւ Ֆոնօզ կայր սուրբ եկեղեցի եւ վանք մի . Զէյթուն՝ վեց եկեղեցի եւ վանք մի . Եւ ասին թէ ԾՃ հայի տուն կայր . այժմ երեսուն տուն . զի ցիր ու ցան եւ հալածեալք 25 են եղել ի ձէլալոցն :

Եւ անտի մէկ օրն ՍԻՍ զնայ : Բայց լեռնային եւ քարուտ է երկիրն, չոր եւ սէհիլ . սամփի նարինն, թուրինն . Եւ խոշոր լվեր ու մըժեղք : Եւ ձիհան գետն երթայր լեռանց 30

15 յօթեցաք: — 17 կարդա, զի օգնած: — 21 լէրան: — 30 ժըժղեիք:

Ժիջով, յորում բազում ձկունք կային իբրև գաւառ:

### ԿԵՍԱՐԻԱ

Եւ անտի բազում գեղօքէիւք եւ լերամբք հասաք ի կեսարիա մայրաքաղաքն, որ ունի 35 երկու պարբեսզ, ներսի եւ գրսի: Կայր երկու եկեղեցի ներսն՝ Սուրբ Աստուածածին եւ Սուրբ Մարտին, բայց գետնափոր եւ խուռացաբն տեղիս, որ մէրտիվանօք կ'իջուն եւ ի գոյցտից: Եւ Հինգհարիւր տուն հայ եւ աւելի 40 կայր ի նման, փարթամ վաճառականք եւ խոհայք սենյանի մեծասունք. բայց ազքառան աւելի էր - ոչ լուսնաւշաթ չունին, ամէնն զերծակ եւ խափթանչիք են: Ներսցիք Հայնակ չի գիտեն, միայն տաճկնակ, ֆարսի. իսկ 45 զրաեցիք Հայնակ զիտեն: Բայց Պայտարու տաճիկն իսխոտ չար է եւ վատ. ստվի էմիրք են, Հաւատոց թշնամիք. եւ աւանն չառ է: Տների խոմ քարրիչ է. դույին փոքր, կեղելով մըսնուն. վասն որոյ եւ քազաքն աւել. եւ վէրտան: 50 Աւնի խաներ, ովէզէստան, խանութիւնի, չարչու պատգար եւ ռակերչինոց. բայց ստվառ մարդ ի նման կ'երեւին. մի որ ճէլալին աւիրել էր. եւ մի որ աւնի էմիրի զուլումէ չեն ի զոլ չէնիք անել:

55 Գնացի մօս Գրիգոր վարդապետն, առ որ կացեալ էի. զոր սիրեալ զիս՝ յոյժ ուրախացաւ եւ սիրով զիս ընկալաւ: Տեսի եւրոցք

34 Կեսարիայ: — 35 պարբս(այ): — 42 թէրժակ: — 45 թրացիք: — 49 որու: — 50 ովէզէստան:

Հին եւ նոր ի ներս քաղաքին եւ ի դուրս . այլ  
եւ եկեղեցիք մեծամեծք եւ կամարակապք,  
վիճաշէն : Այլ եւ այն եկեղեցին , ուր սուրբ 60  
Լուսաւորիչն մեր եւ ներսէս հոյրապետն ձեռ-  
նադրեցաւ Դեւոնտիոս պատրիարքէ , որ է մեծ  
եւ փառաւոր . ամէն զամէնն մէջիթ արած է :  
Այլ եւ բազում ուխտաւեղիք կան ներս եւ ի  
դուրսն : Եւ Բարսեղ կեսարացուն սուրբ գե- 65  
րեղմանն քաղքէն դուրս է , յարեւելեան զիւ .  
յառաջն մեծ եկեղեցի էր , այժմ հանգել է . անդ  
թաղին զմնանալս Հոյք . զի քարերն հանել են  
եւ բերդին շէնք են դրել : Եւ ի հարաւակողմն  
պարիսպն դուրսն մեծ եկեղեցի Մեռկերիոսի 70  
զինաւորին . որ եւ գերեզմանն անդ է . եւ նա  
հանգած է . փոքր դուսպա մի մնացեալ է միայն .  
սուրբ գերեզմանին վրայ խորան , զոր ամէն  
երկուշարթի օր ուխտ կ'երթայ բոլոր քաղաքն  
խնկօք եւ մոմեղինօք . եւ մտեալ անդ եւ մեք 75  
ազօթեցաք երկրպագանելով եւ մեղաց թո-  
ղութիւն խնդրեցաք մեզ եւ մեր ծնողաց եւ  
ամենայն երախտաւորաց : Եւ այլ բազում ու-  
կերք եւ մասն կայ անդ սրբոց եւ եկեղեցիք  
յոլովք որպէս ի Ստամպօլ . բայց ուեր , միայն 80  
հշմարանքն կ'երեւան :

Եւ դէմ սուրբ Մեռկերի մզոն մի հեռի  
հարաւակողմ մեծահամբաւ , հոչակաւոր հին  
լեառն ԱՅՃԻԱՅ նման Պուրսու Քէշիշտաղուն  
եւ այլ մեծ եւ բարձր . եւ քանի հաղար տա- 85

72 Հանկած : — 82 Ժիլիլի : — 83 Հարակողմ : —  
84 գէշիչ :

բու ձիւն կ'էրեւի վրան ամսուն և ձմեռն ,  
մինչ յորդեռտած լինէին , զոր անկանէին  
վայր : Եւ ասին թէ բազում կան Եկեղեցիք .  
Եւ աւագ Եկեղեցին մեծ վիճաշէն եւ զմուշ -  
ած թաշէն , մարմարինեայ աներով , եւ այն աւեր :  
Եւ ասին թէ ամէն տարբի ի սուրբ Աստուած  
ածնին օրի քաղաքացիքն կ'ելին ի նա խուրակ -  
նով . եւ մէք կամեցաք ելանել . եւ ասին թէ  
յոյժ բարձր է եւ զժուարագնաց , անտաշ բար  
է եւ ձիւնն վերեւն . ի քարն եւ ի ձիւնն ոտաց  
տեղ է կոփած , պիտոր համրիւք եւ զէսիֆով  
ելին . ասպար թէ ընկնի՝ հազար կառը լինի :  
Եւ ասին թէ խիստ սաստիկ ձիւնամեծ է եւ  
ցուրտ եւ մեծ քառմի :

100 Եւ յայն կոյս լերինն սասորուն Տէ՛կէլլի  
խաստպան է , որ եւ անդ կայ բազում հայ ,  
Եկեղեցի եւ քահանացիք : Եւ հուզ Արծիշու  
Լրկորեակ լեռոն , զոր ԱԼԻ ՏԱՂ կոչեն . բայց  
չառ փոքր է քան զլլրճիաշն . կայ եւ անդ եկեւ -  
ուցիցի մի Աստուածածին անուն . անդ կան եւ  
զէնքն Մեռկեռիսսի՝ յորժամ Հրամայեց Մեռ -  
կերիսս , թէ երթ եւ սպան զհայշհոյիշն որդոյ  
իմոյ , որով եւ սպան զոլիզծն Ռւլիսանս . ևթէ  
կամիս զիտ եւ կարզա Յայսմառուրքն սուրբ  
110 Բարսզի : Կայր անդ եւ սրբուոյն քրոնի Բարսզի  
զերեզման :

Եւ շուրջ զքաղաքաւ բազում այդիք , որ -  
ովէս իտրնու յորով եւ մբաւէտ . եօթն սպա

87 յորզհհասած : — 89 Եկեղեցինն : — 100 այն :  
— 101 Եկեղեցին : — 103 Ժեռկելիսսի : — 109 կարզայ :

խաղող տեսաք անդ : Այլ եւ մարդիկն են Հիւ-  
րընկալ եւ մարդանէր . ամէն օր այդի մի տա- 115  
նէին զմեղ . եւ մինչ իրիկունն մխիթարէին  
զմեղ կերակրովք եւ անուշ ըմպելօք . զի գի-  
նին առատ է եւ լի . եւ մարդիկն քաղցրազրոյց  
եւ անուշախօսք , մարդավարք , խորագէտք եւ  
բանաստեղծք եւ առակախօսք , կատակարարք 120  
եւ ուրախացուցիչք . ապա ներկողք<sup>1</sup> են :

Այլ եւ Վարդապետն ունէր մեծ էզի որ-  
ովէս քաղաք . եւ անդ բազում անդամ զնա-  
ցեալ մինիթարեցաք : Եւ ասին թէ նորու էզին  
տասներկու ազգ խաղող կայ : 125

## ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ

Եւ մերձակայ զեզօրաք ամէն Հայք էին  
չորս կողմ քաղքին : Եւ օր մի հեծեալ ձիս եւ  
այլ ընկերք երթայտաք Սուրբ Կարապետ . եւ  
մինչ անցանէաք զքաղաքն՝ քարկոծէին զմեղ  
քարամբք եւ փայտիւ անօրէնքն . զի ոչ թու- 130  
զուն այլ տավար հեծնաւ՝ զատ իշոյն . հաղիւ  
անկաք ի դուրս : Այնմ ամի եկեալ էր չար  
զատի մի , քրիստոնէից թշնամի . հրաման  
եհան եկեղեցիքն մոմ չի վառել , հարսանիս  
տավուլ զուրնայ չի լինի . եւ ոչ ձիովք շրջել : 135

Եւ հասեալ ի վանք մի Սուրբ Դա-  
նի էլ անուն , յոյժ զեղեցիկ եւ պատվական ,  
պիմաշէն եւ կամարակապ . կայր եպիսկոպոս  
մի եւ երկու մալազ : Եւ անտի զնացաք չարեկ

114, 118 մարդիքն:

<sup>1</sup> Խման՝ էշ ներկողք :

140 միլ մի՞ հասաք Սուրբ Կարապետ, որ էր ի  
վերաց բարձր լեռնեն, զմովէ թաշէն մեծ եւ զա-  
ռաւոր, որ ամէն քաղաքն առջևն կ'երեւէր :  
Եւ վանաց առջեւն լայն եւ ընդարձակ դաշտն  
եւ մեծ օվան որպէս Խարբերթուն . եւ ամէնն  
145 չէնիիք եւ դեղօրայք են հայի . եւ եկեղեցիք եւ  
վանորայք չէն :

Եւ Սուրբ Կարապետու վանաց ներքեւէ  
կ'ելինէր պազ ջուր եւ վազէր ի դաշտն զետա-  
նման : Եւ յոյժ զարժանալի չէնք ունէր վանքն .  
150 զի զիմափոր էր եւ ներքեւն մինչեւ ի քաղաքն  
մազարայք . օթեւանք բազումք եւ տեղիք  
ճզնուորաց որպէս Տօրոսու լեռն ի Կոնիաց  
կամ Մանքէ բժանու . թէ չէրանին, այս է զետ-  
նափորքն : Եւ ասին թէ աստ էր սուրբ մար-  
155 մինն . եւ ասուի զիէնն առեալ Դեւոնդ եւ Լու-  
սաւորչին մերոյ :

Եւ այլ յառաջ մեծ զիւզն Եկաղակիլլ, որ  
իրեք եկեղեցի, իրեքհարիւր տուն հայ : Եւ  
հինգ նետածիդ հեռու զեզն Նիջիլ, որ է  
160 Նիհուլլ, ուր է մարմին արբոյն Գրիգորի Նիւ-  
սացոյ, եզրոր մեծին Բարսոյի : Եւ վանաց ներ-  
քուստ մեծ աղքիւր մի քիւէ . եւ Ելեալ մեծ  
զետ լինի, որ տասն ֆաղացք չուր ածէ . եւ  
զամենայն դաշտն ուսոզէ . անդ կայր երանն լոյն  
165 մարմինն թաղեալ ի զուսն Եկեղեցոյ . զոր  
երկրպազեալ ազօթեցաք եւ մեղաց թոզու-  
թիւն իննորեցաք : Եւ կայր եսրիսկոպոս մի

160 Կիւսիայ : — 163 Քաղաքք : — 164 յառազէ . . .  
կայրի :

Տէլի-Մալաղ անուն եւ հարեղայ մի : Եւ այլ  
բազում վանորայք տեսաք, զօրաւոր եւ սքան-  
չելազործ, վիճակոր եւ սալարակառ : 170

Եւ դարձեալ յարեւելք՝ տեսաք մեծ եւ  
հին եարոյք վիճէ, գետնափոր ի Պայտարի . եւ  
ասին թէ Պաթըլ-զազի կոչեն, ահարկու մա-  
զարայք եւ վիճք ունէր . զոր ասին թէ առաջն  
աստ էր քաղաքն, զոր Կեսար թագաւորն շի- 175  
նեց : Եւ կացաք անդ ամիս մի վասն տեսոյ  
սուրբ վանօրէից եւ այլ ուխտատեղաց :

Եւ ի Կեսարու ելեալ ԵԱԼՆԶԿՕԶՆ հասաք.  
Եւ այնողէս բարձր էր որ երբ ի վայր հայէիր՝  
Թղրլ-Երմախն փոքր եւ բարակ կ'երեւէր . եւ 180  
էր սա Վանատիկու Ռալթայի կարմնանին նման .  
Եւ ի դլուխ կամուրջին ջերմուկ ողնիւ եւ  
քաղցրադլուխ, զի որչափ կամիս՝ ըմպէ,  
շահ ունի :

Եւ հինգ օրն հասաք յԱՆԿՈՒՐԻԱԼ : Եւ ի 185  
ճանապարհին միւսանգամ ոնցաք ի ԶիՇՆԻ-  
ԿԻՐ զիղրլ-Երմախն . բայց հայու գեղ այլ  
շահսաք, այլ սափի թուրքման, զոր ջոկ ջոկ  
հանդիպէին մեղ հօտ հօտ ոչխարօք որ արա-  
ծէին, որպէս յԱրապիստան ուղտք . եւ օր չէր 190  
իինար, որ ժի, իմ ոչխար շահսնէաք, մեծա-  
մեծ զմակօք որ քարչ տանէին զկնի իւրեանց :  
Եւ թուրքմնին եւս շրջէին կանամքք եւ զա-  
ւակօք եսցլանին . բայց կանայք նոցա յոյժ զե-  
զեցիկ եւ փափուկք են, կարմիրերև :

## ԱՆԿՈՒՇԻԱԼ

Եւ եկաք յԱնկուրիս, որ է ողջնտէր քառաք երեքպարսպեան՝ դրսի, միջի եւ վերջի. ուր եւ բերթ կայ վերն եւ եկեղեցի հոռմի՝ Աստուածածին. իսկ միջի եւ ներքինն կան Հայք 5 եւ ութ եկեղեցի քարէ եւ երկուհարիւր տուն հայի: Բայց ամէնքն քաղաքացիք սօֆչիք են. եւ լուր սօվն անտի ելանէ եւ սփուեալ տարածի ընդ ամենայն աշխարհու. եւ միշտ վաճառսկանք նստին անդ ամէն յերկրէ եւ ժողվեն 10 սօֆ, չամլիթ, եազմուրլուխ եւ այլն. եւ զի ամենայն աշխարհէ գնայ դրամնի: Եւ ամէն եկեղեցի ունէր երկու իրեք քահանայ տեղացի եւ դրսեցի, լուսրար, ժամրար. զի Հայաստան քահանայք ժամ չեն առներ, այլ հարեղայք:

15 Ար եւ զսա ձէլսլիքն աւերած էին եւ թալնած. այժմ նոր նորոգէին. եւ էր քաղաքս ի վրայ սքալա վիմի: Ազա սորա լէվէնտքն եւս չար էին:

Եւ ի քաղքէն ի դուրս կայր վանք մի զեղեցիկ, մեծ եւ փառաւոր, չարեկ միւ հեռու, վիմաշէն եւ կամարակապ, զմողէթամեւ. եւ ասին թէ Պաւղոս առաքելոյն շէնքն է. նա շինել եւ ինքն օրհնեց: Առաջնորդ վանաց Աւագ պարսնտէրն էր. ունէր իրեք հարեղայ:

25 Եւ վանից առջեւովն բարակ ջուր մի երթայր, լի ձկամբք: Եւ կացի անդ ամիս մի, զի լէհցիք շատ կային, որովք միսիթարեցաք: Այլ եւ

1 յանկուրիս: — 6 քաղաքացիկ: — 16. 76  
յոյժմ: — 27 միսիթարեցաք:

սորաւ բոլորն իրեք դեղ կայր հայի՝ Աղանօս,  
Պէհտօս, Էրքափսուլիի: Նաև ամէն գեղօրայքն  
ոօֆ կու բանին. առաջ Ալամուխին լաւ է քան 30  
զամէնն. բայց Անկուրու բանին նման չկայ:  
Եւ այս քաղաքու լաւ չոր միս լինի. դինի ապ-  
նիւ, թանձր եւ ախորժ, որ այլ տեղ չի լինիր:

Անտի գնացաք ԿՕՆԻԱՄ: Անտի ԱԽՇԱԲ,  
ԵՆԿԻՇԱԲ, որ եւ անդ կան Հայք սակաւ. անդ 35  
տեսաք դկուն Նարարատինու, վրան քէմէք շի-  
նած. եւ բազում ծիծաղեցաք: Կայր եւ Են-  
կիշարն վիմաշէն եկեղեցի մի. որ եւ զնա  
Պաւոսի չինւածք ասեն եւ օծել: Անտի եկաք  
Սիվրի ՀիՍԱԲ եւ ԽԱԲԱՀԻՍԱԲ, ուստի ա- 40  
ֆիօն կ'ելնէ. որ զարմանալի բերթ ունի եւ  
անառիկ ամրոց, բարձր եւ սարբ որպէս Օս-  
մանճուխին. վաթսուն տուն հայ կայ. քարէ  
եկեղեցի մի. եւ չարեկ միլ դուրսն վանք մի  
գեղն հայի: Բայց եւ նոքա հայնակ չի դիտեն, 45  
ոյլ թրքի լեզուով խօսին. սոքա ամենեքեան  
Անկուրու թէմն են. ոյլ եւ կօնիայ եւ այլքն  
քաղաքն բերթացիք (հայնակ) չի դիտեն.  
զրաեցիք գիտեն:

Եւ այն ամէն աշխարհն սպիտակ այծք 5  
են, սուրու սուրու շրջին. եւ մազն փայլուն  
եւ աղնիւ իրը զապրշում եւ սիրմայ. բնաւ սեւ  
շկայ. եւ ասին թէ յառաջն խիստ շտու էր եւ  
անթիւ. ձէլալիքն զորս սպանին, զորս փա-  
խուցին, զայլն հետ տարան: Եւ կայր քա-  
ղաքս մեծ եարու մի հին, վիմաշէն եւ մար-

մէրէ, պատերն բարձր. և ասին թէ եկեղեցի է. այժմ Հիմն ի վեր էր շրջել. Փրանկի դիր կոյր գրած. չկարացաք հանել:

60 Եւ անտի օր ու կէսն հասաք ի Պէտղիլ-  
ԶԱՐՆ, որ էր պաղառու և մրգաշատ, բայց  
սեխն և ձմերուկն խիստ համեղ որովէս Ամ-  
բոյն. որ և անտի տանէին խօնտիքէրին: Եւ  
կոյր անդ վեց տուն հայի:

65 Եւ անտի իջաք ի ԱՄԲՈՒԼԱՐՆ, որ երկու  
աւուր ճանապարհ առփի պազ ու պախչայ է  
և եմիւշ ծառեր. միջովն ազրել երթայ մեծ.  
Ժինն զեզօրայք են. միւս կողմն եմիշնայ, մեծ  
մեծ սէրկէզիլ, խնծոր, յիկիտէ յոլով, խո-  
70 դոզ, սեխ, ձմերուկ, զոր անցաւորք ճանա-  
պարհորդաց անահ ուստին և լուսկեն, զի վասն  
խէրու անկած է յանցա ճանապարհին:

75 Եւ անտի եկաք տէվրէնթ մի խիստ հա-  
րամաց և մացառուս և լեռնային. և ասին  
թէ յառաջն ձ. Բայ հոգի չկարէր անցանել,  
զէրէ պէլ էր. իսկ այժմ Նասր մաշան նոր  
խաներ չինել է, քարիսնանարանի և բոլորն  
զեղեր, մէջիթնի. այլ և հայ ալ կոյր՝ վաթ-  
ունն, հօթանառուն տուն, և բահանայ և  
80 եկեղեցի: Եւ էր ճանապարհն ձորամէջ և  
զժուարագնաց. և այլ անդ աւազուս. այլ և  
յաւազի մեծ մեծ լեռներ տեսաք որովէս Մըսրն:

Անտի օր ու կէսն եկաք պէլ մի այլ, որ  
սուտել հարամէկնաց էր. և անդ եւս զարմա-

61 օրուկէսն (կրկնուած) որ էր: — 62 յաժթայն:  
— 70 ցրմերուկ զոր յանցաւորք: — 74 լորեացին: —  
77 քարվասարանի: — 81 յաւազուս:

նալի չէնքեր չինել ետուր, խան եւ քարվանն— 85  
սարայ, մէջիթ եւ գեղօրայք՝ նման առաջնոյն,  
նոյն նասըր փաշան. չէնլիք էր արել: Եւ անդ  
կայր հայ:

Անտի երկու ու կէսն եկաք ԻԶՄԻՏ ոկէ-  
լէն. որ մի կացեալ, մտաք ի նաւ եւ անցաք 90  
ԱՏՄՊՈԼ. եւ կացաք երկու ամիս մինչ լէհու  
քարվան եկաւ. եւ ընդ նոսա խառնեալ մեծ  
արապա մի հստաք, իրեք ձիով, չուեցաք ի  
լէհ: Եւ կատարեցաւ երկոտասան ամ պահ-  
գրիստութեան իմոյ: 95

## ՎԵՐԱԴԱՐՁ Ի ԱՎԱՆ

Եւ եկեալ ի Պուղտան՝ տեսի տեեր եւ ո-  
մայի զերկիրն: Եցնազէս մտեալ ի լէհ՝ տեսի  
աւերակ եւ վէրանէ եղեալ ի Թաթարաց. բա-  
զում քաղաք, զեղ եւ աղարակ եւ աւանս եւ  
ամբոցս անմարդաբնակ եւ ոչ որպէս էրէկ Եւ 100  
յեռանդն. զի պեղծ Թաթարքն երկու իրեք  
հետ տարին դային մտանէին եւ ելնէին անահ  
եւ անվախ. այրէր եւ սպանէր, յափշտակէր.  
զայլս զերի տեեալ տանէր յաշխարհն իւր:

## 15. ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ

## ԺԱՄԱՆԱՌԻՄՆ

Եւ եկեալ ի տիրախնամ եւ աստուածա-  
պահ մայրաքաղաքն լէվ կոչեցեալ, որ է իրեք  
արքեպիսկոպոսաց աթոռ՝ լէհաց, լոզաց եւ  
Հայոց:

94 պահախտութեան: — 95 յամայի: — 96 յագա-  
րակ եւ յաւանս եւ յամբոցս:  
1 ի չիք:

Եւ եկին ընդ առաջ մեր քահանայք Եւ ժողովուրդք Եւ մեծարանօք տարան իջուցին ի վանքն Սուրբ Հաճկատար . Եւ մեծ հարկիս արարին Դուկաս պարոնտէրին որպէս Երուսաղէմայ նուիրակին : Եւ նստաւ անդ երկու շարաթ . ապա տարին ի քաղաքն եւ հանգուցին ի դարսպան զարդարած , որ էր եսպիսկոպոսարան : Զի այսպէս սուհմանք էր լով . երբ նուիրակ դայ Երուսաղէմայ կամ Էջմիածնայ , նախ ինու վանքն . յետ իրեք աւուր նստին ԺԲ աղայ երեսփոխանօք եւ քահանայիւք Եւ զրկեն քահանայ մի երկու աղայով առ նոյ , Եւ հարցանեն թէ վասն է՞ր եկել է . ժողովքի՞ թէ ուրիշ բանի : Եւ նա առէ զպատճառն : Եւ թէ ունի վկայական թուղթ՝ տանին վառօք ի քաղաքն . եւ թէ չունի՝ վանիցն ճանփու դնեն :

## ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Եւ կայ քաղաքն մեծ եւ վասուաւոր պիմաշէն կամքարակապ Եկեղեցի մի՝ սաղածեւ խաչանման եւ պարսպաւոր . քարէ վերնատուն եւ կարգաւորաց տեղիք . այլ եւ Դոլրատուն մի մեծ ամբան եւ ձմեռան քարէ . այլ Եւ Գրատուն : Եւ մերձ եկեղեցուն քարէ վախը մի աներ եւ Հոգէտուն մի արանց եւ կանանց : Եւ քաղքէն դուրսն ալ դէմ վանաց մեծ Սրբաւել եւ պատվական :

30 Կ Եւ կայր Դոլրոցն աւելի քան ութսուն աղայ . որք ուսանէին զանազան ուսմունս՝

զԵրաժշտական, ՔԵրական, Առողանութիւն, Թարգմանութիւն եւ զԱրվեստ համարողական: Եւ մեծ Դարպաս մի հոգեւոր դատաստանի: ուր ամէն հինգչարթի նստին ԺԲ ազայ Հետ եպիսկոպոսին եւ աւագիրիցուն: քննեն իմանան հասն, չհասն: այլ եւ դատ եւ իրաւունք առնեն եւ դատաստան հաս ու չհաս: զի ունին էմբեր կաթողիկոսաց եւ Էջու թագաւորաց:

Եւ ի գուրսն կայ իրեք վանք քարէ: մինն Հաճկատար եւ մինն Սուրբ Յակոբ: ունի եւ քարէ դարպաս եղիսկոպոսաց հուպ միմիանց: Եւ Սուրբ Խաչ վանքն մեկուսի, շէն եւ հաստատ: որ ունին հոգէտուն, տնտեսուն, առ խոռնի: երկու իրեք պախչայ: եւ օթեւանք կրօնաւորաց, Հարեղոյից եւ քահանայից եւ այլ միաբանաց: եւ հաւատաւորք եւս կային երկու իրեք ծեր եւ անցեալ զաւորքք: Եւ ունէր մեծ վանքն պաղ եւ ցուրտ ջուր, յորդ եւ առաս:

Եւ քաղքին տներն ամէն քարաշէն, մեծածախ եւ վիմաշէն, կոփածու, լայն եւ բարձր իրեք, չորս դարբազայ: Եւ զետնափոր մազարանի, բիշիցանի քարէ, որ ամառն ըմպելին ցուրտ եւ պաղ լինի: Ամէն տուն ԲՌ, ԳՌ, ԴՌ զուռուշի:

## ՔԱՂԱՔԱՑԻՐ

Եւ կայր քաղաքն եօթանասուն տուն հայի: ամէն տուն երկու իրեք տանուտէր. եւ ի զուրսն վաթսուն տուն օթակախացիք, սա-

37 չի հասն... յիրաւունք: — 39 էմբէր:

60 կաւ տեղացիք։ Խսկ քաղքցիքն պերճ եւ փառաւոր, փարթամք եւ փառաւորք որպէս զիշխանն, պարթեւք եւ աղնաւուրք։ զգեստ ունին մեծագին, քամիս, սօֆ, սկառլաթ, չուխայ եւ սամուր դատակ խատիփայ։ Ոմանք ունէին զիւղք։ այլք աղարակ եւ աւանս։ բայց այժմ չունին, զի անցեալ են տեարքն եւ զեղքն այլոց մնացեալ։ բայց անուանք Հայոց զեռկան ի վերայ զիւղիցն։

Այլ եւ որիշ եւ զատ դատաստան ունին  
70 եւ սուր, որ զհայ զողս եւ զաւազակա կազեն<sup>1</sup> եւ զիսատեն։ եւ ոչ ոք կարէ զատել զՀայք, միայն Հայոց դատաւորքն։ Ապա որք տանուտէրքն են՝ սեւ հազնին։

Եւ չկայ մէջ նոցա արվեստաւորք, այլ  
75 սմէնքն վաճառականք են, մէծ եւ անուանիք։ ունին եւ վէքինի Ստամոզ, Անկուրի, Սպահան, Մօսքով, Կտանսքա, Պօրթուկալ եւ այլն։ Կան ի մէջ նոցա խոճայք, որ ունին ԾՌ, ԿՌ, ԶՌ եւ ՃՌ դուռուշ կամ աւելի։ Ունին մուլքեր, պաղ ու պաղչանի, պաղառու ծառեր, պարտէղք, բուրաստանք, ծաղկաստան եւ վարդենիք։ այլ եւ բարձր սարայք, զարպանի եւ աղբերք յորդարտւիք։ եւ լիճք ի մէջն՝ մէծ եւ լայն, լիճկամք։ զոր ոմանք եւ աշտարակք  
85 եւ սարայնի ունին ի վերայ ջրոյն զարմանաշէն։

62 սղեստ։ — 65 յաղարակ եւ յաւանս։ — 78 կա։ — 81 ծաղկաստան։ — 82 վարթենիք։ — 83 յաղբերք։

<sup>1</sup> Բուռ։ Կազատե պատժել։

ԵԿԵՂԵՑԻՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

Կային եւ քահանայք տեղացիք՝ իմաստուն եւ գիտուն։ այլ եւ եպիսկոպոսք եւ վարդապետք, որ այժմ անցեալ են, եւ մեք թափուր մնացեալ եւ նկուն։

90

Եկեղեցիքն յոյժ վարթամ, մեծապին եւ զանազան զգեստիւք, սկօք, խաչիւք, բուրդվառօք, խաչալամօք եւ այլ անթիւ ոսկի եւ արծթէ անօթօք. զի ամէն հանդիսի օր որիշ զգեստ հանեն եւ որիշ խաչեր. որկիք, բուրդվառնի, վարապուրնի։ Եւ ունի քաղքին ժամն աւելի քան ԲՇՇ չուրջառ, ծածկոցնի եւ այլն, զատ ի վանորիցն. այլ եւ քաղք, ծնծղայք, խնկատուիք։

Եւ կայր հինգ էրէց, եօթն դպիր. վարդապետ մի Ղազար<sup>1</sup>. եւ եպիսկոպոս մի Ատեմիանոս<sup>2</sup>։

Զանկաւկասուն մեծ եւ բարձր նման Այտովովու եւ Երուսաղէմայ. եւ մեծամեծ զանկակը, որ ի հնչելն ի քաղցրանուագ ձայնէն զմայլէին մարդիկ։

Եւ աստ լինէր հաստատ ժամակարգութիւն եւ անխափան սաղմոսերգութիւն եւ սպատարագ, զոր միայն Երուսաղէմ տեսի եւ յլլմիթ։ Եւ ի հանդիսի ուռուրս ուռաշնորդն 110

89 յայժմ։ — 91 ոյժ։ — 92 բուրդառօք։ — 94 ահօթքօք։ — 95 բուրդառնի։ — 98 (այլ) եւ չի։ — 106 ժարդիք։

<sup>1</sup> Ղ. Քարերդիք։

<sup>2</sup> Կը յիշուի 1615ին. էլմ. 24, թղ. 434։

առնէ ժամ եւ պատարագ բազմածախ ևմիփորոնաւ եւ անդին թագիւ, որ ակամք շարեալ եւ մեծամեծ մարզարտով։ Զի անդամ մի հասկցեցուցել էին թաղաւորն Աէհու իրիցնին,  
 115 թէ Հայք թագ մի ունին որ քո խազնան չկայ, ԺԲՌ զուռուչ կ'աժէ։ Զայն զատկին օրն կու հագնի։ Նոյնովէս եւ շուրջառն եւ ևմիփորոնն իւր սարօքն. մինչ զրակալքի չապիկն եւ զպրաց շապկնին ամէնն Փուանկի բան՝ ալթէն-  
 120 սպաս կոչի, սպիտակ, սափի թէլ արծաթի, որ մին հալատկին կանկունն երեսուն զուռուչ է։  
 Զի ամէն տօնի ուրիշ դոյն եւ որիշ զղեստ եւ թագ եւ անօթք եւ արծաթապատ մազաղաթ աւետարանք են. այսպէս Զատկին սպիտակ է  
 125 եւ Մննդեան. Հոգէզալստին՝ կանուչ. Վար- զավառին՝ կարմիր. Աստուածածնին՝ մօն- թաշին՝ սպիտակ եւ զեղին ոէրսէրնի. իսկ սյլ տօնսն սափի զէրպապ աթլաս, քամիսայ խութնի. Աւագ հինգշարթին եւ բոլոր շա-  
 130 րաթն՝ սեւ խատիֆայ եւ աթլասէ շուրջառ եւ այլն. զոր ոչ կարեմ զրել մի ըստ միոջէ. եւ այս բաւ է խմաստնոցն։

## ԲԱՐՔ, ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆՔ ՀԱՅՈՑ

Զորս ի բազմաց սպիտ մի կտմիմ սպատ- մէլ։ Զի են յոյժ ողորմածք, զթածք եւ ար- քատակէրք, զորովազութք, ժամասէրք, ա- զօթարարք։ Եւս առաւել կահայք նոցա վար- ձարարք. զոր բազում զործո եւ վարձս ունին։

117 շուռջառն եւ ևմիփորնն։ — 118 շապիքն։ —  
 130 շուռջառն։

դոր փոքր ի շատէ ասացից լսողաց : Նախ զի քահանայից վախորֆ տներ տան կենալ եւ օլօ-  
ֆայ : Երկրորդ՝ դպրապետ պահեն միշտ վասն  
քարոզի . եւ նառ ունի կէլիր : Երրորդ՝ դպրա-  
պետք պահեն եւ ամէն ամի վճարք առնեն . 10  
նոյնպէս թային կայ շրիթալնուն եւ վահօ-  
րէիցն : Չորրորդ՝ զի թէ ոք մեռանի եւ նախ  
ամէն ժամի , ապա վանօրէից , ապա շրիթալ-  
նուն , ապա դպրատան , ապա քահանայից մասն  
եւ բաժին հանէ ըստ կարեաց . որն տասնական 15  
զուռուչ , որն քսանական , որն երեսնական եւ  
այլն : Հինգ՝ սահմանք է զի որչափ որբ տղայ  
կամ աղջիկ լինի , տարին երկու կամ իրեք  
ոլիտի կարգեն . եւ մայեա միհէզ աղանին տան  
յիսուն զուռուչ՝ տելի կամ պակաս : Վեցե- 20  
րորդ՝ որբ տղաք դրսէն կամ այլ քաղաքաց  
կամ այլ զաւառաց՝ Պուղտանու , Հայտատա-  
նու առնուն կարդացնեն լաւ , սարկաւագ օր-  
հնել տան . ապա քահանայ եւ հարսնիքն օր-  
հնելու խարճն մէկ մարդ ոլիտի առնէ որդոց 25  
որդի . եւ թէ մեռանին նոքա՞ ոլիտի թաղել  
տան եւ զհոռոյ հացն : Եւթներորդ՝ որչափ  
աղքատք մեռանին ի զուրս կամ օտարական ,  
ոմն վասն հոգոյն պատանք , թէ թապութ եւ  
թէ ամէն խարճն եւ թաղում առնել տայ : 30  
Աւթերորդ՝ որչափ այլ քաղաքս վախիր քահա-  
նայ լինի կամ աղքատ եկեղեցի , Լովայ զրկեն  
զգեստ , թէ զիրք եւ թէ այլ բան . նաեւ քա-  
հանային ամ յամէ հախ տան , որ անխափան

11 կա : — 30 տա : — 32 լովա :

35 Ժամակարգութիւնն կատարի : Իններորդ՝ են  
վարթամ խոճայք, որ ի մեռանելն՝ վասն թաղ-  
ման միայն կտակ առնեն ԴՇ, ԵՇ զուռուշ, որ  
է դայլար մատաղի, հոգոյ հանգստի, քառաս-  
նից եւ այլն : Տասներորդ՝ սահմանք է, որ  
40 սուրբ Երուսաղէմայ կամ Էջմիածնայ նուի-  
րակն երբ դայ, մեծ տուրք եւ ողորմութիւն  
կու տան . նախ ոսկի եւ արծաթէ խաչ, ոսկի,  
բուրժառ . ապա չուրջառ եւ այլ զգեստ եւ ԴՇ,  
ԵՇ զուռուշ այլ եւ եկողաց որիշ ողորմու-  
45 թեան դրամ եւ որիշ չուխայ, փիլոն եւ այլն :

Եւ ամէն Կիրակի, Երկուշարթի, Երեք-  
շարթի եւ Շաբաթ օր անխափան պատարագ  
ժամէի քաղաքն . բայց ի վանօրայս ամէն օր . եւ  
պատարագի զուռուշ մի տան կամ մէկ ոսկի :

50 Այլ եւ ունին սովորութիւն ամէն կիրակի  
առանց աղքատաց հաց չուտել : Տանին զկար-  
դաւորս ի տուն, մեծարեն . ոմանք ի տուն ա-  
ռաքեն կերակուր . օտարաց բնակութիւն տան .  
զմերկս զգեցուցանեն . հիւանդաց պէտ առ-  
նեն : Եւ զի ձմեռն աստ մեծ եւ խիստ լինի,  
բաժանեն աղքատաց մորթէ զտակ, մուշտակ,  
չուխայ, բարուճ եւ այլն . եւ զնեն յոլով  
փայտ, զի փուռ վառեն եւ տաքանան : Եւ սո-  
վորութիւն է որ ամէն տարի կու դան ամէն  
55 աշխարհէ ժ, ի եւ լ աղքատ . զի Աղցացն ա-  
մէն օր մեծ տուրք եւ ողորմութիւն տան . արք  
եւ կանայք, ծերք եւ տղայք, Երիտասարդք եւ

40 Էջմիածնա : — 43 բուռզառ . . . չուրջառ : —  
48 ի չիք : — 54 հիւանաց :

կուսանք ամէն օր ժամ դան եւ բաժանեն  
տուրք քահանայից, կարդաւորաց եւ աղքա-  
տաց :

Զի սահմանք է նախնեաց մեծի եւ փոքու  
մինչեւ կաթնասուն տղայոց Զատկին հաղոր-  
դիլ: Թէպէտ ամենայն հանդիսի տւուրա հա-  
զորդին, այլ Զատկին առ հասարակ պարտին.  
Եւ թէ ոք մինց անհաղորդ՝ մեծ ամօթ է:

Եւ յԱւագ հինդշարթին ոմանք Ժ, ի շա-  
ողիկ բաշխեն աղքատաց այլք՝ բարուչք կամ  
չախչիրք. Եւ որք մեծասունք են Ժ, ի, լ չու-  
խայ բաշխեն. այլքն՝ զտակ կամ այլ ինչ: Եւ  
ոյսպէս ուրախացուցանեն զկարդաւորս եւ 75  
զարդատան՝ ուտելով, ըմպելով, զգեստովք  
եւ այլովք միսիթարութեամք: Եւ յետ Զատկին  
յորժամ կամին դնալ (աղքատք), առն ըստ  
մարդուն խարձլիս եւ սիրով ուզարկեն:

Դարձեալ կու զան ամէն ասրի ժողովա-  
րարք՝ վարդապետք, եպիսկոպոսք, քահա-  
նայք, հարեզզայք, այլ եւ աշխարհական պար-  
տատէրք, զերետէրք եւ այլք թէ վանք կու  
շինեմք, այլք թէ եկեղեցի: Զամէնն մահրում  
թողուլ չեն. տան Ժ, ի, լ, ի, Ծ զուռուչ. այլ 85  
եւ հաղցնեն ոտաց մինչ ի զլուխ եւ սիրով ա-  
ռաքեն:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՔԱՂԱՔԻՆ

Եւ քաղաքս այս է մարդաշատ, յոյժ բա-  
րելի եւ մրգաւէտ: Եւ ասին թէ ի յիշաց աշ-

71 շաղիք: — 72 այլ: — 76 ուտելիք: — 83  
գէրէտէրք:

1 բարէլի:

խարհս այլ քառլաք չկայ սորու նման . եւ է  
թախտ : Քաղքցիքն ովերճ եւ փարթամ . պէզէո-  
տանն եւ խանութնին բարեօք յի . եւ ամենայն  
ինչ առատ . եւ զինչ ուղես՝ Լով դտանես :  
Ունի բազում եւ ազգ եւ ազգ փէշաքարնի եւ  
արուեստաւորք , ոսկերիչք , զարնիշանչիք ,  
դալէմքէրնի , քարաղործք , քարակոփք եւ ի  
10 վերայ մարմարի քանդողք եւ այլք : Վասն որոյ  
ամենայն աշխարհաց , գաւառաց զան անտ ,  
որուս դտանեն հազիր եւ զորս բանել տան :

Նոյնպէս հեծելազօրք եւ զինուորք , իշ-  
խանք , պարոնայք դան եւ անդ զնեն զէն , զրէ՛ւ ,  
15 սաղաւարտ , ձէպա , մզրտիս , զեղարդ , թու-  
ֆաք , թօք , նետ , ազեղ , ասպար , թուր , նա-  
հախ , պալթայ , խալխաս եւ այլն . որ ինչ պէտք  
է սպատերազմողաց , աստի տանին : Թէ եւ ձ՛՛ն  
զինուոր զայ՝ զտանէ զոր ինչ եւ կամքի , զի մեծ  
20 շահրիստան է : Ունի եւ խափդանձիք , եօր-  
դանձիք , սախզիանչիք , պօյանձիք , խուչիք ,  
շէմպէրչիք եւ ազգ եւ ազգ ջուլահակք , չառր-  
ճիք եւ այլն . պասմանձիք , ոսկի հալողք , ոսկի  
ծեծողք նախաշաց : Այլ եւ սպատերազործք ,  
25 նկարագիրք , պատկերահանք , պասմագիրք  
հանողք Լէհաց , Բոզաց եւ Հայոց <sup>1</sup> :

<sup>1</sup> Ազէզէստանն : — 10 քանթողք : — 22 չուլահակք :

<sup>2</sup> Լվովի Հայոց ապարանը բացուած էր զրութենէս և  
բրկու տարի յառաջ , 1616ին , Յովհաննէս Քարմաստ-  
նենց Բազիչեցի երէցի ձեռքով : Տոպարանիս առաջին  
եւ վերջին ծանօթ հայուսաւ հրատարակութիւնն է զած  
է Սաղմոսարան մը , որմէ օրինակ մը կը դանուի Վէ-

Ունի իրեւք տակ պարփռոց ուլիս պրջերով .  
և ամէն պուրձն թօրեր : Եւ կայ բարձր զի-

նեամիկ Միսիթարեանց Մատենագարանի մէջ, Հետեւեալ  
ճակատով . և Ծիչառակարանով .

### ԱԱՎՄՈՍ Ի ԳԱՅՆԻԹ

ՏՊԱՐԴՐԵՑԱԽԻ Սազմուարանը ի կազմարանն Քար-  
մտանենց աէր Յովհաննիսին . թվին մարդեղութենէն  
Տեառն ՌԶՃԺԶ և . Հայոց մէծաց թկենին, գեկանմբէր  
ամսոց ժե :

«Ամենակարոզ զօրութեամբն Ասոււծոյ կազմեցաւ  
նոր տպապիրս երկիրն Խլախաց քաղաքս լէզ կոչեցէալ,  
ընդ Հովհաննաւ Նեշման սուրբ Ասոււածաննին ձեռամք  
յաջնամեկ Քարմատանէնց Յովհանէս երիցուս, զոր  
հոգու արեալ մէծաւ . աշխատութեամբ և բազում ծա-  
խիւք ամրի մի բոլոր արուեստաւորաց հետ զատեցա  
մինչեւ զիրն ի գլուխ հանի և . նոր կազմարան սահ-  
մանեցի . և վասն փորձի նախ զերդուն Դաւթի մարդա-  
րէն տպապիրեցի ի օպուս և . ի Հան տառաւանէր ա-  
զօթօգաց մերասեւ ազանց, զոր եթէ հաճիլի լիցի կա-  
մաց ձերոց՝ Տեառն վառք :

Արդ եղեւ զրաւ սորին թվականութեան Հայոց  
մէծաց թկեն ամին . յամսեանն զեկանմբէրի ժե . և . ի  
Տեառն ՌԶՃԺԶ ամի . ի Հոյրապեսութեանն էֆմիամնա  
սուրբ յաթուոյն կենորանի նահատակին տեառն աէր  
Մելքիսեդէկ կաթուղիկոսն . այլ և . Կիլիկիցս զաւարի  
Տէր Յովհանէս քաջ բարունազեմտի . ի սոցին ժամտ-  
նակս Հանգիպեցաւ կատար սորին . այլ և . ի թագաւո-  
րութեանն քրիստոնէից լէ և ազգին բարեպաշտ արքացի  
երրորդ Զիկմունդին . զոր Տէր ինքն անսասան պո-  
ւացէ :

Արդ աղաջէմ զամենեսեան որ Հանդիպիք այսմ  
զրիս, յիշեսիք ի բարի և . զծնողս իմ ի Քրիստոս  
Հանդուցեալ Բազէցի Քարմատանէնց զՄուրատն և .  
զմայրն իմ զլննաւ . այլ և . զպապն իմ զոտէր Աթունու քա-  
հանացն և . զամենացն ազգային իմ . և . նա ինքն, որ  
տառան է ի տուրս բարեաց, կրկնակի բարութեամբ  
զփոխարէն պարզեւեացէ մէզ . և . թողութիւն շնորհեացէ.  
յանձնանաց մերոց և . ձեր սուրբ ազօթիւքն զմեր  
ջնջեացէ . այլ և . զննջեցեալսն մէր խոչին լուսոյ և .  
երկնից արքայութեան արժանի արտացէ, որում վառք  
յաւրիսեան ամէնց :

Ունի 478 էջ (առանց իջանամարի) : Գտնուած է  
Հ. Յ. Զոհրաբեանէ ի Անիաթին (բառ Գեր . Աղոնցի՝ ի

մաշէն Սահաթի տուն, որ կոչի Ռաբուլ, որ  
 ունի մեծ սահաթ վերեւն. եւ ամէն սահաթի՝  
 վող հարկանեն. ուր եւ դատարան է Լէհաց եւ  
 Հայոցն: Կան եկեղեցիք եւ քլաշթօրնի, որ են  
 վանք, արանց եւ կանանց՝ մեծամեծ եւ զի-  
 մաշէն, առանց գմբէթի:

## ԼԵՂՈՒ ՀԱՅՈՅ, ԱՆԵՑԻՔ

Եւ Լովայ Հայքն հայնակ չի զիտեն, այս  
 լէհակ եւ խրչակնակ զրուցեն, որ է թաթրի  
 լիզու: Եւ ասին թէ յԱնիու եկած են տեղացա  
 Հայք. եւ զի ըստ պատմագրաց երկու բաժին  
 ևզեալ՝ մինն եկեալ ի Քաֆոյ եւ Ախքէրման,  
 որ զեռ կան ի Սուլումանաստր եւ Հայնակ  
 զրուցեն. եւ Անկուրիայ եւ անտի ի Ճէհ: Եւ  
 այս չէ նախաստինք, եթէ են Անիցիք. զի զքա-  
 զաքն եւ զմնացեալս անիծեց եւ զելեալսն օր-  
 հնեաց, որպէս ի հինն զՍովոմ եւ զԳոմոր ա-  
 նիծեց եւ զՂովտ իւրովքն փրկեց. նոյնպէս  
 զԱնի չար բնակչօք կործանեց եւ զբարիսն ենան

35 Լովա: — 43 անիցից:

Սպանիսլան). հմմա. Պատմութիւն Հայկական տպա-  
 գրութեան սկզբնաւորութենէն մինչ առ մեզ. վենետիկ  
 1895, էջ 64—67. Հ. Դ. Ալիշան, Կամենից, 171—172.  
 Դեր. Սատկանաս Գիւղէր Ա. գ. ո ն ց, Աշխարհագրութիւն  
 չորից մասանց աշխարհի. Մասն Բ., Հատոր Բ., Վե-  
 նեակի 1802, էջ 135—136. Հ. Մ. Բ. Ժ կ ե ա ն, ճանա-  
 պարհորդութիւն ի Լեհաստան, Վենեակի 1830, էջ 99—  
 100: Մեր յառաջբերութիւնը եզած է Աղոնցէն, լրա-  
 ցուած «Պատմութենէն»:

Բժշկեան (էջ 100) կը զբէ թէ քի 1705 տպագրե-  
 ցին Սաղմոս մի թաթարերէն», նո՞յն տպարանին մէջ,  
 նո՞յն զքերով:

ի նմանէ . որպէս զեռյ ասպրեցոյց եւ աշխարհս  
ամենայն կորոյս . եւ այս բաւ է իմաստնոց :

ԲՆԱԿԻՉՔ ՔԱՂԱՔԻՆ

Եւ Լէհքն են լաւ քրիստոնեայք . բայց  
Օռուսն չատ է քան դԼէհ , տասնակատիկ , որ 50  
են հոռմի գաւանութեամբ եւ Ստամպօլայ պա-  
տրիարքին թապի . եւ Լէհք՝ Փափին : Բայց  
հերձուածողքն բազում են եւ ազգ եւ ազդ , ուր  
Լութէր կոչեն . կան եւ Արքանոսք եւ այլ չա-  
րաչար հայհոյիչք , որք են ԺԴ , ԺԵ ազգ , մի 55  
քան զմի չար . զոր ոչ թէ զօրէնս նոցա կամ  
զհաւասա յիշելոյ է , այլ եւ ոչ զանուանս . զի  
քան զշրեայս եւ զջաճիկս վատթարապոյնք են .  
Եւ այս աշխարհս բնաւ հոռոմ չկայ . միայն  
Լով երկու իրեք տուն հոռոմ :

60

ՀԱՅՔ Ի ՔԱՂԱՔԸ ԼԵՀԱՍՏԱՆԻ

Կան եւ այլ քաղաքնին սակաւ հայեր , որ-  
պէս կամէնից , Եազլովցաւ , Զամոսցաւ , Լուց-  
քաւ , Մանքէրման : Առաջն Լուցքան ԲՃ տուն  
էր , գեղեր , ազարակնի ունէր եւ չատ վա-  
խրֆք եւ անդ էր յառաջն աթոռ . այժմ եր-  
կու տուն է հայի . բայց քարէ եկեղեցին եւ  
գեղն կայ դեռ : Եւ մեծն Մանքէրման տախն  
թէ յորժամ սէֆէր լինէր , հինգհարիւր հոգի  
կ'ելէր Հայոց ի պատերազմ , եարար պահա-  
տուրնի . եւ այժմ չորս տուն հայի մնացել է . 70  
բայց չատ խանութնի , վախրֆ տներ , ջաղացք ,  
արտեր , պախչանի եւ այլք դեռ Հայոց ձեռքն

51 պատրիազմին : — 58 զէրէայս : — 60 հոռիմ :

է . զոր եւ անող լովայ աղանին եւ ի լուցքան  
էրէց են դրել . օլօֆայ կու տան նոցա եւ չէն  
75 կու պահեն :

Են եւ այլ հին քաղաքնի հին , յորս կային  
Հայք , որպէս Պէլզայ , Վիլնայ , Վոլոտիմիք եւ  
այլ գեղօրայքն որ բնաջինջ են եղել . միայն  
նշամարանքն կ'երեւին . եւ թէ վասն է՞ր , ոչ  
80 գիտեմ . կարծեմ թէ վասն մեղաց կամ նզովից  
սուրբ հարց . զի ամէն ազգ աճեն եւ բազմա-  
նան . իսկ մեք ջնջիմք եւ նուազիմք . վա՛յինձ :

## 16. ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԻՄԵՈՆԻ

### ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Իսկ եռ եկեալ լով եւ նստեալ երկու ամիս .  
աեսեալ զիս բարեկամք իմ եւ սիրելիք , յոյժ  
ուրախացան . եւ սկսան յորդորել զիս մնալ  
յաշխարհս իմ աստ եւ ամուսնանալ . բայց ես  
5 ոչ յօժաբէի եւ ոչ կամէի մնալ , որպէս թէ  
իմանայր հոգիս : Քանզի յիշէի զայն աշխարհ  
եւ զբարելի երկիրն . այլ եւ զմարդիկն լաւ եւ  
բարի քրիստոնեայք , մարդասէր եւ հիւրա-  
սէր . նաև զսուրբ վայրքն՝ զԵրուսաղէմ ,  
10 զլուրբ կարսպետ եւ այլն , որ է երկրի երկիրն  
եւ զբախտ Աստուծոյ . մորմոքէր սիրո իմ եւ  
դալարէին աղիքս , որ այնպիսի սրբութեանց  
զրկեցայ եւ փառաց անկայ . եւ եկի աշխարհս  
այս վշտալի եւ ցրտային :

15 Եւ իրեւ բազում ողոքանօք ստիպէին ,

ոյլ եւ կշտամբէին զիս լսել նոցա . Բաւական է , առեն , պահողիստութիւնդ այսչափ եւ օտարութիւնքդ , զոր կրեցեր . Հաւանեաց մեզ եւ մի ի սպառ ձգեր զմեզ ի սուդ եւ ի տրամաւթիւն : Քանզի ունէի Երկու քոյր եւ քրորդիք 20  
եւ այլ յոլով ազգականք . այլ եւ տեսեալ զհայրենի տունս եւ զբնակութիւնս , զստացուածս եւ զայլս՝ խանզադատեցայ եւ ի դութ անկեալ կամաւորեցայ մնալ առ նոսա :

Եւ մինչ դեռ Պուկաս պարոնտէրն անդ էր՝ 25  
իսկոյն նշանեցին զիս ընդ աղջկան միոյ <sup>1</sup> : Որ  
եւ յետ սակաւ աւուրց զնաց Պուկաս եպիսկոպոսն յԵրուսաղէմ : Եւ ի թվին Ծիլժ (1620) ,  
Օգոստոս ժի , յետ Նևջման Ամենօրհնեալ Աս-  
տուածածնին պսակեցայ եւ Հարսանիք արի : 30  
Եւ սուեալ զկենակիցս ի Լովայ տարայ զնա ի  
տուն հօրս իմոյ եւ ի սենեակ մօրս ի Զամոսցա  
սիլասիմ :

ՍԵՄԵՐՆ՝ Ե ԶԱՄԲՈՍԱ 1620—1624 :

Եւ կացի անդ հինգ ամ : Եւ յետ ամաց ինչ  
բազում անցք անցին ի գլուխս , այլ եւ յոլով 35  
չարի եւ փորձանաց զիսկայ . վիշտք եւ նեղու-  
թիւն զափ ես եղկելիս ի զաւառս իմ , ի տուն  
եւ յազգատուհմիս , ի չար եւ ի յազիրատ

21 ուսպ : — 22 խանթադատեցայ : — 23 կամաւորե-  
ցայ : — 24 ամէնօրհնեալ : — 25 ի (Լովայ) չիմ : — 32  
ի զամոսցայ : — 35 յանցք : — 36 զիսկա :

<sup>1</sup> Ակմէնն կը նշանուի 1619 Աւոյս . 12ին . իր նշա-  
նածն էր Նասղութանա , Քէվորովից Ետաքոյի դուստրը  
(ահ'ա Յառաջարան) :

մարդկաց : Զոր յառաջն սիրով ընկալան եւ  
 40 պատվով մեծարեցին եւ յետոյ վնասք մահու  
 եւ գժոխոց ի վերայ իմ եղին . եւ ոչ թէ մի ոք  
 կոմ երկու , այլ ի բազմաց եւ յոլովից , մա-  
 նաւանդ ի կարգաւորաց . զի ոչ ոք մնաց , որ  
 զիս ոչ եխած . ըստ բանի սուրբ Աւետարանին .  
 45 Ոչ ոք է անարդ թէ ոչ ի տան եւ գաւառի եւ  
 յազգաստոհմի : Զի որպէս Հրեայքն Քրիստոսի  
 արարին , յորժամ աւանակաւ դայր յԵրուսա-  
 լիմ , ընդ յառաջ ելեալ ծերք եւ տղայք ոս-  
 տովք ձիթենօք եւ արժաւենօք , ովսաննաւ զո-  
 50 չելով , մեծաշուք պատվով մուծին ի քաղաքն .  
 բայց յետոյ նախանձու վառեալ՝ ըստ այնմ թէ  
 Նախանձ տան քո եկեր զիս , զամենայն չարիս  
 անցուցեալ ի զլուխ նորա , որպէս զրեալ կայ՝  
 Հանին ի խաչ : Նոյնպէս եւ զապիրաստ բա-  
 55 զում սիրով եւ մեծարանօք ընկալան . առա-  
 նախանձու Հարեալ ոմանք , ըստ այնմ թէ Նա-  
 խանձու բանսարկվին ևմուտ մահ յաշխարհս ,  
 առէին . Սա է ժառանկ , եկայք սպանցուք , ար-  
 տաքս ընկեցուք , զի ոչ կամիմք զզորա կար-  
 60 դաւորիլն . եւ դոչէին՝ Ոչ զիտեմք զքեզ , ի  
 բաց զնայ ի մէնջ , ով չառաշրջիկ , որ թողեր  
 զտուն քո եւ զնացիր օտար երկիր , հեռացար .  
 այժմ դարձեալ՝ կամիո տիրել եւ ժառանկել  
 զթողեալն քո օտարաց . զի այլք էին տիրա-  
 65 սլիտել եւ ժառանկ եղեալ , զիս յիմոցն ի  
 բաց ընկենուին , կամակից առեալ զիւրեանց

43 որ ոչ : — 46 ազգաստոհմի . . . Հրէայքն : —  
 49 յարժաւենօք , յովսաննաւ : — 64 յօտարաց : — 66 զիւր:

սիրելիս. եւ կատարեցաւ առ իս բանն, թէ  
Մարդարէ ի գաւառի իւրում պատիւ ոչ ունի:  
Եւ միշտ զայն առէին. է՞ր չնստար, այլ թո-  
ղեր տեղու ու զնացիր, այժմ զարձեալ եկիր. <sup>70</sup>  
զի՞նչ կամիս, եւ թէ զի՞նչ շահ եղեւ քեզ այդ  
շափ ըրջելդ, յԵրուսաղէմ զնալդ. թէ աստ  
էիր՝ վաղ քահանայ էիր. զի՞նչ օգտեցար: Իսկ  
ևս շիւարեալ պալահճէի եւ ոչինչ տայի նոցա  
պատասխանի. քանդի եւ զազդատոհմա իմ <sup>75</sup>  
զարձուցին յինէն. զի ես որպէս զարիս էի եւ  
նոքա տեղացիք: Եւ էի միշտ եւ հանապաղ  
տրառում եւ ի սուդ. Եւ ոչ զիտէի վասն է՞ր եւ  
ուստ եհաս ինձ այս չարիք. եւ ապա իմացայ  
եւ ծանեայ, որ վասն իմ ծովացեալ մեղացս՝ <sup>80</sup>  
Հասին ինձ անօրէնութիւնք եւ ևս ոչ կարացի  
տեսանել. Զի հատուցին ինձ չար ընդ բարւոյ.  
Եւ թէ Բազում եղեն քան զհեր զլխոյ իմոյ  
ոյք ատէին զիս ի տարապարտուց. Եւ Զոր  
ինչ ոչ զիտէի՝ հարցանէին ցիս. Եւ Բան անօ- <sup>85</sup>  
րէնութեան եղին ի վերայ իմ. մատնէին,  
զրպարտէին, հարկանէին եւ գատաստան մա-  
հու կացուցանէին, թէ դու չի պիտիս մեզ եւ  
ոչ ևս պէտք, զի մեք ունիմք քահանայ. Եւ Ես  
եղի որպէս մարդ որ ոչ դոն խօսք ի բերան. <sup>90</sup>  
Եւ թէ Որպէս մեռեալ յաւիտենից. Եւ թէ Որ-  
պէս մարդ առանց օգնուկանի. Եւ Զոր ոչ  
յափշտակեալն էի՝ տուժէի նոցա. Յարեան ի  
վերայ իմ վկայք չարեաց. այլ եւ առէին Այո՛  
այո՛ տեսին աչք մեր:

Բայց ևս համբերելով համբերի Տեսան եւ հայեցաւ առ իս . եւ առեմ . Տեսեր Տէր , մի լուր Տէր , մի բ . . .<sup>1</sup> : Բարեկամք իմ եւ մերձաւորք իմ Հետի եղեն յինէն . այլ ես ԶԱՄԱՍՏԱՄԸ 100 յիշեցի եւ ուրախ եղէ . միսիթարեցայ եւ կեցի . ՅԱՄԱՏՈՒՄԸ յուսացայ եւ ոչ երկեցյց , զի՞ արացէ ինձ մարդ : Վասն որոյ ես զայս ամենայն յանձն առի , Զի Տէր է որ արդարացուցանէ եւ դատապարտէ . Տէր խոնարհեցուցանէ : Եւ Տէրն առէ թէ Յաշխարհի ասս նեղութիւն ունիցիք . եւ թէ Համբերութեամբ ստասջիք զողիս ձեր . զոր եւ Պատզոս առէ թէ Որք կամիցին առառածագաւութեամբ ի ՔրիստոսՅիսուս կալ , 110 ի Հալածանս կացցեն : Եւ ընթերցեալ զոռորր Գիրս առի զմարդարէն Դաւիթ ի խրատ , թէ Ապրեցո զիս , Տէր , ի մարդոյ չարէ : Թէպէս մարդարէ էր եւ թագաւոր , երկնչէր ի վատաց . եւ յամենայն աղաչանս զայս ինողրէր , 115 թէ Յառնէ յանիրաւէ եւ չարէ փրկեալ զիս . եւ թէ՝ Ի մարդոյ մեղաւորէ , նենկաւորէ փրկեալ զիս Տէր . եւ թէ՝ Նեղութիւն եւ զանձկութիւն զտի : Այլ եւ տեսայ զի լաւ է կեանքս չարշարիլ , անարդիլ , արհամարհիլ , քան թէ փառաց 120 եւ մեծութեան Հաստիիլ . այլ եւ զտի ի սուրբ Գիրս , զի ամենայն ընտրեալք եւ սուրբքն Առ-

100 կեցի : — 101 աստան ուսացա . . . երկոյց : — 106 այխարհի : — 110 ընթերցեալ : — 112 ապրեցյ : — 113 ի (վատաց) չի՛ : — 117 (փրկ) եա զիս չի՛ :

<sup>1</sup> Պէտք է լրացնել «Ճի ի բացեայ տանիբը յինէն» . Սպա . լՂ . 22:

առւծոյ՝ սկսեալ ի մարդարէից, առաքելոց, հայրապետաց, թագաւորաց, մարտիրոսաց եւ ամենայն մաքուր անձանց, զի ոչ ոք ի նոցանէ եղեւ ընդունակ վառաց կամ պատռոյ, այլ բա—<sup>125</sup> զում նեղութեանց, չարչարանաց, զվուանաց եւ ազդի ազգի տաճնջանաց - բայց նոքա անմեղք էին եւ բազում բարեաց արժանի. միայն վառն անուանն Քրիստոսի կրէին. իսկ ես արժանի ոյսմ եւ առաւել քան զայս. քանզի զԾէրն իմ՝<sup>130</sup> բարկացուցի չար եւ զազիր գործովք իմովք եւ մեզօք զանազան եւ ազտեղի զիզեցի, բարդեցի զմեզս ի վերայ մեզաց. եւ յանցանք իմ հեռացուցին զիս ի շնորհացն Աստուծոյ եւ ամենայն խնամոցն, որոց արժանիս եմ.<sup>135</sup> վա՛յ ինձ :

## ՄԱՀ ՏԱՐԱՖԱՄ Ի ԼՈՅ.

Եւ ի թվին մ. ՀԲ (1623) Եղեւ մէծ եւ սաստիկ մահ աշխարհս Լէհաց եւս առաւել լովքադաք : Յորմէ փոխան ամենեքնան այլ եւ այլ տեղիս, ի քաղաքս, զիւլո եւ այլն : Իսկ այլք եկին տնով Զամոսցա, զորս ոմանց եւ ես ընկալայ ի տունս իմ . ընդ որս կացաք սիրով մինչեւ զնալոյ ժամին : Զոր տեսեալ զիս ազաշուէին, թէ Դու տեղացի զոլով եւ ուխտաւոր, այսչափ սուրբ տեղիս տեսեալ, այժմ այլք զքո առաջն են առել . մէք երթամք իսօսիմք<sup>10</sup> ազայից եւ զքեզ առ մեղ բերցուք . զու մեղ լայեխ ես եւ ոչ դոցա : Որովէս եւ արարին իսկ :

123 ի չլիֆ : — 132 բարթեցի : — 133 անցանք :

1 ի թվ : — 3 ամէնէքան :

ՀՐԱՄԱՆ ԼՈՒՅ. 1623. ՕԿՈՍԻ. 17

Եւ մինչ մեք յայով ցառան եւ բարկու-  
թեան մահապատճենն էաք, եկն լովայ բօխ  
15 եւ զուժ կոկծալի, թէ յառուր ննջման սուրբ  
Առողութածնին կիրակէի օրն մեծ կրտկ ան-  
կառ ի լոյ, Քրաքոյի դուռն զուրսն. Եւ սյրե-  
ցաւ բոլոր ամէն աներն քանի Հարիւր. Եւ հա-  
սկալ Հայու վոզոցն՝ սյրեց, Հրդեհց զամէն  
20 մահաբան. սյրեց եւ զԱրիթարի մեծ եւ բազ-  
մածախ, որ վայու մի չի մնաց. անսի եկաւ ի  
մեր վանքին վրան եւ զՔօշքերն սյրեց. եւ զի  
ինքն քարէ էր՝ մնաց. առա զՃնտեսունն,  
զԱխորին, Հարեզայից բնակարանն, զՊագ-  
25 չանին եւ զԲաղանին, Քօշքերն եւ Աեզնա-  
տեզն ամենայն սյրեց, ուուր զետին արար-  
բազում վեռա եղեւ Հայոց :

Այրեց եւ զԲողի վանքն աներով : Ազա-  
գնաց Հուրին ի միւս վանքն Սուրբ Խոչ եւ Հրկէդ  
30 արար աներով եւ պազայովք : Նաև զՀրէից  
քանի Հարիւր տուն սյրեց : Եւ բացաւ մեծ  
մայուսն եւ Եղեւ որովէս զաշտ : Բայց վլուս  
չեղեւ քաղքին : Այսպէս կրկին պատիժ կրեց  
Լով քաղաքն, մահու եւ կրտկով : Փա՛ռք Աս-  
35 տունոյ : Զի մահն զմարդիկ յոլով ֆնֆեց. Եւ  
կրտկն զաներ : Եւ իրրեւ անցաւ ցասումն մա-  
հուսն, սկսան զնալ ի լով զկեր տօնին, յա-  
ւուրու ձմեռնայնոյ եւ անձանձիր զոհանեա-  
լով վառաւորէին զԱստուած, որ փրկեցան ի  
40 պատճէն :

15 առուր: — 22 զակիք: — 30 անէրով: —  
35 զմարդիք: — 37 առուրու:

ՍԻՄԷՌՆ ՓՈԽԱՎԴՐԻ Ի ԼՈՎ. 1624<sup>1</sup>

Արդ այժմ սկսայց դարձեալ յառաջարկեալ բանն մեր. որ գնացեալ Զամոսցա վախեալքն ի Լով, եւ զամենայն հասկացուցին քահանայից եւ աղանուն: Եւ նոքա ժողովեալ զծերակոյտն եւ զամենայն ժողովուրդն ի խոր 45 հուրդ՝ զրեցին ինձ, զի երթայց ի Լով առնոսա: Իսկ ես վութով հասեալ՝ ասեն ցիս կամիմք զի զաս աստ, տղայս մեր ուսուցանել. տաճք քեզ տարին ԳՃ զլօթի, զատ եկեղեցոյ ժամուցէ եւ այլ եկամտէ, որ զան քեզ ի 50 քահանայից եւ ժողովրդոց. այլ եւ մահու կենաց լիցի քեզ կէլիր: Եւ ես կամաւորեցայ. Եւ արարաք թուղթ ու դիր մեր մէջն. եւ զատաստանի մօհր կոխեցին թղթին վերայ: Եւ տիֆին ինձ տանն զլօթի որ զնամ տունս բերեմ: 55 Եւ ես քանզի զահրով էի՝ ծախեցի զսունս ու տեղս եւ զամենայն ինչ. եւ առեալ զկինս եկի լէվ, թվին ՌՀՂ (1624), Օգոստոս ԺԵ: Եւ վարագայ Խաչին<sup>2</sup> թէսլիմ արին զԴապրատունն եւ զտղայս: Եւ տիֆին ինձ քարէ տուն ի Շրի- 60 թալի՝ կենալ առանց վարձու. որոց Տէր Առառած վարձահատոյց լիցի եւ որք շինեցին զայն տներն, որ մեք հանկաք եւ դուրացաք. ուարոն Տօնաւագն հանդէի արքայութիւնն, զի

42 զամոսչա: — 52 կէլիր... կամաւորեցա:

<sup>1</sup> Այս հատուածը Զեռագրին մէջ կը զանուէր էլ 380, տող 2էն ետքը. փոխադրեցինք այստեղ, ինչ-

<sup>2</sup> Սկզբամբէր 26:

65 նորաւ է վախսըֆ : Այլ եւ երախտաւորաց եւ  
բարերարաց մերոց Տէր Աստուած՝ ողորմեացի .  
եւ նմա զիա՛ռք յաւիտեանո . ամէն :

17. ԱՐԾԱԿԱՆՔ ՍՈՒԼՏԱՆ ՕՍՄԱՆԻ Ի  
ՎԵՐԱՅ ԼԵՀԱՅ . 1622

Դարձեալ ի թիւ . Հայոց ՌՀԱ (1622) եւ  
Հոգին հարաւային , հպարտ եւ զոռող , փքա-  
ցեալ եւ լցեալ հոգմով չարութեան՝ Օսման  
անուն , որդին սուլթան Ահմատին , որ ուս-  
5 մանէ սաղայելեան , խորհեցաւ խորհուրդ չար  
եւ զաղիբատութիւն վասն քրիստոնէից , մա-  
նաւանդ Լէհցոցն՝ զալ ի վերայ նոցա ի պա-  
տերազմ , ջնջել եւ ի սպառ կորուսանել : Եւ  
արարեալ իւր խորհրդակից զոմանս՝ ետ կան-  
10 չցնել ի Ստամբոլ՝ Եթէ եօթն տարի սէֆէր  
ունիմ ի վերայ Լէհու : Եւ ինքն պատրաստէր ,  
կազմէր զօրս մեծու , պատրաստութեամբ :

Իսկ մուֆտին եւ մեծամեծք եւ վազիրն  
ոչ հաճեցան ընդ այն . առէին թէ Մի առներ  
15 զայդ զի ուխտ եւ զաշինք ունիմք հետ նոցա .  
եւ ոչինչ վնաս կամ նենկութիւն զտաւ ի նոսա .  
այլ եւ մուֆտին չերետ Փէթվայ : Իսկ նա քանզի  
մանուկ էր տիօք , յիմար մտօք , զոռող եւ  
հպարտ ըստ մորովամայ , ոչ լուաւ իրասու  
20 ծերոց եւ իմաստնոց , այլ հոմանեաց իւրոց եւ  
նմանեաց . ոչ յուսացաւ յԱստուած , այլ ի մե-  
ծութիւն եւ ի զօրս իւր անթիւ . արհամարհեաց  
զմեծն եւ զօրէնսդիրն իւր . զի ետ աքսորել

զլլում Փղին որդովք եւ ընկերօք ի Հեռարհակ  
եւ օտար աշխարհու . եւ զինգիրս եւ զիշխանս 25  
ևտ սպանանել , որք ոչ կամէին զնուլ ի վերաց  
լէ հու :

Եւ զրեաց Հրովարտակս Օսմանն առ նա-  
խարարս , կուսակուլս , կողմնազահս , ողէ կ-  
լէ բաղէկիս , իշխանս եւ փաշայքն , առ Հազար- 30  
բազես , Հարիւրազես , զնողազես , զօ-  
րավարս , զօրապետս , զօրագլուխս . այլ եւ առ  
Մորայ զուլն եւ Շամայ , Արարացոց , Քաղ-  
դէացոց , Քըթաց եւ Ապազաց եւ ամենայն  
կողմանց եւ Հեռարհակ այլասես եւ աղինս , 35  
որք էին ընդ իշխանութեամբ նորա . զի փոյթ  
բնդ փոյթ եկեալ Հասցեն առ նայ : Յետոյ ա-  
ռաքեց գիր եւ ի Մակեդոնիա , Ելլաթայ , Պուլ-  
դարք , ի Սըրֆ եւ ամենայն Ռուսումէլի եւ ի  
Պունայու փաշան եւ Սիլիսդրու , զի ժողովեալ 40  
զգօրս ամենայն եկեացեն փութով առ նայ :  
Գրեաց ի Նրիմ առ խանն , զի եւ նա Հասցէ  
բազմութեամբ զօրաց Թաթարաց . այլ եւ Նօ-  
զայու եւ Աըմրդանտու Նօզայ Նետոզացն Հրա-  
մայեաց զոլ ի մարտն : Եւ զաղվազակի ժո- 45  
ղովեցան յոյժ յոյժ :

Եւ ինքն խօնտքարն աճապարեալ եկն ի  
Ատրանայ . եւ Հրամայեաց կամուրջ կապել ի  
վերաց անհուն զետուն թունայի . զի անտի ան-  
ցանիցեն անթիւ բազմութիւնք զօրացն : Զոր 50  
եւ փութով երկու տեղ կապեցին Հնարիւք կա-

31 գնտապետս : — 33 զաղթիացոց : — 37 յետ :  
— 46 յոյժ ոյժ : — 47 յաճապարեալ :

մաւրջ, որով անցանէին բռւլք ի բռւլաց եւ Հազարք հազարաց : Առաց երկուհարիւր թօր տանել թունայու վերեւով . եւ ամենայն քազաքաց եւս տանուղ զթօրս եւ տանել : Եւ գտաւ անթիւ եւ անհամար թիւ հեծելոց , որպիսիք ոչ են երրեք եղեալ , ոչ ի հինն եւ ոչ ի նորս , ոչ յաւուրս մհեմին Դարեհի , Արտաշէսի եւ ոչ կայսերաց Հռոմացեցոց եւ ոչ Արշակոյ մհեմի Հայոց արքային եւ ոչ այլոց :

Եւ տախն ամսնք ի դրանէ Օսմանին , թէ եօթին անողամ Հարիւր Հազար Հոգի է եւ իջնի . զաւու եւ որիչ ըզաւազան , ջորէազան , ձիազան , սէյիս չուրաս , Հովիւր . թող զայլ խառնիճաւ զանձ ամբոխն . Բնի ուղար միայն թեռամք անցանէր . թօրերն զօմէշնօք եւ Եզամքք . ունէր ընդ իւր եւ Փիլք . եւ ազգ եւ ազգ զէնք :

Եւ շարժեալ Ատրանու՝ զրեաց նամակ լիհու արքային , որ ունէր օրինակ զայս . «Սուլթան Օսման Հզօր եւ մեծ , յազթող ամենայնի եւ ոչ ումեքէ յազթահարեալ . արքայից արքայէ եւ ամենից իշխաղ խօնդքարէս . զոր ունիմ զչորս կողմէ աշխարհիս ընդ իշխանութեամբ իմով , Հարկատու արարեալ զամենայն ազգս եւ զազինս . այլ եւ ընդ մեռամբ արարեալ զժէ թազաւորութիւնս՝ տիրեմ ի ծովէ մինչեւ ի ծով . այլ եւ բոլոր տիեզերաց , սկսեալ ի Մաքայու կանաչ ծառէ , անզրանիկ որդի զորով Մահմէտայ եւ Համանման զորով հմատ . ունիմ զծառն կանաչ յուժ , օգնիչ ինձ եւ

իմոցն : Մանիք Զիկմունթ արքայու Լէհու, զի  
զամ ի վերայ քո անթիւ զօրօք եւ անհամար  
Հեծելովք, իրբեւ զարծիւ շառաչմամբ եւ ա-  
հարկու . զի ծանիցես զիս եւ իմասցիս զզօրու-  
թիւնս իմ, որ ևմ նման երկնայնոց : Իսկ զու <sup>85</sup>  
տկար եւ նկուն, զոր ոչ կամիս հնազանդիլ  
հզօրիս եւ լինել ինձ հարկատու . տեսցես իտէ  
զինչ անցք անցանիցեն ի գլուխ քո եւ քոյոցն :  
Զի զու ո՞վ իցես, զի ընդդէմ կայցես ինձ կամ  
պատերազմ տացես ընդ յազթող զօրս իմ : Ո՞վ <sup>90</sup>  
ես զու կամ յո՞վ իցես յուսացեալ . Եթէ յեկե-  
զեցի <sup>95</sup> սն քո յորում աղօթէքն . զամենեսին զնո-  
սս զրաստուց իմոց ախոռ արարից եւ ձիոց .  
Իսկ թէ ի փա՞յտ ձեր յուսացեալ ես . ես նո-  
վաւ մանրեցից զզլուխ քո : Երդնում ի հաւատ <sup>100</sup>  
Մահմէտի եւ ի կրօնա մըսլմանութեան . զի որ  
ինչ խորհեցայ ես՝ զոյն արարից : Այլ եւ զքո  
թախոն Քրաքով, զլով եւ զլուսլին ետու  
պարզեւ զօրացս իմոց : Եւ այլ բազում բանն  
հզարաւ եւ ՀայՀոյութիւնս մէծարանութեան  
զրեաց եւ ուղարկեց առ թագաւորն Զիկ-  
մունդ :

Եւ ինքն զկնի թղթոյն վաղվազակի զայր  
հասանէր ի Պուղասան : Զկնի նորա եհաս եւ  
խանն Զի թաթարովք եւ մտեալ նաւ նախ ի <sup>105</sup>  
ուահմանս Լէհու վնաս զործեց յոլով : Իսկ  
զօրքն Տաճկաց իրեք տեղիս բանակ հարեալ՝

81 յիմոցն : — 83 շառաչմամբ : — 85 յերենայնոց :  
— 91 ով... ուսացեալ : — 95 ի չիք : — 97 խոր-  
չեցաւ : — 107 մտեալ :

Երից կողմանց կամէքին մտանել աշխարհն Է. —  
Հայ : Բայց Եւ Լէհքն լուեալ զգալուստ նոցա՝

պատրաստեցան զօրք բազումք Եւ զնացեալ  
կարան զանցո հանապարհաց Եւ սպառէքն գայն  
թագաւորին :

Եւ իրեւ ևսուն զեսպանքն զգիրն ար-  
քային . զոր ընթերցեալ առաջի ամենեցուն՝  
115 զահի հարան Եւ երկիւզիւ յան, մինչեւ րե-  
կաւ սիրուն ամենայնի ահէ անօրինին . այլ Եւ  
շիւարեալ յիմարեցան յանթիւ զօրացն որոց  
ոչ զոյր թիւ : Ասու առէ բարեպաշտ արքայն .  
Մի՛ երկնշիք Եւ մի զարհուրիք Եւ մի յուսու-  
120 հաստիք ի սպառնալեաց բոնաւորին . բայց մեք  
ապաւինեալ յիւսուսած Եւ ի զօրութիւն առոր  
հաչին , զի նովաւ յաղթեսցուք թշնամեաց .  
թէպէտ նոքաւ բազումք Են Եւ անթիւ , այլ ան-  
հաւատք են . իսկ մեք (թէպէտ Եւ) սոկաք Եւ  
125 հաւատացեալք . զի զօրութեամբն Աստուծոյ  
Եւ սուրբ Խաչին , որ նու անօրդեաց , յազթէ  
սոկաւն բազմաց : Քանզի նամակու այս նման  
է զրոյն Խարսակաց զօրավարին , որ զրեաց առ  
բարեպաշտ արքայն Երուսաղէմի Եւ Խորոյն .  
130 լացոցն Եղեկիայ : Այլ Եւ նման է զիրս այս  
օրինադրի սորա Մահմէտոյ Եւ Օմարայ զրոյն ,  
որ զրեցին ի Կոստանդնուպոլիս առ աստուծու-  
ծառէր կայսորն Յունաց մեծն Հերսոլլ : Զի , առէ ,  
այս մարտ չէ ընդ մեզ կամ ընդ մարմեոյ , այլ  
135 ընդ անյուղի զօրութիւնն Աստուծոյ . զի սա  
փացեալ իրեւ զամիկ ունայն՝ սկսաւ հայՀոյել

113 զէսպանքն : — 117 անթիւ : — 131 օմարա :

— 136 յունաց :

զԱՅՈՒԹՈՒԹՅՈՒՆ կենդանի եւ զուրբը նշանն , այլ եւ իշխեաց զինքն երկնաւորաց նման ասել . վասն որոյ եւ ԱՅՈՒԹՈՒԹՅՈՒՆ կործանեացէ զնա ի սպառ , խլեսցէ յարկաց եւ զարմ : 140

Եւ այսպէս ապարինեալ յԱՅՈՒԹՈՒԹՅՈՒՆ եւ ի սուրբ Խաչ նորա՝ քաջալերէին զմիմիանս առելով . Ահա օր փրկութեան , այսօր դիցուք զանձինս ի մահ եւ մարտիցուք վասն սուրբ Հոգածոյ :

145

### ՎԱԼԱՏԻՍԱԾՈՒԹՅՈՒՆ ԸՆԴԻԿԵՄ ԵԼԱՆԷ ԹՇՆԱՄԻՆԱՑ

Կոչեաց թագաւորն զորդին իւր զանդքանիկ զմեծն Վլատիխլաւ , տվեալ զօրս նմա զքաջն եւ զարիս . եւ ասէ . Գնա՛ մինչեւ ի Խօթին՝ սինոռն Օլախաց եւ անդ կաց բանակառ մինչեւ ես զամ : Եւ կի Խազախաց հրամայեաց այլում տեղով բանակ առնել . զի Խազախք պահատուքք են եւ քաջք . ոռքա միշտ մտանեն Թուրքաց աշխարհն ծովով եւ ցամաքով , քանզ զեն , արիբեն , հրկիղեն՝ որպէս զՔաՓայ , զԱրինով , Պոնտոս , Վառնայ , Պալչին . եւ երեմն 10 զնան մինչ Ենկիքօյրն հուզ Ստամբուլայ : Իսկ զօրավարաց , պետաց , զօրագլխաց զնդից , հաղարապետաց , հարիւրապետաց , հեծելազորաց , դաւառապետաց , կուսակալաց եւ ամենայն մեծամեծաց հրամայեաց թիկնապահ 15 լինել : Իսկ մեծ սպարապետին իւրոյ եւ քաջախոյեանին Խէթքէզիչ՝ հրամայեց զօրօք դիմել եւ ժամանել առ որդին օգնութիւն . որ եւ

140 զարմ :

3 զնաց : — 7 քաջքն : — 12 զնաից :

տարաւ բազում մեծ թօրեր եւ նա ընդ իւր :  
 Եւ այսպէս վութով ժողովեցան կոյտ ընդ կոյտ  
 եւ բանակեցան եւ ժամաղրեալ տեղին ,ուր էր  
 սովորութիւն :

Իսկ հպարտ եւ զոռողն Օսման Կօթնաղլիսի  
 վիշտապն՝ հրամայեաց զօրացն մերձ դալ բա-  
 նակին լէհաց , ապաւինեալ ի զօրութիւն բազ-  
 կին եւ յաղթութիւն զօրաց եւ ոչ յԱստուած :  
 Եւ ոչ յիշեաց զգիրն զայն , թէ Մինն հազար  
 հարածէ եւ երկուքն զրիւրս չարժէ . եւ Սաղ-  
 ման որ ասէ , թէ Սուտ է ձի ի փրկութեան ,  
 ի բազում զօրութեան իւրում . եւ թէ Մի պար-  
 ձեսցի մեծն ի մեծութեան եւ մի հզօնն ի զօ-  
 րութիւն , այլ Տերամբ պարծեսցին . եւ թէ Վայ  
 որ պարծի եւ ոչ Տերամբ . զոր եւ այլ բազում ո  
 գոցես ի սուրբ Գիրս :

Եւ օր մի եղեալ մարտ՝ դիպան ճակատ  
 առ ճակատ<sup>1</sup> . անկան յերկուց կողմանց յոլովք :  
 Իսկ ՀԵթմանն քանդի խոր խմասուն էր , նախ  
 Խազախնուն հրամայեաց ցըուիլ ի դաշտս , ի  
 յանտառս եւ ձորամէջս . դարանակալ եղեալ  
 դաւանանէին եւ զողանային զմարդ եւ զանա-  
 սուն , զգէն եւ զասպառ եւ զայլն . եւ ի զիշերի  
 սովային ի վերայ որովայնի եւ յանկարծակի  
 անկեալ ի վերայ բանակաց բազում վնաս

23 զորողն : — 25 լէհաց : — 36 անկառ երկուց . . .  
 ոլովք :

<sup>1</sup> Օսմանէկանց սոսաջին յարձակումը տեղի ունեցաւ 1622, Սեպտ. 8ին . եւ վերջինն՝ վեցերորդը Սեպտեմբեր . 24ին : Hammer, II, 790—791 :

պործէին Տաճկին . նաև զթօփերն ի ձեռաց  
իւրեանց խլէին :

45

Խոկ մի վաշայ ունի Խարախաշ անուն , որ էր  
Շամայ եկեալ հինդհարիւր հոգով . սա եկեայ  
առ Օսմանն եւ ասէ . Զի՞նչ է կազուրն եւ զի՞նչ  
լինի կոիւ նորա . տուր ինձ հրաման . ես իմ  
զօրօքս զնացից եւ զամենեսեան կենդանի ածից 50  
առ քեզ . եւ զթապօքն ցրւեցից : Եւ նա ասէ .  
Գնա՛ , տեսնամ զքեզ : Խոկ եղկելին վստահո-  
ցեալ անձին զօրութիւնն եւ ոչ յԱստուած . եւ  
մինչ զնացը զառ ի վեր տափարակին , յորում  
կային անտառախիստ ծառք , ուր էին թագու-  
ցեալ Խազախք : Մի ունի ի նոցանէ տեսեալ թէ  
գայ վաշան այնովէս վստահ եւ զիտաց թէ  
նա է զլուխն . նշան եղիր ի վերայ նորա  
զթուֆաքն իրեւ ի նպատակ . եւ հարեալ ի  
ճակատն սաղաւարտիւ անցուց զկուլան ի միւս  
կողմն , որպէս Դաւիթ զԳողիաթ . որ եւ ի վայր  
անկեալ ձիուն՝ սատակեցաւ : Եւ յանկարծակի  
ելեալ ի թիւոյն Խազախք՝ ամենայն կողմանց  
պատեցին չուրջանակի զՅամայ խուլն , կո-  
տորեցին անխնայ . սակաւք մնացեալ վա-  
խըստեամբ՝ զնացին պատմել Օսմանին : Եւ նա  
բարկացեալ հրամայեաց Թաթարաց մտանել  
երկիրն լէհու . զոր անթիւ բազմութեամբ  
իրեւ մարախ տարածեալ դային եւ ոչ զի-  
տէին զորոգայթք վեասուց . զոր թոյլ ետուն 70  
մտանել ի ներս . ապա կալեալ զյառաջս եւ զյե-  
տոյս նոցա՛ սրախսողող արարեալ . զայլու թօ-

միերուն կեր տվեալ ԶԲ հոգի կորուսին : Իսկ  
խոհեմ և խմաստուն այրն եւ քաջ հէթմանն  
75 լուեալ զրազմութիւն զօրաց Տաճկաց՝ երկն-  
չէր . եւ զրէր առ Զիկմունդ արքայն թէ վաղ  
հասիր օգնութիւն մեզ , զի անթիւ եւ անհա-  
մար է զօրքն այլազգեաց քան զաւազ եւ մեք  
սակաւք . մինչ զի ի մեծ հոգոյ անսի անկաւ  
80 ի փորացաւութիւն , որ եւ մեռաւ . զորոյ Տէր  
Առտուած հոգին լուսաւորէ : Եւ թագաւորն  
ԳՅՇԻ հոգով ձեզէր գայր եւ հասանէր առ որ-  
դին ի բանակն :

Իսկ զօրքն երկուց կողմանց զիմամար-  
85 տեալք մարտնչէին կոտորելով զմիմիանս : Եւ  
այս եղեւ երկրորդ եւ երրորդ կոտորած երկո-  
ցունց :

Ապա հրաման եհան Օսմանն բազմահոյէ  
զօրօք հարկանել զրանակն Լէհու : Եւ սկսան  
90 առաւօտէ մինչ իրիկուն կուլել . եւ անկաւ  
բազում զօր ի Լէհու եւ նոցա : Եւ յերիկունն  
իրրեւ լուսացաւ՝ դարձեալ սկսան ճակատա-  
մարտիլ : Եւ օրն այն էր մեծ եւ երեւելի . եւ  
այնպէս մեծ եւ ահազին էր պատերազմն , զոր  
95 ոչ կարեմ ընդ զրով արկանել . քանիզի ի բազ-  
մութենէ թօփից եւ թֆաքաց ծխոյն մթացաւ  
աշխարհա . զի ոչ ոք կարէր ճանաչել , ո՞ր է  
թշնամի կամ ո՞ր բարեկամք : Այլ եւ ահ եւ  
զողումն կալաւ զամենեսեան . մինչ զի լքեալ  
100 թողեալ եւ անյոյս մնացեալ եղեն զօրքն Լէ-

80 փորամաւութիւն : — 82 ձէսէաւ : — 86 երկու-  
ցունց :

Հուլ : Ապաւինեալ յԱստուած՝ առաքեցին առ  
ամենայն քաղաքու եւ դիւզս եկեղեցիս աղօթք  
եւ պաղատանք առնել վասն փրկութեան  
քրիստոնէից . զի ահաւասօկ կորնչիմք առէին :  
Չոր եւ կարգաւորք եւ աշխարհականք ամե-<sup>105</sup>  
նայն եկեղեցիս իրեք օր իրեք դիշեք աղօթք  
եւ պաղատանք առնէին առ Աստուած առե-  
լով . Մի մեզ , Տէր , մի մեզ , այլ վասն անուան  
քու եւ վասն մեծի վատաց քոց ողորմեա հա-  
ւատացելոց , որք կարգան զանուն քու սուրբ : <sup>110</sup>

Իսկ երբորգում աւուրն , յորժամ սկսան  
դարձեալ բախիլ ընող միմիանս բազմութիւնք  
զօրաց . եւ Տաճիկք յաղթող գտեալ կամէին  
ի սովոր ջնջել զհաւատացեալու : Իսկ ողորմած  
եւ մարդասէրն Աստուած զթացեալ ի վերայ <sup>115</sup>  
քրիստոնէից հնչեաց հողմ ի լէհու զօրաց կող-  
մանէ ի վերայ Բամայելացոցն եւ թօփից ծուխ  
երկուց կողմանց մտանէին աչքն եւ կուրա-  
ցուցանէին : Եւ հաւատացեալք սուր ի վերայ  
նոցա եղեալ կոտորեցին աւելի քան Ծի հոգի . <sup>120</sup>  
եւ զայլս վախսատեկան արարեալ զաւարս նոցա  
առին : Այս սքանչելիքս յԱստուածոյ եղեւ .  
մասք Աստուածոյ : Եւ այս եղեւ աւուր վերաց-  
ման սուրբ կտաչին :

Ապա առէ մեծ վեպիրն եւ այլ մեծամեծքն <sup>125</sup>  
ց Յոսմանն , թէ վասն այն ոչ յաղթեմք կաղու-  
րաց , զի զերգութն մեր կոտորեցաք եւ անմեղ  
եկաք ի վերայ նոցա . յաղակս որոյ ոչ յաջո-

101 աստուած : — 109 ողորմեաց : — 113 աղթող :  
121 զյաւարս : — 121 աստուածոյ : — 127 աղթեմք :

զեցաւ կորիւն մեր . կորուսաք դքաջ եւ զարի  
 130 արս եւ զանթիւ մուսուլմանս : Իսկ նաև իրբեւ  
 զՓարաւոն քարացեալ եւ խոտացեալ սրտիւ  
 ոչ ձանձրացեալ ի չարէ եւ ի հեղլոյ արեան՝  
 սսէ ցատմամբ . Անհար է ինձ թոյլ տալ կամ  
 յետո դառնալ , մինչեւ ոչ սոփց զերկիրն Լէ-  
 135 հու . եւ զթագաւորն կենդանի կալոյց : Այլ  
 զօրքն ամենայն ոչ կամէին զպատերագմո զայս  
 ի սկզբանէ եւ այժմ եւս . եւ զի հարկիւ արար  
 եւ զօռ , ոխ սպահէին ի սրտի : Եւ մինչ Օս-  
 մանն խորհէր այլ զօրս առաքել ի վերայ Լէ-  
 140 հաց , եկն եհաս Զիկմունդ ի Լով իրեք աւուր  
 ճանապարհ հեռի գոլով ի բանակէ որդոյն :

Իսկ ի բանակն Լէ հցոց սաստիկ մահ ահ-  
 կաւ . որ եւ սով ընդ նմին . զի ոչ մնաց մարդ  
 եւ ոչ անառուն եւ ոչ կերակուր . ուտէին զձիս  
 145 եւ զայլ զարշելիս , նաև զմեռելուիս :

Լուան մահմէտականքն եթէ զայ թաղա-  
 ւորն անթիւ զօրօք . անկանէին յոտս Օսմանոյ  
 եւ ասէին . Թոյլ տուր կովոյս եւ արա խաղա-  
 զութիւն . զի թէ որդոյն չկարացաք դէմ ունել ,  
 150 զիա՞րդ հօր նորա . քանդի ահա իրեք աւուր  
 ճանապարհ է մենէ , որ զայ անթիւ եւ անհա-  
 շամմար զօրօք , որ ծածկել են զերեսս երկրի եւ  
 զգաշտս . եւ զի ազգն այն սարֆի երկաթ են եւ  
 կրակ : Իսկ վիքացեալ հոլարտ զոռողն որ ու-  
 155 ցեալ էր որպէս զարծիւ եւ դոչէր որպէս զա-  
 ռիւծ , իրբեւ լուսւն՝ կակղացաւ եւ իրբեւ

զաղվես նկուն դարձաւ : Եւ առէ ցմհծ վա-  
զիքն՝ Պայրամ փաշուն . Գնա եւ զոր ինչ կա-  
միս արա : Իսկ նա միջնորդ կալեալ զՈլախաց  
պարոնն , որ կը չէր Քասրաբ , եւ զայլս՝ առաւ 160  
քեն առ Վլատիսլաւուս որդի արքային վասն  
հաշտութեան : Զոր յետ բազում երթեւեկու-  
թեանց՝ արարին ուխտ եւ զաշինս երգմամբ  
ընդ միմիանս : Եւ առաքեաց Օսմանն պար-  
զեւս մեծամեծս , այլ եւ կենդանի փիղս ար- 165  
քայորդոյն . որ եւ նա դարձ փոխարինի յղեաց  
նմա : Եւ եղեւ ուրախութիւն մեծ ամենայն  
քրիստոնէից եւ ցնծութիւն :

Զայն լուսաւլ թագաւորին Զիկմունդ՝ դար-  
ձաւ խնդութեամբ յետս : Նոյնպէս եւ կորու 170  
վամիսն Վլատիսլաւ դարձաւ մեծաւ յաղ-  
թութեամբ եւ քաջութեամբ եւ աւարտ ի  
թախտն իւր :

Իսկ զօրքն Տաճկաց եւ մեծ իշխանքն ահ-  
սեալ զյլատուծոյ եղեալ յաղթութիւնն առէին , 175  
թէ Մեր երգումն զմեզ բոնեց : Բայց կրա-  
տէին զատամունս իւրեանց ի վերայ Օսմա-  
նաց , որ անպարտ կորոյս այսչափ զօրս պա-  
տերազմուզ . եւ խորհէին ի սիրտս զաւ եւ  
նենիլ : 180

Եւ սուլթան Օսմանն այսպիսի ամօթով եւ  
մեծ անարդանօք դարձաւ ի Ստամբուլ նկուն  
եւ զլիսիկոր : Բայց յետ ոչ յոլով աւուրց զլուխ  
քաշեց զույն եւ ենկիչարիքն , սրահիքն . եւ

157 մեծ : — 158 գնաց : — 166 փոխարին : —  
169 զեկմանս : — 172 յաւարաւ : — 175 աղթութիւնն :  
— 183 յետ չի :

185 միարանեալ երգմամբ ի միասին դիմեցին ի  
ստրայցն : Օսմանն վասիսու էսկի ստրան . զնա-  
ցին զինի . և անոտի թագեաւ մօտ հնկիչէրի  
ազան . անդ բոլորեցին զառնեն եւ ասին . Տուր  
մեզ զմեր կորուսիչն , ապա թէ ոչ զքեզ կտոր  
190 կտոր կ'առնեմք : Եւ նա վասն առի ես զնա ի  
ձեռս նոցա : Իսկ եղկելի Օսմանն արկեալ  
զվոռքի մախրամայ՝ արաչէր եւ աղերսէր լա-  
լով առ մի մի զծառայն իւր թէ՝ Մի՛ , ինայժէք  
ինձ ծառայք իմ եւ մի սպանանէք , զի զձեզ  
195 մեծի վատաց համուցից : Եւ նոքա զնանեալք  
ոչ ողորմեցան նմա բնաւ , թէ Դու չի ինայե-  
ցիր եւ ոչ լսեցիր մուֆուն եւ ոչ մեզ . եւ ոչ  
մեք քեզ կ'ողորմիմք : Եւ բերեալ համալի ձի  
մի անուրդ ովչէրով , հեծուցին ի վերայ . եւ  
200 այնալիս չը ջեցուցին ի քաղաքն . եւ ստրեալ  
Եօթն Առևան՝ ինեղդեցին զառն մահուամք :  
Եւ այսալիս կորաւ չարն չարաւ եւ համբար-  
ձաւ անորէնն ի միջոյ . զի մի տեսցէ զվառա  
Աստուծոյ :

## 18. ՏԱՐԵԴՐՈՒԹԻՒՆ 1623—1635 ԱՄԱՅ

ա. ԱՊՈՂԱՅ ՓԱԾԱՅ . ԿՈՏՈՐԱՅ ԵՎԱԿԱՆՈՒԹԻԱՅ

Իսկ ի թէվ . ԱՀԲ (1623)ին ոմն շար եւ ա-  
րինարբու , ազգաւ Ապխատղից , վասն եւ ազի-  
րուս , որ կոչէր Ապազայ , ի զարիէն եղեայ՝  
եղեւ միաշայ միարանութեամք Օսմանաց մօրն  
։ Քօսամբին եւ Դալիլ զէղիբին եւ այլոցն . եւ Հա-  
ռեալ Անաստոլի , զօրացեալ՝ եղեւ ջառագով

1 յարենարբու :

վրէժիննդիր Օսմանոյ սպանման . կոտորէր  
Ենկիչարիս : Եւ սակաւ սակաւ մեծացեալ ժո-  
ղովեաց զօրս , զօրացաւ եւ ըստ օրինի ձէլա-  
րոց նախ առնոյր զաւանս , զեղս , սպա բերդս , <sup>10</sup>  
սպա զքարշաքս եւ ուր եւ լոէր կամ զտանէր  
Ենկիչարի՝ կոտորմահ առնէր Եւ զանազան  
առնջանօք սաստակէր . ասելով . Դուք զձեր  
թագաւորն սպանիք , ես ձեր արիւնն կու խմեմ :  
Եւ զայս այսպէս արար տասն ամ . եւ ասին թէ <sup>15</sup>  
ԿՌ Եանչորի սպանեց . զի մուֆարին երես  
Փէթվայ : Եւ թէպէտ Ղարիէն բազում անդամ  
զնացին ի վերայ , ոչինչ կարացին առնել . զի  
բազմահնար էր եւ կախարդ . այլ եւ ունէր  
շատ հեծել եւ շատ դանձ : Եւ զի մի յերկարեւ <sup>20</sup>  
ցից զիսօս , զի մի ձանձրացին լսողքն :

Առաքեաց թագաւորն մեծ վեղիր<sup>1</sup> ի վերայ  
նորա . եւ նա փախաւ մտաւ յԱրզրում եւ ամ-  
րացաւ : Զոր կործանեալ զարարսպին մի կողմն  
կարան զնա կենդանի եւ տարան առ թագա-  
ւորն : Եւ նա ԵՀարց թէ վասն է՞ր իշխեցեր  
զիրադ զայդ եւ է՞ր կորուսեր այսչափ ծառացս :  
Եւ առէ թէ՝ Վրէժինդիր կոյս Օսմանոյ աթու-  
սակցին քո եւ եղբօր . այլ եւ ունիմ զիր ի մօ-  
րէտ եւ պաշ վէզիրնուն առնել զայտ . ընկէց <sup>25</sup>  
զմզմէրն առաջի արքացին : Իսկ նա իմացեալ

28 առմանս :

<sup>1</sup> Կոսրով փաշա . Ապագա անձնաւուր եղաւ  
18 Սեպտ . 1628. Hammer, III, 66: Այս անցքերու մա-  
սին ընդարձակ կր խօսի նաև . Գր . Դարանազի , է՞  
212—234:

անդեկացաւ զէութիւն բանին եւ ոչ եւս սպա-  
նանել զնա իրրեւ զմահապարաւ . այլ եւս զմւ-  
ռումէլու պէկլէրպէկութիւնն . եւ առաքեաց  
35 զնա ի Պոսնայ : Որ եւ անդ բաղաւմ մնաս եւ  
չարագործութիւնն արարեալ մեծ հարկապա-  
հանջութիւն եղ ի վերայ երկրին , պէսպէս զու-  
լում եւ պէտէհաթ եւ նոր չարիս եւ ծանր բե-  
սինս զնէր ուայէին . որ եւ զմւռումէլի աւի-  
40 բեալ քանդեաց եւ ամսոյի դարձոյց , զմարդիկն  
ապքասացոյց որպէս զվնատօլուն <sup>1</sup> :

Եւ անախ եկն ի Ախլիստրայ , իսպայէլ եւ  
ոյլ քաղաքան Թունայի եզերայս . եւ սկսաւ չար  
խորհել վասն Լէհու : Եւ զնացեալ ի Դարին ,  
45 առէ . Տուր ինձ հրաման եւ զօրք , զի երթայց  
ի վերայ Լէհու եւ առից զվրէժն Օսմանայ եղ-  
րօր քո : Եւ նա զարձեալ ստեաց երդմանն եւ  
առէ . Գնա . եւ տեսից զքաջութիւն քո :

թ . ՄԱՀ ԶԻՒՐՈՒՆՏԱՑԱՅ . ԳԼԱՎԱԿԱԾՈՒԹԻՒՆ , ԱԼԱՏԻՈ-  
ԼԱԿԻ

Իսկ ի թօփին թջԱ (1632) մեռաւ նախ  
50 թաղուհին Լէհի . ապա Զիկմունտ զռայն :  
Բայց տեսչութեամբն Աստուծոյ եւ նախախնա-  
մութեամբ , այլ եւ հաճութեամբ ամենայն իշ-  
խանաց եւ զօրաց նատաւ յաթուն հայրենի ար-  
ժանաժառանդն վլատիսլաւ . եւ եղեւ թաղա-  
55 ւոր Լէհաց երկրին :

40 զմարդիքն : — 48 զնայ : — 53 արժանաժառանդն :

<sup>1</sup> Գր . Դարանազցի զովութեամբ կը խօսի Ալպա-  
զայի մասին . բարեկամ էր Հայոց . օպտակար եղած է  
նաև ի Պոսնիս եւ ի Թումէլի :

գ. ՊԱՏԵՐԱԼԶՄ ՄՈՍՔՈՎՅԻ ԸՆԴ ԼԵՀԱ 1632

Ի սոյն ամի ապատամբեցաւ Մոսքով և  
եղեւ մեծ թշնամի Լէհու . և ժողովեալ բա-  
զում զօրս դայր ի վերայ աշխարհին Լէհու ,  
յափշտակելով զզիւզու և զքազաքս : Այլ և  
առաքեաց առ խօնտիքարն սուլթան Մուրաս 5  
պեսպանս մեծամեծ ընծայիւք և խոստամբ ,  
թէ Տաց քեզ հարկս ամ յամէ զամենայն առուբու  
ձմի զէկան սոկի և ԲՃ տօնլուխ լաւ սամուր  
և այլ ինչ , բայց ազաշեմ զքեզ , զի այժմ օզ-  
նեացես ինձ , զի ես աստի զամ և դու այտի . 10  
և կոտորեացուք զէկէ : Խոկ նա զամենայն  
խնդութեամբ յանձն առ կատարել :

Իբրեւ լուսու զայս նորապսակ թագաւորն  
վլատիխուու՝ թողեալ զաթոոն իւր՝ իսկ և  
իսկ զնաց վութով ի վերայ Մոսքովու զօրօք 15  
բազում : Հրամայեաց և Խազախնուն , որք  
էին թիւ և ինքն քսան հազարաւ զիմեաց անդ :  
Այլ և զրեաց Ղանին , զի և նա զայցէ յօզ-  
նութիւն . և խանն խնդարով ձմի հոգով զնաց .  
աւիրէր , քանդէր , հրկիզէր և անթիւ զերի 20  
առնէր ընդ իւր : Զի այսպէս սահմանք կայ ի  
նախնեաց Լէհու թագաւորաց և Թաթրի մէջն ,  
որ երր սէֆէր լինի և ոլէտք , երր ուզէ զռալն՝  
պիտի երթան թաթարք . ապա գռայն պիտի  
տայ հազար սոկի և հազար մուշտակ . և զինչ 25  
զերի առնուն կամ աւար , այն Թաթրին է .  
նորքաւ բազի են , որ ամէն տարի զնան . ապա  
Լէհէն կու վախեն , զի Լէհով պիտոր անցնին :

6 զէսպանս ընծայիւք : — 9 յաժմ : — 20 քանթէր :  
— 25 տա : — 26 յաւար :

Եւ զի զօրքն Մօսքովու բազում էին՝ ԲՇՌ  
 Հոգի. իսկ մերն զատ կազախնուն՝ լի՛: Իրրեւ  
 Հասանն հույզ միմիանց՝ ծռազատկին Հոռմոց,  
 Հոգոյ պալստեան շարաթուն, երկու իրեք ան-  
 դամ գիպան յիրար. Եւ երկու կողմանց բա-  
 զում ողիք անկան: Ապա Մօսքովն զանտակի  
 մորել էին, ամբոցնի շինել եւ առ լերամբ բա-  
 նակ բանակ նստել. ջուրն առատ. Եւ դիղել  
 էին բլուրնի իրրեւ զանտակ, զոր ոչ թէ մարդ,  
 այլ եւ քաջք չկարէին առնուլ զայն: Եւ էր ի  
 պղեակն այն ԶՇԻ Հոգի, թօրմի եւ սէրտարն  
 40 Շայիմ կոչէր: Եւ մինչ մեծն վլատիսլաւ ի  
 Հոգս եւ ի տարակուսանս էր՝ նախախնամու-  
 թեամբն Աստուծոյ անկաւ սով մեծ եւ սաս-  
 տիկ մահ ի բանակն Մօսքովու: Զոր տեսեալ  
 պատուհանն Աստուծոյ եկեալ Հասեալ ի վե-  
 րայ նոցա՝ ակամայ հնազանդեցան. զի եւ ար-  
 տաքուստ կոտորէին զնոսա: Ապա զօրագլուխն  
 առաքեաց առ թագաւորն խնդրելով ապրուստ  
 անձանց իւրեանց. Եւ ելեալ գղեկէն անկանէին  
 բացաւ գլխով յոտո արքային՝ ընկեցեալ յեր-  
 50 կիր զգէնս եւ զպայրախս. Եւ ասէին թէ զոր  
 ինչ կայ զէն, զրամ, խազինայ, թէ աղիս՝ քեզ  
 լիցի, միայն թող մեղ զնալ ի տեղիս: Իսկ  
 բարերար արքայն հրաման ետ զնալ զատարկ  
 եւ մի ինչ առնուլ. զի թէ կամէր՝ զամենե-  
 55 սեան սրով անցուցանէր: Եւ զնացին այլ ճա-  
 նապարհաւ: Եւ մտեալ Լէհն՝ զտան անդ ԺԲՌ  
 զարպզան, Ճի մեծ թօփեր. բայց ԺԲՌ թո-

գաւորին խաղնէն ելած . մինչ թագաւոր կո-  
չէր , միւսն՝ թագուհի , որն՝ արծիւ , օձ , զի-  
շապ եւ այլն , յոյժ մեծ եւ երկայն . եւ ողբինձն 60  
աղնիւ որպէս ոսկի եւ ոսկոյն պարապար , զոր  
այլ տեղ կարծեմ թէ ոչ զտանի . մէկին ԲՇ  
եղն լծեցին՝ հաղիւ կարացին շարժել . եւ այլ  
բազում դէնք , զրահք , ճէպայք , ալիւր , եղ ,  
չոր միս եւ այլն . նաև նոցա արծթի փարայք<sup>1</sup> 65  
զտին . եւ այնու վճարեցին իւրեանց զօրաց :  
Եւ առեալ զկապուտնի եւ զաւարն՝ ուխտ ու  
դաշինք արարին . բայց թագաւորն Մօռքովայ  
կորեց զգլուխն Շահինին , թէ է՞ր զաշնազիր  
եղեր . առա ակամայ արար երդումն . եւ մեծ 70  
պարզեւք ետ արքային , այլ եւ ԺԵ քաղաք եւ  
ամ յամէ հարկս տալ յանձն առ ԽՌ ոսկի . զի  
վախաց Լէհու զօրացն :

## Դ. ԱՊՈՉՈՒ ՓԱՇՈՒ ԱՐԾԱՆԻ Ի ԼԵՀՈ

Եւ մինչ նոքա անդ էին՝ Ապագան կարծեց  
թէ մարդ չկայ Լէհ , ամէնն զնաց ի Մօռքով .  
զօրաժողով արարեալ ժանոն գայր վաթառն  
հազարաւ ի վերայ Լէհու . եւ Խան Դէմիրն ի՛մ  
թաթարաւ ընդ նմա . այլ եւ զրեաց առ սօլթան  
Մուրատն թէ Ահա օր , ահա ժամմանակ . Ե՛լ եւ  
զու ուշիկ ուշիկ եւ եկ զկնի իմ , զի ոչ ոք կայ .  
ինքնին բացվին զոռունք քաղաքաց մեզ : Որ եւ  
նա ելեալ իտրնայ եւ անդ նստաւ : Իսկ Ապա-  
գան կամուրջ կապեալ զարձեալ ի վերայ Թու-

9 էտքնա :

<sup>1</sup> Վլթան մանրազիր տէնիսայ :

հայի՝ անահ անցանէր Զ թօփ բերելով . նաև  
այլոց քաղաքաց առնուր թօրեր :

Իրրեւ յուաւ զայն Վլատիսլաւ՝ առաքեաց  
զեղբայրն Գաղիմիր Ի՛մ Գաղաքով . եւ Հեթ-  
15 մանին հրաման եւ գնաւ զօրօք ի վերայ : Իսկ  
կողմանապահքն , կուսակալք եւ սահմախալէկիք  
եւ այլ պարոնայք եւ կօնկուլու ծառայք վագ-  
վաղաւկի ժողովեալ հասին ի յանառիկ բերթն  
եւ յամբոցն կամենից , որ ի վերայ քարայար  
20 յիրան . եւ անդ բանակեցան առ լերամբ ընդ  
երևս դաշտին : Իսկ Խաղախաք յայլում վայրի .  
եւ Հեթմանն խելացի եւ կորովամիտ՝ չարեկ  
միւ միւ այլ յառաջն զանդաւկի փորել եւ  
դալու . եւ անդ թօփեր եղիր երկու իրեք տեղ .  
25 եւ այն զանտակնուն առաջն հեծել եղիր . իսկ  
ինքն կազմէր , զուղէր զօրոն :

Իսկ ժանան եկեալ Պուղտան՝ կոչեաց  
զիշարաֆլախու պարոն , զի եւ նա զայ հեծե-  
լովքն . նոյնալէս Պուղտանայ պարոնն : Եւ իրրեւ  
30 զիսպան յիրար ճակատ առ ճակատ , թուրքն  
յաջմէ եւ թաթարն յահեկէ զայր , եւ Օրալիսքն  
առաջն : Եւ կոտորեցան երկու կողմանց ան-  
թիւք զօրք . զի նոքա ՀՄ էին եւ մերքն Ի՛մ  
չկայր Խաղախով : Եւ այլում աւուր զարձեալ  
35 մարտ եղին . եւ կոտորեցան յոլովք յերկո-  
ցունց : Ազա հույս արարեալ բաղում զօրաց  
եւ զային վատահ ի վերայ Լէհցոց կոտորելով .  
եւ նոքա փախչէին ի զարանսն զոր զործեալ

11 նոյեւ : — 22 խէլացի : — 28 դա : — 31 աղմէ :  
— 35 եղին զարձեալ . ոլովք երկոցունց :

էին : Եւ իբրեւ Հասին ի տեղիսն՝ երկու իրեք  
տեղաց թօրերն թողին ի վերայ նոցա . որք 40  
սատակեցան անդ էմի հոգի Տաճկաց . եւ այլ  
տեղաց Նէմցայք ելեալ կոտորեցին զնոսա եւ  
զորս ըմբռնեցին ի մեծաց Ապազու քրոջ որ-  
դին եւ զայլ մեծ մարդիկն . զթան Դէմիրին  
վիճան եւ զեղբայր եւ զրագում թաթարս 45  
սպանին եւ զորդի նորա : Եւ զայն տեսեալ  
պղծոյն ահ եւ երկեղ անկաւ ի վերայ նոցա .  
Եւ վախուստ դարձան ընդ կրունկս եւ ամօ-  
թալից արտմութեամբ սեւերես զնացին յաշ-  
խարհն իւրեանց : Իսկ քրիստոնեայք ուրա- 50  
խութեամբ եւ ցնծութեամբ դարձան իւրա-  
քանչիւր ի տուն օրհնելով , զովելով եւ զո-  
հանալով զԱստուծոյ , որ տայ յազիթութիւն  
Հաւատացելոց իւրաց . վա՛ռք Աստուծոյ : Եւ  
աշխարհն Լէհու ամէն քաղաք տօնանմա եղեւ : 55

Ե. ԱՐԵՎԱՆԱԿԱՔ ՍՈՒԼՏԱՆ ՄՈՒԲԱՏԻ Ի ՎԵՐՈԱ ԼԵՀԱՅ

Իսկ Սոլթան Մուրատին սիրոն դարձեալ  
չի խաղաղացաւ ի չարեաց . այլ կրկին անկաւ  
զնալ ի վերայ Լէհու . Եւ Պուղտանայ պարոն ,  
Դարավիլահու պարոնն ըմբռնել եւ սպանանել ,  
որ նենկեցին զԱսպազան . ապա թէ ոչ առել էր 60  
զէհէ : Վասն որոյ ուրախացեալ լսելով ստա-  
սաց խարողին՝ հրաման եհան կանչել սէֆէր  
ի վերայ Լէհու . Եւ կամուրջ շինել ի վերայ  
Թունայի , ուստի թօրերն եւ լէշքէրն անցնի :  
Եւ նախ թարթարին ասաց մտնել երկիրն Լէ- 10

44 մարդիքն : — 53 առ :

3 ի վերա . . . ովուզատնաւ :

Հու , զոր ԼՌ ժուեալ վնաս արարին և անիրա  
զործեցին :

Զայս ամենացն լուեալ մեծամեծաց և իշ-  
խանաց Լէհու՝ ազդ արարին թագաւորին  
15 բւրեանց , թէ Թուրք և Թաթարք զան . և նու  
հրամայեաց զօրս ժողովնել և զնալ ընդդէմ  
թշնամեաց . և ի՛ Ասօպախի զնայ ծովով . որ  
և աւերեցին բազում քաղաքո , զիւզո և ա-  
ւանս և զամուր բերթերո տասկալեցին և բա-  
20 զում ոււարո տորին ոսկոյ և արծաթոյ . այլ և  
փարթամ Տաճիկս զերի տարան :

Պուղամանաց պարուն և Պարաֆլախին  
ապառաժբեցան խօնթքարէն . նաեւ Մաճրի  
պարուն երգմամբ ուխու և զաշինք ևդ Հեռ  
25 վլատիսլամի՝ միաբանիլ և ծեծել զթուրքն .  
որ ունէր ԼՌ հոգի Երկաթակուռ պահատուր .  
իրեք տեղ բանեալ զրին : Զոր լուեալ Թուր-  
քաց թէ պարուն Օլախաց զարձաւ , ուղարկեց  
այլ պարոն , որ կոչէր վասիլ Լուրուլ . և ինքն  
30 յնտրանաց զարձաւ Մատամոջ և Մուրզակաց  
վազիրին տօսաց հաշտիլ : Զոր նու զեսպան  
առաքեաց առ Հէթմանն վասն սիրոյ . զոր յետ  
բազում Երթեւեկութեան և պարզեւացն և  
ձիոցն ազերի՝ Հաշտեցան և եղեւ խազազու-  
35 թիւն մեծ : Եւ Թուրքի մեծ էլչի եկաւ Ծաճին  
ազայ Հարիւր հոգով և տեսեալ զօրքն Լէհու  
զարձացաւ . որ զուտք զրեհ և երկաթ էր . և

11 յուն : — 14 ասդ : — 18 յուտիս : — 20 յունուր :  
— 26 երկաթակուր : — 31 զէսպան : — 35 մէծ :

առէր թէ ո՞վ կարէ սոցա զէմ ունել : Եւ Մա-  
հարն իրեք անդամ մէծ կոտորած եւ թրքին  
մինչ ի սպառ :

40

գ. ԱՐԾԱԿԱՆՔ ՎԼԱՑՑԱՍԱԼԻ ԲԱՂԱԿՈՐԻ Ի ՎԵՐԱՅ  
ԵՎՀԵՑՈՒ 1635

Ի թիվն թշԴ (1635), ապրիլ ժեւ զնաց  
Վլատիսլան ի վերայ Շվէտու բաղում զօրօք  
եւ ՄՌ Խաղախով, որ ապստամբեալ էր վա-  
ղուց հետէ ի հօրէն . եւ հայրն բաղում անդամ  
զնաց սպառերազմաւ եւ ոչինչ կարաց առնել . 5  
զի շատք են եւ յոլով գանձ ունին : Եւ որչափ  
անհաւատք կան՝ միաբան եղեն . զի եւ Շվէտն  
անհաւատիցն է : Սա զնացեալ էսո քանի քա-  
ղաք . զոր տեսեալ զքաջութիւնն՝ կամէին  
հարկատու լինել . իսկ թագաւորն ոչ կամե-  
ցաւ, բայց թէ սրով կ'առնում <sup>1</sup> :

է. ԱԱՍՏԻԿ ԱՆԶԲԵՒ 1635

Յայսմ ամի սասսափել անձեւ երեկ աշխարհն  
լէ հաց, սկսեալ Զատկն մինչեւ Օդուստոս  
անդադար զայր, զիշեր ու ցորեկ . հազիւ օր  
մի քանի արեւ տեսաք . մինչ զի ջրերն շատցաւ 15  
եւ լիճքն լցան, զետք արձակեցան եւ բաղում  
վնասք զործեցին ամենայն քաղաքս եւ զեղս  
մինչ ասել ոմանց թէ հոսանք երկրի իրքեւ հե-  
ղեղ եղեն, կամ թէ յերկնից սահանք բացան .  
Հունձ եհաս . եւ չի կայ օր որ հնձեն . Աստուած 20  
զյետքն ի բարի առնէ . ամէն :

<sup>1</sup> Շուշտներու . Հետ մզուած կոփեներու . մասին  
ամէն Յաւելուած թ. :

բ. ԱՐԵԱԼԻԱՆՔ ՍՈՒԼՏԱՆ ՄՈՒՐԱՏԻ Ի ՎԵՐԱՑ  
ՊԱՐՍԻՑ 1635

Յայտ ամի խրոխու եւ զոռող հպարտ  
զազանն եւ ամբարտաւան վիշտավն սաստիկ  
հրաման էհան եւ ետ կանչել եօթն տարի սէ-  
25 ֆէր ի վերայ Խզրլաղաշին. եւ ինքն աճապա-  
րեալ զնաց իզմուտ. եւ անտի Ղօնիսյ. եւ  
ասին թէ ժե՛ձի հոգի էր ընդ նմա, զատ վէպ-  
րէն, որ այսչափ հեծելոք խշլախ էր: Եւ կան-  
30 չեցուց թէ Վա՛յ այն մարդուն, որ կէս զրամ  
օլաֆայ ուտէ եւ չի զայ սէֆէր: Եւ այսպէս  
րուլք ի բուլաց եւ հազար հազարաց երթոյշին  
զկնի թազաւորին, զատ ի թաթարաց: Միայն  
Աստուած աղատէ զազդս Հայոց այտ անթիւ եւ  
անհամար զօրաց, որ ելին իրրեւ զմարախ  
35 ծածկելով զգաշտու եւ զերեսս երկրի, զնալով  
Հայոց քաղաքաւ եւ զեղօրէօք եւ ամենայն զա-  
ւուոք. յորոց փրկէ Քրիստոս Աստուած:

բ. ՍՈՒՐԿՈՒՆ 1635

Դարձեալ կրկին չար հրաման էհան վի-  
շտավն առաջին, որ սուրկան լինի քառուն  
40 տարեն ի վեր եկուցաց: Եւ էմիրնի զրկեց ամէն  
քաղաք եւ նախ Ստամպօլ, թէ Վա՛յ ան մար-  
դուն, որ մինչեւ քսան օր չերթայ ի սիլան:  
Վա՛յ մեծի աղէտիս եւ աւաղ տարակուսանաց  
45 եւ նեղութիւնք Հայոցն: Անդ էր տեսանել զլաց  
եւ զաղաղակ եւ զարարարոսն. ոմանք աստի  
զնալն եւ կէսք ի բերան որոյ մտանելն. վա՛յ

23 յամբարտաւան: — 42 չերթա: — 43 մէծի: —  
47 բերանց:

ի վերաց մայիս և հզուկ թշուառացեալ անձանց : Զի աստ առն եւ աեղ, այդի եւ մուրքէն զրկին կամ թողուն օտարաց, կամ թէ կէս ու պինն առն . եւ անդ աշխատի ՀԵՃԵՂԻՆ բերան կամ սրոյ մասնեն . եւ ոչ գիտեն թէ յո՞ երթան, զի աշխարհն այն առեր եւ ամայի է : Ամանք ի ծովին անկան եւ այլք ի ծարաւոյ եւ խորշակէ ի հանապարհին մեռան : Եւ ասին թէ 50 բանի հարիւր առն կէմով անցեալ յայնկայս անով անդով . իսկ սօնուայք հասեալ ի վերայ նոցա եւ սուր ի վերայ եղեալ յանինայ կուռուցին մինչեւ ի սպառ : Սոքա աստ ընտաղին է եղան . եւ Անտոլին եղեալքն գարձեալ Շահն 60 սուրկան տարաւ ի ներս . եւ այլք ի ծով անկան, լաւ համարելով զմաւ քան թէ անկանի ի ձեռս զօրաց կամ զեալ առեր աշխարհն : Եւ ամենայն կողմանց Եղեւ կորուստ Հայոց : Փա՛ռք Աստուծոյ : Միթէ կատարած աշխարհի 65 Երեկ կամ զարուստ Ներին ենաս . բայց կարծեմ թէ քանիք սրբոյն Ներսէսի կատարեցաւ, որ այսովէս Հայոց ազգն ընտաղին է եղան : Եւ այս աշխատի փոքր ի շատէ զրեցաք զկոկիծ եւ դանցս ազէ տից Հայոց համառօտարար Եղելոց 70 իրաց ի ժամանեալիս մերում : Եւ Քրիստոսի մորդ սախիրին միտք յաւթանեան . ամէն :

## Ժ. ԿՈԽԱՆԻ ԿՈՂԱՅԱՔ

Դարձեալ թիֆին ՄՊՉԻՆ (1634) . Հոկտեմբերք ԺԲ : իրեք կախարդ կին կառլան ի Լով եւ բաղքէն զուրս կուտեալ յոլով վայս այրեցին 75

զեռաս - որ իրեք օր գատն հուս ձենմերաց նո-  
յին ոչ զնաց ի լով քաղաքէն<sup>1</sup> :

Ժ. ՀՐԿԵՀ ԵԱԼԲՈՍԱՌՈՅ 1627<sup>2</sup>

Արդ ի թզին ՌՀԶՋ (1627) օգոստոս ժե ,  
աւելյ Փոխման Առաքք Աստուածածնին եղե-  
ցառում ԱՀՀաց Երկրի , զի անկառ հուր մեծ ի  
քաղաքն Եառաջով համարքին տառնն , ուր  
էին ժողովեալ բազում եւ յոլով ազգ եւ ազգ  
վաճառականք ամենայն աշխարհաց եւ գաւա-  
ռաց , այլ եւ այլ տեղաց՝ հեռաւորաց եւ մա-  
տուորաց , անթիւ գանձիւ եւ անհամար զու-  
մաշով , զոր հրակիզեալ այրեցաւ բոլոր քա-  
10 զաքն հանդերձ պարսպօք , տամբ եւ տեղօք :  
Եւ կամարակառ զմոլէթաշէն քարեայ տաշա-  
ծու եկեղեցին եւ վանորապէն եւ տներն ամէն .  
զի ոչ մնաց բնաւ ամենեւին շէնք . եւ կիզաւ  
բազմութիւն գանձուց եւ կումաշից , զոր ոչ  
15 կարեմ թուով կամ զրով արկանել զանթվելի  
համար վեառուցն : Այլ եւ բազում մարդիկ  
այրեցան . Եւ այլք կիսայրեացք եղեալ . այլք  
խելաց թափեցան . Եւ մոլէզնեալք կատաղե-  
ցան վասն կակծելի աղէտից վեառուն . ամանց  
20 զգեստն այրեալ , կիսոց մօրուքն , այլոց մօրթի-  
ռեացեալ եւ հերքն այրեցեալ եւ խանձեալք ,  
այլք մազապուրծ եղեալ զերծեալք եւ ի վա-  
խուստ գարձեալք հազիւ քաղաքէն ի դուրս

<sup>1</sup> Աբժէռն այստեղ զետեղան էր իւր լվով ցոյսա-  
դրուելու պարագանե , զոր յառաջը բերած էինք էջ 355—356:

<sup>2</sup> Այս հասուածը ուրիշ խմբագրութեամբ . ան-  
օտելուած Ա. , էջ 385—386 :

անկանէին . քանդի չորեք դիմաց էր հուրն , եւ  
յամենայն կողմանց աստուածառասոտ բարկու - 25  
թիւնն . զի կործանեցաւ քաղաքն եւ ամենայն  
ընակիչք նորա ի կորուստ դարձան եւ այրե-  
ցան որդովք եւ գտներօք , ընչիւք եւ ապրա-  
նօք , տամբք եւ տեղօք եւ ամենայն դոյիւք :

Եւ էին անդ փարթամ վաճառականք եւ 30  
որերձք հաղարաց եւ բիւրից տէրք՝ մուրացիկ  
եւ քրծազգեստք լեալ ցիրուցան եղան , թա-  
փուր եւ ունայն յամենայնէ զրկեալ . շրջէին  
ընդ փողոցս եւ ընդ հրապարակս՝ մինչ զի  
ոմանց եւ ոչ հաց գոյր կերակուր կեցուցանել 35  
զոգիս : Անդ էր տեսանել զաղիոզորմ կոկիծ ,  
զվայ , զոզք եւ զաղաղակ , զլաց եւ զարտա-  
սուր :

Եւ ասին թէ ԺԵ Մարայ խաղնայի չափ  
զարար եղեւ . զէրապապչիք , խամզալաթցիք , 40  
աթլազ-քամբիացիք , ովահարչիք , չուխաչիք .  
քանի հարիւր խանութ սօֆչիք , խալի , քիլիմ ,  
սովորչում եւ քանի հարիւր թօր սամուր սար-  
տաւայ , սինձար , սիսազ , աղվես , եւ այլ աղդ  
եւ աղդ թույալաթ . ամէն ովահարչի ձի՛ զու - 45  
ոուչի պահար ունէր . նոյնապէս խօյումչիք ,  
չուխամիք . մէկ աւուր մէջն այրեցաւ , թող  
նազու դրամն , զուսուչն , ոսկին , մանոր ըս-  
տակ եւ այլն : Խօնթքէրի մի խաղնա զարար  
եղաւ , ոչ թէ միայն լէհցոց , Մօսքովցոց , 50  
թուրքի մարդկաց , Ֆռանկաց , Մաճրաց ,  
Օլախցոց , Խղթակացոց եւ այլոց բաղմաց ,

ՅՅ յունայն :

զորս ոչ կարեմ թուել եւ ընդ զբով արկանել .  
բաւ է :

Ժ. ՄԱՀ ՏԱՐԱԺԱՄ 1627 ԱՄԻ

Եւ մինչ յայսմ վշտի եւ տարակուսանաց  
էաք, անկաւ մահ տարաժամ երկրորդում ա-  
մին սաստիկ աշխարհս լէհաց . Եւ ոչ մնաց  
զիւղ, աւան, քաղաք առողջի մահվանէ . բայց  
առաջին մահն այլ մեծ էր : Եւ սկսան փախ-  
չել ամենայն քաղաքաց : Եւ ի Լովի եւս չի  
մնաց մարդ եւ ոչ չէնլիք : Եւ այս երկրորդ  
մահ եղեւ, որ եւ ևս եղելիս փախեայ ընդ փա-  
խուցեալս յերեսաց ահի բարկութեանն Աս-  
տուծոյ առ ժամանակ մի՝ ի Բօհաթին գեղա-  
քաղաք մի ինն մզոն հեռի Լովայ : Եւ կացաք  
անդ տնով իրեք ամիս եւ շարաթ մի, այս է  
Վերացման Խաչէն մինչ սուրբ Յակոբ . Եւ անդ  
մեծու տրամութեամբ եւ սղով կացեալ,  
մինչեւ ծաղեաց առաւօտ խաղաղութեան .  
70 ամենողորմ Տեսոնէ մերմէ . Եւ անցաւ բար-  
կութիւնն . զոր զոհացողական փառս մասու-  
ցաք Աստուծոյ, որ փրկեաց զմեղ արժանա-  
հաս մահտարաժամէն . սպա եկաք ի տուն եւ  
ի բնակութիւնս մեր . փառք Աստուծոյ :

Ժ. ԱՍՊԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ ԲԱԼԲԱՐԱՅ 1628

Պատմեմ ձեզ այլ մեծ աղէտս կոկծալի,  
որ եղեւ յայսմ ամի, զոր լսողաց սիրտք սա-  
սանի : Քանզի մինչ ի փախստեան էաք, զար-  
ձեալ եհաս ցասումն Աստուծոյ . զի եւ հոգմ

Հիւսուսային եւ սկսեցաւ աշխարհու լէհու 5  
չըրս կողմամբ . այս է թաթարաց գումարք  
եւ զունտ զունտ , ոյրելով , հրակիղելով , աւե-  
րելով , քանդելով , հրձիգ առնելով զաշ-  
խարհու . զոմանս գերի տանելով , զայլու սպա-  
նանելով , զայլու կողոպտելով , զայլու կապեալ 10  
պարանով ի ծախս տանելով զկին եւ զորդիս ,  
եւ զկոյս աղջկունս խայտառակելով , պղծե-  
լով եւ զրգվելով , սովով եւ ծարաւով մա-  
շելով , եւ մերկ քարչ ածելով ի տօթս ոժմո-  
ւայնոյ արեգակնակէդ առնելով եւ ի սուս-  
տիկ սառնառառույց ձմեռան դժնդակ ցրտոյն  
ցրտացուցանելով եւ կսկծալի կտտամահ եւ  
սովալլուկ առնելով . զստառեայս ի ջուր կամ  
առջեւ սուաց ձիոց ընկենլով , զպառաւանց  
եւ ծերոց զլուխ հատանելով , մեծազգի կա-  
նայս եւ ազատ զինւորս ընդ իւրեանս տա-  
նելով : Անդ էր տեսանել զմիչ եւ զկական ,  
յորժամ բաժանէին զհարսն ի փեսայից , զհայր  
ի որդոց , եւ զմայր ի դստերաց , եղբայր ի եղ-  
րօրէ , արք ի կանանց եւ ընկեր ընկերաց : 25  
Վա՛յ ինձ հաղար բերան , զոր ես աչօք տեսի-  
զի կապեալ տանէին բանակ բանակ որովէո  
զհօտս ոչխարաց , զտունս եւ զշինւածս այրե-  
լով , զոչխար , զձիս , զկով , զեզն եւ զամենայն  
անասունս սուրու սուրու քշելով . զի ո՞վ կարէ 30  
զրել զամենայն մի ըստ միոջէ . քանզի բազում  
զաւառ ամայի զարձաւ եւ մարդիկ ի շինուց  
հատաւ , վա՛յ ինձ , այս իրեք պատուհասէս :

Չորս օրինակ ի հնումն ի ժամանակս Դաւթայ  
35 իրեք ցասումն տվեալ Աստուծոյ Իսրայէլա-  
ցոցն, այժմ ի մեզ եղեւ հասեալ եւ կատա-  
րեալ՝ սով, սուր եւ մաշ. յորոց փրկեացէ Տէր  
Աստուած. ամէն :

Ժդ. ՄԵԼՔԻՍԵԴԵԿԻԿ ԿՈՂՄՈՂԻԿՈՌ Ի ԼԵՀԱ 1626

Խակ ի թզին թշէ<sup>1</sup>, սեպտեմբեր ամսոյ, եկն  
40 ի Լէհ իջմիածնոյ Մելքիսէթ կաթողիկոսն  
ծեր՝ ալեւոր, խելաց թափեալ եւ յուժէ ան-  
կեալ, յոյժ զինէմոլ եւ արծաթասէր, ունե-  
լով ընդ ինքեան յոլով ևափիսկողոսս հոմանիս  
իւր եւ զինարբուռ. խակ յուսմանէ բնաւին հե-  
45 ռուս. եւ կացին ի լով կէս տարի. <sup>2</sup>:

37 սբոց : — 40 էջմիածնոս :

<sup>1</sup> Մելքիսեդեկ ի լով հատաւ. 1626, Ազրիւ աշխն եւ  
զախառանեցաւ. 1627 Մարտ 18ին (Ն. Տ. Մարտ 27ին)  
ի կամքենից: «Ի թզին թշէ. սեպտ.» կը հայի զէպքի  
մըր, որ պատահած է 1628, Ակապտերերին, զոր Մի-  
մէռն միաք ունէր պատմել:

<sup>2</sup> Այսպէս միջակէտով կ'աւարտի այս հատուածը,  
որ ցոյց կու տաց թէ Միմէռն յանկարծ ընդ հատած է  
իւր տարեզրութիւնը: Յաջորդ տարիներու ազգային  
զէպքերու ժամին տե՛ս Յաւելուած Ա. Բ. Բ. :

## ՅԱԽԵԼՈԽԱԾ

ՅԻՇԵՍԿԿԵՐԵԿՆԵՐ  
ՍԻՄԵՈՆ ԳՎԱՐԻ ԼԵՎԵՏՈՑ  
Գ. Բ 2 Ե՞ն

---



## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

### 1. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ (1606)

«Արդ ի թվ. մ-ցե (1606) առըիլ կ. ի թագաւորութեան լեհաց երրորդ Զիկմուն-տին, ի կաթողիկոսութեանն տէր Մելքիսեդի եւ առաջնորդութեանն այսմ նահանգիս տէր Կարապետ վարդապետի, ևս անպիտան եւ յանարժան Սիմէռն զպիրս վերջին ստացողս պատվական զրգիս, որ է Գանձտետր եւ տա-զեր: Եւ զնեցի զամ ի հալալ ընչից եւ յար-դար վաստակոցս, յիշտատկ ինձ եւ իմ ծնո-դացս, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ . ամէէն» :

Լվով, Համալսարանի Մատենադարան,  
Cod. arm. 52 (Գանձտարան-Տաղարան):

### 2. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՑ (1609)

Փառք ամենազար, ամենիմաստ, ամե-նաստատ Հօր բարերարի . . . : Իսկ բիւրք բիւ-րուց Եւ հազարք հազարաց կամ թէ Եւս ա-ռաւել ըստ աստեղանման անբաւութեան եւ կամ թէ զվերնականացն թուոյն ասել համե-մատ, առաքեալք, վարդապետք, հայրա-պետք, որբազան եպիսկոպոսունք եւ ընտրեալ քահանացք, որբասէր սարկաւունք եւ միա-

կամ բնաւին առաջ եկեղեցւոյ հանդերձ պաշտօնէիւք և ժառանգաւորօք, որք անսայթաք պարզուացիւ հանապարհորդեալը հասին առ յոյսն իւրեանց : Եւ արդ այսքան և յայսպիսի բարեվայելուչ և մեծափառ սրբոց գումարս բարէխօս աշխարհէի և ապաւէն քաւութեան մեղուցելոց :

Զոր զիմեալ մեծաւ յուսով բարի արժառու և շառաւեզն հաւատարիմ Տէր Ազարիայն բահասէր և ապաւառոք բանին՝ կամեցաւ զայս առաւտածային զիրս որ կոչի կանոնազիրք և մեծաւ փափառանօք և սիրով ևս զրել զատ ի վայելունն անձին իւրոց և յիշատակ Հոգոյ, զոր ի վազուց Հետէ փափառեալ ցանկացը լուսալրական և հոգիալուր մատենիս : Եւ մեք տեսաք զփափառ և զաէր նորա զոր ունէր առ Հոգեւորն, ի միտ տուայ զրանի Եսայեայ որ առէ, թէ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և ընտանեակ յիշրուազէմ զուսն այն ուսոյն և տէքունական Հրամանին սերտ սրտիւ և բոլոր հաւատով ևս զատ զրել :

Եւ արդ ևս յետին և յանարժանն ի մանկունս եկեղեցւոյ, թափառնիկս և յունայնս ի զործոց բարեաց, մեղապարտ Սիմէռն զպիրս, որ անուամբս միայն ևմ, այլ զործովս հեռացեալ մեկուսի : Շնորհիւ Տեսան սկսայ ևս ոզորժութեամբ նորին կատարեցի զաւարք զիրքս որ կոչի կանոնք, և է յոյժ պիտանի ևս անզիւտ, որպէս ևս առաջիկայդ ընթեռնլով իմասցիս, թէ որպիսի

աշխատութեամբ և բազմախնդիր ուզմամբ ի  
բազում տեղաց և գաւառաց ժողովեալ հա-  
ւաքեաց ի մի, յոյժ փարթամ և հարուստ:  
Բայց կատարեցաւ սա ի մեծ թվիո Հայոց  
ԱՄԲԵՐՈՐդի և ի յամսեանն օգոստոսի իր,  
ի Հայրապետութեան տէր Մէլքիսէթի և ի  
բոնակալութեան սութման Ահմատի, ի մայ-  
րաքաղաքն Կոստանդնուպոլիս, ընդ Հովու-  
նեաւ որբոյն Սարգսի դօրավարին և որդոյն  
նորա Մարտիրոսի, ի զառն և անբարի Ժո-  
մանակո, որ գերի և ի սուր վարեցաւ ազգս  
Հայոց, և բուն Հայրենիքն մեր ի կոր կոր-  
ծանեցաւ մինչեւ ի սպառ, զոր ի յառաջդ  
բանի ծանիցես զյիսկատառ բանս ազէտիս  
մերային ուսոիս՝ ասացեալ ի Ազարիայէ ուսա-  
նաւորիւ տաղով: Արդ երես անկեալ աղա-  
շեմ դհանդիպողագ յայս սուրբ կտակիս և  
Հոդելի բուրաստանիս, որ գրեցաւ ի լաւ և  
յընտիր օրինակէ: Յորժամ կարդայք կամ  
օրինակէք կամ թէ Հարեւանդի անցանէք, յի-  
շէք ի բարի ազօթո ձեր զվերոյասացեալ տէր  
Ազարիայ աշակերտն և քաջ և արի, հմուտ  
և ճարտար իմաստակն, որ էր լցեալ ու-  
տուածաշունչ գրովք, հին և նոր կտակարա-  
նօր. որ ոչ զեղերէր ի զրազմունս և ի ցնորս  
անցաւորիս, այլ միշտ և հանապազ պարա-  
պէր ընդ աստուածայինս, լինելով օրինակ  
բարի և աղ համեմիչ անհամացեալ մարգ-  
կան սեռիս, առնելով և ուսուցանելով ըստ  
Աւետարանի բանին, թէ Որ արացէ և ու-

ուսւցէ, նա մեծ կոչեսցի։ Զոր եւ ոչ ազա-  
լէր ժողովել ինչո եւ ստացուածս կամ զար-  
ծաթ, այլ միշտ փոյթ եւ ոչը ունէր զրոց,  
զոր Տէր Աստուած նմա արիութիւն, քաջու-  
թիւն եւ զօրութիւն տացէ՝ զօրանալ եւ բարձ-  
րանալ փառաց ի փառս եւ ի զօրութիւնէ ի զօ-  
րութիւն։ Եւ յետ աստեացս ժառանգէ զերկնից  
արքայութիւն։ Որ ողորմի Տէր Աստուած ստա-  
ցողի զրոյս Տէր Աղարիոյի։ այլ եւ ծնողացն  
հօրն Մելքիսեդեկի, եւ մօրն Նսեֆին, եւ եղ-  
րաբցն Մահակին եւ Նատարին, հօրեղրաբցն  
Տէր Ներսէսի եւ Կարապետի, այլ եւ քերցն  
Շահկուլին եւ Մուղալին եւ Հոփիսիմէին,  
եւ ամենայն յարեան մերձաւորացն եւ իմ մե-  
զալարատ զրչիս, եւ ծնողաց իմոց ննջեցե-  
լոց՝ մահղեսի Մարտիրոսին եւ մօրս Դոլ-  
վաթ խամունի։ Եւ եղրօրս Յովհաննեսի եւ  
քերցս որ են ի մարմնի՝ Ճուհարին եւ Հոփի-  
սիմէի, եւ ամենայն աղդառահմի։ Եւ զրիս  
անյարմարութեան եւ սխալանաց հայցեմ նե-  
րել եւ անմեղագիր լինել, զի էի ողանդախտ  
եւ զարիսպ օտար երկիրս, եւ միտք իմ ցնոր  
եւ սփիւռ, եւ միայն զկատարումն փութոյի։  
Եւ Աստուած որ տուառ է ի տուրս բարեաց,  
տացէ ձեզ յիշողացդ եւ մեզ յիշելոցս զիւր  
տուառ ողորմութիւնն եւ զերկնից արքայու-  
թիւնն եւ ինքն աւրհնեալ եղիցի յաւիտեանս։  
ամէն :

ԿՊ յաջորդէ (թղ. 590ր—594ա) Աղա-

բիոյի Յիշատակարանը, դրուած Ախմէռնի  
գրչով, որ կ'աւարտի այսպէս :

«Արդ ի սոյն բազմավլթով ժամանակիս  
կատարեցաւ զիրքս այս ձեռամբ ուժէնն  
Լեհցի Ախմէռնի նօտարի» :

Աղան վ. Համամճեան, Յուցակ Հոյերէն  
ձեռազրաց Գաղատիոյ, թ. 11 (Կանոնա-  
զիրք), թղ. 588ա—590ա :

## 3. ՅԻՆԱՏԱԿԱՐԱՆ ՇԱՐԱԿԱՆՈՅԻ (1615)

Ծնորչիւ Տեսոն սկսոյ եւ ողորմութեամբ  
նորին յանդ Ելեալ կատարեցի զԵրդս շարա-  
կանց, զոր տսացեալ է Հոգիարուղիս սուրբ  
արանց եւ երաժիշտ Հայրապետաց ի պայ-  
ծառութիւն սուրբ Եկեղեցւոյ եւ ի Հրանուն  
ուսումնասիրացն : Արում ցանկացեալ եղեւ  
բարեմիտ եւ ուսումնասէր, Հեղահոգի քա-  
հանայն տէր Յովհաննէս քահանայն կամ-  
խեցի . եւ մէծաւ սիրով եւ յօժարութեամբ  
ետ զատ զրել փափազմամբ սրտի ի զրազումն  
անձին եւ յիշատակ Հոգւոյ . զոր Տէր Աս-  
տուած բարով վայելել տացէ նմա եւ ընդ եր-  
կայն տւուրս : Այլ եւ ընդ նմին յիշես ջիք  
զհամեստ եւ զաստուածասէր կրաւնաւորս  
պարկեշտս որ օգնեցին տրօք այս սուրբ ձայ-  
նաքաղիս եւ Աստուած ողորմի տացէք Թա-  
մամմին, Տօլվաթին, Շահզատին, Հուրմին,  
Եազութին, Միւս Թամմամն, Սալշուկին, Մէ-  
լիքն, Փաշան, Կուլիստանն, այլ եւ զիթարա-  
կօզն, Մանուկին, Ախմաւոնն, Սարգիսն, Խու-  
մարն . զոր սոքս յօժարութեամբ ետուն

զղինս զրքիս. զոր Տէր Աստուած ընդ միոյն  
հարիւրապատիկ եւ հագարապատիկ հատուս-  
ցէ փոխարէնն աստ եւ ի հանդերձեալն ար-  
ժանի արասցէ զնոսա եւ զիւրեանց ննջե-  
ցեալսն խաչին լուսոյն, երանական ձոյնին,  
անթառամ պատկին, անվախճան ուրախու-  
թեան, ի դասն աջակողմնան եւ ի բարբառն  
որ ասէ. Եկայք աւրհնեալք հօր: Բայց զրե-  
ցաւ սա ի թուին Հայոց Ռեկի ամի եւ ի ամ-  
սեանն Յունիսի, ի կայսերանիստ մեծահամ-  
բաւ քաղաքն կսստանդնուսպոլիս, որ այժմ  
կոչի Ստամբուլ, ի դուռն Սրբոյն Նիկողայոսի  
սրանչելագործ հայրապետին, ի թաղն Վլան-  
կու. ձեռամբ ապիկար եւ անարհեաս գրչիս  
Սիմեոնի, զոր տկար եւ փանաքի մտօք . . .  
Ճոլոր եւ ցրիւ եւ անարժան մատսամբ նօտրե-  
ցի: Մոխրամած զիմօք երես անկեալ աղա-  
չեմ զհանդիսպողադ այսմ տառիս, սղալանացն  
ներել եւ զպակասն յնուշ, վասն պանդխու-  
թեան եւ զարիսպութեան զմիսս ցնորեալ էր  
եւ զինելս մերժեալ. ըստ այնմ թէ լաւ է . . .»:

Թորոգոմ արքեալ. Գուշակեան, Ցուցակ  
Հայերէն ձեռապրաց Ա. Նշանի վանոց Սե-  
րբաստիոյ, թ. 123 (Շարակնոց), էջ 77 =  
Հանդ. Ա. մ. ս. 1927, էջ 47:

#### 4. ՑԻՆԱՏԱԿԱՐԱՆ (1618)

Փառք . . . Արդ ես տկարս (յ)արհեաստ  
գրչութեան եւ յետնեալս յամենայնի հիւանդ  
դոլով . . . սկսայ . . . եւ յանդ ելեալ կատա-  
րեցի ի վայելումն . . . բարեմիտ, հեղահոգի,

քաղցր եւ հանդարտ կուսակրօն տէր Յա-  
կովը արի Եւ քաջ կրօնաւորին . . . Բայց զրե-  
ցաւ զիրս թիւ . Ծիկէ, յունիս ԺԹ, աւուր ա-  
մառնամտի, ի գուռն սուրբ Նիկողայոս  
Սքանչելագործի, որ կայ յԱստրանու գուռն,  
ի քաղաքն Կոստանդինուսպոլիս ձեռամբ թե-  
րավարժ զրչի Լէհցի Սիմէօն դպրի : Արդ  
աղաչնմ զհանգիպոզտ անմեզագիր լինել  
զրիս անյարմարութեան եւ սղալանաց, զի  
յօրինակին տէրն զնալու էր, վասն այն ի  
տվէ եւ ի զիշերի անձանձիր<sup>1</sup> նստելով նօտրե-  
ցի զսա բազում փութով եւ շտապով, այս է  
զայս ԺԴ. տետրս ի Ժ. օրն . . . :

Մ. Տէր Աւետիսեան, Ցուցակ՝ Հայերէն  
Ճեռագրաց Նոր-Զուզացի, թ. 256, Ամենա-  
փրկիչ վանաց (Գիրք Առզոմոնի եւ ԺԲ. մար-  
դարէք), թղ. 134ա :

## 5. ՅԻՆԱՍԱԿԱՐԱՆ ԱԽ ՈՐՍ ԳՐԱՅ (1618)

«Արդ զրեցաւ զիրքս որ կոչի Առ որս  
ասացեալ սրբոյն Գրիգորի Աստուածաբանի,  
ի լաւ Եւ յընտիր օրինակէ, ի վայելումն եւ  
յիշատակ բարէմիս եւ ուսումնասէր բանա-  
սիրի տէր Յովանէս հեղահոգի ընտրեալ քա-  
հանայի, որ մականուամբ կոչի Քարմասա-  
նենց. որ բազում բզձիւ եւ մհծաւ վասփա-  
զանօք ևս զրել զսա ի արդար վաստակոցն  
եւ ի հալալ յարդեանց, զոր Տէր Աստուած

<sup>1</sup> Զ. անձանցիր :

բարով վայելել տացէ . ամէն : Բայց զրեցաւ առ ի թղին Հայոց (Զգ + ին տողին վրայ գրուած եւ զնօպուած) քառիցս (ի լուս . չորսիցս) յիսնակի և . Պ յարելինին , այլ և . Ե . րդի ունելորդի , Օգոստոսի Ժմի , ի տիրախնամ և . առոտուածապահ . մայրաբազարս Լէվ կոչեցիալ , ի զուսն Նեղման սուրբ Աստուածածնի , ձեռամբ մեզամած և . փծուն զրչի , Սիմեոն զպրի Զամոսցացու : Զոր Երես անկեալ տղուշեմ զհանգիպոլոզ , յիշել ի Տէր բարի մտօք , զիերոյասացեալ ստացոզ սորին զտէր Յովանէն և . զիւր ձնօգան , և . զիս անարժան զրօցս . և . որք զմեղ յիշեն , յիշեալ յիցին յաւուրին ահեղին . ամէն :

Վիեննա , Միսիթ . Մատ . թ . 96 , թզ .  
171ր—172ս . առ' Տաշեան՝ Յուցակ , էջ 365  
—366 : Նոյնի Ալիշան , Կամենից , 174 :

#### 6. ՅԻՇԱՍԱԿԱՐԱԿԻ ԼՈՒԽՄԱՆՑ ԱՌ ԱՐՍ ԿՐՈՅ (1619)

«Արդ զրեցաւ զիրս որ կոչի Լուծմանը սրբոյն Փրիդորի Աստուածաբանի Առ որս ասացեալ զրոյս , յաւ և . ընտիր օրինակէ , ի վայելունին բանասիրի տէր Յովհաննէս ստացեալ քահանայի որ մականուամբ կոչի Քարմառանենց , որ բազում բղձիւ ևս զրել . զոր տէր Աստուած բարով վայելել տացէ . ամէն : թզ . Ակն . յիշեաղիք զԱլիմէն զպիր Զամոսցացին :

Զեռ . էջմ . 100 , թզ . 131ր :

## 7. ՅԻՆԱՏԱԿԱՐԱՆ ԱՊՈՔԱԿԻՐՈՅ (1627)

Հրդեհ կարուղովի:

«Ամիբը աղա ցանկացաւ այս սխրալի գրքիս, որ կոչի Աղօթամատոյց. զի կայ ի ոմա ժողովեալ բազում և ազդի ազդի ազօթք... անուանի սուրբ Հարց Եփրեմի, Յոհանու Ռոկերեանի և Յոհաննու Գառնեցոյն և այլ սրբոց: Բայց գրեցաւ սա ի դառն ժամանակիս...: Այս ամի պիղծ եւ զազիր ազգն նետողաց, որ են Թաթարք, մըտին յերկիրս Իրախաց եւ զայն ոչ թէ միանդամ, այլ երկիցս եւ երից եւ այլ յոլովս ի տարոջն եւ աւեր ածին աշխարհիս մերում...:»

Եւ մինչ յայսմ նեղութիւնն եւ վշտի եւ տառապանաց էաք... եկն Եհաս քօթ զուժի եւ չար լուր, եթէ մեծ հուր անկաւ ի քաղաքն Եառառլով, ուր էին ժողովեալ բազում վաճառականք յայլ եւ այլ գաւառաց եւ քաղաքաց... այլ եւ կամարական զմոլիթայարկ վիմաշէն փառաւոր եկեղեցիքն մինչեւ ի սպառ այրեցեալ փշրեցան, զի բնու ոչ մնաց շինութիւն, քանզի չորեք կողմանց էր պատեալ պաշարեալ չուրջանակաւ հուրն, զի եւ մարդիք այրեցան, այլք կիսայրեացք եւ կէսքն մօրիօք եւ հերօք խանձեալք մազապուրծ լեալք փախստականք ի քաղաքէն ի զուրս հազիւ անկանէին. իսկ ոմանք խելաթիւրեալք եւ մոլեղնեալք վասն մեծի աղետիցն եւ կորստեան բնչիցն, ոմանք զզեստ այրեցեալք մերկ եւ բոկք զիսիրացք սեւազէմ եւ այլակերպ ահարկուք երեւեալ տեսողացն. քան-

զի ի գիշերի եղեւ հուրս այս և երկու ժամեն  
այրեցաւ քաղաքն և ամենայն բնակիչը . . . :

Եւ մինչզեռ յայս տրամաթեատ և շփոթի  
կայտք՝ հասին ի վերայ մեր . . . սաստիկ  
մահաբարաժամք . . . երկիւղ անկաւ ի սիրոս  
բնակչաց, որովէս եւ ամբախնամ սաստաժա-  
պուհ քաղաքն բարէլի լէվ<sup>1</sup>, յորժէ ժամանակն  
ամենեքեատն. ընդ որո եւ ևս եզկելի . . . ժա-  
խեա ի զիւղաբազմք մի, որ կոչի Ռահաթին,  
թ. միլ ի Լէվո<sup>2</sup>. եւ կացի անդ . . . ի Վերաց-  
ման Ս. Խաչէն մինչեւ ի Ս. Յակոբ. եւ  
անդ . . . զրեցի . . . բազմերանդ զիրքս ազօթից  
բազում աշխատութեամբ Բ. և Պ. զազա-  
փարէ օրինակելով . . . :

Վերջին թուղթը (թղ Տա—ր) աղօթքի  
կոտորէ :

Յիշատակարանիս սկզբնազիրը կը զրո-  
նուի Խաչիկ Վ. Դադեանի «Յիշատակարանց  
Ժողովածուի» մէջ<sup>3</sup>, եւ կը կրէ Թ. Զ., ընդ  
ամենն 8 բուդր, զրուած նուրազիր։ Զեսա-  
զիրը, որմէ դուրս կորզուած է Յիշատակա-  
րան, եղած է «Գիրք Աղօրից», զրուած ի  
Շնիւրին. ի խնորդ Ամիր աղայի։ Յուցա-  
կազիրը, որ ժաղուածարար յառաջ քերած է  
Զեսազրին Յիշատակարանը, դիտմամբ կամ  
ոչ՝ դուրս ձգած է նաև գրչին անունը։ Այժմ

<sup>1</sup> Տայ. Բարեկյէլզիւլ:

<sup>2</sup> Տայ. ի Ծէվու:

<sup>3</sup> Յակոբ. Յ. Թօփէնեան, Յուցակ Ժողովածուաց  
Դադեան Խաչիկ զարդապէտի. Խառն Բ. Վազարչա-  
պէտաւ 1900, էլ 29:

կարդալով Սիմեոն Լեհացւոյ տողերը 1627ին տեղի ունեցած Եարուալի իրդեհի, Լովի մահտարաժամի եւ այս պատճառաւ իր փախստի մասին (էջ 381—382), որ եւ է տարակոյս չի մնար, թէ «եղկելի գրիչը» միայն Սիմեոն կրնաց բլլալ։ Փափագելի էր անշուշտ ունենալ այս Յիշատակարանս ամբողջութեամբ։ Ես յառաջ քերի այն միայն, ինչ հաղորդած էր Յ. Թօփինեան։

## Տ. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՈՍԽԵՓՈՐԻԿԻ (1629)

«Արդ զրեցաւ զիրս ի թուականիս Հոյոց ՌՀՅ. Սեպտ. ԺԵ. օրն շարաթ, ի յաշխարհս Բողաց, ի ... քաղաքս Լէվ կոչեցեալ, ընդ Հովանեաւ Ննջման սուրբ Աստուածածնին... ի կաթողիկոսութեան... տեառն տէր Մովսէսի... որ յայսմ ամի նստաւ յաջորդ յաթոռն Ս. Գրիգորի կամօքն Աստուծոյ և Հաճութեամբ և ընտրութեամբ ամենայն Հոյոց, Եկեղեցականաց և աշխարհականաց։ եւ ի թագաւորութեան լեհաց Զիկրունդին, զոր և այսմ ամի մեռաւ Շահ (Ա.)պազն Պարսից և ի կենդանութեան նստոց զթոռն իւր Շահ Սօփի ժառանդ թագաւորութեան իւրոյ, զորդիան ի բաց մերժելով։ Բայց զրեցաւ զիրքո այս... Ռսկեփորիկ... ի խնդրոյ բարեմիտ և հեղահոգի զրասէր և ընթերցող միշտ խմատուն և հանձարեղ տուն Աստուծոյ խոճայ Յովանէսին Զուղայեցո և ճարտար հմուտ հագիմ ընտիր բժշկին, որ բաղում յղձիւ և

փառփառանոք ետ զրել զսա ի հալալ ընչիցն եւ ի արդար վաստակոցն, ի վայելումն անձին իւրոյ եւ ի յիշատակ հոգոյ, զոր տէր Աստուած բարով վայելել տացէ նմա եւ ընդ երկայն տւուրո. ամէն, եղիցի: Ով սուրբ ընթերցողք... սխալանաց եւ խոշորութեան զրիս չի մեղաղքէք, զի խիստ թախմձեալ, անձամբ, տրտում հոգով եւ տխուր սրտիւ զրեցի, ի նեղ եւ ի դառն վշտաշտու ժամանակիս, զի ամենայն կողմանց եւ ամենայն ուստէք պատեալ պաշարեալ էին զմեւք թշնամիք եւ շատ տառապանք, այլ եւ սովք, սրածութիւնք, սասանութիւնք եւ ազգի ազգի արհաւիրք եւ մահ տարաժամք: Զի յարեւմը կուսէ անհաւատ ուրացողն որ կոչի Շվետ, մեր երկիրս մտեալ՝ զմեծամեծ քաջաքս եւ անսովիկ բերդս էառ, զիւզս եւ ազարակս եւ աւանս, եւ յոյժ փարթամեցաւ աւերելով, ազականելով զերկիրս. զի չորս ամ հրկիղէր, յափշտակէր եւ ամայի դարձուցնէր, մինչ զի ոչ եթող բնաւ շինութիւն, մինչ զի մեծատունք եւ պարոնայք մուրացիկ զարձան եւ առաւել հարկապահանջութենէն ի սպառ կորեան եւ ի սովոյ սատակեցան եւ ննջեցան: Այլ եւ հիւսիսային կողմանէ ազգն նետողաց զազիր եւ զարշելի պեղծ թաթարքն մտեալ աշխարհս մեր, բազում եւ անթիւ զօրօք յոլով վեաս զործեցին եւ շատ զերելով սպանանելով, քանդելով, աւերելով եւ այրելով զզիւզս եւ զքաղաքս եւ բազում

կանոյս եւ զկուս աղջկունս պղծելով, դքանանոյս եւ զկրօնաւորս, այլ եւ զհաւատվորս զերի վարելով. վա՞յ ինձ: Եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն ծովացեալ մեղաց խմոց, զոր ևս ցամագին զիմօք աղիողործ կոծմամբ ականատեսն եւ ականջալուք եղեալ իրացս՝ վշտանայի, հոգոց համեկի, լոյի և հառաջէի...: Յիշեցէք... զստացող սորտ զստարոն Յովանէսն եւ զիս անարժան զրիչո զՄիմէոն դպիրս...»:

Ս. Տէր-Աւետիսեան, Յուցակ Հայերէն ձեռագրաց Նոր-Զուզոյի, թու. 235 Ամենատիրկիչ վանաց, թղ. 377ա—380բ (Ասկեփուրիկ) :

## 9. ՎԻՊԱՍԱՆԻԹԻՒՆՆ ՆԻԿՈԼԱԿԱՆ

Միմէոն դպիր իւր Աւղեգրութեան կից տուած Տարեգրութիւնը կ'աւարտէր Հատուածով մը, որ նուիրուած էր Մելքիսեդէկ կաթողիկոսի Լեհաստան այցելութեան: Յայտնի չէ ինչ պատճառաւ՝ կիսաւարտ թուզցած էր Հեղինակը այս Լեհահայոց ժկ. դարու պատմութեան Համար այնքան կարեւոր Հատուածը: Առանց տարակուսի մտագրութիւն ունէր Միմէոն նկարագրել Հոն, Համառօտիւ կամ ընդարձակ տողերով, Մելքիսեդէկ կաթողիկոսի անխոհեմ միջամտութիւնն Լեհահայոց Ակեղեցական խնդրոց մէջ, Նիկողայոս արքապիսկոպոսի ձեռնագրութեան միջազէպը, անոր ի կամենից Գրիգոր

կեսարացւոյ հետ ունեցած բախումն էւ զերպարքէ ա Խաչատուր կեսարացւոյ նուիրակութեամբ այցելութիւնն ի Լով էւ տիրող գժուութեանց զայրացումը, որուն հետեւութիւնն եղաւ արքեպիսկոպոսին յարումն կաթողիկէ Եկեղեցւոյ<sup>1</sup>:

Այս դէպքերուն մօտաւոր ականատեսն էր Սիմէռն անիկա այս միջոցին կը գտնուէր Լվով իրրեւ ուսուցիչ տեղոյն հայկական դպրոցին: Իր վերոյիշեալ տողերէն արդէն կը տեսնուի, թէ անիկա կաթողիկոսին համակիրներէն չէր: Այն անցուղարձերու հանդէոլ, որոնք ամբողջ քաղաքը զբեթէ 10 տարի վրդովեցին, չէր կրնար ինքը անտարբեր մնացած բլլալ: Իր մէկ Յիշտառակարանը կջմիածնի թ. 1004 ձեռադրին մէջ, ցոյց կու տայ թէ բոլոր հոգւով յուղուած էր ինքն ալ: Հոն դառնացած որոսվ կու տայ 1631—1636 տարիներու անցքերու նկարագրութիւնը: Պէտք է Ենթադրել ասկէ, թէ Սիմէռն ուրիշ առթիւ ալ խօսած էր 1626—1631 տարիներու մտսին:

Դէպքերուս մանրամասն մէկ նկարադրութիւնը հասած է մեզի չափական մէկ պրութեան մէջ, որուն սկզբնաւորութիւնն էւ վերջաւորութիւնը պակասաւոր է, ուստի և հեղինակն ալ անծանօթ: Այս զրուածքը հրա-

<sup>1</sup> Տես խնդրոցս մասին համառօսիւ Հանդ. Ամս. 1934, էջ 4—27 = Հ. Ն. Ակին և ան, Մազմէս Գ. Տաթեացի, Վիեննա 1936, էջ 248—286:

տարակած է Հ. Դ. Ալիշան իւր կամ ենիցի<sup>2</sup> մէջ «Վիպասանութիւն Նիկոլական» խորագրոյ տակ : Ասոր կցած է հրատարակիչը հետեւեալ ծանօթազրութիւնը (էջ 202, ծանօթ, 1)։ «Այսպէս անուանեցինք զգրուածու, որոյ սկիզբն եւ վերջն այլ պակաս ըլլալով մեր միակ ծանօթ օրինակին մէջ, անձանօթ մնայ բուն վերնագիրն եւ հեղինակն . որոյ սյրած սրտով ըստծներն՝ յայտնեն որ ժամանակակից էր զնոյն յայտնէ եւ վարդանայ Յովեանեան անկէ առած վկայութիւնն . եւ թուի <հեղինակն> ի Փոքր Հայոց կողմէն զաղթած» : Գրուածքիս հեղինակին անունը տնձանօթ մնացած է նաև Վարդան Յունանեանի, Լվովի արքեպիսկոպոսին, որ Ժ. Ռաբու սկիզբը աչքի առաջ ունեցած է Վիպասանութիւնն եւ անկէ 8 առդ յառաջ րերած է իւր առ Եւգոկիացիս գրած Թուղթին մէջ, «Պորոց երեմն դրեաց ոմն» ըսելով (Կամենից, էջ 127) : Անչուշտ Յունանեան յանուանէ պիտի յիշէր այդ «ոմն»ը, եթէ ծանօթ ըլլար իրեն հեղինակին անունը : Հ. Ալիշանի Ենթագրութիւնը, թէ հեղինակը «թուի ի Փոքր Հայոց կողմէ զաղթած», յեցած է հաւանօրէն լեզուական ինչ ինչ ասութեանց վրայ, որոնք առաւելապէս Փոքր Հայոց բարբառին յատուի են . առ այս կարող է նաև «չտեսի յայլ տեղ սոցա նման» տողը (էջ 202) ստիթ ընծայած

<sup>2</sup> Կամենից . Տարեգիրք Հայոց Լեհաստանի եւ թումենից հաւատեաց յաւելուածովք . Վենետիկ 1896, էջ 202—214:

ՌԱՄԵԼ զբանցի մը ԵՆԹԱԳՐԵԼՈւ յանձին ՀԵՂԻ-  
ՆԱԼԻՆ :

Թէ այժմ պակսած սուածին մասին մէջ  
ի՞նչ նիւթ չօշափած էր ՀԵՂԻՆԱԼՐ, յայտնի  
չէ : Յամենայն դէպուաւելի ընդ հանուր քաղա-  
քական կացութիւնը նկատի ունէր . որմէ ոս-  
տումով մը կ'անցնի ազգային պատմութեան .

Քանի բանկիլ մի այլ ասեմ,  
Վասն Հայոցն որք ի Լովն Են :

ՎԵՐԴԱԿՈՐՈՒԹԵԱՆ պակաս մասին մէջ կը  
ովատմուէր առանց տարակուսի Օսմանեան  
բանակի վերադարձին և սուլտան Օսմանի  
սպանութեան, ինչպէս նաև Ապազա փաշայի  
ազգատամբութեան և Ենիչէրիները կոտորե-  
լու մասին :

Ինձ կը թուի թէ զրուածքս նախնաբար  
իբրեւ Յիշատակարան կցուած էր ձեռագրի մը,  
ուսկից ապա փրցուած հանուած է, սկզբնա-  
ւորութիւնն և վերջաւորութիւնն մնալով ձե-  
ռագրին մէջ : Այս ԵՆԹԱԳՐՈՒԹԵԱՆՆ ապա-  
ցոյց կը համարիմ թերատ սկզբնաւորութիւնը .

||||| ցաք  
ՆԵՐՀԱԼ ։ անմիաբան կացաք  
և վերջաւորութիւնն՝

Ապա Օսմանըն շըվարեալ  
ինքն և իւր զօրքն նկուն եղեալ,  
Վլատիսլաւին ովատզամ յղեալ,  
Թէ եկ լեր դու ընդ մեզ հաշտեալ :

Տողերուս շարունակութիւնն ունինք Սիմէռն լեհացւոյ Ռողեգրութեան կից տուած Տարեգրութեան մէջ, ուր կ'ըսուի (էջ 367)։ «Եւ ասէ (Օսման սուլտան) ցմեծ վազիրն՝ Պայրամ փաշան։ Գնա եւ զոր ինչ կամիս արա։ Իսկ նա միջնորդ կալեալ զՅՈւախաց պարոնն, որ կոչէր Քասրար, եւ զայլո՞ սուաքին առ Վլատիուլաւուս որդի արքային վասն հաշտութեան։ Զոր յետ բազում երթեւեկութեանց՝ արարին ուխտ եւ զաշինս Էրդմամբը ընդ միմեանս . . .»։

Արդէն այս համեմատութիւնը վիպասանութեան եւ Տարեգրութեան մէջ կարող է վաստ ծառայել, հաստատելու թէ վիպասանութեան հեղինակը սերտ կառ ունի Տարեգրութեան հեղինակին հետ, մինչեւ իսկ պնդելու չափ թէ Տարեգրութեան հեղինակը Սիմէռն միաժամանակ հեղինակն է վիպասանութեան։ Կը հաստատեն զայս ոչ միայն պատմական բովանդակութեան նոյնարան համաձայնութիւնը եւ զազափառաց նոյնութիւնը, այլ եւ զրութեան ժամանակը։ Վիպասանութիւնը գրուած է 1634ին։ Նոյն տարին վերջին եղրն է նաեւ Տարեգրութեան գրութեան։

Երկու հեղինակներու նոյնութեան համար ներքին վաստեր ունինք ոչ միայն Տարեգրութեան մէջ, այլ եւ Սիմէռնի ուրիշ մէկ գրութիւնը՝ 1636 թուի Յիշատակարանը կուտայ մեզի կոռուաններ, Սիմէռնի գրչին վերագրելու գրուածքս։ Կը ներկայացնեմ հսուհանեալ համադրութիւնները։

Վիպասանութեանու հեղինակը զիտէ թէ  
Լովցիք «բնական Անեցիք Են» (202)։ Սիմէռն  
Լովի նկարագրութեան մէջ կը զրէ (Ռոզ.  
346)։ «Եւ առին թէ յինքու եկած են անդաց  
Հայք . . . եւ այս չեն նախատինք, Եթէ Են  
Անեցիք . . .» :

«Եւ չկիտեն զլեզուս Հայքեան,  
Եւ զինչ կարգան չի հատկանան» (202)։

Սիմէռն կը զրէ։ «Եւ Լովոց Հայքի Հայ-  
նակ չի զիտեն, այլ լէ Հնակ և խրչակնակ  
զրուցեն, որ է թաթրի լեզու» (Ռոզ. 346)։

«Ով Եղելի Նիկոլ թերի,  
Նրմանեցար Պօղ երիցի,  
Կամ Վասակայ չար իշխանի,  
Եւ այլ բազմաց ուրացողի» (209)։

Օիշատակաբանին մէջ կը զրէ Սիմէռն։  
«զի առանձի Եղեւ ուս (Նիկոլ) Հակառակ  
Հայոց քան զՊօղ էրէցն եւ զուրացողն Վասակ»։  
«Վիպասանութեան հեղինակը Յովհան Կուլի  
Համար կը զրէ».

«Մեր մեղքն երեր քաղաք Լովի» (311)։

Սիմէռն Օիշատակաբանին մէջ կը զրէ  
Մելիքանուղեղ կաթողիկոսի Համար։ «յորժամ  
Երեր զնու մեր մեղքն ի Լով»։

«Անդիւտ զրեանքն որ Լով կային  
Սրայ խազնիցն Ելեալ էին» (214)։

Յիշատակարան . «ապնիւ գրեանս վարդապետականս ի թագաւորական խազնայէ ի գուրս ևլած , մահաւանդ Արսու ևւ Քափայու» :

Անդրագոյն նմանութիւններ մտքի ևւ ոճի կը թողում ընթերցողներուս անձամբ վերհանել Վիպասանութեան ևւ Սիմէռնի Ռւղեցրութեան ևւ Յիշատակարաններու մէջ :

10. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀՆԳԱՄԱՏԵԽԻ ՄԵԿՆԱՒԹԵԱՆ  
ՎԱՐԴԱՊԵՏԱՑ (1636)

Սիմէռն դպիր մէկն է այն Երեք գրիշներէն , որոնք օրինակած են 1636ին ի Լով Վարդանայ Մեկնութիւնն Արարածոց , որ ոպահուած է այժմ Էջմիածնի Զեռազրատան մէջ եւ կը կրէ 1004 համարը : Զեռազրիս մէջ զետեղած է Սիմէռն դպիր ընդարձակ Յիշատակարան մը , ուր համառօտիւ պատմելի ետքը 1634—1635 տարիներու քաղաքական գէպքերը՝ Լեհաց Զիկիամունդ եւ Վլատիսլաւ թագաւորներու յաղթական պատերազմները ընդդէմ Շուէտներու ևւ Ալագա վաչայի , Մուրաստուլտանի արշաւանքն Երեւանի վրայ ևւ Կ . Պոլսոյ Սուրբկունը , որոնց մասին նաեւ Ռւղեցրութեան վերջը յիշատակութիւն ըրածէր համառօտիւ . առանձին բաժնով կը խօսի նաեւ Լեհահայոց ներքին խնդիրներու՝ Նիկողայոս արքեպիսկոպոսի յարուցած հալածանքներու ևւ անոր անուղղոյց ընթացքի վրայ : Նկարագրութիւնը , զոր կուտայ հոս Սիմէռն , չարունակութիւնն է Վիպասանութեան , մա-

առմբ նաև կրկնութիւնը : Իրքեւ ժամանակակցէ պատճուած իրողութիւններ հետաքրքրական են անոնք, որքան ալ ցաւալի ըլլոյ գծուած պատկերը :

Կը հրատարակեմ Ջիշտասկարտանս այնպէս ինչպէս օրինակած ևմ 1927ին յէջմիածին, ակզրնազրին մրայէն : Դժբախտաբար տեղ տեղ համառուստած է օրինակութիւնն, ինչպէս բազմակետերը ցոյց կու տան :

Բնապրին մէջ կատարուած է մանր սրբագրութիւններ : Ճեսապրին ընթերցուածները նշանակած ևմ սոսրին լուսանցքի մրայ :

### ՅԻՇԱՏԱՎԱՐԱՆ ՎԱՐԴԱՐԱՅՑ ՄԵԿՈՒԹԵԼՆ ԱՐԱՐԱԿԱՅՑ

Կախիք Լեհաց ընդ Շունան և ընդ Ռուբրու : — Սուրկոն : — Պատերազմ սուլտան Մուրատի ընդ Պարս : — Խնդիրք Լեհանայոց . Բանուրիսկ նիկոլ արքեպիսկոպոսի :

Բայց նուրեցու զիբքս ի զառն և անբարի, վշտաշտա ժամանակիս . . . զի կողմէն հիւստայ, որ էր մեծ թախտ և հաստատ, հզօր և զօրեղ թազաւորութիւն, մեծ և հին ժամանակաց, ուր յայտմ նկուն եղեալ ի մարտս պատերազմի յոլով կոխւ տվեալ ոչ<sup>1</sup> կորացին զգէմ ունել արի և քաջ, յազմող, նորածին թազաւորին լէ հայ Վլատինութին . որ սրբաւոզոց արարեալ զանթիւ հեծեալո, զայլո զերեցուցեալ և զկէսս հնազանդեցուցեալ և ընդ ճեսամբ արարեալ, նաև զթա-

<sup>1</sup> Զեռ. սր :

զաւորն հարկիւ եղեալ, դքազաքս մեծամեծս, զբազում բերթս և զաւանս առեալ՝ բազում աւարաւ և մեծամեծ թօրերով դարձաւ խնդութեամբ ի տուն :

Իսկ երկրորդում ամի նորս թաղաւորութեանն կրկին ապստամբեցաւ ուն անհաւաս չար Շվէտն, ունելով բազում լութէր իշխանք և մեծամեծ պարոնայք, որ հայր արքային մերոյ<sup>2</sup> մարտ եղեալ յոլով ամս ընդ նոսա ոչ կարաց յաղթել մեծն Զիկմունտ, ոյլ յաղթեալ ի նոցանէ՝ առին զամուր բերթս և անուանի քազաքս և զգիւզս ի ձեռաց մերոց. և բազում օճիրս և լիւաս գործեցին յերկիրս Լէհու : Սա զկնի մահուան հօրն, որ էր թզ. Աշշ (1635), բազում զօրօք և անթիւ հեծելովք գնացեալ ի վերայ նոցա՝ յաղթեաց զօրութեամբ Քրիստոնի և էառ ԺԵ քազաք մեծ և անվանի և տիրեաց երկրին Շվէտու և. Իֆլանտի. տիրեալ ծովու և ցամաքի՝ դարձուցին զքազաքն ամենայն դոր առեալ էին ի ձեռաց հօրն. և ընդ հարկիւ արարեալ զնոսա՝ դարձաւ մեծաւ յաղթութեամբ առանց պատերազմի և կովոյ : Եւ այս ևս կողմն հիւսիսոյ է :

Իսկ յարեւմուտք մեծ աղմուկք և շփոթք դոն : Զի մեծ կայորն քրիստոնէից սուր եղեալ ի վերայ արիանոսաց Լութերաց և ոյլ չար հերետիկոսաց և աղանդաւորաց, բնաջինք առնելով և սրախոհող կոտորմամբ մինչեւ

<sup>2</sup> մերով :

ի սպառ . . . : Եւ թագաւորին Սպահիու , որ  
ամբու արեւմտիցն բոլոր մինչեւ Ենկի Տու-  
նեան <sup>3</sup> եւ Հրմուղ եւ մինչեւ ի Փոքր Հուն-  
գուստան . եւ թագաւորին եւս Թունցու , նաև  
Փայտն վասն սակաւ իրիք եւ պատճառաց  
իրար անկեալ են : Եւ մեծ չփոթ եւ ազմուկ .  
միթէ սուրբ խաղաղաբար Հոդին հաշտ-  
ցուցէ զնոսա . ամէն :

Այլ եւ հարաւակողմն չիք խաղաղութիւն ,  
զի Մահարաց պարսն Խարաֆլախու եւ Պուղ-  
տանաց կամին յիրար զիսկել եւ կոցիլ :

Բայց եղուկ ու վայ եհաս յարեւելք Հայոց  
Երկրին . քանզի ոյսմ ամին մեծ բռնաւորն  
Թուրքաց՝ սուլթան Մուրատն խրօխու եւ զո-  
ոոզ Հայարան , զնաց ի վերաց Շահ Սրբին ի  
պատերազմ Ժե՛թ տարպայ ձնի հոգով , եւ  
Հատեալ ի Կոհիօն քաղաք , որ է Ղանեայ ,  
աստմամբ չարին եւ խրատու վաս մեծամե-  
ծաց իւրաց՝ սաստիկ Հրաման եհան առենոյի  
աշխարհն իւր սուրկունի . Աւումէլիի եւ Անա-  
տոյի եւ ամենոյի սահմանն իւր , զի և տարեն  
ի վեր Եկքն մինչեւ Խ օրն զնասցեն ի տեղիս  
իւրեանց՝ առանց ամենոյն պատճառաց , ո'չ  
սակով , ո'չ արծաթով եւ ոչ ոյլով իւրիք վրկեա-  
ցին . եւ թէ ոք յետ Խ տուր դացին՝ չարա-  
չար մահուամբ սպանցեն եւ զինչան ամենոյի  
յափշտակեացեն : Որ եւ Հասին Հրովարտակիք  
արքայէն ի Ստամբոլ , որպէս ի հնումն Հա-  
մանաց պղծէ ի յԱրեւդ քաղաք եւ յայլին , ուր

<sup>3</sup> Եսբ Աշխարհ :

ցըուեալ էին իսրայելացոցն ազգն . ևթէ անդ լաց եւ հառաջ , աստ առաւելագոյն : Զի ի ամաց ի վեր իբրեւ տեղացիք լեալ , տուն եւ բնակութիւն շինեալ , այդի եւ բուրաստան , կրտակս , խանութս լի ապրանօք եւ ընչիւք . հարուստք եւ փարթամք՝ տնովք եւ տեղօք , որդովք եւ դատերօք , զարմօք եւ զաւակօք եւ ամենայն դոյիւք , նաև զգստերս տվեալ ոմանց եւ այլոց զգուստըն տուեալ որդոց եւ եղբարց եւ այսպէս կապակցեալ եւ բարեկամացեալ ի սէրն միմեանց եւ յընտելացեալ եւ բնուանցեալ :

Ապա պօստանձի ովաշին եւ մեծ վազիրն զայմախան հրամայեցին ամէն փողոցէ կոշէլ զիմանին եւ զիրիցնին , եւ սպառնալեօք պատվիրեցին որ մինչ ի օր մարդ չի մնայ կամ չթագչի ուրէք՝ ոչ հայ , ոչ տաճիկ , ոչ ճհուտ , ոչ հոռոմ , ոչ այլ ոք , միայն տեղացիք : Եւ ելեալ զինուորքն սարայու , վաշայէն , սուլպաշուն եւ զատիէն՝ հասախչիք , հասասնի եւ ենկիչարիք , չրծէին ի բոլոր քաղաքն , ի փողոցս եւ ի հրապարակս , ի ծածուկ տեղիս , ի խաներն եւ ի քարվանսարայս , նաև յեկեղեցիս եւ ի մէջիթս . եւ զորս զտանէին ի տան՝ ըմբոնէին , իբրեւ զմահապարտ եւ զչարագործ չարչարէին , հարկանէին եւ տանէին առ վէզիրն : Անդ էր տեսանել զլաց եւ զազազակ , զճիչ եւ զկական , զհառաջ եւ զկսկիծ . ո՞հ մեծի ազէտիս եւ տւա՛զ տարակուսանցս . որպէս զառն կոկիծ եւ նեղու-

թիւն Հասին ի վերայ ամենայնի, ևս առաւ-  
ւել մեծ վտանկ Հայոց ազգի: Զի Խղըլպաշն  
անդ սուրկուն արարեաւ տարաւ ի ներս՝  
սկսեալ էրեւանայ ամայի և աւեր դարձոյց,  
քանդելով, աւերելով և հրայրեաց հրդեհեալ  
հրով, զկիսն որ ի տունս Հոռոմաց՝ Թուրքի  
Հեծելն աւիրեալ ոչինչ դարձոյց: Վա՞յ ի  
վերայ վայի և եղուկ թշուառացեալ Հայոց  
ազգի<sup>4</sup>, զի ցրւեցան, կորեան և բնաջինջ  
դարձան. ո՞չ, ո՞չ և աւա՞զ թշուառու-  
թեանս, միթէ Գրոց բանքն կատարեցաւ կամ  
սուրբ Էռուաւորչի խնդիրքն Հասան, որ Նե-  
ռան ժամանակն վերջին Հայք չի մնան, կամ  
սուրբ Ներսիսի անձքն Հասան, զի եղկելի  
Հայք բնաջինջ դարձան. վա՞յ ինձ: Զի և ի  
լէ Հայոց զլուխ չարեք եկին, որ ի մեծ փա-  
թերակ անկան՝ Հոդով, մարմնով, տամբ և  
դարմօք կորեան:

Զոր ի թվ. միշտ. ել ոմն մեծազգի և  
փարթամաց զարմի, Նիկոլ անուն Թորոսնց  
նախնական անուամբ կոչեցեալ<sup>5</sup>, մանուկ  
տիօք և տղէտ մտօք, խաւարեալ խորհրդով  
և անիմաստ Հանձարով, անուղղաց վա-  
րիւք, վաս և ապիրատ ամենայն իրս և ի  
դրծու, լիբր, յանզգամ և անդուզն, ի կարդա  
աստիճանի դպիր զոլով: Եւ ելեալ իդ ամաց՝  
կաշառօք ձեռնազրեցաւ Եղիսկոպոս ի Մել-  
քիսէթ կաթողիկոսէ, յորժամ երեր զնու մեր

<sup>4</sup> ազգի:

<sup>5</sup> կոչեալ:

<sup>6</sup> անուղղա:

մեղքն ի լով։ Զոր յետ ամի միոյ յետ յուլով  
չարեացն՝ խորհեցաւ խորհուրդ չար վասն  
ազգիս Հայոց Էւ վասն հաւատոյ սուրբ Լու-  
սաւորչին Էւ սուրբ Եկեղեցեացն մեր, հնարս  
իմացեալ զայս. ոմամբք համախոհիւք զնա-  
ցեալ առ Յեղուիդսն՝ երդմամբ խոստացաւ  
պառնալ ի հաւատոյ Էւ ի կրօնս նոցա Էւ լինել  
ախթարժայ. զոր յետ սակաւ աւուրց լիով  
կատարեալ զայն ի մէջ Եկեղեցով առաջի բազ-  
մաց կարգաւորաց Էւ իշխանաց։ Ապա սկսաւ  
բազում չարիս Էւ նենկութիւն Էւ դաւ զործել  
ազգիս իմոյ՝ ունելով իւր օդնական զամենայն  
ազգն Լէհու, պարսնայքն, զիշխանս, զդա-  
տաւորս Էւ զամենայն քահանայս Էւ զկարգա-  
ւորս։ Ապա սկսաւ անզոսնել, արհամարհել  
զհաւատն մեր՝ հերձուածող Էւ բաժանող կո-  
չելով<sup>7</sup> զՀայք։ Յետոյ խլեալ Էւ յափշտակեալ  
զԵկեղեցիս Էւ զվանորոյս ի ձեռաց մերոց՝  
վիմաշէն, կամարակառ, սալարայարկ (؊)։  
Այլ Էւ զքահանայս ցրուեաց, զոմանս հալա-  
ծելով, զայլս ի բանտ Էւ ի կապանս մատնե-  
լով, զկէսս շխթայս ածելով Էւ զուզզա-  
փառան մատնելով, հարկանելով, տուզանե-  
լով Էւ ազգ Էւ ազգ զրոգելով։

Ապա սկսաւ վատնել Էւ կորուսանել  
զինչս Էւ զխաղինայս՝ զոսկեղէն Էւ արծաթե-  
ղէն անօթս, զմեծամեծ խաչսն, պատվական  
Էւ սակեղօծ ըսկիս, ծանրաշէն բուռվառսն,  
մեծազին քչոցսն Էւ արծաթի խնկատուիսն,

<sup>7</sup> կոչէ։

զուտր արծաթի ճրագարանս փոքր եւ մեծա-  
մեծսն , թող զշուրջառոսն , զխաչվառոսն , զե-  
միփորսնան եւ մեծառին թագո հայրապետաց՝  
ոսկով եւ մարդարտով եւ ակամբք ընդելու-  
ղեալ , եւ վարչամակս յոլով զուտր մեծամեծ  
մարդարտովք չարեալ , զոր ե՛ծ ամաց հետէ  
ժողովեալ էր աստուածառէր տանուտէրաց եւ  
բարի եւ երկիւղած կանանց եւ տանտիկնանց ,  
զոր ոչ երբէք գտանիւր այլ աշխարհ այնպիսի  
թօհվայք եւ անզիւտ իրք : Թող զարծաթա-  
պատ , ոսկիակազմ , մազաղաթ , ոսկէզիր բա-  
զում Աւետարանս եւ յոլով Շարակնոցս , ոս-  
կով եւ լազվարդով նկարեալ պատուական  
պատկերս եւ Բ , Գ՛ աղնիւ գրեանս վարդա-  
պետականս ի թաղաւորական խաղնայէ ի  
զուրս Ելած , մանաւանդ Արսու եւ Քաֆայու .  
Բ , Գ Աստուածաշունչք , այլ եւ Մեկնիչք եւ  
Քաղուածք , Փիլոնդիրք եւ Քարոզդրքեր , Տօ-  
նականք , Սարգիսպիրք , Սաղմոսի մեկնիչք եւ  
Արարածոց մեկնիչք եւ այլ անթիւ աղնիւ  
գրեանք , նաև յոլով Արտաքին զիրք , զորս  
ոչ կարեմ մի ըստ միոջէ զրել , զի ձանձրաս-  
ցին լսողքն : Եւ զայն ամենայն վերոյզրեալ  
Մորայ խաղինան ի միում ամի կորոյս եւ  
ոչընչացոյց , նաև զգրեանս ամենայն ընդ նո-  
սին . զո՞րս ծախէր եւ վաճառէր , զկէսս զրա-  
ւէր Հրէից եւ այլ եւ այլ ցեղից , զայլս հալէր  
եւ ի ոլէսս մարմնաւոր մսինէր եւ զո՞րս վո-  
խէր ընդ ոչինչ իրս անզիւտան եւ մարմնա-  
ւոր . տայր զոսկին եւ առնոյր զհովն եւ զմո-

խիր ի վերաց դլխոյն : Եւ զամենայն , զոր ինչ եւ կամէք՝ առնէք չարիս Հայոց . Եւ ոչ ոք իշխէք առել բան ինչ կամ դրոց , զի առաւել եղեւ սա հակառակ Հայոց քան զՊօղ էրէցն եւ զուրացողն Վասակ : Եւ այս ամենայն վասն ծովացեալ մեղաց իմաց . վա՞յ ինձ :

Եւ յետ այսոր ամենայնի յաւել զչարն ի վերաց չարի եւ ած խորհուրդ ի մտի . զի չոսայր զի . խորհուրդն եկեղեցոյ կատարել , իրրեւ դարձան Հայք իւրմէ Եւ չգնային յեկեղեցիքն եւ ոչ զկնի նորա , բայց միայն իւր ազգականքն եւ բնուանիքն : Զտայր մեռեալս թաղել Եւ զերտիսայս կնքել , կամ ովսակ տառ կամ հաղորդ . այլ ծածուկ յայլ քաղաքաց բերէին քահանայս կամ զմեռեալս ուղարկէին այլ տեղ , եւ զայն եւս ահիւ եւ զողութեամբ : Որ եւ զայն եւս իմացեալ՝ եղ <ուահապանս> ի զրունս քաղաքին , զի մի տարցեն այլ տեղ զհիւանդս կամ զմեռեալս , կամ մի զոք բերցեն : Եւ օր մի զտեալ էրէց մի ի քաղաքն , որ Եկեալ էք առ հիւանդան , կոխեցին զտունն , կալան զէրէցն եւ տանէին ընդ մէջ քաղաքին բոկ ոտամք եւ զլխիրաց իրրեւ զմահապարտ . Եւ իրրեւ տարան , ածին զնայ առաջի նորա , ընդ որս էի Եւ ես եղկելիս , զոր յետ բազում զանից Եւ զզվանաց ես ի շղթայս եւ ի կապանս Եւ արկ<sup>8</sup> ի բանս , մինչեւ տօլ-վաթաւորքն հաղիւ կարացին թափել ի ձեռաց նորա : Եւ մեք այսուէս լքեալ Եւ թողեալ

<sup>8</sup> յարկ :

Եղաք եւ ապարակոյս լեալ, զի ոչ յԱստուծոյ<sup>9</sup>  
եւ ոչ ումեքէ կարացաք ունել օգնութիւն,  
զի մեղք մեր մեծամեծք չտային թոյլ։ Իրբեւ  
չդոյր հնար մեղ ամենայն ուստիք, ապա  
սկսան թաղել զմեռեալս ի տունս եւ ի գետ-  
նափորս, Եւ աղքատքն յաղբս կամ ի զուրս  
անարդ տեղով, եւ զայն՝ ծածուկ եւ գաղտ ի  
նոցանէ։

Եւ Ե ամ էր Լովայ մայրաքաղաքին Հայքն  
թագւորազն եւ իշխանատիոլ ի մէջ այսպիսի  
զառն նեղութեան եւ տառապանաց, մեծ  
վշտի եւ վտանկի, մարզիք աղնիւ եւ պա-  
տուական, մեծատունք եւ փարթամք, որ  
այսպիսի աղէտի եւ կոկծի զիպան։ Եւ այս  
Ե տարիս ոչ ժամ, ոչ աղօթք եւ ոչ Աւետա-  
րանին ձայն ականջք մեր լուսան եւ ոչ աչք մեր  
զվարդապետ կամ քահանայ տեսան։ . . .

Ապա սկսան ուղղափառքն դրամ մախել  
եւ զեկան ցրվել մեծամեծաց, իշխանաց և  
պարսնաց, այլ եւ ի Ղարին զնացին քանիցս  
անդամ Եւ էմիրնի թերին եւ ոչինչ օկտեցան.  
զի կարգաւորքն ամէն Եւ մեծամեծքն հետ  
նիկոլ եպիսկոպոսին էին. Եւ զի հաւատոյ  
բան էր՝ չիշխէր թաղաւորն եւ ոչ նախաւ-  
րարքն առնել դատաստան, թէպէտ շատ զանձ  
եւ խաղինայ տային։ Եւ ի թվ. ՌՀԹԻՆԷՆ մինչ  
թվ. ՌԶԵ. երեսուն-քառսուն հազար դու-  
ռուշ խարճեցին Լովցիք, թնաւ ճարակ կամ  
հնար չի դտան Հայք։

<sup>9</sup> յոչ աստուծոյ։

Եւ իրբեւ հասաւ քարտաքի եկեղեցոյն խաղնան եւ վանօրէիցն եւ ինքն ոկտաւ չքաւրել, զի էր յոյժ անառակ<sup>10</sup> եւ վայրապար, ունէր մարդիկ աշխարհականք եւ կարգաւրք, Ի, Լ պահէր պէտապի ձիան, կառս մեծագինս եւ տաճիկ ձեանս. Եւ ինքն յագանիէր բեհեզս եւ ծիրանիս, մախմուր եւ աթլազ, ներքեւանց սամուր մորթի կամ վաշախ. զաւազանն՝ բունն արծաթի, նաև սնուռեխչան, կազմարն, ջրլուացքն, խորիին եւ ամէն անօթքն եւ կահքն զուտը սոկէօջրած արծաթէ. վասն որոյ ի սպառ ջնջեալ կորոյս զամենայն ինչ եւ զմեղ :

Դարձեալ խորհեցաւ խորհուրդ չոր վասն Հայոց եւ առէ. Գնամ ես առ մեծն Փափի եւ հանեմ էմրէր եւ Փէթվանի, որ յերկրէս Լէհու ուր եւ կան Հայք՝ հնազանդին ինձ եւ Փափին զապի յինին. ապա թէ ոչ արտաքսեցին եւ վատրեսցին յերկրէն լէհու, զի հերձուածողք նն: Եւ ելեալ զնաց իւրովքն: Իսկ եղելի Հայք տաքակուսի եղեալ եւ ի մեծ սուզ անկեալ՝ սպառինեցան ի սուրբ Աստուածածին կոյսն Մարիամ եւ ի միածին Որդին, բարեխօս ունելով զուրբը Հայրն եւ Լուսաւորիչն Պրիգորիոս . . . :

Եւ մինչ մեք յայսմ տաքակուսանաց եւ տրտմութեան էաք, եկն եհասնորապսակ արքայն բազում հեծելօք եւ սպառազինօք ի քաղաքն Լով: Որ զնայր ի վերայ յԱպազին եւ

<sup>10</sup> անաթակ:

Թուրքաց խառնիճաղանձ յէշքէրին՝ ջնջել և  
հալածել, որովէս եւ եղեն խսկ. զի մեծ սպա-  
ռապեսն բան Քրաքովոքին գնացեալ կոսո-  
